For diaspora Armenians, the rise of nationalism was a puzzle on many levels as it confronted them with a litany of questions about their status, their identity, their capacity, their tranquility, their loyalty, their participation, and the permanence of their residence. When refugees live in a terrible limbo regarding their legal status and their freedom of participation in the domestic economy, the demands on their identity and loyalty rate of secondary importance. Citizenship, on the other hand, brings with it many tests, the first of which is, of course, whether one is qualified to have it awarded in order to enjoy the protection of the law and the benefit of rights under a national charter or constitution. As the social contract is fundamentally a secular agreement, for Armenians the assignment of this status presented a dilemma. Were they a religious minority, or just an ethnic community, in a part of the world with a tradition of categorizing its constituents according to their faiths. The nation-state, however, had territorial definition, and its citizenry was supposed to enjoy undifferentiated equality, while certain types of communal designations created the appearance of privilege or ran the risk of finding a constituent part relegated to an underclass. A constitution extending natural citizens individual rights typically dispensed with the question of the fractional existence of differentiated communities whose group identity contrasted with the common denominators of the majority population.

The subjects of the nation and nationalism cannot be discussed without reference to the masses. The entire program of new local elites counted on the agreement of the populace to the program of national identification and self-government. As long as the debate was confined to elites, the colonial power held the upper hand. When awareness settled upon the emerging nationalist thinkers and activists that stronger domestic political resources are generated by wider mobilization, the entire dynamic in each country changed. For instance, the removal of the Khedive Ismail in 1879 was managed by power brokers alone. The masses galvanized, however, could match, and in the right circumstances neutralize, the coercion intended by military mobilization as during the public campaign for an Egyptian national constitution in 1923.

---

[28] Elizabeth Monroe, *Britain's Moment in the Middle East 1914-1971*, rev. ed, Peter Mansfield, foreword, Chatto & Windus, London, 1981; Paul Johnson, *Modern Times: The World from the Twenties to the Eighties*, Harper & Row, New York, 1985, chapter 14, "The Bandung Generation," pp. 466-505.

Confrontation of that sort ran the huge risk of undermining the legitimacy of the prevailing order. For all the tension between the Egyptian monarchy and the British supervisory authorities, they also functioned on parallel tracks that kept the engine of state running and headed in an agreed upon direction. Building a nation exercising the sovereignty of the people required derailing the entire ruling system. Effectively the Egyptian monarchy and the British presence were undone by midcentury with the introduction of mobilized masses willing to stake their dignity against forces of intimidation.





Gamal Abdel Nasser, president of Egypt, whose popularity was a major contributing factor to the spread of pan-Arabism. Nasser in a motorcade in the Soviet Union accompanied by Leonid Brezhnev, Chairman of the USSR Communist Party, and Anastas Mikoyan, Chairman of the Presidium of the USSR, in an open display of Egypt's role during the Cold War

The 1952 military coup that ended the monarchy and the 1956 nationalization of the Suez Canal were a pair of actions that secured popular sovereignty in Egypt. The ensuing war waged by England, France, and Israel failed to dislodge the new regime because the strike harkened back to the politics of an age that clearly had expired. Not only did the war fail to recover the canal, it inflamed the very nationalist sentiments that had propelled the nationalization policy in the first place.[29]

Two strands of political ferment galvanized by the Suez Crisis received wide acclaim domestically and regionally. The consolidation of Egyptian pride in defying external power forged the Nasserist brand of populism. It also encouraged the less tangible ambitions of another brand of populism, Pan-Arabism, which elevated the role of Egypt as a country led by a *bone fides* revolutionary cadre. An example had been set by forging a regime that tapped and fanned popular sentiment. For all its divisions and difficulties, an Arab voice became a presence in international politics. It had been 75 years since Urabi had raised the national flag in Egypt with popular support and 38 years

[29] Daniel Yergin, *The Prize: The Epic Quest for Oil, Money & Power*, Simon & Schuster, New York, 1991, chapter 24, "The Suez Crisis."

since the Wafd had been organized by Saad Zaghloul as Egypt's first liberal political party with a mass following. Nasserism eclipsed all by banning the Wafd, along with the Communists and Muslim Brotherhood.[30]

If the liberal posture of the Wafd was in the nature of progressive bourgeois politics relying on the guarantees of constitutionalism, which it brought into existence in 1923, Nasserism was built up by a sequence of radical departures, as the toppling of the monarchy foretold. The substitution of an authoritarian regime for a feudalistic autocracy may not have seemed all that different in the vertical power relations of a society accustomed to decision-making concentrated in the hands of the few. In the matter of horizontal relations, namely the economic sphere, the changes were indeed downright revolutionary as the new leadership had promised.[31]

Within this framework, the historically-determined exemption enjoyed by the Armenian communities of northeast Africa began to expire starting in 1961 when President Nasser initiated the transformation of the Egyptian economy through a series of nationalization policies that constricted the private sector. A socialist system was created by the end of the process, which started with the expropriation of large enterprises designed to expel the European expatriate communities still dominating several sectors of the economy. By the time small businesses were nationalized, the financial stability of the Armenian community had been undone. With the accumulation of near pharaonic power on the basis of the mass support these policies originally generated, Nasser triggered another exodus from Egypt. Even the vestiges of the colonial era were shuttered and that intermediate space between locals and colonizers that Armenians had assiduously cultivated and enlarged was foreclosed by 1966. Within the span of five years, a stable, prosperous, cultured and creative community was undone so thoroughly that the reversal of Nasser's policies under his successor, general and president Anwar Sadat, made no difference in curtailing the hemorrhaging.[32] Half a century later, even with the recovery of communal assets, the demographics tell another story. With a total of about 4000 Armenians, the Egyptian diaspora is at 10% of its former size in a country that

[30] Afaf Lutfi AlSayyid-Marsot, *Egypt's Liberal Experiment: 1922-1936*, University of California Press, Berkeley, 1977.

[31] Steven A. Cook, *The Struggle for Egypt: From Nasser to Tahrir Square*, Oxford University Press, New York, 2012.

[32] Thomas W. Lippman, *Egypt After Nasser: Sadat, Peace, and the Mirage of Prosperity*, Paragon House, New York, 1989.

has doubled in population since the 1960s. The other 90% emigrated, abandoning homes and businesses.[33]

Writing in 2009, a *TIME* magazine reporter found all of 50 Armenians in Khartoum. The description of the situation in Sudan, however, betrayed how utterly transformed conditions had become: "Despite the Khartoum government having 'Islamized' the north of the country through the imposition of Shari'a law, there is no sense of religious persecution here at St. Gregory's [Armenian Church]. Leaders of the Armenian and the neighboring Ethiopian Orthodox churches say they feel safe in Khartoum, and that the persecution of Catholics and Protestants from southern Sudan is a product of the country's north-south power struggle - the small Orthodox Christian communities pose no threat to the predominantly Muslim government."[34]

Religious differences had never been the real problem for Armenians, because, as one native critic lamented, the ailment was systemic, an "epidemic of military coups [that] plagued the Sudanese people."[35] That said, the congregation that was being described was a mere shadow because "many Armenians left Sudan after their properties were confiscated under the radical regime of President Jaafar Nimeiri during the 1970s."[36]

These compound challenges to the social, economic, religious, and political order, or the extent of the disorder, attested to the tremendous difficulties faced by these countries as their people attempted to construct new nations and a modern economic system in an environment of intense ideological and geo-political competition. On the other hand, political insecurity is a general problem and not confined to any particular part of the world. While

---

[33] Angela Boskovitch, "Photo Essay: Egypt's Armenians," *Carnegie Endowment for International Peace*, September 5, 2015, https://carnegieendowment.org/sada/61405; Lara ElGilaby, "We Are Egyptian Armenians, and that's all You Need to Know" (Madamasr, November 23, 2016) https://madamasr.com/en/2016/11/23/feature/culture/we-are-egyptian-armenians-and-thats-all-you-need-to-know/; Alison Tahmizian Meuse, "Communities: Armenians in Egypt Recount Rich History," *Egypt Independent*, June 27, 2012, https://ww.egyptindependent.com/communities-armenians-egypt-recount-rich-history/; Nanore Barsoumian, "Amid Turmoil, Armenians of Egypt Remain on Sidelines," *The Armenian Weekly*, August 25, 2013. https://armenianweekly.com/2013/08/25/amid-turmoil-armenians-of-egypt-on-the-sidelines/; Thomas Gorguissian, "On Being an Armenian and an Egyptian," *Al-Ahram Weekly*, September 20, 2018, http://weekly.ahram.org.eg/News/25446.aspx .

[34] Betwa Sharma, "Keeping Armenia Alive in the Capital of Sudan," *TIME* magazine, June 9, 2009 (http://content.time.com/time/world/article/0,8599,1903175,00.html).

[35] Mahmoud A. Suleiman, "Sudan Coups: Epidemics Handcuffed Progress in Sudan," *Sudan Tribune* (http://www.sudantribune.com/spip.php?article59707).

[36] Sharma.

destabilizing for a diaspora community, it is seldom the single cause for the type of decline registered by the Armenian communities of northeast Africa. The truth of the matter was that the economic foundations of the community had been undermined because without the assurance of the right to private property, the autonomy of the resources of a community evaporated. The situation in Sudan replicated the scenario implemented in Egypt as a very similar pattern of developments reduced the community of Addis Ababa to the 100 or so Armenians reported remaining in the country.

PATTERNS

This essay has strived for a particular construct of the diaspora phenomenon independent of the prevailing post-genocide paradigm that embarks upon its narrative with the arrival of refugees. It has done so in part by emphasizing certain aspects at the expense of other features that are perhaps more common in the diaspora pattern. The point of the exercise has been to demonstrate that there are alternative edifices to the generalized system, and by focusing on these differences a method for revealing the more critical characteristics of a community may be found. By their timing and by their nature, the Armenian communities of northeast Africa arguably skirted that dominant structure of modern Armenian history.

One method emphasized the connection between the professions and modernization and how the specialized skills of Armenians fulfilled a specific purpose in place and time. This is how R.P. Sevadjian described the Armenian community of Ethiopia: "The Armenians who settled in Ethiopia before the 1920's, and those who arrived after 1945, were mostly well educated; they were doctors, dentists, chemists, architects, engineers, lawyers, and accountants. Many of those who arrived in the 1920's as a direct consequence of the genocide were artisans; they were tailors, watchmakers, cobblers, and carpet makers. Thus in almost every trade, profession, and industry, there were Armenians in Addis Ababa. They had come from a very wide area of the Ottoman Empire and brought with them the special expertise of their hometowns…Addis Ababa [also] boasted a large number of remarkably skilled jewelers."[37] Avedis Terzian added: "We were a powerful economic force in this country, and more so after the British entered Ethiopia in 1941. For 33 years,

[37] R.P. Svadjian, "Remembering the Armenians of Ethiopia," *The Armenian Weekly*, May 6, 2015 (https://armenianweekly.com/2015/05/06/remembering-the-armenians-of-ethiopia/).

or until 1974, the Armenian community of Ethiopia was at its zenith. It's a different story today."[38]

This entirely middle class professional makeup of the Armenian communities of Africa goes far in explaining its social character, the set of values that made them so successful and, in the final analysis, that made them so utterly vulnerable to the immense forces associated with nationalism and nationalization of the economy. That, however, is to put it mildly. Sevadjian was blunter: "The Ethiopian Revolution of 1974, which, deposed Haile Selassie I and installed a Marxist government, devastated the Armenian community. The 'Red Terror' meant no one was safe. Life became unbearable. Younger Armenians who had already left Ethiopia for higher education did not return. Many of those who were able, took their families and immigrated to other countries."[39]

The reference to Red Terror is a reminder that a broader current was coursing through the region, one that linked the fate of Armenians across continents, and that the frontline of the Cold War had reached deep inside Africa. How that great contest shaped the fate of Armenian communities is a topic that deserves close attention. For the purpose of this essay, the linkage of the three global conflicts of the 20th century completes an arc that extended the reach of communism from the mountains of the Caucasus to the headwaters of the Nile, entrapping Armenians within the confines of repressive regimes, and resetting the destiny of communities whose very existence was testimony to the already dispersed condition of the Armenian people. The unraveling of these communities inaugurated another cycle of dispersion. The price Armenians paid for the spread of socialism and communism awaits the attention of scholars.

Another method employed in this essay relied on occasional comparisons, mostly with Lebanon, which actually furnishes a very useful contrast for further appreciating the distinctive characteristics of the Armenian communities of northeast Africa. The Lebanese analyst Nabil Khalifé had this to say about his country: "Lebanon is, first and foremost, a pluralistic society that is not homogeneous because there were multiple religions, sects, and doctrines that live within its boundaries. Its geographic location grants it certain advantages, especially cultural and economic prosperity, since its peoples are in contact with, and open to, the world."[40]

---

[38] David Zenian, "A Journey Back in Time: A Look at the History of Armenians in Ethiopia," *Ararat* AGBU magazine, June 1, 1994 (https://agbu.org/news-item/a-journey-back-in-time-a-look-at-the-history-of-armenians-in-ethiopia/).

[39] Svadjian.

[40] Nabil Khalifé, *The Attempt to Uproot Sunni-Arab Influence: A Geo-Strategic Analysis of the Western, Israeli and Iranian Quest for Domination*, Joseph A. Kéchichian trans. and intro, Sussex Academic Press, Brighton, 2017, p. 137.

The country he was characterizing was perhaps more properly the Lebanon of the 20th century. The description would not have applied to an earlier century. Thereby, the arrival of the Armenians in Lebanon coincided with a distinct moment, when the profile of a new country was being forged by its constituents under Mandatory supervision. The tremendous potential of that moment is stressed by the openness that Khalifé identified. Given the characteristics of the Armenian population that reached Lebanon in the 1920s, that open structure made all the difference in the quality of the integration experience, which I argued could not be so readily replicated in Egypt, as in the example of the Musa Dagh Armenians. The contrast between a constitutional monarchy with consolidated elite elements deriving their status from their privileges as a landowning class, as in Egypt, and a republican society striving for a balanced inclusion of all its constituent elements, as in Lebanon, could not have been sharper. Moreover, the proletarian characteristics of the Armenian refugee population, whose primary attribute at the time was personal and individual industriousness, also contrasted with the specialized skills and professions practiced by the Egyptian, as well as the Sudanese and Ethiopian Armenian communities.

Another approach by an American analyst specializing in Egypt provides an additional method for appreciating and understanding the centrality of the Armenian achievement. Gregory Aftandilian argued that by obtaining a critical role in the social system, Armenians firmly secured middle class status based on their unique specializations. He also demonstrated how ideologically-driven policies managing the political economy of a country can give a wholly different form to its social character by enlarging the role of government to the detriment of the free enterprise system.

Aftandilian stated that: "The Egyptian middle class was developed somewhat differently from its counterparts in other Third World states, but its experience is not unique, given the socialist experiments of many states in the post-World War II era. The entrepreneurial section of the middle class in Egypt tended to be in the hands of minorities, such as Greeks, Jews, Armenians, Syrians, and Lebanese. Nasir's socialist policies nationalized most of their businesses and contributed to the emigration of these groups. The Egyptian Muslim middle class never had the opportunity to develop into a large commercial middle class in their place because of the nationalization policies and the expansion of civil service jobs, which worked to coopt the middle class into the government...By 1980 public-sector workers (including white-collar civil servants and state industrial workers, but excluding teachers and armed forces personnel)

accounted for one-third of the Egyptian work force (3.2 million out of 10 million)."[41]

Another American analyst explained the same phenomenon with a different emphasis, namely the case I have argued, the close association of the Armenians, and other entrepreneurial minorities, with the state structure, and that the abolition of the monarchy involved much more than the departure of Muhammad Ali's dynasty. All those providing services that sustained the traditional autocracy were to be swept away also in order to create the level field upon which an egalitarian socialist state could be created.

Steven A. Cook said: "In the fight to consolidate their power after deposing King Farouk and abolishing the monarchy, the Free Officers targeted these [liberal] parties and the private interests they represented through a combination of land sequestration and nationalization of industries. It helped that landowners presided over a system that was a modern analogue of feudalism, that the old elite was often corrupt and cooperated with the monarchy, and that many businesses were in the hands of Greeks, Italians, Armenians, Jews, and Lebanese - all of whom were well integrated in Egyptian society. Thus the destruction of private interests fit seamlessly with the Free Officer's nationalist narrative about ridding the country of a corrupt monarchy and uplifting the people...Nasser's state-centered approach to economic development proved beneficial, at least, initially. Overall, GDP increased dramatically in the early 1960s before declining sharply in 1966."[42]

Although the strike against the private interests of the Armenian community was not exclusively directed against it or driven by racial animus, nevertheless Armenians were swept along with other groups in the drive to create a national economy. Their alien status caught up with them even as they represented no particular external interest since they had no country of their own. As a diaspora community they were not colonizers in the common sense of the word. More properly, they were modernizers. However, they had settled upon a continent where the surge of anti-colonialism would not take the trouble to differentiate between colonists and groups profiled by their association with the colonial systems. All other minority groups had presumptive homelands to which they could return. Armenians were the exception because their departure meant the closing of a chapter in the Armenian historical experience.

On the basis of the evidence developed for this essay, there may be a case for arguing that there was a different starting point for the modern Armenian

---

[41] Gregory L. Aftandilian, *Egypt's Bid for Arab Leadership: Implications for U.S. Policy*, Council on Foreign Relations Press, New York, 1993, pp. 58-9.

[42] Steven A. Cook, *False Dawn: Protest, Democracy, and Violence in the New Middle East*, Oxford University Press, New York, 2017, p. 60.

diaspora than the common assumption of the dislocation and dispersion of Armenians, a process with a long history to it.[43] In the modern era, the emergence of several diaspora communities may have had more to do with Western economic expansion than any particularly propelling experience in the Armenian sphere alone. The rapid globalization of the effects of European industrial production and Western control of the international streams of financial revenue carved out whole new spaces in society which certain skilled and entrepreneurial groups could readily penetrate, and thereby establish a symbiotic presence that granted them a substantial advantage in boosting their individual and communal fortunes.

Modernization, which relied upon a set of values associated with commerce, productivity, learning, and specialization, effectively the integral circulation of goods, ideas and people, arrived at the geographic intersection of European expansion and Armenian commercial habits. The predisposition of Armenians opportunely accommodated the cultural disinclination of local populations and the practical preferences of Europeans. That lower threshold of engagement between Europeans and Armenians activated the formation of the modern diaspora as it absorbed growing numbers of Armenians into its fold.

In the case of the Armenian communities of northeast Africa, adaptability in the face of considerable challenge, possibly advantaged by the absence of channeling by state interests and government controls, may have played an additional role in encouraging diaspora formation. Clearly the opposite, strict government intervention and management of the economy, resulted in the unraveling of diaspora communities.

While not directly applicable for Africa, but nevertheless because of regional association, the postwar Mandatory system delivered in a different form the rubrics of European colonialism, which placed Armenians within a zone of ameliorative and moderating policies in contrast to the extremisms that gripped their homeland territories in Western and Eastern Armenia, the one going out of existence due to the annihilation of its population, and the other succumbing to totalitarianism of the Soviet brand. This painfully sharp contrast goes far in explaining and elevating the historic role of the communities addressed in this essay.

Commerce happens in present time. It requires contemporaneity. Outdated ideas and obsolete products are constantly outpaced by the market, which

---

[43] Rouben Paul Adalian, "The Historical Evolution of the Armenian Diasporas," *Journal of Modern Hellenism*, 1989:6, pp. 81-114. Also entries on Diaspora, Historic and Diaspora, Modern, in Rouben Paul Adalian, *Historical Dictionary of Armenia*, 2nd ed., Historical Dictionaries of Europe, No. 77, The Scarecrow Press, Lanham, 2010, pp. 256-84.

obligates conforming to the latest products, fashions, and trends. Sustainment of modernization therefore results in its constant acceleration. Paradoxically, even if the emotive, intellectual, and cultural values of the Armenian diaspora is bent by practice or necessity toward the conservative, the unavoidable challenge of economic adaptation and social survivability implies that a sector of the diaspora is regularly coping with and at times thriving on the challenges of steady modernization.

If that is the case, and the argument is made that modernization is a manifestation of industrialization, then the question arises whether the post-industrial framework also relocated the Armenian diaspora, or segments of it, to an environment determined by post-modern values.

If the Armenian diaspora is, as a whole, an urbanized, post-industrial, and post-socialist, community, is it also inhabiting, perhaps unawares, a post-modern environment whose most visible characteristics are the abundance of information and the speed of communication, creating new resources of empowerment? If the modernizing diaspora communities fulfilled their historic function and their constituents were required to relocate, did that process then generate a new framework, or did it merely perpetuate the values that had characterized it all along?

As argued earlier, not all contemporaneous diaspora communities exist in the same cultural milieu. They evolve at their own pace, contingent on the allowances that the socio-economic and geo-political interests that a host society tolerates. But if there is an expiration date for a particular diaspora community, does closing that chapter imply the conclusion of the diaspora experience. Clearly that is not what happens. New communities are constituted by immigrants who recreate institutions with which they identify and retain the memory of an earlier time when they lived in another part of the world.

However, newborn generations possess an entirely different perspective that only looks forward because they are not connected to older networks, and in in this way they actually create something new. They are in step with their own time and not encumbered by memory. There is an impressive amount of literature about the Armenian diaspora, certainly the one in Egypt, but no one reads this literature. By that account, the new era is without nostalgia, and by that measure alone, it may well be that the modern era has ended for the Armenian diaspora and the post-modern is taking hold.

ԱՓՐԻԿԵԱՆ ԵՂՋԻՒՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԼԻՔՆԵՐԸ ՆԵՂՈՍԻ ՈՒ ԾՈՎՈՒ ՃԱՄՓՈՎ ԵՒ ՏԵՂԻ ՀԱՅՕՃԱԽՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ

(Ամփոփում)

Դոկտ. Ռուբէն Ատալեան
rouben.adalian@ani-dc.org


Զեկոյցը կը ներկայացնէ մանաւանդ Ափրիկեան Եղջիւրի վերջին երկու դարերու քաղաքատնտեսական եւ ընկերամշակութային համառօտ համապատկերը, երբ ԺԸ. դարավերջի Եւրոպայի մուտքէն ետք, արդիականացման հանգրուան մը կը բացուի շրջանի ժողովուրդներուն եւ երկիրներուն առջեւ:

Ուսումնասիրութիւնը կը վերլուծէ եւրոպական ազդեցութիւնը՝ վերափոխման ընթացքին, լայն գիծերու մէջ կ'անդրադառնայ անցնող երկու դարերու շրջանի քաղաքական-տնպտեսական-ժողովրդագրական-մշակութային թէ պետութենակերտման գործընթացներուն, ներքին թէ միջպետական վերիվայրումներուն, արդիականացման՝ ներքին եւ արտաքին գործօններու շփումներէն յառաջացած ուժականութեան ու այդ 'թոհուբոհ'ին մէջ շրջանի ժողովուրդներուն, հայ փոքրամասնութեան, պետական դէմքերու հակադարձութիւններուն ու կրած ազդեցութիւններուն:

Փաստագրական հարուստ նիւթի պարունակին մէջ, ուսումնասիրութիւնը կը բնութագրէ հայկական նպաստը այդ երկիրներուն, հայկական տեղաշարժերը՝ ներքին անկայունութեանց հետեւանքով ու կը հարցադրէ հայօճախներուն տեղն, նոր դերերու բնոյթը՝ շրջանին մէջ:

Խուրրիների Միտաննի Պետութեան եւ Վանի Թագաւորութեան Առնչութիւնները Եգիպտոսի Հետ
(Ք.ա. ԺԵ.-ԺԴ., Ը.-Է. դդ.)

Վահէ Սարգսեան
anarzaba@gmail.com



Հայկական Լեռնաշխարհը եւ Առաջաւոր Ասիան Ք.ա. Գ.-Բ. հազարամեակներում. հայկական պետական առաջին կազմաւորումները (Բ. Հ. Յարութիւնեան, *Հայաստանի պատմութեան ատլաս, Ա. մաս*, Երեւան, 2004, էջ 12-13)

ՄՈՒՏՔ

Հայկական Լեռնաշխարհի եւ Եգիպտոսի միջեւ եղած յարաբերութիւնների ու առնչութիւնների մասին վկայում են դեռեւս Ք.ա. Բ. հազարամեակի երկրորդ կէսի եգիպտական ու միտաննիական աղբիւրները, ինչպէս նաեւ հնագիտական գտածոները (Թեբէ, Մեծամօր)[1]: Այս յարաբերութիւնները պայմանաւորուած էին Ք.ա. ԺԷ.-ԺԶ. դարերում, Վերին Միջագետքում՝ Խապուր գետի շրջանում, խուրրիների Միտաննի պետութեան

[1] Հայկական Լեռնաշխարհից դեռեւս Ք.ա. Դ. հազարամեակում Եգիպտոս են ներմուծել խեցեգործական արտադրանք եւ օբսիդիան: Հաւանաբար, նաեւ այս ժամանակաշրջանում է խաղողն Անդրկովկասի երկրներից առեւտրականների միջոցով բերուել Եգիպտոս (Դэвид Лэнг, *Армяне. Народ-созидатель* (Հայեր. ստեղծագործ ժողովուրդը), Մոսկուա, 2007, էջ 68-69):

ձեւաւորմամբ[2]: Միտաննի Պետութեան կազմում եւ ազդեցութեան ոլորտում էին գտնւում Հայկական Լեռնաշխարհի առնուազն հարաւային ու արեւմտեան շրջանները: Միտաննիի արեւմտեան սահմանն անցնում էր Եփրատի ոլորանով, հարաւարեւելեան սահմանները տարածւում էին մինչեւ Աշշուր եւ Առափխա, հիւսիսում՝ Իսոււա (Արմ. Եփրատի եւ Արածանիի միախառնման շրջան) եւ Ալզի (Արմ. Տիգրիսի ակունքներից հիւսիս եւ Արածանիի հովտի շրջանը՝ Իսոււայից արեւելք), իսկ հիւսիս-արեւելքում՝ Բաբանախիի լեռները (Հայկական Տաւրոս): Կայ տեսակէտ թէ Միտաննիի կազմում է գտնուել նաեւ Վանայ լճի աւազանը[3]: Աղբիւրագիտական տուեալների բացակայութիւնը, սակայն անհնարին է դարձնում յստակ հաւաստել, թէ հիւսիս-արեւելքում մինչեւ ու՛ր էին տարածւում Միտաննի Պետութեան սահմանները, կամ՝ ազդեցութեան գօտին:

Բուն Միտաննիի տարածքում մինչ օրս կանոնաւոր պեղումներ չեն կատարուել եւ անգամ դեռեւս յայտնի չեն մայրաքաղաք Վաշշուգանիի, ինչպէս նաեւ միւս կարեւոր կենտրոնների ստոյգ տեղավայրերը: Այս հանգամանքով է նաեւ պայմանաւորուած Միտաննիի պատմութեան մասին աղբիւրագիտական նիւթի սակաւութիւնը: Այդ իսկ պատճառով՝ Միտաննիի պատմական աշխարհագրութեան, քաղաքական պատմութեան, տնտեսութեան եւ մշակոյթի մասին առաջնային աղբիւրագիտական տեղեկութիւններ քաղում ենք եգիպտական Նոր Թագաւորութեան (ԺԸ. Հարստութիւն) աղբիւրներից, ինչպէս նաեւ՝ Թէլ ԷլԱմառնայի[4] արխիւից գտնուած Միտաննիից ուղարկուած աքքադերէն նամակներից (միայն մի նամակ է

---

[2] Միտաննիի իշխող արքայատոհմը հնդարիական էր, այն հաւանաբար Հայկական Լեռնաշխարհից խուրրիների հետ տեղաշարժուել էր Բարեբեր Կիսալուսնի շրջան (M. Mayrhofer, *Die Indo-Arier im alten* Vorderasien: *Mit einer analytischen Bibliographie*, Harrassowitz, Wiesbaden, 1966, էջ 28. նաեւ՝ G. Wilhelm, *Grundzüge der Geschichte und Kultur der Hurriter*, Wissenschaftliche Buchgesellschaft, Darmstadt, 1982, էջ 24. նաեւ՝ I. Gelb, *Hurrians and Subarians*, The University of Chicago Press, Chicago, 1944, էջ 70. նաեւ՝ J. Friedrich, "Churritisch," *Altkleinasiatische Sprachen, Bd.I/II*, E. J. Brill, Leiden/Köln, 1969, էջ 1 եւն.):

[3] И. М. Дьяконов, *Предыстория Армянского Народа* (Հայ ժողովրդի նախապատմութիւնը), Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1968, էջ 45, 87-88. նաեւ՝ A. Götze, *Hethiter, Churriter und Assyrer*, Aschehoug, Oslo, 1936, էջ 104. նաեւ՝ "Mitian(n)i A," *Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, Bd. 8*, Walter de Gruyter, Berlin-New York, 1994, էջ 290, 293:

[4] Նամակները պահուել են դիւանագիտական արխիւում եւ Ամենհոտէպ Դ.ի օրօք՝ մայրաքաղաքի տեղափոխման ժամանակ, Թեբէից տարուել են նոր մայրաքաղաք Ախեթաթոն (Թէլ ԷլԱմառնա): Արքայի մահից յետոյ, այս նոր կենտրոնը արագ լքուեց, արքունի արխիւը, սակայն, այլեւս չտեղափոխուեց:

գրուած խուրրիերէն)[5]: Նոյնիսկ Միտաննիի արքաների համար թուագրում կատարելը անհնարին է, քանի որ նրանցից ոմանք յայտնի են միայն համաժամանակեայ վկայութիւններում, ուստի սոյն պարագայում նշւում են որպէս եգիպտական փարաւոնների ժամանակակիցներ:

Միտաննիի անկումից յետոյ, արդէն Ք.ա. Ա. հազարամեակում շարունակւում են Հայկական Լեռնաշխարհի եւ Եգիպտոսի միջեւ առնչութիւնները, երբ լեռնաշխարհում վերելք է ապրում խուրրիներին ազգակից ուրարտացիների պետութիւնը՝ Ուրարտուն (Վանի Թագաւորութիւնը): Այս պետութեան վարչական կենտրոններից յայտնաբերուել են այս առնչութիւնները վկայող եգիպտական գտածոներ:

ԵԳԻՊՏԱ-ՄԻՏԱՆՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Եգիպտոսից հիքսոսներին վտարելուց յետոյ (Ք.ա. ԺԷ. դարավերջ-ԺԶ. դարասկիզբ)՝ արդէն ԺԷ. Հարստութեան կառավարման վերջին շրջանում (Ք.ա. ԺԷ. դարավերջ), փարաւոնների նուաճողական քաղաքականութեան տեսադաշտում յայտնուեցին Պաղեստինն ու Սիրիան: Աշխարհագրական նման նուաճողականութիւնը դուռ բացեց նաեւ Միտաննիի հետ առճակատմանը: Այս երկու պետութիւնների շահերի բախումը Պաղեստինում եւ Սիրիայում յանգեցրեց շրջանում երկարատեւ պատերազմների՝ սկսած Ք.ա ԺԶ. դարից, եգիպտական Նոր Թագաւորութեան շրջանից: Սոյն առճակատումը մասամբ նաեւ պայմանաւորուած էր տարածաշրջանով անցնող առեւտրական ուղիներին տիրելու հանգամանքով[6]: Ըստ Արտակ Մովսիսեանի՝ «*Նշուած շրջանը հնագոյն պատմութեան միակ ժամանակահատուածն է, երբ եգիպտական զօրքերն ուղղուել են Հայկական Լեռնաշխարհի որեւէ պետութեան դէմ, եւ դա եղել է Միտաննին*»[7]:

Եգիպտական Թութմոս Ա. փարաւոնի (Ք.ա. մօտ 1494-82) թագաւորութեան 3րդ տարում տեղի ունեցաւ Եգիպտոսի եւ Միտաննիի առաջին բախումը[8]: Թութմոս Ա.ը Միտաննիի յաւակնութիւնները՝ սիրիական քա-

---

[5] Միտաննիի արքայ Տուշրաթթային են պատկանում 1887ին Թէլ ԷլԱմառնայից գտնուած 14 նամակներ՝ ուղղուած Ամենհոտէպ Գ. փարաւոնին, վերջինիս կնոջը՝ Տէյէին եւ նրանց որդուն՝ նոր գահակալ Ամենհոտէպ Դ.ին (տե՛ս՝ ստորեւ):

[6] В. И. Авдиев, *Военная История Древнего Египта* (Հին Եգիպտոսի ռազմական պատմութիւնը), *հտր. I*, Մոսկուա, Սովետական գիտութիւն, 1948, էջ 210:

[7] Ա. Մովսիսեան, «Միտաննի Թագաւորութիւնը եւ հայկազունի նահապետերի ու արքաների ցանկը», *Հայկազուններ. առասպել եւ պատմութիւն*, Երեւան, 2013, էջ 85:

[8] Փարաւոնն անցաւ Սիրիայով եւ Պաղեստինով՝ հասնելով Նահ(ա)րինա: Միտաննիի արքայի դէմ յաղթական ճակատամարտից յետոյ, Եփրատի ափին - Կարկեմիշի մօտ - փարաւոնի հրամանով կանգնեցուեց սահմանաքար, բազմաթիւ

ղաք-պետութիւնների նկատմամբ կասեցրեց: Թութմոս Ա.ի յաջորդներ՝ Թութմոս Բ.ի (Ք.ա. 1482-79) եւ Հաթշեպսուտի (Ք.ա. 1479-58/7) օրօք, Միտաննիի դէմ արշաւանքներ չեն ձեռնարկուել: Այս իրողութեան բերմամբ Միտաննին Սիրիայում ընդարձակեց իր ազդեցութիւնը, որը պայմանաւորուած էր նաեւ բուն Միտաննիի սահմաններից դուրս խուրրիական բնակչութեան աճով[9]: Խուրրիների ներթափանցումը տեղի էր ունենում խաղաղ ճանապարհով՝ առանց տեղացիների տեղահանման կամ ոչնչացման: Դժուար է ասել՝ դա կատարւում էր խուրրիական նոր խմբերի գաղթի շնորհի՞ւ, թէ՞՝ տեղի արեւմտասէմական ցեղերի «խուրրիացման» միջոցով: Սիրիայի եւ Պաղեստինի տեղական կառավարիչները, դատելով նրանց անուններից, հաւանաբար Միտաննիի իշխող արքայատոհմի հետ ունէին ազգակցական կապեր եւ նրանց դրածոներն էին[10]:

Նոր փարաւոն Թութմոս Գ.ի (Ք.ա. 1479-25) օրօք Եգիպտոսի եւ Միտաննիի միջեւ հակամարտութիւնը հասաւ բարձրակէտին[11]: Չնայած

մարդիկ գերուեցին: Ուշագրաւ է, որ մէկ մարտակառք իր կառավարով գերուեց եւ տրուեց փարաւոնին: Նահ(ա)րինա երկրում մարտակառք գրաւելու մասին նաեւ նշւում է համաժամանակեայ մէկ այլ աղբիւրում (J. H. Breasted, *Ancient Records of Egypt, vol. II*, University of Chicago Press, Chicago, 1906, էջ 81, 85. նաեւ՝ W. Helck, *Die Beziehungen Ägyptens zu Vorderasien im 3. und 2. Jahrtausend v. Chr., Ägyptologische Abhandlungen, Bd. 5*, Otto Harrassowitz, Wiesbaden, 1962, էջ 117. նաեւ՝ *Lexikon der Ägiptology, Bd. I-VII*, Otto Harrassowitz, Wiesbaden, 1975-92, *Bd. VI*, էջ 536): Նահ(ա)րինա անուանումը վերաբերում է Եփրատից արեւելք ընկած շրջաններին (C. Kühne, "*Politische Szenerie und Internationale Beziehungen Vorderasiens um die Mitte des 2. Jahrtausends vor Chr. (Zugleich ein Konzept der Kurzchronologie)*", *Mesopotamien und Seine Nachbarn: Politische und Kulturelle Wechselbeziehungen im Alten Vorderasien vom 4. bis 1. Jahrtausend v. Chr, Bd. I*, Berlin, 1982, էջ, 210. նաեւ՝ M. Dietrich und W. Mayer, *Der Hurritische Brief des Dušratta von Mittanni an Amenhotep III., Text - Grammatik – Kopie*, Alter Orient und Altes Testament, Bd. 382, Ugarit-Verlag, Münster, 2010 էջ 10,12):

[9] Helck, *Die Beziehungen,* էջ 118-20. նաեւ՝ Kühne, էջ 213-4:

[10] Н. Б. Янковская, *Ашшур, Митанни, Аррапхэ, История Древнего Мира* (Աշշուր, Միտաննի, Առապխէ, Հին Աշխարհի պատմութիւն), *հտր. 1*, Գիտութիւն, Մոսկուա, 1989, էջ 185-7. նաեւ՝ Dietrich und Mayer, էջ 12:

[11] Եգիպտական փարաւոնն իր գահակալութեան 33րդ տարում՝ 8րդ արշաւանքի ժամանակ (Ք.ա. 1446), անցաւ Որոնդէս գետի յարակից շրջաններով: Այնուհետեւ շարժուեց հիւսիս-արեւելք եւ Հալէպի ու Կարկեմիշի շրջանում տարած յաղթանակներից յետոյ Պիպլոսի մօտ պատրաստուած մակոյկներով եգիպտական զօրքի մի մասն անցաւ Եփրատը: Թութմոս Գ.ն, ի յիշատակ այս իրադարձութիւնների, արձանագրութիւն թողեց իր պապի՝ Թութմոս Ա.ի արձանագրութեան մօտ: Միտաննիի արքան, սակայն խուսափեց ճակատամարտից (Breasted, էջ 477-9, 579-90. նաեւ՝ W. Helck, *Urkunden der 18. Dynastie*, 1961, Akademie-

ռազմական յաջողութիւններին՝ Թութմոս Գ.ին չյաջողուեց հաստատուել անգամ հարաւային Սիրիայում[12]: Պայքարը շարունակուեց նաեւ Թութմոս Գ.ի որդի Ամենհոտէպ Բ.ի (Ք.ա. 1427-1400) եւ Միտաննիի արքայ Սաուսադատրի օրօք: Իր կառավարման 7րդ տարում փարաւոնը ձեռնարկեց ասիական հերթական արշաւանքը՝ Միտաննիի եւ նրան ենթակայ իշխանութիւնների դէմ՝ Ուկարիթ-Նիյա հատուածով: Փարաւոնը վերադարձին, Սարոն գետից հարաւ, գերեց Միտաննիի արքայի դեսպաններից մէկին - ում պարանոցից կախուած էր կաւէ սալիկ (նամակ) - եւ իր հետ տարաւ Եգիպտոս[13]: Եգիպտական արշաւանքներին դիմագրաւելուն զուգահեռ՝ Սաուսադատրի կառավարման շրջանում Միտաննիի ազդեցութիւնը տարածուեց Զագրոսեան Լեռներից մինչեւ Միջերկրական ծով՝ ներառելով Ալալահը, Ուկարիթը, Առապխան, գրաւուեց նաեւ Աշշուրը[14]:

ՄԻՏԱՆՆԻ-ԵԳԻՊՏՈՍ. ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՑ ԱՆՑՈՒՄ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԽՆԱՄԻԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տեւական պատերազմները երկու երկրներից խլել էին ահռելի միջոցներ, եւ Միտաննին ու Եգիպտոսը ստիպուած էին որոնել հաշտութեան եզրեր: Այդ իսկ պատճառով՝ Սաուսադատրը դեսպաններ ուղարկեց Ամեն-

---

Verlag, Berlin, էջ 5-12. նաեւ՝ Авдиев, *Цит. Ц.*, Մոսկուա, 1959, էջ 93-5): Եգիպտացիները գերեցին 3 իշխանների՝ իրենց 30 կանանցով, 80 տղամարդ եւ 606 ստրուկ (Breasted, էջ 480:) Այնուհետեւ եգիպտական զօրքը Եփրատի երկու ափերով, շարժուեց հարաւ՝ ամայացնելով մինչեւ Էմար բնակավայրն ընկած շրջանները, եւ անցնելով Եփրատը վերադարձաւ Եգիպտոս (Helck, *Die Beziehungen,* էջ 142-51. նաեւ՝ Dietrich und Mayer, էջ 15): Փարաւոնի գահակալութեան 35րդ տարում՝ 10րդ արշաւանքի ժամանակ, դարձեալ փորձ արուեց ներխուժել Միտաննի: Արան քաղաքի մօտ - հաւանաբար Հալէպի շրջանում – եգիպտական զօրքին հանդիպեց Միտաննիի բանակը՝ արքայի գլխաւորութեամբ: Ճակատամարտում եգիպտական կողմին անցան 10 գերի, 180 ձի եւ 60 մարտակառք (Breasted, էջ 498-501. նաեւ՝ Helck, *Die Beziehungen,* էջ 153):

[12] Այդ է վկայում 42րդ տարուայ արշաւանքը դէպի Տունիպ եւ Քադէշի շրջանում գտնուող երեք բնակավայրեր, որտեղ գտնւում էին միտաննիական կայազօրեր: Եգիպտացիների ձեռքն անցան 691 գերիներ, 48 ձիեր (Breasted, էջ 530-2. նաեւ՝ Helck, *Die Beziehungen*, էջ 153. նաեւ՝ Wilhelm, էջ 37):

[13] Helck, *Urkunden*, էջ 38. նաեւ՝ "Amenophis II.," *Lexikon der Ägiptology, Bd. I*, էջ 204:

[14] Մանրամասն տե՛ս՝ Helck, *Die Beziehungen*, էջ 161. նաեւ՝ Wilhelm, էջ 38. նաեւ՝ Հ.Մ. Աւետիսեան, *Հայկական Լեռնաշխարհի եւ Հիւսիսային Միջագետքի պետական կազմաւորումների քաղաքական պատմութիւնը մ.թ.ա XVII-IXդդ.*, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 2002, էջ 37-9:

հոտէպ Բ.ի մօտ՝ հաշտութիւն կնքելու համար[15]: Թերեւս կողմերին յաջողուել է հասնել փոխադարձ համաձայնութեան: Այս ենթադրութեան հիմք է ծառայում Ամենհոտէպ Բ.ի կառավարիչ Կենամունի՝ Թեբէի դամբարանում պատկերուած երկու մարտակառքերը, իսկ արձանագրութիւնում նշւում է, որ մարտակառքերի համար շինանիւթ բերւում էր աստուածների երկրից՝ Նահարայինիի լեռներից[16]: Այս փաստը յուշում է երկու երկրների միջեւ հաստատուած խաղաղութեան եւ առեւտրական յարաբերութիւնների մասին:

Միտաննիից Եգիպտոս եւ հակառակն ուղեւորւում էին Հորի ճանապարհով՝ Ռաֆահ-Կազա, այնուհետեւ հաւանաբար՝ Ասկալոն-Երուսաղէմ-Կեզէր-Սիխէմ-Մեկիտօ-Ամուրու-Քաթնա: Հեռաւորութիւնը Միտաննիի մայրաքաղաք Վաշշուգանիից մինչեւ Մեմֆիս եղել է մօտ 1550կմ, մինչեւ Թեբէ՝ 2250կմ, ԷլԱմառնա՝ 1850կմ: Օրական 50-65կմ ընթանալու հաշուարկով, կարելի էր Մեմֆիս հասնել 24-31, Թեբէ՝ 29-37 եւ ԷլԱմառնա՝ 35-45 օրում, իսկ սուրհանդակների համար առաւելագոյն՝ 85կմ արագութեամբ, համապատասխանաբար՝ 19, 22 եւ 27 օրում[17]:

Ք.ա. ԺԵ. դարի սկզբին Եգիպտոսի ու Միտաննիի միջեւ սկսուած պատերազմները շուրջ մէկ դար անց աւարտուեցին դաշինքի կնքմամբ[18], Թութմոս Դ.ի (Ք.ա. 1400-1390) եւ Միտաննիի արքայ Արտադամա Ա.ի դստեր ամուսնութեամբ[19]: Հիւսիսային Սիրիան եւ այստեղից դէպի արեւ-

---

[15] Breasted, էջ 804: Հելքը ենթադրում է, որ դա պայմանաւորուած է եղել խեթական սպառնալիքով (Helck, *Die Beziehungen*, էջ 161):


[16] Այստեղ պատկերուած մարտակառքերը համանման են Թեբէից գտնուած մարտակառքին: Մարտակառքի համար օգտագործուած կեչու եւ հացենու հումքի շրջանը Դիթմանը համարում է Կովկասը (K. H. Dittman, "*Die Herkunft des Altägyptischen Streitwagens in Florenz*", Germania, Berlin, 18(4):1934, էջ 249-52): Գէօթցէն այն տեղորոշում է Տրապիզոնի եւ Արարատ լեռան միջեւ ընկած շրջանում (Götze, էջ 104). նաեւ՝ "Kenamun," *Lexikon der Ägiptology, Bd. III*, էջ 386:

[17] Մանրամասն տե՛ս՝ N. M. Ouda, "Die Mittel der Internationalen Kommunikation Zwischen Ägypten und Staaten Vorderasiens in der Späten Bronzezeit," Inaugural-Dissertation zur Erlangung der Doktorwürde der Philosophischen Fakultät der Albert-Ludwigs-Universität Freiburg i. Br. (https://freidok.uni-freiburg.de/fedora/objects/freidok:1136/datastreams/FILE1/content), էջ 63-8:

[18] Թութմոս Դ.ի օրօք, մինչ այդ, նոյնպէս կատարուել են երկու ասիական արշաւանքներ, որոնցից մէկն ուղղուած էր Նահ(ա)րինայի դէմ (Breasted, էջ 814. նաեւ՝ "Thutmosis IV.," *Lexikon der Ägiptology*, Bd., էջ 550):

[19] Միտաննիի արքան համաձայնեց միայն եգիպտական պատուիրակութեան եօթերորդ այցից յետոյ (H. P. Adler, *Das Akkadische des Königs Tusratta von Mitanni,* Alter Orient und Altes Testament, Bd. 201, Neukirchen-Vluyn, Neukirchener Verlag, 1976, էջ 233, Kn 29_{16-18}):

մուտք՝ Միջերկրական ծով դուրս եկող հատուածը մնացին Միտաննիի ազդե-ցութեան ներքոյ, իսկ հարաւ ընկած շրջանները՝ Եգիպտոսի:



Թուշրատտայի նամակն Ամենհոտէպ Գ.ին (https://www.worldhistory.org/image/4044/amarna-letter-tablet-from-tushratta/)

Եգիպտոսի յաջորդ փարաւոն Ամենհոտէպ Գ.ի (Ք.ա. 1390-52) գահակալութեան 10րդ տարում՝ ամուսնութեան վեց խնդրանքից յետոյ՝ Թեբէ ուղարկուեց Միտաննիի արքայ Շուտտարնա Բ.ի դուստր Գիլուխեպան՝ 317 ստրկուհիների հետ: Այս իրադարձութիւնը, ելնելով իր կարեւորութիւնից, արձանագրուել է նաեւ որպէս յիշատակ՝ «կոյաբզէզի» վրայ[20], Գիլուխեպային բնութագրելով որպէս «հրաշք»[21]: Շուտտարնա Բ.ի մահից յետոյ Միտաննիում գահն անցաւ Արտաշումարային, եւ հաւանաբար հակաեգիպտական ուժերի կողմից նրա սպանութիւնից յետոյ, Եգիպտոսի հետ դիւանագիտական յարաբերութիւնները ժամանակաւորապէս ընդհատուեցին[22]:

Երկու երկրների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները վերականգնուեցին Տուշրաթթա արքայի օրօք, երբ վերջինս կարողացաւ լուծել եղբօր՝ Արտաշումարայի սպանութեան վրէժը[23]: Տուշրաթթայի առաջին քայլը եղաւ վեզիր Գիլիայի եւ Տունիփիրիի միջոցով փարաւոնին ուղարկել խէթական ներխուժման դէմ տարած յաղթանակի ռազմաւարից մարտակառք եւ երկու ձի, 5 կառք՝ իր ձիերով, իսկ քրոջ համար՝ ոսկէ կրծքազարդ եւ ականջօղեր, քարէ ամանով իւղ[24]:

[20] Այն բզէզի ձեւով կնիք է, առնչւում է արեւի պաշտամունքին, կեանքի եւ վերածննդի գաղափարին եւ գործածւում էր որպէս յուռութք:

[21] Adler, էջ 233, Kn29$_{19-20}$. նաեւ՝ Helck, *Die Beziehungen,* էջ 234:

[22] Adler, էջ 123, Kn$_{11-20}$. նաեւ՝ Dietrich und Mayer, էջ 17-8:

[23] Adler, էջ 123, Kn 17$_{11-20}$:

[24] Նոյն, էջ 125, Kn 17$_{36-38, 41-47}$. նաեւ՝ Dietrich und Mayer, էջ 20:

Պատուիրակութեան վերադարձից յետոյ փարաւոնի դեսպանը՝ Մանէն, «մշակուած» ոսկով հանդերձ, ներկայանում է Միտաննիի արքունիք՝ խնդրելու արքայադստեր ձեռքը[25]: Տուշրաթթան, տալով իր համաձայնութիւնը, դարձեալ Գիլիայի միջոցով նուէրներ է ուղարկում փարաւոնին[26]: Տուշրաթթան «չմշակուած» ոսկի էր խնդրում փարաւոնից՝ որպէս հարսնացուի համար վճարուող գին եւ իր հօր KARAŠKը (դամբարանը) պատրաստելու համար, յիշեցնելով, որ նա իր հօրն ուղարկել է շատ ոսկի՝ գարեջրի չաներ (լայնաբերան տակառաձեւ անօթ) ու կժեր, նաեւ ոսկէ «աղիւսներ»՝ ձուլակտորներ[27]:

Փարաւոնի դեսպան Մանէն՝ զինուորների ուղեկցութեամբ, պատասխան նամակով դարձեալ ներկայանում է Միտաննիի արքունիք՝ հարսնացուին Եգիպտոս տանելու համար[28]: Այնուհետեւ, արդէն, փարաւոնին եգիպտական նամակաբեր Haramâššի միջոցով ուղարկուած պատասխան-նամակում նշւում է, որ Մանէն, Գիլիան եւ հարսնացուն նախապատրաստութիւններից յետոյ 6րդ ամսում կ'ուղեւորուեն Եգիպտոս[29]: Տուշրաթթայի՝ փարաւոնին եգիպտական նամակաբեր Nahramaššiի միջոցով ուղարկուած յաջորդ նամակից տեղեկանում ենք, որ դեսպան Մանէն եւ թարգմանիչ Խանէն դեռ գտնւում են արքունիքում[30]:

Միքանի տարի տեւած բանակցութիւններից եւ ընծաների փոխանակումից յետոյ փարաւոն Ամենհոտէպ Գ.ը Ք.ա. 1356ին ամուսնացաւ Տուշրաթթայի դստեր՝ Տադուխեբայի հետ[31]: Մինչ Տադուխեբան կը հասնէր Ե-

---

[25] Adler, էջ 129 Kn 19 17-19, 49-53:

[26] Ոսկեդրուագ գաւաթ՝ բռնակը լեռնային լիապիսից, լեռնային լիապիսի քարերից եւ ուսկուց մանեակ, 10 կառքեր՝ ձիերով, ինչպէս նաեւ նոնյքան փայտէ մարտակառքեր, նաեւ 30 կանայք՝ հարէմի համար (Adler, էջ 135, Kn 19$_{80-85}$):

[27] Adler, էջ 131-133, Kn 19 34-38, 54-58:

[28] Նոյն, էջ 137, Kn 20$_{8-10}$: Փարաւոնի ուղարկած նուէրները սակայն ոսկուց չէին (նոյն՝ տող 39-59):

[29] Նոյն, էջ 139 Kn 20$_{23-27}$:

[30] Տուշրաթթան նաեւ փարաւոնին ուղարկում էր նուէր մանեակ՝ լեռնային քարերից, լիապիսից եւ ոսկուց (Adler, էջ 145-7, Kn21$_{24-41}$):

[31] Helck, *Die Beziehungen,* էջ 176. նաեւ՝ "Mittan(n)i. A," *Reallexikon*, էջ 295: Հարսնացուի հետ Եգիպտոս ուղարկուեցին ձիեր, մարտակառք, կառքի առեղներ, սռնակներ, լծուածքներ, սանձեր՝ բրդից եւ դաբաղած կաշուից, կնիքներ, դաշոյններ, տէգեր, նիզակի ծայրեր, նետ-աղեղներ, բրոնզից եւ կաշուից զրահներ, ալաբաստրից եւ մալաքիտից սաղաւարտներ, ապարանջաններ, ոտքի օղ, մանեակներ, ոսկէ կեղծամ, կաշուից եւ կտորից կօշիկներ՝ ոսկով եւ քարերով զարդարուած, բազմաթիւ զգեստներ, վերարկուներ խուրրիական եւ անգամ Լուրիստանից, գլխափաթոց, խոզանակ, ցուպ, քարից սանրեր, սրուակ եւ աղաման, հացի մատուցարաններ, 10 տարբեր իւղերով ամաններ (խունկ, դափնեվարդ,

գիպտոս, Տուշրաթթան փարաւոնին ուղարկեց խուրրիերէնով գրուած, բազմաթիւ նրբիմաստներ բովանդակող նամակ: Նամակը գրուել էր խուրրիերէն, որն ի տարբերութիւն աքքադերէնի հնարաւորութիւն կը տար նրբամտօրէն եւ երկիմաստ լեզուամիջոցներով արտայայտել իր ցանկութիւններն ու հիասթափութիւնը[32]: Այս նամակը եգիպտական արքունիքում թերեւս ընթերցել է Տուշրաթթայի կինը՝ Իւնին, ով հաւանաբար Եգիպտոսից էր սերում[33]: Տադուխեբայի ժամանելու առթիւ փարաւոնը կազմակերպեց մեծ հանդիսութիւն[34]: Տուշրաթթան, չնայած իր ունեցած դժգոհութիւններին, փարաւոնի գահակալութեան 36րդ տարում, նրան բուժելու

բալասան եւն.), գդալներ, ծածկոցներ, կողպէքներ, դոյլեր, տաշտեր, մաղ, տապակ, խնկաման, պատուանդաններ եւ կենցաղային բազմաբնոյթ այլ իրեր: Նուէրների պատրաստման համար գործածուել էին լեռնային լազուրիտ, լիապիս, փղոսկր, ալաբաստր, բրոնզ, պողպատ, երկաթ, էբենոսեան փայտ եւ 800 սիկղից աւել ոսկի (մարամասն տե՛ս՝ Adler, էջ 148-69, Kn 22): Թութանհամոն փարաւոնի քարադագաղում գտնուել են երկու միանման դաշոյններ՝ ոսկէ եւ երկաթէ շեղբերով. վերջինիս բռնակի գլխիկը լեռնային բիւրեղից է: Պիոտրովսկին, ելնելով դաշոյնների ոճից եւ նշելով վերոյիշեալ նուէրներում 3 դաշոյնների առկայութիւնը (երկուսը պողպատից, մէկը՝ երկաթից, բռնակները քարէ գլխիկով), կարծում է, որ դաշոյնները Եգիպտոսում չեն պատրաստուել (Adler, Kn 22, Col. I32-35, II16-19, III7-9. նաեւ՝ Б.Б. Пиотровский, *Об Иноземных Предметах в Гробнице Тутанхамона,-Тутанхамон и его Время* («Թութանհամոնի դամբարանի օտարերկրեայ առարկաները», Թութանհամոնը եւ նրա ժամանակը), Մոսկուա, 1976, էջ 12-6):

[32] Տուշրաթթան նամակում ակնարկում էր խէթերի հետ թշնամութիւնը եւ փոխօգնութիւնը՝ վտանգի դէպքում (G. Wilhelm, "*Der Brief Tušrattas von Mittani an Amenophis III. in Hurritischer Sprache (EA 24)", Texte aus der Umwelt des Alten Testaments (Neue Folge),* Gütersloh, 3:2006, I § 214-15,III § 26, 108-124. նաեւ՝ Dietrich und Mayer, I8-15, III108-124): Նա առաջարկում է համեմատել Տադուխեբայի օժիտի սալիկը արքունիքում գտնուող իր հօրաքրոջ եւ քրոջ սալիկների հետ (III § 2235-43, III35-43. նաեւ՝ Wilhelm, IV § 2835-44. նաեւ՝ Dietrich und Mayer Mayer, IV35-44), նշում, որ Եգիպտոս ուղարկել է աւելի շատ նուէրներ քան իր պապն ու հայրը, սակայն չի ստացել անգամ նրանց ուղարկուած ոսկու չափ (III § 2449-71, III49-107), նաեւ յիշեցնում ակնկալուող փղոսկրէ եւ էբենոսեան փայտից նուէրների մասին (II §1457-64, II,57-64,), յորդորում Գիլիային, ինչպէս նաեւ Արթեշուպային եւ գրագիր Ասալիին հնարաւորինս արագ ետ ուղարկել, իսկ եգիպտական դեսպան Մանէի փոխարէն ուրիշին չուղարկել (IV § 28-31 30-57, IV 30_57):

[33] Adler, էջ 206-13, Kn2658-63. նաեւ՝ Dietrich und Mayer, էջ 21-2:

[34] Adler, էջ 232-3, Kn2928-30. նաեւ՝ Silke Roth, *Gebieterin aller Lander. Die Rolle der Koniglichen Frauen in der Fiktiven und Realen Aussenpolitik des Agyptischen Neuen Reiches*, Univ.-Verl., Göttingen, 2002, էջ 120:

համար, Եգիպտոս ուղարկեց Նինուէի Իշթարի արձանը, ինչպէս ժամանակին դա արել էր իր հայրը[35]:

Ամենհոտէպ Գ.ի մահից յետոյ նոր փարաւոն Ամենհոտէպ Դ.ն (Ք.ա. 1352-36) ժառանգեց հօր հարէմը՝ եւ Տադուխեբան դարձաւ նրա կինը[36]: Միտաննիի արքայ Տուշրաթթան Ամենհոտէպ Գ.ի այրուն՝ Տէյէին ուղարկած նամակում, ակնկալելով նրա աջակցութիւնը, մէջբերում է Ամենհոտէպ Գ.ի եւ Տուշրաթթայի հօր միջեւ եղած բարեկամութեան մասին Տէյէի խօսքերն՝ ուղղուած դեսպան Գիլիային, եւ յորդորում՝ այն չմոռանալ: Նա նաեւ պահանջում է ուղարկել Ամենհոտէպ Գ.ի խոստացած ոսկէ արձանները[37], քանի որ Ամենհոտէպ Դ.ն (Էխնաթոն) Մանէի հետ Միտաննի էր ուղարկել Տուշրաթթայի եւ Տադուխեպայի փայտէ ոսկեզօծ արձանները[38]: Ամենհոտէպ Դ.ին ուղարկուած վերջին նամակում Տուշրաթթան նշում էր, որ արդէն չորս տարի է սպասում է ոսկէ արձաններին[39]: Ակնկալուող օ-

---

[35] Adler, էջ 171-3, Kn23$_{18\text{-}25}$: Հաւանաբար, այս հանգամանքը նպաստեց նաեւ Եգիպտոսում «խուրրիական» Իշթարի պաշտամունքի տարածմանը (Helck, *Die Beziehungen,* էջ 176, 493-4): Այն կարող էր ուղարկուած լինել նաեւ Մարտինից հիւսիս, հիւսիս-արեւմուտք գտնուող մայրաքաղաք Վաշշուգանիից (Wilhelm, էջ 38, 41):

[36] Roth, էջ 107: Հաւանաբար հենց այդ ժամանակ էլ դարձեալ Եգիպտոս ուղարկուեց ամուսնական օժիտ՝ բազմաթիւ ոսկէ ականջօղեր, ոսկուց եւ քարերից կրծքազարդեր, լիապիսից, ոսկուց, սարդիոնից օբսիդիանից «կտրուած օղեր»: Սարդիոնից եւ ոսկուց նոներ, մալաքիտից, երկաթից, լիապիսից կնիքներ, կնիքի օղեր՝ ձեռքի համար, ոսկուց ձեռքի եւ ոտքի օղեր, իւղի գդալներ, ոսկուց տաշտեր, արծաթից հայելիներ, ոսկուց «սրտեր», արծաթից սանրեր, մեծ եւ փոքր փղոսկրից «եղջիւրներ», ցլի եղջիւրներ, ոսկուց, արծաթից, եղջիւրից իլիկներ, քարէ 10 ամաններով իւղեր, բրոնզից գարեջրի չաներ, դաշոյններ, զգեստներ, նուէրներ՝ աղախինների եւ դրանիկների համար (մարամասն տե՛ս՝ Adler, էջ 175-205, Kn 25):

[37] Adler, էջ 206-21, Kn26$_{19\text{-}29,\ 30\text{-}48}$:

[38] Նոյն, էջ 212-25, Kn27 $_{19\text{-}27}$: Տուշրաթթան խոչընդոտել էր Մանէի վերադարձը, ակնարկելով, որ նա կը վերադառնայ երբ իր դեսպանները վերադառնան: Նա փարաւոնի ուղարկած Hamaššի հետ Եգիպտոս ուղարկեց այս անգամ դեսպաններ Փիրիզիին ու Փուփրիին, փարաւոնին ուղարկելով նուէր վերարկուներ, Տէյէին եւ Տադուխեբային քարէ ամանով իւղ եւ զարդ (նոյն, Kn27$_{84,\ 93\text{-}99,\ 89\text{-}90,\ 110\text{-}114}$): Դեսպանների վերադարձը, սակայն շարունակում էր ձգձգուել եւ Մանէն էլ դեռ գտնւում էր Տուշրաթթայի մօտ (նոյն, էջ 226-229 Kn 28$_{12\text{-}19}$):

[39] Գիլիայից յետոյ Տուշրաթթան Եգիպտոս էր ուղարկել նրա հօրեղբօրը՝ Մազիպատլիին եւ այնուհետեւ - որպէս սուրհանդակ - Գիլիայի եղբօրը: Ուշագրաւ է, որ Գիլիայի ընտանիքը հմտացած էր Եգիպտոսի հետ դիւանագիտական յարաբերութիւնների ոլորտում (Ouda, էջ 41): Տուշրաթթան առաջարկում էր իր դեսպանների հետ ուղարկել նաեւ Մանէին, իսկ այնուհետեւ նա ցանկանում էր Գիլ-

ժանդակութիւնը Եգիպտոսից, սակայն այդպէս էլ չստացուեց: Ամենհոտէպ Դ.ի օրօք էլ աւարտուեցին Եգիպտոսի հետ դիւանագիտական յարաբերութիւնները, իսկ որոշ ժամանակ անց Տուշրաթթան սպանուեց, Միտաննին նուաճուեց եւ զրկուեց ինքնուրոյնութիւնից[40]: Եգիպտոսում ներքին խնդիրներով եւ կրօնական բարեփոխումներով զբաղուած նոր փարաւոն Ամենհոտէպ Դ.ի համար, ի տարբերութիւն նախորդ փարաւոնների, իր դաշնակից երկիր Միտաննիում ընթացող եւ տարածաշրջանի համար վճռորոշ իրադարձութիւնները պարզապէս միեւնոյն էին:

Այսպիսով, Ք.ա. ԺԴ. դարից սկսած՝ Եգիպտոս-Միտաննի դաշինքը պարբերաբար ամրապնդւում էր եգիպտական փարաւոնների եւ միտաննիական արքայադստրերի ամուսնութեամբ: Վերջիններս Եգիպտոս էին մեկնում սեփական ծառաների խմբով: Արքայադստրերը եգիպտական արքունիքում նաեւ իրենց երկրների շահերի ներկայացուցիչներն էին: Միտաննիական արքունիքում, թերեւս նոյնպէս եղել են Եգիպտոսի նշանաւոր տոհմերից սերող հարսեր: Երկու երկրների յարաբերութիւնները վստահուել էին մասնագիտացուած դիւանագէտների: Միմեանց ուղարկուած նուէրները միջազգային ապրանքափոխանակութեան բնոյթ էին կրում: Դատելով ուղարկուած նուէրներից՝ միտաննիական փայտէ ու մետաղէ իրերը, թանակարժէք լեռնային քարերը, մարտակառքերն ու ձիերը մեծ պահանջարկ ունէին Եգիպտոսում:

ՄԻՏԱՆՆԻ-ԵԳԻՊՏՈՍ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՅԼ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ

Հայկական Լեռնաշխարհի եւ Եգիպտոսի միջեւ եղած կապերը հաստատւում են զանազան գտածոներով: Ստորեւ կը բերենք միքանին.-

Առաջին հերթին պէտք է մատնանշել Մեծամօրում գտնուած եգիպտական հիերոգլիֆ արձանագրութեամբ՝ Մեծ Սանգար (Բաբելոն) երկրի առաջնորդ Կուրիգալզու, սարդիոնէ գլանաձեւ կնիքը[41]:

իային կարաւանով ուղարկել Եգիպտոս: Տուշրաթթան նաեւ առաջարկում էր փարաւոնին Եգիպտոսում, ինչ-որ յանցանք գործելու մէջ մեղադրուող Արթեշուպայի եւ Ասալիի պատժել (Adler, էջ 230-52, Kn28$_{111\text{-}114,\ 155\text{-}162,\ 166\text{-}172,\ 173\text{-}181}$):

[40] Մանրամասն տե՛ս՝ "Mitan(n)i. A," *Reallexikon*, 295. նաեւ՝ Wilhelm, էջ 52:

[41] Դամբարանում՝ որտեղ գտնուել է կնիքը, յայտնաբերուած խեցեղէնը թուագրւում է Ք.ա. ԺԱ.-Թ. դարերով: Ըստ Պիոտրովսկու՝ այն, հաւանաբար, եղել է Ամենհոտէպ Գ.ի նուէրը Բաբելոնի արքայ Կուրիգալզու Ա.ին: Այն բերուել է Մեծամօր Սիրիայի տարածքով եւ Արածանիի հովտով (Э. В. Ханзадян, Б. Б. Пиотровский, "Цилиндрическая Печать с Древнеегипетской Иероглифической Надписью из Мецаморского Могильника" (Մեծամօրի դամբարանադաշտում գտնուած հին եգիպտական հիերոգլիֆներով գլանաձեւ կնիք), *Պատմաբա-նասիրական հանդէս*, 4:1984, էջ 59-65): Նշենք նաեւ, որ Կուրիգալզու Ա.ն նոյնպէս Ամենհոտէպ Գ.ին կնութեան էր ուղարկել իր դստերը (Roth, էջ 106): Պիոտ-





Եգիպտական հիերոգլիֆներով կնիքը՝ «*Մեծամոր*» պատմահնագիտական արգելոց-*թանգարան 17/214*

Կնիքի ոճը վկայում է, որ այն պատրաստուել է Ուկարիթում՝ եգիպտերէնին տիրապետող, խուրրի վարպետի կողմից[42]: Ուկարիթը՝ միմեանց զուգորդուող եգիպտական, միջագետքեան, խուրրիական եւ եգէական մշակոյթների իւրօրինակ խառնարանը, այդ ժամանակաշրջանում՝ Ամենհոտէպ Գ.ի օրօք, Եգիպտոսի կազմում էր գտնուում[43]:

Հաշուի առնելով նաեւ Հայկական Լեռնաշխարհի հիւսիսարեւելեան շրջաններում գտնուած միտաննիական կնիքները (Ք.ա. ԺԵ.-ԺԴ. դդ.)[44], այս կնիքի

[42] Կնիքի վրայ պատկերուած են մօրուքաւոր տղամարդ՝ գահի վրայ նստած եւ նրա դիմաց՝ կանգնած կին, որոնք երկուսն էլ անօթներ են պահում ձեռքերում: Կենդանու ոտքերով գահը (որի ներքեւում դարձեալ անօթ է պատկերուած) եւ դրա վրայ նստած տղամարդու ընդգծուած պատկերը բազմաթիւ զուգահեռներ ունեն Նոր Թագաւորութեան պատկերագրութիւնում: Այնումամէնայնիւ, դրանք արտասովոր են եւ համեմատելի՝ Սիրիայից յայտնի հարկատուութեան եւ գերեվարութեան եգիպտական պատկերների հետ: Անօթներն ու մարդկանց մէջտեղում պատկերուած մորեխն ունեն միկենեան, հինարեւելեան եւ եգիպտական զուգահեռներ (Arutz, էջ 147. նաեւ՝ Ա. Փիլիպոսեան, *Հայկական Լեռնաշխարհի կնիքները Հին Արեւելքի կնքագործութեան համակարգում*, Վան Արեան հրատ., Երեւան, 1998, էջ 55):

[43] Wilhelm, էջ 39-40:

[44] Փիլիպոսեան, էջ 42-3. նաեւ նոյնի՝ «Տեսարանային յօրինուածքներով հինմերձաւորարեւելեան եւ միջերկրածովեան գլանաձեւ կնիքներն ու դրանց արթիկեան զուգահեռները, «Արագածի թիկունքում», *Հնագիտական հետազօտութիւններ*

յայտնաբերումը Մեծամօրում հարկ է միտաննիական միջնորդութեամբ բացատրել[45]: Քանի որ կնիքի պատրաստման ժամանակաշրջանից (Ք.ա. ԺԴ. դար) մինչեւ Միտաննիի անկումը ընկած ժամանակաշրջանում է հնարաւոր նման «հեռաւոր ճանապարհորդութիւն» պատկերացնել Ուկարիթից, կամ՝ անգամ Բաբելոնից, երբ սոյն տարածաշրջանը խաղաղ էր, իսկ այդ ուղիներն անցնում էին Հայկական Լեռնաշխարհի հարաւով՝ Միտաննիով: Դա նաեւ փաստում է այն հանգամանքը, որ բացի Մեծամօրի սոյն կնիքից, մինչեւ Վանի Թագաւորութեան ժամանակաշրջանը Հայկական Լեռնաշխարհում դեռեւս յայտնի չեն եգիպտական այլ գտածոներ:

Հայկական Լեռնաշխարհի եւ Եգիպտոսի միջեւ եղած կապերի ապացոյցների երկրորդ խումբը վերաբերում է ուրարտական շրջանին:

ԵԳԻՊՏԱ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայկական Լեռնաշխարհում Ք.ա. Թ. դարում Վան եւ Ուրմիա լճերի աւազանի միջակայքում ընկած հատուածում ձեւաւորուեց Վանի Թագաւորութիւնը (Բիայնիլի-Ուրարտու): Ք.ա. Ը. դարում դառնալով տարածաշրջանի զօրեղ երկրներից մէկն, Ուրարտուն ուղիղ կամ միջնորդաւորուած շփումներ էր ունենում Հին Արեւելքի երկրների եւ ժողովուրդների հետ:

Փիւնիկէն մինչեւ Ք.ա. Է. դարի երկրորդ կէսը առեւտրի հիմնական միջնորդն էր Առաջաւոր Ասիայի երկրների եւ Եգիպտոսի միջեւ եւ Ուրարտուն մշտապէս առեւտրային յարաբերութիւններ ունէր Սիտոնի եւ Տիւրոսի հետ: Այնուհետեւ յոյներն այստեղ հիմնեցին բնակավայրեր եւ սկսեցին իրականացնել առեւտուրը, փոխարինելով փիւնիկեցիներին[46]: Ըստ Պիոտրովսկու, եգիպտական իրեր Ք.ա. Է. դարում Վանի Թագաւորութիւն ներմուծուել են Ասորեստանից, Եգիպտոսի նուաճումից յետոյ[47]:

նուիրուած Տելեմակ Խաչատրեանի յիշատակին, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2018, էջ 114-22:

[45] Ելնելով միտաննիական կնիքների յայտնաբերումից՝ Աւետիսեանը կարծում է, որ Միտաննիի քաղաքական ազդեցութիւնը հասել է մինչեւ Հայկական Լեռնաշխարհի հիւսիսարեւելեան շրջաններ (Աւետիսեան, էջ 41):

[46] Б. Б. Пиотровский, "Древнеегипетские Предметы, Найденные на Территории Советского Союза," *Советская Археология* (Սովետական Միութեան տարածքում գտնուած հին եգիպտական իրերը, *Սովետական հնագիտութիւն*), 1:1958, էջ 22. նաեւ՝ Лэнг, էջ 101:

[47] Եգիպտոսի հետ Ասորեստանն առեւտրային յարաբերութիւններ հաստատեց Թիգլաթպալասար Գ. (Ք.ա. 744-27) արքայի օրօք, երբ Կազայում հիմնուեց առեւտրական կենտրոն: Ասորեստանի արքայ Ասարհադդոնը (Ք.ա. 680-69) Ք.ա. 671ին արշաւեց Եգիպտոս. Մեմֆիսը գրաւուեց ու կողոպտուեց եւ ասորեստանեան տիրապետութեան տակ յայտնուեց ստորին Եգիպտոսը: Բռնկուած ապստամբութիւնից յետոյ նոր գահակալ Աշշուրբանապալը (Ք.ա. 668-31) ձեռնամուխ

Այս ժամանակաշրջանում ասորեստանեան միջնորդութեան տարբերակը թերեւս հաստատում է նաեւ Թեբէում գտնուած երկաթէ սղոցը: Վերջինիս առկայութիւնն այստեղ այն յայտնաբերողը բացատրում է ասորեստանեան տիրապետութեամբ[48]: Ուրարտական Ռուսախինիլի (*Թոփրակկալէ*) ամրոցից գտնուած չորս երկաթէ սղոցները Վարտկէն համարում է հնագոյնները ողջ Հին Արեւելքում, բացառիկութիւն համարելով վերոյիշեալ եգիպտական գտածոն: Երկաթի կիրառումը, ժամանակաշրջանի համընկնումը եւ ասորեստանեան տիրապետութեան հանգամանքը յուշում են, որ այն կարող է Թեբէ բերուած լինել Հայկական Լեռնաշխարհից:

Հայկական Լեռնաշխարհ-Եգիպտոս փոխյարաբերութիւնների կողմնակի ապացոյց եւ դրսեւորում է նաեւ եգիպտական արուեստի ազդեցութիւնը ուրարտականի վրայ: Եգիպտական ոճի ներազդեցութեան լաւագոյն օրինակ է հանդիսանում Ռուսախինիլիից գտնուած թեւաւոր մարդու արձանիկը, որը թերեւս ագուցուած է եղել վիթխարի բրոնզէ կաթսայի շրթին: Այն ունի ուռուցիկ եւ արհեստականօրէն ձգուած աչքեր, արտայայտիչ կերպով ընդգծուած յօնքեր: Այս ոճն առաջացել է Եգիպտոսում եւ յետագայում տարածուել Փիւնիկէում ու Սիրիայում[49]: Թէյշեբա աստծոյ՝ Արծկէի յայտնի բարձրաքանդակին անդրադառնալիս, Վան Լունը նշում է. «*Ուրարտական սուրբ ծառը ներշնչմամբ աւելի մօտ է թւում այս ոճի սիրիական տարբերակին, որը բաղկացած է լոտոս բոյսի տարրերից, որոնք, իվերջոյ, ծագում են Եգիպտոսից*»[50]:

Վանի Թագաւորութեան արքայ Ռուսա Բ.ի (Ք.ա. 685-45) հիմնած վարչատնտեսական կենտրոն Թէյշեբաինիից (Կարմիր-բլուր) գտնուել է գործածումից վնասուած եգիպտական Սոխմէթ՝ Մեմֆիս քաղաքի աստուածուհու պատկերով մածուկէ, կանաչ ջնարակով պատուած կախիկ[51]:

եղաւ Եգիպտոսի հնազանդեցմանը. ասորեստանեան զօրքը Ք.ա. 667ին գրաւեց Մեմֆիսն ու դելտայի շրջանը, իսկ 664ին՝ Թեբէն եւ հարուստ աւարով վերադարձաւ Ասորեստան (Hans-Ulrich Onasch, *Die Assyrischen Eroberungen Ägyptens (*Ägypten *und altes Testament, Bd. 27/1)*, Harrassowitz Verlag, Wiesbaden, 1994, էջ 23-29, 150-158. նաեւ՝ "Assurbanipal," *Lexikon der Ägiptology, Bd. I*, էջ 261:

[48] R. B. Wartke, *Toprakkale: Untersuchungen zu den Metallobjekten im Vorderasiatischen Museum zu Berlin (Schriften zur Geschichte und Kultur des Alten Orients, 22)*, Akademie-Verlag, Berlin, 1990, էջ 113-4:

[49] E. Akurgal, *Urartäische und Altiranische Kunstzentren*, Ankara, 1968, էջ 26:

[50] M. Vaan Loon, *Urartian Art*, Leiden, 1966, էջ 74-5:

[51] Առիւծի գլխով կանգնած աստուածուհին ձախ ձեռքում բռնած ունի կեանքի խորհրդանիշը, իսկ աջում՝ գաւազան (Б.Б. Пиотровский, *Кармир-блур* (Կարմիր-բլուր), *I*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1950, էջ 83-4): Նա հանդիսանում էր ռազմի եւ հիւանդութիւններ բուժող աստուածուհի (*Lexikon der Ägiptology* , *Bd. 5*, էջ 323-9):

Այս կախիկի հետ նոյն սենեակում գտնուել են նաեւ ասորեստանեան կնիքներ: Դժուար է ասել՝ արդեօ՞ք պատահական զուգադիպութիւն է ուրարտական ռազմի աստծոյ անունը կրող ամրոցում, եգիպտական ռազմի աստուածուհու կախիկի առկայութիւնը:





Բէս աստծոյ կախիկ, կրկնօրինակ («Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան Գ.Օ.Ն. 31).
Եգիպտական ոճով սրուակի բեկոր Թէյշեբաիինից (Հայաստանի Պատմութեան Թանգարան N2010–91)

Կարմիր-բլուրից գտնուել են նաեւ չորս կիսաշրջանաձեւ յուռութքներ՝ որոնցից երկուսի վրայ փորագրուած են հիերոգլիֆներ, միւսների՝ զոհասեղանի (կամ՝ ոսկու նշանի) եւ ձկան պատկերներ[52]:

Պեղումների ժամանակ այստեղից յայտնաբերուել է «կոյաբզէզ», որի ստորին մասում պատկերուած է շուն եւ վերջինիս ետեւում՝ թուփ[53]: Թէյ-

[52] Եգիպտոսում ձկները եղել են մահուանից յետոյ հանդերձեալ կեանքի երաշխաւորը եւ յուռութքների վրայ յաճախ պատկերուել է տիլապիա ձուկը (*Lexikon der Ägiptology*, *Bd.II*, էջ 233):

[53] Շունը խորհրդանշում է Անուբիսին՝ որպէս երկար կեանքի, կենսատու ուժերի երաշխաւոր (Ch. Herrmann, *Ägyptische Amulette aus Palästina/Israel II*, Academic Press Fribourg, Göttingen, 1994, էջ 127): Հնարաւոր է, որ այս իրերը կրկնօրինակուել են Փոքր Ասիայի եւ Արեւելեան Միջերկրածովի քաղաքներում (Пиотровский, էջ 84. նաեւ նոյնի՝ *Кармир-блур*, *III*, 1955, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, էջ 54):

շեբաինիից գտնուել է նաեւ բիտումից (հանքաձիւթ) պատրաստուած կնքադրոշմ, որի վրայ պահպանուած թէլի մնացորդները եւ ստորին հատուածին առկայ հետքերը վկայում են, որ այն գործածել են պապիրուսի փաթէթը կնքելու համար[54]:

Ի թիւս սոյն իրերի՝ Թէյշեբաինիից յատնաբերուել է եգիպտական ոճով, հաւանաբար Հոռոդոսում պատրաստուած յախճապակէ սրուակի բեկոր՝ նստած կնոջ տեսքով[55]:

Համանման յախճապակուց պատրաստուած անօթներ գտնուել են նաեւ Ք.ա Է. դարում՝ Ռուսա Բ.ի օրօք հիմնադրուած Օշականի ամրոցի դամբարաններից[56]:

Թէյշեբաինիում ու Ռուսախինիլիում (Բաստամ) պեղումների ժամանակ գտնուել են մեծ քանակութեամբ քնջութի հատիկներ[57]: Ուշագրաւ է, որ քնջութը Եգիպտոսում գրաւոր վկայուած է դեռեւս ԺԸ. Հարստութեան օրօք: Քնջութից ստացուած ձէթը Եգիպտոսում գործածել են նաեւ ճրագների համար, ինչպէս՝ Թէյշեբաինիում[58]: Վերջնական եզրակացութիւնը թողնելով յետագայ հետազօտութիւններին, ենթադրելի է, որ Հայկական Լեռնաշխարհում մշակուել է եգիպտական քնջութը:

Էրեբունի ամրոցի քաղաքային թաղամասի տներից մէկում գտնուել է եգիպտական Բէս աստծոյ պատկերով յախճապակէ կախիկ ԻԶ. Գերդաս-

---

[54] Пиотровский, *I*, էջ 76-7:

[55] Պահպանուել է միայն վերին հատուածը՝ կնոջ գլխի տեսքով, աջ ուսը ու ձեռքը մասամբ եւ կրծքին սեղմուած միւս ձեռքը: Դիմագծերը կոպիտ են՝ մեծ քիթ, խոշոր աչքեր, լայն այտոսկրեր, խոշոր շուրթեր (Пиотровский, *III*, էջ 21. նաեւ՝ Р. М. Джанполадян, “О Трех Образцах Стекла из Кармир Блура” (Կարմիր բլուրի ապակէ երեք նմուշների մասին), *Советская Археология*, 1:1964, էջ 307-9):

[56] С.А. Есаян, А. А. Калантарян, *Ошакан* (Օշական), *I*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 77-9,94:

[57] Քնջութի հայրենիքի վերաբերեալ առկայ են տարբեր տեսակէտեր. այն կարող էր տարածուած լինել միաժամանակ Հնդկաստանում, Կենտրոնական եւ Հարաւարեւմտեան Ասիայում ու Եթովպիայում, կամ միայն՝ Ափրիկէում: Բուն Ասորեստանում դեռեւս այն հնագիտօրէն վկայուած չէ, սակայն բացառելի չէ այնտեղ նոյնպէս քնջութի գործածումը: Որոշ հետազօտողներ ենթադրել են, որ այն Ուրարտուում կարող էր յայտնուել հարաւից, կամ հարաւարեւելքից (մանրամասն տե՛ս՝ M. Hopf, U. Willerding, *Öl-Pflanzen, Bastam II*, Berlin, 1988, էջ 295-7): Հնաբուսաբանական հետազօտութիւնները նոյնպէս փաստում են այդ մշակաբոյսի տարածուածութիւնը Ք.ա. Գ.-Բ. հազարամեակների Եգիպտոսում (V. Zech-Matterne, M. Tengberg, W. Van Andringa, “Sesamum Indicum L. (sesame) in 2nd century bc Pompeii, Southwest Italy, and a Review of Early Sesame Finds in Asia and Europe,” *Vegetation History and Archaeobotany*, 2015, էջ 678):

[58] *Lexikon der Ägiptology, Bd. V*, էջ 883-4. նաեւ՝ Пиотровский, *I*, էջ 47-50:

տանի ժամանակաշրջանով (Ք.ա. Է. Դար) թուագրուող: Բէսը համարւում էր չար ուժերից պահպանող, ծննդաբերութեան, կանացի գեղեցկութեան եւ ընտանիքի բարօրութեան հովանաւոր եւ կախիկն Էրեբունիում գործածուել է հենց այդ նպատակներով[59]:

Արգիշտիխինիլիից (Արմաւիրից) եւ Վանից յայտնի են Մենխեպերրա անունը յիշատակող «կոյաբզէզները»[60]: Անիից նոյնպէս գտնուել է հիերոգլիֆներով «կոյաբզէզ»: Ք.ա. Է. դարավերջ-Զ. դարի առաջին կէսով են թուագրւում նաեւ Լօռի բերդից գտնուած երեք կոյաբզէզաձեւ կնիքները՝ եգիպտա-յունական եւ փիւնիկեան միջավայրից ծագող: Վարկածներից մէկի համաձայն Ք.ա Է. դարի վերջին, Վանի Թագաւորութիւնը մաս է կազմել Ասորեստանի եւ Եգիպտոսի ռազմական դաշինքին, երբ լեռնաշխարհից հարաւ մարտեր էր մղում եգիպտական բանակը, ինչով էլ պայմանաւորուած կարող են լինել եգիպտական գտածոները[61]: Այս տարբերակը, սակայն միանշանակ չէ, քանի որ վիճարկելի է այդ շրջանում Ուրարտուի ունեցած քաղաքական դիրքորոշման եւ անգամ պետութեան գոյութեան խնդիրը:

Քննարկուած վարկածներին հարկ ենք համարում կատարել մէկ լրացում, որ կարող է նաեւ առնչութիւնների խորքային բնոյթը պայմանաւորել: Ուշագրաւ է, որ այս գտածոներն հիմնականում յայտնաբերուել են Վանի Թագաւորութեան արեւելեան ռազմա-վարչական կենտրոններից: Այս հանգամանքը, հաւանաբար կարելի է բացատրել մէկ այլ իրողութեամբ եւս. ուրարտական արքաները իրենց վարած ժողովրդագրական քաղաքականութեան արդիւնքում Արարատեան Դաշտում իրականացրեցին վերաբնակեցումներ՝ լեռնաշխարհի արեւմտեան եւ հարաւային շրջաններից: Վերաբնակեցուած բնակիչները իրենց երկրներում արդէն հասցրել էին առնչուել եգիպտական մշակոյթին, որի հանդէպ հետաքրքրութիւնը յետագայում շարունակական եղաւ Արարատեան Դաշտում:

---

[59] С. И. Ходжаш, "Амулет Бога Беса из Еребуни," (Բէս աստծոյ յուռութքն Էրեբունուց), *Древний Восток,* 1:1975, Մոսկուա, էջ 145-6. նաեւ նոյնի՝ "Чужеземная Глиптика в Урартских Центрах Армении," (Օտարերկրեայ գլիպտիկան Հայաստանի ուրարտական կենտրոններում), *Вестник древней истории,* Մոսկուա, 2000, էջ 153:

[60] Այն Թութմոս Գ.ի գահանունն է, այդ անուամբ «կոյաբզէզները», մեծ տարածում են ունեցել նաեւ Ք.ա Ը.-Զ.դդ.՝ ԻԵ.-ԻԶ. արքայատոհմերի կառավարման օրօք (Пиотровский, *Древнеегипетские Предметы,* էջ 20-1): Մենխեպերրա անուն էր կրում նաեւ Թեբէում Ամոնի գերագոյն քուրմը, ԻԶ. Արքայատոհմի օրօք, Խոջաշը կոյաբզէզները վերջինիս անուան է աղերսում (Ходжаш, "Чужеземная," էջ 153):

[61] Ս. Դեւեջեան, Ս. Հմայակեան, «Լոռիբերդեան կոյաբզէզաձեւ կնիքների շուրջ», *Երեւանի գեղարուեստական «Տարեգիրք»*, Երեւան, 2004, էջ 40-4:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հայկական Լեռնաշխարհի հարաւային շրջաններն ընդգրկող Միտաննիի ու Եգիպտոսի փոխյարաբերութիւնները աղբիւրներում վկայուած են Ք.ա. Բ. հազարամեակի երկրորդ կէսից, որոնք փաստում են նաեւ հնագիտական գտածոները: Նախապէս ունենալով ընդգծուած թշնամական բնոյթ՝ Սիրիայում եւ Պաղեստինում տիրապետութեան հասնելու համար, մէկ դար անց այդ յարաբերութիւնները վերաճեցին դաշնակցայինի՝ ամրապնդուելով փարաւոնների եւ միտաննիական արքայադստրերի ամուսնութեամբ: Այդ ամուսնութիւններն ուղեկցւում էին բարդ դիւանագիտական նախապատրաստութեամբ, փոխադարձ նուէրներով, եւ շարունակուեցին երեք սերունդ՝ մինչեւ Միտաննիի անկումը: Թերեւս, հենց միտաննիական միջնորդութեամբ է Մեծամօրում յայտնուել եգիպտական հիերոգլիֆ արձանագրութիւն կրող սարդիոնէ կնիքը: Ք.ա. Ա. հազարամեակի՝ Հայկական Լեռնաշխարհի ուրարտական հնավայրերից նոյնպէս յայտնաբերուել են եգիպտական գտածոներ, որոնք փաստում են եղած ուղիղ եւ/կամ միջնորդաւորուած առնչութիւնների եւ առեւտրի ու մշակութային ազդեցութիւնների մասին:

The Connections of both the Khurri-Mitani state and the Kingdom of Van with Egypt (XV-XIV and VIII-VII Centuries BC)

(Summary)

Vahe Sarksian
anarzaba@gmail.com

During the 1981 excavations of the ancient Medzamor graveyard, the sardion seal of Amenhoteb III (mid-14th century BC) was discovered. The author tries to contextualize this find and give a scientific explanation for its existence in the Armenian Highlands. Accordingly, the author explores the relations between the Armenian Plateau and Egypt of the time.

Both the upper Mesopotamian state of Khurri-Mitani and Egypt contested the lands of Syria and Palestine, which were located between them. This ongoing war came to an end through matrimonial diplomacy, which lasted for at least three generations in the 14th century BC.

The research, however, does not stop with these relations, but extends to the next era, during the Kingdom of Van (Biainili, Urartu, Ararat), which was established in the Armenian Highlands between the basin of Lake Van and Urmia in the 9th century BC. The author focuses on a number of finds which were unearthed from the Urartian sites of Teishebaini, Rusahinili, Erebuni and Oshakan. These finds testify to direct or mediated relations, trade and cultural interactions between the Kingdom of Van and Egypt.


The author notes that these finds were mainly discovered in the newly settled eastern military-administrative centers of the Kingdom of Van. Accordingly, he speculates that these new settlers were already acquainted with Egyptian culture in their original countries, and resumed their contacts with the Egyptians as they resettled in the Ararat Valley.

La Fresque Arménienne du Monastère Blanc en Haute-Égypte (1124)

Claude Mutafian
claude.mutafian@wanadoo.fr

LES ARMENIENS EN ÉGYPTE FATIMIDE

Au Caire, sous la dynastie chiite des Fatimides, un prisonnier de guerre arménien islamisé, Badr al-Djamâlî, accéda au vizirat en 1073.[1] Il y avait alors en Égypte plusieurs dizaines de milliers d'Arméniens et leur influence était grande.[2] Lorsque le catholicos Grégoire II Pahlavouni s'y rendit, il fut reçu avec tous les honneurs et "consacra catholicos Têr Grigor, fils de sa sœur."[3] Son frère Vahram, tout en restant chrétien, devint vizir en 1135 et fit venir de nombreux Arméniens en Égypte.[4]



LE MONASTERE BLANC

En Haute-Égypte, sur la rive gauche du Nil, près de Sohâg, se dressent deux célèbres couvents coptes très anciens, le Monastère Rouge et le Monastère Blanc. Ce dernier est mentionné au début du XIII^e^ siècle à la fois l'historien arabe Yâkût[5] et par Abû Ṣâliḥ,[6] un Arménien égyptien auteur d'une

---

[1] *Encyclopédie de l'Islam*, *t. I*, n^elle^ édition, Paris, 1991, p. 894; Hratchia Adjarian, *Dictionnaire des Anthroponymes Arméniens* (en arménien), *t. I*, Erevan, 1942, p. 360, n°1.

[2] Josef Strzygowski, *Die Baukunst der Armenier und Europa*, *t. II*, Vienne, 1918, p. 731; Claude Mutafian, *L'Arménie du Levant, t. I*, Paris, 2012, p. 255.

[3] Matthieu d'Édesse, *Chronique* (en arménien), éd. M. Mélik' Adamian et N. Têr Mikayélian, Vagharchapat, 1898, p. 211; Ms. n° 3208 du Matenadaran, f° 151v.

[4] Adjarian, *t. V,* 1961, p. 22, n° 15; Marius Canard, "Un Vizir Chrétien A l'Epoque Fâṭimite: l'Arménien Bahrâm", *Annales de l'Institut d'études Orientales*, Alger, 1954:12, pp. 88-113; Mutafian, *t. I*, p. 257, *t. II*, généalogie 40.


[5] *Les Sources Arabes sur l'Arménie et les Pays Voisins* (en arménien), trad. H. Nalbandian, Erevan, 1965, p. 66.

[6] Abû Ṣâliḥ, *The Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries*, trad. B. Evetts, Oxford, 1895, rééd. Londres, 1969, pp. 235-39.

description en arabe des monastères d'Égypte, qui nous est parvenue par une unique copie manuscrite, réalisée au milieu du XIV^e siècle.[7]



La légende fait remonter ce monastère à Hélène, mère de Constantin, mais en fait il fut fondé au V^e siècle par l'abbé copte Chenouda et passa provisoirement aux Arméniens à l'époque de Badr al-Djamâlî.[8] C'est là que trouva refuge Vahram quand une insurrection le démit de son poste de vizir.[9]



[7] Bibliothèque nationale de France (BnF), ms. Arabe 307.

[8] T'orkom Kouchagian, *Les Anciennes et Actuelles Eglises Arméniennes d'Égypte* (en arménien), Le Caire, 1927, pp. 16-17; Nalbandian, p. 170n. 195.

[9] Abû Ṣâliḥ, BnF, ms. Arabe 307, f° 84; Id., p. 239.



Mahmoud Zibawi, *Images de l'Égypte chrétienne, Iconologie copte*, Paris, 2003, repr. 256

L'intérieur est décoré de fresques. Il en reste quelques-unes sur les murs, en particulier une *Deisis* dans l'abside méridionale et surtout, dans l'orientale, un superbe Christ en majesté, bénissant de la main droite et tenant un livre dans la main gauche. On voit de part et d'autre de sa tête, dans des médaillons, les portraits de la Vierge à gauche et de saint Jean-Baptiste à droite, et plus bas des têtes d'anges. À l'intérieur en bas sont représentés les quatre évangélistes.

L'ensemble est constellé d'inscriptions, coptes et surtout arméniennes, difficiles à repérer et encore plus à lire, vu leur hauteur et le faible éclairage.[10] Ce n'est que depuis 2012, grâce aux clichés pris par le photographe arméno-canadien Hrair Hawk Khatcherian, qu'on est enfin en mesure de donner la transcription de toutes les inscriptions.



[10] Mutafian, *t. II*, reproduction 227.

LES INSCRIPTIONS DE LA FRESQUE DU MONASTERE BLANC

La lecture et les traductions des inscriptions arméniennes sont dues à Agnès Ouzounian.

A: Les abréviations de *Jésus-Christ* en arménien et en copte, entourant son portrait en haut.

B: Une inscription en arménien à gauche au niveau de la taille du Christ.

Ք(րիստո)/ս / տ(եառ)ն Գրիգորին աւգնական լից(ի)

Que le Seigneur Ch(ris)t soi(t) secourable à T(êr) Grigor

C: Trois lettres arméniennes à peine visibles (cf. *infra*)

D 1-2: En bas, deux cartouches rectangulaires renfermant des inscriptions, celle de gauche en arménien et celle de droite en copte.



D1: Թեոդորոս / նկարիչ եւ գրիչ / ի գաւառէն / Քէսնոյ. մերձ / ի կամուրջն / Շնջեոյ. ի գ/եղջէ որ կոչի Մախթլլէ. եւ հա/յր իմ Քրիստափ/որ քարկոծ. Ա(ստուա)ծ / նմա ողորմեսցի. / եւ ձեզ եւ մեզ. եւ այց / արասցէ ամենայն / Հայոցս որք եմքս / ի ծառայութեան / յԵգիպտոսս: Ի հայ/րապետութեանն / Տ(եառ)ն Գրիգորի, քւերոր/դւոյ Գրիգորիսի, որ / Տ(է)ր Վահրամն կոչիւր:

T'eodoros, peintre et scribe, du canton de K'êsoun, près du pont de Chndjê, du village appelé Makht'llê; et mon père K'ristap'or, tailleur de pierre; que D(i)eu ait pitié de lui et de vous et de nous; et qu'il nous visite tous, nous les Arméniens qui sommes dans la servitude, ici, en Égypte; au (temps) du patriarche T(êr) Grigor, fils de la sœur de Grigoris, qui était appelé T(ê)r Vahram.


D2: *Théodore, (le) pein/tre* <de> *Terbe* [?] *…?…/ Que le Seigneur Jésus-Christ/ bénisse (et)/ préserve la vie/ du/ pieux frère/ charitable,/ l'archidiac(re)/ Chénouté, le/ moine/ de ce monas/tère, le fils/ du bienheureux/ Papnoute, car/ lui s'est/ soucié/ a pris soin de cette ima/ge/ portrait aux jours de/ notre père, Abba/ Paul, l'archi/mandrite,/ mon père* [?] *Zik/iêl* [Ezekiel ?] *étant deuxième* [dans la hiérarchie],/ *Jésus-Christ étant le roi/ sur nous* [notre roi]. *Ère des martyrs 840* [1124] (traduction de Nathalie Bosson).

E 1-4: En bas, les évangélistes commençant à écrire en arménien sur des tablettes. De haut en bas et de gauche à droite : Marc, Matthieu, Jean et Luc. Seul Matthieu tient un livre, les autres ont des phylactères.



E1: (Mt. 1,1)
Sur le livre posé sur un pupitre: Գիրք ծննդեան, *Livre de la naissance* [ou *Généalogie*]
Sur la tablette tenue par l'évangéliste: Գիրք ծննդեան յ(հսուս)ի ք(րիստոս)ի, *Livre de la naissance* [ou *Généalogie*] *de J(ésus)-Ch(rist)*

E2: (Mc 1,1)
Sur le phylactère: Սկիզբն աւետարանի յ(իսուս)ի, *Début de l'Évangile de J(ésus)*
Sur la tablette tenue par l'évangéliste: Սկի, *Dé(but)*
E3: (Lc 1,1)
Sur le phylactère: Քանզի, *Puisque*
Sur la tablette tenue par l'évangéliste : Քանզ, *Puis(que)*
E4: (Jn 1,1)
Sur le phylactère: Ի սկզբանէ էր բանն. եւ բանն էր առ Ա(ստուա)ծ. եւ
Au commencement était la Parole et la Parole était auprès de D(i)eu et
Sur la tablette tenue par l'évangéliste: Ի սկզբանէ էր բանն. եւ բանն
Au commencement était la Parole et la Parole
F 1-2: En bas, à gauche, deux inscriptions en arménien de part et d'autre des deux évangélistes.
F1: Ողորմեսցի ք(րիստո)ս / Խաչա/տրոյ /տա/ռապե/լոյս ի մե/տաղս քրեական
Que le Ch(ris)t ait pitié de moi, Khatchatour, qui peine au travail des mines.
F2: Ք[րիստո]ս ողորմեա Սարգ/սի գրազկի ի ք/րէական մ/ետաղս / յայսմ ա/մի
Ch(ris)t, aie pitié de moi Sargis (originaire) de Drazark [?], *au travail des mines, en cette année-ci.*



QUELQUES COMMENTAIRES ANTERIEURS AU XX[E] SIECLE

- **Début du XIII[e] siècle, Abû Ṣâliḥ:**
"*Dans ce monastère il y a une très grande église, qui peut contenir des milliers de personnes.*"[11] L'auteur ne fait aucune mention des fresques et inscriptions.
- 1673, Johann Michael Vansleb, un dominicain allemand, fils d'un pasteur luthérien, visita l'Égypte pour le compte de Colbert. Il y fit une ample

[11] Abû Ṣâliḥ, BnF, ms. Arabe 307, f° 84; Id., pp. 235-6.

moisson de manuscrits qu'il envoya à l'actuelle Bibliothèque nationale de France, en particulier l'unique manuscrit connu de l'œuvre d'Abû Ṣâliḥ, mentionné ci-dessus:

"Le monastère de S. Sennade, l'Archimandrite, surnommé le Blanc (..). Il y a des restes d'un des plus magnifiques édifices qui ait été en Égypte."[12]

- 1731, Claude Tourtechot, alias Granger, médecin français, accompagna en Égypte le consul de France et visita le "monastère de saint Senode", dont il écrivit: "Ce monastère est le moins vilain de tous ceux qu'il y a dans la haute Égypte, après ceux de saint Antoine et de saint Paul (...). L'église est entièrement ruinée (...). Le Chœur qu'on a tâché de conserver renferme trois Autels où l'on ne voit rien de remarquable."[13]
- 1737, Richard Pococke, voyageur anglais:
  "Deux magnifiques couvents anciens (...). Ce couvent est construit en pierres de taille, et il y a de grandes marques de magnificence dans les deux églises; sans aucun doute, c'était lors des débuts de l'instauration du Christianisme en Égypte que ces couvents furent édifiés."[14]
- 1737, Frederic Norden, marin allemand, s'était rendu en Égypte pour dessiner des monuments:
  "Un couvent copte appelé Deir Ell Abiat à l'Occident du fleuve et environ à une lieue dans les Terres. Quelques personnes de notre compagnie, qui avaient été voir autrefois ce couvent, nous dirent qu'ils y avaient trouvé une Croix, qui était un reste d'une ancienne Eglise bâtie sous l'invocation de St. Hélène."[15]
- 1798, Vivant Denon s'embarqua avec Bonaparte pour l'expédition d'Égypte. Il s'appesantit sur les ravages des Mamlouks:
  "Le Couvent Blanc (...) avait été brûlé aussi la veille; mais les moines, en s'enfuyant, avaient laissé la porte ouverte, et quelques serviteurs pour sauver les débris. On attribue l'érection de cet édifice à Ste Hélène."[16]

---

[12] *Nouvelle Relation en Forme de Journal, d'un Voyage Fait en Egypte par le P. Vansleb, R. D. En 1672 & 1673*, Paris, 1677, pp. 372-75; Jean-Marie Carré, *Voyageurs et Ecrivains Français en Égypte, t. I*, Le Caire, 1956, pp. 29-34.

[13] *Relation du Voyage Fait en Egypte par le Sieur Granger, En l'Année 1730*, Paris, 1745, pp. 92-95; Carré, pp. 53-56.

[14] Richard Pococke, *A Description of the East and Some Other Countries, t. I*, Londres, 1743, p. 79.

[15] *Voyage d'Egypte et de Nubie par Mr. Frederic Louïs Norden, t. I*, Copenhague, 1755, p. 146.

[16] *Voyages dans la Basse et la Haute Egypte Pendant les Campagnes de Bonaparte, en 1798 et 1799, par Vivant Denon*, Paris, 1817, pp. 157-58; Carré, pp. 119-43.

- 1838, Robert Curzon, célèbre voyageur, diplomate et orientaliste anglais, fut le premier à s'intéresser aux fresques:
  "La grande figure du Rédempteur, semblable à ce qu'on voit dans les mosaïques italiennes, à plus de cinquante pieds au-dessus du sol (...). Sur les côtés, au-dessus de l'autel, il y a des compartiments circulaires contenant des peintures des saints ; et près d'eux il y a deux tablettes avec inscriptions en noir sur fond blanc. Celle à gauche semblait être en abyssinien ; celle de l'autre côté était soit en copte soit en lettres grecques onciales ; mais il faisait trop sombre, et les tablettes étaient trop en hauteur pour que je puisse en tirer quelque chose."[17]
  Curzon prit donc l'arménien pour de l'éthiopien, une confusion classique renforcée ici par la proximité de l'Éthiopie.
- 1884, Alfred Joshua Butler, grand coptologue anglais, a annoté la traduction anglaise de Abû Ṣâliḥ et fut un inlassable défenseur des Coptes:
  "Le plus remarquable exemple de ressemblance entre l'architecture copte et celle de l'Égypte ancienne est donné par Dair al Abiad, ou le Monastère Blanc (...). C'est un grand édifice quadrangulaire ressemblant à une forteresse (...). Selon une tradition authentique, le Monastère Blanc a été fondé par l'impératrice Hélène (...). Il est dédié à Anba Shanûda. Une splendide basilique occupait jadis tout l'intérieur (...). Dans la moitié nord du narthex il y a des traces de la plus magnifique décoration, qui enthousiasma Curzon (...). Dans la voûte centrale il y avait une grande figure de Rédempteur, ainsi que, dans les chapelles latérales, des peintures représentant divers Saints." [18] L'auteur ne mentionne pas d'inscription.
- 1889, Émile Amélineau, lui aussi un grand défenseur des Coptes, a participé à la Mission archéologique française au Caire en 1883-1885, avant de conduire 10 ans plus tard les fouilles d'Abydos:
  "L'église elle-même a la forme de toutes les églises coptes avec ses cinq coupoles. La coupole du fond est ornée de peintures encore bien conservées, avec des inscriptions coptes en l'honneur du fondateur: elles sont sans doute postérieures à Schnoudi. L'obscurité de cette église empêche de reconnaître les peintures et de lire les inscriptions; il faut se trouver au monastère avant deux heures du soir."[19]

---

[17] Robert Curzon, *Visits to Monasteries in the Levant*, Londres, 1849, pp. 133-4.
[18] Alfred Butler, *The Ancient Coptic Churches of Egypt, t. I*, Oxford, 1884, pp. 351-55.
[19] Émile Amélineau, *Les Moines Egyptiens, Vie de Schnoudi*, Paris, 1889, p. 89.

LES GUIDES TOURISTIQUES

- 1881, Émile Isambert, auteur du *Guide Joanne*, est très laconique: "Près du monastère copte appelé *Deïr-Chénoudi* (le couvent blanc), sont les ruines d'*Athribis*». Ce couvent remonte « probablement au règne de Théodose."[20]
- 1892, Le *Baedeker* de la Haute-Égypte en parle un peu plus: "On pourrait l'appeler un village chrétien plutôt qu'un couvent car maris, femmes et enfants vivent ici en famille (...). Les coupoles sont ornées de fresques médiocres et les autres décorations sont aussi pitoyables."[21]
- 1891, Le *Guide Murray* est bien plus prolixe: "Les demi-coupoles sont décorées de fresques ; la centrale représente une grande figure du Sauveur assis sur son trône avec les emblèmes des 4 évangélistes sur les côtés d'une sorte de '*vesica*' qui l'entoure. La date de ces sujets est incertaine ; mais ils sont de manière évidente postérieurs à l'édifice, car ses ornements sont recouverts par le stuc sur lequel elles ont été peintes. Il y a plusieurs inscriptions coptes dans l'église, et une en lettres onciales grecques sur une colonne à gauche en regardant l'abside centrale."[22]

AU XX^{E} SIECLE

- 1896-1911, Albert Gayet passa 15 ans en Égypte à faire des fouilles. Il consacra de nombreuses pages à l'architecture, commençant son chapitre par: "Le plus ancien monastère dont nous puissions fixer la date de fondation, le *Deïr-el-Abiad*, – le Couvent Blanc, – fut construit par le célèbre Schenoûdi, vers l'an 310". Il restait très laconique sur l'ornementation, se bornant à écrire quelques pages plus loin: "Seules les absides enferment les tableaux du Christ donnant la Loi, et de la Glorification, de la Messe, entouré de quelques épisodes du Testament."[23] Il laissa plusieurs croquis, dont l'*enceinte* et *l'abside centrale*.
- 1901, Wladimir de Bock, archéologue russe, se passionna pour l'Égypte à la suite d'Albert Gayet. Il décrivit longuement, avec de nombreuses reproductions, "le Couvent Blanc, - un des plus anciens monuments de l'architecture chrétienne – (...) érigé vers le commencement du cinquième siècle."[24]

---


[20] Émile Isambert, *Malte, Égypte, Nubie, Abyssinie, Sinaï*, Paris, 1881, p. 484.

[21] *Baedeker's Upper Egypt*, Leipzig, 1892, p. 49.

[22] *A Handbook for Travellers in Lower and Upper Egypt*, 8th Edition, Londres, 1891, p. 431.

[23] Albert Gayet, *L'art Copte*, Paris, 1902, pp. 138, 146.

[24] Wladimir de Bock, *Matériaux pour Servir à l'Archéologie de l'Égypte Chrétienne*, St. Pétersbourg, 1901, p. 40.



Cela dit, à la suite de cette étude architecturale, il s'étendit, contrairement à ses prédécesseurs, sur l'étude des peintures et des inscriptions et publia une photographie de la fresque dans l'abside.[25]



"La conque de l'abside centrale est ornée d'une fresque représentant sous les traits usuels l'image colossale du Christ assis dans sa gloire. La tête est abîmée, le chiton est bleu clair, le manteau brun. À l'intérieur de l'auréole de chaque côté de la tête du Christ se trouvent les sigles de son nom : à droite en copte, à gauche en arménien"**(A)**. En réalité, les deux lettres pour 'Jésus' sont à gauche, l'arménien sous le copte, alors qu'à droite, pour les deux lettres de 'Christ', c'est l'inverse. On lit ensuite: "L'inscription arménienne tracée en une ligne sur fond d'or à gauche contient, d'après l'explication aimablement fournie par Mr. le professeur

[25] De Bock, pp. 58-59.

N. J. Marr, les mots: '*Monseigneur Grégoire a construit*'." Cette lecture de **(B)** est erronée.

"Dans la partie inférieure de la conque, en dehors de la mandorle qui entoure le Christ et qui est gardée par les quatre bêtes apocalyptiques, se trouvent dans des médaillons ronds les quatre évangélistes tenant à la main des chartes avec des inscriptions rédigées aussi en arménien. Entre les évangélistes et la mandorle on aperçoit de chaque côté la représentation d'une longue planchette verte avec des inscriptions tracées en noir: la planchette à droite **[D2]** contient une inscription copte de 25 lignes datée de l'an 840 des Martyrs, soit 1124 après J. Chr. L'autre planchette à gauche **[D1]** offre en 20 lignes, qui peu à peu deviennent plus menues, une inscription arménienne dont il n'a été copié que les deux premières lignes et qui, probablement, contenait la traduction de l'inscription copte: du moins le commencement copié signifie selon l'explication donnée par Mr. le professeur N. J. Marr: '*Théodore, (le) peintre et (l') écrivain*'. À côté se voient deux autres inscriptions arméniennes de six lignes chacune **[F1-2]** et encore une troisième, peu distincte, tracée en jaune sur fond brun foncé."

- 1902, Charles Peers, architecte anglais et inspecteur des monuments anciens, visita l'Égypte en 1896 et 1902. Il décrivit longuement le monastère "supposé être l'un des plus grands au monde, et St. Shanûda lui donna le nom de Jérusalem, afin que ceux qui ne pouvaient pas faire le pèlerinage en Terre sainte puissent venir ici à la place."[26] Lui aussi s'intéressa peu à la fresque où l'on voit "une majesté (...) entourée (...) par les quatre évangélistes et leurs symboles (...). Une inscription dans le champ de la semi-coupole orientale donne pour date de la peinture l'an 840 des Martyrs, *i.e.* 1124 A. D.."[27]
- 1904, Walter Ewing Crum, coptologue écossais de renom, donna la traduction anglaise de l'inscription copte.[28]
- 1903, Josef Strzygowski, autrichien, historien de l'art, fut plus prolixe. Il mentionna "le Pantocrator trônant" et "dans des médaillons les quatre évangélistes représentés de manière byzantine, assis et écrivant. Dans cette fresque égyptienne on trouve d'un côté une inscription copte, de l'autre une arménienne." Suivent les traductions allemandes des deux inscriptions dans les cartouches, l'arménienne **(D1)** d'après Dashian et la

[26] Charles Reed Peers, "The White Monastery near Sohag," *Archaeological Journal* 1904:61, p. 133.

[27] Peers, p. 142.

[28] Walter Ewing Crum, "Inscriptions from Shenoute's Monastery," *The Journal of Theological Studies*, 1904:5, A 3, p. 556–7.

copte **(D2)** d'après Crum. L'auteur ajoute: "C'est aussi l'Arménien Theodoros (...) qui a peint en 1124 le Christ en Majesté dans le cloître de Schenute. Il apporta avec lui le savoir-faire de sa patrie."[29]
Il en reparla plus tard, avec une photographie de **(D1)**, dans son monumental ouvrage sur l'art arménien, en ajoutant les traductions des inscriptions **(F1)** et **(F2)**.[30]

- 1910, Jean Clédat, égyptologue qui mit au jour le monastère de Baouit, publia une traduction française assez correcte de l'inscription arménienne (**D1**), due au père mékhitariste de Venise Ignace Ghiurékian.[31]
- 1911, Ormonde Dalton, byzantiniste et conservateur au British Museum, s'est intéressé aux peintures et aux inscriptions, inspiré par de Bock et Clédat.
  "Le Monastère Blanc (...) remontant au cinquième siècle contient d'intéressantes peintures murales. Dans l'abside centrale il y a un colossal portrait du Christ sur un trône avec une mandorle, tenant un livre dans sa main gauche et levant la droite pour bénir. La tête est malheureusement abîmée, mais à droite et à gauche on peut voir les abréviations du nom de Notre Seigneur en copte et en arménien. En bas à gauche, une inscription arménienne cite un certain Grégoire comme commanditaire de la peinture; peut-être s'agit-il d'un évêque du onzième siècle. Dans quatre médaillons à droite et à gauche de la partie inférieure de la mandorle se trouvent les quatre évangélistes, chacun tenant un rouleau avec une inscription arménienne; entre eux et la mandorle il y a des inscriptions copte et arménienne, la première datée de 1124."[32]
- 1920, Gustave Lefebvre, égyptologue français, fut conservateur au musée du Caire. Il se borna à mentionner les travaux antérieurs concernant la fresque, en insistant sur le rôle du vizir arménien Vahram.[33]
- 1922, T'orkom Kouchagian, archevêque arménien, visita le monastère et prit des photographies. Dans son article, le premier en arménien sur la question, il recopia des inscriptions et proposa des lectures de **B** et de **D1**,

---

[29] Josef Strzygowski, *Kleinasien, ein Neuland der Kunstgeschichte*, Leipzig, 1903, pp. 202-4.

[30] Josef Strzygowski, *Die Baukunst der Armenier und Europa*, Vienne, *t. II*, 1918, pp. 534-35, 731-2.

[31] Jean Clédat, "Baouït", dans *Dictionnaire d'Archéologie Chrétienne et de Liturgie*, *t. II 1*, Paris, 1910, col. 210.

[32] Ormonde Maddock Dalton, *Byzantine Art and Archaeology*, Oxford, 1911, pp. 286-7.

[33] Gustave Lefebvre, "Deir el Abiad," in *Dictionnaire d'Archéologie Chrétienne et de Liturgie*, *t. IV 1*, Paris, 1920, p. 764.

ainsi que de **F1** et **F2**. Comme tout le mode, il ne remarqua pas **C** et data l'écriture entre 1070 et 1120.[34]

Il traita de nouveau le sujet dans son livre de 1927, avec des photographies et des modifications mineures de lecture.[35]

- 1925, Ugo Monneret de Villard, historien de l'art et archéologue italien, spécialiste du Moyen Orient et de l'Égypte ancienne, se basant sur le fait que, d'après un colophon de manuscrit, l'archimandrite abbé Paul, mentionné dans **D2**, est mort avant 1112, distinguait deux peintres homonymes: selon lui, les peintures avaient été "commencées par Théodore arménien après 1076 et aux temps de l'abbé Paul (...), complétées et terminées par Théodore égyptien en 1124."[36]
- 1927, Alfred Ludwig Schmitz, égyptologue allemand, se borna à écrire que "les inscriptions nous apprennent que le portrait (...) a été peint par des artistes arméniens au début du douzième siècle."[37]
- 1944, Hratchia Adjarian, dans son 'Dictionnaire des anthroponymes', datait l'inscription de T'êodoros de "1074-1120."[38]
- 1948, Garégin Hovsêp'ian a donné une assez bonne lecture de l'inscription **(D1)**[39], reprise en 1960 par Albôyadjian.[40]
- 1955, Marius Canard, arabisant et spécialiste des Fatimides:
  "On voit dans l'église une inscription copte et trois inscriptions arméniennes." Il s'agit de **(D1)**, **(F1)** et **(F2)** dont il donne de bonnes traductions françaises, les datant de "après 1077 ou 1078," et valide les conclusions de Monneret de Villard,[41] reprises par Orak en 1958.[42]

---

[34] T'êotig, *L'Almanach pour Tous, 17e Année* (en arménien), Constantinople, 1923, pp. 374-80.

[35] T'Kouchagian, pp. 16-22.

[36] Ugo Monneret de Villard, *Les Couvents pPrès de Sohag, t. I*, Milan, 1925, pp. 26-27, *t. II*, 1926, pp. 132-3.

[37] Alfred Ludwig Schmitz, "Das Weisse und das Rote Kloster," *Die Antike* 1927:3, p. 343.

[38] Adjarian, *t. II,* 1945, p. 301, n° 33.

[39] Garégin Hovsêp'ian, "T'êodoros scribe et peintre," réédité in Id., *Matériaux et Etudes sur l'Histoire de l'Art Arménien* (en arménien), Erevan, *t. II*, 1987, p. 230.

[40] Archag Albôyadjian, *La Province d'Égypte de la République Arabe Unie et les Arméniens* (en arménien), Le Caire, 1960, pp. 244-5.

[41] Marius Canard, "Notes sur les Arméniens d'Égypte à l'Epoque Fatimite," *Annales de l'Institut d'Études Orientales, Faculté des Lettres de l'Université d'Alger*, 1955:XIII, pp. 155-6.

[42] A. Orak, "Les Arméniens en Égypte à l'Epoque des Fatimites," *Cahiers d'Histoire Egyptienne*, sér. 9, III, n° 4 (1958), p. 131.

- 1956, *Guide Bleu* d'Égypte. Dans la longue description du "Couvent Blanc," la fresque n'a droit qu'à une brève mention: "L'on voit encore les traces de peinture à la chaux représentant le Christ et des saints."[43]
- 1973, Jules Leroy, égyptologue et spécialiste des fresques, est l'auteur de la première étude assez complète de ce qu'il considère comme "la plus grande fresque aujourd'hui existante en Égypte chrétienne" et de ses inscriptions, ajoutant: "Cette immense peinture est non seulement l'œuvre d'un peintre arménien, mais vraisemblablement c'est l'argent arménien qui a subvenu à la réalisation de la fresque, dans les toutes premières années du deuxième millénaire chrétien."[44]
- 1985, Lucy-Anne Hunt, professeur d'art oriental à Manchester, fit brièvement le point sur la fresque et ses inscriptions, sans apporter rien de neuf.[45]
- 1999, Massimo Capuani, historien italien de l'Orient chrétien, ne donna que peu de détails sur la fresque mais insista sur la présence arménienne: "Des inscriptions sur les peintures de l'abside de l'église jettent quelque lumière sur la fin du XI^e^ et les débuts du XII^e^ siècle; écrites en arménien, elles confirment la présence dans le monastère d'une communauté monastique arménienne, à laquelle on doit non seulement les décors peints de l'abside mais aussi d'importants travaux de restauration (...). La présence arménienne dans le monastère Blanc et les importants travaux d'embellissement et de restauration qu'ils y entreprirent coïncide avec une période où les Arméniens étaient particulièrement puissants à la cour des sultans fatimides et où les églises et les monastères chrétiens jouissaient de nombreuses largesses."[46]
- 2003, L'université de Minneapolis organisa une exposition sur le monachisme égyptien, accompagnée d'un symposium, mais le livre publié à cette occasion mentionne à peine la fresque.[47]
- 2003, Mahmoud Zibawi, spécialiste libanais de la peinture paléochrétienne d'Égypte, a donné, lui, une très bonne description de la fresque. La voici *in extenso*:

---

[43] *Égypte, le Nil Egyptien et Soudanais du Delta à Khartoum*, Paris, 1956, p. 286.

[44] Jules Leroy, "Quand les Vizirs Arméniens Gouvernaient l'Égypte," in *L'Orient Le Jour*, Beyrouth, 9-15 Juin 1973, pp. 18-9; Angèle Kapoïan-Kouymjian, *L'Égypte Vue par des Arméniens*, Paris, 1988, pp. 16-7.

[45] Rééd, in Lucy-Anne Hunt, *Byzantium, Easter Christendom and Islam, Vol. I*, Londres, 1998, p. 214.

[46] Massimo Capuani, *L'Égypte Copte*, Paris, 1999, pp. 178-9.

[47] *Living for Eternity: The White Monastery and its Neighborhood*, Philip Sellew (ed.), Minneapolis, 2003.

"Près de Sohag en haute-Égypte, le Couvent Blanc conserve deux peintures monumentales de grande qualité. La première orne l'abside orientale. Le Christ en majesté trône entre les quatre évangélistes représentés comme des scribes devant leurs pupitres. La figure centrale mesure six mètres de la base au sommet du nimbe. Des saints en buste inscrits dans des médaillons figurent sur l'intrados de l'arc: au sommet, la Vierge et le Précurseur lèvent les mains vers le Sauveur. Les inscriptions sont en copte et en arménien. L'auteur a signé son œuvre dans ces deux langues sur deux cartouches inscrites sur la partie inférieure de l'abside: 'peintre et scribe', Théodore de Kesun aurait exécuté cette grande composition en 1124. Cette double signature témoigne des échanges entre les deux communautés dans l'Égypte fatimide où une colonie de trente mille Arméniens trouvait une place grandissante sous le règne de Bahram, le vizir chrétien surnommé 'Glaive de l'islam'. Arménienne, la peinture qui s'inspire des modèles byzantins s'intègre parfaitement dans ce décor copte."[48]

LA DECOUVERTE DE LA DATE

Zibawi ne semble pas avoir reconnu la date arménienne: elle apparaît pourtant, mais trop faiblement, à la gauche du livre tenu par le Christ, dans la reproduction qu'il a lui-même publiée (cf. p. 3).

Comme on l'a vu, ce n'est qu'une dizaine d'années plus tard, en 2012, que grâce à Hrair Hawk Khatcherian on découvrit enfin les trois lettres donnant la date arménienne: ՃՀq, c'est-à-dire 573, qui correspond à l'an 573+551= 1124 de notre ère, soit exactement la date copte.


LE PEINTRE THEODORE

Nous sommes au début du XII^e^ siècle, à une époque où le monastère appartenait aux Arméniens. Il s'agissait d'une commande du patriarche arménien d'Égypte Grégoire, réalisée en 1124 par le peintre arménien Théodore, auteur de la fresque et des inscriptions, originaire d'un village appelé "Makht'llê, dans la province de K'ésoun," en Euphratèse, fief des Pahlavouni. C'est donc une œuvre purement arménienne, bien conservée grâce à l'air sec et à sa hauteur.

[48] Mahmoud Zibawi, *Images de l'Égypte Chrétienne, Iconologie Copte*, Paris, 2003, p. 192.

On ne sait pas grand-chose de ce Théodore, fils d'un tailleur de pierres, "le plus ancien peintre arménien connu qui travailla en Égypte" comme l'écrit en 1960 Albôyadjian, ajoutant: "Il a dû avoir appris et exercé la peinture dans les régions du royaume d'Arménie cilicienne au XII^e siècle, avant de se retrouver, peut-être comme prisonnier, en Égypte où s'épanouit son art."[49] Cette hypothèse de 'prisonnier' correspond bien au sens figuré du mot մեռաղ, qu'on a traduit dans les inscriptions **F1** et **F2** par "qui peine au travail des mines." Il s'agit en fait de travail forcé pour des prisonniers, et peut-être cela a-t-il été le cas pour Kristapor, le père de Théodore.[50]

Un peu plus tôt, en 1948, le catholicos de Cilicie Garégin Hovsêp'ian[51] avait proposé l'identification de Théodore avec le peintre d'un Évangile dont le nom apparaît sous le portrait de Matthieu: *T'êodoros peintre de ceci*.[52]



[49] Albôyadjian, p. 210.

[50] Seta Dadoyan, *The Fatimid Armenians*, Leiden, 1997, p. 104.

[51] Hovsêp'ian, pp. 228-2.

[52] Ms. n° 1796 de Jérusalem, f° 5v, Norayr Bogharian, *Grand Catalogue des Manuscrits Arméniens des Saints-Jacques* (en arménien), *t. VI*, Jérusalem, 1972, pp. 146–150.



ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐՄՆԱՆԿԱՐԸ
(Ամփոփում)

Քլոտ Մութաֆեան
claude.mutafian@wanadoo.fr

Նեղոս գետի Ասիութի եւ Լիւքսորի միջեւ ինկած հատուածին ձախ ափին կը գտնուի ղպտի նշանաւոր Սպիտակ վանքը, հաւանաբար հիմնուած Ե. դարուն:

Վանքի կաթողիկէին կեդրոնական ափսիտի հսկայ որմնանկարը կը պատկերէ Քրիստոսը: Անոր ներքեւ, երկու կողմերուն գտնուող երկու աւետարանիչները հայերէն կը գրեն: Պատկերին ձախին երեք այլ արձանագրութիւններ կան, որոնց երկուքը աւետարանիչներուն շուրջն են, մինչ երրորդը - ուղղանկիւն շրջանակի մը մէջ - կու տայ անունը որմնանկարիչին՝ Թէոդորոս, եւ ծագումը՝ Քեսուն: Որմնանկարին միւս ծայրի արձանագրութիւնը ղպտերէն է եւ կը նշէ 1124 թուականը: Այդ ատեն, Ֆաթիմեան Եգիպտոսի մէջ շարք մը հայեր իսլամացած էին ու հասած վեզիրութեան, ուրիշներ առանց կրօնափոխուելու հասած էին նման դիրքիւ:

Ափսիտին բարձրութիւնը պատճառ եղած է որ արձանագրութիւնը յաճախ անտեսուի, յաճախ ալ թիւրընթերցուի: Միայն 2012ին, լուսանկարիչ Հրայր Հոք Խաչերեանի ջանքով կարելի եղած է բարձրորակ լուսանկարել որմնանկարները: Այս լուսանկարներուն շնորհիւ ի յայտ եկած է հայկական թուական արձանագրութիւնը որմնանկարին՝ 573, որ կը նոյնանայ ղպտիական արձանագրեալ թուականին հետ:

Արձանագրութենէն կը հաստատուի, որ որմնանկարը պատուիրուած է Եգիպտոսի հայոց պատրիարք Գրիգորի կողմէ, եւ ուրեմն ԺԲ. դարուն Սպիտակ վանքը պատկանած է հայերուն, իսկ այս լաւագոյն պահպանուած որմնանկարը կը հարստացնէ հայ որմնանկարչական արուեստի ոչ-մեծաթիւ նմուշներու խումբը:

Եգիպտոսը
Հայ Միջնադարեան Մանրանկարչութեան Մէջ

Շողակաթ Դեւրիկեան
devrikyan@gmail.com

ՄԻՒՏՔ

Հայկական միջնադարեան մատեանների մանրանկարներում սուրբ վայրերից՝ Աստուածաշնչում բազմիցս յիշատակուող պատմական Իսրայէլի թագաւորութիւնից յետոյ, թերեւս, Եգիպտոսը որպէս աշխարհագրական տարածք երկրորդն է իրեն վերաբերող թեմաների բազմազանութեամբ:

Ինչպէս երեւում է հայկական ձեռագրերի նկարագրութիւններից եւ մանրանկարների կազմուած առարկայական ցանկերից, Եգիպոսը հայ միջնադարեան մանրանկարչութեան մէջ պատկերւում է Աստուածաշնչի եւ քրիստոնէութեան առաջին դարերի անապատական հայրերի վարքագրական պատմութիւնների նկարազարդման ժամանակ: Ձեռագրերում հիմնականում հանդիպում են Եգիպտոսի հետ կապուած հետեւեալ տեսարանները.-

Ա. **Կարմիր ծովի անցումը**, որը յաճախ ներկայացւում է *Ելից* գրքի հիմնական մանրամասների պատկերմամբ: Այնտեղ ծովի ընդհանուր գաղափարն է եւ ընդգծւում է ծովի կիսուլը Եգիպտոսից ելնելու ժամանակ:

Բ. **Փախուստ դէպի Եգիպտոս** դրուագը, որը դիտարկուող նիւթերից, թերեւս, ամէնայաճախագիւտն է մանրանկարներում: Իսկ Եգիպտոսն աւելի յստակ է պատկերւում սուրբ ընտանիքի այնտեղ գնալու պարականոն պատմութիւններում:

Գ. **Եգիպտոսի անապատական հայրերի** վարքերին կից կան մանրանկարներ, որոնք ներկայացնում են տուեալ սրբի կեանքի մի տեսարան եւ ուղեկցւում են եգիպտական բնանկարներով, երբեմն էլ ճարտարապետական շինութիւնների պատկերներով:

Դ. **Նեղոսեան տեսարաններ** կոչուող մոտիւները, որոնք կապւում են ուշ-անտիկ եւ վաղ-քրիստոնէական արուեստի հետ:

Ե. Միջնադարում **«Ալեքսանդրի վէպ»**ի տարածուելը նպաստեց Եգիպտոսի նկատմամբ հետաքրքրութեան մեծացմանը[1]:

Ստորեւ մանրամասն, դասակարգուած եւ պատկերագրական-արուեստաբանական վերլուծութեամբ ներկայացնենք նշուած թեմաները:

[1] Կարելի է ենթադրել, որ միւս քրիստոնեայ ժողովուրդների մանրանկարուած Աստուածաշնչերում հանդիպում են աւետարանական մեր դիտարկած թեմաները, բայց դա մեր նիւթից դուրս է: Մեր նիւթից դուրս է նաեւ թէ այլ ժողովուրդներ ունե՞ն արդեօք «Հարանց վարք»ի կամ «Ալեքսանդրի վէպ»ի թարգմանութիւններ:



Նկ. 1.- Կարմիր ծովի անցումը, ձեռ. 2027, էջ 4բ.

ԱՆՑՈՒՄԸ ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՎ

Հրեաները Եգիպտոսում դարեր շարունակ ապրում էին որպէս ստրուկներ: Հալածանքներին այլեւս չդիմանալով՝ աղաչում են Աստծուն փրկել իրենց: Աստուած լսում է այդ աղօթքները եւ օգնում նրանց հեռանալ Եգիպտոսից, առաջնորդելով՝ ցերեկները ամպի սեան, իսկ գիշերները՝ կրակէ սեան տեսքով՝ լուսաւորելով նրանց ճանապարհը: Իմանալով հրեաների փախուստի մասին՝ փարաւոնը նրանց ետեւից հեծեալներ եւ ձիակառքեր է ուղարկում: Սակայն, Աստուած նրանց վրայ խաւարի ամպ է իջեցնում:

Մովսէսի գլխաւորութեամբ հրեաները հասնում են մինչեւ Կարմիր Ծովի ափը, այնտեղ նա գաւազանը վեր բարձրացնելով, ճեղքում է ծովի ջրերը՝ ճանապարհ բացելով հրեաների համար. «*Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վերայ ծովուն, եւ դարձոյց անդրէն զծովն բռնութեամբ հողմոյ հարաւոյ զամէնայն գիշերն, եւ արար զծովն ցամաք, եւ պատառեցաւ ջուրն: Եւ մտին որդիքն Իսրայէլի ի մէջ ծովուն ընդ ցամաք եւ եղեւ ջուրն պարիսպ ընդ աջմէ նոցա եւ ընդ ահեկէ իւրեանց*» (*Ելից* ԺԴ. 21-22): Հրեաների ետեւից բացուած ծովն են մտնում նաեւ եգիպտացիները, սակայն Մովսէսը ջուրը իր բնական վիճակին է վերադարձնում, եւ փարաւոնի զօրքը խեղդւում է: Դիմացի ափին փրկուած իսրայէլացիները Աստծուն փրկութեան համար շնորհակալական եւ երախտագիտութեան երգ են երգում, գովաբանում եւ ուրախանում:

Մանրանկարներում այս պատմութիւնը պատկերւում է գրեթէ բոլոր մանրամասներով: Որպէս լաւագոյն օրինակ ներկայացնենք Կիլիկեան Հայաստանում ծաղկուած երկու մանրանկար:

Պատահական չէ, որ գեղարուեստական եւ կատարողական բարձր մակարդակով առանձնանում է 1266ին Սսում ծաղկուած Մաշտոցի «Անցումը Կարմիր Ծովով» նկարը, քանի որ նրա հեղինակն է նշանաւոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինը (նկ. 1)[2]: Այս մանրանկարն այդ նիւթով ստեղծուած

[2] «Կարմիր Ծովի անցումը», Երուսաղէմի մատենադարան, ձեռ. 2027, էջ 4բ. 1266:

մեզ յայտնի առաջին երկն է հայ մանրանկարչական արուեստում[3]: Այստեղ տեսնում ենք տարբեր ժամանակներում կատարուած երեք դէպքերի համաժամանակեայ պատկերում[4]: Եգիպտական զօրքն արդէն ծովի ջրերի մէջ է, սակայն նրանք պատուած են մթութեամբ, որի վերեւում մակագրութիւնն ասում է. «Խաւար ի վերայ եգիպտացւոցն»: Միաժամանակ նրանք ե՛ւ խարխափում են խաւարում, ե՛ւ խեղդւում ծովում:

Եգիպտացիների առջեւում հրեաներն են: Մովսէսը գաւազանը ջրում պահած ծովը ենթարկում է իրեն: Մովսէսի եւ Ահարոնի քոյր՝ մարգարէուհի Մարիամը եւ միքանի կանայք կանգնած են թմբուկը ձեռքին:

Սա այն քիչ օրինակներից է, երբ պատկերուել է նաեւ Միքայէլ հրեշտակապետը՝ հրեաների գլխավերեւում ճախրելիս եւ նրանց պաշտպանելիս: Ցոյց տալու համար, որ նա ճախրում է՝ նկարիչը պատկերել է նրա թիկնոցը ծածանուելիս:



Նկ. 2.- Կարմիր ծովի անցումը, ձեռ. 979, 201ա

Ուշագրաւ է նաեւ այն հանգամանքը, որ թէ՛ եգիպտացիները, թէ՛ հրեաները կարմրադէմ են ներկայացուած: Անդրադառնալով այս հարցին, Լեւոն Չուգասզեանը կարծիք է յայտնում, որ Ռոսլինն այդկերպ պատկերել է սեմական ժողովուրդներին[5]:

1286ին կիլիկեան Հեթում Բ. թագաւորի հովանաւորութեամբ ստեղծուած Ճաշոցը հարուստ է բազմաժանր պատկերներով, որոնց շարքում է մեզ հետաքրքրող «Կարմիր Ծովի անցումը»՝ էջի կէսը զբաղեցնող մանրանկարը[6] (նկ. 2): Գեղարուեստական իւրօրինակ լուծմամբ նկարիչը պատկերել է կիսով

[3] Л.Чугасзян, “Миниатюра Тороса Рослина «Переход через Красное море»,” (Թորոս Ռոսլինի «Կարմիր Ծովի անցումը» մանրանկարը) *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 10:1990, էջ 43:

[4] B. Narkiss, M. Stone, *Armenian Art Treasures of Jerusalem*, Caratzas brothers publishers, New York, 1979, էջ 53:

[5] Լ. Չուգասզեան, «'Ծննդեան' թեման Թորոս Ռոսլինի արուեստում», *Բանբեր Մատենադարանի*, 15:1986, էջ 168:

[6] «Կարմիր Ծովի անցումը», Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 979, էջ 201ա, 1286:

չափ բացուած ծովը, որտեղ խումբ-խումբ կանգնած են գերութիւնից փրկուած հրեաները: Քանի որ նշւում է, թէ նրանք 12 տոհմերի անդամներ էին, ապա պատկերուել են երեք շարքով՝ իւրաքանչիւրում չորս խումբ[7]: Կարմիր ծովի եգիպտական ափի ջրերը արդէն բերուած են սովորական դիրքի, եւ դրանցում խեղդւում է ե-գիպտացիների մեծաթիւ զօրքը: Զօրքի կենտրոնում պատկերուած է փա-րաւոնը՝ սպիտակ ձի հեծած:

Եգիպտական փարաւոնների դամբարաններում ԺԹ. դարից սկսուած պեղումների արդիւնքում յայտնի դարձաւ, թէ հազարամեակներ առաջ ե-գիպտական թագաւորութեան շրջանում ինչպիսի տեսք եւ հանդերձներ են ունեցել եգիպտացիները եւ նրանց փարաւոնները: Հետեւաբար, կարող ենք ենթադրել, որ այս մանրանկարի հեղինակը ԺԳ. դարում հին եգիպտացիների արտաքինի վերաբերեալ պատկերացում չունենալով, նրանց զօրքը պատկերել է իր ժամանակի եւրոպական միջավայրին բնորոշ զինուորական զգեստով, իսկ փարաւոնին՝ եւրոպական երկրի միապետի թիկնոցով եւ թագով (միգուցէ նաեւ հենց կիլիկեան հայ արքաների նմանութեամբ):

Բուն նկարից դուրս, աջ կողմում պատկերուած են Մովսէսը եւ նրա ա-ւագ եղբայր Ահարոնը, ովքեր Աստծոյ օգնութեամբ իսրայէլացիներին դուրս բերեցին գերութիւնից: Նրանց երկուսի հայեացքն ուղղուած է Աստծոյ կրա-կէ սիւնը, որը այստեղ ներկայացուած է հենց պարզ սեան տեսքով:

ՓԱԽՈՒՍՏ ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁ ԵԳԻՊՏՈՍԻՑ

Եգիպտոս փախուստով աւարտւում է Քրիստոսի ծննդեան եւ մանկու-թեան պատկերների շարքը, որն սկսւում է Աւետմամբ, Մարիամի ու Եղիսա-բէթի հանդիպմամբ, շարունակւում Սուրբ Ծննդով եւ մոգերի երկրպա-գութեամբ, ապա եւ տաճարին ընծայմամբ:

Դէպի Եգիպտոս գնալու մասին Մատթէոս Աւետարանիչը գրում է, որ, երբ մոգերը Մանկանը երկրպագելուց յետոյ առանց Հերովդէսին տեսնելու գնում են, չասելով Նրա տեղը, Հերովդէսը զայրացած որոշում է կոտորել Բեթղեհէմի եւ շրջակայքի մինչեւ մէկ տարեկան բոլոր մանուկներին: Այդ-ժամ Տիրոջ հրեշտակը երեւում է Յովսէփին ու ասում. «*Արի՛, ա՛ռ զմանուկդ եւ զմայրն իւր եւ փախիր յԵգիպտոս, եւ անդ լինիջիր ցորժամ ասացից քեզ, քանզի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ: Եւ նա յարուցեալ էառ զմանուկն եւ զմայր իւր գիշերի եւ գնաց յԵգիպտոս եւ անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի: Զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին, որ ասէ՝ յԵգիպտոսէ կոչեցից զորդի իմ*» (*Մտթ.* Բ. 13-15):

[7] Իրինա Դրամբեան, *Հեթում Բ. արքայի Ճաշոցը*, «Նաիրի» հրատ., Երեւան, 2004, էջ 141:



Նկ. 3.- Փախուստ դէպի Եգիպտոս, ձեռ. 278

Հերովդէսի մահից յետոյ Տիրոջ հրեշտակը վերստին երեւում է Յովսէփին Եգիպտոսում եւ ասում. «*Արի՛, ա՛ռ զմանուկդ եւ զմայրն իւր եւ գնա յերկիրն Իսրայէլի, զի մեռան որք խնդրէին զանձն մանկանդ*» (Մտթ. Բ. 20): Եւ Յովսէփը վեր կացաւ, առաւ մանկանն ու նրա մօրը եւ գնաց Իսրայէլ:

Թէ ինչու՛ հրեշտակը երեւաց Յովսէփին եւ ոչ թէ Մարիամին, ինչպէս որ երեւացել էր Աւետման ժամանակ՝ Գրիգոր Տաթեւացին բացատրում է այն հանգամանքով, որ Մարիամը յանձնուած էր Յովսէփի խնամքին եւ վերջինս պատասխանատու էր նրա համար[8]:

Միջնադարեան պատկերագրութիւնում դէպի Եգիպտոս փախուստը ներկայացւում է շարժման ձախից աջ ուղղութեամբ, ուր ձախ կողմում Տիրամայրն է Մանկանը գրկած իսկ նրանց առջեւից գնում է Յովսէփը: Նկարում շարժման ընթացքն ուղղուած է դէպ աջ, իսկ Եգիպտոսից ետ վերադառնալիս դարձեալ առջեւում Յովսէփն է, սակայն շարժման ընթացքը աջից ուղղուած է ձախ[9]:

Հայկական մանրանկարչութիւնում փախստեան եւ վերադարձի զոյգ տեսարանները իւրօրինակ ձեւով արտայայտուել են ԺԳ. դարի վերջին գրուած ու նկարազարդուած եւ այժմ Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի ձեռագրատանը պահուող Աւետարանի իրար յաջորդող երկու մանրանկարներում (ձեռ. 278): Դրանցից առաջինը ներկայացնում է փախուստի տեսարանը (նկ. 3): Սպիտակամօրուս Յովսէփը՝ կիսով չափ կորացած գրկել է Մանկանը: Թէ՛ այս եւ թէ՛ մի շարք այլ նկարներում նրան այսպէս կքած պատկերելը երկու նշանակութիւն ունի: Նախ շեշտւում է, որ Յովսէփն արդէն տարեց էր, եւ Մարիամը, պարզապէս, յանձնուել էր նրա խնամքին: Երկրորդ՝ Մանկանը գրկելու ծանրութիւնից կորանալը խորհրդանշում է Քրիստոսի մարդեղութիւնը եւ ոչ թէ երեւութական ներկայութիւնը, որ մարդկութեան Փրկիչն իրապէս մարդեղացաւ եւ մարմին առաւ Սուրբ Կոյսից: Նոյն մարդեղութիւնն է ընդգծւում Մանուկ Յիսուսի դէպի Տիրամայրը պարզուած ձեռքերի միջոցով, ինչպէս որ ամէն երեխայ ձգտում է դէպի

[8] Գրիգոր Տաթեւացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր*, տպ. Աբրահամ Թրակացի, Կ. Պոլիս, 1740, էջ 24:

[9] G. Schiller, *Iconography of Christian Art, vol. 1*, Greenwich, 1971, էջ 124:

մայրը: Համանման ձեւով Մարիամը՝ մայրական բնազդով շրջուած է դէպ Մանուկը:



Նկ. 4.- Վերադարձ Եգիպտոսից, ձեռ. 278

Աւանակի առջեւից գնում է մի երիտասարդ, ում պատկերը, լաւ չի պահպանուել, սակայն կարող ենք ենթադրել, որ դա Յովսէփի աւագ որդին է: Քանի որ թէ՛ հայ եւ թէ՛ համաշխարհային արուեստում երբեմն Յովսէփի հետ պատկերւում են նաեւ նրա որդիները եւ կամ էլ որդիներից աւագը, ով յայտնի է Յակոբոս կրտսեր անունով, որպէս Յակոբոս Տեառնեղբայր[10]: Այն պատկերներում, ուր Յովսէփը որդիների կամ որդու հետ է, նա առաւել շեշտուած ձեւով է ծեր ներկայացւում:

Եգիպտոսից վերադարձն արդէն յաղթական բնոյթ ունի (նկ. 4): Աւանակի առջեւից վստահ կեցուածքով քայլում է Յովսէփը, իսկ ետեւից նրա որդի Յակոբը: Տիրամայրը Մանկանը գրկած նստած է աւանակի վրայ: Սակայն, այստեղ կայ մի անտրամաբանական անհամապատասխանութիւն: Եգիպտոս փախուստի նախորդ նկարում Քրիստոս ունէր 3-4 տարեկան երեխայի տեսք, իսկ Եգիպտոսից վերադարձի այս մանրանկարում Նա պատկերուած է որպէս նորածին: Իհարկէ, ընդունուած էր պատկերել նորածին Քրիստոսին որպէս աւելի մեծ տարիքի երեխայ. անգամ շատ յաճախ հենց Սուրբ Ծննդեան մանրանկարներում Քրիստոսը ներկայացւում է ոչ թէ պարուրով, այլ աւելի մեծ հասակի երեխայի կերպարով: Սակայն այս նկարում զարմանալին այն է, որ տեղի է ունեցել հակառակը: Երեխայ Յիսուսին պատկերել են նորածնի կերպարով: Հաւանաբար սա հեղինակի կատարած սխալի արդիւնք է:

Յովսէփի կողքին անտիկ փիլիսոփային բնորոշ կերպարով եւ գալարափաթէթը ձեռքին պատկերուած է մի մարգարէ: Ամէնայն հաւանականութեամբ նա Ովսէն է, ում մարգարէութեան համաձայն Աստուած Եգիպտոսից պէտք է կանչի Իր Որդուն. «*Եւ ես սիրեցի զնա, եւ յԵգիպտոսէ կոչեցի զորդի իմ*» (*Ովսեա* ԺԱ. 1):

Հայկական մանրանկարչութիւնում, սակայն, աւելի յաճախ, պատկերւում է միայն դէպի Եգիպտոս գնալը:

---

[10] А. Майкапар, *Новый Завет в Искусстве* (Նոր Կտակարանը արուեստում)), «Կրօն-պրէսս», Մոսկուա, 1998, էջ 91:



Նկ. 5.- Փախուստ դէպի Եգիպտոս, ձեռ. 6319, 3ա

Ի տարբերութիւն բիւզանդական արուեստի, ուր պայմանաւորուած Բիւզանդական Կայսրութեան աւանդոյթով, այս փախուստն իսկ կայսերական մի հանդիսաւոր երթ է յիշեցնում, հայկական մանրանկարչութիւնում այս տեսարանը, ասես, կեանքից վերցուած լինի եւ մեր առջեւ - թւում է - թէ պատկերւում է գաղթի մի տեսարան, ուր առջեւից ընթանում է ընտանիքի ճակատագրով մտահոգ հայրը, իսկ նրան հետեւում է մանկանը գրկին սեղմած մայրը:

«Տիրամայրը մանկան հետ» պատկերներում Տիրամայրը, եթէ ներկայացւում է արքայական վեհութեամբ եւ շուքով, թագաւորական գահաւորակին բազմած, ապա Եգիպտոս փախուստի տեսարանում Տիրամօր հանդերձները յիշեցնում են տուեալ ժամանակի հայ կնոջ հանդերձները, եւ դրանք անգամ ազգագրական արժէք ունեն:

Արցախում ԺԳ.-ԺԴ. դդ. գրուած եւ նկարազարդուած ՄՄ Հմր 6319 ձեռագրի[11] այս նիւթով կատարուած մանրանկարի մասին Հրաւարդ Յակոբեանը գրում է. «*Տպաւորիչ է յատկապէս «Փախուստ Եգիպտոս» նկարը: Մաքուր խորքի վրայ Յովսէփն է եւ Մանկանը գրկած Մարիամը: Նրանք փախչում են թագաւորի մանկասպան հրամանից: Նկարում չկայ միջավայրն արտայայտող որեւէ մանրամասն, եւ այդ լռութիւնը դիտողի մէջ առաջ է բերում յուզական ու հոգեմտաւոր ապրումներ: Որքան էլ նկարիչը «արտիստիկ» չի կատարման մէջ՝ մատնում է անկարող ձեռքը, այնուհանդերձ այդ պատկերը յառնում է կենդանի տպաւորութեամբ եւ տարաբախտ ընտանիքի նկատմամբ ջերմ զգացումով: Յատկապէս ազդու են դէմքերը, հասարակ, երբեմն կոպիտ թուացող այդ դիմագծերում հարազատ բան կայ, արտայայտիչ ու շատ ազգային: Դա գրաւում եւ այլեւս բաց չի թողնում դիտողի ուշադրութիւնը, եւ այդ տպաւորութեան տակ նոյնիսկ մարմինների ծանր ու կոպտացուած ձեւերը դառնում են փխրուն, թեթեւ ու դուրեկան*»[12] (նկ. 5):

---

[11] «Փախուստ դէպի Եգիպտոս», ՄՄ ձեռ. 6319, էջ 3ա. 13-14 դդ.:

[12] Հրաւարդ Յակոբեան, *Արցախ-Ուտիքի մանրանկարչութիւնը*, «Սովետական գրող», Երեւան, 1989, էջ 121:

Ձեռագրերում «Փախուստ յԵգիպտոս» տեսարանին կից պատկերւում է երբեմն «Յովսէփի երազը», երբեմն էլ՝ «Բեթղեհէմի մանկանց կոտորածը», որովհետեւ այս դէպքերը ըստ աւետարանական պատմութեան յաջորդում են միմեանց:

Քանի որ աւետարանիչները մանրամասներ չեն հաղորդում դէպի Եգիպտոս փախուստի ճանապարհի մասին, ապա նկարիչները յաւելեալ դրուագներ ներկայացնելու նպատակով օգտուել են այս նիւթի մասին պատմող պարականոն աւետարաններից, որոնցում մանրամասն պատմւում է ճանապարհին տեղի ունեցած հրաղարձութիւնների եւ Մանուկ Յիսուսի կատարած հրաշագործութիւնների ու բժշկութիւնների մասին:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՐԸ

Եգիպտոսը թէեւ դարձեալ որոշակի խորհրդանշական ընդհանրացուածութեամբ, սակայն աւելի պատմականացուած է պատկերւում եգիպտական անապատական հայրերին նուիրուած վարքերում: Ինչպէս այս վարքերում յիշւում են Նեղոսը եւ սրբերի առանձնանալու վայրերն ու մենաստանները, նոյն ձեւով էլ վերջիններս պատկերւում են այդ պատմութիւնների նկարազարդումների մէջ:

Նեղոսի ընթացքը եւ նրա ափերին գտնուող վանքերը երբեմն տեղագրական ճշտութեամբ են պատկերւում: Ասուածը վերաբերւում է նաեւ վանքերի ճարտարապետական յօրինուածքներին: Այս իրողութիւնը բացատրւում է հետեւեալ երկու հանգամանքներով.

Առաջին՝ Եգիպտոսն անմիջաբար տեսել են այդ ձեռագրերը նկարազարդողները, որպէս ուխտաւորներ այցելելով այդ վայրերը:

Երկրորդ՝ Եգիպտոսի հետ կապուած տեսարանները ներկայացուել են ընդհանուր քրիստոնէական պատկերագրութեան մէջ ձեւաւորուած կանոններին հետեւելով:

Անտոն ճգնաւորն է համարւում անապատականութեան հիմնադիրը: Նա ծնուել է 251ին, Եգիպտոսում՝ Կոմա բնակավայրում, Թեբէեան Անապատից ոչ-հեռու: Քսան տարեկան հասակում զրկուելով ծնողներից՝ վաճառում է իր ունեցուածքը եւ բաժանում չունեւորներին: Հեռանալով իր գիւղից՝ սկսում է բնակուել ամայի մի քարայրում, որտեղ երկար տարիներ պայքարի մէջ է լինում դեւերի հետ, որոնք նրան երեւում էին վայրի գազանների տեսքով: Գայթակղութեան պահերին ջերմեռանդ աղօթում էր Աստծուն՝ խնդրե-լով ցոյց տալ իրեն փրկութեան ճանապարհը: Յետագայում նա ընդհանրապէս հեռանում է անապատ եւ այնտեղ ապրում ճգնակեացի կեանքով:

Իր կեանքի ութսունիհինգ տարիներն անցկացնելով անապատում՝ Ս. Անտոնը վախճանւում է 356ին, 105 տարեկանում եւ ըստ նախապէս յայտնած ցանկութեան՝ թաղւում անապատում[13]:

Անտոն անապատականի վարքում յիշ-ուած դէպերի հետ պայքարելու դրուագը լաւագոյնս ներկայացուած է 1623ին ընդօրինակուած «Հարանց վարք» ձեռագրի մանրանկարում[14] (նկ. 6): Գեղարուեստական վարպետութեամբ նկարիչը պատկերել է Ս. Անտոնին շրջանակի մէջ, որը նման է այն քարայրին, որում նա բնակւում էր: Նկարի ստորին մասում պատկերուած են սրբին գայթակղել փորձող դեւերը՝ գայլի, առիւծի, վագրի եւ եղջերուի կերպարներով: Սակայն Ս. Անտոնի դէմքը հանդարտ է եւ անտարբեր նրանց նկատմամբ:

Ձեռագրերում սովորաբար որեւէ տօն, իրադարձութիւն կամ սրբի կարեւորութիւնը շեշտելու համար գրուածքի կից էջին կամ լուսանցքում մանրանկար էր արւում: Անտոն Անապատականը Հայ Եկեղեցու կողմից մեծապէս պաշտուող սրբերից է, այդ է պատճառը, որ շատ յաճախ է պատկերւում Հայ Եկեղեցու տօների պատմութիւնները ներկայացնող Յայսմաւուրք եւ Գանձարան ժողովածուներում: Հիմնականում, ընդունուած ձեւով, ներկայացւում է որպէս տարեց ծերունի:

Անապատական հայրերից յաճախ է պատկերւում նաեւ Ոնոփրիոս Ճգնաւորը: Նա նոյնպէս հեռանում է անապատ եւ 60 տարի շարունակ ոչ մի մարդու հետ չի շփւում: Երկարամեայ մէնակեացութեան պատճառով նիհարում է, ամբողջովին հիւծւում եւ ծածկւում է երկարած մազերով ու մօրուքով: Միայն նրա մահուան օրը Ս. Հոգու թելադրանքով իր մօտ է գալիս ճգնաւոր Պափնուտիոսը: Ոնոփրիոսը իր վերջին խորհուրդներն ու պատգամներն է տալիս Պափնուտիոսին եւ մահանում[15]:

Հենց այս դրուագն է ներկայացուած 1625ին գրուած եւ ծաղկուած «Հարանց վարք»ում[16] (նկ. 7): Ոնոփրիոսը կանգնած է քարայրի առջեւ, որի կարմիր խորքը աւելի արտայայտիչ է դարձնում սրբի տկարացած մարմինը եւ ճերմակած մազերը: Ոնոփրիոսի հիւծուածութիւնը աւելի ակնյայտ է դառնում մարմնել Պափնուտիոսի հետ համեմատութեամբ: Երկու սրբերի արդար եւ առաքինի ապրած կեանքի հաւաստում է նկարի անկիւնում պատկերուած արմաւենին, որը խորհրդանշում է արդարութիւնը՝ համաձայն


[13] Շնորհք արք. Գալուստեան, *Համաքրիստոնէական սուրբեր*, «Գանձասար», Երեւան, 1997, էջ 118-21:

[14] «Ս. Անտոնը եւ անապատի դեւերը», Երուսաղէմի մատենադարան, ձեռ. 971, էջ 16բ., 1623:

[15] Նոյն, էջ 122-23:

[16] «Ս. Պափնուտիոսը եւ Ս. Ոնոփրիոսը», Երուսաղէմի մատենադարան, ձեռ. 23, էջ 470, 1625:

Դաւթի սաղմոսի. «Արդարներն արմաւենու պէս կը ծաղկեն» (*Սաղմոս* ՂԱ. 13):





Նկ. 6.- Ս. Անտոնը եւ անապատի դեւերը, ձեռ. 971, էջ 16բ Նկ. 7.- Ս. Պափնուտիոսը եւ Ս. Ոնոփրիոսը, ձեռ. 23, էջ 470

«Հարանց վարք»ի տարբեր դարերի ընդօրինակութիւններում կարող ենք տեսնել մեր դիտար-կած երկու մանրանկարների պատկերագրական եւ *կոմպոզից-իոն* գրեթէ ճշգրիտ նմանութեամբ, սակայն կատարողական վարպե-տութեան միանգամայն տարբեր աստիճանների օրինակներ:

Հայ Եկեղեցին առանձնայա-տուկ կարեւորում է ճգնաւորներին եւ ունի նրանց յիշատակին նուիր-ուած տօներ: Եկեղեցական տօնա-կան օրացոյցի համաձայն Յուն-ուարի 19ին տօնում է Անտոն, Տրի-փոն, Պարսամ եւ Ոնոփրիոս ճգնաւորների յիշատակի օրը, իսկ Դեկտեմբերի 4ի ներքոյ յիշւում են բոլոր եգիպտացի անապատական հայ-րերը, եւ նրանց տօնը կոչւում է. «Սրբոց հարցն եգիպտացւոց»:

ՆԵՂՈՍԵԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Նեղոսեան տեսարաններ անուամբ յայտնի դրուագները լայն կիրառում են ունեցել յատկապէս ուշ-անտիկ (Ք.ե. Բ.-Ե. դդ.) արուեստում եւ տա-րածուել Իտալիայից մինչեւ Հիւսիսային Ափրիկէ: Վստահաբար, հենց ուշ-

անտիկ եւ վաղքրիստոնէական խճանկարների պատկերագրութիւնից են վերցուած այդ տեսարանները, որոնք մասնագէտները կապում են աղեքսանդրեան հելլենիզմի աւանդոյթների հետ[17]:

Մլքէ թագուհու աւետարանում, որը մեզ հասած ամէնավաղ յստակ թուագրութեամբ հայկական ձեռագիրն է (862), խորաններից միքանիսում հանդիպում ենք նեղոսեան տեսարաններ: Ձեռագիրը պահւում է Վենետիկի Ս. Ղազար կղզում՝ Մխիթարեան Միաբանութեան գրադարանում (ձեռ. 1144):

Մանրանկարների շարքը սկսւում է Կարպիանոսին ուղղուած Եւսեբիոսի նամակով[18], որը ներկայացուած է երեք միակամար խորաններում: Նամակի երկրորդ եւ երրորդ խորանների կամարամահիկներում պատկերուած է գետ, որի մէջ լողում են մի շարք կենդանիներ՝ կոկորդիլոսներ, ձկներ եւ թռչուններ (նկ. 8): Նաեւ տեսնում ենք ձկնորսներով լի նաւակներ:



Նկ. 8.- Եւսեբիոսի նամակի երկրորդ խորանը, Մլքէի աւետարան, ձեռ. 1144


Անդրադառնալով այս թեմային, Զ. Յակոբեանը գրում է.

Մլքէի աւետարանը միակը չէ, որտեղ կան նեղոսեան տեսարաններ: Այս տեսարանը առկայ է Անիի դպրոցին վերագրուող Մողնու աւետարանում (ԺԱ. դ. կէս): Այստեղ՝ չորրորդ խորանում, տեսնում ենք ձկնորսներով նաւակ, կոկորդիլոս, ձուկ եւ մեդուզա, ինչպէս նաեւ ջրային թռչուններ: Վերը նշուածից բացի այստեղ կան դիցաբանական կենդանիներ, ինչպիսիք են գրիֆոնը, սֆինքսը,

[17] Զ. Յակոբեան, «Անտիկ աւանդոյթների վերապրումները Մլքէ թագուհու աւետարանի մանրանկարներում», *Բազմավէպ*, Վենետիկ, 2009, էջ 352-53:

[18] Աւանդութեան համաձայն աստուածաբան, պատմաբան Եւսեբիոս Կեսարացին (մօտ 260-340)՝ եգիպտացի ոմն Կարպիանոսի խնդրանքով կազմում է չորս Աւետարանների կանոններ՝ համաձայնութեյան տախտակներ: Նա Աւետարանները բաժանել է հատուածների, համարակալել ըստ գլուխների, համարների օգնութեամբ կազմել համաձայնութեան տասը տախտակներ, դրանցից օգտուելու կարգը բացատրել Կարպիանոսին ուղղած թղթում:

թեւաւոր առիւծն ու շունը, կերպարներ, որ յայտնւում են ձեռագրերում մի փոքր ուշ: Թւում է, թէ Մողնու աւետարանի մանրանկարիչը ի մի է բերել բոլոր տեսակի արտասովոր կենդանիների՝ որպէս հնամենի խորհրդանիշերի, ու պատկերել նրանց պայմանական ձեւով: Իհարկէ, Մլքէի աւետարանի նեղոսեան տեսարաններին եւս յատուկ է որոշակի պայմանականութիւն, բայց եւ այնպէս տեսարանի աւելի կենդանի պատկերումը, պլանների բաժանումը, ինչպէս նաեւ մարդկային ֆիգուրների եւ կենդանական աշխարհի համեմատաբար իրապաշտական մեկնաբանումը՝ այս ամէնը թոյլ է տալիս զգալու նախատիպի անմիջական ազդեցութիւնը, ինչպէս նաեւ Մլքէի վարպետի ուշ անտիկ արուեստին ծանօթ լինելը[19]:



Նկ. 9.- Խորան, Մողնու աւետարան, ձեռ. 7736

Մողնու աւետարանի (ՄՄ ձեռ. 7736) նեղոսեան տեսարանը ներկայացնող խորանում պատկերուած կոկորդիլոսի մասին Լիդիա Դուրնովօն նշում է, որ, քանի որ հեղինակին բացարձակապէս անծանօթ է եղել կոկորդիլոսը որպէս կենդանի, ապա նա նրան պատկերել է պայմանականօրէն առանց ատամների եւ երկարավիզ (նկ. 9): Իսկ ջրային ամբողջ տարածքում պատկերուած մեդուզաների մասին գրում է, որ դրանք կարծես հեղինակի՝ իրականում տեսածի տպաւորութեան փոխանցումը լինեն[20]:

---

[19] Նոյն, էջ 354:

[20] Л. Дурново, *Очерки Изобразительного Искусства Средневековой Армении*, (Ակնարկներ Հայաստանի միջնադարեան կերպարուեստի մասին) Մոսկուա, 1979, էջ 180. նաեւ՝ В. Казарян, С. Манукян, *Матенадаран,* (Մատենադարան) *հպր. 1*, «Կնիգա», Մոսկուա, 1991, էջ 55:

Դուրնովօն թէ՛ Մլքէի եւ թէ՛ Մողնու աւետարանների նեղոսեան տեսարանների դրուագներից որոշների դէպքում նմանութիւն է տեսնում Գառնու խճանկարի հետ[21]:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՅ[22]

Եգիպտոսի հանդէպ հետաքրքրութեան մեծացմանը նպաստել է նաեւ հայ միջնադարեան գրականութեան կոթողային գործերից մէկը՝ «Ալեքսանդրի վէպ»ը (յայտնի է նաեւ «Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ» անուամբ), որում մանրամասն նկարագրւում է Մակեդոնացու դէպի Եգիպտոս արշաւանքը, Աղեքսանդրիա քաղաքի հիմնումը եւ Եգիպտոսում փարաւոն կարգուելը:

«Ալեքսանդրի վէպ»ի հին հայերէն թարգմանութիւնը մեզ է հասել աշխարհի տարբեր վայրերում պահուող շուրջ 70 ձեռագրով, մեծ մասամբ՝ ԺԷ.-ԺԸ. դարերի: Թարգմանուելով հաւանաբար Ե. դարի 80ականներին՝ յունարէն հնագոյն չպահպանուած բնօրինակից, այն տարբեր ժամանակներում ենթարկուել է զգալի փոփոխութիւնների, համառօտումների ու յաւելումների: «Ալեքսանդրի պատմութիւն»ն այնքան հեղինակաւոր գործ է եղել միջնադարեան Հայաստանում, որ անգամ վերագրուել է Արիստոտէլին, նաեւ Եզովպոսին[23]:

Հայերէն առաջին թարգմանութեան հեղինակն է համարւում պատմահայր Մովսէս Խորենացին[24]:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հայ միջնադարեան մանրանկարչութեան մէջ Եգիպտոսին առնչուող տեսարանների պատկերումը գալիս է եւս մէկ անգամ հաստատելու այն, որ թեմատիկ պատկերների տարածուածութիւնը պայմանաւորուած էր այդ թեմաների միջնադարում ունեցած կրօնա-խորհրդաբանական նշանակութեամբ եւ եկեղեցատօնացուցային տարածուածութեամբ:

---

[21] Дурново, էջ 180:

[22] Հնարաւորութիւն ենք ունեցել նայել միայն ՄՄ պահուող Վէպի ձեռագրերը: Դրանք նկարազարդուած էին, սակայն շեշտը դրուած էր մարդկային կերպարների վրայ: Մեր ակնկալութիւնը՝ թէ կը գտնենք Եգիպտոսի բնապատկերը ներկայացնող մանրանկարներ, չիրականացաւ: Այդ մանրանկարները, բոլորը, Ալեքսանդրին ներկայացնող դիմանկարներ էին: Արտասահմանի մեծ ձեռագրատներում պահուող ընդօրինակութիւններում գուցէ լինեն՝ սակայն դրանք ուսումնասիրելու հնարաւորութիւն չենք ունեցել:

[23] Ա. Թոփչեան, «'Ալեքսանդրի վէպի' հին հայերէն թարգմանութեան բնագիրը եւ ազդեցութիւնը հայ միջնադարեան գրականութեան վրայ», *Բանբեր մատենադարանի*, 29:2019, էջ 44-47:

[24] *Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ. հայկական խմբագրութիւններ*, աշխ.՝ Յասմիկ Սիմոնեան, Երեւան, 1989, էջ 11:

EGYPTIAN SCENES IN MEDIEVAL ARMENIAN ILLUMINATED MANUSCRIPTS (Summary)

Shoghakat Devrikyan
devrikyan@gmail.com

After extensive research on Armenian illuminated manuscripts and miniatures, the author groups the main scenes of the Armenian manuscripts related to Egypt under the following themes:

A. **Crossing of the Red Sea,** which is often based on the main details registered in the Book of Exodus.

B. **Flight into Egypt,** which is the most frequently illuminated episode in the context of Egyptian illuminated scenes.

C. **The hermit fathers in the desert,** which presents a number of hermits and their lives in the Egyptian desert. In certain cases these hermits are illuminated with architectural structures in the background.

D. **Nilotic landscapes,** which presents scenes associated with late antiquity and early Christian art.

Furthermore, the author notes that in the Middle Ages several copies of the manuscript entitled "Alexander's Story", which narrates the raid of Alexander the Great on Egypt and the founding of the city of Alexandria, contributed to the growth of interest in Egypt.

The article elaborates, discusses and analyses the iconographic and artistic aspects of these illuminations in the broader context of Christian manuscript illumination.

Եգիպտոսի Հայոց Թեմը

Վարդան Դեւրիկեան
devrikyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Հայ Եկեղեցու Եգիպտոսի եկեղեցական կառոյցի ձեւաւորումը, ընդգրկած սահմանները եւ ունեցած կարգավիճակը՝ ծխական համայնք սպասարկու քահանայով, հոգեւոր հովւութիւն, առանձին թեմ, անգամ պատրիարքական եւ կաթողիկոսական աթոռ (թէկուզեւ կարճատեւ ժամանակով), պայմանաւորուած է եղել արտաքին եւ ներքին երեք հետեւեալ գլխաւոր գործօններով.-

Ա) Քաղաքական ոչ-հայկական գործօններ.- Արաբական Խալիֆաթի ձեւաւորումից մինչեւ վերջինիս քայքայումը, ապա՝ այս տարածաշրջանում ձեւաւորուած պետութիւնները իրենց շարունակական վերաձեւումներով մինչեւ օսմանեան տիրապետութեան հաստատումը եւ յետոյ Եգիպտոսի անկախութեան հռչակումը:

Բ) Քաղաքական հայկական գործօններ.- Հայ Եկեղեցու նուիրապետութեան ձեւաւորումը եւ կրած փոփոխութիւնները, որոնք իրենց հերթին թելադրուած էին այն երկրների վարչատարածքային վերաձեւումներով, որոնցում գտնւում էին հայ եկեղեցական կառոյցները: Հայաստանի քաղաքական իրավիճակի փոփոխութիւններով էին պայմանաւորուած նաեւ հայոց հայրապետական աթոռի դեգերումները Վաղարշապատից մինչեւ Կիլիկիայի հայկական պետութիւն, ինչպէս նաեւ ամէնայն հայոց կաթողիկոսութեան կողքին Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի ու Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքական աթոռների հաստատուելը: Այս շարքում չենք յիշում Աղթամարի եւ Աղուանից կաթողիկոսութիւնները իրենց տեղային նեղ ընդգրկման, սահմանափակ գործառոյթի եւ այն պատճառով, որ չեն առնչում մեր քննած հարցին:

Գ) Ջուտ-համայնքային գործօններ.- Տուեալ երկրի հայ համայնքի թիւը, այդ համայնքի ունեցած դերը եւ նշանակութիւնը համահայկական կեանքում, աշխարհագրական դիրքը՝ միջազգային տարանցիկ եւ Հայ Եկեղեցու նուիրակների երթուղու ճանապարհներին:

Այս երեք գործօնները եւ յատկապէս առաջինը, պայմանաւորեցին, որ իրար հետ սերտ կապակցութեան մէջ գտնուեն աշխարհագրական եւ քաղաքական գրեթէ նոյն տարածքում եւ իրավիճակում գտնուող հայոց ընդհանրական հայրապետութիւնը կիլիկեան շրջանում, ապա եւ կիլիկեան աթոռը, Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը եւ արաբական երկրների հայ եկեղեցական կառոյցները:

Օսմանեան կենտրոնաձիգ իշխանութեան հաստատմանը զուգահեռ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան դերը թուլանում է եւ աճում է Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը: Նոյն ձեւով կիլիկեան աթոռի դերն է աշխարհագրականօրէն աստիճանաբար սահմանափակւում որպէս տե-

ղային կաթողիկոսութիւն՝ Կիլիկիայի Հայկական Պետութեան անկումից յետոյ:

Հայ ազգաբնակչութեան տեղաշարժերը Հայաստանից դէպի տարբեր երկրներ, ինչպէս նաեւ մի երկրից միւսը եւ այդ երկրների վարչական սահմանների փոփոխութիւնները, յանգեցրել են եկեղեցական թեմերի եւ նրանց մաս կազմող հոգեւոր հովւութիւնների շարունակական փոփոխութիւնների ու վերակազմաւորումների:

Նաեւ մի երկրի ներսում քաղաքական երկու կենտրոնների, կամ քաղաքատնտեսական երկու կենտրոնների առկայութիւնը դարձեալ առաջ է բերել երկու թեմերի ձեւաւորում եւ երկկենտրոն վիճակ: Իրաքում եթէ այն արտայայտուել է Պաղտատի եւ Պասրայի օրինակով, որպէս քաղաքական կենտրոնի եւ նաւահանգստային տնտեսական կենտրոնի յարաբերակցութիւն, ապա Եգիպտոսում նոյն ձեւով դրսեւորուել է Գահիրէի եւ Աղեքսանդրիայի զոյգ թեմերով:

Մեր նպատակը չի եղել գրել Եգիպտոսի թեմի ներեկեղեցական եւ ներհամայնքային կեանքի մասին՝ կրթական, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւնների գործունէութեամբ, թէկուզեւ դրանց մի մասը աւանդաբար ենթարկուել է առաջնորդարանին եւ գտնուել վերջինիս հոգածութեան ներքոյ: Մեր առաջ խնդիր ենք դրել ներկայացնել Հայ Եկեղեցու նուիրապետական համակարգում թեմի ունեցած տեղը եւ թեմական կառոյցի պատմական զարգացման ընթացքը:

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁ

Եգիպտոսում հայ վանական կեանքի առաւել տարածմանը նպաստել է Բիւզանդական Կայսրութեան վարած դաւանական անհանդուրժողական քաղաքականութիւնը:

Յուստինիանոս կայսեր 553ի հրամանով Երուսաղէմում տարբեր դաւանանքների եկեղեցականներին պարտադրուեց քաղկեդոնականութիւն ընդունել, որից խուսափելու համար հայ վանականները ապաստան գտան Եգիպտոսում, ուր այդ եկեղեցիների համակեցութիւնը լաւագոյնս ներկայացուած է ԺԲ. դարի հեղինակ Ապու Սալիհ ԷլԱրմանիին վերագրուող եւ Եգիպտոսի եկեղեցիներին վերաբերող աշխատութեան մէջ, որում հայկական եկեղեցիները ներկայացուում են Եգիպտոսի Ղպտի եւ Մելքիտ Եկեղեցիներին համահաւասար[1]:

[1] Այս գործի Ապու Սալիհ ԷլԱրմանիի կողմից գրուած լինելը այժմ վիճարկւում է, եւ որպէս հեղինակ է նշւում Աւու ԱլՄաքարիմ անուանուող նոյն ժամանակահատուածի պատմագիրը: Այս հարցի վերաբերեալ հայ եւ օտար հեղինակների յայտնած կարծիքների մասին տե՛ս՝ Գագիկ Դանիէլեան, «Հայկական վանքերի եւ եկեղեցիների մասին յիշատակութիւններ Ապու ԱլՄաքարիմի երկի անյայտ էջերում», *Բանբեր մատենադարանի*, 26:2018, էջ 22-57:

Եգիպտոսի հայ եկեղեցական կառոյցի պատմութիւնը կարելի է երեք մեծ պարբերաբաժանումների ենթարկել՝ մեկնելով երկրի քաղաքական իշխանութեան եւ ընդգրկած տարածքների փոփոխութեան ու հայութեան յիշեալ տարածաշրջանում ունեցած ժողովրդագրական տեղաշարժերից, յատկապէս՝ Շահ Աբբասի բռնագաղթով (ԺԷ. դարասկիզբ) ու Ջալալինեի արշաւանքներով (1588-1610), համիտեան ջարդերով եւ հայոց Մեծ Եղեռնով թելադրուած զանգուածային ներհոսքերով:

Հայ Եկեղեցու Եգիպտոսի կառոյցը, ըստ այսմ, ունի հետեւեալ երեք մեծ պարբերաբաժանումները.-

1. Քրիստոնէութեան առաջին դարերից մինչեւ օսմանեան տիրապետութեան շրջան՝ 1517, անգամ մինչեւ Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան ենթակայութեանը անցնելը 1830ականներին:

2. Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը ենթակայ առանձին թեմ՝ 1830ականներից մինչեւ առաջին աշխարհամարտի աւարտը եւ Լոզանի համաժողովը:

3. Առաջին աշխարհամարտից եւ հայոց Մեծ Եղեռնից յետոյ ձեւաւորուած աշխարհաքաղաքական նոր իրողութիւնների շրջանակում առանձին թեմ՝ Ս. Էջմիածնի ամէնայն հայոց կաթողիկոսութեան իրաւասութեան ներքոյ, որը շարունակւում է առ այսօր:

Առաջին շրջանը իր հերթին կարելի է բաժանել երեք ենթաշրջանների.-

1. Հայկական առաջին եկեղեցիների եւ վանքերի գործունէութիւնը մինչեւ Գրիգոր Վկայասէրի կողմից առանձին աթոռի հաստատումը:

2. Գրիգոր Բ. Վկայասէրից (կթղ. 1066-1105) մինչեւ օսմանեան տիրապետութեան շրջանը՝ 1516:

3. Օսմանեան տիրապետութեան շրջանից մինչեւ Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը ենթակայ առանձին թեմի ստեղծումը 1830ականներին:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ.- ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Առաջին ենթաշրջան

Հայկական եւ օտար պատմական սկզբնաղբիւրները եւ նիւթական մշակոյթի առարկաներն ու արձանագրութիւնները վկայում են, որ հայերը Եգիպտոսում հաստատուել եւ անգա՛մ որոշակի համայնքային կեանքով ապրել են դեռեւս Քրիստոսի ծննդից առաջ:

Եգիպտոսում եղած առաջին հայ հոգեւորականը, ում անունը պահել է պատմութիւնը, կարելի է համարել Մովսէս Խորենացին: *Հայոց պատմութեան* ԿԲ. գլխում Պատմահայրը գրում է, որ աշակերտների իրենց խմբով հասնելով Եդեսիա, այնուհետեւ գնում են սուրբ վայրերին երկրպագելու եւ ապա անցնում Եգիպտոս: Խորենացին մանրամասն է նկարագրում

յատկապէս Աղեքսանդրիան, իրար հետ համեմատելով քաղաքի նախաքրիստոնէական եւ քրիստոնէական ժամանակաշրջանները[2]:

Անկախ ուխտաւորների այցելութիւններից, հայերը Եգիպտոսում տեսակարար մեծ կշիռ են ունեցել դեռեւս Բիւզանդական Կայսրութեան ազդեցութեան շրջանում, սակայն - ինչպէս գրում է Արշակ Ալպոյաճեանը – հաւանական չէ, որ արաբական տիրապետութեանը նախորդող շրջանում հայերը այստեղ առանձին կրօնական համայնք ունենային, քանի որ Յոյն Օրթոտոքս Եկեղեցին թոյլ չէր տալիս, որ բիւզանդական տիրապետութեան ներքոյ գտնուող երկրներում այլ ժողովուրդներ իրենց դաւանանքի եկեղեցիներ ունենային[3]:

Եգիպտոսը նաեւ կայսրութեան այն ծայրամասերից էր, ուր դաւանական բնոյթի հալածանքներից խոյս տալով հաստատւում էին ոչ-քաղկեդոնական վանականները: Յուստինիանոս կայսրը երբ պատուիրում է քաղկեդոնութիւն ընդունել Երուսաղէմի տարբեր դաւանանքների հոգեւորականներին, հայ վանականները փոխադրւում են Եգիպտոս, ուր - ըստ Ալպոյաճեանի - արդէն հայկական վանք կար հայ վանականներով[4]:

Ալպոյաճեանը, նաեւ առանց թուական նշելու, գրում է, որ երբ արաբները տիրեցին Եգիպտոսին, հայերը եւ ղպտիները իրաւունք ստացան իրենց ազգային ինքնուրոյն եկեղեցիները ունենալ[5]:

969ին Եգիպտոսում տեղի է ունենում իշխանափոխութիւն. Աբբասեաններից իշխանութիւնը անցնում է Ֆաթիմեաններին, ովքեր իրենց ինքնուրոյն խալիֆայութիւնն են հաստատում:

Ֆաթիմեանների իշխանութեան ժամանակ հայերի թիւը Եգիպտոսում անհամեմատ մեծանում է երկու պատճառով: Նախ, որովհետեւ Ֆաթիմեանները Եգիպտոսին են միացնում Սիրիան եւ Պաղեստինը, ուր արդէն մեծ թուով հայ բնակչութիւն կար: Հայերը ոչ միայն յայտնւում են Ֆաթիմեանների իշխանութեան կազմում, այլեւ գաղթում են երկրի աւելի խաղաղ եւ կայուն կենտրոնական շրջանները:

Նոր իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը - որով նպաստաւոր պայմաններ էին ստեղծւում գիտութեան, արուեստի ու արհեստների, երկրագործութեան եւ առեւտրի զարգացման համար -տարբեր կողմերից դէպի Եգիպտոս է ձգում հայերին, իսկ եկեղեցական կառոյցի կազմակերպման գլխաւոր պայմաններից մէկը մեծաթիւ համայնքն է:

---

[2] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն հայոց*, աշխ.՝ Ստ. Մալխասեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1981, էջ 428:

[3] Արշակ Ալպոյաճեան, *Արաբական միացեալ հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը)*, [տպ.] Նոր աստղ, Գահիրէ, 1960, էջ 239:

[4] Նոյն, էջ 239:

[5] Նոյն, էջ 240:

Այս շրջանում հայերի Եգիպտոս գաղթելուն պատճառ են դառնում նաեւ սելճուքեան արշաւանքները, որոնք ոչ միայն Հայաստան են հասնում, այլեւ՝ մինչեւ Սիրիա եւ Պաղեստին:

Ենթադրւում է, որ Ֆաթիմեանների իշխանութեան գալուց առաջ Եգիպտոսում արդէն պէտք է հայկական համայնք ձեւաւորուած լինէր, որպէսզի յետոյ իրեն ձգէր հայութեան նորանոր զանգուածների:

Յաջորդ կարեւոր, արդէն առարկայական ապացոյցը Գահիրէի հայոց Պէյն Սուրէյնի եկեղեցում գտնուող եւ 981 թուակիր խաչքարն է[6]: Ժ. դարում խաչքար չէր կարող կանգնեցուել որեւէ ամայի վայրում: Այն պէտք է կա՛մ եկեղեցու որմերին ագուցուած լինէր եւ կա՛մ էլ կանգնեցուած՝ եկեղեցու շրջագծում: Հետեւաբար այդ եկեղեցին կառուցուած պէտք է լինի մինչեւ 981[7]: Քանի որ հայ համայնքն է եկեղեցական կեանքը ձեւաւորում եւ ոչ հակառակը, ուստի հայ համայնք այստեղ պէտք է լինէր մինչեւ այդ:

Ֆաթիմեանների շրջանում Եգիպտոսի հայ բնակչութիւնը հասնում է երեսուն հազարի: Յիշւում են Գահիրէում եւ երկրի տարբեր քաղաքներում գտնուող երեսունից աւելի եկեղեցիներ եւ երկու մեծ վանքեր:

Երկրորդ ենթաշրջան. Գրիգոր Բ. Վկայասէրից մինչեւ օսմանեան տիրապետութեան շրջանը՝ 1516

Տեղի հայ եկեղեցական կառոյցի մասին առաջին յիշատակութիւնը գտնում ենք դարձեալ Ֆաթիմեանների շրջանում՝ Գրիգոր Բ. Վկայասէրի (կթդ. 1066-1105) Եգիպտոս գալու առնչութեամբ:

Գրիգոր Բ. Վկայասէրի Եգիպտոս գալու, այնտեղ Հայ Եկեղեցու թեմ հիմնելու եւ իր քեռորդի Գրիգոր իշխանին եպիսկոպոս ձեռնադրելու եւ թեմակալ առաջնորդ նշանակելու մասին այս իրադարձութիւններին ժամանակով բոլորից մօտ եղող պատմիչը Մատթէոս Ուռհայեցին (վխճ. 1144) է, ով գրում է, որ հայոց Գրիգորիս կաթողիկոսը գնում է Կ. Պոլիս, ապա Հռոմ եւ «*եկեալ յԵգիպտոս շրջեալ ամենայն անապատսն առաջին սրբոց հարցն եւ կատարեաց զամենայն փափագումն սրտին իւրոյ. եւ հաստատեաց անդէն զաթոռ իւր հայրապետութեանն, եւ կանգնեալ նորոգեաց անդէն զամենայն կարգ Սուրբ եկեղեցւոց. եւ բազում փառք եւ մեծութիւն ընկալաւ Տէր Գրիգորէս ի թագաւորէն եգիպտացւոց առաւել, քան ի թագաւորէն Հռոմոց: Եւ բազումք ժողովեցան Հայոց յԵգիպտոս իբրեւ երեսուն հազարաց. եւ Տէր Գրիգորէս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթողիկոս զՏէր Գրիգոր զքուրորդին իւր. եւ ինքն ելեալ գայր յաշխարհն Հայոց*»[8]:

---

[6] Թորգոմ արք. Գուշակեան, *Եգիպտոսի եկեղեցիները եւ պատմութիւն շինութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ նորաշէն եկեղեցւոյ*, [տպ.] Յաբէթ-Պաղտասար, Գահիրէ, 1927, էջ 11:

[7] Նոյն, էջ 12:

[8] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ*, [տպ.] Ս. Յակոբեանց վանքի, Երուսաղէմ, 1869, էջ 253-54:

Բարձրաստիճան հայ հոգեւորականների Եգիպտոս գալու մասին՝ սկսած Ոռհայեցուց, երկու պատճառ է նշւում: Առաջին՝ ծանօթանալու Եգիպտոսի վանքերի վանականների անապատական ճգնութեանը: Երկրորդ՝ զբաղուելու Եգիպտոսի հայերի եկեղեցական հարցերով: Վկայասէրի պարագայում կար եւ երրորդ պատճառը: Ինչպէս նրան տրուած անուանումն է յուշում, նա զբաղւում էր վարքերի եւ վկայաբանութիւնների ժողովմամբ եւ հայերէն թարգմանութեամբ:

Ուռհայեցին նշում է, որ Վկայասէրը Պոլսից եւ Հռոմից յետոյ Եգիպտոս է գնում այցելելու այն վանքերը, ուր բնակուել են առաջին սուրբ հայրերը:

Անիի 1046ի անկումից յետոյ բիւզանդական կայսրերը ձգտում էին վերջ տալ նաեւ հայոց կաթողիկոսական իշխանութեանը: Թերեւս այս հանգամանքը ակնարկելով է Ուռհայեցին գրում, որ Եգիպտոսի թագաւորից հայոց կաթողիկոսը աւելի լաւ ընդունելութիւն է գտնում, քան հոռոմների թագաւորից՝ բիւզանդական կայսրից: Հրաչ Բարթիկեանը գրում է, որ այդ ժամանակ Եգիպտոսում իշխում էր Ապտուլամին Մոսթանսէր Պիլլահին (1036-94)[9]:

Այս շրջանում է, որ Եգիպտոսի հայ ազգաբնակչութեան թիւը հասնում է երեսուն հազարի եւ Վկայասէրը Եգիպտոսի առաջնորդ է ձեռնադրում Գրիգոր Իշխանին:

Վկայասէրի Եգիպտոս գնալու եւ այնտեղ առաջնորդական աթոռ հաստատելու մասին Վարդան պատմիչը (մօտ. 1198-1271) գրում է. «*Գնալով ի Մսր, ուր եւ մեծարեցաւ յոյժ ի Սուլտանէն եւ շինեաց վանս Հայոց եւ ձեռնադրեալ զեղբօրորդի իւր Գրիգորիս եպիսկոպոս*»[10]:

Վկայասէրի Եգիպտոսում վանքերը այցելելուն, վկայաբանութիւններ ժողովելուն եւ հայոց առաջնորդութիւն հաստատելուն նպաստում է Պատր էլՃամալի հայ վզրուկը (վեզիրը), ով մահմետականութիւն ընդունած հայ էր: Վկայասէրը նրա մօրեղբայրն էր[11]: Հայր Ներսէս Ակինեանը գրում է. «*Գրգորիս իր յաջողութիւնը կը պարտի այն պարագային, որ իր այցելութիւնը Եգիպտոս զուգադիպեցաւ Պեդր էլ Ճեմալ հայազգի, բայց իսլամացած վեզիրի իշխանութեան շրջանին*»[12]:

Հայոց կաթողիկոսի Եգիպտոս գնալը մի փոքր այլ ձեւով է ներկայացնում Կիրակոս Գանձակեցին (1200-71), ասելով, թէ Վկայասէրը նախ Հռոմ է գնացել եւ այնտեղից ծովային ճանապարհով ցանկացել է գնալ

---

[9] Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, աշխ.՝ Հ. Բարթիկեան, Հայաստան հրատ., Երեւան, 1973, էջ 330:

[10] Մկրտիչ Էմին, *Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ պատմութիւն տիեզերական*, Մոսկուա, 1861, էջ 137:

[11] Ալպոյաճեան, էջ 242:

[12] Ն. Վ. Ակինեան, *Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի (կեանքը եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց)*, Մխիթարեանց տպ., Վիեննա, 1960, էջ 381:

Պոլիս «թարգմանութեան աղագաւ», այսինքն վարքեր եւ վկայաբանութիւններ ժողովել հայերէն թարգմանելու համար: Ծովային հողմերը սակայն նաւը Եգիպտոս են տարել: Նաւի Եգիպտոս քշուելում այլաբանական խորհուրդ է գտնում Վարդան Արեւելցին: Գրիգոր Վկայասէրին նուիրուած ներբողեանում նա գրում է. «*Սակայն ի տեսչութենէ վերնոյն առեալ զնաւն հողմոյն տարաւ յԵգիպտոս, որպէս եւ զՏէրն ամենայնի թեթեւ ամպով կամքն հայրենի*»[13]:

Ըստ Գանձակեցու, Եգիպտոսում սովորութիւն կար ափ ելած նաւաբեկեալներին կողոպտելու եւ սպանելու: Վկայասէրը իր ուղեկիցների հետ երբ ափ է ելնում եւ աղօթում, անձրեւ է գալիս: Այնինչ, մինչ այդ տեւական ժամանակ այդ երկրում անձրեւ չէր եկել: Հայոց կաթողիկոսին մեծ պատիւների արժանացնելը Գանձակեցին բացատրում է նաեւ այս հրաշքով[14]:

Վարդան վարդապետը, սակայն, շարունակելով զուգահեռը Քրիստոսի Եգիպտոս տարուելու հետ, աւետարանական պարականոնների հետեւողութեամբ[15] գրում է, որ ինչպէս մանուկ Յիսուսի Եգիպտոս մուտքով «շարժեցին ձեռագործքն Եգիպտացւոց», այնպէս եւ Վկայասէրի գալով «*ասպ շարժեալ լինէին ամպք եւ քաղցր եւ առատ անձրեւով առոգեցաւ բոլորն Եգիպտոս*»[16]:

Արաբական աղբիւրները եւս նշում են Վկայասէրի Եգիպտոսում կատարած հրաշքների մասին[17]:

Նախորդող շրջանի մատենագրական յիշատակութիւնների հիման վրայ ԺՋ. դարի ժամանակագիր Դաւիթ Բաղիշեցին եւս գրում է Վկայասէրի ծովային ալեկոծութեան ենթարկուելու մասին. «… *եւ ակամայ նաւն եհան զնա յԵգիպտոս եւ անդ բազում հրաշս արար եւ հագարացի թագաւոր նոցա մեծաւ սիրով ընկալաւ զնա*»[18]:

Եգիպտոսում կատարուած ձեռնադրութեանը ժամանակով բոլորից մերձ եղող պատմիչ Ուռհայեցին գրում է, որ Վկայասէրը Գրիգորին կաթողիկոս ձեռնադրեց: Այս ձեռնադրութիւնը, սակայն, մեկնաբանուել է որպէս եպիսկոպոսական, թէ՝ Եգիպտոսում ոչ թէ կաթողիկոսական, այլ թեմական առաջնորդութեան աթոռ է հաստատուել: Այնինչ կաթողիկոսական աթոռի հաստատման մասին պատմիչը երկիցս գրում է յաջորդող շարադրանքում: Նախ ասում է, որ Ս. Գրիգորի աթոռը կաթողիկոսական

---

[13] Վարդան Արեւելցի, *Ճառք, ներբողեանք*, աշխ.՝ Հ. Քէօսէեան, «Ոսկան Երեւանցի» հրատ., Երեւան, 2000, էջ 366:

[14] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, աշխ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 96-97:

[15] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, Վենետիկ, 1898, էջ 62:

[16] Արեւելցի, էջ 366:

[17] Դանիէլեան, էջ 50-51:

[18] *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, կազմ.՝ Վ.Ա. Յակոբեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1956, էջ 339:

միքանի իշխանութիւնների բաժանուեց Վկայասէրի հայրապետութեան շրջանում. «*Ի ժամանակիս յայսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ Սրբոյն Գրիգորի, զի ահա Տէր Վահրամ յԵգիպտոս, եւ Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց Անի, եւ Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն*»[19]:

Ժամանակային յաջորդող շարադրանքում 1085-86ի ներքոյ Ուռհայեցին արդէն գրում է. «*Յայսմ ժամանակիս եղեւ ազգիս հայոց վեց կաթողիկոս, երկու յԵգիպտոս, եւ չորս յամենայն աշխարհի Հայոց, որպէս յառաջդ ասացաք*»[20]:

Կաթողիկոսական վեց աթոռներից երկուսը նշւում են Եգիպտոսում: Երկրի քաղաքական կենտրոնը քանի որ Գահիրէն էր, հետեւաբար պէտք է ենթադրել, որ Վկայասէրի սկզբնապէս հաստատած աթոռը գտնուել է Գահիրէում: Գանձակեցին գրում է, որ Եգիպտոսի տիրակալը հայոց կաթողիկոսին է յանձնում Աղեքսանդրիայի աթոռը[21]: Վստահաբար կարելի է հետեւցնել, որ կաթողիկոսական երկրորդ աթոռը Աղեքսանդրիայում է հաստատուել:

Կաթողիկոսական աթոռների նախ չորս լինելը, ապա վեցի հասցուելը իր հերթին պայմանաւորուած էր երկու գլխաւոր պատճառներով: Առաջինը քաղաքական էր: Բիւզանդական Կայսրութիւնում եւ Արեւելքում իշխողները ցանկանում էին իրենց տարածքի հայութեան կրօնական առաջնորդը ունենար եկեղեցական ամէնաբարձր աստիճանը եւ անմիջաբար իրենց ենթարկուէր եւ ոչ թէ քաղաքական մէկ այլ իշխանութեան տարածքում գտնուող կրօնապետին: Այս պատճառով քաղաքական մեծ բաժանումները թելադրում էին համապատասխան կաթողիկոսական աթոռների հիմնումը: Երկրորդ պատճառը պայմանաւորուած էր Հայ Եկեղեցու նուիրապետական համակարգով եւ իւրաքանչիւր աստիճանին վերապահուած ծիսա-եկեղեցական գործառոյթներով: Արդարեւ, Հայ Եկեղեցում Ս. Միւռոնի օրհնութեան եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան իրաւունքը բացառապէս վերապահուած էր կաթողիկոսական իշխանութեանը, որը ողջ միջնադարում այլատեսակ դժուարութիւններ էր ստեղծում Ս. Միւռոնի Հայ Եկեղեցու աշխարհասփիւռ թեմերը առաքելու, ինչպէս նաեւ տարբեր թեմերում ընտրուած առաջնորդների կաթողիոսական կենտրոն ձեռնադրութեան գալու համար:

Այս երկու փոխկապակցուած պատճառները նպաստել են քաղաքական մեծ միաւորներում առանձին կաթողիկոսական աթոռների հաստատմանը, որպէսզի եկեղեցական առաջնորդները որպէս հայութեան կրօնական եւ քաղաքական ներկայացուցիչներ ուղղակիօրէն յարաբերուէին այդ երկրների իշխողների հետ, ինչպէս նաեւ յիշեալ երկրների վար-

---

[19] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ*, էջ 276:

[20] Նոյն, էջ 279:

[21] Գանձակեցի, էջ 97:

չական տարբեր տարածքներում գտնուող հայ համայնքների համար եպիսկոպոսներ ձեռնադրէին եւ Ս. Միւռոն օրհնէին ու առաքէին: Ասուածը հաստատւում է Ուռհայեցու հետեւեալ տողերով, որոնք վերաբերում են իր յիշատակած կաթողիկոսական աթոռներին եւ նրանց առաջնորդներին. «*Սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս, եւ օծանէին եպիսկոպոսունս եւ տային օրհնութիւնս Սուրբ ծիթոյն, եւ ի նոցանէ օրհնէին քահանայք. եւ լինէր պատարագս եւ մկրտութիւնս եւ պսակն կուսանաց*»[22]: Հետեւաբար այս կաթողիկոսներից իւրաքանչիւրը կատարում էր եպիսկոպոսական ձեռնադրութիւն, իսկ եպիսկոպոսները իրենց վիճակներում քահանաներ էին ձեռնադրում: Կաթողիկոսները կատարում էին նաեւ սուրբ ձէթի՝ միւռոնի օրհնութիւնը:

Այստեղ, սակայն, կարեւոր է այն հանգամանքը, որ Ուռհայեցին գրելով թէ չորս մասի բաժանուեց Ս. Գրիգորի աթոռը, յիշում է երեք կաթողիկոսների եւ նրանց շարքում չի գրում Վկայասէրի մասին, որով միւս երեքը ներկայացւում են որպէս կաթողիկոսական աստիճան եւ ծիսական համապատասխան գործառոյթներ ունեցողներ, իսկ Վկայասէրը՝ որպէս հայոց ընդհանրական հայրապետ:

Կիլիկիայի Հայկական Պետութեան հիմնադրմամբ եւ հայոց հայրապետական աթոռի այնտեղ հաստատմամբ, ինչպէս նաեւ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի քաղաքական նոր վերաձեւումների արդիւնքում վերանում է առանձին կաթողիկոսական աթոռների գոյութեան քաղաքական եւ ծիսական անհրաժեշտութիւնը:

Յետագայում յիշեալ նոյն պայմանների թելադրանքով էր, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքութիւնը առանձնայատուկ դիրք ունեցաւ ԺԸ. դարից մինչեւ Ի. դարի առաջին երկու տասնամեակները, երբ Օսմանեան Կայսրութեան տարածքում Կ. Պոլսի հայոց պատրիարքը անմիջաբար հաստատւում էր սուլթանի կողմից եւ - իր հերթին - պատրիարքարանը նշանակում էր կայսրութեանը ենթակայ տարածքների արեւմտահայ եկեղեցական առաջնորդներին: Ս. Էջմիածնի գերագահութիւնը արտայայտւում էր հոգեւոր հարցերում, նորընտիր պատրիարքների եւ առաջնորդների Ս. Էջմիածնում ձեռնադրուելով եւ մայր աթոռից ստացուած միւռոնով:

Անիի Բագրատունեաց Թագաւորութեան անկումից յետոյ ստեղծուած եկեղեցա-քաղաքական խառնակ իրավիճակն էր, որ պատճառ դարձաւ Ուռհայեցու յիշատակած կաթողիկոսական վեց աթոռների հիմնմանը, որոնցից երկուսը՝ Եգիպտոսում:

Անհրաժեշտ է նշել, որ Վկայասէրը ինքը ընդդիմացել է կաթողիկոսական իշխանութեան նման մասնատմանը եւ հարկադրաբար է գործել արտաքին քաղաքական անյաղթահարելի գործօնների ազդեցութեան ներքոյ: Ինչպէս գրում է Ազատ Բոզոյեանը.

---

[22] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ*, էջ 276:

> Գրիգոր Բ.ը, օծուելով կաթողիկոս, առաջին հերթին ձեռնամուխ եղաւ կաթողիկոսական իշխանութիւնը մասնատելու միտումները դադարեցնելուն, որոնք գլուխ էին բարձրացրել, քանի որ հայկական էյկումենէում հաստատուած աշխարհիկ իշխանութիւններից շատերը ձգտում էին իրենց տարածքներում տեսնել Հայոց Եկեղեցու բարձագոյն հոգեւոր իշխանութիւնը՝ նրա ազդեցութիւնը իրենց պետական քաղաքական շահերի համար օգտագործելու միտումով: Այդ գործընթացներին նպաստում էին նաեւ օտար քաղաքական ուժերը. բիւզանդական կայսերական իշխանութիւնների մնացորդները տարածաշրջանում եւ միքանի պետութիւնների բաժանուած սելճուքեան մասնատուած սուլթանութիւններն ու ամիրայութիւնները նոյնպէս փորձում էին կաթողիկոսական իշխանութիւնը օգտագործել սեփական քաղաքական շահերի իրագործման տեսանկիւնից[23]:

Եգիպտոսում Հայ Եկեղեցու առաջնորդական աթոռի հաստատման մասին Բոզոյեանը գրում է. «*Գրիգոր Վկայասէրի գործունէութեան չափազանց կարեւոր շրջափուլ էր նրա այցելութիւնը Ֆաթիմեան Եգիպտոս, իսկ այնտեղ տեղի ունեցաւ նրա միւս արիւնակցի ձեռնադրումը եպիսկոպոս: Առաջին դէպքն էր, երբ Հայաստանից հազարաւոր կիլոմետրեր հեռու հոչակւում էր Հայոց Եկեղեցու նոր թեմ*»[24]: Բոզոյեանը Եգիպտոսի համար չնայած օգտագործում է եպիսկոպոս եւ թեմ բառերը, սակայն, ինչպէս ասացինք, դրանք թէեւ ոչ իրենց լիարժէք նշանակութեամբ, գէթ մի կարճատեւ ժամանակ եղել են կաթողիկոսութիւն եւ կաթողիկոս:

Եգիպտոսի առաջնորդական աթոռի կաթողիկոսութիւն եւ առաջնորդի կաթողիկոս անուանումները Ալպոյաճեանը բացատրում է այն հանգամանքով, որ Եգիպտոսի ղպտի եւ յոյն առաջնորդները ունեցել են պատրիարք առաջնորդ եւ նրանց հետեւողութեամբ տեղի հայոց առաջնորդը եւս անուանուել է պատրիարք[25]: Ինչպէս կը տեսնենք, նոյն այս պատճառով եւս երկու անգամ հայոց առաջնորդները յիշւում են պատրիարքական աստիճանով:

Հայոց առաջնորդին, որ պատրիարք են անուանել Աղեքսանդրիայի ղպտի եւ մելքիտ (յոյն օրթոտոքս) պատրիարքների հետեւողութեամբ, երեւում է նաեւ Շնորհալու եւ Վարդան Արեւելցու հետեւեալ բնորոշումներից: *Ողբ Եդեսիոյ* պոէմում Շնորհալին Եդեսիայի կողմից դիմառնական եղանակով դիմելով Աղեքսանդրիայի պատրիարքական աթոռին, գրում է.

> Էին գումարք հայրապետաց, որ առ ի քոյդ նախագահի,

---

[23] *Մատենագիրք հայոց, ԻԱ. հատոր, ԺԲ դ., Ներսէս Շնորհալի, գիրք Ա.*, կազմ. եւ խմբ.՝ Գուրգէն Գասպարեան, հրատ.՝ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան, «Նայիրի» տպ., Երեւան, 2018, էջ 27-28:

[24] Նոյն, էջ 28:

[25] Ալպոյաճեան, էջ 244:

Թէպէտ եւ չեն այժմ ի միջի, այլ լոկ երազ են գիշերի[26]:

Արեւելցին Վկայասէրին նուիրուած ներբողում եւս ընդգծում է այն հանգամանքը, որ նա Գրիգորին ձեռնադրեց Եգիպտոսում, ուր Աղեքսանդրիայում էին ղպտի եւ հոռոմ (յոյն) եկեղեցիների պատրիարքները: Նրանց կողքին հայոց առաջնորդութեան աթոռը հաստատեց ի փառս Հայ Եկեղեցու եւ ազգի. «*Եւ յաւրինէր զտեղին եպիսկոպոսարան եւ դնէր զնա պատրիարգ յԱթոռն Մարկոսի Աւետարանչի: Թէպէտ եւ այլք ունէին զաթոռակալութեան պատիւ եւ զիշխանութիւն ղպտիք եւ հոռոմք: Այլ նա ի մեր դիմաց զիւր քոյր որդին հաստատեաց ի Հայոց կողմանէ ի փառս եւ ի պատիւ ազգիս մերոյ*»[27]:

Ուռհայեցին Եգիպտոսում կատարուած ձեռնադրութեան մասին գրում է 1074-75ի իրադարձութիւնների նկարագրութեան ներքոյ[28], ուստի Եգիպտոսի հայոց թեմի հիմնադրման թուականն է համարւում 1074ը: Ալպոյաճեանը Գրիգորիս եպիսկոպոսի որպէս առաջնորդութեան շրջան է նշում 1074-1110ը[29]: Ասիութի նահանգի Սոհակ քաղաքի մօտ գտնուող Սպիտակ վանքի եկեղեցու խորանի կամարի հայերէն արձանագրութեան մէջ, որի հեղինակն է Թէոդորոս նկարիչը Քեսունից, յիշւում են Վկայասէրը եւ նրա ձեռնադրած Եգիպտոսի հայոց առաջնորդը. «*Ամենայն հայւոցս. որք եմքս ի ծառայութեան յԵգիպտոս. ի հայրապետութեանն Տեառն Գրիգորի քեռորդւոյն Գրիգորիսի, որ Տէր Վահրամն կոչի*»[30]:

Ինչպէս երեւում է արձանագրութեան շարադասութիւնից՝ «ի հայրապետութեանն» բնորոշումը վերաբերում է ոչ թէ Վկայասէրին, այլ՝ Եգիպտոսի հայոց առաջնորդին: Եգիպտահայութեան համար ասուող «ամէնայն հայւոցս» արտայայտութիւնը ցոյց է տալիս Եգիպտոսում հայկական որոշակի թիւ կազմող համայնքի առկայութիւնը:

Եգիպտոսի հայոց երկրորդ՝ Աղեքսանդրիայի թեմի մասին Ուռհայեցին գրում է 1085ի ներքոյ[31], ուստի այս թուականն է համարւում թեմի կամ Ուռհայեցու բնորոշմամբ՝ կաթողիկոսութեան հիմնման ժամանակը:

Պահպանուել է Աղեքսանդրիայում 1099ին գրուած մի Աւետարան, որն ընդօրինակել է Ահարոն գրիչը: Այժմ Երեւանի Մատենադարանի հմր. 288 ձեռագիրը եղող Աւետարանի յիշատակարանում ասւում է. «*Աւարտեցաւ*

[26] *Մատենագիրք հայոց,* էջ 161:
[27] Արեւելցի, էջ 367:
[28] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ,* էջ 251:
[29] Ալպոյաճեան, էջ 243-45:
[30] Գուշակեան, էջ 17: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ փրոֆ. Քլոտ Մութաֆեանի ուսումնասիրութիւնը այս հատորին մէջ:
[31] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ,* էջ 279:

Սուրբ Աւետարանս ի մայրաքաղաքն Աղեքսանդրու, ընդ հովանեաւ Յովհաննու աւետարանչին ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր»[32]:

Յովհաննէս Աւետարանչին նուիրուած վանք Եգիպտոսում չի յիշւում: Կարելի է ենթադրել, որ Ահարոն կրօնաւորը Աւետարանը ընդօրինակել է Աղեքսանդրիայի ոչ-հայկական վանքերից մէկում:

Եգիպտոսում ձեւաւորուած հայ համայնքը կազմակերպուած եկեղեցական առաջնորդութեամբ օժտելը հայ կեանքի թելադրանքից բացի պայմանաւորուած էր իսլամական երկրների վարչական դրութեամբ, համաձայն որի քրիստոնեաները ունէին իրենց ազգային-եկեղեցական կեանքի ներքին ինքնավարութիւնը եւ պետութեան մօտ իւրաքանչիւր համայնքի պատասխանատուն այդ համայնքի եկեղեցական առաջնորդն էր: Ինչպէս գրում է Ալպոյաճեանը.

> Իսլամ տիրապետութեան ենթարկուած բոլոր երկիրներուն մէջ քրիստոնեաներուն տրուած էր առհասարակ այս առանձնաշնորհը, վասնզի իսլամ եւ քրիստոնեայ կրօնքները իրենց հետեւողներուն քաղաքային կեանքին համար գծած են օրէնքներ եւ կանոններ, որոնք կարելի չէր միեւնոյն յայտարարին ենթարկել: Հետեւաբար քրիստոնեայ հոգեւոր պետերը արտօնուած էին հաւատոյ գործերուն եւ ամուսնական խնդիրներուն համար կիրարկել քրիստոնեայ օրէնքները եւ սովորութիւնները:
>
> Առաջնորդը կամ Հոգեւոր Պետը ոչ միայն համայնքին պետն էր իսլամ երկիրներուն մէջ, այլ քաղաքային ներկայացուցիչը եւ պատասխանատուն համայնքային բոլոր գործերուն:
>
> Իսլամ կառավարութիւններ կը ճանչնային միայն Հոգեւոր Պետը, որ համայնքին գործերը կը կառավարէր իր անձնական պատասխանատուութեան տակ, գրեթէ միապետաբար, նման խալիֆա սուլթանին[33]:

Հետեւաբար համայնքային գոյութիւնը արդէն իսկ ենթադրում էր եկեղեցական կառոյցի եւ առաջնորդի առկայութեան անհրաժեշտութիւնը՝ համայնքի կառավարումը իրականացնելու համար. «*Այնպէս որ Առաջնորդ եւ Առաջնորդութիւն եղած են առանցքը համայնքային կեանքին, եւ անոնց գործունէութենէն շատ բան կախում ունեցած է*»[34]:

Ստորեւ՝ ըստ մատենագրական աղբիւրների եւ տարբեր հետազօտողների ու յատկապէս Ալպոյաճեանի կազմած եգիպտահայ առաջնորդների ցանկերի, ներկայացնենք եգիպտահայ թեմի առաջնորդների գաւազանագիրքը, որքանով որ այն հնարաւոր է կազմել:

Առաջնորդների յաջորդական թուարկման փոխարէն կը փորձենք համառօտ ներկայացնել իւրաքանչիւրի գործունէութիւնը եւ ունեցած մատենագրական ժառանգութիւնը: Առաջնորդների շարքը ըստ ժամանակագ-

---

[32] *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր*, աշխ.՝ Ա. Մաթեւոսեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 120:

[33] Ալպոյաճեան, էջ 243:

[34] Նոյն, էջ 243:

րական ընթացքի կը ներկայացնենք եգիպտահայ թեմի պատմութեան մեր կազմած պարբերաբաժանման ներքոյ:

1. **Գրիգորիս եպիսկոպոս** (1074-1110-...)[35], ում մասին արդէն գրել ենք: Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդութեան որպէս վերջին նուազագոյն թուական յիշւում է 1110ը, քանի որ այդ թուականին Եգիպտոսում թարգմանել է Ս. Ննոփրիոսի վարքը: Թարգմանութիւնն աւարտելու ժամանակ յիշւում է որպէս այնտեղի առաջնորդ[36]:
2. **Անաստաս արքեպիսկոպոս** (1095)

Յիշւում է որպէս Եգիպտոսի հայոց առաջնորդ[37]: Նոյն ձեւով է նրա մասին գրում Արտաշէս Գարտաշեանը[38]: Վերջինս քանի որ այլ աղբիւր չի վկայակոչում, ուստի կարելի է ենթադրել, որ հիմնւում է հաղորդուած տեղեկութեան վրայ, որն իր հերթին հաւանաբար ճիշտ չի եղել, քանի որ այդ ժամանակ իր պաշտօնավարութիւնը շարունակել է Գրիգոր Ա. Վկայասէրի ձեռնադրած Գրիգորիս եպիսկոպոսը:

Թերեւս հնարաւոր է, որ նա առաջնորդն է եղել Աղեքսանդրիայի վիճակի, որի համար մի տեւական ժամանակ առաջնորդ չի յիշւում:

3. **Անանիա արքեպիսկոպոս** (1135-37 վխճ.)[39]

Որպէս առաջնորդ պաշտօնավարել է Զոհերի կամ Զահերատի հայոց վանքում: Նրա մասին պատմական սկզբնաղբիւրն է Ապու Սահլ ԷլԱրմանիի հաղորդած այն տեղեկութիւնը, որ ծագած մի խռովութեան պատճառով 1137ին սպանւում են վանքի միաբանները Անանիայի հետ միասին[40]:

Երուսաղէմի հայոց Եսայի պատրիարքը (1133-52) Անանիա արքեպիսկոպոսի առաջնորդութեան շրջանում Եգիպտոս է եկել դիմելով առանց

---

[35] Առաջնորդական պաշտօնավարման շրջանի սկզբի տարեթուից առաջ բազմակէտ ենք դնում, եթէ այդ թուականին տուեալ անձնաւորութիւնն արդէն յիշւում է որպէս առաջնորդ, սակայն չգիտենք, թէ դրանից առաջ երբ է սկսել իր պաշտօնավարութիւնը: Նման ձեւով վերջին թուականից յետոյ ենք բազմակէտ դնում, եթէ տուեալ թուականին վերջինս յիշւում է որպէս առաջնորդ, սակայն յայտնի չէ նրա պաշտօնավարման աւարտի թուականը:

[36] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ*, էջ 211:

[37] «Եգիպտահայոց առաջնորդներ», *Սարկաւագին տարեցոյցը*, տպ. Արամ Ստեփանեան, Աղեքսանդրիա, 1932, էջ 35:

[38] Ա. Գարտաշեան, «Ցուցակ եգիպտահայ առաջնորդներու», *Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, հտր. Ա*, տպ. Նուպար, Գահիրէ, 1943, էջ 175:

[39] Առաջնորդութեան աւարտի թուականը եթէ նաեւ տուեալ հոգեւորականի վախճանման տարեթիւն է, գրում ենք վխճ., որ պարզ լինի, թէ տուեալ առաջնորդը այդ թուականից յետոյ ոչ թէ հեռացել է առաջնորդական պաշտօնից, այլ ծառայութեան կոչուելով, կամ պաշտօնանկ լինելով, այլ՝ որ վախճանուել է առաջնորդ եղած ժամանակ:

[40] Հ.Ղ. Ալիշան, *Ապու Սահիլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանօրէից Եգիպտոսի*, Վենետիկ, 1895, էջ 19. նաեւ՝ Հ.Ղ. Ալիշան, *Շնորհալի եւ պարագայք իւր,* Վենետիկ, էջ 165:

կրօնափոխ լինելու երկրի վզրուկ (վեզիր) դարձած Վահրամ Պահլաւունուն՝ ազատելու Ժէօֆրու (Jeoffroy) անունով մի եւրոպացու, ով վեզիրի շնորհիւ ազատուելով 33 տարուայ գերութիւնից, Երուսաղէմ է վերադարձել[41]:

4. **Եգիտահայոց պատրիարքը** (... 1149-1172 վխճ.)

1171ին Ֆաթիմեանների փոխարէն իշխանութեան են գալիս Էյուպեանները, որոնց իշխանութեան շրջանում հայերը հալածանքների են ենթարկւում եւ Եգիպտոսում նրանց թիւը նուազում է:

Ապու Սալիհը գրում է, որ 1172ին (որը Էյուպեանների իշխանութեան գալու յաջորդ տարին է), Եգիպտոսի հայոց պատրիարքը Երուսաղէմ է գնում, իր հետ տանելով 75 ձեռագրեր, որոնցից «*մէկը չորս Աւետարանիչները կը պարունակէր եւ Քրիստոսի հրաշագործութիւնները ներկայացնող ոսկեզօծ զարդանկարներ կը կրէր*»[42]: Այս պատմիչը գրում է, որ հայոց պատրիարքը, որի անունը չի նշում, մօտ էր Հաֆիզ խալիֆին, որը մահացել է 1149ին: Հետեւաբար, հայ պատրիարքը գահակալել սկսել է նրա մահանալուց առաջ: Ըստ այդմ, կարելի է ենթադրել, որ նա յաջորդել է 1137ին սպանուած Անանիա արքեպիսկոպոսին: Համայնքային կեանքը, այդ թւում եւ առաջնորդութիւնը, որ շարունակուել է, երեւում է պատմիչի այն վկայութիւնից, թէ պատրիարքը գնալուց առաջ իրեն փոխանորդ է կարգել Գահիրէի մի հայ քահանայի, որպէսզի վերջինս իր որդու հետ ժամերգութիւն կատարի եւ պատարագի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցում: Ասւում է, որ հայերի թիւը նուազել էր Գահիրէում: Նրանց Այգեստան թաղամասում գտնուող եկեղեցին վերցուել էր նրանցից եւ հայերը եկեղեցական պաշտամունքը կատարում էին Հարէթ Զաւիրա (Զուելա) թաղի Անբիծ Տիրամօր մատուռի վերնայարկում: Հետեւաբար, ոչ միայն համայնքային կեանքը, այլեւ համայնքի եկեղեցական արարողութիւնները շարունակուել են անգամ հայոց առաջնորդի (պատրիարքի) Երուսաղէմ գնալուց յետոյ:

Ասացինք, որ Աղեքսանդրիայի ղպտի եւ մելքիտ առաջնորդների հետեւողութեամբ Եգիպտոսի հայոց առաջնորդները եւս միքանի դէպքերում պատրիարք են անուանուել: Ասուածը վերաբերում է նաեւ յիշեալ առաջնորդին, ով, ինչպէս գրում է Ապու Սալիհը, գնալով Երուսաղէմ՝ մեծ հռչակի է արժանանում: Երուսաղէմի հայոց պատրիարքը - որպէս թէ նախանձելով - նրան թունաւորել է տուել[43]: Այս վերջինը այնքան էլ հաւանական չէ:

---

[41] Մկրտիչ եպս. Աղաւնունի, *Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի*, տպ. Ս. Յակոբեանց վանքի, Երուսաղէմ, 1929, էջ 128:

[42] Գարտաշեան, էջ 153:

[43] Նոյն:

Ալպոյաճեանը եւ եգիպտահայ գաղութի մասին միւս գրողները յիշեալ պատրիարքին զարմանալիօրէն եգիպտահայ առաջնորդների թւում չեն նշել: Աւելին, Ալպոյաճեանը գրում է, որ Անանիա արքեպիսկոպոսի 1137ին սպանուելուց յետոյ, կարելի է կարծել, որ նա «յաջորդ չէ ունեցած, վասնզի հայերը շատ պակսած էին Եգիպտոսի մէջ»[44]: Յիրաւի, ըստ Ալպոյաճեանի, մինչեւ 1331, Եգիպտոսում հայ եկեղեցական առաջնորդ չի յիշւում, որից կարելի է ենթադրել, որ Անանիա աքեպիսկոպոսին նոր առաջնորդ չի յաջորդել: Ալպոյաճեանը նման ենթադրութիւնը բացատրում է հետեւեալ երեք պատճառներով.-

Ա) Եգիպտոսի հայ գաղութի նուազմամբ, Բ) Եգիպտոսին մօտ էր Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը, որի միաբանները կատարում էին Եգիպտոսի հայ համայնքի եկեղեցական սպասաւորութիւնը, Գ) Երուսաղէմը քանի որ այդ շրջանում գտնւում էր Եգիպտոսի իշխանութեան ներքոյ, պատրիարքարանի հետ կապուած հարցերով միաբանները գալիս էին Գահիրէ՝ սպասաւորելով նաեւ տեղի հայ համայնքի եկեղեցիներում:

Երուսաղէմի հայոց պատրիարքների եւ միաբանութեան անդամների Եգիպտոսի իշխանութիւններին ուղղուած տարբեր հարցերով Գահիրէ գալու մասին միքանի փաստեր է բերում Մկրտիչ արք. Աղաւնունին:

Ժամանակագրօրէն առաջինը յիշւում է Կարապետ վարդապետ Երուսաղէմցին, ով պատրիարքարանի հանդէպ արաբների գործադրած խստութիւնները մեղմելու համար չորս անգամ Եգիպտոս է գնում եւ սուլթաններից «*ֆերմաններ է ձեռք բերում Տնօրինական սրբավայրերի հայկական տեղիներում նորոգութիւններ կատարելու համար*»: Այս մասին պատրիարքը գրում է Իգնատիոս Սելեռցու կատարած Ղուկասի Աւետարանի մեկնութեան իր ընդօրինակած ձեռագրի 1272ի ինքնագիր յիշատակարանում. «*Դ անգամ յԵգիպտոս իջի եւ առի թուխթ հրամանի ի յարքայէն Եգիպտոսի՝ համարձակ շրջել ի տեղիս Տնօրինականաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ*»[45]:

Սսի եւ Ատանայի 1307 եւ 1309ի եկեղեցական ժողովների լատինամէտ որոշումները մերժելով, Երուսաղէմի աթոռը Սսից անկախ հռչակելու համար Եգիպտոսի սուլթանին է դիմում Սարգիս պատրիարք Երուսաղէմացին (պատրիարք 1281-1313 վխճ.), «որմէ ստացաւ ի նորոյ պատրիարքական հրովարտակ»[46]:

Աստուածատուր պատրիարքի գահակալութեան շրջանում վրացիները լատին եկեղեցու կրօնաւորների հետ միաբանելով, փորձում են գրաւել Ս.

---

[44] Ալպոյաճեան, էջ 246:

[45] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. Բ*, կազմ.՝ Նորայր արք. Պողարեան, տպ. Ս. Յակոբեանց վանքի, Երուսաղէմ, 1967, էջ 249. նաեւ՝ Աստուածատուր եպս. Յովհաննէսեանց, *Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտր. Ա.*, տպ. Ս. Յակոբեանց վանքի, Երուսաղէմ, 1890, էջ 234:

[46] Աղաւնունի, էջ 455:

Յակոբի վանքը եւ Գողգոթայի հայկական իրաւունքը: Միաբանութիւնը Եգիպտոս սուլթանի մօտ է ուղարկում երկու միաբանների՝ հայկական իրաւունքները հաւաստող վաւերագրերով եւ սուլթանի կողմից վերահաստատւում են հայերի իրաւունքները նոր հրովարտակներով:

Ինչպէս վկայում են յիշատակարանները եւ տարբեր վաւերագրեր, Եգիպտոսի հայերը գործուն մասնակցութիւն են ունեցել եւ ճանապարհ հարթել Երուսաղէմի պատրիարքների եւ նրանց ներկայացուցիչների Եգիպտոսի սուլթաններին դիմելու հարցերում, որով մեծապէս կարեւորուել է տեղի հայ համայնքի եւ եկեղեցական կառոյցի դերը Երուսաղէմի հայկական իրաւունքների պահպանութեան գործում:

1250ին Եգիպտոսը գրաւում են մամլուքները, որոնց իշխանութիւնը տեւում է մինչեւ 1517, երբ երկիրը գրաւում են օսմանցիները:

5. **Անանուն առաջնորդ** (1331)

Երուսաղէմի հայոց պատրիարքութեան միաբան Ներսէս վրդ. Կրացին իր ընդօրինակած «Ճառընտիր»ի յիշատակարանում գրում է, որ Եգիպտոսի հայոց առաջնորդը - ում անունը չի նշում - 1331ին փախել եւ ապաստան է գտել Երուսաղէմում: Եգիպտոսի սուլթանը զինուորներ է ուղարկում, որպէսզի գտնեն եւ ետ բերեն նրան:

Վերջինիս որոնող զինուորները Ս. Յակոբեանց վանքում տեսնում են Ներսէս Կրացուն եւ արտաքին նմանութիւն են գտնում փնտռուող հայոց առաջնորդի հետ: Նրան եւ միքանի միաբանների բռնութեամբ տանում են Եգիպտոս: Երուսաղէմի Վարդան պատրիարքը եւ տեսուչ Աբրահամ վրդ. Մերտինցին գնալով Եգիպտոս հազար դահեկան գլխահարկ են վճարում եւ մեծ դժուարութեամբ ազատում նրանց: Այս մասին Ներսէս վարդապետի ընդօրինակած «Ճաշոց»ում ասւում է.

> …եկին ի Մսրայ ճանտրէր սուլտնայ թղթովն ու մուղատամ կու փնթռին, ժողովեսցին զամէն աբեղայքն ու զմիակեցերն, ու զիս նմանուցին ի մուղատամն, եւ երէց մի եւ այլ Դ (4) միակեց ի յայլք նմանցուցին[47]:

Կարելի է ենթադրել, որ Եգիպտոսի հայոց առաջնորդը տեղի հոգեւորականների հետ երկրից հեռացել էր քրիստոնեաների դէմ ծաւալուած հալածանքների պատճառով: Նոյն այս շրջանում՝ 1365ին, Մխիթար Ռէյիզ անունով հայ հոգեւորականին, ում Աղաւնունին Երուսաղէմի միաբան է համարում, մի միայնակեացի հետ բերում են Եգիպտոս եւ այնտեղ նա-

[47] *Մայր ցուցակ, հտր. երկրորդ*, էջ 249. նաեւ՝ *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ. դ., մասն Բ.*, կազմ.՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեւոսեան, Ա. Ղազարոսեան, «Տիգրան Մեծ» տպագրատուն, Երեւան, 2020, էջ 123:

հատակում[48]: Մամուր Ֆաթիմին Մխիթարին համարում է Եգիպտոսի առաջնորդ[49], որը Ալպոյաճեանը այնքան էլ հաւանական չի գտնում[50]:

6. **Պետրոս վրդ. Եգիպտոսի** (1395)

Աղաւնունին գրում է, որ Երուսաղէմի միաբան էր, ով «գործով Եգիպտոս կը գտնուէր»[51]:

Մամուր Ֆաթիմին նրան եւս եգիպտոսահայոց առաջնորդ է համարում[52]: Ալպոյաճեանը որոշակի վերապահութեամբ ասում է. «*Որոշ չափով հաւանականութիւն մը կայ Առաջնորդ կամ հոգեւոր տեսուչ համարելու*»[53]:

Եգիպտոս գերի տարուած Վասիլ գրիչը 1339ին Մսրում (Գահիրէ) ձեռագիր է ընդօրինակում[54]:

Պետրոս վարդապետից ետք, մօտ երկու տասնամեակ եգիպտահայոց առաջնորդ չի յիշւում: Ալպոյաճեանը այս հանգամանքը դարձեալ բացատրում է Երուսաղէմի միաբանութեան կողմից Եգիպտոսի հոգեւոր սպասաւորութեամբ. «*Եգիպտոսի մէջ հայոց առաջնորդները, որոնք եղած են ԺԴ. դարուն վերջը եւ ԺԵ. դարուն սկիզբը, յայտնի չեն: Թերեւս ալ այդ պաշտօնը վարողներ չկան եւ ուղղակի Երուսաղէմէն կը հոգացուէին հոգեւոր պէտքերը Եգիպտոսի գաղութին, ուր այցելելու պարտաւորուած են յաճախ Երուսաղէմի Պատրիարքները եւ անկէ ղրկուած ուրիշ եկեղեցականներ*»[55]:

Նման հոգեւորականներից է Երուսաղէմի Մեսրոպ պատրիարքը, ով Երուսաղէմից Եգիպտոս է գալիս 1402ին եւ սուլթանից նոր հրովարտակ է ստանում «Ճառներ» անուանուող հայկական գերեզմանոցի վրայ հայկական իրաւունքների վերահաստատման[56]:

7. **Պօղոս վրդ. Գառնեցի** (1415)

Յիսէ անունով նուիրատուն գրում է, որ այս թուականին Մսր (Գահիրէ) է եկել Պօղոս եպս. Գառնեցին. «*Ի թվ. ՊԿԴ (1415 թ.) երեկ Երուսաղէմայ եպիսկոպոս տէր Պաւղոս ի մայրաքաղաքս ի Մսրս*»: Յիսէն Պօղոս եպիսկոպոսի միջոցով Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին է նուիրում իրենց ընտանիքում պահուող արծաթապատ կազմով Աւետարանը: Այս ձեռագիրը հմր. 1950 համարի ներքոյ այժմ եւս պահւում է Ս. Յակոբեանց վանքում[57]:

---

[48] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. Ա.*, էջ 356:

[49] *Սարկաւագին տարեցոյցը*, էջ 35:

[50] Ալպոյաճեան, էջ 247:

[51] Աղաւնունի, էջ 416:

[52] *Սարկաւագին տարեցոյցը*:

[53] Ալպոյաճեան, էջ 247:

[54] *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դ., մասն Բ*, էջ 348-49:

[55] Աղաւնունի, էջ 281-282:

[56] Նոյն. նաեւ՝ Յովհաննէսեանց, էջ 218:

[57] *Մայր ցուցակ, ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. Զ*, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 514:

Նուիրատուական յիշատակարանում միայն ասւում է, որ 1415ին Պօղոս եպս. Գառնեցին եկել է Եգիպտոս, բայց գալու հանգամանքների հետ կապուած որեւէ այլ յիշատակութիւն չկայ: Աղաւնունին եւս միայն ասում է, որ յիշեալ հոգեւորականը 1415ին եղել է Եգիպտոսում[58]: Ալպոյաճեանը սակայն, առանց որեւէ նոր փաստ վկայակոչելու գրում է, որ այդ թուականին Եգիպտոսում է եղել «հաւանօրէն իբր առաջնորդ կամ հովիւ»[59]:

8. **Մարտիրոս Եգիպտացի** (Երուսաղէմի պատրիարք 1419-56)

Տիգրան Սաւալանեանցը նրա մասին գրում է. «Մարտիրոս ծնունդով եգիպտացի էր»[60]:

1439ին Երուսաղէմում գրուած եւ այժմ Ս. Յակոբեանց վանքում պահուող «Յայսմաւուրք»ում ասւում է, որ Մարտիրոս Եգիպտացին երեք անգամ Մսր է գնացել եւ հանդիպել սուլթանին, որպէսզի հայերի տնօրինութեան ներքոյ գտնուող Գողգոթայի մատուռը վրացիներին տալու որոշումը փորձի չեղեալ համարել: Տեսնելով Մարտիրոս պատրիարքի գործադրած ջանքերը, Եգիպտոսի սուլթանը քանի որ վերցրած դրամի դիմաց այն տուել էր վրացիներին, Գողգոթայի դիմաց այլ տեղ է տալիս, ուր հայերը նոր մատուռ են կառուցում եւ այն անուանում Երկրորդ Գողգոթա[61]:

Ինչպէս գրում է Ալպոյաճեանը. «*Վրացիներու ոտնձգութիւններուն դէմ մաքառելու եւ ազգին իրաւունքները պաշտպանելու համար քանիցս Եգիպտոս եկած է եւ անշուշտ այնտեղի հայերով ալ զբաղած է*»[62]:

Թադէոս գրիչը 1455ին ընդօրինակած Աւետարանի յիշատակարանում ասում է, որ ձեռագիրը գրուել է «*ի սահմանիս սուրբ քաղաքիս Երուսաղէմի, ի հռչակաւոր անապատս՝ ի Վանս Սրբոյն Սաբայի*»[63]: Թադէոս սարկաւագը ձեռագիրը նուիրում է «Տէր Աբրահամ դեռաբուսիկ քահանային Մըսըրցւոց»: Այս եւ համանման մի շարք այլ օրինակներ նկատի ունենալով, Ալպոյաճեանը կատարում է հետեւեալ ընդհանրացումը. «*Ինչպէս կը տեսնուի, Եգիպտոս տուած է բաւական միաբաններ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին, եւ նոյն իսկ խառն, ամէն ազգի միաբաններ ունեցող վանքերու, ինչպէս Սաբայի վանքին, ուր հայ միաբաններ կային*»[64]:

Ինչպէս նախորդ, այնպէս եւ այս շրջանում միաբաններ կան, որոնց տուած անուանումներն իսկ յուշում են, որ նրանք կա՛մ ծնունդով Եգիպ-

---

[58] Աղաւնունի, էջ 423:

[59] Ալպոյաճեան, էջ 248:

[60] Տիգրան Հ.Թ. Սաւալանեանց, *Պատմութիւն Երուսաղէմի, հտր. Ա*, աշխ.՝ Մեսրոպ եպս. Նշանեան, տպ. Ս. Յակոբեանց վանքի, Երուսաղէմ, 1931, էջ 533:

[61] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. Ա*, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1966, էջ 263:

[62] Ալպոյաճեան, էջ 248:

[63] *ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. մասն Բ. (1451-1480 թթ.)*, կազմ.՝ Լ.Ս. Խաչիկեան, Երեւան, 1958, էջ 62:

[64] Ալպոյաճեան, էջ 249:

տոսից են եւ կա՛մ էլ այնտեղ են սկսել իրենց հոգեւոր ծառայութիւնը, ինչպէս օրինակ Յովհաննէս Մսրցին, ով Երուսաղէմի պատրիարք է եղել 1479-91ին[65]:

Եգիպտահայ էր նաեւ Սէթ վարդապետը, ով 1510ին ընթացող մի դատավարութեան ժամանակ կարողանում է հասնել Բեթղեհէմի հայկական իրաւունքների վերահաստատմանը[66]:

Երրորդ ենթաշրջան. 1520-1830ականներ

1517ից, ինչպէս ասացինք, Եգիպտոսում հաստատւում է օսմանեան տիրապետութեան շրջանը, որը աղէտալի է լինում թէ՛ Եգիպտոսի եւ թէ՛ հայերի համար:

Պօղոս վրդ. Գառնեցուց յետոյ (ով Եգիպտոսում եղել է 1415ին եւ ենթադրաբար համարւում է, որ տեղի եկեղեցական առաջնորդի հանգամանք է ունեցել), մօտ 200 տարի Եգիպտոսի հայ եկեղեցական առաջնորդ չի յիշւում: Ալպոյաճեանը գրում է. «*Օսմանեան տիրապետութեան շրջանին, Եգիպտոսի հայ գաղութը անշքացած է: Այս շրջանին Երուսաղէմի կողմէ ղրկուած հովիւներն ալ չեն յիշուիր: Բայց ինչպէս կը տեսնուի, Երուսաղէմ հոգացած պէտք է ըլլայ Եգիպտոսի հայ գաղութը, եւ հոն եկեղեցականներ ղրկած*»[67]:

Ալպոյաճեանը նման հոգեւորականներից է համարում Յովհաննէս եպիսկոպոսին, ով 1599ին գտնուելով Գահիրէում, գերութիւնից ազատում է Սսում 1332ին գրուած մի Աւետարան եւ աւելացնում իր նուիրատուական յիշատակարանը, որում ասւում է, թէ 1599ին «*նորոգեցաւ Սբ. Աւէտարանս, ի Մսր քաղաք ձեռամբ անարժան Յովհաննէս եպիսկոպոսի եւ յիշատակ եղեւ ի Սուրբ Երուսաղէմ քաղաք, Սուրբ Յակոբ եկեղեցւոյն եւ Սուրբ Սարգսին*»[68]: Այս յիշատակարանում թէեւ չի յիշւում, թէ Յովհաննէս եպիսկոպոսը ինչ հանգամանքով է Եգիպտոսում գտնուել, սակայն Ալպոյաճեանը ենթադրում է, որ «ան հովիւի պաշտօն ունեցած ըլլայ»[69]:

Այս Աւետարանի մասին Աղաւնունին գրում է. «*Ձեռագիրը կը կոչուի Ծովէն ելած Աւետարան, որոյ մասին աւանդաբար կը պատմուի, թէ բերողը Յոպպէի առջեւ նաւաբեկութեան կը հանդիպի. եւ սակայն Աւետարանը կուրծքին վրայ սեղմած ըլլալով՝ կ՛ազատի ծովամոյն ըլլալէ*»[70]:

Միջնադարում եւս չեն դադարում հայկական ուխտագնացութիւնները Աղեքսանդրիա եւ Եգիպտոսի անապատական վանքերը: Աստուածաշնչի նորոգող Յովհաննէսը 1460ին գրած յիշատակարանում ասում է, որ ուխ-

---

[65] Աղաւնունի, էջ 253-4:
[66] Նոյն, էջ 466:
[67] Ալպոյաճեան, էջ 250:
[68] Աղաւնունի, էջ 358. նաեւ՝ Ալպոյաճեան, էջ 250:
[69] Ալպոյաճեան, էջ 250:
[70] Աղաւնունի, էջ 358:

տագնացութեամբ Անբերդից մեկնել է Պոլիս, Կիպրոս եւ այնտեղից «յԱղեքսանդրիա, ի յԵգիպտոս եւ ի վայրաբնակ անապատաւոր սուրբ հարսն, որ ի նմա»[71]:

Նման ուխտագնացութիւնները առաւել մեծ թափ են ընդունում ԺԷ. դարի առաջին երկու տասնամեակներին, երբ Եգիպտոսի անապատական հայրերի վանական կեանքին հաղորդակցուելու են գնում 1605ին՝ Գրիգոր վարդապետ Կամախեցին (Դարանաղցին), 1609ին՝ Մովսէս վարդապետը՝ ապագայ Մովսէս Գ. Տաթեւացին (կթղ. 1629-31)[72], 1615ին՝ Սիմէոն դպիր Լեհացին եւ ուրիշներ:

Առաքել Դաւրիժեցին Մովսէս Գ. Տաթեւացու Եգիպտոսի վանքերը գնալու մասին գրում է, որ վարդապետ եղած ժամանակ գնաց «*յաշխարհն Եգիպտոսի՝ եւ շրջեալ յամենայն վանորայս եւ յանապատս ազգին ղփթոց*»[73]

Դարանաղցին Եգիպտոս է գնում միքանի անգամ: Ասում է, որ երբ առաջին անգամ Եգիպտոս է գնացել 1605ին, շրջելով «*ի յանապատսն, տեսանելով զամենայն կարգս եւ զսահմանս եւ զվարս նոցա, ոչ պակաս գոլով յառաջագոյն սուրբ հարանց վարուց սրբոցն*»[74]:

Դարանաղցին նաեւ նշում է, որ հայ հոգեւորականները իրենց վարքով եւ կենցաղավարութեամբ հիացնում են Եգիպտոսի վանականներին, ինչպէս օրինակ Կարապետ վարդապետը, ով գնալով Եգիպտոս - տեսնելու Քրիստոսի տնօրինական սրբավայրերը եւ սուրբ հայրերի անպատական վանքերը - երկու տարի այնտեղ լինելով «*զխփթոց [ղպտիների] ազգն հիացուցանելով, որ դիւրաւ ուսանելով զյարապ լեզուս եւ նոյն լեզուաւ քարոզելով նոցա*[75]»:

Եգիպտոս հայերի նոր հոսք է սկսւում ԺԷ. դարի սկզբին՝ Շահ Աբբասի բռնագաղթի եւ ջալալիների արշաւանքի հետեւանքով:

Սիմէոն կրօնաւորը Եգիպտոսում 1606ին ընդօրինակում է «Ժամագիրք»: Վերջինս նախատեսուած էր ծիսական պաշտամունքի եւ ոչ թէ հոգեւոր ընթերցանութեան համար: Հետեւաբար, այդ ժամանակ Եգիպտոսի հայ գաղութում եղել է գործող եկեղեցի: Ասուածը հաստատւում է նաեւ ձեռագրի յիշատակարանով, որում ասւում է. «*Արդ գրեցաւ Սուրբ Պատա-*

---

[71] *ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. մասն Բ.*, էջ 130:

[72] *Հայերէն ձեռագրերի, ԺԷ. դարի յիշատակարաններ (1601-1620 թթ.), հտր. Ա*, աշխ.՝ Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974, էջ 399:

[73] *Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ*, Վաղարշապատ, 1884, էջ 217:

[74] *Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ*, աշխ.՝ Մեսրոպ վրդ. Նշանեան, տպ. Ս. Յակոբեանց վանքի, Երուսաղէմ, 1915, էջ 103:

[75] Նոյն, էջ 358:

րագիս ի յերկիրս յԵգիպտոս, ի դուռն Սբ. Զաւրավարացս Ս. Սարգսի եւ Ս. Գէորգայ եւ մաւր անճառելոյ դշխոհոյ Մարիամու Ս. Աստուածածնի եւ այլ ամենայն սրբոցս»[76]:

Մաշտոցի անուան Մատենադարանի հմր. 10351 ձեռագրի յիշատակարանում ասւում է, որ այն գրուել է 1611 Յուլիսի 28ին Մկրտիչ Երէցի կողմից «*ի մայրաքաղաքն Իմսիր, ընդ հովանեաւ Ս. Սարգսի եւ որդուն նորա Մարտիրոսի, Ս. Աստուածածնին եւ ամենայն սրբոցն*»[77]: «Իմսիր» անուամբ տեղանուն քանի որ յայտնի չէ, այս տեղանուան ծանօթագրութեան մէջ ասւում է. «Գրչութեան վայրը թերեւս պէտք է հասկանալ Իզմիր»[78]:

Կարծում ենք, առաւել ճիշտ է այն կարդալ «ի Մսիր», որովհետեւ Գահիրէն միջնադարում սովորաբար յիշւում է Մսր ձեւով: Նոյն ձեռագրի մէկ այլ յիշատակագրութեան մէջ նոյն գրիչը ասում է. «Այժմ ի յԵգիպտոս եկեալ վեր գրիս դեգերեմք»[79]: Ձեռագրերը գրելիս գրիչը՝ հետեւաբար Եգիպտոսում է գտնուել: Նաեւ գրչութեան տեղն է ըստ էութեան համընկնում նախորդ ձեռագրում յիշուած «ի դուռն» Ս. Գէորգի, Ս. Սարգսի, Տիրամօր եւ Ամէնայն Սրբոց գրուած լինելուն:

Մէկ այլ՝ 1637ին գրուած Տոմարական ժողովածուի յիշատակարանում ասւում է, որ այն գրուել է «ի ժամատեղնէաք ի Մսըռ ի Ս. Սարգիս եկեղեցին»[80]:

Երեք ձեռագրերում յիշուող Ս. Սարգիս եկեղեցին վստահաբար Գահիրէի նոյն եկեղեցին է: Առաջին՝ 1606ին գրուած ձեռագրում «ի դուռն» յիշուող Ս. Սարգիսը, Ս. Գէորգը եւ Ս. Աստուածածինը ոչ թէ երեք առանձին եկեղեցիներ են, այլ, ինչպէս ենթադրում է Ալպոյաճեանը՝ մէկ եկեղեցի՝ երեք խորաններով[81]:

9. **Մաղաքիա աբեղայ Թոխատցի** (1615)

Այս թուականի ներքոյ ենք դնում Եգիպտոսում Մաղաքիա աբեղայի առաջնորդութեան կամ սպասաւորութեան շրջանը, որովհետեւ այս թուականի մասին գրելիս է նրան յիշում Սիմէոն Լեհացին, ով այդ թուականին ուխտաւորաբար գտնւում էր Երուսաղէմում: Նոյն թուականի Օգոստոսի 15ին Լեհացին ուխտաւորների խմբի հետ ծովային ճանապարհով ուղեւորւում է Եգիպտոս՝ ափ ելնելով Աղեքսանդրիայում: Կարաւանով այնու-

---

[76] *Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ հտր. Ա.*, էջ 217:

[77] Նոյն, էջ 419:

[78] Նոյն:

[79] Նոյն, էջ 420:

[80] *Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1621-1640 թթ.), հտր. Բ.*, կազմ.՝ Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 702:

[81] Ալպոյաճեան, էջ 250:

հետեւ ուղեւորւում է Գահիրէ: Ասում է, որ ներս մտնելով Գահիրէի դարպասից, երկու ժամ գնում են, մինչեւ հասնում են հայոց թաղը:

Եգիպտոսի գործող հայկական եկեղեցիների մասին նա տեղեկութիւններ է հաղորդում: Գահիրէում հայերին ծառայող եկեղեցու մասին գրում է. «*Կայր եկեղեցի մի Խպտու. եւ անդ գրված էր մատուռ մի հայոց. եւ վերեւն վերնատուն կանանց. եւ այլ վեր՝ կարգաւորաց տեղիք բնակութեան: Կայր Նիկիսարացի քահանայ մի եւ Թօղաթցի հաբեղայ տէր Մաղաքիա, որ մեծ սիրով ընկալաւ եւ ոչ եթող այլ տեղ գնալ, այլ առ նա մնալ… բայց ելք աստիճանաց խաւարչտին տեղ էր. միշտ կանթեղ վառէր ցորեկն ու գիշերն*»[82]:

Այս տողերից տեղեկանում ենք, որ Գահիրէում հայերին մի մատուռ էր տրուել ղպտական եկեղեցում, որի վերեւում կանանց վերնատունն էր, ուր կանայք կանգնում էին արարողութիւնների ժամանակ: Դրանից վերեւ գտնուող յարկում էլ «կարգաւորաց»՝ հոգեւորականների բնակութեան տեղին էր: Ըստ Լեհացու, Գահիրէում կային երկու հոգեւորական՝ մի քահանայ Նէոկեսարիայից եւ Մաղաքիա աբեղան՝ Թոխաթից: Վերջինս քանի որ անուանապէս է յիշւում եւ հաշուի առնելով նրա կուսակրօն լինելը, ինչպէս նաեւ մեծ կապեր ունենալը, որոնց մասին գրում է Լեհացին, կարելի է ենթադրել, որ Մաղաքիա աբեղան եղել է Եգիպտոսի հայ համայնքի տեսուչը կամ առաջնորդը, իսկ քահանան՝ Գահիրէի եկեղեցու հովիւը: Կարծում ենք, որ այս հանգամանքով է պայմանաւորուած ոչ թէ քահանայի, այլ Մաղաքիա աբեղայի կողմից հայ ուխտաւորներին Եգիպտոսի հայկական տարբեր եկեղեցիները եւ սրբավայրերը տանելը:

Լեհացին գրում է. «*Եւ տէր Մաղաքիան տարաւ զիս եւ զամենայն ուխտաւորս օր մի ի Մաթարիա, որ կէս միլ հեռու էր քաղաքէն. եւ կայր ի ճանապարհին վանք մի Սուրբ Սարգիս. անդ թաղէին զհայ մեռեալք*»[83]: Հետեւաբար Գահիրէի մօտ այս ժամանակ գտնուել է Ս. Սարգիս վանքը, որին կից եղել է հայկական գերեզմանոցը:

Սիմէոն Դպիրը, ինչպէս երեւում է իր հաղորդած տեղեկութիւններից, եղել է Եգիպտոսի նաեւ այլ հայկական եկեղեցիներում եւ սրբավայրերում. «*Եւ այլ օրն եկաք Սուրբն Մինաս, որ ասեն Մինա: Եւ այն մեր եկեղեցին է. զի եւ անդ թաղեն զմեռեալս: Եւ ամէն եկեղեցիքն կան մատուռ կամ սեղան հայոց. զի ասեն եւ մեք գտաք ի պատմագիրս, թէ ԼՌ [30.000] հայի տուն կայր, անտի է մնացել եկեղեցիքն*»[84]:

Լեհացին նկատի ունենալով Ուռհայեցու *Ժամանակագրութիւն*ը եւ մի շարք այլ պատմական վկայութիւններ, գրում է, որ Եգիպտոսում 30,000

---

[82] *Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն*, աշխ.՝ Հ.Ն. Ակինեան, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1936, էջ 216-17:

[83] Նոյն, էջ 230:

[84] Նոյն, էջ 431:

հայ է եղել եւ այն եկեղեցիները, որտեղ հայերը խորան կամ մատուռ ունէին, այդ եկեղեցիները նախկինում հայերին են պատկանել:

Իր այցելութեան ժամանակ Եգիպտոսում գտնուած հայերի թուի համար նա ասում է, որ երկու հարիւր տուն են եւ բոլորն էլ ջալալիներից են փախել-եկել:

Համադրելով այս փաստերը, Ալպոյաճեանը գրում է, որ հայկական գաղութի սակաւանալուց յետոյ հայկական եկեղեցիները անցել են ղպտիներին, իսկ ջալալիների արշաւանքից յետոյ Եգիպտոս եկող հայերին ղպտիները մատուռներ եւ խորաններ են տուել հայերից վերցուած եկեղեցիներում, ինչպէս նաեւ վերադարձրել են Մար Մինայի մատուռը[85]:

Մաղաքիա աբեղայից յետոյ միքանի տասնամեակ Եգիպտոսում հայոց հոգեւոր հովիւ չի յիշւում: Ինչպէս գրում է Ալպոյաճեանը. «*ԺԷ. դարու սկիզբէն մինչեւ 1671 թուականը, Եգիպտոսի գաղութին յատուկ առաջնորդ եւ հովիւ չէ յիշուած: Հաւանօրէն Երուսաղէմի վանքէն ղրկուած վարդապետներ, Գահիրէի Հայոց հոգեւոր կարիքները հոգացած են*»[86]:

10. **Գասպար եպս. Գահիրէի** (1671)

Այս հոգեւորականի մասին յայտնի միակ տեղեկութիւնը իր «Գիր հաւատոյ դաւանութեանն» է՝ թուագրուած 1671 Դեկտեմբերով: Այն պահւում է Փարիզի Ազգային Գրադարանում[87]:

Կարելի է ենթադրել, որ կաթոլիկութիւն ընդունելուց յետոյ կարգազուրկ է արուել եւ հեռացուել առաջնորդութեան պաշտօնից: Ալպոյաճեանը նրա մասին գրում է. «*Հաւանօրէն Երուսաղէմէն ղրկուած է այս եպիսկոպոսը, որուն մասին ուրիշ տեղեկութիւններ չկան*»[88]:

11. **Մարկոս աբեղայ Պոլսեցի** (… -1700, 1701-1710, 1713-1715)

Որոշակի ընդհատումներով պաշտօնավարած այս հոգեւորականի մասին գրում են Մինաս Ամդեցին իր «Օրագրութեան» եւ Գրիգոր Շղթայակիրը իր «Ինքնակենսագրութեան» մէջ[89]: Ամդեցին գրում է, որ նա Մսրից Երուսաղէմ է եկել, ապա ետ է դարձել: Հետեւաբար նա Եգիպտոսում առաջնորդ է եղել 1700ին նախորդող տարիներից մինչեւ 1700 եւ յաջորդ տարուանից նորից վերադարձել իր առաջնորդական վիճակը:

Ամդեցու եւ Շղթայակրի հաղորդած տեղեկութիւնների հիման վրայ Աղաւնունին գրում է. «*Կը թուի թէ՝ անոր պաշտօնը երկարած է մինչեւ Կոլոտի Երուսաղէմի փոխանորդութիւնը*»[90]:

---

[85] Ալպոյաճեան, էջ 251:

[86] Նոյն, էջ 250:

[87] Raymond H. Kévorkian, Armèn Ter-Stépanian, *Manuscrits Arméniens de la Bibliotègue Nationale de France. Catalogue*, Paris, 1998, էջ 506:

[88] Ալպոյաճեան, էջ 251:

[89] Աղաւնունի, էջ 257:

[90] Նոյն, էջ 257:

12. **Երեմիա եպս.** (1700)

Մարկոս աբեղայի 1700ին Երուսաղէմ գնալուց յետոյ այդ թուականին վարել է Եգիպտոսի առաջնորդական պաշտօնը: 1700 կամ 1701ին «Գիր հաւատոյ դաւանութեան» է տուել Հռոմի պապին, որի համար հեռացուել է առաջնորդութեան պաշտօնից[91]:

13. **Կարապետ վարդապետ** (… - 1700)

Երեմիա եպիսկոպոսի նման եգիպտահայոց առաջնորդ է յիշւում 1700ին: Այդ թուականին մի Աւետարան է նուիրել Գահիրէի Ս. Մինաս եկեղեցուն հետեւեալ արձանագրութեամբ. «Յիշատակ է Առաջնորդ Կարապետ վարդապետէն»[92]:

Մարկոս աբեղայի պաշտօնավարման վերջին տարուց՝ 1715ից յետոյ մինչեւ 1731 Եգիպտոսում սպասաւորած կամ առաջնորդ եղած որեւէ հոգեւորականի մասին յիշատակութիւն չկայ: Ինչպէս գրում է Ալպոյաճեանը. «*Թերեւս ուրիշներ կան, սակայն չեն յիշատակուած, մինչեւ 1731, որմէ եւեթ կը հանդիպինք յիշատակուած եկեղեցականներու, որոնք յայտնի չէ թէ առաջնորդներ էին, թէ պարզ ժամարարներ*»[93]:

14. **Գրիգոր վրդ.** (… -1731)

Աղաւնունին այս հոգեւորականի համար առանց աղբիւր նշելու, գրում է. «Կը պաշտօնավարէր Գահիրէ, 1731ին»[94]: Չենք կարող ասել որպէս քահանայ գործել է եկեղեցիներից մէկու՞մ, թէ՞ նաեւ առաջնորդական պաշտօն է վարել:

15. **Յովհաննէս վրդ. Եգիպտոսի** (1731-39)

Ինչպէս Գրիգոր վարդապետի, այնպէս եւ այս դէպքում միակ աղբիւրը Աղաւնունին է, ով դարձեալ որեւէ աղբիւր չվկայակոչելով, գրում է. «Կը պաշտօնավարէ Եգիպտոսի եկեղեցիին մէջ»[95]: Աղաւնունին նրա պաշտօնավարման համար նշում է բաւականին երկար ժամանակամիջոց՝ 1731-95: Վերջին թուականը ամէնայն հաւանականութեամբ կա՛մ վախճանման թուականն է եւ կա՛մ էլ վրիպակ է, որովհետեւ, ինչպէս կը տեսնենք, 1740ից սկսած երկու եկեղեցականներ են յիշւում նշուած ժամանակահատուածում:

1740ին քանի որ յիշւում է Յովակիմ եպս. Քանաքեռցին, ուստի Ալպոյաճեանը որպէս պաշտօնավարման աւարտի թուական է նշում 1739ը:

Աղաւնունին Գրիգոր վարդապետի համար քանի որ գրում էր «կը պաշտօնավարէր Գահիրէ», իսկ Յովհաննէս վարդապետի համար՝ «կը պաշտօնավարէ Եգիպտոսի եկեղեցիին մէջ», ուստի առաջինի համար Ալպո-

---

[91] Ալպոյաճեան, էջ 252:
[92] Գարտաշեան, էջ 25:
[93] Ալպոյաճեան, էջ 253:
[94] Աղաւնունի, էջ 96:
[95] Նոյն, էջ 378:

յաճեանը եթէ ենթադրում է, թէ հնարաւոր է առաջնորդ է եղել, ապա երկրորդի համար գրում է՝ «հաւանօրէն ոչ իբր առաջնորդ»[96]:

16. **Յովակիմ եպս. Քանաքեռցի** (1740-57)

Ինչպէս նշում է Աղաւնունին, Յովհաննէս Կոլոտ պատրիարքի վերջին աշակերտներից էր, ով պատրիարքութեան վերջին շրջանում Եգիպտոս որպէս առաջնորդ է ուղարկւում: Այնուհետեւ 1762ին ձեռնադրւում է եպիսկոպոս: 1775-93՝ մինչեւ վախճանուելը, եղել է Երուսաղէմի պատրիարք: Նրա տապանաքարի վրայ գրուած է.-

Յովակիմ պատրիարգ յորջորջեալ
Եւ Ծովածին կոչեցեալ[97]:

Ծովածին է անուանւում, որովհետեւ, ինչպէս արդէն յիշուած է Յովհաննէս եպիսկոպոսի (1599), այնպէս եւ իր համար ասւում է, թէ երբ առաջին անգամ Երուսաղէմ է գալիս, նաւով Յոպպէ հասնելիս ծովն է ընկնում՝ կրծքին պահած լինելով Աւետարան, շնորհիւ որի ողջ է մնում:

Նրա առաջնորդութեան շրջանում է, որ ղպտիները Պէյն ԷլՍուրէյնի մէջ իրենց եկեղեցու վերնայարկը 1749ին տալիս են հայերին, փոխարէնը Ս. Յարութեան տաճարում, Ս. Գերեզմանի մօտ Ս. Պատարագի սեղան ստանալով:

Նոյն թուականին եկեղեցին վերակառուցւում է եգիպտահայ բարերար Վահան աղայի միջոցներով[98]:

Ալպոյաճեանը ենթադրում է, որ սա նոյն այն եկեղեցին է, որը ղպտիների Ս. Աստուածածին եկեղեցու վերնայարկում էր գտնւում, որի մասին, ինչպէս տեսանք, յիշատակում է Լեհացին իր *Ուղեգրութեան* մէջ: Յաջորդող շրջանում այն, ըստ երեւոյթին, վերցուել էր հայերից եւ նորից վերադարձուել 1749ին՝ Ս. Յարութեան տաճարում ստացած Ս. Սեղանի դիմաց:

Հայերը 1839ին այս եկեղեցուց թէեւ ոչ-շատ հեռու կառուցում են Ս. Աստուածածին եկեղեցին, սակայն ղպտիների եկեղեցու վերնայարկում պաշտամունքը շարունակում են կատարել մինչեւ 1886:

17. **Կարապետ վրդ.** (1757)

Այս վարդապետը ձեռնադրուել էր Երուսաղէմի Թէոդորոս պատրիարքից եւ «յղեալ ի սմանէ պետ Եգիպտոսի»[99]: Հետեւաբար առաջնորդական պաշտօնով է ուղարկուել Եգիպտոս:

18. **Յարութիւն վրդ. Խրզնեցի** (1773-1808)

Կարելի է ենթադրել, որ յաջորդել է Կարապետ վարդապետին: Իր առաջնորդութեան շրջանում Ս. Էջմիածնի նուիրակ Մարտիրոս եպիսկոպո-

---

[96] Ալպոյաճեան, էջ 253:

[97] Աղաւնունի, էջ 347:

[98] Այս արձանագրութեան նմանահանութիւնը տե՛ս՝ Գարտաշեան, էջ 13:

[99] Գարտաշեան, էջ 254:

սը ուխտի գալով Երուսաղէմ, այցելում է նաեւ Թեբայիդի վանքերը վերին Եգիպտոսում[100]:

Ալպոյաճեանը Յարութիւն վարդապետի մասին գրում է. «*Յարութիւն վրդ. տեսուչ էր, նման Բեթլեհէմի, Եաֆայի եւ այլ տեսուչներուն, եւ կը մատակարարէր Գահիրէի փոքրիկ գաղութը եւ Երուսաղէմի վանքին անունով գնուած կալուածները*»[101]:

Յարութիւն վարդապետի առաջնորդութեան շրջանում նրա հետ Եգիպտոսում է գտնուել Յովնան անունով մի վարդապետ[102], ով հաւանաբար եղել է առաջնորդի օգնականը:

19. **Կարապետ վրդ. Կայծակ** (1808-22)

Աստուածատուր եպս. Յովհաննէսեանը, գրելով Սիրիայում եւ Եգիպտոսում քրիստոնեաների դեմ ծաւալուած հալածանքների մասին, վկայակոչում է Եգիպտոսի առաջնորդ Կարապետ վարդապետի նամակները[103]:

Ալպոյաճեանը նրան նոյնացնում է Կայծակ մականուանեալ Կարապետ վարդապետի հետ, ում Մար Մինայում՝ Ս. Մինասում գտնուող հայկական գերեզմանատան տապանաքարը ունի հետեւեալ արձանագրութիւնը.

ՏԱՊԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ
Ու դժնդակ մահու սրաբերան
Չխնայելով զիս հնձեցիր տարաժամ
ԶԿարապետ հայազնէիցս սեփական
Զդեռափթիթ պետս վարդիս Եգիպտական
Կայծակն. 1822[104]:

Աղաւնունու հաղորդած տեղեկութիւնները, սակայն, չեն համապատասխանում տապանաքարի արձանագրութեան հետ, քանի որ, ըստ նրա, այս միաբանը Եգիպտոսում առաջնորդ է կարգուել 1822ին: Ինչպէս Աղաւնունին է գրում. «*Կարապետ վրդ. Կայծակն-Կեսարացի-Միաբան ձեռնադրուած 1802ին, վանեցի Թէոդրոս պատրիարքէն, 1822ին կը սկսի պաշտօնավարել Գահիրէ եւ շրջակաները, 1854ին կը վախճանի*»[105]:

Աբէլ եպս. Մխիթարեանը, ով Ս. Էջմիածնից Եգիպտոս է գնացել 1876ին, որպէս անդամ թեմի հետ կապուած քննիչ յանձնաժողովի, այնտեղ պահուող կոնդակների եւ տարեցների բանաւոր վկայութիւնների հիման վրայ առաջնորդների անորոշ մի ցանկ է բերում, որի վերջին երեք անունները համապատասխանում են տեղի առաջնորդների իրարայա-

---

[100] Աղաւնունի, էջ 265:
[101] Ալպոյաճեան, էջ 255:
[102] Գարտաշեան, էջ 17:
[103] Յովհաննէսեան, *հպր. Բ.*, էջ 175:
[104] Ալպոյաճեան, էջ 256:
[105] Աղաւնունի, էջ 175:

ջորդ հերթականութեանը. «… Կայծակ Կարապետ վարդապետ Կարնեցի, Սահակ վարդապետ Ռշտունի եւ Գրիգոր եպիսկոպոս»[106]:

20. Սահակ վրդ. (1821/2-…)

Այս թուականի մասին, երբ Սահակ վարդապետը եղել է Եգիպտոսի հայոց եկեղեցական առաջնորդ, տեղեկանում ենք Երուսաղէմի հայոց Գաբրիէլ պատրիարքի եգիպտահայութեանը 1821 Նոյեմբերի 18ին ուղղած կոնդակից: Պատրիարքը այն ուղարկում է Յակոբ վարդապետի միջոցով եւ յորդորում «*հայրական խրատիւք հնազանդիլ Առաջնորդի իւրեանց Սահակ վարդապետի իբրեւ իւրոյ փոխանորդի, եւ յանձն առնել նմա զհասոյթս եկեղեցւոյ եւ զայլ իրաւունս առաջնորդի*»[107]:

Աղաւնունին նրա մասին միայն գրում է. «Սահակ վրդ. Եգիպտոսի, միաբան 1822ին»[108]:

Եգիպտոսի՝ որպէս Երուսաղէմի համար առանձին եկեղեցական վիճակ լինելու, կարեւոր վաւերագիր է ԺԸ.-ԺԹ. դարերում գրուած «Օրինակք պաշտօնագրոց» անուանուող ժողովածուն, որն այժմ Սրբոց Յակոբեանց ձեռագրատան հմր. 3221 ձեռագիրն է[109]:

Նման ժողովածուները ստեղծւում էին կաթողիկոսական եւ պատրիարքական կենտրոններում, որոնց անուանումն իսկ յուշում է, որ դրանցում ի մի էին հաւաքւում տարբեր տեղեր ուղարկուող նամակների եւ կոնդակների կանոնացուած ձեւերը, որոնցում հիմնականում փոխւում էին ուղարկողի եւ ստացողի անունները ըստ գրութեան ժամանակի: Նման կանոնական ձեւեր մշակւում էին այն վայրերի ու կենտրոնների համար, որոնց հետ տուեալ աթոռը առաւել սերտ եւ յաճախադէպ յարաբերութիւններ ունէր:

Ձեռագիրը սկսել է գրուել 1769ից եւ երեք առանձին օրինակաձեւ ունի Եգիպտոսի հայ եկեղեցական կառոյցի համար: Առաջինը ձեռագրի ԼԳ (33րդ) համարը եղող օրինակն է, որում ասւում է. «*Մսրայ քաղաքի Առաջնորդի եւ ժողովրդոց օրհնութեան Կոնդակի շարագրութիւնն հասարակացն այս է*»: Այս ձեւով գրուած կոնդակը Երուսաղէմի նուիրակների միջոցով ուղարկուել է Եգիպտոս, որպէսզի նուիրակը տեղի ժողովրդից հաւաքի եկեղեցական տուրքը: Այնուհետեւ բերւում է համանման յաջորդ ԼԴ (34րդ) գրութիւնը, որի համար ասւում է. «Զայս եւս Մսրայ կոնդակի օրինակն է»:

Թեմական կառոյցի առումով առաւել կարեւոր է երրորդ՝ «Ի Մըսըր Քաղաք Առաջնորդ գնալոյ Կոնդակի օրինակն այս է» գրութեան ձեւ ունե-

---

[106] Աբէլ արքեպիսկոպոս Մխիթարեանց, «Ճանապարհորդութիւն յԵգիպտոս», *Արարատ*, Թ:1876, Վաղարշապատ, էջ 327:

[107] Նոյն, էջ 371:

[108] Նոյն, էջ 444:

[109] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. Թ*, կազմ.՝ Նորայր արք. Պողարեան, Երուսաղէմ, 1979, էջ 521-23:

ցող օրինակը: Այն ցոյց է տալիս, որ ԺԸ. դարի վերջին Երուսաղէմը պատրիարքական փոխանորդի կարգավիճակով Եգիպտոս է ուղարկել առաջնորդ:

21. Գրիգոր արք. Եգիպտացի (1822-1825)

Աղաւնունին նրա մասին դարձեալ միայն գրում է. «Միաբան, 1821ին առ Եգիպտոսի»[110]:

Գրիգոր արքեպիսկոպոսին յաջորդած Կիրակոս արքեպիսկոպոսը նրան «ծերունազարդ» բնորոշմամբ է պատւում[111]: Ալպոյաճեանը ասում է, որ այս հոգեւորականի հետ կապուած այլ տեղեկութիւններ չունենք[112]:

Գարտաշեանը Գրիգոր արք. Եգիպտացու Եգիպտոսում պաշտօնավարման շրջան է նշում 1817-25ը «Իբր տեսուչ կը պաշտօնավարէր Երուսաղէմի Աթոռին կողմէ Գահիրէի մէջ», եւ «շատ ծեր էր եւ անկարող»[113]:

22. Կիրակոս եպս. Մնացականեան Երուսաղէմացի (1825-34)

Ծնուել է 1783ին: Վարդապետ է ձեռնադրուել 1807ին: 1810ին դարձել է Երուսաղէմի հայոց պատրիարքութեան միաբան: 1815ին ձեռնադրուել է եպիսկոպոս: 1825ին որպէս առաջնորդ ուղարկւում է Եգիպտոս, ուր պաշտօնավարում է մինչեւ 1834[114]:

Երուսաղէմի Պօղոս Ադրիանուպոլսեցի պատրիարքի հրահանգով՝ «կամեցողութեամբ ազգապետաց», այսինքն գաղութի ազգային երեւելիների ցանկութեամբ, ընտրում է առաջնորդին կից խորհուրդ՝ կազմուած երեք հոգուց[115]:

Արդիւնաշատ գործունէութիւն է վարել Եգիպտոսում: 1827ին կառուցել է Պէյն ԷլՍուրէյնի Ս. Աստուածածին եկեղեցու արեւելեան կողմում գտնուող ջրամբարը, որը մինչեւ 1895 տարեկան 8000 ֆրանկ եկամուտ էր ապահովում գաղութին: Նոյն տարածքում 1828ին կառուցում է Գահիրէի առաջին հայկական դպրոցը, հիւանդանոցը եւ հիւրատունը Եղիազար ամիրա Ակնցու կտակով[116]:

1835ին Երուսաղէմից Եգիպտոս է գալիս Զաքարիա եպիսկոպոսը, մի շարք շինութիւնների կառուցման համար իրաւունք ձեռք բերելու: Կիրակոս եպիսկոպոսը աջակցում է նրան[117]:

Կանոնաւորելով առաջնորդարանի գործունէութիւնը, կազմել է սաղէմապատկան կալուածքների եկամուտների մատեանները[118]: Ընդօրինա-

---

[110] Աղաւնունի, էջ 72:
[111] Ալպոյաճեան, էջ 256:
[112] Նոյն:
[113] Գարտաշեան, էջ 176:
[114] Աղաւնունի, էջ 206:
[115] Յովհաննէսեանց, *հտր. Բ.*, էջ 404:
[116] Գարտաշեան, էջ 178:
[117] Ալպոյաճեան, էջ 258:
[118] Յովհաննէսեանց, *հտր. Բ.*, էջ 404:

կել է նաեւ Ս. Սարգիս եկեղեցու եկեղեցական անօթների արձանագրութիւնները, կազմելով եկեղեցական սպասքի տոմար[119]:

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ձեռագրատանը նրանից պահպանուել է «Գիրք դիցաբանութեան» ֆրանսերէնից թարգմանուած գործի նրա կատարած ընդօրինակութիւնը: Ինչպէս թարգմանութեան յիշատակարանում է ասւում. «*Օրինակեալ ձեռամբ Կիրակոս պատրիարքի յառաջնորդութեան իւրում յԵգիպտոս յամի 1828*»[120]:

Կիրակոս եպիսկոպոսի կողմից առաջնորդարանում հաստատած բարեկարգութիւնները նկատի ունենալով, Ալպոյաճեանը գրում է. «*Իրմով կը սկսի Եգիպտոսի Առաջնորդարանին մէջ կանոնաւոր վարչութիւն եւ տնավարի գործունէութիւններուն վերջ կը տրուի*»[121]: Ալպոյաճեանը նաեւ գրում է, որ մինչեւ Կիրակոս եպիսկոպոսի առաջնորդութիւնը, Եգիպտոսի հայերը ունէին «*տեսուչ վարդապետ մը Գահիրէ եւ մէկ երկու վարդապետներ հոս եւ Աղեքսանդրիա, որ քահանայի դեր կը կատարէին, զբաղելով ծիսակատարութեամբ*»[122]:

Կիրակոս եպիսկոպոսը առաջնորդական փոխանորդի հանգամանքով իրեն օգնական է կարգում Պօղոս վրդ. Արեւելցուն[123]: Գարտաշեանը սակայն գրում է, որ Պօղոս վարդապետը, ով Երուսաղէմի միաբան էր, 1814-25՝ եղել է «տեսուչ կամ առաջնորդ Եգիպտոսի հայոց» եւ վախճանուել է Երուսաղէմում 1830ին[124]: Ալպոյաճեանը սակայն վկայակոչելով Աղաւնունուն, գրում է, որ նա 1814-29՝ եղել է «*փոխանորդ կամ վէքիլ, որ 1829ին դարձած է Երուսաղէմ եւ հոն վախճանած է 60 տարեկանին*»[125]:

Կիրակոս եպիսկոպոսը 1847ին ընտրւում է Երուսաղէմի պատրիարք եւ պաշտօնավարում մինչեւ իր վախճանուելը՝ 1850: Եգիպտոսում նրա պաշտօնավարութիւնը բնորոշում է այսպէս. «*Վարեաց զայս պաշտօն ամս իբր 10, ամէնայն բարեկարգութեամբ, ջանիւք եւ խաղաղասէր մտօք, յաջողեցաւ յաւելուլ զթիւ կալուածոց Ս. Աթոռոյն եւ եկեղեցւոյ տեղւոյն*»[126]:

ԵՐԿՐՈՐԴ՝ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆԸ ԵՆԹԱԿԱՅ ՇՐՋԱՆ. 1830-1920ԱԿԱՆՆԵՐ

Եգիպտոսի հայոց թեմի պատմութեան 1830ականներն ընդգրկող շրջանի մասին գրելիս, ինչպէս կը տեսնենք, այն միտքն է ընդգծւում, որ

---

[119] Գարտաշեան, էջ 178:

[120] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր.* Գ, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1968, էջ 511:

[121] Ալպոյաճեան, էջ 256:

[122] Նոյն, էջ 258:

[123] Նոյն, էջ 256. նաեւ՝ Յովհաննէսեանց, *հտր. Բ.*, էջ 401:

[124] Գարտաշեան, էջ 176:

[125] Ալպոյաճեան, էջ 258. նաեւ՝ Աղաւնունի, էջ 426:

[126] Յովհաննէսեանց, *հտր. Բ.*, էջ 504:

Կիրակոս եպս. Մնացականեանին յաջորդած Գաբրիէլ վարդապետը իր նախորդին խոստանալով, որ թեմական ենթակայութեան հարցում հաւատարիմ կը մնայ Երուսաղէմի հայոց պատրիարքութեանը, իր խոստումը պահում է ընդամէնը երկու տարի:

Գաբրիէլ վարդապետին որոշակի երդմնազանցութիւն է վերագրւում ոչ միայն իր խոստումը չկատարելու, այլեւ այն պատճառով, որ նա լինելով Երուսաղէմի միաբան, ինքն է թեմը հանում Երուսաղէմի պատրիարքութեան ենթակայութիւնից եւ դնում Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը ենթակայ թեմերի շարքում:

Բերուող անձնաւորուած փաստարկները եւ անգամ Եգիպտոսի սաղէմական կալուածքների հարցը թէեւ որոշակի դեր խաղացել են Երուսաղէմից Կ. Պոլսի ենթակայութեանը անցնելիս, գլխաւորը, սակայն ինչպէս միւս թեմերի դէպքում եւ պատմական տարբեր ժամանակաշրջաններում եղել եւ մնացել է թեմի ենթակայութեան քաղաքական համապատասխանելիութեան հարցը:

Սսում գտնուող հայոց կաթողիկոսութիւնից Եգիպտոսի հայոց թեմի աստիճանական հեռացումը եւ ապա Երուսաղէմի հայոց պատրիարքութեանը ենթարկուելը ուղիղ համեմատական էր նախ Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան թուլացմանը, ապա Եգիպտոսի իշխանութիւնների կողմից Պաղեստինի, այդ թւում եւ Երուսաղէմի գրաւմանը:

Եգիպտոսի օսմանեան տիրապետութեան անկումից յետոյ որքան մեծանում է ազդեցութիւնը գրաւուած տարածքների վրայ, այնքան ուժեղանում է Կ. Պոլսի պատրիարքութեան ազդեցութիւնը այդ տարածքների հայկական համայնքների վրայ:

Իրավիճակը մի պահ փոխւում է 1830ականներին: Ինչպէս միջնադարում ռազմաքաղաքական վերելքի ժամանակ փորձ էր արւում Գահիրէի թեմական կենտրոնը դարձնել Եգիպտոսի տարածքն ընդգրկող հայկական եկեղեցական կենտրոն, այնպէս եւ 1830ականներին կրկնւում է նոյն իրավիճակը: Յովհաննէս Թոփուզեանը գրում է. «*1830-ական թուականների կէսերից, երբ եգիպտական բանակը նուաճել էր Պաղեստինը եւ Սիրիան, եգիպտահայ մեծատունները լրջօրէն ձգտում էին Կահիրէն դարձնել գրաւուած երկրների հայութեան հոգեւոր եւ վարչական կենտրոն: Եւ վերստին հրատապ բնոյթ ընդունեց Երուսաղէմից անկախ թեմ ստեղծելու խնդիրը*»[127]:

Կարճատեւ այս շրջանում փորձ էր արւում միաժամանակ անկախ դիրք ունենալ թէ՛ Երուսաղէմից եւ թէ՛ Կ. Պոլսից: Եգիպտոսի՝ Օսմանեան Կայսրութեանը վերաենթարկուելուց յետոյ, Եգիպտոսի հայոց թեմը արդէն յստակօրէն դիմում է Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը: Ինչպէս

[127] Յովհաննէս Թոփուզեան, *Եգիպտոսի հայկական գաղութի պատմութիւն (1805-1952)*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 72:

դարձեալ գրում է Թոփուզեանը. «*Եգիպտոս-թուրքական զինախմբման ելքը հողմացրիւ արեց Կահիրէի գաղութահայ կենտրոնի վերածելու յոյսերը: Եգիպտոսում սուլթանական նախկին իրաւունքների վերականգնումից յետոյ՝ 1851թ. եգիպտահայ թեմը դրուեց Կ. Պոլսի պատրիարքարանի իրաւասութեան ներքոյ*»[128]:

Հետեւաբար, արտաքուստ անձնաւորուած եւ կալուածային երանգ ունեցող պայքարը իրականում կայսրութեան տարածքի հայութեան եկեղեցական կառոյցի ամբողջական վարչական ենթակայութեան հարցն էր Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը: Այն իր կազմակերպական եւ իրաւական ձեւին հասաւ ազգային սահմանադրութեն 1861ին ընդունումից յետոյ:

Այն գործօնները, որոնք պայամանաւորել էին Եգիպտոսի հայոց թեմի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան ենթակայութեան անցնելը, առաջին աշխարհամարտի աշխարհացունց աւերածութիւններից եւ ազգային ողբերգութիւնից յետոյ պայմանավորելու էին անցումը Ս. Էջմիածնի ենթակայութեանը:

Գաբրիէլ եպս. Մարաշցի (1835-67 վխճ.)

Ծնուել է 1802ին: Աբեղայ է ձեռնադրուել Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքում 1822ին: 1827ին Աղեքսանդրիա է ուղարկւում քահանայագործելու[129]:

Աստուածատուր եպիսկոպոսը գրում է, որ երբ Կիրակոս եպիսկոպոսը 1834ին վերադառնում է Երուսաղէմ, իր տեղը առաջնորդական փոխանորդ է կարգում Գաբրիէլ վարդապետին՝ «*տալով նմա զիշխանութիւն Ծայրագոյն վարդապետութեան՝ պատուիրելով զգուշութեամբ հովուել զժողովուրդ Տեառն, անխախտ պահել զսահմանեալ կարգադրութիւնն, արթնութեամբ հսկել կալուածոց եւ պաշտպան կալ իրաւանց Ս. Աթոռոյն*»[130]: Նման մեկնաբանութեամբ Կիրակոս եպիսկոպոսը պատուիրել է, որ նա հաւատարմօրէն պահի ենթակայութիւնը Ս. Երուսաղէմին եւ ուղարկի կալուածքներից գոյացած հասոյթները:

Գարտաշեանը գրում է, որ ինչպէս ցոյց են տալիս հաշուեմատեանները, առաջին երկու տարիներին կատարել է իր ստանձնած յանձնառութիւնը եւ ուղարկել սաղէմապատկան կալուածքների հասոյթները[131]:

1837ին ձեռնարկում է Պէյն ԷլՍուրէյն թաղամասում 1828ին կառուցուած դպրոցին, հիւանդանոցին եւ հիւրատանը կից Ս. Աստուածածին եկեղեցու շինութիւնը, որն աւարտւում է 1839ին: Յովհաննէսեանի բնորոշմամբ այդ թաղամասը, ուր կառուցուեց եկեղեցին «այն ատեն մայրաքա-

---

[128] Նոյն տեղում, էջ 73:

[129] Ալպոյաճեան, էջ 259:

[130] Յովհաննէսեանց, *հտր. Բ*, էջ 504:

[131] Գարտաշեան, էջ 179:

ղաքին ամէնալաւ թաղը կը համարուէր»[132]: Եկեղեցու կառուցման արձանագրութեան մէջ ասւում է, որ Ս. Աստուածածինը կառուցուել է «արդեամբ լուսաւորչադաւան առ հասարակ Ազգին Հայոց, որ յԵգիպտոս»[133]:

Գաբրիէլ վարդապետը եկեղեցու կառուցման վրայ է ծախսում սաղէմապատկան կալուածքների հասոյթները Ալպոյաճեանի բնորոշմամբ այն «*տրամաբանութեամբ, որ Եգիպտոսի վիճակին համար եկեղեցի մը շինելու պարտաւոր էր Երուսաղէմ, քանի որ իր թեմն էր*»[134]:

Ցանկանալով կառուցուած եկեղեցու օծումը ինքը կատարել, դիմում է գաղութի ազգայիններին, որպէսզի օժանդակեն Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնից իր համար եպիսկոպոսական ձեռնադրութեան վկայական ստանալուն Սսում եպիսկոպոս ձեռնադրուելու համար: Եգիպտահայ գաղութի ճանաչուած ազգայիններ եւ բարերարներ Պօղոս Պէյ Եուսուֆը, Ալիքսան աղա Միսաքեանը, Միքայէլ աղա Խաչերեանը գրութեամբ դիմում են Երուսաղէմի հայոց Պօղոս պատրիարքին, որպէսզի Գաբրիէլ վարդապետին եպիսկոպոս ձեռնադրելու վկայագիր տան, որով նա Սսում եպիսկոպոս ձեռնադրուէր: Երուսաղէմի հայոց պատրիարքարանում թէեւ դժգոհ էին Գաբրիէլ վարդապետի ընթացքից, որով չէր ենթարկւում պատրիարքութեանը, սակայն չցանկանալով մերժել գաղութի նշանաւոր դէմքերին, տալիս են անհրաժեշտ վկայագիրը[135]: Ինչպէս գրում է Աստուածատուր եպիսկոպոսը. «*Ի վերայ այսր նամակաց զիջաւ Պօղոս եպիսկոպոս ի թախանձանս նոցա, մանաւանդ ակնածէր ի Պօղոս Պէյէ, գրեաց առ նոսա պատասխանի նամակաց եւ ընդ նմին առաքեաց զվկայականն Գաբրիէլի, եւ նա ել ի ճանապարհ եւ գնաց ի Սիս եւ ձեռնադրեցաւ յաստիճան եպիսկոպոսութեան ի Տէր Միքայէլ կաթուղիկոսէ, ի ցեղէ Աջապահից (15 Յունիս ի 1839) եւ դարձաւ ի վիճակն իւր յԵգիպտոս*»[136]: Սսից վերադառնալուց յետոյ 1839 Դեկտեմբերի 17ին մեծ հանդիսաւորութեամբ օծում է եկեղեցին՝ կոչելով Ս. Աստուածածին[137]:

1842ին Գահիրէում հայոց գերեզմանատանը եւս մէկ եկեղեցու կառուցմանն է ձեռնարկում պատմական հին Ս. Մինաս, վերոյիշեալ Մար Մինա(ս) եկեղեցու մօտ՝ գործակցութեամբ Պօղոս վրդ. Պոլսեցու: Եկեղեցու շինութիւնը աւարտւում է 1743ին եւ օծումը կատարւում է նոյն տարուայ Փետրուարի 14ին:

---

[132] Գ. Յովհաննէսեան, *Եգիպտոսի պատմութիւնը սկիզբէն մինչեւ մեր օրերը*, տպ. Յակոբ Փափազեան, Գահիրէ, 1937, էջ 221:

[133] Ալպոյաճեան, էջ 260:

[134] Նոյն, էջ 259:

[135] Գարտաշեան, էջ 179:

[136] Յովհաննէսեանց, *հտր. Բ.*, էջ 507:

[137] Նոյն:

Իր առաջնորդութեան շրջանում է կառուցւում նաեւ Պէյն ԷլՍուրէյնի ժամանակի առաջնորդարանը՝ ճարտարապետ Գէորգ Ռափայէլեանի նուիրատուութեամբ:

Եգիպտոսի հայոց առաջնորդութիւն հոգեւորականներ Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնից ուղարկելուն վերջ տալու նպատակով Ս. Աստուածածին եկեղեցու համար 1851 Ապրիլի 28ին ձեռնադրում է առաջին քահանան՝ Տ. Կարապետ քհյ. Յովսէփեանը[138]:

Գաբրիէլ եպիսկոպոսը Եգիպտոսի հայոց առաջնորդ հաստատուելու եւ առանձին թեմ դառնալու համար դիմում է Կ. Պոլսի Յակոբոս պատրիարքին եւ նրա միջոցով սուլթան Մահմուտից ստանում իր առաջնորդական պաշտօնի վաւերացման հրամանագիրը՝ *Պերաթը*, որով Եգիպտոսի թեմը անկախ էր ճանաչւում Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնից: Դարձեալ հնուց եկող աւանդոյթով հայոց առաջնորդին Աղեքսանդրիայի պատրիարքներին համահաւասար դիտելու համար Եգիպտոսի հայոց առաջնորդը անուանւում էր «պաթրիք», իսկ առաջնորդարանը՝ «պաթրիքխանէ»[139]:

Գաբրիէլ եպիսկոպոսը այնքան հեղինակութիւն ունէր, որ երբ ղպտի պատրիարքութիւնում 1853ին գժտութիւն է ծագում, որպէս հաշտարար եւ միջնորդ, Եգիպտոսի իշխանութիւնները նրան են ուղարկում եւ ինքը լաւագոյնս կատարում է իրեն վերապահուած դերը:

Նրա՝ որպէս անկախ առաջնորդի գործունէութիւնը թէեւ շարժում է Երուսաղէմի հայոց պատրիարքութեան դժգոհութիւնը, սակայն պատրիարքարանը չի կարողանում որեւէ հակազդեցութիւն ցուցաբերել: Այսպէս, Զաքարիա պատրիարքը նրա փոխարէն 1844ին Եգիպտոսի առաջնորդ է նշանակում Դաւիթ վրդ. Կարնեցուն, ով չի ընդունւում հայ համայնքի կողմից եւ ետ է ուղարկւում, որից յետոյ Ալպոյաճեանի բնորոշմամբ «Երուսաղէմ կը գոհանայ միայն իր կալուածներուն համար տեսուչներ ղրկելով»[140]:

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ձեռագրատան հմր. 360 ձեռագրում պահպանուել է նրա յիշատակութիւնը Երուսաղէմի կողմից Եգիպտոս ուղարկուելու մասին: Նա գրում է, որ ըստ հրամանի «Սրբոյ Գահին հարկեցայ գնալ յԱղէքսանդրիա», եւ որ «*եթէ Տէր կամեսցի յԵգիպտոս վասն փնօրհնութեանց արդեանց վախճից Սբ. Աթոռոյն -1844, ի Յունիս, Ժ. Դաւիթ վրդպ.*»[141]:

1839ին յիշւում է Թէոդորոս վրդ. Բաղիշեցին, ով Աղեքսանդրիայի սաղէմապատկան կալուածքների տեսուչն էր[142]:

---

[138] Ալպոյաճեան, էջ 260:

[139] Գարտաշեան, էջ 180. նաեւ՝ Յովհաննէսեանց, *հտր. Բ*, էջ 507:

[140] Ալպոյաճեան, էջ 261:

[141] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. Բ.*, էջ 261:

[142] Աղաւնունի, էջ 155:

Դիմելով Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը, Կ. Պոլսի եւ Երուսաղէմի հայոց պատրիարքարաններից համատեղ քննիչ յանձնախմբեր են ուղարկում, որը եւս որեւէ արդիւնք չի տալիս:

Գաբրիէլ եպիսկոպոսին որպէս Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գարտաշեանը այսպէս է բնորոշում. «*Ան եղած է շինարար Առաջնորդ մը, որ ապահոված է բարոյական եւ տնտեսական բոլոր այն ազդակները, որ գաղութը իր ներկայ ինքնաբաւ, հարուստ եւ նախանձելի դիրքին հասնելու ճամբան հարթած են, բնականաբար գաղութին մեծամեծներուն եւ ժողովուրդին աջակցութեամբ*»[143]: Նման բարձր գնահատական է տալիս եւ Ալպոյաճեանը. «Գաբրիէլ եպս. Եգիպտոսի հայ գաղութին ամէնէն արդիւնաւոր առաջնորդն է»[144]:

Նրա առաջնորդութեան շրջանում, ինչպէս գրում է Յակոբ վրդ. Տիգրանակերտցին, առաջնորդարանում էին նաեւ «Վանցի Գրիգոր եւ Պոլսեցի Պօղոս վարդապետք»[145]: Կարելի է ենթադրել, որ Պօղոս վարդապետը Կիրակոս եպիսկոպոսին օգնական եղող նոյն հոգեւորականն է:

Ալպոյաճեանը բարձր է գնահատում Գաբրիէլ եպիսկոպոսի աւանդը համայնքային կազմակերպութիւնների ստեղծման եւ առաջնորդարանի հետ գործակցութեան համապատասխան կառուցուածքի մէջ դնելու գործում. «*Գաբրիէլ եպս. Եգիպտոսի Առաջնորդական վիճակին բոլոր պէտքերը լրացուց, եւ զայն օժտեց ազգային բոլոր պիտանի հաստատութիւններով*»[146]:

Եգիպտոսի հայոց թեմի մասին գրողները նշում են, որ Գաբրիէլ եպիսկոպոսը իր յաջողութիւնների համար մեծապէս պարտական էր նաեւ Եգիպտոսի ժամանակի կառավարիչ՝ խտիւ Սայիտ փաշային: Ինչպէս գրում է Յովհաննէսեանը, Եգիպտոսի կառավարիչը «մասնաւոր համակրանք ունէր Գաբրիէլ եպիսկոպոսի նկատմամբ»[147]:

Գարտաշեանի բնորոշմամբ, այս հանգամանքը նպաստել է համայնքային մի շարք արտօնութիւնների ձեռքբերմանը. «*Ան եգիպտահայութեան համար ստացած է պետութենէն շատ մը իրաւասութիւններ եւ առանձնաշնորհումներ, ինչ որ այլ համայնքներ չունէին*»[148]: Ալպոյաճեանն էլ գրում է. «*Խտիւ Սայիտ փաշա իրեն նկատմամբ մեծ բարեացկամութիւն ցոյց տուած է: Հողեր նուիրած է (Էքֆաս եւ Հեսաս), հայ աղքատերուն եւ Առաջնորդարանին ծախուց համար*»[149]:

---

[143] Գարտաշեան, էջ 181:

[144] Ալպոյաճեան, էջ 260:

[145] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. ԺԱ.*, կազմ.՝ Նորայր արք. Պողարեան, Երուսաղէմ, 1991, էջ 149:

[146] Նոյն, էջ 261:

[147] Յովհաննէսեան, էջ 221:

[148] Գարտաշեան, էջ 181-82:

[149] Ալպոյաճեան, էջ 260:

Գաբրիէլ եպիսկոպոսի առողջութիւնը երբ վատանում է եւ 1858ին Իտալիա բուժման է գնում, Սայիտ փաշան նրան տալիս է 500 եգիպտական ոսկի: Սայիտ փաշայի աջակցութիւնը ներկայացւում է նաեւ Արեւելքին բնորոշ որոշակի բանահիւսական երանգներով: Ասւում է, որ մի անգամ սրբազանը փաշային ասում է. «*Աղքատները այս գիշեր, երազիս մէջ, կը մեղադրէին զիս, որ չեմ դիմեր Ձեր բարձրութեան եւ խնդրեր Ձեր հանրածանօթ գթութիւնը իրենց վրայ*»: Վերջինս, հասկանալով առաջնորդի միտքը, իր հերթին ասում է. «Կու տամ քեզի ագարակ մը, որպէսզի աղքատները այլեւս չնեղեն զքեզ»[150]:

1864ին կտրուկ վատանում է առողջութիւնը եպիսկոպոսին, նաեւ՝ եւ տեսողութիւնը: Կեանքի վերջին երեք տարիները անցկացնում է Ս. Մինաս գերեզմանատան մօտ գտնուող ազգապատկան մի հաստատութեան մէջ՝ այցելելով իր առաջնորդութեան շրջանում կառուցուած Ս. Մինաս եկեղեցին: Մարմինը ամփոփւում է իր կառուցած - Գարտաշեանի բնորոշմամբ - «իւրակերտ» Ս. Աստուածածին եկեղեցու ձախ գաւիթում: Նրա մարմարեայ տապանաքարի չափածոյ տապանագրում ասւում է.

Էր ծաղկեցուցիչ տեղւոյս տաճարոք[151]:

Թէեւ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան հետ ունեցած հակասութեանը, *Սիոն* ամսագիրը Գաբրիէլ եպիսկոպոսի վախճանման առիթով գրում է. «*Ի խոր ծերութեան, որոյ մահը ոչ միայն իւր սիրելի ժողովուրդին, այլեւ բոլոր միաբանութեանս սրտին մեծ սուգ եւ տրտմութիւն պատճառեց: Հանգուցեալ Սրբազանը գրեթէ 35 տարիի չափ առաջնորդութեան պաշտօնը վարեց*»[152]: Թերեւս ակնարկելով Եգիպտոսի կալուածքների սաղէմապատկան լինելը, եւ այն ակնկալիքով, որ դրանք միգուցէ վերստին անցնեն Երուսաղէմի պատրիարքութեան տնօրինութեանը, յաջորդող շարադրանքում ասւում է. «*Սկսաւ ամէնայն ջանքով խնամք եւ հոգ տանիլ իւրեան յանձնուած ժողովրդին պիտոյիցը եւ Սուրբ Աթոռոյս կալուածոց*»[153]:

Տ. Մկրտիչ եպս. Քէֆսիզեան Մարաշցի՝ (առաջնորդական փոխանորդ 1864-66)

Գաբրիէլ եպիսկոպոսի առողջութիւնը երբ վատանում է, նրան օգնական է կարգւում փոխառաջնորդի հանգամանքով: Մինչ այդ Էնկիւրիի առաջնորդն էր:

1864 Հոկտեմբերի 30ին Գահիրէ է հասնում եւ անցնում իր պաշտօնավարութեանը:

---

[150] Յովհաննէսեան, էջ 221:

[151] Գարտաշեան, էջ 182:

[152] «Ժամանակագրականք», *Սիոն*, 1867, հմր. 3, էջ 77:

[153] Նոյն:

Մկրտիչ եպիսկոպոսը նոյն թուականի Նոյեմբերի 11ին Ս. Աստուածածին առաջնորդանիստ եկեղեցուն եւ Խորէնեան դպրոցին է նուիրում երկու ձեռագիր, որոնք այնուհետեւ տարուել են Երուսաղէմ եւ այժմ պահւում են հայոց պատրիարքարանի մատենադարանում[154]: Կարելի է ենթադրել, որ այդ ձեռագրերը նա իր հետ բերել է Գահիրէ գալուց:

Այս հոգեւորականը բացասական բնորոշումներով է յիշւում: Գարտաշեանը գրում է. «*Իր պաշտօնավարութեան ընթացքին, Եգիպտոսի մէջ, օգտակար դեր մը ունեցած չէ, ինչպէս իր բոլոր կեանքին մէջ*»[155]: Մինչեւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան աստիճանին է բարձրացել, բայց Գարտաշեանի բնորոշմամբ, ամէնուր վատ յիշատակ է թողել:

Համանման ձեւով Ալպոյաճեանը գրում է. «*Քէֆսիզեան, մեր ԺԹ. դարու փարեգրութեանց մէջ թողած է սեւ անուն մը՝ իր չարաշահ բնաւորութեամբ եւ ազգավնաս գործունէութեամբ. հակառակ որոշ յատկութիւններուն, որոնք ի չարն գործած է*»[156]:

Նրան սկզբնապէս պաշտպանել եւ աջակցել է Նուպար փաշան. «*Ժողովրդական դժգոհութիւնը սակայն սաստկացաւ հետզհետէ, եւ Քէֆսիզեան նոյն ինքն Նուպար փաշայի խորհուրդով հեռացաւ Եգիպտոսէն (1866 Ապրիլ 22) եւ գնաց Կ. Պոլիս*»[157]:

Մեսրոպ արք. Սուքիասեան (1867-1880)

Ալպոյաճեանը նրան բնորոշում է հետեւեալ խօսքերով. «Այս եկեղեցականը Քէֆսիզեան մըն էր շահամոլ ու արատաւոր գործերով նշանաւոր»[158]:

Թէեւ մինչեւ Եգիպտոսում առաջնորդութեան կոչուելը Տրապիզոնի թեմի առաջնորդն էր, սակայն Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ դառնալը հնարաւոր է լինում Եգիպտոսի թեմի համար Կ. Պոլսի եւ Երուսաղէմի հայոց պատրիարքարանների մղած պայքարի արդիւնքում ստեղծուած իրավիճակով:

Դեռեւս 1864ին՝ Գաբրիէլ եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ որպէս տեսուչ Եգիպտոս է գնում եւ այնտեղ դրական տպաւորութիւն թողնում: Գաբրիէլ վախճանուելուց յետոյ Եսայի պատրիարքը անձամբ է Եգիպտոս գնում, փորձելով թեմը վերաենթարկել Երուսաղէմի հայոց պատրիարքութեանը, սակայն յաջողութիւն չի գտնում ոչ հայ համայնքի եւ ոչ էլ եգիպտական իշխանութիւնների կողմից, որից յետոյ 1868ին եգիպտա-

---

[154] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտր. Դ.*, Երուսաղէմ, 1969, էջ 132. նաեւ՝ *հտր. Ա*, Երուսաղէմ, 1972, էջ 110:

[155] Գարտաշեան, *հտր. Ա*, էջ 187:

[156] Ալպոյաճեան, էջ 262:

[157] Բաբկէն աթոռակից կաթողիկոս Կիւլեսէրեան, *Պատմութիւն կաթողիկոսաց տանն Կիլիկիոյ (1441էն մինչեւ մեր օրերը)*, Անթիլիաս, տպ. ԿՀՄՏԿ, 1939, էջ 708:

[158] Ալպոյաճեան, էջ 265:

հայերը Պոլսի պատրիարքութեանն են դիմում, որպէսզի առաջնորդ ուղարկուի: Պատրիարքարանը համաձայնելով եգիպտահայ Երամ պէյ Երամեանի առաջարկին, որոշում է Եգիպտոսի առաջնորդ ուղարկել Մեսրոպ եպս. Սուքիասեանին, որին համաձայն է լինում նաեւ Գէորգ Դ. կաթողիկոսը[159]:

1869 Հոկտեմբերի 21ին Պոլսից Եգիպտոս է գնում Եգիպտոսի առժամեայ պատրիարքական փոխանորդ տիտղոսով: Նման նշանակման գործում մեծ դեր է խաղում այն հանգամանքը, որ Սուէզի ջրանցքի բացման հանդիսութեանը արեւմտահայութիւնը եւ յատկապէս Եգիպտոսի հայութիւնը, հարկաւոր էր, որ ունենային իրենց ներկայացուցիչը:

Մեսրոպ եպիսկոպոսը եւրոպական գահակալների եւ հանդիսութեան տարբեր մասնակիցների մօտ ըստ արժանուոյն է հանդէս գալիս որպէս եգիպտահայութեան ներկայացուցիչ: Հանդիպում է նաեւ Եգիպտոսի խտիւի հետ, այս երկրորդ հանդիպմամբ եւս դրական տպաւորութիւն թողնելով նրա վրայ: Քաջալերուած նման դրական տպաւորութիւններից, անգամ առանց առաջնորդական վաւերացման, 1869 Դեկտեմբերից սկսում է առաջնորդական պաշտօնը վարել[160]:

Պայմանաւորուած Եգիպտոսի հայոց թեմի առնչութեամբ Կ. Պոլսի եւ Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնների հակասութիւններով՝ առաջնորդական շուտափոյթ հաստատման համար Մեսրոպ եպիսկոպոսը հարկադրուած է լինում յաղթահարելու մի շարք դժուարութիւններ: Նաեւ սա Եգիպտոսի հայոց ձեւաւորուած թեմի առաջին ընտրութիւնն էր, որը ունէր էր մի շարք անորոշութիւններ: Նախ իրաւականօրէն վաւերացուած չէր Եգիպտոսի առաջնորդութեան Երուսաղէմի հայոց պատրիարքարանի իրաւասութիւնից հանուելը: Երկրորդ՝ լուծուած չէր Երուսաղէմի վանքապատկան կալուածքների հարցը, որով պատրիարքարանը Եգիպտոսում ունէր կալուածքների իր տեսուչը: Երրորդ՝ ազգային սահմանադրութեան 1861ին ընդունումից յետոյ ազգային-եկեղեցական նոր իրավիճակ էր ստեղծուել Օսմանեան Կայսրութեան տարածքի հայ եկեղեցական կառոյցում: Այս պայմաններում է, որ Սուէզի ջրանցքի բացման հանդիսութիւններին մասնակցութեան համար շուտափոյթ ուղարկուած Մեսրոպ եպիսկոպոսը այնուհետեւ պէտք է յաղթահարէր առաջնորդական վաւերացման հետ կապուած դժուարութիւնները, որոնք իրաւական հիմքն էին դառնալու ընտրուող յաջորդ առաջնորդների համար: Կարծում ենք, նաեւ իրաւական այս անորոշութիւններով էր պայմանաւորուած, որ Մեսրոպ եպիսկոպոսից յետոյ մինչեւ նոր առաջնորդի ընտրուելը նշանակուեցին առաջնորդական երկու փոխանորդներ:

---

[159] Գարտաշեան, էջ 189:

[160] Ալպոյաճեան, էջ 266:

Ինչ վերաբերում է Մեսրոպ եպիսկոպոսին, առաջնորդ դառնալու ճանապարհին միքանի դժուարութիւններ է յաղթահարում յիշեալ պատճառներով: Կ. Պոլսից Եգիպտոսի առաջնորդ հաստատուածների կոնդակները այդ ժամանակ Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնն էր տալիս: Երուսաղէմը ուշացնում էր համապատասխան կոնդակի տրուելը իսկ նա կարողանում է հաստատման կոնդակը անմիջապէս Գէորգ Դ.ից բերել: Այս կոնդակով նրան նաեւ արքութեան աստիճան է շնորհւում:

Հայրապետական կոնդակը մեծ հանդիսաւորութեամբ կարդացւում է 1872 Մարտի 3ին: Այնուհետեւ ներկայանում է խտիւին եւ ստանում նաեւ իշխանութիւնների հաստատումը[161]:

Նա եւս ունենալով տեղի մեծահարուստների աջակցութիւնը, ըստ իր կամքի է վարում առաջնորդութիւնը, սակայն կատարելով մի շարք դրամական զեղծումներ, գժտւում է նաեւ եգիպտահայ մեծահարուստների հետ: Աւելին, գժտւում է նաեւ Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան հետ: Պատրիարքարանից որպէս քննիչ է ուղարկւում Յովհաննէս. Քհյ. Մկրեանը, ով վեր է հանում նրա բոլոր զեղծարարութիւնները:

Պատրիարքարանը Մկրեան քահանայի կազմած զեկուցագրի հիմամբ 1879ին պաշտօնանկ է անում նրան եւ Կ. Պոլիս բացատրութեան կանչում: Մեսրոպ եպիսկոպոսը երկու տարի ձգձգելուց յետոյ նոր Պոլիս է գնում: Չկարողանալով արդարացման փաստեր բերել, հեռացւում է առաջնորդութիւնից եւ ոչ-նշանակալից եկեղեցական պաշտօններ վարում մինչեւ իր վախճանուելը՝ 1907[162]:

Սահակ Ա. քհյ. Տէրսարգիսեան (առաջնորդական տեղապահ 1881-83)

Մեսրոպ արքեպիսկոպոսի Եգիպտոսից հեռանալուց յետոյ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից որպէս առաջնորդական տեղապահ ուղարկւում է Սահակ Ա. քհյ. Տէրսարգիսեանը. «Առաջնորդարանին խառնակ գործերը կարգաւորելու նպատակով»[163]: Ալպոյաճեանի բնորոշմամբ առաջնորդական տեղապահի պաշտօնը երկու տարի վարում է խոհականութեամբ[164]:

Տ. Կարապետ քհնյ. Յովսէփեան կամ Եուսուֆեան (փոխառաջնորդ 1883-85)

Նա այն հոգեւորականն էր, ում 1851ին քահանայ էր ձեռնադրել Գաբրիէլ եպս. Մարաշցին: Նրա առաջնորդական փոխանորդութեան շրջանում է կառուցւում Աղեքսանդրիայի եկեղեցին:

Աղեքսանդրիայում հայերի թիւը երբ մեծանում է, Պօղոս Պէյ Եուսուֆը իր այնտեղ ունեցած կալուածքը ազգապատկան է դարձնում եւ տներից

---

[161] Նոյն, էջ 268:

[162] Գարտաշեան, էջ 188-90. նաեւ՝ Ալպոյաճեան, էջ 268-71:

[163] Ալպոյաճեան, էջ 271:

[164] Նոյն:

մէկի սենեակը վերածում աղօթատեղիի: Նաեւ առանձին բնակարան է յատկացնում սպասաւորող եկեղեցականի համար:

Հայերի թիւը Աղեքսանդրիայում աւելի է մեծանում 1860-80ականներին եւ անհրաժեշտութիւն է առաջացնում նոր եկեղեցի կառուցելու: Աղեքսանդրիայի թաղական խորհրդի ատենապետ Թագուոր փաշա Յակոբեանը նախաձեռնում է եկեղեցու շինութիւնը ժողովրդական հանգանակութեամբ: Եկեղեցու կառուցումը աւարտւում եւ օծումը կատարւում է 1884ին[165]:

Մատթէոս եպս. Իզմիրլեան (առաջնորդ՝ 1855-89)

Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական ընտրութիւնների հետ կապուած տեւական ալեկոծութիւններից յետոյ Կ. Պոլսի պատրիարքութիւնը 1886 Յունուարի 3ին առաջնորդ է ընտրում Մատթէոս եպս. Իզմիրլեանին, ով Գահիրէ է հասնում 1886 Մարտի 17ին:

Իզմիրլեանի հմայքը տարածուել է նաեւ նրա Եգիպտոսի առաջնորդութեան շրջանի վրայ: Ինչպէս գրում է Ալպոյաճեանը՝ «*Իր Եգիպտոսի առաջնորդական պաշտօնավարութիւնը, ինչպէս իր բոլոր պաշտօնավարութիւնները, անսփոյեր եղած են, իբր անբասիր եկեղեցական մը*»[166]:

Իր ջանքերի շնորհիւ եւ Թագուոր փաշա Յակոբեանի աջակցութեամբ 1887-88ին նորոգւում է Գահիրէի Ս. Աստուածածին եկեղեցին եւ բարեկարգւում: Կանոնաւորւում են առաջնորդարանի դիւանատան եւ արձանագրութեան տոմարները: Իզմիրլեանի նախաձեռնութեամբ կառուցւում է Աղեքսանդրիայի առաջնորդարանը եւ ազգային վարժարանը:

Ի գնահատութիւն նրա գործունէութեան Պօղոս Նուպար փաշան 2000 ոսկու չէք է տալիս, որով եւ Աղեքսանդրիայում հասութաբեր կալուածք է գնում:

Եթովպիայի Մենելիք Բ. թագաւորից 1888ի հրամանով իրաւունք է ստանում այդ երկրի պատուանշանը ոսկեղէն խաչով կրելու:

Չնայած ծաւալած գործունէութեանը եւ համայնքի կողմից վայելած աջակցութեանը, 1890ին ստիպուած է լինում հրաժարուել առաջնորդական պաշտօնից Եգիպտոսի ծանր կլիմայի պատճառով[167]:

Յովհաննէսեանը ընդհանրացուած ձեւով այսպէս է գրում Իզմիրլեանի Եգիպտոսի գործունէութեան մասին. «*Ան ազատած է ազգային սնտրուկը պարտքէ, գանձած է անոր հին եւ գրեթէ կորուստի մատնուած մեծաքանակ պահանջները: Նորոգած է Ս. Աստուածածին եկեղեցին եւ հոգեւորունը ու հիմէն նոր տուն մը կառուցած է ազգապատկան հողի վրայ: Անոր անվհատ ջանքերով կորուստէ ազատած է Աղա Գալուստի ազգին թողած*

---

[165] Նոյն, էջ 272:

[166] Ալպոյաճեան, էջ 272:

[167] Իզմիրլեանի Եգիպտոսի առաջնորդութեան շրջանի մասին տե՛ս՝ Յովհաննէսեան, էջ 293-94. նաեւ՝ Գարտաշեան, էջ 190-92. նաեւ՝ Ալպոյաճեան, էջ 272-75:

հարստութիւնը, որով վարժարանին նիւթականը միանգամընդմիշտ ապահովուած է»[168]:

Եգիպտոսում իր թողած ջերմ տպաւորութիւնների արտայայտութիւնն է եւ այն, որ 1894ին Կ. Պոլսի պատրիարք ընտրուելուց յետոյ 1896ին երբ հրաժարւում է ի նշան բողոքի համիտեան ջարդերի, Եգիպտոսի հայերը նրան ընտրում են առաջնորդ: Այս ընտրութիւնը, սակայն, քանի որ դէմ էր սուլթան Համիտի ցանկութեանը, այն չվաւերացնելու համար որպէս պատրուակ է ընտրւում մինչ այդ՝ 1890 առողջական նկատառումներով նրա հրաժարուելը առաջնորդական պաշտօնից: Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա արք. Օրմանեանը Իզմիրլեանին ուղղած 1898 Յունիսի 4ի թուակիր նամակով ակնարկում է, որ նպատակայարմար չէ իր հաստատումը եւ խորհուրդ տալիս հրաժարուել առաջնորդութիւնից առողջական պատրուակով[169]:

Գէորգ Ծ. վրդ. Իւթիւճեան (1891-95)

Իզմիրլեանը իր հրաժարուելուց յետոյ եգիպտահայերին առաջարկում է, որ առաջնորդ ընտրեն Գէորգ վարդապետին, որը նրանք կատարում են 1891ին:

Իր առաջնորդութեան շրջանում եգիպտահայ մեծահարուստ Եղիազարեանի ժառանգները 1892ին 17,320 եգիպտական ոսկի են պահանջում: Դատը, սակայն, ի նպաստ առաջնորդարանին է լուծւում:

1895ի վերջին առողջական պատճառներով հրաժարական է տալիս եւ մեկնում Պոլիս[170] եւ Խրիմեանի շնորհիւ իր յետագայ գործունէութիւնն անցընում Եւրոպայում:

Իւթիւճեանից յետոյ 1895-96՝ նորից առաջնորդական փոխանորդ է նշանակւում եւ առաջնորդարանի ընթացիկ գործերը վարում Կարապետ Ա. քհյ. Յովսէփեանը:

Յակոբ Ծ. վրդ. Փափազեան (առաջնորդական տեղապահ 1897-1900)

1897ին ընտրւում է Եգիպտոսի թեմի առաջնորդական տեղապահ: Պաշտօնատեղին է հասնում 1897 Մայիսին:

Մարդահամար է կազմակերպում պարզելու համար, թէ որքան է դարձել եգիպտահայութեան թիւը ի հաշուի համիտեան ջարդերի Եգիպտոսում ապաստանած հայերի: Կազմակերպում է օժանդակութեան մարմին, որը միջոցներ է հայթայթում եգիպտահայերի համար: Աղեքսանդրիայում եկեղեցուն կից գաղթականների խնամքն է կազմակերպում տեղի հայ բժիշկների միջոցով:

---

[168] Յովհաննէսեան, էջ 223:

[169] *Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան (1873-1910 թթ.), Գիրք Ը., Մատթէոս Բ. Իզմիրլեան*, կազմ.՝ Սանդրօ Բեհբուդեան, խմբ.՝ Արշակ Մադոյեան, «Հայաստան» հրատ., Երեւան, 2000, էջ 118:

[170] Գարտաշեան, էջ 193-94:

Ինչպէս ասացինք, 1897ին եգիպտահայերը նորից առաջնորդ են ընտրում Իզմիրլեանին, որը, սակայն հնարաւոր չի լինում հաստատել եւ Յակոբ Ծ. վարդապետը շարունակում է վարել առաջնորդական տեղապահութիւնը:

1898 Ապրիլի 4ին առաջնորդ է ընտրւում Յովսէփ եպս. Այվազեանը եւ Յակոբ Ծ. վրդ.ը հրաժարւում է առաջնորդական տեղապահութիւնից[171]:

Յովսէփ եպս. Այվազեան (1900-1904 վխճ.)

Յովսէփ եպիսկոպոսի ընտրութիւնը թուրքական իշխանութիւնները միայն երկու տարի յետոյ են հաստատում եւ 1900 Դեկտեմբերի 21ին նա հասնում է Գահիրէ:

Ալպոյաճեանը նրա մասին գրում է, որ «*անցեալին արդիւնաւոր եւ գործունեայ եկեղեցական մը եղած էր, բոլորովին ծերացած Եգիպտոս եկաւ*»[172]: Նոյն խստութեամբ նրա պաշտօնավարութեան շրջանը բնորոշում է որպէս «չորս ապարդիւն տարիներ», ասելով, որ նրա «պաշտօնավարութեան շրջանէն ոչինչ մնացած է իբր յիշատակելի գործ»:

Վախճանւում է 67 տարեկանում եւ նրա մարմինը ամփոփւում է Աղեքսանդրիայի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու հիւսիսային կողմում[173]:

Յովսէփ եպիսկոպոսի վախճանուելուց յետոյ տեղապահ է կարգւում Մամբրէ քհյ. Վարդանեանը 1904ից մինչեւ 1905, ով Իզմիրլեանի հրաւէրով քահանայագործելու էր եկել Գահիրէ[174]:

1905 Յունուար-Հոկտեմբեր՝ առաջնորդական տեղապահութիւնը վարում է Յարութիւն քհյ. Յակոբեան Խարբերդցին: Մինչ այդ նա առաջնորդական փոխանորդի պաշտօնով քահանայագործում էր Աղեքսանդրիայում:

Առաջնորդի ընտրուելուց յետոյ դարձեալ մինչեւ իր վախճանուելը՝ 1920 Օգոստոսի 20, վարում է առաջնորդական փոխանորդութիւնը: Յարութիւն քահանայի պաշտօնավարման շրջանում եգիպտահայութիւնը առաջնորդ է ընտրում Սահակ եպս. Այվազեանին: *Արարատ* ամսագիրը ծանուցում է, որ Եգիպտոսից հաղորդում են թէ առաջնորդ է ընտրուել Սահակ եպս. Այվազեանը, եւ որ հաստատութեան համար արդէն դիմել են Վեհափառին[175]: Սակայն նրա ընտրութիւնը եւս, ինչպէս Իզմիրլեանի երկրորդ անգամ ընտրուելը, չի վաւերացւում: Նոր ընտրութեամբ, 1905 Մայիսի ութին ընտրւում է Մկրտիչ եպս. Աղաւնունին:

---

171 Այս հոգեւորականի մասին տե՛ս՝ Գարտաշեան, էջ 194-96:

172 Ալպոյաճեան, էջ 276:

173 Գարտաշեան, էջ 197:

174 Ալպոյաճեան, էջ 277:

175 «Տաճկահայք», *Արարատ*, Ս. Էջմիածին, Գ:1905, էջ 231:

Մկրտիչ եպս. Աղաւնունի (առաջնորդ 1905-12)

Իր պաշտօնավարութեան ընթացքում կառուցւում է Պուլաքի Գալուստեան վարժարանը: 1910ին եպիսկոպոս է ձեռնադրւում Ս. Էջմիածնում: 1912ին առողջական պատճառներով հրաժարւում է Եգիպտոսի առաջնորդութիւնից եւ մեկնում Կ. Պոլիս: Հոգեւորականի իր գործունէութեան յաջորդ շրջանը կապւում է Երուսաղէմի հետ, ուր պաշտօնավարելուց եւ սպասաւորելուց բացի մի շարք կարեւոր ուսումնասիրութիւններ է գրում՝ հայ Երուսաղէմի մասին:

Աղաւնունու հրաժարականից յետոյ Եգիպտոսի հայոց թեմը մի կարճ ժամանակ շարունակում է ղեկավարուել առաջնորդական տեղապահով: Համայնքային կառոյցները 1913ին որոշում են առաջնորդի թեկնածու առաջադրել Կ. Պոլսի նախկին հրաժարեալ պատրիարք Մաղաքիա արք. Օրմանեանին, ով այդ ժամանակ անպարտ էր ճանաչուել մինչ այդ եղած ամբաստանութիւններից:

Եգիպտոսի թեմական կամ գաւառական ժողովը 1913 Նոյեմբերի 15ին առաջնորդ է ընտրում Օրմանեանին 19 կողմ եւ 3 դէմ քուէներով:

Օրմանեանի հանդէպ եղած բացասական վերաբերմունքը 1908ից յետոյ, սակայն, դեռեւս չէր ցրուել եւ բողոքի ալիք է բարձրանում այս ընտրութեան դէմ եւ հանրագրեր են գրւում:

Օրմանեանը չցանկանալով սրել հարցը եւ պատրուակ բերելով իր առողջական վիճակը, հրաժարւում է առաջնորդութեան պաշտօնը ստանձնելուց[176]:

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԹԵՄ

Առաջին աշխարհամարտի սկսուելուց անմիջապէս յետոյ Եգիպտոսը ջնջելով Օսմանեան Կայսրութիւնից կախեալութեան վերջին հետքերը, անցնում է բրիտանական հովանաւորութեան ներքոյ: Այս քայլը եգիպտահայութեանը հնարաւորութիւն է ընձեռում առաւել ազատօրէն զբաղուելու հայկական հարցով եւ օժանդակելու արեւմտահայ գաղթականութեանը ու զբաղուելու Հայաստանի առաջին Հանրապետութեան հետ կապուած խնդիրներով: Այս բնագաւառում իր կատարած աշխատանքների մասին Թորգոմ պատրիարքը պարբերաբար գրում է Գէորգ Ե. ամէնայն հայոց կաթողիկոսին[177]:

Օսմանեան Կայսրութեան պարտութիւնը, ապա եւ զրկուելը իր նախկին տարածքների մի մասից, էական վերաձեւաւորումների են յանգեցնում Հայ Եկեղեցու թեմական բաժանման եւ ենթակայութեան հարցերում:

---

[176] Ալպոյաճեան, էջ 278:

[177] *Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին աշխարհամարտի եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան տարիներին (1914-1920), հտր. Ա (1914-1917)*, մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2018, էջ 101-03, 169:

Նախկինում Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան վարչական ենթակայութեան ներքոյ էին գտնւում կայսրութեան տարածքի բոլոր հայ եկեղեցական կառոյցները, նաեւ Եւրոպայում գտնուող մի շարք առաջնորդութիւններ, քանի որ այդ համայնքների բնակչութիւնը արեւմտահայ միջավայրից էր:

Առաջին աշխարհամարտից յետոյ այս իրավիճակը փոխւում է եւ յիշեալ թեմերը, ներառեալ՝ Եգիպտոսի, անցնում են ամէնայն հայոց կաթողիկոսութեան անմիջական ենթակայութեան ներքոյ: Գէորգ Ե. կաթողիկոսը Կ. Պոլսի Զաւէն պատրիարքին 1920 Դեկտեմբերի 25ին գրում է, որ մի շարք թեմեր, այդ թւում եւ Եգիպտոսի, այսուհետ ուղղակիօրէն պէտք է ենթարկուեն Ս. Էջմիածնին[178]: Նման որոշումը իրականացնելը այդ ժամանակ թեմերում որոշակի դժուարութիւնների հետ էր կապուած՝ պայմանաւորուած այն հանգամանքով, որ Խորհրդային Հայաստանը՝ լինելով Խորհրդային Միութեան մի մասը, ակամայ գտնւում էր Արեւմուտքի երկրներին քաղաքական հակառակ ճամբարում, ուստի տարբեր ծրագրեր էին մշակւում արտասահմանեան թեմերի թեմական պատկանելութեան հարցի շուրջ: Քննւում էր դրանք Կիլիկիոյ կաթողիկոսութեանը յանձնելու, կամ անգամ ամէնայն հայոց կաթողիկոսութիւնը արտասահման փոխադրելու հարցը: Նման ծրագրերը, որ իրականութիւն չդարձան մեծ աւանդ ունի Թորգոմ պատրիարք Գուշակեանը, ով Եգիպտոսից սկսած աներեր կանգնած է եղել Ս. Էջմիածնի կողքին՝ Մայր Աթոռի համար ամէնադժուարին եւ ողբերգական ժամանակներում իսկ:

Թորգոմ եպիսկոպոս (պատրիարք) Գուշակեան (1914-1930)

1914 Փետրուարի 5ին Գահիրէում գումարուած թեմական ժողովում Թորգոմ վարդապետ Գուշակեանը ընտրւում է առաջնորդական տեղապահ եւ այս մասին ծանուցւում է Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը, որի ժողովում որոշւում է սրբազանին Եգիպտոս ուղարկել տեղապահի կարգավիճակով:

Եգիպտոսից 1914 Մարտի 28ին հեռագրով դիմում են, որ արագացուի Թորգոմ եպիսկոպոսի Եգիպտոս գալը: Ապրիլի կէսերին նա ճանապարհւում է Գահիրէ եւ այնտեղ հասնում 1914 Մայիսի 3ին[179]: Երկաթուղային կայարանից դէպի առաջնորդանիստ եկեղեցի նրան թափօրով առաջնորդելու մասին Ալպոյաճեանը գրում է. «*Հայերու բազմութիւն մը փութացած էր ընդ առաջ երթալու կայարան: Փառաւոր թափօր մը կազմուեցաւ, առ-*

[178] *Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին աշխարհամարտի եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան տարիներին (1914-1920), հտ. Բ (1917-1920)*, մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակութիւն, Ս. Էջմիածին, 2018, էջ 599-600:

[179] Թորգոմ պատրիարք Գուշակեանի Եգիպտոսի առաջնորդութեան շրջանի մասին տե՛ս՝ Ա. Ալոյաճեան, *Թորգոմ պատրիարք Գուշակեան*, Գահիրէ, 1942. նաեւ՝ Զարեհ վրդ. Կաբաղեան, *Թորգոմ պատրիարք Գուշակեան*, Ս. Էջմիածին, 2002, էջ 57-78:

ջեւէն եւ կառքին քովերէն հեծեալ ոստիկաններ կ'երթային, պաշտօնական եւ անպաշտօն հետեւորդներ 50է աւելի կառքերով հետեւեցան եկեղեցի»[180]:

1914 Յունիսի 28ին գումարուած թեմական ժողովում տեղապահից ընտրւում է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ:

Ինչքան որ Եգիպտոսը որոշակի ինքնուրոյնութիւն ունէր Օսմանեան Կայսրութիւնից, այնքան եւ տեղի հայոց թեմը ինքնուրոյնութիւն ունէր Կ. Պոլսի հայոց պատրիարքութիւնից, որը էական մի տարբերութիւն էր ստեղծում արեւմտահայութեան միւս թեմերի հետ համեմատած: Վերջիններս եթէ պատրաստւում էին համապատասխան յարաբերութիւններ մշակել թեմի տարածքն ընդգրկող թուրքական տեղային իշխանութիւնների ներկայացուցիչների հետ, ապա Եգիպտոսում, որպէս կիսանկախ երկրում, առաջնորդը յարաբերութիւններ պէտք է ունենար նաեւ այնտեղի քոյր եկեղեցիների եւ օտարերկրեայ դիւանագիտական ներկայացուցիչների հետ:

Իր առաջնորդութեան շրջանում եւ յաջորդող տասնամեակներին անկախ ներթեմական գժտութիւններից եւ վէճերից, Եգիպտոսի հայոց թեմը միշտ կապուած է եղել եւ գտնուել Ս. Էջմիածնի ենթակայութեան ներքոյ:

Չնայած ժամանակի լարուած իրավիճակին եւ իր գործունէութեան ընդգրկուն շրջանակին, առաջնորդութեան ողջ շրջանում, երբ չի բացակայել Եգիպտոսից, կամ հիւանդ չի եղել, ամէն Կիրակի եւ տօնական օրերին քարոզել է թեմի եկեղեցիներում:

«Դպրոցը եկեղեցու նախագաւիթն է»՝ ժամանակի ընդհանրացած ըմբռնմամբ, մեծ ուշադրութիւն է դարձնում դպրոցական գործին: Հիմնում է Պէրպէրեան երկրորդական վարժարանը, որի բացումը կատարւում է 1924 Հոկտեմբերի 26ին: Շնորհիւ նրա ջանքերի, Գահիրէի Հելիոպոլիս արուարձանում կառուցւում է Նուպարեան վարժարանը Պօղոս Նուպարի յատկացրած միջոցներով եւ նրա պատուին անուանւում է Նուպարեան, ուր դասաւանդումը սկսւում է 1924 Սեպտեմբերի 15ին:

Գէորգ Ե. ամէնայն հայոց կաթողիկոսը 1916 Ապրիլի 29ի կոնդակով Թորգոմ եպիսկոպոսին նշանակում է հայրապետական նուիրակ Հընդկաստանում: Նոյն օրը տրուած յաջորդ կոնդակով այս մասին ծանուցում է Եգիպտոսի հայութեանը: Հայրապետական կոնդակը Եգիպտոս է հասնում 1916 Յուլիսին: Բրիտանական իշխանութիւնների կողմից ելքի իրաւունքը տրւում է Սեպտեմբերի վերջին:

Յունիսին նա Փոր Սայիտից նաւով մեկնում է Պոմպէյ, որտեղից այցելում է Հնդկաստան, Ճաւա եւ Սումաթրա կղզիները: Այս վայրերում թէ՛ որոնում է հայկական յիշատակներ, որոնք այնուհետեւ հրատարակում է

[180] Ալպոյաճեան, *Արաբական,* էջ 253-54:

Հնդկահայք գրքում[181], թէ՛ զբաղւում տեղի հայկական եկեղեցական կեանքի կազմակերպմամբ եւ քարոզութեամբ, եւ թէ՛ իրականացնում իր առաքելութիւնը՝ հանգանակութիւններ կատարում եւ համապատասխան միջոցներ հաւաքում տարբեր տեղերում ապաստանած հնդկահայերի համար:

1918 Փետրուարի 17ին կազմակերպուած համայնքային միջոցառման ժամանակ հրաժեշտ է տալիս Հնդկաստանի հայութեանը եւ 14 ամիս տեւած առաքելութիւնից յետոյ Եգիպտոս վերադառնում 1918 Մայիսի 24ին, ցամաք ելնելով Փոր Սայիտում, որտեղից ուղեւորուել էր:

Ցեղասպանութիւնը վերապրողները եւ հրաշքով փրկուածները Եգիպտոս էին հասնում այս նաւահանգստով: 1915 Սեպտեմբերից նա պարբերաբար այցելում է այստեղի գաղթական հայերին, ինչպէս նաեւ մահացած գաղթականներին ամփոփող «հայկական քեմփ» անուանուող գերեզմանում աղօթում եւ հոգեհանգստեան կարգ կատարում նրանց հոգիների համար:

Եգիպտոսում դիմաւորում է աքսորից վերադարձող Կ. Պոլսի Զաւէն պատրիարքին, ապա եւ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսին:

Նաեւ հանդիսութիւններ է կազմակերպում ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի, զօրավար Անդրանիկի եւ տարբեր գործիչների Եգիպտոս գալու պատուին:

Թորգոմ պատրիարքի ջանքերով 1915ից սկսւում է *Եգիպտահայ օրացոյցի* հրատարակութիւնը Ս. Էջմիածնի եկեղեցական օրացոյցի հետեւողութեամբ: *Եգիպտահայ օրացոյց*ում եւս ներկայացւում են հայոց եկեղեցու *Տօնացոյց*ի տօները, դրանց կատարման արարողութիւնների համառօտ նկարագրութեամբ: Նաեւ ազգային եկեղեցական կեանքին ու եգիպտահայութեան հետ կապուած որոշակի տեղեկութիւններ:

*Օրացոյց*ի սկզբում նշւում են Եգիպտոսում գործող հայկական երեք եկեղեցիները, որոնք, ինչպէս տեսանք, յիշւում են դեռեւս նախորդ շրջանից: Առաջինը, բնականաբար, յիշւում է այն ժամանակ առաջնորդանիստ Ս. Աստուածածին եկեղեցին, որի տօնը կատարուել է Տիրամօր Վերափոխման տօնին: Երկրորդը՝ Աղեքսանդրիայի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին, երրորդը՝ Ս. Մինաս եկեղեցին: Վերջինս քանի որ կապւում էր հայկական գերեզմանոցի հետ, ուստի այնտեղի արարողութիւնները գլխաւորաբար վերաբերում էին Մեռելոցներին: Այս պատճառով ասւում է, որ այնտեղ հոգեհանգստեան կարգ է կատարւում Տաղավար տօների մեռելոցներին «ի Ս. Մինաս մատրան գերեզմանատան Մարմինայի ի Գահիրէ»:

---

[181] Թորգոմ պատրիարք Գուշակեան, *Հնդկահայք. տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ*, տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1941, 380 էջ:

Թորգոմ եպս. Գուշակեանը Եգիպտոսում հսկայական վաստակ ունի նաեւ եկեղեցաշինութեան բնագաւառում: Ոչ մի առաջնորդի օրօք այդքան եկեղեցիներ չեն կառուցուել: Այս ամէնը իրականացուել է հայոց պատմութեան ամէնաողբերգական տարիներին յաջորդող տասնամեակում՝ 1920ականներին, այն գիտակցութեամբ, որ Հայոց Եկեղեցին է հայապահպանութեան գլխաւոր գործօնը, առաւել եւս եղեռնազարկ եւ Եգիպտոսի ափերին ցրուած ժողովրդի համար:

Թորգոմ սրբազանի առաջնորդութեան շրջանում Եգիպտոսի առաջնորդանիստ եկեղեցին Ս. Աստուածածինն էր, որը, ինչպէս տեսանք, կառուցուել էր Գաբրիէլ եպիսկոպոսի օրօք՝ 1839ին, Պէյն էլՍուրէյն հայաշատ թաղամասում:

Քաղաքի յետագայ ընդարձակման ժամանակ այն աստիճանաբար ոչկենտրոնական շրջան է դառնում, իսկ հայերը սկսում են բնակութիւն հաստատել քաղաքի այլ թաղամասերում, ուստի Թորգոմ սրբազանը ցանկանում է առաջնորդանիստ եկեղեցի կառուցել աւելի նոր թաղամասում, որը նաեւ կենտրոնական դիրք ունենար քաղաքում ցրուած հայերի համար, որը հնարաւոր է լինում իրականացնել եգիպտահայ բարերար Գրիգոր Եղիայեանի կտակի շնորհիւ: 1906ին կազմած կտակում նա որոշակի գումար էր յատկացրել առաջնորդանիստ նոր եկեղեցու կառուցման եւ համապատասխան տարածքի գնման համար:

Կտակի այս կէտը սկսւում է գործադրուել 1924ից: Այդ ժամանակ Փարիզում գտնուող Պօղոս Նուպար փաշայի յանձնարարութեամբ եկեղեցին նախագծում է ֆրանսահայ ճարտարապետ Լեւոն Նաֆիլեանը: Նոյն 1924 Օգոստոսի 31ին կատարւում է եկեղեցու հիմնարկէքը: Կառուցումն աւարտւում է եւ օծումը տեղի է ունենում 1928 Փետրուարի 12ին:

Տիգրան փաշա Ապրոյեանի կտակով նորակառոյց առաջնորդանիստ եկեղեցու մօտ 1929ին կառուցւում է ազգային առաջնորդարանի նոր շէնքը:

Իր առաջնորդութեան շրջանում նորոգուել է Աղեքսանդրիայի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին եւ ընդլայնուել եկեղեցու առաջնամասը, ինչպէս նաեւ կառուցուել եւ օծուել են Աղեքսանդրիայի հայոց գերեզմանատան մատուռը եւ Զակազիկի Ս. Խաչ եկեղեցին:

Աղեքսանդրիայի հայոց հին գերեզմանատանը Եգիպտոսի իշխանութիւնները 1920ականների սկզբին թոյլ չեն տալիս նոր թաղումներ կատարել: Փոխարէնը նոր տարածք են յատկացնում, ուր Գէորգ Թոփալեանի զաւակները ի յիշատակ իրենց հօր, կառուցում են Ս. Գէորգ մատուռը: Վերջինիս հիմնարկէքը կատարւում է 1925 Սեպտեմբերի 27ին, իսկ օծումը՝ 1927 Մայիսի 22ին: Այս մատուռը մանրակերտն է Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցու[182]:

---

[182] Գուշակեան, *Եգիպտոսի հայոց հին*, էջ 65:

Զակազիկի Ս. Խաչ եկեղեցին կառուցւում է այդ քաղաքի ծխախոտի գործարանատէր Արմենակ Կամսարականի միջոցներով: Ի յիշատակ բարերարի հօր՝ Խաչատուր Կամսարականի, եկեղեցին անուանւում է Ս. Խաչ: Հիմնարկէքը կատարւում է 1928 Սեպտեմբերի 28ին, օծումը՝ 1929 Ապրիլի 7ին:

Թորգոմ եպս. Գուշակեանի առաջնորդութեան տարիները համընկնում են ոչ միայն հայ ժողովրդի պատմութեան ամէնաողբերգական շրջանին, այլեւ Հայ Եկեղեցու եւ Սուրբ Էջմիածնի համար ստեղծուած դժուարագոյն շրջանի հետ:

Գէորգ Ե. կաթողիկոսի գործունէութիւնը սահմանափակուած էր ոչ միայն բոլշեւիկեան արգելքներով, այլեւ արտասահմանում Մայր Աթոռի հանդէպ որոշակի սառը վերաբերմունք կար՝ պայմանաւորուած Խորհրդային Միութեան գործօնով: Ահա այս պայմաններում Թորգոմ եպիսկոպոսը իրականացնում է Մայր Աթոռի արտաքին թեմերի հետ կապուած մի շարք գործառոյթներ:

Առաջին աշխարհամարտից յետոյ ստեղծուած աշխարհաքաղաքական նոր իրավիճակում կարեւորւում է յատկապէս Հայոց Եկեղեցու արտասահմանեան թեմերի վերակազմաւորման հարցը:

Հնդկական թերակղզի որպէս հայրապետական պատուիրակ գնալուց յետոյ, կաթողիկոսական կոնդակով 1929ի վերջին նորից հայրապետական պատուիրակ է նշանակւում, այս անգամ արդէն Եւրոպայում՝ այնտեղի հայոց թեմական կառոյցը կազմակերպելու համար:

Գահիրէից մեկնում է 1929 Օգոստոսի 12ին՝ ինը ամիս մնալով տեղի հայկական համայնքում եւ ետ վերադառնում 1930 Մայիսի 22ին:

Ի գնահատութիւն իր գործունէութեան Գէորգ Ե. կաթողիկոսի կողմից 1924ին ստանում է արքութեան աստիճան[183]:

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի միաբանութիւնը Եղիշէ պատրիարք Դուրեանի վախճանուելուց յետոյ 1931 Յունիսի 8ին Թորգոմ արքեպիսկոպոսին է առաջադրում Երուսաղէմի հայոց պատրիարք եւ Թորգոմ սրբազանի կեանքի մնացեալ տարիները արդէն կապւում են հայ Երուսաղէմի հետ:

Մամբրէ արքեպս. Սիրունեան (1930-66)

Թորգոմ եպս. Գուշակեանը, երբ ընտրւում է Երուսաղէմի հայոց պատրիարք, իր առաջարկութեամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ է ընտրւում Մամբրէ վարդապետը, ում եկեղեցական ծառայութիւնը թեմում սկսուել էր աւելի վաղ:

Լինելով Արմաշի դպրեվանքի վերջին սաներից, Մամբրէ վարդապետը ուսումնառութեան տարիներից ճանաչել է Թորգոմ սրբազանին:

---

[183] Ալպոյաճեան, *Թորգոմ պատրիարք*, էջ 309:

1915 Արմաշից տարագրւում է Գոնիա, որտեղից կարողանում է Պոլիս հասնել: Այստեղ 1916 Յուլիսի 17ին ձեռնադրւում է աբեղայ, սակայն 13 օր յետոյ Արմաշի դպրեվանքի 13 սաների հետ աքսորւում է Երուսաղէմ, որտեղ դառնում է ժառանգաւորաց վարժարանի կառավարիչը:

Թորգոմ եպիսկոպոսը նրան հրաւիրում է Եգիպտոս, որպէս առաջնորդական փոխանորդ Փոտ Սայիտի 13 հազար հայերի գաղթականի: Այնտեղ է հասնում 1918 Յուլիսի 12ին: Նշանակւում է նաեւ տեղի որբանոցի տեսուչ: Որբանոցը 1918 փոխադրւում է ֆրանսական իշխանութեան ներքոյ անցած Կիլիկիայի Մերսին բնակավայրը: Մամբրէ վարդապետը եւս այնտեղ է գնում որբանոցի սաների հետ: Ֆրանսական ուժերի Կիլիկիայից հեռանալուց յետոյ որբանոցի սաների հետ փոխադրւում է Պէյրութ, դարձեալ որպէս տեսուչ:

Մինչ այդ՝ 1918 Սեպտեմբերի 1ին Աղեքսանդրիայում Թորգոմ սրբազանից, ստանում է վարդապետական աստիճան, իսկ 1920 Յունուարի 30ին՝ ծայրագոյն վարդապետական աստիճան Կիլիկիայի Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսից Մերսինում:

Թորգոմ սրբազանը Մայր Աթոռ 1925ին նամակ է գրում, միջնորդելով, որ Մամբրէ վարդապետին շնորհուի վարդապետական ադամանդակուռ լանջախաչ, որը հայրապետական տնօրինութեամբ շնորհւում է 1927 Ապրիլի 26ի հմր. 410 Կոնդակով [184]:

1923 Յուլիսի 25ին նշանակւում է Աղեքսանդրիայի առաջնորդական փոխանորդ՝ պաշտօնավարելով մինչեւ 1930 Դեկտեմբերի 17ը, երբ ընտրւում է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական ընդհանուր փոխանորդ:

Մամբրէ վարդապետի դեռեւս առաջնորդական տեղապահ եղած շրջանում Յովհաննէսեանը գրում է. «*Իրեն չեն պակսիր կորով եւ բարի տրամադրութիւն օգտակար ըլլալու համար այն ժողովրդին եւ եկեղեցւոյն, որոնց հովուութեանը կոչուած է ի պաշտօնէ: Օժտուած է քարոզելու կարողութեամբ եւ կը քարոզէ յաճախ*»[185]

Ս. Էջմիածնում 1932ին մասնակցում է ազգային-եկեղեցական ժողովին, ուր ամէնայն հայոց կաթողիկոս է ընտրւում Խորէն Ա. Մուրադբէկեանը: Մինչեւ Եգիպտոս վերադառնալը 1933 Յունուարի 8ին եպիսկոպոս է ձեռնադրւում Խորէն Ա. կաթողիկոսից:

Առ ի գնահատութիւն եկեղեցանուէր ծառայութեան Խորէն Ա. կաթողիկոսի կողմից 1935ին պարգեւատրւում է «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով, որը յանձնում է հայրապետական պատուիրակ Գարեգին արք.

---

[184] Յովի. Թագուկեան, «Հոգեւորականը, հայրենասէրը (Մամբրէ արքեպս. Սիրունեանի ծննդեան 100 ամեակի առիթով)», *Էջմիածին*, Ը:1989, էջ 25:

[185] Յովհաննէսեան, էջ 226:

Յովսէփեանը: Ֆրանսական կառավարութեան կողմից 1938ին ստանում է «Օֆիսիէ տ'Աքատեմի» պատուանշանը[186]:

1937 Սեպտեմբերի 18 թուակիր հայրապետական կոնդակով Եթովպիայի եւ Սուտանի թեմերը ենթարկւում են Եգիպտոսի թեմին:

1941 Փետրուարի 13ին մեծաշուք հանդիսութեամբ՝ ի ներկայութեան Եթովպիայի Հայլէ Սելասիէ կայսեր օծում է Ատիս-Ապեպայի հայկական Ս. Գէորգ եկեղեցին:

1945 Մարտի 3ին թեմի ընդհանուր պատգամաւորական ժողովում, որին մասնակցում են 29 պատգամաւորներ եւ ներկայ է լինում Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Յովսէփեան կաթողիկոսը, միաձայն ընտրւում է թեմակալ առաջնորդ: Որպէս թեմակալ առաջնորդ մասնակցում է 1945ի եւ 1955ի կաթողիկոսական ընտրութիւններին:

1945 Յուլիսի 1ին Գէորգ Զ.ից արքութեան տիտղոս է ստանում: Իր առաջնորդութեան շրջանում կառուցուել են Հելիոպոլսի գերեզմանատան Ամէնայն Սրբոց մատուռը (1954) եւ Խարթումի (Սուտան) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին (1957), ինչպէս նաեւ գնուել է Հելիոպոլսի եկեղեցու տարածքը: Աղեքսանդրիայում կատարուել է Ս. Պօղոս-Ս. Պետրոս եկեղեցու նորոգութիւնը եւ ընդլայնումը[187]:

Մամբրէ սրբազանը կարողանում է թեմը զերծ պահել ներհամայնքային միջկուսակցական ցնցումներից:

Եգիպտոսի հայոց թեմի գործունէութիւնը միջեկեղեցական յարաբերութիւններում, որն սկսուել էր դեռեւս Թորգոմ եպս. Գուշակեանի առաջնորդութեան շրջանում, առաւել է ծաւալւում Մամբրէ եպս. Սիրունեանի ժամանակ:

Եգիպտոսում էին գտնւում հին արեւելեան եկեղեցիների պատրիարքական կենտրոնները եւ ներկայացուցչութիւնները, որով թեմական առաջնորդը դառնում էր Հայոց Եկեղեցու ներկայացուցիչը այդ եկեղեցիների մօտ: Մերձաւոր եւ Միջին Արեւելքի բոլոր կարեւոր համաժողովներին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի կամ ներկայացուցչի հետ մասնակցել է նաեւ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդը: Պայմանաւորուած թեմի աշխարհագրական դիրքով, մեծ դեր էր վերապահուած նաեւ Հայոց Եկեղեցու ներեկեղեցական կեանքում՝ Կիլիկեան Աթոռի եւ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան հետ ունեցած յարաբերութիւններով: Պատահական չէ, որ Անթիլիասի 1956ի դէպքերից յետոյ եպիսկոպոսական յայտնի ժողովը Վազգէն Ա. կաթողիկոսի գլխաւորութեամբ տեղի է ունենում Եգիպտոսում:

---

[186] Մամբրէ սրբազանի մինչեւ 1938 ընկած շրջանի Եգիպտոսի հայոց թեմի գործունէութեան մասին տե՛ս՝ Գարտաշեան, էջ 201-03:

[187] Մամբրէ արքեպիսկոպոսի մինչեւ 1950ականների վերջը ընկած գործունէութեան մասին տե՛ս՝ Ալպոյաճեան, *Թորգոմ արք.*, էջ 279-80:

Տեղի հայոց թեմի կապուածութիւնը Մայր Հայրենիքի եւ Ս. Էջմիածնի հետ երեւացին համաշխարհային Բ. պատերազմի տարիներին խորհրդային բանակի համար կատարուած հանգանակութեամբ, 1946ին ներգաղթին զանգուածային հայրենադարձութեամբ եւ Վազգէն Ա., Գարեգին Ա. եւ Գարեգին Բ. կաթողիկոսների Եգիպտոսի հայոց թեմին տրուած հայրապետական այցելութիւնների ժամանակ:

Վազգէն Ա.ի Գահիրէ հայրապետական առաջին այցելութիւնը համայնքային եւ թեմական չէր, այլ կապուած էր Հայ Եկեղեցու տագնապի հետ եւ բնականաբար, անցաւ լարուած պայմաններում:

Հայրապետական առաջին այցելութիւնն, ըստ էութեան, տեղի ունեցաւ 1964ին, յաջորդելով Խորէն Ա. կաթողիկոսի հետ պատմական ողջագուրմանը, եւ անցաւ աննախադէպ խանդավառութեան մթնոլորտում:

1964 Նոյեմբերի 2ին, երբ հայոց հայրապետը Գահիրէ է ժամանում, օդակայանում դիմաւորում են 3000 եգիպտահայեր, գլխաւորութեամբ թեմակալ առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանի, Աղեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ Զաւէն վրդ. Չինչինեանի եւ աւետարանական ու կաթողիկէ համայնքների առաջնորդների: Եգիպտոսի ունեցած միջեկեղեցական կարեւորութիւնը ընդգծւում է նաեւ այն հանգամանքով, որ դիմաւորողների թւում էր եւ հայրապետական այցելութեան ընթացքում վեհափառի հետ քանիցս հանդիպեց Ղպտի Եկեղեցու պետ Կիւրեղ պատրիարքը:

Եգիպտոսում Վազգէն Ա.ը այցելում եւ պատարագ է մատուցում Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցում, ինչպէս նաեւ Աղեքսանդրիայի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում, հանդիպումներ ունենում համայնքային կազմակերպութիւններում եւ կրթամշակութային հաստատութիւններում[188]:

Յաջորդ տարի՝ 1965 Յունուարին, Արեւելեան Եկեղեցիների առաջնորդների եւ ներկայացուցիչների Ատիս Ապեպայի նշանաւոր հանդիպմանը, որն անցաւ Եթովպիայի կայսեր մասնակցութեամբ, գնալիս Վազգէն Ա.ը նախ լինում է Եգիպտոսում՝ Յունուարի 13-14ին: Դարձեալ «Հրաշափառ»ով մուտք է գործում Գահիրէի հայոց եկեղեցի եւ առաջնորդարանում հանդիպում համայնքային կառոյցների ներկայացուցիչներին, ապա ուղեւորւում Ատիս Ապեպա[189]:

Երուսաղէմում, Աղեքսանդրիայում եւ մի շարք այլ վայրերում գումարուած միջեկեղեցական կարեւոր համաժողովներին մասնակցելու համար

---

[188] Վազգէն Ա.ի հայրապետական այս ուղեւորութեան մասին տե՛ս՝ «Տ. Տ. Վազգէն Ա վեհափառ հայրապետի չորրորդ ուղեւորութիւնը արտասահման» յօդուածի՝ «Վեհափառ հայրապետը Եգիպտոսում» բաժինը, *Էջմիածին*, Բ-Գ:1964, էջ 84-113:

[189] «Վեհափառ հայրապետը Եգիպտոսում», *Էջմիածին*», Ե-Է:1965, էջ 30-38:

Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների Գահիրէով գնալը շարունակութիւնն էր Եգիպտոսի՝ որպէս նաւահանգիստների երկրի, միջոցով տարբեր տեղեր ուղեւորուելու միջնադարից եկող հայկական աւանդոյթի եւ այդ հարցում Եգիպտոսի հայոց թեմին վերապահուած դերի:

Գահիրէում 1964 Նոյեմբերի 7ին Գահիրէի եգիպտացի ճարտարապետերի սրահում հանդիսաւորապէս նշում է Մամբրէ արք. Սիրունեանի գործունէութեան 40ամեակը, որին հանդիսապետում է այդ ժամանակ հայրապետական այցելութեամբ Եգիպտոսում գտնուող Վազգէն Ա.ը[190]: Տպագրում է *Քառասնամեայ յոբելեան* գրքոյկը:

Երկու տարի անց՝ 1966 Յուլիսի 17ին նշում է Մամբրէ սրբազանի կուսակրօն հոգեւորական ձեռնադրուելու 50ամեակը, որը եւս կատարւում է խանդավառ մթնոլորտում եւ դժուար էր պատկերացնել, որ երեք ամիս անց՝ Հոկտեմբերի 13ին անակնկալ հիւանդութիւնը կտրելու էր Հայոց Եկեղեցու տարեց, բայց եւ գործելու եռանդով լի հոգեւորականի կեանքի թելը[191]:

Զաւէն արք. Չինչինեան (1972-2004 վխճ.)

Մամբրէ սրբազանի վախճանուելուց մէկ տարի առաջ՝ 1965ին, Ս. Էջմիածնում, ձեռամբ Վազգէն Ա.ի, եպիսկոպոս է ձեռնադրւում Զաւէն արք. Չինչինեանը, որը միանշանակ չի ընդունւում եւ տարակոյսների տեղիք է տալիս: Զաւէն սրբազանը այդ ժամանակ առաջնորդական փոխանորդն էր Աղեքսանդրիայի հայոց թեմի: Այնինչ եպիսկոպոս ձեռնադրւում էին թեմակալ առաջնորդ ընտրուելուց եւ կաթողիկոսական հաստատումից յետոյ:

Այս ձեռնադրութիւնը ընկալուեց որպէս ճնշում Մայր Աթոռի կողմից թեմի վրայ՝ յաջորդ առաջնորդի նշանակման հարցում, թէեւ Զաւէն սրբազանը մինչեւ այդ անբասիր ծառայել էր եգիպտահայ համայնքում:

Ծնուել է 1929ին, Հալէպում: Մամբրէ սրբազանի հրաւէրով 1958ից Աղեքսանդրիայի հայոց փոխառաջնորդն է դառնում[192]:

1969ին թէեւ ընտրւում է Եգիպտոսի առաջնորդական տեղապահ, սակայն առաջնորդութիւնը հաստատող ընտրութիւն տեղի չի ունենում: Վազգէն վեհափառը 1969 Յունուարի 14ի կոնդակով Սիոն արք. Մանուկեանին նշանակում է հայրապետական պատուիրակ Եգիպտոսում[193]:

---

[190] Տես՝ Վազգէն վեհափառի Եգիպտոս ուղեւորութեանը նուիրուած նիւթի՝ «Վեհափառ հայրապետը նախագահում է Մամբրէ արքեպիսկոպոսի 40ամեայ յոբելեանական հանդիսութեան» բաժինը, *Էջմիածին*, Բ-Գ:1964, էջ 102:

[191] Մամբրէ արք. Սիունեանի մասին տե՛ս նաեւ՝ *Ջահակիր*, Հոկտեմբեր 13, 1966:

[192] Զաւէն եպս. Չինչինեանի այս շրջանի եկեղեցական գործունէութեան մասին տե՛ս՝ եպիսկոպոսական ձեռնադրութեան առիթով գրուած կենսագրութիւնը՝ «Գերաշնորհ Տ. Զաւէն եպիսկոպոս Չինչինեան», *Էջմիածին*, ԺԱ.-ԺԲ:1965, էջ 88:

[193] *Էջմիածին*, Յունուար 1969, էջ 3-4:

1970 Յուլիսի 7ին Աղեքսանդրիայում տեղի եւ Գահիրէի հայոց թեմերի միացեալ ժողովում Զաւէն սրբազանը, ով նշւում է որպէս Աղեքսանդրիայի թեմի առաջնորդական փոխանորդ, ընտրւում է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական տեղապահ: Ժողովի մասնակիցները հեռագրով դիմում են Վազգէն Ա.ին, որպէսզի հաստատուի ընտրութիւնը[194]:

1972 Ապրիլի 28ին, երբ համայն Ռուսիոյ Պիմէն պատրիարքը Եգիպտոսի եւ համայն Ափրիկէի Յոյն Օրթոտոքս Եկեղեցու պատրիարքի հրաւէրով գալիս է Եգիպտոս, Գահիրէի օդակայանում հայ համայնքի պատուիրակութիւնը գլխաւորող Զաւէն սրբազանը դարձեալ յիշւում է որպէս Եգիպտոսի հայոց առաջնորդական տեղապահ[195]:

Նոյն թուականի Սեպտեմբերին Վազգէն վեհափառի ծննդեան 60ամեակի եւ գահակալութեան 15ամեակի առիթով կառուցւում են երկու մարմարեայ խորաններ Աղեքսանդրիայի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում եւ այս մասին Զաւէն սրբազանը Վազգէն վեհափառին գրում է, որպէս առաջնորդական տեղապահ[196]:

Եգիպտահայութիւնը, սակայն, այնուհետեւ առաջնորդական տեղապահ է ընտրում Երուսաղէմի հայոց պատրիարքութեան միաբան Ներսեհ ծայրագոյն վարդապետ Բապուճեանին, որից յետոյ Զաւէն սրբազանը Ամերիկա է գնում:

Եգիպտահայութիւնը Զաւէն սրբազանին 1977ին ընտրում է առաջնորդ, որն այնուհետեւ հաստատում է Վազգէն Ա.ը:

Եգիպտահայութիւնը բարձր գնահատելով թեմում սրբազանի կատարած աշխատանքը, առաջնորդական ընտրութիւններից յետոյ դիմում է Վազգէն Ա.ին, որպէսզի Զաւէն եպիսկոպոսին շնորհուի արքութեան պատիւ: Հայոց հայրապետը եւս արժեւորելով առաջնորդի գործունէութիւնը, 1979 Հոկտեմբերի 26ի կոնդակով շնորհում է արքութիւնը[197]:

Զաւէն Սրբազանը եւս շարունակում է թեմում միջեկեղեցական գործունէութեան ձեւաւորուած աւանդները, որին, ինչպէս ասացինք, նպաստում են թեմի աշխարհագրական դիրքը եւ այն հանգամանքը, որ Եգիպտոսում են գտնւում Հին Արեւելեան Եկեղեցիների կենտրոնները, ինչպէս նաեւ քրիստոնէութեան առաջին դարերի հետ կապուած եւ անապատական նշանաւոր կենտրոններ եղող մի շարք սրբավայրեր:

Ասուածի բնորոշ օրինակն էր Պիմէն պատրիարքի գլխաւորած պատուիրակութեան հետ հանդիպումները եւ հիւրընկալումը Գահիրէի հայոց առաջնորդարանում:

---

[194] «Առաջնորդական տեղապահի ընտրութիւն Եգիպտոսում», *Էջմիածին*, Թ:1970, էջ 65:

[195] «Մոսկուայի եւ համայն Ռուսաստանի նորին սրբութիւն Տ. Պիմէն պատրիարքի հովուական այցելութիւնը«, *Էջմիածին*, Է:1972, էջ 13-17:

[196] *Էջմիածին*, Հոկտեմբեր 1972, էջ 72-73:

[197] *Էջմիածին*, Նոյեմբեր 1979, էջ 7-8:

Զաւէն սրբազանը 1984ին մասնակցում է Ստեֆանոս Սիտարուս պատրիարքի ծննդեան 80ամեակի հանդիսութիւններին՝ Ղպտի Եկեղեցու պատրիարքարանում եւ Ս. Մարկոս եկեղեցում[198]:

1984 Դեկտեմբերի 18ին Սինայի Ս. Կատարինէ վանք ուխտագնացութեան են գալիս Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչները: Դեկտեմբերի 20ին նրանք այցելում են Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ապա առաջնորդարանում համայն Ռուսիոյ Պիմէն պատրիարքի կոնդակով թեմակալ առաջնորդին պարգեւատրում են Ռուս Եկեղեցու «Ս. Սերգի Ռոդոնեժսկու» շքանշանով[199]:

1987 Յունիսի 6ին Գահիրէի հայոց առաջնորդանիստ եկեղեցի եւ առաջնորդարան է այցելում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար Էմիլիօ Կաստրօն[200]:

1988 Ապրիլի 25ին անկլիքան նորակառոյց եկեղեցու օծմանն է մասնակցում Զաւէն սրբազանը[201]:

2001 Նոյեմբերի 9ին յանուն վեհափառ հայրապետի՝ Զաւէն սրբազանը մասնակցում է Շենուտա Գ. պատրիարքի 30ամեակի հանդիսութեանը[202]:

Նման թուարկումը կարելի է երկար շարունակել:

Զաւէն արք. Զինչինեանի ծննդեան 60 եւ քահանայական ձեռնադրութեան 40ամեակների առիթով 1989 Նոյեմբերի 14ին սրբազանին՝ շնորհաւորական հեռագիր է յղում Վազգէն Ա.ը՝ բարձր գնահատելով նրա գործունէութիւնը Եգիպտոսի հայոց թեմում[203]: Վազգէն Ա.ը նշում է, որ քահանայական գործունէութեան 40 տարիներից երեսուներեքը անցել են Եգիպտոսում:

Երջանկայիշատակ Գարեգին Ա.ը ամէնայն հայոց կաթողիկոս ընտրուելուց յետոյ 1998 Յունուարի 14-24ը այցելում է Եգիպտոս, զուգակցելով հայրապետական, որպէս միջեկեղեցական եւ հովուապետական, որպէս հայոց հայրապետ Եգիպտոսի թեմին տրուած այցելութիւնները, քանի որ մեկնում է Շենուտա Գ. պատրիարքի եւ թեմի առաջնորդ Զաւէն արքեպիսկոպոս Զինչինեանի միացեալ հրաւէրով: Այս հանգամանքը մէկ անգամ եւս ընդգծում է Եգիպտոսի հայ եկեղեցական կեանքում եւ միջեկեղեցական յարաբերութիւններում ունեցած առանձնայատուկ նշանակութիւնը:

Ս. Էջմիածնի եւ հայոց հայրապետի ունեցած միջեկեղեցական բարձր հեղինակութեան արտայայտութիւնն է դառնում Շենուտա Գ. պատրիար-

---

198 *Էջմիածին*, Մարտ 1984, էջ 53-54:

199 *Էջմիածին*, Փետրուար-Մարտ 1985, էջ 27:

200 *Էջմիածին*, Օգոստոս 1987, էջ 18-19:

201 *Էջմիածին*, Մայիս-Յունիս 1988, էջ 29:

202 «Գահիրէում նշուեց Շենուտա Գ. պատրիարքի գահակալութեան 30ամեակը», *Էջմիածին*, Ժ-ԺԱ:2001, էջ 141-42:

203 *Էջմիածին*, Նոյեմբեր-Դեկտեմբեր, 1989, էջ 24:

քի հետ Գահիրէի Ս. Մարկոս տաճարում կատարուած արարողութիւնը, որին ներկայ են լինում 5000 հաւատացեալներ:

Այս այցելութիւնը եգիպտահայութեան համար դառնում է եւս մէկ առիթ առաւել ամրացնելու կապը Հայրենիքի եւ Ս. Էջմիածնի հետ, որը ընդգծւում է հայրապետական ողջ այցելութեան ընթացքում թէ՛ Գահիրէում եւ թէ՛ Աղեքսանդրիայում: Միաժամանակ երեւում է թեմական կառոյցի եւ ազգային կազմակերպութիւնների ներդաշնակ գործունէութիւնը[204]:

Հայրապետական այս այցելութիւնը եւս վկայում է, որ չնայած հայերի՝ Եգիպտոսից շարունակուող արտագաղթին, եկեղեցական եւ համայնքային կառոյցները պահել են կենսունակութիւնը եւ շարունակում են իրենց գործունէութիւնը[205]:

Գարեգին Բ.ը եւս բարձր է գնահատում Զաւէն արք. Զինչինեանի գործունէութիւնը որպէս Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ: Ի գնահատութիւն սրբազանի քահանայագործութեան 50 եւ առաջնորդական գործունէութեան 40ամեակների եւ ծաւալած արդիւնաշատ գործունէութեան, հայոց հայրապետը 2000 Մարտի 27ի կոնդակով թեմակալ առաջնորդին պարգեւատրում է «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանով: Հայրապետական կոնդակում լաւագոյնս բնորոշուած է սրբազանի, որպէս թեմական առաջնորդի եւ թեմի գործունէութիւնն ու վիճակը. «*Ձեր հոգածու սպասաւորութեամբ շէն ու պայծառ է Եգիպտահայ գաղութի ազգային-եկեղեցական կեանքը, վառ է սէրն ու հաւատարմութիւնը հանդէպ հայրենի մեր Աւետեաց երկրի եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Մեզ համար հաճելի էր տեսնել Ձեր նկատմամբ բարեպաշտ հաւատացեալների սէրն ու յարգանքը, որին Դուք արժանացել էք Ձեր նուիրեալ ծառայութեամբ*»[206]:

Եռանդուն այս գործունէութեան շրջանում Զաւէն արք. Զինչինեանը վախճանւում է 2004 Յունուարի 20ին: Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի է ունենում Յունուարի 25ին Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցում:

Յունուարի 25ին հոգեհանգստեան կարգ է կատարւում նաեւ Էջմիածնի մայր տաճարում[207]:

---

[204] Մ. Վարդանեան, «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա ամէնայն հայոց կաթողիկոսի հովուապետական անդրանիկ այցելութիւնը Եգիպտահայոց թեմ», Փետրուար-Մարտ, *Էջմիածին*, էջ 8-61:

[205] «Վեհափառ հայրապետի այցելությունը Եգիպտոս և Եթովպիա», *Էջմիածին*, Հոկտեմբեր 2000, էջ 4-24:

[206] *Էջմիածին*, Փետրուար-Մարտ 2002, էջ 12-13:

[207] «Հանգիստ Տ. Զաւէն արքեպիսկոպոս Զինչինեանի», *Էջմիածին*, Յունուար 2004, էջ 126:

Աշոտ եպիսկոպոս Մնացականեան (առաջնորդ՝ 2005ից)

Գարեգին Բ. ամէնայն հայոց կաթողիկոսի տնօրինութեամբ Աշոտ վարդապետ Մնացականեանը 2000 Հոկտեմբերին նշանակւում է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ:

Զաւէն արք. Զինչինեանի վախճանուելուց յետոյ 2004 Փետրուարի 21ին ընտրւում է առաջնորդական տեղապահ:

2005ին ընտրւում է առաջնորդ եւ ընտրութիւնը վաւերացւում է Գարեգին Բ.ի կողմից:

Չնայած եգիպտահայութեան շարունակուղ արտագաղթին, Աշոտ սրբազանի առաջնորդ դառնալուց յետոյ եւս շարունակւում են նախորդող շրջանի թեմական աւանդները, եկեղեցական կեանքը եւ միջեկեղեցական յարաբերութիւնները:

Շարունակում են կանոնաւոր գործել Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Աղեքսանդրիայի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցիները, ինչպէս նաեւ Աշոտ սրբազանի օրօք Հելիոպոլսի գերեզմանատան մատուռում ամէն ամիս Ս. Պատարագ է մատուցւում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Եգիպտոսի հայոց թեմի պատմութիւնը եկեղեցական կառոյցի տարբեր դրսեւորումներով հասնում է մինչեւ քրիստոնէութեան առաջին դարերը՝ այնտեղ հիմնուած հայկական վանքերով, ինչպէս նաեւ անապատական կենտրոններում հայ վանականների առկայութեամբ:

Վանական կեանքին զուգահեռ՝ պայմանաւորուած Եգիպտոսում ձեւաւորուած հայ համայնքի թուի մեծացմամբ, կազմաւորւում է նաեւ հայ եկեղեցական կառոյցը: Վերջինս կազմակերպուած թեմական կամ առաջնորդական դրութեան մէջ է դրւում Գրիգոր Բ. Վկայասէրի (կթդ. 1066-1105) Եգիպտոս այցելութեան ժամանակ:

Պայմանաւորուած Եգիպտոսի քաղաքական վարչակարգով, սահմանների փոփոխութեամբ եւ Կիլիկիայի հայկական պետութեան հետ ունեցած յարաբերութիւններով, Եգիպտոսի հայոց առաջնորդութիւնը նախ ենթարկուել է Կիլիկիայում գտնուող հայոց ընդհանրական հայրապետութեանը, ապա՝ ԺԴ. դարի առաջին տասնամեակներից Երուսաղէմի հայոց պատրիարքութեանը:

Եգիպտոսի հայ եկեղեցական կառոյցին վերաբերող տեղեկութիւնները, ինչպէս տեսանք, վկայում են, որ անգամ այն ժամանակներում, երբ առաջնորդներ չեն յիշւում, հայ եկեղեցական կեանքը նուազագոյնը շարունակուել է Գահիրէի հայկական մէկ եկեղեցով եւ հայկական գերեզմանոցին կից մատուռով:

Ինչպէս գրում է Ն. Տէրմիքայէլեանը՝ ԺԶ.-ԺԸ. դարերում հայ համայնքի թիւը թէեւ նուազեց, սակայն պատմական տարբեր ժամանակներում «*միշտ*

համայնքում գոյութիւն են ունեցել մէկ կամ երկու հայկական եկեղեցի, առաջնորդ եւ պաշտօնավարող այլ հոգեւորականներ»[208]:

1830ականներից թեմը ենթարկւում է Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը, կանոնաւորւում է եկեղեցական կեանքը եւ նոր եկեղեցիներ են կառուցւում:

Առաջին աշխարհամարտից յետոյ պայմանաւորուած Օսմանեան Կայսրութեան փլուզմամբ եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան եկեղեցական իշխանութեան Թուրքիայի տարածքով սահմանափակուելով, Եգիպտոսի հայոց թեմը ենթարկւում է Ս. Էջմիածնին:

THE ARMENIAN PRELACY OF EGYPT
(Summary)

Vardan Devrikyan
devrikyan@yahoo.com

Against the backdrop of an extensive study of the history of the presence of the Armenian Apostolic Church in Egypt, the author concludes that the history of the Armenian Apostolic Church in Egypt is divided into three major periods:

a) from the first centuries of Christianity up to the 1830s. This period is divided into three sub-periods. i) from the first Armenian monasteries founded in Egypt during the first centuries of Christianity until the establishment of a separate prelature by Gregory II Vkayaser in the 1070s, ii) from the 1070s to Ottoman rule in Egypt in 1517, iii) from the period of Ottoman rule to the establishment of a separate prelature under the Armenian Patriarchate of Constantinople in the 1830s.

b) from the 1830s until the end of World War I and the Lausanne Conference (mid-1920s). There was a separate prelature answerable to the Armenian Patriarchate of Constantinople.

c) after World War I and the Armenian Genocide. New geopolitical realities emerged and a separate prelature was constituted under the auspices of the Catholicosate of All Armenians of Etchmiadzin, which continues today.

The author outlines the institutional transformations the Armenian Church of Egypt has undergone and analyses the causes of these changes and their consequences.


[208] Ն. Տէրմիքայէլեան, *Եգիպտահայ գաղութը 16-18րդ դարերում*, Տպ. Նուպար, Գահիրէ, 1995, էջ 41:

From Success to Failure: Ohan Demirgian, Envoy of the Egyptian Khedive and Appointed Master of the Stables at the Court of the Swedish King 1866-1872

Ann Grönhammar
anngronhammar@gmail.com

An Armenian from Egypt arrived in Sweden in the summer of 1866. He presented himself as Habib Bey and offered King Charles XV (1826-72) of the United Kingdom of Sweden and Norway two horses as a gift from the Egyptian "Vice King", or Khedive, Ismail Pasha (1830-95). The Armenian Egyptian's appearance at the Swedish court attracted attention and curiosity. He was an unusual stranger in a homogeneously populated Northern European country. Very soon he became the King's favorite, known by his original Armenian name Ohan Demirgian. In addition to the accepted norms King Charles XV made Ohan his own particular courtier and envoy to Egypt, helped him become a naturalized Swede and appointed him his Master of the Stables. His title was usually given in French, "*Ecuyer du Roi.*"

Demirgian's meteoric career was unheard of. Before long he was nicknamed Adventurer, Fortune hunter or, even worse, the Demiurg, as he was rumored to exert a disastrous influence on the King.



Habib Bey, arriving in the summer of 1866 with two Arabic horses for King Charles XV as a gift from the Khedive of Egypt (Water color by Fritz von Dardel, private collection, photo Matti Östling, Royal Armoury)

Demirgian lived in Sweden between 1866 and 1872, with the exception of his yearly tours to Egypt. He was born in 1837 in Cairo and died in Marseille in 1877, according to Swedish sources. His father was Stephan Bey (1805-60), or in Ottoman Turkish, Istafan Rasmi Bey, who reached high positions in the Egyptian khedive's administration of Foreign Affairs, culminating in his appointment as Director, or Minister, from 1854 to 1857.[1] Stephan Demirgian had arrived in Egypt in 1812 together with a sister and their father Ohan Agha, as refugees from war around their home in Sebastia, or Sivas, in the center of modern Turkey. Ohan Agha, Ohan Demirgian's grandfather, served the khedive Muhammed Ali as commander of the Egyptian Cavalry.

Ohan Demirgian left Egypt, not because of unrest or war; in fact, he left what ought to have been a privileged position. In Sweden he had an enviable position by the King's side, a success he hardly could have dreamt of beforehand. The ultimate aim of this paper is, however, not to explore his success, but rather the failures that followed in Sweden as well as in Egypt.

I will start with a presentation of his Swedish period up to 1872 and his fatal plan for the widowed King's new marriage, later called the Krasinsky Affair. In this affair his two younger brothers unwillingly took part. His life ended five years later in deepest misery. He died in a hospital for mentally ill persons in Marseille in July 1877, supervised until the end by members of the staff of the Ministry of Foreign Affairs of the Swedish Norwegian Union.

***

Ohan Demirgian's personal story fascinated Swedes during his time in Sweden, as well as after. Contemporary press regularly published so-called bulletins, news of his comings and goings, or commented on him. There is a short chapter on him in each published biography of his protector, Charles XV. He is mentioned in other biographies of persons who had met him. He was used as a model for malicious characters in a couple of novels written around 1900.[2] No monograph on his life exists. In contrast to the interest in him from a Swedish perspective, his Egyptian background has been little explored.

---

[1] F. Robert Hunter, *Egypt under the Khedives, 1805-1879. From Household Government to Modern Bureaucracy*, The American University in Cairo Press, Egypt, 1999, Table 13, pp. 96-97n. 60 and 61, p. 246.

[2] Erik Axelsson (pseudonym Axel Kerfve), *Carl XV Kvinnornas Kung. Romantiserade Skildringar Från 1860-talet* (Charles XV, the King of Women, Romanticized Stories of the 1860s), Stockholm, 1897-1898 and idem, *På Carl XV:s tid. Konstnärsroman Från 1860-talet* (In the Time of Charles XV. An Artists' Novel of the 1860s), Stockholm, 1909.

In the second part I will search for his Egyptian context, the motives behind his departure from Egypt as well as the reception he had in his native country as a European King's favorite or protegée.

The contemporary Ministry of Foreign Affairs' attention to him reveals the state of affairs in Egypt, not least the importance of Armenians in the Khedival bureaucracy. The foremost politician among them, Nubar Pasha, plays a prominent part in the entire Demirgian family story. Archival sources are of particular interest in this section.

Առանձնակի արժէք են ներկայացնում Սուետիայի հայութեանը վերաբերող փաստաթղթերը՝ նրանց Փոր Սայիտ նաւահանգիստ տեղափոխուելու առաջին օրուանից սկսած: Յիշեալ փաստաթղթերը յստակ տեղեկութիւններ են պարունակում նրանց թուի, կազմի, ֆիզիկական ու նիւթական դրութեան, անգլիական իշխանութիւնների վերաբերմունքի եւ եգիպտահայ համայնքի կողմից տարիներ շարունակ ցուցաբերուած հսկայական հոգածութեան մասին: Գահիրէի ու Աղեքսանդրիայի ազգային առաջնորդարանների եւ ազգային իշխանութիւնների կողմից կատարուեցին ամէնօրեայ քրտնաջան ու մեծածաւալ աշխատանքներ՝ սուետիահայութեան հրաշքով փրկուած հատուածին պատսպարելու, սնունդ ու հագուստեղէն հասցնելու, բժշկական օգնութիւն ցուցաբերելու, աշխատունակների համար նոր գործատեղեր ստեղծելու, դպրոցահասակ երեխաների կրթութեան համար բացուած «Սիսուան»[25] երկսեռ վարժարանի գործունէութիւ-

---

[22] ԳԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 3, թ. 32:

[23] ԳԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 2, թ. 11:

[24] ԳԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 5, թ. 6:

[25] Փոր Սայիտի «Սիսուան» վարժարանը հիմնուել է 1915 Հոկտեմբերի 14ին ՀԲԸՄիութեան կողմից, տեղի վրանաքաղաքում պատսպարուած գաղթականների 1253 երկսեռ երեխաների համար: Սկզբում այն տեղաւորուած էր անգլիական կառավարութեան տրամադրած 36 վրանների տակ, որոնք յետագայում փոխա-

նը կազմակերպելու, որբերի որդեգրման գործընթացը վերահսկելու եւ այլ կարգի օժանդակութեան համար:

Միաժամանակ եգիպտահայ հոգեւոր ու ազգային իշխանութիւնների գլխաւորութեամբ, ու տարբեր ազգային կառոյցների գործուն մասնակցութեամբ շարունակւում էր պատմական յայտնի ողբերգական իրադարձութիւնների հետեւանքով օրհասական դրութեան մէջ յայտնուած ազգայիններին օժանդակելու գործընթացը: Գահիրէի ազգային առաջնորդարանի արխիւում պահպանուել են բազմաթիւ ստացականներ, որոնք հաստատում են վերոգրեալը: Բազմաթիւ փաստաթղթերից մէջբերենք մէկ-երկու օրինակ.-

1. 23 Դեկտեմբեր 1918, Հոմս.- «Եգիպտոսի Հայ Ազգային Միութեան, Բարեգործականի, Նպաստամատոյցի եւ Որբախնամի պատուիրակ Տիար Ռուբէն Հերեանէ ստացայ հարիւր եգիպտական ոսկի (թղթադրամ): Ի դիմաց Հայ Ազգ[ային] Միութեան (Հոմսի)՝ Գանձապետ»[26]:

2. 29 Դեկտեմբեր 1918.- «Ստացանք Եգիպտահայ Բարեգործական Ընկերութիւններու պատուիրակ Պ. Ռ. Հերեանէ Սէլիմիէի հայ տարագրեալներու համար 100 եգիպտական ոսկի թղթադրամ: Համայի Հայ Ազգ[ային] Միութեան Նախագահ՝ Ներսէս քահանայ Թաւուզճեան»[27]

3. 31 Դեկտեմբեր 1918, Դամասկոս.- «Ստացայ եգիպտահայ պատուիրակութեան անդամ Պ. Կարապետ Սեֆէրեանէ (60) վաթսուն եգիպտական ոսկի՝ իբր կօշիկի փոխարժէք, ի նպաստ ազգային եւ Մէզզէի որբանոցներուն մէջ պատսպարուած շուրջ հինգ հարիւր հայ որբերու: Նախագահ Որբախնամի եւ Ընդհ[անուր] Վարիչ Ազգային Որբանոցի՝ Կարապետ եպիսկոպոս Մազլումեան»[28]:

4. 14 Յունուար 1919, Հոմս.- «Ստացայ Եգիպտահայ Պատուիրակութեան անդամ Տիար Կ. Սեֆէրեանէ (200) երկու հարիւր եգիպտական ոսկի, որուն (70) եօթանասուն եգիպ[տական] ոսկին՝ ի նպաստ դուրսը մնացած հացակարօտ ազգայիններու Ս. Ծննդեան առթիւ, (60) վաթսուն ոսկին՝ իսլամ տուներէ ազատուելիք հայուհիներու անկողնոյ եւ նախնական ծախքերու համար եւ մնացած (70) եօթանասուն ոսկին՝ Հայ Ազգ[ային] Միութեան եռամսեայ ստիպողական պէտքերուն (դպրոց, քահանայ, ապաստարանի վարձք եւ պաշտօնէութիւն եւ այլ եւ այլ նպաստք) լրացման համար: Ի դիմաց Հոմսի Հայ Ազգային Միութեան՝ վասն Ատենապետի Գ. Ա.»[29]:

րինուեցին 6 եղէգնապատ շէնքերով եւ 6 խոշոր վրաններով: Այն Փոր Սայիտում գործել է մինչեւ 1919:

[26] ԳԱԱԱ, հ. 20, ց. 1, գ. 33, թ. 5:

[27] ԳԱԱԱ, հ. 20, ց. 1, գ. 33, թ. 7:

[28] ԳԱԱԱ, հ. 20, ց. 1, գ. 33, թ. 12:

[29] ԳԱԱԱ, հ. 20, ց. 1, գ. 33, թ. 22:

5. 23 Մարտ 1919, Ատանա.- «Ես՝ ի ներքոյ ստորագրեալս Օհան Գարամանուկեան, կամաւոր Հայ Լեգէոնի հինգերորդ վաշտին, Եգիպտոսի Հայ Ազգ[ային] Միութեան հաշուոյն ստացայ Տիար Մ. Եփրէմեանէ ե-գ[իպտական] դիկ. 400 նպաստ: Օհան Գարամանուկեան»[30]:

Առաջին աշխարհամարտից յետոյ Կիլիկիայի հայաթափութեան խնդիրներով զբաղուող հետազօտողի համար եզակի արժէք են ներկայացնում Գահիրէի ազգային առաջնորդարանի արխիւային հաւաքածուներում պահպանուող մեծի տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսի կողմից Հայ Եկեղեցու ակնառու գործիչ, Եգիպտոսի բազմամեայ առաջնորդ, յետագայում Երուսաղէմի հայոց պատրիարք Թորգոմ եպս. Գուշակեանին ուղղած շուրջ երկու տասնեակի հասնող նամակները, որոնք առժանահաւատ տեղեկութիւններ են պարունակում Հաճընի հայկական կոտորածների, ֆրանսիական զինուորական իշխանութիւնների հետ ունեցած հանդիպումների, ֆրանս-թուրքական համաձայնագրից յետոյ Կիլիկիայի ազգային փոքրամասնութիւնների մէջ առաջացած խուճապի, սկսուած արտագաղթի եւ Կիլիկիայի ընդհանուր կացութեան եւ օրհասական դրութեան մասին:

1921 Նոյեմբերի 6ին Թորգոմ եպիսկոպոսին յղած մի նամակում նա գրում է. «*Կեանքի վերջին օրերը կ'ապրինք: Ափսոս եւ ամբողջ Կիլիկիան սուգի պատանքով պատուած է: Ամէն ոք խուճապի մատնուած՝ ժամ առաջ մեկնելու կը պատրաստուի: Առաջնորդարանը՝ արեւի ծագումէն մինչեւ մուտը, հազարաւորներ խոնուած են փասի*[31] *համար: Ճէպը մէկ թուղթ ունեցողը յօժար է այդ թուղթի զոհողութեան, միայն փաս մը ձեռք անցընէ: Ո՛չ ոք կը համարձակի հարցնելու, ու՞ր կ'երթաք եւ ինչո՞վ պիտի երթաք: Այսօրուայ թուով ընդարձակօրէն գրեցի ի Պատրիարքարան, որպէսզի Պոլսէն դիմումներ կատարեն, նոյնը Ձեզմէ կը խնդրեմ, որ գոնէ ի Փարիզ Պատուիրակութեան հաղորդէք կացութեան ծանրութիւնը. համամիտ չեմ գաղթումին ու ո՛չ ալ մնացէք կարող եմ ըսել. երկուքն ալ մահ են եւ ժողովուրդը դէպ ի գերեզման կ'առաջնորդեն*»[32]:

Կիլիկիայի հայաթափումից յետոյ տարագիր կաթողիկոսի նամակները տեղեկութեան շտեմարան են Հալէպում, Դամասկոսում, Թրիփոլիում, Պէյրութում, Իսկենտէրունում, Լաթաքիայում, Սուրում, Սայտայում եւ այլուր հանգրուանած կիլիկիահայ գաղթականների թուի, նրանց ծանր վիճակի, որբերի տեղաւորման եւ այլ օրհասական խնդիրների մասին: 1922 Մարտի 16ին Սահակ Բ. կաթողիկոսը Պէյրութից գրում է. «*Դամասկոսէն նոր վերադարձանք, ամէն տեղ գաղթականաց վիճակը նոյնն է, կարօտութիւն, անպատսպարան, դատարկութիւն մեծ մասին համար եւ տարագ-*

[30] ԳԱԱԱ, հ. 20, ց. 1, գ. 33, թ. 32:
[31] Նկատի ունի անցաթուղթ:
[32] ԳԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 28, թ. 15:

րութեան արիւնոտ շրջանը շատ երջանիկ էր, քան ներկայ անարիւն գաղթականութիւնը. եթէ մխիթարութիւն մի կայ, այն է, որ վերադարձի յոյսը ամէնուն մէջ անմեռ է, եւ այդու փոքր ինչ կը մեղմանայ տառապանքը»[33]:

Կիլիկիայի հայաթափումից յետոյ ազգի առջեւ ծառացաւ զանազան վայրերում պատսպարուած կիլիկիահայ գաղթականութեան խնամատարութեան, նրանց վերջնական կործանումից փրկելու հարցը: Պատկառելի տարիքի հասած Սահակ Բ. կաթողիկոսը անձամբ տեղից տեղ էր շրջում (իր իսկ խօսքերով ասած՝ «պիտի պտտիմ, ուր որ գաղթական կայ. հոգիս յօժար է, մարմինս՝ տկար»[34]) եւ սեփական աչքերով տեսնելով գաղթականների վիճակն ու կարիքի չափը, միջոցներ էր ձեռք առնում տարբեր աղբիւրներից ստացուող մարդասիրական օգնութիւնը առաւել արդիւնաւէտ դարձնելու ուղղութեամբ: 1922 Յունուարի 20ին նա Թորգոմ եպիսկոպոսին գրում է. «*Ափանացին միայն ափանացիին կարօտութիւնը կը տեսնէ, սսեցին, տարսոնցին, մերսինցին, ճիհանցին, փէօրթ եոլցին եւ ամանոսցին նոյնպէս, բայց մենք ամէնուն կարօտութեանց իրենց իսկութեան մէջ տեսնելու պարտաւոր եմք, հետեւաբար մենք գիտենք միայն իւրաքանչիւր գաղթականի կարօտութեան չափը: Լաւագոյնն է ըստ մեզ՝ ամէն օգնութիւն եւ աջակցութիւն մեր անունով ղրկելը, եւ անոնց բաժանումը մէկ խղճի թողուլը աւելի ապահով միջոց մ'է, քան թէ բազում խղճերու յանձնելը, որոնք կարելի չ'ըլլար համաձայնեցնել*»[35]:

Այս նոյն ժամանակաշրջանում Եգիպտոսի հայ համայնքի համար ստեղծուել էր բաւականին դժուարին կացութիւն: Դեռեւս 1919 Ապրիլին մահմեդական ազգայնականների կողմից Գահիրէում տեղի ունեցան հակահայկական գործողութիւններ, որոնք ուղեկցւում էին հայերի բնակարանների ու խանութների վրայ կատարուած յարձակումներով: Այդ ընթացքում թալանուեցին ու այրուեցին հայերի տներ ու խանութներ[36]: Վնասի չափը գնահատւում էր մօտ 400,000 ոսկի[37]: Այս իրադարձութիւնները, անկասկած, թուլացրեցին տեղի հայերի տնտեսական դրութիւնը: Միւս կողմից, միաժամանակ՝ համայնքը շարունակում էր իր ուսերին կրել տեղում պատսպարուած գաղթականների ու որբերի խնամատարութեան դժուարին գործը: Պատկերը առաւել ամբողջացնելու համար նշենք, որ միեւնոյն ժամանակ Գահիրէի ազգային առաջնորդարանի ու բարեսիրական կազմակերպութիւնների հասցէներով աշխարհի տարբեր կողմերից ստացւում էին հարիւրաւոր նամակներ՝ օգնութեան խնդրանքներով:

Բերենք միքանի օրինակներ.-

---

[33] ԳԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 28, թ. 35:
[34] ԳԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 28, թթ. 11-13:
[35] ԳԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 28, թթ. 11-13:
[36] ԳԱԱԱ, հ. 1, ց. 3, գ. 197, թթ. 1 – 6:
[37] ԳԱԱԱ, հ. 19 ց. 1, գ. 39, թթ. 43-44:

Ա. 1921 Հոկտեմբերի 4.- Գահիրէի քաղաքական ժողովը որոշում է. «օգնութիւն փութացնելու Հայաստանի սովատանջ մանուկներուն, որոնք ստացուած հաւաստի տեղեկութեանց համաձայն՝ ամէն օր տասնեակներով կը մահանան»[38]:

Բ. 1922 Ապրիլ 22.- Քաղաքական ժողովին զեկուցւում է. «Ազգային դատին պաշտպանութիւնը բազմազան ծախուց կարօտ է եւ կը խնդրուի, որ Եգիպտոսի մէջ անյապաղ հանգանակութիւն կատարուի եւ արդիւնքը Փարիզ ղրկուի»[39]:

Գ. 1922 Յունիս 10.- Թորգոմ եպիսկոպոսին տեղեկացւում է Թաւրիզից Ներսէս եպիսկոպոս Մելիք-Թանգեանի հեռագրի մասին, թէ՝ «Վարժարանները փակուելու վտանգի մէջ են, պատճառը նիւթականի պակասն է, օգնութեան հասէք»[40]:

Դ. 1922 Յունիս 14.- Գահիրէի քաղաքական ժողովը լսեց. «Հայաստանի Կարմիր Խաչի Վարչութենէն, որու կեդրոնը Երեւանի մէջ է, թղթեր հասած են Առաջնորդարանս, որոնցմով ծանուցանելով զանազան հիւանդութեանց ժողովրդեան մէջ ճարակած ըլլալը, կը խնդրեն դեղերու առաքում»[41]:

Ե. 1922 Սեպտեմբեր 19.- Գահիրէի քաղաքական ժողովը քննարկեց Կ. Պոլսից ստացուած հետեւեալ հեռագիրը. «Զմիւռնիան թուրքերը գրաւած ըլլալով յոյներուն ձեռքէն, այդ միջոցին հայոց թաղը հրկիզուած[42], շատ հայեր սպաննուած եւ հազարաւոր հայեր անպատսպար մնացած են եւ ուրիշ քաղաքներ ապաստանած. սորանց օգնութեան հասնելու համար Պոլսոյ Հայրենիքի Օգնութեան Մարմինը հեռագրով օգնութիւն ուզած է»: Որոշուեցաւ Եգիպտոսի հայ մեծահարուստներուն դիմում ընել եւ նպաստ խնդրել[43]:

Զ. 1922 Նոյեմբեր 25.- Գէորգ Մեսրոպը օժանդակութիւն է խնդրում Ֆիլիպէում բարձրագոյն հայոց վարժարան հիմնելու համար[44]:

---

[38] ԳԱԱԱ, հ. 1, ց. 1, գ. 5, թ. 7:

[39] ԳԱԱԱ, հ. 4, ց.2.1, գ. 27, թթ. 12-17:

[40] ԳԱԱԱ, հ. 1, ց. 3, գ. 181, թ. 58:

[41] ԳԱԱԱ, հ. 4, ց.2.1, գ. 27, թթ. 40-44:

[42] Խօսքը 1922 Սեպտեմբերի 13ին Իզմիրում (Զմիւռնիա) սկսուած եւ 4 օր տեւած հրդեհի մասին է: Այն տեղի է ունեցել թուրքական բանակի կողմից քաղաքի զաւթումից 4 օր անց, որը փաստացի վերջ հանդիսացաւ յոյն-թուրքական պատերազմին: Այս մասին տե՛ս՝ Թեհմինէ Մարտոյեան, «1922 Սեպտեմբեր. Զմիւռնիայի հայերի եւ յոյների բնաջնջումը եւ քրիստոնէաբնակ թաղամասերի հրկիզումը», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 41:2021, էջ 199-220:

[43] ԳԱԱԱ, հ. 4, ց. 2.1, գ. 27, թթ. 109-110:

[44] ԳԱԱԱ, հ. 2, ց. 1, գ. 49, թթ. 1-4:

Է. 1922 Դեկտեմբեր 4.- Կ.Պոլսի Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութիւնը Թորգոմ եպիսկոպոս Գուշակեանից օգնութիւն է խնդրում հայութեան փրկուած բեկորների խնամքի համար[45] եւն. եւն.:

Արխիւային փաստաթղթերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նմանատիպ հարիւրաւոր դիմումներին ու խնդրագրերին ընթացք էր տրւում ու օգնութեան որեւէ մէկ խնդրանք անպատասխան չէր մնում եւ եգիպտահայութիւնը շարունակում էր - առաւել կամ պակաս չափով – նիւթական օժանդակութիւն ցուցաբերել տարբեր վայրերում ծանր վիճակում յայտնուած հայութեանը: Տեղի էին ունենում հանգանակութիւններ ու զանազան այլ միջոցառումներ, որոնք կազմակերպւում էին հոգեւոր ու ազգային իշխանութիւնների, ազգային տարբեր կազմակերպութիւնների, ընկերութիւնների, քաղաքական կուսակցութիւնների կողմից, հանգանակութիւններ էին կատարւում նաեւ հայ աւետարանական եւ հայ կաթողիկէ համայնքների կողմից:

Ստորեւ ներկայացնում ենք Գահիրէի ազգային առաջնորդարանի դիւանապետ Նազարէթ Մամաս Աղազարմի կազմած առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչեւ 1921ը՝ ազգային կարիքների համար եգիպտահայ գաղութի կողմից հանգանակուած գումարների հաշուեցուցակը:

Գահիրէի ազգային առաջնորդարանում պահուող հազարաւոր փաստաթղթերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ յետագայ տարիներին եւս եգիպտահայ համայնքը անփոխարինելի օժանդակութիւն է ցուցաբերել ե՛ւ վերոյիշեալ ուղղութիւններով, ե՛ւ ալեւայլ մարտահրաւէրների առջեւ կանգնած հայութեան տարբեր հատուածներին, ինչպէս օրինակ՝ Յունաստանի եւ կղզիների հայ գաղթականութեանը (1923), Զմիւռնիայի եւ Փոքր Ասիայի հայ աղէտեալներին (1922-24), Հայաստանի վերաշինութեան եւ Զանգեզուրի երկրաշարժից տուժածներին (1924-31), Սիրիայի հայութեան քաղաքական տագնապի ժամանակ (1925-26), Թրիփոլիի հայ համայնքին օժանդակելու համար (1926-30), յունահայ համայնքին (1923-30), Քրաֆտ Պոնարի հայկական հաստատութիւնների օգտին (1929-30), Ճեպէլ-Մուսային ցուցաբերուած օգնութիւն (1930-38), Պէյրութի քեմփի հրկիզման աղէտի զոհերին (1933), Ալեքսանտրէթի սանճաքից գաղթած ազգայինների օգտին (1939-40), Սիրիայի եւ Պէյրութի հայ կարօտեալների համար (1942), «Հայ Վիրաւոր Զինուորի Ֆոնտ»ի ու «Սասունցի Դաւիթ Տանկային Շարասեան» օգտին (1942-45), Լիբանանի քաղաքացիական պատերազմից տուժածներին (1975-90), Սպիտակի երկրաշարժից տուժածներին եւն. եւն.:

Բարեբախտաբար, շատ դէպքերում, անգա՛մ պահպանուել են հանգանակութիւնների ու նուիրատուութիւնների ցուցակներ, որոնցում յակա-

[45] ԳԱԱԱ, հ. 2, ց. 1, գ. 55, թթ. 1-2:

նէ-յանուանէ նշուած են ե՛ւ հանգանակողի ե՛ւ տուժեալի անունները, գումարի չափը եւն.:

THE EGYPTIAN-ARMENIAN COMMUNITY'S SUPPORT TO THE CILICIAN ARMENIANS BETWEEN 1909 AND 1922 (Summary)

Gohar Avagyan
gohar-arkhiv@mail.ru

The first two decades of the 20th century were catastrophic for the Armenians. After a year of the Young Turks revolution, the Cilician Armenians were victims of the most terrible massacres they ever faced at the hands of the Ottoman Turks. Indeed, in 1909 some 30,000 Armenians were massacred in the Vilayet of Adana. These atrocities were soon to be followed by the Genocide committed on the Armenians by the same Young Turks authorities during WWI and after.

During the said period the Armenian community of Egypt was the most organized community in the Diaspora. Besides, as a British-occupied Ottoman area, Egypt became the place where the tiny Armenian community grew in numbers, culture and economy.

Being at a short distance from Asia Minor and the Armenian homeland, the Egyptian Armenians were deeply concerned about the destiny of their co-nationals, who were suffering persecution and massacres. Due to the presence of a significant number of Armenian intellectuals who had fled to Egypt from the Ottoman Empire, the community was instrumental in supporting their brothers and reliving their sufferings.

Upon the request of the Cairo prelacy authorities, the author has embarked on categorizing the archives of the prelacies of both Cairo and Alexandria. This endeavor has enabled the author to collect a number of documents pertaining to the financial support of the Egyptian-Armenian community of their brothers in dire need after the several massacres and killings they had gone through.

Accordingly, based on a number of documents from the archives of the prelacies, the author reconstructs the relief efforts of the community conducted between 1909 and 1922 extending from orphans and widows, the survivors of the Adana massacres, to the Armenians in the Port Said refugee camp and diverse orphanages in Cilicia, as well as orphans in Eastern Armenia.

Եգիպտոսի Հայ Որբախնամ Ընկերութեան Գործունէութիւնը (1916-1927)

Նարինէ Մարգարեան
nmargaryan@gmail.com

ՄՈՒՏՔ

Հայոց Ցեղասպանութեան տարիներին հայ երեխաների վիճակն ամէնաճանր էր: Տարագրութեան ճանապարհը յաղթահարելուց յետոյ, սիրիական անապատներում նրանց առջեւ ծառացած էր ոչ միայն վերապրելու խնդիրը, այլեւ մշտապէս սպառնացող ձուլման վտանգը: Այս պայմաններում սկսում են գործել (կամ վերակազմակերպւում են) բազմաթիւ միջազգային եւ հայկական կազմակերպութիւններ: Վերջիններիս թւում էր նաեւ Հայ Որբախնամ Ընկերութիւնը (ՀՈԸ):

Յօդուածի նպատակն է ներկայացնել Եգիպտոսում 1905ին ստեղծուած ու 1916 Օգոստոսին վերակազմաւորուած ՀՈԸի գործունէութիւնն ու հիմնական յառաջադրանքը՝ ջարդերից ու սովի արհաւիրքներից փրկուած հայ որբերին անհրաժեշտ օգնութիւն տրամադրել տարբեր դրսեւորումներով: Յօդուածում վերլուծուելու են ՀՈԸի կանոնադրութեան հիմնական յօդուածները, անդրադառնալու ենք նաեւ շարժման տարածմանը, նրա երկու մարմինների՝ ընդհանուր եւ վարչական ժողովների, Գահիրէի ու Աղեքսանդրիայի վարչութիւնների, ինչպէս նաեւ այլ մասնաճիւղերի ու օժանդակ կառոյցների գործունէութեանը: Անդրադարձ է կատարուելու ՀՈԸի կազմակերպած տարատեսակ հանգանակութիւններին ու գործակցութեանը՝ միջազգային ու հայկական բարեսիրական կազմակերպութիւնների հետ: Յօդուածի համար աղբիւրագիտական հիմք են ծառայել ՀՈԸի կանոնադրութիւնները, տեղեկագրերը, *Որբունի* պարբերաթերթը, ինչպէս նաեւ ժամանակի մամուլի հրապարակումները, որտեղ անդրադարձ է կատարուել ՀՈԸի գործունէութեանը:

ՀՈԸի ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբի հայկական արհաւիրքների առումով Եգիպտոսը դարձաւ հայկական կազմակերպութիւնների հիմնակէտը: Նա առաջինն արձագանգեց Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով սիրիական անապատներում ապաստանած հայ գաղթականներին, որբերին ու այրիներին օգնելու կոչերին, նախաձեռնութիւններին, ձեռնարկներին:

Սա զարմանալի չէ, որովհետեւ Եգիպտոսը, մասնաւորապէս Գահիրէն, տնտեսապէս զարգացման շրջան էր ապրում, այնտեղ էին ապաստանել համիտեան վարչակարգի վտարանդիները, քաղաքական ընդդիմադիր թուրքեր, բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաներ, հայ յեղափոխականներ, գրողներ ու լրագրողներ, որոնց հալածում էր սուլթան Ապտուլ

Համիտը: Գահիրէն ազատութեան ովասիս էր, բնական աքսորավայր, ուր այս մարդիկ վստահ էին, որ բարեացակամ ընդունելութիւն պիտի գտնեն[1]:

Եգիպտոսի հնամենի գաղութը ԺԹ. դարասկզբից նոր վերելք ապրեց՝ երկրի կառավարիչ Մուհամմատ Ալիի՝ հայերի հանդէպ ցուցաբերած դրական վերաբերումին պատճառով: 1820ականներից Մուհամմատ Ալին ինքզինք շրջապատեց նաեւ հայ վարչականներով որոնք ստանձնեցին երկրի տնտեսական, երկրագործական, մշակութային, արտաքին գործերի թէ այլ բազմաթիւ պարտականութիւններ: Տակաւ, փոքրաթիւ այս գաղութը զօրացաւ, նորեր եկան միանալու եւ ստուարացնելու թիւը գաղութին: Իսկ 1896ի եւ 1909ի կոտորածներից յետոյ արտաքսեալ թէ գաղթական հայեր, մտաւորականներ, յեղափոխականներ Եգիպտոսը վերածեցին ատենի հայկական ամէնաաշխուժ եւ կազմակերպ գաղութին:

Բրիտանական հովանու տակ գտնուող եւ Օսմանեան Կայսրութեան սահմանակից այս երկրի արեւելեան եւ արեւմտեան տարածքները (համապատասխանաբար՝ Աղեքսանդրիային եւ Լիպիային յարող) այն ռազմաճակատներն էին, ուր հակադրւում էին դաշնակից ուժերը եւ Սիրիայում, Պաղեստինում եւ Լիպիայի հարաւային շրջաններում տեղակայուած գերմանա-օսմանեան զօրքերը: Եգիպտոսում էր բրիտանական սպայակոյտը պատրաստում ծրագրերը՝ տարածաշրջանի ռազմական գործողութիւններին եւ վերահսկում դրանք, այստեղից էին սկիզբ առնում Օսմանեան Կայսրութեան արաբական նահանգների բաժանման ծրագրերը:

Մերձաւոր Արեւելքի խնդիրների մէջ Եգիպտոսի առանցքային դերն աւելի ընդգծուած է լինում Ա. աշխարհամարտի վերջին տարում, յատկապէս օսմանեան պարտութեան շրջանում, երբ դաշնակիցների զօրքերը ուղղւում են ծայրամասերից Փոքր Ասիա, իսկ գրաւուած շրջանները կառավարւում են ուղղակիօրէն բրիտանական վերին հրամանատարութեան կողմից, որի կենտրոնն էր Գահիրէն:

Անշուշտ, Եգիպտոսի զինուորական կառավարութիւնն իր ազդեցութիւնն է ունենում տեղի հայ համայնքի վրայ: Գահիրէի, Աղեքսանդրիայի հայ համայնքները իրենց պատասխանատու են համարում հայրենակիցների համար օգնութեան արշաւներ կազմակերպելու գործում: Եգիպտոսի համայնքի դերն աւելի է կարեւորւում, քանի որ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը պաշտօնապէս լուծարուած էր երիտթուրքական կառավարութեան կողմից: Ստեղծուած իրավիճակում հարկաւոր էր նախաձեռնող մի ուժ, որը կը կարողանար իր ձեռքը վերցնել հայ տարագիրների օգնութեան կազմակերպումը, կը կենտրոնացնէր օգնութիւնները, կը համակարգէր ու կ'առաջնորդէր դրսից եկող օգնութիւնների արդիւնաւէտ տեղաբաշխումը:

---

[1] Ռ. Յ. Գէորգեան, Վ. Թաշճեան, *Դար մը պայքարութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1940, հտր. Ա.,* Գահիրէ-Փարզ-Նիւ Եորք, 2006, էջ 17:

Դեռեւս 1905ին Գահիրէում ստեղծուած Միացեալ Որբախնամ Ընկերութեան[2] կանոնագրի առաջին յօդուածում կազմակերպութիւնը սահմանել էր իր նպատակը՝ «*Հասոյթի կէսով Հայաստանի եւ Կիլիկիոյ անփէրունչ եւ չքաւոր որբերը խնամել, եւ կէսովն ալ՝ կարօտ գաւառներու մէջ ուսում տարածել*»[3]:

1916 Մայիսին Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան ատենապետ, յետագայում՝ Միացեալ Որբախնամ Ընկերութեան գործադիր ժողովի ատենապետ Գարեգին Իսագուլեանը[4] միքանի անձանց հրաւիրում եւ առաջարկում է վերակազմել ու վերականգնել Գահիրէի Միացեալ Որբախնամ Ընկերութիւնը, որը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կազմալուծուել եւ անգործութեան էր մատնուել:

Նախկին անդամներից շատերն արագ միանում են անհրաժեշտութիւն դարձած գործի շուրջ եւ 1916 Մայիսին ասպարէզ են իջնում հետեւեալ յայտարարութեամբ,. «*Գահիրէի Միացեալ Որբախնամը վերակազմուած է, Հայաստանի անհամար որբերուն ի նպաստ վերստին գործելու եւ գոյացած գումարները անյապաղ պարբերաբար ղրկելու նպատակով Ամէնայն Հայոց Վեհափառ Հայրապետին*»[5]:

1916ին Աղեքսանդրիայում վերակազմաւորուած Որբախնամը Հայ Որբախնամ Ընկերութիւն (ՀՈԸ) անունով իր կանոնադրութեան առաջին յօդուածով գլխաւոր նպատակ է սահմանում. «*Ջարդին ու սովին արհաւիրքներէն ճողոպրած հայ որբերուն անմիջական նպաստ հասցնել, ըլլայ Հայաստանի, ըլլայ Կիլիկիոյ մէջ*»[6]:

Կանոնագրի երկրորդ յօդուածով նշւում է, որ Աղեքսանդրիայի Հայ Որբախնամը կարող է յարաբերութիւններ մշակել Գահիրէի Միացեալ Որբախնամ Ընկերութեան հետ՝ պարբերական թղթակցութեամբ եւ խորհուրդների փոխանակութեամբ եւ տարին գոնէ մէկ անգամ պատուիրակային ժողով գումարել: Քոյր հաստատութիւնները կարող են

---

[2] Միացեալ Որբախնամը ստեղծուել էր միքանի բարեսիրական ընկերութիւնների միաւորումով. դրանց թւում էին արդէն լուծարուած Վասպուրականի Որբախնամ, Ակնի Որբախնամ, Արաբկիրի Որբասիրաց ընկերութիւնները (Սուրէն Պայրամեան, *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ*, Նուպար, Գահիրէ, 2017, էջ 82. նաեւ՝ *Կանոնագիր Միացեալ Որբախնամ Ընկերութեանց հայոց ի Գահիրէ*, Օննիկ Հալէպեան, Գահիրէ, 1906, էջ 4-5):

[3] *Կանոնագիր Միացեալ Որբախնամ Ընկերութեանց հայոց ի Գահիրէ*, էջ 1:

[4] Իսագուլեանը Հայ Որբախնամ Ընկերութեան յետագայ աշխատանքներին չի մասնակցել, քանի որ մահացել է:

[5] Հ. Երամեան, «Որբ», *Որբունի*, 1919, թիւ 1, էջ 6:

[6] *Կանոնագիր Հայ Որբախնամ Ընկերութեան (Աղեքսանդրիա)*, Զ. Պէրպէրեան, Գահիրէ, 1916, էջ 2:

նոյնիսկ գործակցել, երբ առիթ լինի յանուն եգիպտահայ գաղութի միասնաբար հայկական որբանոց հիմնել հայրենի հողի վրայ[7]:

Կանոնագրի համաձայն, կազմակերպութիւնն ունէր երկու՝ ընդհանուր ու վարչական ժողով, որոնցից իւրաքանչիւրն ունէր իր պարտականութիւններն ու գործառոյթները: Յօդուած 11ով սահմանւում են ՀՈԸի հասոյթի աղբիւրները՝ Ընկերութեան «բաժնեգին»ները[8], կամաւոր կամ տոմսերով նուէրներն ու կտակները, վիճակահանութիւնները[9], կինոյի եւ թատերական ներկայացումների հասոյթները, գրական-գեղարուեստական երեկոյթների-դաշտահանդէսների թէ գրքոյկների հրատարակութիւնների վաճառքի հասոյթները:

ՀՈԸի բոլոր հասոյթները գանձւում էին տպուած ու թուագրուած, բունաւոր ընկալագրերով (կտրօն), որոնք կրում էին վարչական ժողովի ատենապետի եւ գանձապետի ու ՀՈԸի կնիքը՝ ընդգծելով, որ ծախքերը պէտք է ունենան արդարացուցիչ ստացականներ:

Վարչական ժողովն իր հաւաքած նպաստը պարբերաբար ազգային առաջնորդարանի միջոցով ուղարկում էր Էջմիածնի կաթողիկոսին՝ գումարը նպատակին ծառայեցնելու համար:

Յօդուած 13ում նշւում էր, որ վարչական ժողովը պարտաւոր էր տարին գոնէ մէկ անգամ Crédit foncier égyptien սակարանից արժեթուղթ գնել եւ ազգային առաջնորդարանին իպահ յանձնել: Արժեթղթերի հաւանական գործածումը ընդհանուր ժողովի որոշմանն էր վերապահւում:

18 Օգոստոսի 1916ով թուագրուած կանոնագիրը ստորագրել են հիմնադիր եւ վարչական ժողովի անդամներ Յովհաննէս Աքտարեանը, Կարապետ Անլեանը, Պետրոս Մուղալեանը, Թովմաս Թոփուզեանը, Յովհաննէս Կուտսուզեանը:

1916ի կանոնագրով սահմանւում էր, որ վերջինս կարող էր երկու տարի անց, անհրաժեշտութեան պարագայում, վերաքննութեան ենթարկուել՝ հիմնական նպատակը անփոփոխ պահելու պայմանով[10]: 1916 Սեպտեմբեր 6ին՝ կանոնադրութիւնը վաւերացուելուց յետոյ Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ Գուշակեանը կնքում է եւ մակագրում՝ «...կ'յանձնենք եւ կ'յանձնարարենք օրինութեամբ ի գործադրութիւն»[11]: Աւելի ետք, 1917 Յունուարի 2ին Էջմիածնի կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցը եւս

---

[7] Նոյն:

[8] «Բաժնեգին»ը ընդհանուր ժողովի անդամների վճարած ամիսն առնուազն 2 դահեկան գումարն էր:

[9] ՀՈԸի վարչական ժողովը ներքին գործերի նախարարութիւնից ձեռք էր բերել տարին մէկ անգամ կայանալիք վիճակահանութեան արտօնագիրը (16 Հոկտեմբեր 1920), որը կանոնաւոր հասոյթի աղբիւր էր ՀՈԸի համար (*Հայ Որբախնամ Ընկերութիւն, տեղեկագիր..., շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31*, էջ 16):

[10] *Կանոնագիր Հայ Որբախնամ Ընկերութեան*, 1916, էջ 7:

[11] Նոյն, էջ 8:

օրհնութեան կոնդակով նուիրագործում է Որբախնամի, ինչպէս նաեւ Կարմիր Խաչի գործունէութիւնները.[12] «Կոնդակ օրհնութեան Եգիպտոսի առաջնորդի. Որբախնամ եւ Կարմիր Խաչի ընկերութիւնների անունով՝ հայ փախստական որբերի ի մի ժողովելու եւ նոցա պահպանելու համար»[13]:

ՀՈԸի գործունէութիւնը գնահատուել է նաեւ Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսի կողմից: Իդէպ, «բունազուրկ կաթողիկոսի աւետարանական հոգեցունց շնորհներովն օծուն կոչերը» եւս անտարակոյս աւելի մեծ զարկ են տալիս տարբեր եգիպտահայերի բարեսիրական ձեռնարկներին, նաեւ՝ ՀՈԸին:

ՀՈԸի գործունէութիւնը գնահատուել է նաեւ Կ.Պոլսի պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսի կողմից: Որբախնամի ատենապետին ուղղած իր նամակում պատրիարքը շնորհակալութիւն է յայտնում Կեսարիոյ որբերին տրամադրած նպաստի համար եւ նշում. «*…Մենք շարունակ կը հետեւինք Ձեր գործունէութեան, սրտի կատարեալ ուրախութեամբ կը տեսնենք գեղեցիկ արդիւնքները, ու կը մաղթենք Ձեզ եւ բոլոր յարգելի անդամակիցներուն կարողութիւն, որպէսզի յաջողին լիապէս իրենց առաջադրած բարեսիրական նպատակին մէջ, ինչ որ կարեւոր օժանդակութիւն մը պիտի ըլլայ ներկայ աղէտին մեծութեան հանդէպ,*- շարունակելով նամակը, նա գրում է.- *թէպէտեւ յատուկ որբանոցներ ունինք Տիգրանակերտ, Խարբերդ, Մալաթիա, Կեսարիա եւ այլուր, եւ թէպէտեւ Ամերիկեան Նպաստամատոյց Մարմիններն ալ նոյն կողմերը անջատ որբանոցներ բացած են, բայց որբերուն թիւը այնքան շատ է, որ տակաւին ամէնուն ալ կարելի չէ եղած հասնիլ ու անոնցմէ շատեր կը թափառին փողոցները անպատսպար, առանց հաշիւ ընելու թուրքերու եւ թուրք հարէմներու մէջ տառապող բազմաթիւ որբերն ու որբուհիները*»[14]:

Նախաձեռնող թիմով, որբերի փրկութեան ծրագրերով, հասարակութեան աշխուժ մասնակցութեամբ, ՀՈԸն սկսում է իր գործունէութիւնը:

ՈՐԲՈՒՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ-ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

ՀՈԸն իր գործունէութիւնը հրապարակային յօդուածների, հաշուետուութիւնների միջոցով ներկայացնելու, հասարակութեանն իրազեկելու, իր գործունէութիւնը ընդլայնելու նպատակով հիմնում է իր պաշտօնաթերթը՝ *Որբունի* տեղեկագիր-պարբերականը, որը կազմակերպութեան գործունէութեան կապակցութեամբ «Յայտարարութիւն» վերնագրի տակ գրում է. «*Որբախնամը հրապարակ կ'ելլէ ու Որբախնամի զոյգ Վարչութիւնները այն հաւատքն ունին, թէ իրենց սոյն ձեռնարկը արժանի ընդունե-*

[12] Երամեան, «Որբ», էջ 6:

[13] «Նորին վեհափառութեան տնօրէնութիւններից». *Արարատ* (Ս. Էջմիածին), Բ-Գ:1917, էջ 85:

[14] «Ամէն. Սրբազան Պատրիարքէն ստացուած», *Որբունի*, 8:1919, էջ 117-18:

լութիւն մը պիտի գտնէ հայ որբասէր հասարակութեան բոլոր խաւերուն մէջ ալ անխտիր»: Յայտարարութիւնը մակագրուած է. «Հայ Որբախնամ Ընկերութեան Գահիրէի ու Աղեքսանդրիոյ վարչութիւններ»[15]: Պարբերաթերթի համար ստեղծւում է խմբագրական առանձին մարմին, որը ղեկավարում է Հրաչեայ Փեհրիզեանը:

Որբունի տեղեկատու Հայ Որբախնամ Ընկերութեան պարբերականը սկսել է լոյս տեսնել 1919ից: Հրատարակուել է Աղեքսանդրիայում, Արամ Ստեփանեանի, ապա Ա. Գասպարեանի տպարաններում մինչեւ 1922, ունեցել է 12 պրակ՝ ընդհանուր առմամբ 301 տպագիր էջ: *Որբունի*ն մանրամասն տեղեկութիւններ է տրամադրել ՀՈԸի գործունէութեան մասին: Այստեղ են տպագրուել նրա նախաձեռնութիւնները, հաշուետուութիւններից կարեւոր հատուածներ, հանգանակութիւնների, վիճակահանութիւնների արդիւնքները, որբահաւաք գործունէութիւնը: Առանձին սիւնակով տպագրուել են Գահիրէի ու Աղեքսանդրիայի որբ որդեգրողների, կանղանդչէքի նամակներից ստացուած նուէրների, նուիրատուութիւնների անուանացանկերը: Նկատենք, որ այս մեթոդը կարեւոր դեր է ունեցել հասարակութեան շրջանակներում լայն մասնակցութիւն ապահովելու համար:

*Որբունի*ում յատուկ ուշադրութիւն է դարձուել մասնաճիւղերի գործունէութեանը, յաճախ ամբողջական ցուցակներ են տպագրուել մասնաճիւղերի անդամների անուն ազգանուններով, նշուել նուիրաբերած գումարների չափերը, նպաստների առաքումները: Կարեւոր էր նաեւ որբանոցներում ապաստանած, ինչպէս նաեւ անապատներից հաւաքուած որբերի անուանացանկերը, որը դիւրացնում էր նրանց փնտռելու գործընթացը: *Որբունի*ի էջերում կան նաեւ անապատներից հաւաքուած ու Ատանայի որբանոցներում ապաստանած հազուագիւտ խմբանկարներ, որբերի առանձին նկարներ, Անթուրայի որբանոցի ուսուցչական խմբի նկարներ, Այնթապի որբանոցի որբերի խմբանկարը՝ տնօրէն Ղազարոս Ղալիկեանի հետ:

*Որբունի*ում տպագրուել են նաեւ յուշագրութիւններ, որբանոցներում տեղի ունեցած իրադարձութիւններից որոշ մանրամասներ: Պարբերականի էջերում տպագրուել են նաեւ հայկական տարբեր առեւտրային կազմակերպութիւնների եւ ձեռնարկութիւնների գովազդային յայտարարութիւններ, որի հասոյթից նոյնպէս գումարներ են տրամադրուել որբախնամ աշխատանքներին:

*Որբունի*ն գործակցում էր նաեւ այլ պարբերականների հետ՝ շատ յաճախ խնդրելով որբերի եւ ՀՈԸի գործունէութեան համար կարեւոր տեղեկութիւններ, յայտարարութիւններ եւ կոչեր տպագրել: *Որբունի*ն իր համարներից մէկում շնորհակալութիւն է յայտնում եգիպտահայ մամուլին՝ *Յուսաբերի*ին եւ *Արեւ*ին. «*այնքան բարեացակամ վերաբերում ցոյց տուին Ընկերութեանս գործունէութեան նկատմամբ եւ անոր պաշտօնաթերթին*»: Թեր-

[15] «Յայտարարութիւն», *Որբունի,* 1:1919, էջ 1:

թը շնորհակալութիւն է յայտնում նաեւ արտասահմանեան հայ մամուլի բոլոր վարիչներին, ովքեր հիւրընկալել են իրենց կոչերը՝ խրախուսելով նրանց որբանուէր գործը[16]:

*Որբունի*ի խմբագրակազմն աշխատանքներ էր տանում իր ընթերցասէրների շրջանում, խրախուսում բաժանորդագրուել՝ հետեւեալ հիմնաւորմամբ. «Որբունի *իր այս 6րդ պրակով արդէն գրաւական մը կրնայ ըլլայ իր յարատեւութեանը. ուստի կը խնդրենք մեր ընթերցողներէն որ հաճին բաժանորդագրութիւնը փութացնել մեզ, նկատի ունենալով որ* Որբունին *առանց նիւթական բեռ մը ըլլալու որբախնամ սնտուկին, իր ընթերցողներուն պարտաճանաչութեան կոթնած է*»[17]:

Յօդուածագիրներից առաւել աշխուժ էին ՀՈԸ անդամները եւ համակիրները, մասնաւորապէս մայր դիւանի ատենապետ Յ. Գայայեանը, Սուրէն Պարթեւեանը, Հ. Երամեանը, Կարօ Պալեանը, Մ. Տէրսահակեանը, Կ. Սեֆէրեանը, Մ. Ոսկեանը:

Ինչպէս վերեւում նշեցինք, ՀՈԸի ձեռնարկներից էր նաեւ շրջաբերականների ու կոչերի տպագրութիւնը: Դրանցից մէկից հարկ ենք համարում մէջբերումներ անել՝ պատկերացում տալու համար, թէ որքան հաւատով ու նուիրուածութեամբ էին նրանք կատարում իրենց գործը: Կոչը վերնագրուած էր՝ «Հայ սրտերու ուղղուած», եւ խնդրւում էր հայկական թերթերին արտատպել այն:

Այստեղ հակիրճ անդրադարձ կայ ՀՈԸի գործունէութեանը: Այն կարծես կարճ հաշուետուութիւն լինէր, որտեղ նշւում էր, որ վերջին երեք տարիների ընթացքում ՀՈԸն նպատակակէտին էր ծառայեցրել շուրջ 27,000 եգիպտական ոսկի, որը հաւաքուել էր Եգիպտոսի, Կիպրոսի, Յունաստանի, Իտալիայի, Զուիցերիայի, Անգլիայի, եւ Ամերիկայի որբասէր հայ գաղթավայրերի օրինակելի նուիրաբերութեամբ: Իհարկէ, այդ գումարներով բաւարար չէր ամբողջութեամբ լուծել հարցերը, ստանձնել ու վարել այդքան հսկայածաւալ գործ, եթէ ՀՈԸն չունենար բրիտանական եւ ֆրանսական զինուորական իշխանութիւնների գործակցութիւնն ու նիւթաբարոյական աջակցութիւնը: Նշւում են նաեւ, որ ՀՈԸի գանձանակի յանձնախումբը 2000 եգիպտական ոսկի յաւելեալ գումար է բերել, կամաւորների խումբը Եգիպտոսում եւ արտասահմանում շուրջ 1800 անգլիական ոսկի շնորհաւորելի գումար է յատկացրել կաղանդչէքի համար[18]:

1919ից սկսած, *Որբունի*ն յայտարարութիւն է տարածում, թէ այդուհետ պէտք է տպագրուեն Կիլիկիայի, Միջագետքի եւ այլ վայրերի որբերի ցանկերը, որտեղ նշուելու են որբերի անունները, հայրանունները, շատերի պարագայում անգամ՝ մայրանունները, ազգանունները, տարիքն ու ծննդա-

[16] «Պարտականութիւն մը», *Որբունի*, 5:1919, էջ 81:
[17] «Որբունիի ընթերցողներուն», *Որբունի*, 6:1919, էջ 97:
[18] «Հայ սիրտերու ուղղուած», *Որբունի*, 12:1921, էջ 274-75:

վայրը եւ խորհուրդ է տրւում, որ որբեր փնտռողները *Որբունի*ի էջերում փորձեն գտնել իրենց հարազատներին[19]:

Յայտարարութեանը յաջորդում է Մոսուլից Պաքուպա փոխադրուածնե-րի, այնուհետեւ իրենց հոգածութեան տակ գտնուող Այնթապի ամերիկեան աղջկանց որբանոցի սաների անուանացանկերը[20]:

*Որբունի*ում յաճախ հանդիպում են նաեւ խոհափիլիսոփայական յօդ-ուածներ, որոնք հասարակութեան ուշադրութիւնն են կենտրոնացնում որ-բի եւ նրա ապագայի նկատմամբ յատուկ վերաբերմունք ունենալու գաղա-փարի վրայ. «Հայ ո՞րբը թէ՞ որբ հայը, հայ որբացումը»: Բազմաթիւ են նման հարցադրումները, որոնք հաստատում են միասնական ձեւով ազգա-յին փրկութեան հետեւեալ գաղափարը. «*Ո՛վ հայ որբութիւն, … քեզմով պի-տի ներշնչուին հոգենորոգման եւ վերածնունդի մեր բոլոր լաւագոյն ճիգե-րը: …Թող ուրեմն մեր սրտերը խանդաղատանքի ծովեր դառնան անոնց հանդէպ եւ գուրգուրա՛նք, գուրգուրա՛նք ազգովին մեր որբերուն վրայ, ո-րոնց սահմանուած է վերջ դնել հայ որբացումին*»[21]:

Յաջորդ յօդուածում գաղափարախօսութիւնը նոյնն է. «*Հաւաքեցէ՛ք, պատսպարեցէ՛ք, դաստիարակեցէ՛ք հայութեան թանկագին փշրանքները, մի՛ թողուք, որ անոնցմէ մէկը կորսուի: Որբանոցներէն է որ քիչ ատենէն դուրս պիտի խոյանան վրէժխնդիր փաղանգները: Այո՛, այսօրուան խլեակ-ները վաղուան հերոսները պիտի դառնան*»[22]:

Տեղեկագիրը կարեւոր աղբիւրագիտական նիւթ է ոչ միայն ՀՈԸի գոր-ծունէութեան մասին, այլեւ պատկերացում է տալիս Ցեղասպանութեան տարիներին վերապրածների, մասնաւորապէս որբաշխարհին վերաբերող խնդիրների ու դրանց լուծման ձգտող աշխատանքների մասին:

ՀՈԸի ՅՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Շատ կանոնակարգուած, արագ համալրւում են Աղեքսանդրիայի եւ Գահիրէի քոյր հաստատութիւնները, կազմւում են նոր մասնաճիւղեր: 1919 Մարտի կէսերին ՀՈԸ անդամների թիւը հասնում է 620ի, որը փոքր-ինչ նուազում է 550ի 1919ի Ապրիլին՝ երկրում տիրող ֆինանսական տագնապի պատճառով[23]:

Սկսում են գործել տիկնանց, տղամարդկանց, կամաւորների յանձնա-խմբերն ու դրանցից ածանցեալ մասնախմբերը:

---

[19] «Յայտարարութիւն», *Որբունի*, 8:1919, էջ 144:

[20] Նոյն, էջ 144-148:

[21] Սուրէն Պարթեւեան, «Հայ որբացումը», *Որբունի*, թիւ 2, էջ 18-20:

[22] Հ. Երամեան, «Որբ», *Որբունի*, 2:1919, էջ 22:

[23] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, իննամսեայ տեղեկագիր Հայ Որբախնամ Ընկ. Գահիրէի հատուածին գործադիր ժողովին, 1918 Նոյեմբերէն 1919 Յուլիս 31,* Փարոս, Գահիրէ, 1922, էջ 5:

Ուշագրաւ է ՀՈԸի օժանդակ՝ տիկնանց յանձնախմբի գործունէութիւնը: Այն հիմնականում զբաղւում էր որբերի որդեգրման եւ հանդերձաւորման աշխատանքներով: Յանձնախմբի անդամները ժողովրդի շրջանում աշխատանքներ են տանում, հաւաքոյթներ կազմակերպում որբեր որդեգրելու ուղղութեամբ: Շուրջ 240-250 որբեր որդեգրւում են Գահիրէում, 80 որբեր՝ Աղեքսանդրիայում: Այս կապակցութեամբ *Որբունի*ում կարդում ենք. «*Ուր կամք կայ՝ հոն միջոց ալ կայ»… որբերու օգնելու, այսինքն՝ որբերու օգնելով հայրենիքին ծառայելու բազմաթիւ միջոցներ ու եղանակներ կան. լաւագոյն եղանակն է, անշուշտ, որդեգրումը, որ՝ ներկայ պարագաներու տակ՝ տարեկան շուրջ 24 ոսկիի ծախք կ'ենթադրէ որբ գլուխ: Պարտ է, եւ վայելուչ, որ կարողները ու կամեցողները, ըլլայ անհատ, ըլլայ հասպատութիւն, ընկերութիւն եւ այլն, մէկ կամ աւելի որբեր որդեգրեն, իրենց կարողութեան ներած չափով*»[24]:

Նոյնատիպ կոչ է տպագրւում նաեւ *Որբունի*ի առաջին համարի առաջին էջի յայտարարութեան մէջ, որտեղ ՀՈԸն պատրաստակամութիւն է յայտնում որբասէր անհատներին, համաքաղաքացի խմբերին կամ ընկերակցութիւններին անմիջապէս ուղարկել որբի նկարը՝ տեղեկութիւններով հանդերձ, անուղղակիօրէն յուշելով նաեւ որ խնամակալ անհատներ կարող են նամակագրական կապ հաստատել իրենց պաշտպանութեան տակ վերցուած որբի հետ[25]:

Տիկնանց մասնախումբը, զբաղւում է նաեւ վիճակահանութիւնների կազմակերպմամբ, սկզբնական շրջանում վերջիններս իրագործւում են փոքր չափսերով, նեղ շրջանակներում: 1919ին որոշում է 10 ղուրուշանոց 10,000 տոմս թողարկել, որի մի մասը նախատեսւում է տարածել նաեւ Եգիպտոսից դուրս:

Արդէն 1920 Հոկտեմբերին ներքին գործերի նախարարութիւնից ստացած վիճակահանութեան արտօնագրի հիման վրայ 1921 Նոյեմբերին հրապարակուած պարտակոչով տիկնանց մասնախումբը յայտնում է, որ առաջին վիճակահանութեան գումարները փոխանցուելու են Այնթապից Ճունի փոխադրուած ՀՈԸի որբանոցին[26]: Տոմսի վրայ նշուած էր, որ վիճակահանութիւնը տեղի է ունենալու 1922 Յունուարի 22ին, տոմսերի ընդհանուր թիւը 7500 էր, շահողներինը՝ 200, գինը՝ 20 դահեկան: Ներքեւի տողում կարդում ենք. «*Յարգոյ ազգայիններէն կը խնդրուի՝ մեր որբերուն հանդէպ իրենց սիրոյն գործնական ապացոյցը տալ, գնելով կամ իրենց շրջանակնե-*

[24] Յ. Թ. Գայայեան, «Դրական գործը», *Որբունի*, 12:1921, էջ 254:

[25] «Հայ սիրտերուն ուղղուած», *Որբունի*, 12:1921, էջ 275-276:

[26] «Դրական գործը», *Որբունի*, 12:1921, էջ 285: Ճունիի որբանոցին մասին տե՛ս՝ *Ակնարկ մը հասպատութեան պարագաներուն եւ քառամեայ պատմութեան վրայ (1919 Օգոստոսէ 1923 Յունիս)*, Աղեքսանդրիա, Ս. Գասպարեան, 1923. նաեւ՝ Հրայր Եսայեան, Անդրանիկ Տագէսեան, «Ճիւնիի որբանոցին մասին պատառիկ մը (1920-1925)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԼԵ:2015, էջ 773-82:

րուն մէջ ցրուելով սոյն վիճակահանութեան տոմսերը»[27]: Վիճակահանութեան համար անհրաժեշտ նուէրների համար նրանք դիմում են կանանց՝ իրենց տրամադրել ձեռագործներ, զարդեղէններ ու գեղարուեստական առարկաներ: Երբեմն տիկնանց մասնախումբի անդամները վիճակահանութիւնն աւելի արդիւնաւէտ դարձնելու համար տնէտուն ու խանութէխանութ են շրջում ու արժէքաւոր իրեր են հաւաքում:

Կանանց մասնախումբը զբաղւում է նաեւ որբերի հանդերձաւորման աշխատանքներով, որոնք աւելի ընդլայնւում են 1919 տունդարձից յետոյ եւ ստեղծւում է հանդերձարանի օժանդակ կառոյցը:

«Որբախնամի հանդերձարանը» խորագրի տակ կարդում ենք. «*Որբախնամի Աղեքսանդրիոյ հատուածի վարչութիւնը իր գրասենեակը փոխադրած է առանձին շէնքի մը մէջ*»: Նոյն տեղում բացուել էր նաեւ ամիսներէ իվեր ծրագրուած Որբախնամի Հանդերձարանը: Այս քոյր հաստատութիւններում պատրաստում են ՀՈԸի հովանաւորած որբանոցայինների հանդերձները: Առաջին ձեռնարկումը եղել է Նազիկ Յովհաննիսեանի կողմից, ով նուիրել է 7500 զ.ս. արժէքով կերպասեղէն՝ տեղի որբախնամին: Աղեքսանդրիայի հանդերձարանը կազմակերպել է մասնակի վիճակահանութիւն[28], Յուլիսի 1ին Աղեքսանդրիայի Իրիս կինօսրահում ցուցադրուել է ֆիլմ՝ ազգային նշանաւոր դէմքերի մասին: Ֆիլմն ունեցել է հայերէն եւ ֆրանսերէն բացատրագրեր: ՀՈԸն նպատակադրուել է այդ ֆիլմը տրամադրել նաեւ դիտել ցանկացողներին: Հասոյթը նոյնպէս փոխանցուել է ՀՈԸին[29]:

Եգիպտահայոց առաջնորդ Թորգոմ եպս. Գուշակեանը՝ առաջնորդական փոխանորդ Տ. Հայկազուն քհնյ. Ոսկերիչեանի ընկերակցութեամբ, Յուլիսի 30ին այցելել է ՀՈԸի Աղեքսանդրիայի գրասենեակ եւ հանդերձարան, գնահատել ՀՈԸի արդիւնաւէտ գործունէութիւնը եւ իր մասնաւոր գոհունակութիւնն յայտնել[30]:

Աղեքսանդրիայի հանդերձարանի տիկնանց միութիւնը պատրաստել է որբերի համար միքանի հազար ոսկի արժողութեամբ ներքին եւ արտաքին հանդերձեղէն ու գլխարկ, որոնք ուղարկուել են հիմնականում որբանոցներին: Հանդերձարանի մասնախումբը կազմակերպել է մասնակի վիճակահանութիւններ եւ տոմսերի վաճառքից ստացուած գումարները ծառայեցրել որբերի հանդերձաւորման գործին[31]:

---

[27] «Վիճակահանութիւն ի նպաստ հայ որբերու», *Որբունի*, 12:1921, էջ 286:

[28] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 6:1919, էջ 97:

[29] «Պարտականութիւն մը», *Որբունի*, 5:1919, էջ 82:

[30] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 6:1919, էջ 96:

[31] Նոյն, էջ 97:

Օժանդակողների միւս խումբը տղամարդկանց յանձնախումբն էր, որը կազմակերպել է հայերէն անդրանիկ ներկայացումը, յետագայում նաեւ՝ օպերաների ներկայացումներ[32]:

Ձեռնարկային այս աւանդոյթները կրկնուել են ու շարունակուել, ինչպէս՝ 1920 Յունուարից ի նպաստ ՀՈԸի Գահիրէի երկու թատերական եւ մէկ օպերայի ներկայացումները, Աղեքսանդրիայի նուագահանդէսը, որոնք մեծ յաջողութիւններ են ունեցել:

Երբեմն այս երկու յանձնախումբերը իրենց ուժերը միացրել են յատուկ ձեռնարկների համար, կազմելով երկսեռ յանձնախումբ: Երկսեռ օժանդակ յանձնախումբն աշխատում էր պատի օրացոյցների եւ ՀՈԸի տեղական ձեռնարկների տպագրման եւ տարածման ուղղութեամբ:

Հայ եւ օտար շրջանակներում 1920ին տպագրուած օրացոյցները, բացի դրամական օգնութիւնից, օտար շրջանակներում ճանաչողական նշանակութիւն են ունեցել ՀՈԸի գործունէութեան համար[33]:

ՀՈԸն ունէր նաեւ օժանդակողների խմբեր: Նրանց թւում շատ աշխուժ էին ԱՄՆից Զապէլ Փանոսեանը, Փոր Սայիտի սակաւաթիւ բայց շատ արդիւնաւէտ գործող հայութիւնը[34]: Յատկանշական է տէր եւ տիկին Մասրաֆների գործունէութիւնը. այս ամոլը յատուկ նուիրատուութեան տետր է ունեցել, որտեղ կարող էին որբերի անուններով նուիրատուութիւններ անել հայ եւ օտար անհատներ: Տիկին Մարի Մասրաֆը գեղարուեստական երեկոյթներ է կազմակերպել եւ հայերից ու օտարներից ստացուած գումարը ծառայեցրել ՀՈԸի նպատակներին[35]: Մարի Մասրաֆի գործունէութեանն անդրադառնում է *Որբունի*ն՝ գրելով. «*Հայ որբուկը եւ Հայ Որբախնամի գործը, Տիկին Մարի Մասրաֆի համար նուիրական խորաններ են, որոնց պէտք է մօտենալ ամէնախոր գիտակցութիւնով ու ամէնաերկիւղած աշխատանքով*»[36]:

Օժանդակ իւրօրինակ այլ երեւոյթ էին դպրոցները. օրինակ, 1916ին եւ 1917ին Մանիսալեան Վարժարանը մանկահանդէսներ է կազմակերպել ի

---

[32] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, տեղեկագիր…*, շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31, էջ 17:

[33] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 9:1920, էջ 157:

[34] Նրանցից կարելի է առանձնացնել տէր եւ տիկին Մասրաֆներին, Ռ. Գալֆայեանին, Ն. Թոգաթլեանին, Ա. Թագուորեանին, Գ. Թեէեանին, Փոր Սայիտ վրանաքաղաքի բժիշկներից Արամ Սահակեանին:

[35] «Հայ որբախնամ ընկերութիւն», *Որբունի*, թիւ 12, էջ 282:

[36] Ատոմ Թագուորեան, «Որբերուն մայրիկը», *Որբունի*, 8:1919, էջ 124:

նպաստ հայ որբերի, Գալուստեան Վարժարանը 1916ին կազմակերպել է մանկապար[37]՝ կրկին շեշտելով որբախնամի անհրաժեշտութիւնը[38]:

Որպէս օժանդակ կառոյց գործել է նաեւ դեռատի երկսեռ կամաւորների խումբը, որն իր հասակակիցներին օգնելու համար ծանուցումներով ու հանգանակութեան կտրոնների տարածմամբ է զբաղուել. «*Որբախնամի դեռատի երկսեռ կամաւորները աննման խանդավառութեամբ մը մանկական համբուրելի նուիրումի թափր հանդիսացուցին Եգիպտոսի շրջանը իրենց հասակակից դժբախտ քոյրերուն ու եղբայրներուն աւելի եւս օգտակար ըլլալու ջանքին մէջ զիրար գերազանցելու պաշտելի մրցակցութեամբ*»[39]:

ՀՈԸի մասնաճիւղերի գրասենեակներում անընդհատ ելումուտ էին անում ամէն դասակարգի փոքրիկներ՝ «հարկահաւաքութեան թուղթ», կամաւորութեան վկայագիր ստանալու կամ հաւաքածը անկորուստ յանձնելու համար:

ՀՈԸին կամաւորները դիմում են մանկական ճարպկութիւնների, ամէնահամարձակ յանդիմանութիւնների անգամ: Օրինակ՝ «Պարո՛ն, հինգ ղրշ.ի համար ինծի պէս փոքրիկ մը լացըցնելու չե՞ս մեղքնար, ըսած է ինը տարեկան աղջնակ մը» կամ «Արաբէն անգամ առի, դուն ի՞նչ ըսելով կը մերժես, հայ չե՞ս, մէկի մը երեսին զարկած է ուրիշ մը» կամ «Դուն տու՛ր՝ յետոյ ուրիշի մասին դիտողութիւն ըրէ», «Պարո՛ն, մեր քոյրերն ու եղբայրները անդին անօթի ու մերկ են, կու լա՛ն, մե՛ղք են, անոնք քու՛ ալ զաւակներդ են կ'աղաչեմ, գթա՛ անոնց՝ եւ օգնէ՛» կամ «Այս մէկ ղրշ.ը փոստային դրամ. հիմա նուէրդ տու՛ր, ըսած է սրամիտ մանչ մը բարեկեցիկ անձի մը, եւ մէկ ղուրուշէն զատ փրցուցած է նաեւ 10 ղրշ.»[40]:

Աշխատանքը չկրկնելու, եւ անտեղի ժամանակ եւ ուժ չկորցնելու համար, վերակազմակերպումից կարճ ժամանակ ետք՝ 1919 Դեկտեմբերին, ՀՈԸի քոյր հատուածները համախորհուրդ աշխատանքի բաժանում են կատարում իրար միջեւ: Արտասահմանի հետ յարաբերութիւններ հաստատելպահելու, մասնաճիւղերի հետ թղթակցելու եւ եկամուտ հայթայթելու գործը յանձն է առնում Գահիրէի հատուածի վարչութիւնը, իսկ որբանոցների մատակարարումը, հանդերձարանի վարչութիւնը, *Որբունի*ի հրատարակութիւնը՝ Աղեքսանդրիայի վարչութիւնը, որտեղ պահւում էին մատակարարութեան բոլոր հաշուեթղթերը[41]:

---

[37] Մանկահանդէսներ, մանկապարեր, դաշտահանդէսներ՝ սրանք այն տարբեր միջոցառումներն էին, երբ հանգանակութիւնները կազմակերպւում էին կրտսեր սերնդի մասնակցութեամբ:

[38] Երամեան, «Որբ», *Որբունի*, 1:1919, էջ 7:

[39] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 9:1920, էջ 157:

[40] Նոյն, էջ 158:

[41] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, փեղեկագիր…, շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31*, էջ 20:

ՀՈԸի ՀԱՍՈՅԹՆԵՐԸ

ՀՈԸի կանոնադրութեան մէջ նշւում էր կազմակերպութեան հասոյթի միջոցները: Այն իրենց ողջ թիմով եւ հնարաւոր ձեւերով իրագործում էին կազմակերպութեան անդամները:

1919 Փետրուար-Մարտ ամիսներին, օգտուելով ՀՈԸի անդրանիկ պատուիրակ, յայտնի որբախոյզ Ռուբէն Հերեանի ներկայութիւնից՝ տիկնանց մասնախումբը կազմակերպում է որբանուէր բազմաթիւ հաւաքոյթներ: Այդ հաւաքների ընթացքում, ոգեշնչուելով Հերեանի եւ նրա նման հայրենասէր մարդկանց բանախօսութիւններից, նուիրաբերուած թանկարժէք իրերը աճուրդում վաճառուելուց յետոյ հասոյթը տրամադրւում է որբերին: Նման մի ձեռնարկ է 1919 Մարտի 2ին բարեկենդանի կիրակնօրեայ Գահիրէի *Kursal* թատերասրահում, երբ Հերեանի եւ բանախօսութիւնների ազդեցութիւնը մեծ էր եւ նախաքայլը դարձաւ յետագայ յաջողութիւնների: «*…Եգիպտահայը, պատմական մնալու սահմանուած անօրինակ խանդավառութեամբ եւ զոհաբերութեամբ մը մէկ շաբթուան մէջ գիտցաւ որբախնամ գործին համար նուիրել կամ արծանագրել հազարաւոր ոսկիներ արժէքաւոր առարկաներ, որդեգրութիւնը ստանձնելով իբր 200 որբերու եւն.*»[42]: Քուրսալի հանդէսը նշանակալի էր, քանի որ ՀՈԸն այդ ժամանակ յայտարարեց, որ ստանձնելու է Ատանայի որբանոցի ծախսերը: Աղեքսադրիայի քոյր հատուածը նոյնպէս յաջողութիւններ ունեցաւ նմանատիպ հաւաքոյթների մէջ՝ ապահովելով ոչ-նուազ քան 1500 ոսկի յանձնառութիւններ, զարդեղէն եւ դրամական նուէրներ:

Աղեքսանդրիայի եւ Գահիրէի եգիպտահայերը բարեկենդանի վերջին շաբաթուայ ընթացքում՝ մեծ հանգանակութիւն են կատարել «*պարպելով քսակներ, որդեգրելով մօտաւորպէս 400 որբեր, կիները մերկանալով իրենց զարդերէն նաեւ, այրերը բազմապատկելով իրենց բաժնեգինները*»[43]:

ՀՈԸն՝ որպէս հասոյթի լրացուցիչ ձեւ շրջանառութեան է դնում կաղանդչէքի թերթիկները: Դեռեւս 1919ի վերջերին յատուկ կոչով դիմում են կամաւորներին՝ երկու շաբաթուայ ընթացքում մասնաւոր թերթիկներով հաւաքել որբերի կաղանդչէքերը: Կոչն արագ արձագանգ է գտնում: Գահիրէից, Աղեքսանդրիայից, Զակազիկից, Փոր Սայիտից, Նիկոսիայից հաւաքւում է 1200 անգլիական ոսկի: Երկու առաւելագոյն գումար հաւաքողները պարգեւատրւում են, բոլոր դեռատի կամաւորների անուններն ու նրանց հաւաքած գումարների ցանկը պարբերաբար հրատարակւում էր *Որբունի* պարբերաթերթի համարներում:

---

[42] Նոյն, էջ 15:

[43] Երամեան, «Որբ», *Որբունի*, 1:1919, էջ 7:

Բացի այդ, թերթի յայտարարութիւններում երբեմն ներկայացւում էին ի նպաստ ՀՈԸի վաճառուող արժէքաւոր գրքերի, յայտնի մարդկանց փոստային բացիկների ցանկեր[44]:

ՀՈԸն հանգանակութիւնների կազմակերպման համար կիրառում ր նաեւ գանձանակների միջոցով դրամահաւաք կազմակերպելու դրութիւնը: 1916 Յուլիսի 3ի համարում *Յուսաբերն* առաջարկում է. «*Ծնունդներու, կամ մկրտութեանց, նշանախօսութիւններու կամ պսակադրութեանց, մահերու կամ յուղարկաւորութեանց առիթներով՝ ծաղկեփնջերու, շաքարներու, պսակներու եւ այլն այս կարգի պայմանադրական պէտքերուն գործածուելիք դրամովը՝ փոխանակ օտարներու քսակը պարարտացնելու՝ Որբախնամին, Կարմիր Խաչին եւ այլ բարեպատակ հաստատութեանց տրամադրել զայն*»[45]: Առաջարկւում էր նաեւ, որ ամէն տուն գանձանակ ունենայ, ուր ընտանեկան հաւաքոյթների ու ազգային տօների ժամանակ նուէրներ դնեն յանուն ՀՈԸի, եւ մասնաճիւղեր կազմուեն Եգիպտոսի բոլոր հայ համայնքներում:

Գանձանակների գործն առաջ տանելու համար, ՀՈԸն Գահիրէի եւ Աղեքսանդրիայի համար միաձեւ 500ի չափ նոր գանձանակներ է պատրաստել տալիս[46]: Գահիրէում գրեթէ 4 տարի գանձանակների գործը փոխադարձ համաձայնութեամբ վարել է Գահիրէի Հայ Երիտասարդական Քիրստոնէական Ընկերակցութիւնը, որն իր նախագահի, վեր. Յուսիկ Խանդամուրի վարչութեան ներքոյ կարողացել է իրականացնել 2000 ոսկու հասնող հասոյթ[47]: *Որբունի* տեղեկագիրը շնորհակալական խօսք է յայտնում Գահիրէի Հայ Երիտասարդական Քիրստոնէական Ընկերակցութեանն իր աջակցութեան համար[48]:

Այս յաջող փորձից յետոյ արտասահմանի կամաւորները նոյնպէս մասնակցում են այս գործին. Եգիպտոսի, Սուտանի, Եթովպիոյ, Կիպրոսի, Սիրիայի, Ֆրանսայի, ԱՄՆի կամաւորները հաւաքում են 600 անգլիական ոսկի:

ՀՈԸի ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ

Աստիճանաբար կազմակերպութիւնն ընդլայնում է իր աշխարհագրական սահմանները, հիմնւում են նոր մասնաճիւղեր. առաջիններից էր Եթովպիայի մասնաճիւղը, Ամերիկայի Միացեալ Նահանգների Նիւ Պրիճֆորթի տիկնանց մասնաճիւղը, Ժնեւի տիկնանց բարեսիրական ընկերութիւնը, որն Ապրիլին 10,000 ֆրանքի կտրօն է ուղարկում եւ խնդրում իրեն

---

[44] «Յօգուտ Որբախնամի կը ծախուին», *Որբունի*, 11:1920, էջ 248:

[45] Երամեան, «Որբը», *Որբունի*, 1:1919, էջ 6:

[46] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 12:1921, էջ 284:

[47] Նոյն:

[48] «Պարտականութիւն մը», *Որբունի*, 5:1919, էջ 81:

նոյնպէս ներառել կազմակերպութեան մասնաճիւղերի թուում[49]: Բացի այդ, աշխարհի տարբեր վայրերում հրաւէրներ են ուղարկում, յատուկ աշխատանքներ են տարւում նոր մասնաճիւղեր կազմելու համար: *Որբունի*ի էջերից տեղեկանում ենք Եթովպիայի մասնաճիւղի 1920-21ի գործունէութեան մասին՝ ըստ եռամսեակների[50]: Այնտեղ նշւում են առանձին տողերով գոյացած գումարների աղբիւրները՝ անդամավճարներ, նուիրատուութիւններ, պատի օրացոյցների վաճառքից ստացուած հասոյթ եւն.:

*Որբունի*ն անդրադառնում է Եթովպիայի ՀՈԸի մասնաճիւղի գործունէութեանը՝ նշելով. «*… հազիւ տարիէ մը իվեր իր գոյութեան ընթացքին, հակառակ տիրող տնտեսական աննպաստ պայմաններուն եւ գաղութին ալ փոքրաթիւ ըլլալուն, անիկա՝ իգական սեռին միայն յատուկ համբուրելի գործով մը՝ որբախնամ գործին փարած, իրականացուցած է շուրջ 719.50 անգլ. ոսկւոյ գումար մը, զոր ամբողջովին կեդրոնը փոխադրած է*»[51]:

Մայիսին Սուտանի Խարթում քաղաքում Նուարդ Շաղոյեանը կազմակերպել է նուագահանդէս, որի ընթացքում հաւաքուած գումարը փոխանցուել է կազմակերպութեանը[52]:

Ընկերութիւնն իր իննամսեայ (1918 Նոյեմբեր-1919 Յուլիս) ժամանակահատուածի գործունէութիւնն արդիւնաւէտ է գնահատում: Իհարկէ այս փաստը, կարծում ենք կապուած էր նաեւ առաջին աշխարհամարտում Օսմանեան Կայսրութեան կրած պարտութեան հետ, երբ հասարակութեան շրջանում ոգեւորութիւնը բարձր էր, ընդլայնւում էր հայերի փրկութեան գործը[53]:

Արտաքին աջակցութեան մէջ առաջատար էր Ատիս Ապեպայի հայ գաղութը: Նպաստներով ձեռնարկին օգնում էին Ամերիկայի Տիթրոյթի հայ որբախնամի տիկնանց միութիւնը, Նիւ Պրիճփորթի հայ տիկնանց, Թրոյի հայ աւետարանական եկեղեցու հովիւ վերապատուելի Ս. Վ. Ռեճէպեանը, Ֆիլատելֆիայի նորակազմ հայ աւետարանական եկեղեցու հովիւ վեր. Բ. Ս. Լեւոնեանը, Ֆրեզնոյի «Ջանասէր» ընկերութեան նախագահ վեր. Ս. Վ. Երամեանը, Պուենոս Այրէսից՝ Իսրայէլ Արծրունին, Փարիզի Ազգային Պատուիրակութիւնը, Նիկոսիայից Հայ Առաջադիմասէր Ընկերութիւնը, Գահիրէից գերապատիւ Վարդան վրդ. Խաչերեանը:

---

[49] «Որբախնամ շարժումը», *Որբունի*, 4:1919, էջ 58-59:

[50] «Հայ Որբախնամ Ընկերութեան Եթովպիոյ տիկնանց մասնաճիւղ», *Որբունի*, 3:1919, 277:

[51] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 5:1919, էջ 82:

[52] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, իննամսեայ տեղեկագիր*, էջ 9:

[53] Այս շրջանի վերաբերող նիւթեր ամփոփուած են *«Հայերի փրկութեան գործը Մերձաւոր Արեւելքում 1915-1923 թթ.» միջազգային գիտաժողովի նիւթերի ժողովածու*ում, խմբ.՝ Յարութիւն Մարութեան, Նարինէ Մարգարեան, ՀՑԹԻ, Երեւան, 2020:

ՀՈԸն գործակցում է նաեւ Հայ Ազգային Միութեան (ՀԱՄ)[54] հետ, եւ 1919 Մարտի 17 թուակիր նամակով տեղեկացնում, որ 3 անդամներով նա մասնակցութիւն կ'ունենայ ՀԱՄի գործերին: Այդ կազմի մէջ են ընդգրկւում Աղեքսանդրիայի վարչութիւնից Գրիգոր Մանուկեանը, Գահիրէի վարչութիւնից Մարտիկ Տէրսահակեանը եւ Յակոբ Մարզպանեանը:

Պէտք է արձանագրել, որ ՀՈՆԸ կառոյց էր, որը յաղթահարել էր մի շարք արգելքներ: Նրա կազմում աշխուժ գործունէութիւն էին ծաւալում յարանուանական եկեղեցու անդամներ: Ինքը՝ ՀՈԸն, համագործակցում էր քաղաքական ու բարեգործական տարբեր կազմակերպութիւնների ու անձանց հետ:

1919 Փետրուարի 1ի ՀՈԸի Գահիրէի վարչական ժողովի նամակից տեղեկանում ենք, որ Զապէլ Եսայեանին յանձնարարուել է զբաղուել Ֆրանսայում, Մեծն Բրիտանիայում, Իտալիայում ՀՈԸի մասնաճիւղեր կազմելու աշխատանքներով:

1919 Յունիսի 15ին Պէյրութում տեղի է ունեցել հաւաքոյթ, որի ժամանակ ելոյթ են ունեցել Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչ Միհրան Տամատեանը եւ ՀՈԸի Կիլիկիոյ պատուիրակներ Հրանտ Ազատեանն ու Յակոբ Աղազարմը, կազմուել է Պէյրութի ՀՈԸի մասնաճիւղ, որին անդամակցել են 50 ազգայիններ, որդեգրուել են հինգ որբեր, կազմակերպուել նուիրատուութիւն[55]: Հաւաքին ներկայ է եղել նաեւ ՀԲԸՄ Կիլիկիայի պատուիրակ Միքայէլ Նաթանեանը, *Որբունի*ի 6րդ համարում «Մասնաճիւղեր»ը բաժնում ներկայացուած են Պէյրութի մասնաճիւղի անդամների ու նուիրատուների, ինչպէս նաեւ որբ որդեգրողների ցանկերը[56]:

1920ին Փարիզի *Վերածնունդ* թերթի տնօրէն Լեւոն Համբարձումեանի ջանքերով կազմւում է ՀՈԸի տեղի մասնաճիւղը, որին անդամակցում են հիմնականում արհեստաւորներ՝ հանգանակութիւնների կազմակերպմամբ եւ որբեր որդեգրելու գործերով: Փարիզի մասնաճիւղի կազմակերպած գեղարուեստական հաւաքոյթին բանախօսել է Աւետիս Ահարոնեանը. հաւաքոյթի հասոյթը յատկացուել է ՀՈԸին[57]:

---

[54] Հայ Ազգային Միութիւնը ստեղծուել է 1916 Նոյեմբերին Եգիպտոսում, ապա նաեւ տարբեր գաղթօճախներում: Այն համախմբում էր հայութեան տարբեր միութիւններ ու քաղաքականան կուսակցութիւններ: ՀԱՄի անդամ եգիպտահայ քաղաքական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ Սապահ Գիւլեանի, Միհրան Տամատեանի եւ Արտաւազդ Հանըմեանի անդամակցութեամբ կազմուած պատուիրակութիւնն իր մասնակցութիւնն է բերել ժամանակի միջազգային բանակցութիւններում: ՀԲԸՄը նոյնպէս մաս էր կազմում դրա, Գահիրէում ներկայացուցիչ ունենալով Միհրան Ղազարոսեանը (Գէորգեան, Թաշճեան, էջ 58. նաեւ՝ Պայրամեան, էջ 98):

[55] «Որբախնամի մասնաճիւղեր», *Որբունի*, 6:1919, էջ 74-75:

[56] Նոյն, էջ 98-99:

[57] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 11:1920, էջ 228:

1920 Յունուարին ՀՈԸն շնորհակալական նամակ է յղել Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարին՝ Կիլիկիայի որբանոցներին 25,000 ֆրանսական ֆրանք փոխանցելու համար[58]:

Լոզանի «Արմենիա Հայ Ուսանողական Ընկերութիւն»ը 1115 ֆրանքի գումար է տրամադրել Հայկական Հանրապետութեան Փարիզի Պատուիրակութեանը: Վերջինս այդ գումարը ուղարկել է ՀՈԸին՝ համարելով այս եղանակը նպատակային ծառայեցնելու լաւագոյն միջոց[59]: Մարսէյում նոյնպէս գումարներ են հաւաքուել ու ՀՈԸին փոխանցուել[60]:

ՀՈԸն գումարներ է ստացել նաեւ Հոնքոնկից, Ճիպութիից, Շանհայից, Նիկոսիայից: Յարութիւն Վ. Աբգարը Գէորգ Իփէքեանի միջոցով մէկ սնտուկով երկու ծրար կերպասեղէն է ուղարկել՝ ընդհանուր 50-55 ոսկի արժէքով: Ճիպութիից Ռ. Որբերեանի միջոցով ստացուել է 3505 ֆրանք, Պաքուպայի որբանոցի համար Պաղտատի մէջ սարքուած կինօսրահից՝ 1312 անգլիական ոսկի[61]: ՀՈԸն դրամական առաքումներ է արել Ատանայի, Այնթապի, Մերսինի որբանոցներին:

Յատկանշական է, որ արդէն 1920ի աւարտին, ՀՈԸի Աղեքսանդրիայի վարչութիւնը առանց հաստատուն եկամտի, միայն անդամավճարներով եւ նուէրներով կարողացել էր սատարել 2000 որբերի սննդի, հագուստի, առողջութեան կրթութեան ծախսերին: Վարչութիւնը շրջաբերական կոչով դիմում է հանրութեանը, որ՝ «*Յանուն բիւրաւոր նահատակներու թողած մատաղատի Որբերուն՝ օգնութեան այս կոչը ուղղելով ամէնուն, կ'սպասենք որ իւրաքանչիւր ոք իր խղճի թելադրութեան համաձայն ինքն որոշէ զոհողութեան իւր բաժինը: Անդամները՝ իրենց տուրքերը աւելցնելով, այլք՝ Որբախնամին անդամագրուելով ու որբեր որդեգրելով, ուրիշներն ալ՝ իրենց առատ նուէրներով պիտի կրնան որոշ չափով դարմանել ներկայ անօրինակ տագնապը:*

Օգնութի՛ւն ուրեմն, ազնիւ հայրենակիցնե՛ր, օգնութի՛ւն...»[62]:

Եթէ փորձենք պատկերացնել, թէ այդ ժամանակ որբերի թուաքանակի հետ կապուած ի՛նչ թուեր էին շրջանառւում, ապա մէջբերենք Կ.Պոլսի բրիտանական դեսպանատան կազմած հայ որբերի վիճակագոյցը, ըստ որի, 1920ի դրութեամբ նրանց թիւը հասնում էր 120,000ի, որից մօտ 40,000ը շարունակում էր մնալ գերութեան մէջ: Վիճակագոյցում մանրամասնւում է, որ թուրքերի գրաւած քաղաքների հայկական որբանոցներում՝ 2503, ամերիկեան որբանոցներում՝ 4670, բրիտանական որբանոցներում՝ 5400 որբ կար: Հանրագումարում ստացւում է 12,623 որբ:

---

[58] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 9:1920, էջ 158-59:

[59] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 6:1919, էջ 95:

[60] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 10:1920, էջ 212:

[61] «Դրսէ կարեւոր նուիրատուութիւններ», *Որբունի*, 10:1920, էջ 211-12:

[62] «Շրջաբերական», *Որբունի*, 11:1920, էջ 230-31:

Թուրքերի չգրաւած քաղաքներում գտնուող հայկական որբանոցներում՝ 11,505, ամերիկեան որբանոցներում՝ 9852: Ընդհանուր՝ 21,357 որբ:

Հայաստանի պարագայում՝ ամերիկեան որբանոցներում՝ 21,000, մասնակի հաստատութիւններում՝ որոնք նպաստ չէին ստանում՝ 25,000, ընդհանուր՝ 46,000 որբ:

Հանրագումարում ստացւում է, որ հաւաքուած որբերի թիւը 79,980 է, չհաւաքուածներինը՝ 40,000[63]:

Բնական է, որ ազգապահպան գաղափարն էր որբերին փրկելու ու հայկական միջավայրում մեծանալու հիմնական գրաւականը:

Այսպիսով, դատելով թուական տուեալներից, կազմակերպութեան գործունէութիւնից, հանրային եւ մամուլի արձագանգից, կարելի է եզրակացնել, որ ՀՈԸն աշխատանքի, համագործակցութիւնների շնորհիւ ժողովրդի համակրանքն է ունեցել եւ կարողացել է իր ներդրումն ունենալ հայ որբերի փրկութեան գործում. «… *Հաճելի պարտականութիւն կը համարենք յայտնել նաեւ որ ժողովուրդին սփուար մասը, մեր պաշտօնավարութեանը ամբողջ տեւողութեանը, որբերուն հանդէպ ցոյց տուած իր գուրգուրանքին եւ Որբախնամիս հանդէպ ունեցած գործնական համակրանքին ճոխ ապացոյցները տուաւ, որուն համար, եւ յանուն որբերուն, կը յայտնենք մեր խորին երախտագիտութիւնը*»[64]:

Այսպիսով, իր կառուցուածքային ձեւով, ճկուն քաղաքականութեամբ, տարբեր քաղաքական, հասարակական ուժերի, յարանուանական եկեղեցիների հետ գործակցելով ՀՈԸն կարողանում էր իրականացնել Ցեղասպանութեան որբերի մի մասի փրկութեան գործը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՈՐԲԱՀԱՒԱՔԻ ԵՒ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՒՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ՀՈԸի գործունէութեան ուղղութիւններից էր նաեւ որբահաւաք աշխատանքների կազմակերպումն ու որբանոցների ֆինանսաւորումը: Կարեւոր նախաձեռնութիւն էր ՀՈԸի կողմից Սիրիայի պատուիրակութեան ձեւաւորումը՝ յանձինս Կարապետ Սեֆէրեանի (ներկայացնում էր Եգիպտահայ Նպաստամատոյցը), Մկրտիչ Եփրէմեանի (ներկայացնում էր Եգիպտոսի ՀԱՄը), եւ Ռուբէն Հերեանի (ներկայացնում էր Եգիպտոսի ՀՈԸն[65]): Այս պատուիրակութեանը ՀՈԸն 1000 եգիպտական ոսկի էր տրամադրել եւ պատգամել աշխատել խիստ օրակարգով, բայց այս կազմով պատուիրակութիւնը կարճ գործունէութիւն է ծաւալել:

---

[63] «Հայ որբերու թիւը», *Որբունի*, 10:1920, էջ 206:

[64] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, իննամսեայ տեղեկագիր*, 25-26:

[65] Ռուբէն Հերեանի որբահաւաք եւ որբախնամ գործունէութեան մանրամասները տե՛ս՝ Ն. Մարգարեան, «Միջագետքի անապատների հայ որբախոյզները (1918-1923 թթ.)», *Հայագիտութեան հարցեր*, 1(13):2018, էջ 39-57:

Կ.Պոլսում լոյս տեսնող *Ժողովուրդի ձայնը* թերթը «Անապատի մեծ առաքեալը» խորագրով յօդուած է հրապարակել Հերեանի գործունէութեան մասին՝ նշելով, որ նա Հալէպ, Ատանա, Հոմս, Համա, Դամասկոս այցերից ու կազմակերպական գործերից յետոյ մեկնում է Միջագետքի անապատներ, Տէր Զոր, Խապուր, Սինճար: «*Մօտ 7 ամիս կ'ընէ որ ան անապատին մէջ անյայտացաւ: Որեւէ լուր չի կայ իրմէ: Բայց ինչ հրաշք: Որբեր ու որբուհիներ կը հասնին շարան-շարան: Հալէպի որբանոցները կը լեցուին նորեկ այդ կէս արաբացած որբուկներով: Խեղճ աղջիկները որքան կը խպնին դէմքի կապոյտ խարաններէն*»[66]:

Հերեանը ֆինանսական լրացուցիչ միջոցներ հայթայթելու նպատակով Ատանայում, Պոլսում, Փարիզում, Նիւ Եորքում կազմակերպում է բանախօսութիւններ, հանգանակութիւններ: «Որբերու օրը» յօդուածում նա գրում է. «*Ես ալ, որպէս համեստ գործող մը, կոչ կ'ուղղեմ ամէն անոնց, որոնք հայ անունը կը կրեն եւ հայուն արիւնը կ'եռայ իրենց երակներուն մէջ եւ կ'ըսեմ. "Օգնեցէ՛ք որբերուն": Ամէն հայու բաղձանքն է որ բոլոր գերի վարուած որբերը ազատագրուին, բայց դժբախտաբար անոնց խնամատարութեան գործը համապատասխան չէ մեր բաղձանքին*»[67]: Նա իր բանախօսութիւններից մէկի ժամանակ նշում է, որ անապատներից ազատագրուած շատ աղջիկներ ու որբեր փախել են եւ վերադարձել իրենց տէրերի մօտ, որովհետեւ «*նպաստներու անբաւարարութեան պատճառով, պէտք եղած խնամքէն զրկուեցան*»: Նրա յորդոր-խնդրանքը մէկն էր. «*Հայ ժողովուրդ, ողորմութիւն տալու պէս մի՛ օգներ որբին, այլ նկատէ թէ քու զաւակդ է ան, եւ տուր անոր, ինչ որ լաւագոյն կերպով կրնաս ... Վայ այն հայուն որ չ'ըմբռներ այս օրուան մեծութիւնը եւ իր լաւագոյնը չ'ըներ*»[68]:

1921ին Հերեանը, վերադառնալով ԱՄՆից, Յունիսի 21ին բանախօսել է Գահիրէի Հայկական Սրահում՝ «Դրուագներ որբերու կեանքէն» թեմայով: Նա կարողանում էր իր անձնական օրինակով ազդել հասարակութեան վրայ, արտասահմանի հայութեան նկատմամբ իր հիասթափութիւնն էր յայտնում՝ նշելով. «*Կը թուի շուտ մոռցած ըլլայ հայ որբը եւ իր պարտականութիւնը դէպի հայ փառապանքը»:* Տարբեր տեղերում հանդիպում ենք նրա այն տեսակէտին, թէ *«միայն հայուն դրամը կրնայ հայ որբը կշտացնել*»[69]:

ՀՈԸի հետ գործակցել է որբահաւաք Լեւոն Եօթնեղբարեանը եւս: Աղեքսանդրիայի ՀՈԸն 1920 Յունուարի 31ին շնորհակալական նամակ է յղել Եօթնեղբարեանին՝ Հաուրանի շրջանում որբահաւաք աշխատանքների,

---

[66] *Ժողովուրդի ձայնը*, 1/14 Սեպտեմբեր 1919, թիւ 283:

[67] *Ժողովուրդի ձայնը*, 14/27 Յունիս 1920, թիւ 578:

[68] Նոյն:

[69] *Միութիւն*, Մայիս-Յունիս, 81:1921, էջ 45:

ինչպէս նաեւ որբերի մասին տեղեկութիւնների համար, որտեղ նաեւ յաջողութիւն է մաղթում նրան իր յետագայ գործունէութեան համար[70]:

Նամակից տեղեկանում ենք, որ հաւաքուած որբերի ցանկն ու լուսանկարները պարբերաբար պիտի հրապարակուեն *Որբունի*ի էջերում: Ընդ որում առաջին ընդարձակ ցուցակում ներկայացուածներից 9ը չեն կարողացել տեղեկութիւն տալ իրենց մասին[71]: Եօթնեղբարեանը առիթը բաց չի թողնում կոչ անելու բոլոր հայերին, ովքեր իսլամական տներում պահուող որբերի մասին տեղեկութիւններ ունեն՝ իրեն տեղեկացնեն, որպէսզի ինքը կարողանայ աշխատանքներ տանել նրանց փրկութեան ուղղութեամբ, իսկ մինչայդ իր ազատագրած որբերին նա տեղաւորել էր Դամասկոսի ազգային որբանոցում[72]:

Որբախնամ գործի մասին խօսում է նաեւ Անդրանիկ Կենճեանը՝ գրելով. «*Հաւրանի շրջանէն վերջերս սփրացած ենք արդէն քսանի չափ - մեծ մասով աղջիկ - որբեր, զորս մեր խրկած մասնաւոր Առաքելութիւնը հաւաքած է բազմազան դժուարութիւններով*»: Նա պատմում է տասնամեայ մի աղջկայ մասին, ով մեծ դժուարութեամբ է խստովանում իր հայ լինելու փաստը: Նրան բերում են իրենց հետ, բայց մէկ օր անց աղջիկը փախչում է իրեն առեւանգած ընտանիքի մօտ: Կենճեանը եզրակացնում է. «*… այնքան խոր տպաւորուած է իրենց սիրտերուն մէջ որ հայ ըլլալը՝ թուրքին սուրին զոհ ըլլալ է… հայէն չէ որ կը փախի, թուրքին սուրէն…* »[73]:

ՀՈԸն իր տեղեկագրերում եւ *Որբունի*ում պարբերաբար անդրադառնում էր իր հովանաւորութեան տակ գտնուող որբանոցների գործունէութեանն ու իր կատարած աշխատանքներին: ՀՈԸն 1919 Յուլիսի դրութեամբ իր խնամատարութեան տակ էր վերցրել 5 որբանոցներ՝ մօտ 3200 որբերով: Դրանք էին Պաղտատ-Պաքուպայի որբանոցը՝ 1200 որբ, Ատանայի որբանոցը՝ 600 որբ, Անթուրայի որբանոցը՝ 600 որբ, Դամասկոսի որբանոցը՝ 220 որբ եւ Այնթապի որբանոցը, որտեղ նախատեսւում էր 5-600 որբ[74]: ՀՈԸն իր տեղեկատուութիւններում պարբերաբար նշում է, թէ բացի հագուստից, սննդից ի՛նչ ֆինանսներ է ուղղել այդ որբանոցներին. ընդհանուր առմամբ՝ 530,000 եգիպտական ղուրուշ:

ՀՈԸին արտասահմանից կարեւոր նուիրատուութիւններ են կատարել ԱՄՆից, Մեծն Բրիտանիայից եւ Իտալիայից՝ 50,000ական, Ֆրանսայից՝ 5000 ֆրանք, համագումարը՝ 155,000 ֆրանք[75]:

---

[70] *Անապատի ագռաւները. Լեւոն Եօթնեղբարեանի յուշերը*, խմբ.՝ Լեւոն Փարեան, Մարօ Փարեան, Հայաստան հրատ., Երեւան, 2017, էջ 105:

[71] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 9:1920, 177:

[72] Նոյն, 156-57:

[73] Անդրանիկ Կենճեան, «Հոգիներու գերում», *Որբունի*, 9:1920, էջ 152:

[74] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, իննամսեայ տեղեկագիր…*, էջ 11:

[75] «Նպաստի առաքում», *Որբունի*, 1:1919, էջ 16:

Փորձենք առանձին-առանձին ներկայացնել իւրաքանչիւր որբանոցում իրականացուած ՀՈԸի գործունէութիւնը:

ՊԱՂՏԱՏ-ՊԱՔՈՒՊԱՅԻ ՈՐԲԱՆՈՑ

Ինչպէս արդէն նշել ենք, ՀՈԸն իր հոգատարութեան տակ ունէր միքանի որբանոցներ, որոնցից մի մասն ամբողջութեամբ էին ֆինանսաւորւում իր կողմից, միւսները՝ մասամբ: Պաքուպայի որբանոցն այն որբանոցներից էր, որին ՀՈԸն տրամադրում էր մասնակի ֆինանսական աջակցութիւն:

Տարագրեալներին օգնութիւն տրամադրելու, տեղում կազմակերպական աշխատանքներ իրականացնելու համար Իրաքի ազգային իշխանութիւնն աշխուժացնում է դեռեւս 1916ին կազմուած Տարագրելոց Պաշտպան Մարմնի գործունէութիւնը: Աստիճանաբար աւելացող տարագիրներին կազմակերպուած օգնութիւն ցուցաբերելու համար Մարմնին փոխարինելու է գալիս Միջագետքի Հայ Տարագրելոց Յանձնախումբը[76]՝ աւելի մեծ լիազօրութիւններով, թեմի առաջնորդ Մուշեղ արք. Սերոբեանի նախագահութեամբ[77]:

Որբախնամի համար Մուշեղ արքեպիսկոպոսը տեղեկութիւն է հաղորդում, որ Վանից եւ Սալմաստից Պաղտատ հասած հայ տարագիրների կողքին կան մօտ 1200 որբեր: Աղեքսանդրիայի եւ Գահիրէի վարչութիւնն ընդհանուր համաձայնութեան են գալիս որ որբերի խնամատարութիւնը յանձնարարուի Մուշեղ արքեպիսկոպոսին, ով պէտք է գործէր բրիտանական զինուորական իշխանութեան գործուն օժանդակութեամբ:

Մուշեղ արքեպիսկոպոսը Պաքուպայի որբերին ցուցակագրելու եւ տեղում գաղթականների հարցերով զբաղուելու համար 1918 Հոկտեմբեր 15ին այնտեղ է ուղարկում Պաղտատի Տ. Վահան քահանայ Թաճիրեանին: Նրան այդ հարցում աջակցում է վանեցի Տ. Յովհաննէս քահանայ Սիմոն-

---

[76] Յիշեալ յանձնախումբը գործել է տարբեր անուններով՝ «Հայ Ազգային Աղքատախնամ Մարմին» (1922-1926), «Տիկնանց Աղքատախնամ Մարմին» (1926-1990): Ժամանակի ընթացքում Պաքուպայի վրանաւանը փոխադրուած գաղթականների մի մասը փոխադրուել է Նահր Օմարի գաղթաւանը, իսկ ուրիշները տեղաւորուել են Պաղտատ, մի մասն էլ՝ Գէյլանի քեմփ (Վ. Մինասեան, *Իրաքահայ գաղութը, խոր անցեալի գաղթօճախներ*, http://asbarez.com/arm/author/asbarezstaff/page/2226/):

[77] Սեդա Օհանեան, «Միջագետքի հայկական կազմակերպութիւններուն գործունէութիւնը գաղթականութեան փրկութեան եւ որբահաւաքի աշխատանքներուն 1916-1923 թթ.»՝ *Հայերի փրկութեան գործը Մերձաւոր*, էջ 92-116. նաեւ նոյնի՝ «1918ի Վանի վերջին նահանջը, գաղթականներու անցած ուղին, Պաքուպայի եւ Նահր Օմարի գաղթակայանները», *Իրաքի հայերը. գիտաժողովի նիւթեր (29-31 Մայիս 2017)*, խմբ. Ա. Տագէսեան, Հայկազեան Համալսարանի հրատ., 2021, էջ 115-72. նաեւ՝ Անդրանիկ Տագէսեան, «Պաքուպայի որբանոցայինները. ժողովրդագրական պատկեր եւ ցանկ», *Իրաքի հայերը*, էջ 173-246:

եանը, ով վրանաքաղաքի բաժիններով ցուցակագրում է բոլոր որբերին, ինչպէս նաեւ մօտ 40 կանանց, ովքեր 30ից բարձր տարիք ունէին: Նախատեսւում է, որ նրանք պէտք է լինեն որբանոցի խնամակալուհիները, կազմակերպւում է նաեւ վրանաքաղաքի կրօնական կեանքը[78]:

Նոյեմբերի 5ին Մուշեղ արքեպիսկոպոսը տարագիրների համար յատուկ կոմիտէ ստեղծելու նպատակով նիստ է հրաւիրում, հաստատում է կազմը, եւ յայտնում, որ Եգիպտոսի ՀՈԸն տարեկան 4000 ոսկի գումար է տրամադրելու Պաքուպայի որբանոցին, որից 1000 ոսկի արդէն ստացուել է: Յետագայում այս գումարը հասցւում է մինչեւ 5000ի: Նորաստեղծ յանձնաժողովն ամէն ինչ անում է արդիւնաւէտ գործելու համար: Շուտով հաւաքւում են մօտ 300 երկսեռ երեխաներ, որոնց կենտրոնացնում են թիւ մէկ մասնաշէնքում, նրանց խնամքն յանձնւում են մօտ 20 մայրիկների, որբանոցի հսկողութիւնն յանձնւում է Ռոզ Գույումճեանին, Գասպար Խանին, Եսթէր Աճէմեանին: Սրբազանը դիմում է նաեւ զօրավար Ուստինին՝ աշխատողներին վարձատրելու եւ այլ ծախսեր հոգալու խնդրանքով[79]:

Սրբազանը որբերի համար փորձում է նաեւ կրթական դասեր կազմակերպել[80]: Տարագիր 11 ուսուցիչներ՝ Մարտիրոս Խերանեանի ղեկավարութեամբ, ստանձնում են այդ գործի պատասխանատուութիւնը: Նոյեմբերի 19ին սրբազանը Պաղտատից Պաքուպայի որբերի համար բերում է հագուստ, հաց թխելու համար փուռ կառուցելու անհրաժեշտ պարագաներ[81]: Մինչ այդ կառավարութիւնը 32 վրաններից կազմուած առանձին վայր է տրամադրում որբանոցին եւ գաղթականներին: Նոյեմբերի 20ին որբանոցի սաները հանդիսաւոր արարողութեամբ տեղափոխւում են որբանոցի վրանային մասնաբաժին: Սրբազանը խնամակալութեան նոր մարմին է նշանակում՝ Կանաչեան վարդապետի նախագահութեամբ, Թեհրանի եղբայրական կոմիտէի ներկայացուցիչ Արսէն Կէօրկիզեանին էլ՝ որպէս կառավարութեան մօտ միջնորդ ու տնօրէն: Կառավարութիւնը որբանոցի մասնաշէնքին է տրամադրում մէկ սպայ եւ 4 անգլիացի զինուոր պահակ-վերահսկիչ:

Մուշեղ սրբազանը նամակներով տեղեկացնում է տիրող վրանային որբանոցի վիճակի մասին: Յետագայում նա յաճախ բացակայում է թեմից, տեղեկագրերը ուշանում են, ուստի կազմակերպութիւնը Պաղտատ է ուղարկում Վարդան Երամեանին՝ տեղում ՀՈԸ մարմին ստեղծելու եւ ընդհանուր գործերը վերահսկելու համար: 1919ին որբերի թիւը հասնում է 1200ի, որի մէջ մտնում էին Մոսուլի 300 եւ այդքան էլ Համատանից հասած որբե-

[78] Եղիշէ Վարդանեան, *Անապատէ անապատ*, Մխիթարեան տպարան, Սուրբ Ղազար-Վենետիկ, 1923, էջ 114:

[79] Նոյն, էջ 119:

[80] Մուշեղ Սերոբեան, *Դիտումներ եւ դատումներ (էջեր օրագրէս)*, Ազդակ, Պէյրութ, 1932, էջ 122:

[81] Վարդանեան, էջ 120:

րը[82]: ՀՈԸն դիմում է Միջագետքի Հայ Տարագրելոց Մարմնին եւ Պաղտատի ազգային իշխանութիւնների ատենապետ Մարտիրոս Գոյումճեանին: Նրանք, համաձայնաբար, Պասրայի պելճիքական պատուոյ հիւպատոս Երուանդ Տերվիշեանին՝ հանգանակութիւն կազմակերպելու համար ուղարկում են Հնդկաստան, Ճաւա եւ Սինկափուր՝ տեղի հայերից նուիրատուութիւններ հաւաքելու: Գոյացուած հասոյթը հնարաւորութիւն է տալիս հոգալու որբանոցի հիմնական կարիքները մինչեւ 1920 Օգոստոս:

Պաքուպայի 12-13 հազարի հասնող հայ գաղթականներին 1920 Օգոստոս 18ին տեղափոխում են Պասրայի մօտ գտնուող Նահր Օմար բնակավայր, որտեղ մնում են մինչեւ 1921 Յունիսը:

Ալեքսանդր Խատիսեանը, 1920ին իր Եգիպտոս կատարած այցի ժամանակ հանդիպել ու քննարկել է ՀՈԸի երկու հատուածների վարչական ժողովի անդամների հետ, Նահր Օմարի որբանոցի Հայաստանի Հանրապետութիւն տեղափոխելու հարցը: Նա ընդառաջելով իրեն արուած առաջարկին, խոստացել է ՀՈԸին պետութեան հովանաւորութեան տակ առնելու մասին հարկ եղած պաշտօնական ձեւակերպումները անել[83]:

Նահր Օմարի որբանոցի երեխաները, այդ թւում նաեւ իրենց միացած ՀԲԸ Միութեան Մոսուլի փակման ենթակայ որբանոցի 47 որբերը, Երուսաղէմ են տեղափոխւում 1922 Փետրուար 11ին, որտեղ հիմնւում են Արարատեան եւ Վասպուրականի որբանոցները[84]: Միայն 1924ին է յաջողւում 16 տարին լրացած 145 որբի տեղափոխել Խորհրդային Հայաստան[85]:

ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԸ

Ատանայի որբանոցը ՀՈԸի հովանաւորութեան տակ վերցնելու առաջարկ անում է Սիրիայի եգիպտահայ պատուիրակ Ռուբէն Հերեանը: Վերջինիս յանձնարարուած էր 1918 Դեկտեմբերին ճշգրիտ տեղեկութիւններ տալ Սիրիայի եւ յարակից տարածքների որբերի մասին: Հերեանը, ամփոփ տեղեկութիւններ է տալիս Պէյրութի, Զահլէի, Դամասկոսի, Հոմսի, Համայի եւ այլ որբերի մասին: Իր կազմած տեղեկագրում նա յաւելել է, որ Ատանայի մօտ 350 որբերը թշուառ վիճակում են, հաւաքուած են տեղի ՀԱՄի շէնքում եւ հազիւ մէկ ամսուայ սնունդ ունեն: Նա իր նամակում յորդորել է անյապաղ ստանձնել որբերի խնամքը, քանի որ նրանք ոչ մի օգնութիւն չեն ստանում դրսից եւ մինչ այդ իրենց գոյութիւնը պահել են միայն պատահական նպաստներով[86]:

---

[82] *Իննամսյայ տեղեկագիր*..., էջ 13:

[83] Յ. Թ. Գայայեան, «Անյետաձգելին», *Որբունի*, 11:1920, էջ 218:

[84] Էդուարդ Մելքոնեան, *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատմութիւն*, Մուղնի, Երեւան, 2005, էջ 122:

[85] Գէորգեան, Թաշճեան, էջ 157:

[86] *Իննամսեայ տեղեկագիր*..., էջ 14:

ՀՈԸն ստանձնում է որբանոցի հոգածութիւնը: Գահիրէի, Աղեքսանդրիայի վարչութիւնների կազմակերպած որբանպաստ հաւաքոյթների հանագանակութիւնները յառաջացնում են մօտ 5000 ոսկի գումարի հասոյթ, որն անմիջապէս նպատակին է ուղղւում[87]: *Որբունի*ում տպագրուած է տեղեկագիր, թէ 1919 Մարտ, Ապրիլ, Մայիս ամիսներին Ատանայի որբանոց ուղարկուած գումարներն ինչ նպատակներով են ծախսուել՝ նպարեղէն, լոյս, հանդերձեղէն, մաքրութիւն, վառելանիւթ, գրենական պիտոյքներ, փոխադրութիւն, փուռի շինարարութիւն եւն.[88]:

1919ի ամռանը որբանոցը պատսպարում էր մօտ 600 երկսեռ որբ: Տեղում խնամակալ մարմին ընտրելու համար Ատանա է մեկնում Հերեանը, ով գործերը դեռ չաւարտած, ինչպէս արդէն նշել ենք, մեկնում է Տէր Զոր: Յետագայում, ՀԱՄը եւ որբանոցի վարիչ մամինը սկսում են նոր որբեր ընդունել՝ հասցնելով նրանց թիւը 1300ի, չնայած Ատանայի որբանոցը կարող էր տեղաւորել միայն 400-500 որբեր, ինչը նորանոր խնդիրներ է առաջացնում ՀՈԸի, ՀԱՄի եւ որբանոցի տնօրէնութեան համար: Որոշ ժամանակ ֆրանսական զինուորական իշխանութիւնը որբերի համար հաց եւ ալիւր է փոխանցում, բայց իրավիճակը էականօրէն չի փոխւում: ՀՈԸի Աղեքսանդրիայի հատուածը Գահիրէի հետ համախորհուրդ՝ վարիչ մարմնի որոշումը փոխանցում է Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչ Տամատեանին եւ լիազօրում նրան՝ որբանոցի հաշիւները վերցնելու եւ ՀԱՄի հետ համախորհուրդ աւելի արդիւնաւէտ գործող վարչութիւն ստեղծելու: 1919ին կազմւում է վարիչ մարմին, հետեւեալներից.- գեր. Տ. Գէորգ Ծ. վրդ. Ասլանեան (Ատանայի առաջնորդ), Հրանտ Ազատեան՝ ՀՈԸի պատուիրակ, Յովհաննէս Ասլան՝ տեղի ՀԱՄի անդամ: Որբանոցի տնօրէնութիւնը յանձնւում է Խաչատուր Գռուզեանին, ով փորձառու էր այդ ոլորտում:

Վարիչ մարմնի տեղեկագրում կարդում ենք, թէ ինչպէս են երեխաները ջանք գործադրում հայերէն խօսելու համար, ինչպէս են ոգեւորուած, գրքերը ձեռքներում դասի ժամերից դուրս կարդում, գրում ու երգում: Անդրադարձ է կատարւում նաեւ որբերի նախկին աքսորական չորս տարիներին, նրանց անցկացրած կեանքի բնոյթին՝ ապրել մուրալով, գողանալով եւ յափշտակելով, բայց հիմա «*նրանց շուարուն աչքերու եւ դաժանացած դէմքերուն վրայ այլեւս կը տեսնուին ինքնագիւտ ուրախութեան շող եւ ժպիտ*»[89]: Բացի այդ, որբանոցում գործել են նաեւ արհեստանոցներ, որտեղ որբերից շատերը արհեստների մէջ են հմտացել, տղաների համար գործել է դերձակութեան բաժին[90]:

---

[87] Նոյն:

[88] «Որբախնամի որբանոց-Ատանա», *Որբունի*, 6:1919, էջ 100:

[89] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 7:1919, էջ 108:

[90] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 8:1919, էջ 126:

Այնուհետեւ, Կիլիկիայի հայութիւնը երկրորդ անգամ է ենթարկւում բռնագաղթի, որի ընթացքում կարեւոր էր լուծել նաեւ որբերի տեղափոխութեան խնդիրը, որն իր պատասխանատուութեան տակ է վերցնում Զապէլ Եսայեանը, ով միացեալ պատուիրակութեան կողմից, Փարիզից վերադառնալուց անմիջապէս յետոյ, ստանձնել էր Կիլիկիայի որբերի եւ որբանոցների խնամատարութիւնը:

Նա Ապրիլի 2ին հանդիպել է Կիլիկիայի գլխաւոր կառավարիչ նշանակուած ֆրանսացի զօրավար Պրեմոնի հետ, ով հաւաստել էր, որ պատրաստ է որբերի անվտանգութիւնն ապահովել: Քանի որ առկայ էր Մերսին-Ատանա երկաթգծի վտանգուած լինելու փաստը եւ նահանջի կամ ռազմական գործողութիւնների ժամանակ բարդ էր որբերի տեղափոխումը կազմակերպելը, որոշւում է Մերսին տեղափոխել Ատանայի որբերը[91]:

ՀՈԸի Ատանայի որբանոցից Մերսին են տեղափոխւում մօտ 700 որբեր: Առաջին անգամ փոխադրւում է 400, երկրորդ անգամ՝ 300 որբ՝ առաջնահերթութիւն տալով ամէնափոքրերին եւ աղջիկներին: Մերսինում նրանք զբաղեցնում են հայոց եւ յունաց վարժարանները: Որբանոցում են մնում 245 չափահաս որբ տղաներ, որոնցից մի մասը որպէս պահակ զէնք է ստանում, ընդ որում շէնքը համեմատաբար ապահով էր, քանի որ նկուղ ունէր[92]: Որոշ ժամանակ անց ՀՈԸն արդէն ֆինանսապէս իվիճակի չէր հոգալ Ատանայի որբերի ծախսերը:

Ինչ վերաբերում է Մերսին տեղափոխուած որբերին, ապա խնամակալ մարմինը, հաշուի առնելով որ ամիսներ առաջ ՀԲԸՄը, արդէն առաջնորդի միջոցով ցանկութիւն է յայտնել իր խնամատարութեան տակ վերցնել տեղափոխուած որբերը, ՀՈԸի զոյգ վարչութիւնները, համախորհուրդ նամակով դիմում են ՀԲԸՄին, որը համաձայնում է հոգալ Մերսինի որբանոցի 314 որբերի ծախսերը[93]:

ԱՅՆԹԱՊԻ ՈՐԲԱՆՈՑ

Այնթապը տարածքի միւս շրջանների համեմատ առաւելութիւններ ներկայացնող վայր էր՝ օդի մաքրութիւն, ջրի առկայութիւն, բուսականութիւն, բնակութիւն, կրթական գերակայութիւն: Այս հանգամանքներն հիմք էին, որ շատերն այդտեղ կենտրոնանային:

Դեռեւս 1918ի սկզբներին ՀՈԸն հեռագրային կապի մէջ էր Լոնտոնի Հայոց Միացեալ Ընկերութեան հետ եւ նրանից ստանում է որոշակի գումար: ՀՈԸն սկսում է բանակցել զինուորական իշխանութիւնների հետ՝ Այնթապում որբանոց բացելու համար: Շուտով ՀՈԸն կապ է հաստատում նաեւ

---

[91] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 10:1920, էջ 188:

[92] Նոյն, 189:

[93] Գէորգեան, Թաշճեան, էջ 145. նաեւ՝ «Որբախնամ շարժում», *Որբունի*, 11:1920, էջ 223-24:

Պէյրութում հաստատուած «հայրենադարձութեան եւ օգնութեան վարչութեան»ի (Repatriation and Relief Administration, RRA) հետ՝ ազգային միութիւնների հետ համախորհուրդ գործի անցնելու կապակցութեամբ նախնական խորհրդակցութիւններ անելու եւ համաձայնութեան գալու նպատակով:

Այդ նպատակով նոր պատուիրակութիւն է կազմւում Յակոբ Աղազարմի գլխաւորութեամբ, Հրանտ Ազատեանը նշանակւում է խորհրդական:

ՀՈԸն այդ ժամանակ ունէր ծրագիր՝ Պէյրութում հանդիպել RRAի պետ՝ Կոմիսար Հոքերին, ստանալ նրա միջոցով բրիտանական զինուորական իշխանութեան մօտ եղած 2000 ոսկի գումարը, ծրագրուած ձեռնարկների համար ապահովել վերջիններիս գործակցութիւնը, այցելել Անթուրա, Դամասկոս, Հոմս, Հալէպ, Այնթապ, որբանոցը բացելուց յետոյ անցնել Ատանա, եւ այնտեղ բանակցել ՀԱՄի հետ՝ հայկական որբանոցի այստեղ փոխադրելու համար[94]: Չորսամսեայ աշխատանքներն այս ուղղութիւններով Աղազարմը յաջողութեամբ կատարեց[95]:

Իվերջոյ համաձայնութիւն է գոյանում, որ Այնթապի որբանոցը պէտք է ՀՈԸի խնամատարութեամբ լինի, բրիտանական իշխանութիւնները պէտք է հոգան սննդի խնդիրը, նախատեսւում է, որ որբանոցն ունենայ 500 որբ՝ 5-14 տարեկան, երկկողմանի ծնողազուրկ: Որբերն ընդունուելու են բժշկական քննութիւնից յետոյ: Նախատեսւում է, որ այն ոչ միայն ապաստարան լինի, այլ նաեւ ուսումնարան[96]:

1919 Օգոստոսին Աղազարմը մեկնում է Այնթապ, ստեղծւում է խնամակալ-վարիչ մարմին, որի անդամներն էին Ներսէս քահանայ Թաւուգճեանը՝ որպէս նախագահ, ատենապետն էր Գէորգ Ասլանեանը: Աղազարմն անձամբ է մասնակցում խնամակալ մարմնի առաջին նիստերին: Շուտով նա հեռագրում է Համայի որբանոցի տնօրէն Ղազարոս Ղալիկեանին, որ Համայի որբանոցի վերջին որբերը - որոնք մեծ մասամբ արաբների մօտից ազատագրուածներ էին - տեղափոխուեն Այնթապ եւ ինքն էլ դառնայ նորահաստատ որբանոցի տնօրէն: Ղալիկեանը Համայի բրիտական իշխանութեան ներկայացուցիչ սպայ Նեւի միջնորդութեամբ Այնթապ է ուղարկում որբանոցի գոյքը, ինքը հասնում է Սեպտեմբերին, վարձակալում են եռայարկ Պարսումեան շէնքը, եւ նախապատրաստւում: Բացումը տեղի է ունե-

---

[94] *Տեղեկագիր Հալէպի Հայկական Որբանոցի (31.7.15-30.9.1919)*, Հալէպ, ա.տ., 1919, էջ 10:

[95] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, տեղեկագիր..., շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31*, էջ 8-9:

[96] *Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն*, էջ 5:

նում Սեպտեմբերի 25ին: Արձանագրուող որբերի առաջին խումբը՝ 70 հոգի, Սեպտեմբերի 22ին քննութեան ենթարկուելով ընդունւում է որբանոց[97]:

Նոյեմբերին որբերի թիւը հասնում է 117ի, որոնց բաժանում են երեք կարգի՝ գրել-կարդալ չիմացողներ, սկսնակներ եւ նախնական կրթութիւն ստացածներ: Կազմւում է ուսուցչական խորհուրդ: Սկզբնական շրջանում դասաւանդւում են հայոց լեզու, հայոց պատմութիւն, թուաբանութիւն, գեղագիտութիւն, որին աւելանում է նաեւ ֆրանսերէնը: Պաշտօնական լեզուն խստօրէն սահմանւում է հայերէնը: Որբերի մեծամասնութիւնը Այնթապ-Քիլիսի տարածաշրջանից էր, եւ երկու ամիս յետոյ անգամ բառ չիմացող որբերը խօսում էին հայերէն: Մշակւում է արհեստանոց հիմնելու ծրագիր եւ 1920ի սկզբին դիմւում Եգիպտոսի Այնթապի տարագրելոց մարմնին՝ արհեստանոցի ծախսերը հոգալու համար, բայց քաղաքական պայմանները ձախողել են ծրագրուած ձեռնարկները: Որբերի թիւը նախատեսւում էր հասցնել մինչեւ 500ի, չնայած շէնքային պայմանները չէին բաւարարում ու քաղաքական իրավիճակը թոյլ չէր տալիս:

1919 Հոկտեմբերին, Այնթապում աստիճանաբար անգլիական զօրքերին փոխարինում են ֆրանսական զօրքերը: Միեւնոյն ժամանակ Քեմալի եւ նրա համախոհների թիւը տակաւ աւելանում է քաղաքում: 1919 Նոյեմբեր-1920 Մարտ շրջանին քաղաքական վիճակը լարւում է: Մարաշի 1920ի փետրուարեան ընդհարումները ոգեւորում են Այնթապի իսլամ բնակչութեանը, մինչ հայերը հետզհետէ կենտրոնանում են հայկական թաղամասում եւ նպախապատրաստւում ինքնապաշտպանական գործողութիւններին:

Այս ընթացքում որբանոցը կարողանում է շարունակել իր աշխատանքները. 1920ին անգամ կիսամեակային քննութիւններ են անցկացւում (ֆրանսական կողմը ուսուցման համար գումար էր տալիս), չնայած արդէն մատնուել էին տնտեսական տագնապի քանի որ գումարները տեղ չէին հասնում:

Այս ընթացքում որբանոցները բացառիկ կարեւորութիւն ունէին: Այնթապում մօտ 2500 որբեր կային, որոնք Ապրիլի 1ից կենտրոնացել էին հայկական թաղամասում, ամերիկեան դրօշի հովանու տակ: Նոյնն էր արել նաեւ ՀՈԸի որբանոցը[98]: Վերջինս փոխադրւում է Ամերիկեան որբանոցի եւ Աղջկանց քոլէճի շէնք: Ապրիլին սկսւում են անհաւասար բախումները Այնթապում: Այս ընթացքում մշտապէս սննդի պակաս կար, իսկ արդէն պաշարման ժամանակ սովն անխուսափելի էր:

---

[97] *Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն*, էջ 6-7. նաեւ՝ *Իննամսեայ տեղեկագիր…*, էջ 17-20. նաեւ՝ *Հայ Որբախնամ Ընկերութիւն, տեղեկագիր…, շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31*, էջ 11-14:

[98] *Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն*, էջ 11:

Ապրիլի 17ին սկսում է բախումների երկրորդ շրջանը: Հայերը 16 օր շարունակ ինքնապաշտպանւում են միայնակ, որից յետոյ միանում են ֆրանսական ուժերը, իսկ թնդանօթների գործածութիւնը կռիւների կենտրոնը դարձնում են քաղաքի այն մասը, ուր կենտրոնացած էին Ամերիկեան քոլէճն ու հիւանդանոցը՝ թիրախաւորելով որբերին:

Որբերի փոխադրութեան անհրաժեշտութիւնը դառնում է անխուսափելի, որի հետ կապուած հարցերը լուծելու համար ժամանում է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի Հալէպի տնօրէն Լեմպըրթը: 1920 Մայիսի 25ին, մօտ 3000 հայութեան հետ բեռնակառքերով Այնթապից մեկնում է առաջին կարաւանը:

Ամերիկացիների տրամադրած եւ սեփական գումարներով վարձուած 12 կառքերով գաղթի ճանապարհը բռնում են ՀՈԸի որբերն եւ ղեկավարութեան մի մասը: Երկու օրուայ ճամփորդութիւնից յետոյ կարաւանը իջեւանում է Քիլիսի եկեղեցում եւ դպրոցում, Մայիսի 30ին Քաթմայից տեղափոխւում են Հալէպ, ապա՝ Յունիսի 1ին Պէյրութ: Պէյրութում նրանց ծախսերը հոգում է Նպաստամատոյցը: Վրանների տակ մէկուկէս ամիս մնալուց յետոյ Լիբանանի տարածքում հաւանական ապաստան գտնելու քննարկումներից յետոյ, որոշւում է որբերը տեղափոխել Ճունի: Երկու անգամով՝ Յուլիսի 21ին եւ 24ին 122 որբեր հաստատւում են այստեղ: ՀՈԸն հոգում է Ճունիի որբանոցի ծախսերը: Ղալիկեանն իր որբերի հետ տեղափոխւում է այդտեղ ու շարունակում իր աչալուրջ հսկողութեամբ կարգաւորել որբանոցի գործերը[99]:

Որբանոցի վարիչ մարմնի ատենապետ հայր Պօղոս վրդ. Արիսի դիմումների արդիւնքում ֆրանսական Assistance Publique կազմակերպութիւնը ապահովում է որբանոցի ալիւրի պաշարները[100]:

ՀՈԸի ղեկավար մարմինները քայլեր են ձեռնարկում որբանոցի ֆինանսաւորման հարցում ունենալ նաեւ Նպաստամատոյցի աջակցութիւնը: Բանակցութիւնների արդիւնքում, 1922ին Նպաստամատոյցը որոշ ֆինանսական միջոցներ է տրամադրում: Տարեվերջին Գոնիա-Թալաս-Կեսարիա շրջանների որբերի տեղաբաշխման ժամանակ Նպաստամատոյցն այստեղ է տեղաւորում նախ՝ 54, ապա՝ 113 հոգի, որոնց ծախսերը հոգում էր ինքը[101]:

Այսպիսով, 1923 Յունիսի դրութեամբ որբանոցի որբերի ընդհանուր թիւը 279 էր, որից 87 տղայ եւ 35 աղջիկ գտնւում էին ՀՈԸի, իսկ 30 տղայ եւ 127 աղջիկ՝ Նպաստամատոյցի հոգածութեան տակ[102]:

Ճունիի որբանոց այցելած հայ եւ օտարազգի ներկայացուցիչներ մեծ գոհունակութեամբ են խօսել որբանոցում տիրող իրավիճակի մասին: Ար-

---

[99] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 12:1921, էջ 259:

[100] *Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն*, էջ 16:

[101] Նոյն, էջ 24:

[102] Նոյն, էջ 25:

շակ Չօպանեանը որբանոցի մասին գրել է. «*Այցելելով այսօր Որբախնամի հիմնած այս Որբանոցը, մեծ գոհունակութիւն ունեցանք տեսնելով հոն տիրող մաքրութիւնը, կարգապահութիւնը … ուրախ եղանք լսելով իրենց ազգասիրական եռանդով երգած երգերը եւ արտասանած բանաստեղծութիւնները: Կը շնորհաւորենք բազմաջան Տնօրէնը, անձնուէր ուսուցիչները եւ Որբախնամի Վարչութիւնը*»[103]:

1920 Օգոստոսին Սահակ կաթողիկոսը գովեստով է արտայայտուել Ճունի կատարած այցի վերաբերեալ. «*Օրհնեալ է Գահիրէի Որբախնամ Մարմինը, որ Նեղոսի հեռաւոր ափերէն Մովսիսանման ցեղասիրութեամբ կը պահեն ու կը սատարեն որբերուն, որ ապագայ հայութիւնը պիտի կազմեն*»[104]:

*Որբունի*ում տպագրուել են Ճունիի որբանոցի որբերի անուանացանկերը՝ ծննդավայրերով, որտեղ կան 30 տարբեր քաղաքներից 89 տղայ եւ 37 աղջիկ որբեր: Սա եւս յատուկ ձեւ էր, որն ունէր նպատակ՝ տուեալ տարածաշրջանի մարդկանց ներգրաւել եւ շահագրգռել՝ այդ որբերի որդեգրման պատասխանատուութիւնը ստանձնելու համար: Ցանկերին կից կայ նաեւ կոչ, որը ստորագրել են մայր դիւանի կողմից՝ վերապատուելի Խանդամուրը, վարչական ժողովի կողմից՝ Գայայեանը[105]: Կոչը աւարտւում է հետեւեալ խօսքերով. «*Որբերուն հետ, հաւատքով կ'սպասենք լսելու Ձեր սրտին պատասխանը*»[106]:

ՀՈԸն ծառայել է նաեւ որպէս ուսումնարան, կարեւորուել են կրթական հարցերը: Կենտրոնի վարչութիւնը ներկայացրել է կրթական ծրագիր, համաձայն որի որբանոցը պէտք է ունենար 6 կանոնաւոր դասարաններ, ուսումնառութեան նիւթերը պէտք է դասաւանդուէին հայերէն եւ ֆրանսերէն, կրօն, թուաբանութիւն, բարոյագիտութիւն, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, իրաւաբանութիւն, գեղագիտութիւն, երգեցողութիւն, մարմնամարզութիւն, բարձր դասարանների համար՝ ընդհանուր պատմութիւն, բնապատմութիւն, բնագիտութիւն եւն.[107]: 1921 Փետրուարից սկսւում են նաեւ երաժշտութեան դասերը: Որբանոցը ունեցել է նաեւ 80 հոգանոց երգչախումբ եւ աշխուժ մարզական կեանք:

Որբերի համար արհեստների ուսուցման կարեւորութիւնը գիտակցելով, որբանոցի վարիչ մարմինը դիմում է ՀՈԸի կենտրոնի վարչութեանը՝ ներկայացնելով աշխատանոց հիմնելու ծրագիր, որը պէտք է ունենար 3 ճիւղ՝ դերձակութիւն, հիւսնութիւն, կօշկակարութիւն: Աշխատանոցում որբերը պէտք է անցկացնէին իրենց օրուայ երկրորդ մասը: Ծրագիրը հաւանու-

---

[103] Նոյն, էջ 263:

[104] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 11:1920, էջ 224-25:

[105] Նոյն, էջ 276:

[106] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 12:1921, էջ 275-76:

[107] *Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն…*, էջ 16-17:

թեան է արժանանում եւ 1921 Հոկտեմբերի 1ից աշխատանոցը սկսում է գործել: Նոյնատիպ աշխատանոց է ստեղծւում աղջիկների համար, որտեղ ասեղնագործութիւն էին սովորում: 1921ի տարեվերջին, որբուհիների աշխատանքներից մօտ 80 ձեռագործ արդէն ուղարկւում են Աղեքսանդրիայի կենտրոնական վարչութիւն[108]:

Որբանոցն ունեցել է նաեւ գրադարան՝ մօտաւորապէս 400 գրքերով: Բարձր դասարանները 1922ից սկսած հրատարակել են *Այգ* անունով աշակերտական կիսամեայ ձեռագիր 16 էջանոց պարբերաթերթ, որտեղ որբերն իրենց գրական նախափորձերն են կատարել[109]:

Որբանոցի խնամատարութեան տակ գտնուող 120 որբուհիները կարուձեւի, կիլիկեան ասեղնագործութեան ճիւղերի վրայ որոշել են աւելացնել նաեւ «հայկական» ձեռագործի եւ գորգաշինութեան ճիւղերը:

Որբանոցն աստիճանաբար անցել է Նպաստամատոյցի հոգածութեան տակ[110]: Որբերի մի մասը չափահաս դառնալով դուրս են եկել որբանոցից: 1928ին որբանոցը ֆինանսական խնդիրներ է ունեցել եւ ՀԲԸՄն այստեղ գտնուող 75 որբերին տեղափոխել է Պէյրութի Քելէկեան-Սիսուան որբանոց[111]:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՈՐԲԱՆՈՑ

Սիրիայի Եգիպտահայ պատուիրակներ Սեֆէրեանն ու Հերեանը, ինչպէս նաեւ ՀԱՄի գանձապահ Սաղըրեանը տեղեկացնում են, որ Դամասկոսում կան բազմաթիւ որբեր, որոնց մի մասը որպէս տարագիր գտնւում է բրիտանական զինուորական իշխանութիւնների խնամքի տակ, իսկ մի փոքր մասն էլ՝ շուրջ 220ը, խնամւում են տեղական միջոցներով: 1921 Մայիսի 3ին ՀԱՄի Դամասկոսի մասնաճիւղի ատենադպիր Հմայեակ Ուղուրլեանի նամակից տեղեկանում ենք, որ ՀՈԸն այդ որբերի համար ուղարկել է 200 ոսկի, ինչպէս նաեւ որբերի համար պատրաստւում են հագուստ տրամադրել[112]: ՀՈԸին Դամասկոսից ուղարկուել է հետեւեալ նամակը, որտեղ ներկայացւում է. «*Միութեանս գանձապետ Տիար Սարգիս Սաղըրեանի՝ Ձեր յանձնած երկու հարիւր եգիպտական ոսկի թղթադրամը սպացանք, եւ յատկացուցինք տեւոյս Ազգ. Որբանոցին: Կը փութանք հաղորդել Ձեզ թէ քաղաքիս որբանոցը՝ որ կը պարունակէ շուրջ 220 որբեր, մասնաւորաբար հոգածութեան առարկայ դարձած է, եւ կը գտնուի նա-*

---

[108] Նոյն, էջ 19-20:

[109] Նոյն, էջ 21:

[110] 1925ին Նպաստամատոյցը ստեղծել էր իր որբանոցային ցանցի սաների համար համընդհանուր մի կառոյց՝ Մերձաւոր Արեւելքի Որբերի Ընկերակցութիւն, որը իր որբանոցներում գտնուող եւ արդէն դուրս եկած որբերի եղբայրակցութիւնն էր («Տեղեկութիւն», *Որբաշխարհի աստղ*, Պէյրութ, Մարտ, 1:1925, էջ 11-12):

[111] Գէորգեան, Թաշճեան, 146:

[112] «Որբախնամ շարժում», *Որբունի*, 4:1919, էջ 59:

խանձելի վիճակի մէջ: ... Կը վստահեցնենք Ձեզ թէ ազգին ապագայ այս յոյսերուն կը տրուի հայեցի եւ առողջ կրթութիւն մը ...»: Նամակը ստորագրուած է Դամասկոսի ՀԱՄի ատենադպիր Ուղուրլեանի եւ ատենադպիր Արմ. Կենճեանի կողմից[113]:

Աւելի ուշ տեղեկանում ենք, որ Դամասկոսի այդ որբերը տեղափոխուել են մասամբ Հալէպ, մասամբ՝ աւելի երկրի խորքերը[114]:

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑ

Տեղի ՀԱՄի Սիրիայի Եգիպտահայ պատուիրակների ստացած տեղեկութիւնների համաձայն, Անթուրայում Մուտրոսի զինադադարից իվեր կար շուրջ 600 երկսեռ որբ, որոնք խնամւում էին Ամիրիկեան Կարմիր Խաչի կողմից: 1919 Դեկտեմբերի 28ին դիմում է կատրւում ՀՈԸին՝ ամսական 200 ոսկիով մասնակցել որբերի խնամքին՝ որոշ իրաւունքներ ունենալու համար, քանի որ օտար ձեռքերում որբերը լեզուով ու մտածելակերպով օտարանալու վտանգի ենթակայ էին: ՀՈԸն Պէյրութի ՀԱՄի միջնորդութեամբ յարաբերութիւններ է հաստատում Ամերիկեան Կարմիր Խաչի հետ եւ 500 ոսկի է փոխանցում Պէյրութ եւ Խաչատուր Գռուզեանի ղեկավարութեամբ 10-15 հոգանոց ուսուցչական խումբ է ստեղծւում: ՀՈԸն յատուկ ամավարկ ունէր դասագրքերի համար եւ պարբերաբար որոշ քանակութեամբ դասագրքեր էր ուղարկում Դամասկոսի, Ատանայի, ինչպէս նաեւ Անթուրայի որբանոցին: Փաստօրէն կրթութեան պարտականութիւնների հեղինակութիւնն անցնում է ՀՈԸին եւ նրանք կարողանում են պարբերաբար այցելութիւններ կազմակերպել որբանոց ու ներքին անցուդարձին տեղեկանալ[115]:

ՀՈԸն նաեւ որոշակի նիւթական միջոցներ է ուղարկել Անթուրայի որբանոց, ինչպէս՝ 8 արկղ «Նեսլէ» խտացրած կաթ, 226 զոյգ կօշիկ, 192 կտոր հագուստ, 150 ընթերցանութեան գիրք[116]:

Կիլիկիայի պատուիրակութեան Յունիսի 16ին ուղարկած ընդարձակ տեղեկագրից իմանում ենք, որ Յունիսի 15ի իրենց այցի ժամանակ Անթուրայի որբերը «Բամ փորորտան»ով ողջունել են իրենց, եւ թէ որբերի մօտ ազգային գիտակցումի զգացողութիւնը բարձր է, թէ նրանք անգամ հետաքրքրւում էին թէ հայկական հարցն ի՛նչ փուլում է վեհաժողովից առաջ: Տեղեկագիրը առողջապահական վիճակը նոյնպէս դրական է գնահատում, իսկ ինչ վերաբերում է կրթութեանը, ապա՝ «*Դպրոցական օրը 6 ժամ է ու ամէն մէկ դասը մէկ ժամ կը տեւէ: Կ'աւանդուին հայերէն, անգլերէն (շատ*

---

[113] Նոյն:

[114] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, իննամսեայ տեղեկագիր...*, էջ 15-16:

[115] Նոյն, էջ 16-17. նաեւ՝ *Հայ Որբախնամ Ընկերութիւն, տեղեկագիր..., շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31*, էջ 7-8:

[116] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, իննամսեայ տեղեկագիր...*, էջ 17:

խեղճ), թուաբանութիւն, ազգ. պատմութիւն, աշխարհագրութիւն, ու բարոյականի դասեր: Անշուշտ այս դաստիարակութիւնը միսիոնարական իր որոշ կնիքը կը կրէ, սակայն տղաքները իբր հայ կը մեծնան»[117]:

Որբանոցում այդ ժամանակ կար 253 տղայ եւ 77 աղջիկ, մանկապարտէզում՝ 30 տղայ եւ 26 աղջիկ, ընդամէնը՝ 386 որբ, ինչպէս նաեւ 173 քուրտ, ուսուցիչների թիւը 36 էր, որից հայ էին 16ը[118]:

Որբանոցի գործունէութիւնը երկար չի տեւում, միքանի ամիս յետոյ բրիտանական զինուորական իշխանութեան հրահանգով որբերի մի մասը տեղափոխւում է Հալէպ, միւս մասը՝ Ատանա, Այնթապ եւ հաստատութիւնը դադարեցնում է իր գործունէութիւնը[119]:

ՀՈԸն, բացի պարբերաբար տրամադրուող օգնութիւնից, միանուագ նպաստներ է ուղարկել Կեսարիայի որբանոցին՝ Պոլսի պատրիարքի միջոցով, Պաղտատի Հայ Տարագրելոց Յանձնախումբի միջոցով՝ 500 ոսկի Համատանի որբերին, Եգիպտոսի ՀԱՄի միջոցով՝ 200 ոսկի Դամասկոսի որբերին, տեղի սրբազանի միջոցով 100 ոսկի՝ Սեբաստիայի որբերին: Բացի այս գումարներից՝ 500 ոսկի Եգիպտոսի ՀԱՄի եւ 500 ոսկի առաջնորդի միջոցով երկու անգամ, որբախնամ գործերի համար տրամադրուել են 1919ին:

ՀՈԸն 1916 Յունիսից մինչեւ 1919 Փետրուար՝ շուրջ 33 ամսում, մօտաւորապէս 14,000 ոսկու գումար է ստացել, որի մի մասն առաջին տարին ուղարկուել է Ս. Էջմիածին, եւ «*մնացեալը ի պահ կը դրուէր պանքաներու մէջ, մինչեւ որ գործունէութեան ուղղակի ասպարէզ բացուեցաւ*»[120]:

Փաստօրէն իր գործունէութեան ընթացքում ՀՈԸն գործել է տարբեր ուղղութիւններով: Ինչպէս ՀՈԸի կենտրոնական վարչութիւնն է ընդգծել՝ հիմնականում առաջնահերթ գործերում եւ խիստ կարիքաւորների համար՝ առաջնորդուելով որբերի փրկութեան ազգային միասնական գաղափարով. «*Որբախնամը գթոտ ժողովուրդը իրենց գանձը համարելով՝ պատրաստի գումարներէն աւելին պահանջող յանձնառութիւններու ընդառաջ կ'երթան ուրեմն, վստահ լինելով՝ թէ հայը չպիտի լքէ իր որբերը*»[121]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանրացնելով ու ամփոփելով ՀՈԸի 1919-21ի գործունէութիւնը՝ նշենք արդիւնքները. «*... ոչ նուազ [քան] 3200 երկսեռ որբեր, որոնք կարճ ժամանակի մը համար, ուրիշները 2-3 տարի, պաշտպանած եւ խնամած*

---

[117] «Որբախնամ շարժում», *Որբունի*, թիւ 5, էջ 71-74:

[118] Նոյն:

[119] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, տեղեկագիր..., շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31*, էջ 8:

[120] Երամեան, «Որբ», *Որբունի*, 2:1919, էջ 26:

[121] Նոյն, էջ 21:

ըլլալուն համար ... Որբախնամ ընկերութիւնը յաջողեցաւ պէտքին վայրերը փութացնել շուրջ 27,000 եգիպտական ոսկի»[122]:

1921ի վերջին ՀՈԸն իր խնամքի տակ ունէր միայն Այնթապից Ճունի փոխադրուած որբանոցը՝ 126 երկսեռ որբերով եւ 3600-4000 ոսկու ամավարկով, իսկ հաշուի առնելով ֆինանսական սուղ դրութիւնը՝ ակնկալում էր օտար աջակցութեանը դիմել:

1925ին կազմակերպութիւնը, ամփոփելով իր աշխատանքները՝ ներկայացնում է իր ձեռքբերումները.- մինչ այդ պահը՝ 3400 երկսեռ որբեր, հայ ժողովրդի աջակցութիւնը, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կազմակերպութեան գործակցութիւնը եւ վերջին վեց տարիների ընթացքում հաւաքուած շուրջ 34,000 անգլիական ոսկի, որն ամբողջովին իր նպատակին է ծառայեցուել: ՀՈԸն իր որբերին չորս տարի շարունակ, ուսման հետ զուգընթաց, կահագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն, թիթեղագործութիւն սովորեցնելուց յետոյ նրանց տեղաւորել է վարպետների մօտ եւ նրանք ինքնուրոյն են դարձել: Նախորդ 4 տարիներին, դեռատի կամաւորները որբերի համար կարողացել են հաւաքել 2400 ոսկի արժողութեամբ գումար, որը, ինչպէս նշում է ՀՈԸի վարչութիւնը, հպարտանալու երեւոյթ է եւ շարունակւում է: Ակնկալւում է, որ 1924ին էլ կամաւորները ամէն ճիգ պէտք է գործադրեն՝ ծափահարելի արդիւնքներ ձեռք բերելու համար: Սպասւում է նաեւ, որ հաւաքուած գումարները պէտք է հրատարակուեն մասնաւոր գրքոյկով, որը պէտք է ունենայ «Հայ որբերուն պահապան հրեշտակները» վերնագիրը եւ իւրաքանչիւր կամաւոր այդ գրքոյկից անվճար ստանայ՝ իբրեւ յիշատակ իր կատարած բարի գործի[123]:

Համապատասխան վերտառութեամբ երկու գրքոյկ լոյս է տեսել 1924ին եւ 1925ին[124]: Մեր ձեռքի տակ եղած գրքոյկն ամփոփում է 1924ի կամաւորական շարժման արդիւնքները, որտեղ առանձինն նշւում են տարբեր հաստատութիւնների կամաւորների հանգանակած գումարները[125]: Դրանց թւում են Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանը, Կաթողիկէ Հայոց Վարժարանը, Շաւարշեան Վարժարանը, Թաշճեան Վարժարանը, Ամերիկեան, Վարժապետեան Վարժարանը, ինչպէս նաեւ հայկական վարժարաններից դուրս կամաւորներ: Աղեքսանդրիայի վարժարաններից առաջատարն էր Պօղոսեան Ազգային Վարժարանը: Կամաւորներ են մասնակցել նաեւ Զակազիկի Օշական Վարժարանից, Փոր Սայիտից, Խարթումից, Հռոմից, Ֆիլատելֆիայից, Պաղտատից, Պուենոս Այրէսից: Կամաւորական

---

[122] *Հայ Որբախնամ Ընկերութիւն, տեղեկագիր..., շրջան 1919 Օգոստ. 17էն 1921 Դեկ. 31*, էջ 22:

[123] «Հայ որբերուն ի նպաստ նուիրահաւաքում», *Արեւ*, 20 Փետրուար 1925, էջ 4:

[124] *Մեր որբերուն պահապան հրեշտակները, դեռատի հայ կամաւորներու նուիրահաւաքութեան Ե. տարուան արդիւնքը*, 1925, Փարոս, Գահիրէ, 1925, 29 էջ:

[125] *Մեր որբերուն պահապան հրեշտակները, դեռատի հայ կամաւորներու նուիրահաւաքութեան Դ. տարուան արդիւնքը*, 1924, Յուսաբեր, Գահիրէ, 1924, 23 էջ:

բանակին մաս են կազմել ընդհանուրը 653 հոգի[126]: Գրքոյկի վերջում ՀՈԸի վարչութիւնը յայտնում է, որ Ճունիի որբերն ու որբանոցի տնօրէնութիւնն իրենց գոհունակութիւնն են յայտնում որբանոցին աջակցելու համար:

Որբախնամը, ի թիւս հայկական բազմաթիւ բարեսիրական կազմակերպութիւնների, առաջնորդուել է հետեւեալ գաղափարով.- «*Արդէն ազատուած եւ պատսպարուած որբերուն հանդէպ ունինք դեռ հրամայողական պարտականութիւններ: Բաւական չէ անոնց սնունդ, հագուստ եւ գրենական պիտոյք հայթայթել: Անհրաժեշտօրէն հարկ է կեդրոնացնել զանոնք ազգային մթնոլորտի մը մէջ, պիտի ըսենք նոյնիսկ՝ հայրենի հողերու վրայ*»[127]:

Բոլորին էր հասկանալի եւ ընդունելի, որ հայ որբերի կենտրոնացման հարցը լուծուի հայկական հողի վրայ, քանի որ օտարների հոգածութիւնը նոյնպէս ունէր իր խնդիրները՝ նպատակների, մեթոդների ու միջավայրի փոփոխութիւնները երբեմն աննպաստ պայմաններ էին ստեղծում որբերի հայկական ինքնութեան վրայ:

Ժամանակի հրամայական էր, որին հետեւելով ՀՈԸն կոչ էր անում. «*Մեր ժողովուրդի բոլոր խաւերուն հրաւէր կ'ուղղենք ոգեւին լծուիլ Հայ որբախնամի գործին, մեր ներկայ գործերէն ամէնէն անյետաձգելիին, անէնէն դրականին, այն գեղեցիկ վստահութեամբ թէ՝ ինչպէս կ'ըսէինք «Որբունի»ի վերջին թիւին մէջ. «Ճկոյթի ծայրով կամ կոտորակուած նուիրումով ներելի չէ լծուիլ այս նուիրական գործին, զոր ոմանք ողորմութեան հետ շփոթել կը թուին*»[128]:

Եգիպտոսի ՀՈԸն որբապահպան, որբախնամ կառոյց էր, որն ունէր նմանատիպ կառոյցին բնորոշ բոլոր յատկանիշերը: Նա աշխուժ գործունէութիւն էր ծաւալում իր զոյգ վարչութիւններով, բազմաթիւ մասնաճիւղերով, յանձնախմբերով, ինչպէս նաեւ կամաւորների խմբերով: Որբախնամը նաեւ համագործակցութեան օրինակ էր. նա գործակցել է հայկական եւ օտարերկրեայ տարբեր կազմակերպութիւնների հետ:

Ընկերութիւնը գործել է հաւանաբար մինչեւ 1927[129]:


---

[126] *Մեր որբերուն պահապան հրեշտակները…*, 1924, էջ 38:

[127] Գայայեան, «Անյետաձգելին», 11, էջ 219:


[128] Նոյն, էջ 221:

[129] Պայրամեան, էջ 82:



Մերսինի 600 որբանոցայինները կը հիւրընկալեն Արշակ Չօպանեանը





600 որբ հաշուող Ատանայի որբանոցի գորգագործութեան արհեստանոցը

THE ACTIVITIES OF THE ARMENIAN ORPHAN CARE SOCIETY OF EGYPT (1916-1927) (Summary)

Narine Margaryan
nmargaryan@gmail.com

The paper focuses on the mission of the Armenian Orphan Care Society of Egypt (AOCSE) and its subsidiary committees (like the women's, local, young volunteers' and mixed support committees). The paper highlights the support extended to the orphanages of Baquba, Adana, Aintoura, Damascus, and Hama, which were under the auspices of (or partly supported by) the AOCSE. The paper describes the conditions in these orphanages and the number of orphans being taken care of.

The paper elaborates on the fund-raising campaigns, the system of charity boxes, the accounts, the cooperation with other relief organizations, and the financing of the efforts, headed by Roupen Herian, that aimed at rescuing orphans from the Syrian deserts.

Եգիպտահայ Հայրենադարձների Նպաստը Մայր Հայաստանին

Վերժինէ Սվազլեան
vsvaz333@yahoo.com

ՄՈՒՏՔ

1940ականներին՝ մինչեւ զանգուածային հայրենադարձութիւնը, Եգիպտոսի շուրջ 45,000 հաշուող հայ համայնքը մեծմասամբ համախմբուած էր Հայ Առաքելական Եկեղեցու շուրջ (հոգեւոր առաջնորդ՝ Մամբրէ արք. Սիրունեան):

Գահիրէում գործում էին Գալուստեան Ազգային Վարժարանը (հիմն. 1854), Նուպարեան Ազգային Վարժարանը (հիմն. 1925), Մանիսալեան Վարժարանը (հիմն. 1905), իսկ Աղեքսանդրիայում նախ՝ Արամեան (հիմն. 1854), ապա՝ Պօղոսեան (հիմն. 1862) ազգային վարժարանները, Հայկազեան Կրթարանը (հիմն. 1924): Միւս յարանուանութիւնները եւս ունեցել են իրենց դպրոցները՝ Անարատ Յղութեան Հայ Կաթողիկէ Քոյրերի դպրոցը (հիմն. 1897, Գահիրէ եւ 1914, Աղեքսանդրիա), հայ կաթողիկէ (հիմն. 1919, Գահիրէ), հայ աւետարանական (հիմն. 1899, Գահիրէ) վարժարանները եւն.[1]:

Այս երկու գլխաւոր քաղաքներում գործում էին շուրջ մէկուկէս տասնեակ մշակութային եւ մարմնամարզական ակումբներ: 1906ին Գահիրէում հիմնադրուել էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (ՀԲԸՄ), 1914ին՝ Արարատ Մարմնամարզական Ընկերութիւնը, 1920ին՝ Հայ Գեղարուեստասիրաց Միութիւնը, 1928ին՝ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Ընկերութիւնը, 1941ին՝ Հայ Մշակոյթի Բարեկամները, 1942ին՝ Հայ Ազգային Հիմնադրամը եւ 1945ին՝ ՀՅԴի Յուսաբեր Մշակութային Ընկերակցութիւնը, իսկ Աղեքսանդրիայում՝ 1902ին Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւնը, 1912ին Կամք Մարմնամարզական Միութիւնը:

Այս մշակութային ու մարմնամարզական ակումբների նպատակն էր համախմբել երիտասարդութեանը, զարգացնել նրանց գեղարուեստական ճաշակն ու ֆիզիկական կարողութիւնները եւ «նպաստել գաղութի հայապահպանութեանը»[2]:

Իր էութեամբ եւ բովանդակութեամբ այլ էր ամէնայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի ջանքերով 1921ին Խորհրդային Հայաս-

---

[1] Յովհաննէս Թոփուզեան, *Եգիպտոսի հայկական գաղութի պատմութիւն (1805–1952)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 184-5:

[2] «Եգիպտոս», *Հայ Սփիւռք հանրագիտարան*, «Հայկական հանրագիտարան» հրատ., Երեւան, 2003, էջ 157-60:

տանում հիմնադրուած «Հայաստանի Օգնութեան Կոմիտէ»ն (ՀՕԿ): Այն նպատակ ունէր օգնել սովեալ բնակչութեանը, սերտ կապեր հաստատել գաղութահայութեան եւ Խորհրդային Հայաստանի միջեւ: ՀՕԿն իր մասնաճիւղերն ունէր Սփիւռքի հայաշատ գաղութներում, այդ թւում - 1926ից – նաեւ՝ Գահիրէում եւ Աղեքսանդրիայում: Աղեքսանդրիայի մասնաճիւղի հիմնադիրներից է եղել Մեծ Եղեռնից մազապուրծ երիտասարդ գրող, հասարակական գործիչ **Գառնիկ Սվազլեանը** (Կեսարիա, 1904-Երեւան, 1948)[3]:

1930ականներին ծաւալւում էր համաշխարհային տնտեսական ճգնաժամը եւ ամէնուրեք տիրում էին հակակոմունիստական տրամադրութիւններ, որոնց թիրախ են դառնում եւ բանտ նետւում բազմաթիւ առաջաւոր հայ մտածողներ:

Աւելի ուշ՝ երկրորդ աշխարհամարտի ընթացքում, Լենինկրատի, Սմոլենսկի, Ղրիմի եւ Սթալինկրատի մօտ խորհրդային զօրքերի յաղթանակները բեկում են առաջացնում միջազգային յարաբերութիւններում: 1943ին եգիպտահայութիւնն իր մասնակցութիւնն է բերում այն նախաձեռնութիւններին ու միջոցառումներին, որոնք նպաստում էին Խորհրդային Միութեան յաղթանակին: 1943ին եգիպտահայերը եւս մասնակցում են «Սասունցի Դաւիթ» հրասայլային շարասեան օգտին կազմակերպուած հանգանակութեանը. «*…Հասարակութեան բոլոր խաւերը, անգամ գործազուրկներ՝ աւուր հացի համար պայքարող ընտանիքի հայրեր, մրոտուած ձեռքերով արհեստաւորներ, ինքզինքնին կը գերազանցեն, իրենց կարողութիւնէն աւելին կը տրամադրեն այս ֆոնտին…*»[4]:

Սփիւռքի տարբեր գաղթօճախների կողքին Եգիպտոսում եւս ստեղծւում են Ազգային Խորհուրդներ, որոնց նպատակն էր «անյուսութեան եւ անորոշութեան մէջ տարուբերող» աշխարհասփիւռ հայութեան ուշադրութիւնը բեւեռել վերաշինուող Հայաստանի եւ հայրենադարձութեան գործին, «ըլլալ ջատագով ներգաղթին եւ անոր սատարել»[5]: Այսպէս, Գահիրէում հիմնադրւում են «Երեւան», իսկ Աղեքսանդրիայում՝ «Սեւան» մշակութային միութիւնները[6], որոնցից առաջինը կարճատեւ կեանք է ունեցել,

---

[3] Սվազլեանն իր կազմակերպած զանազան միջոցառումներով, հանգանակութիւններով սատարել է Մայր Հայաստանին: Գառնիկ Սվազլեան, *Հայրենիքիս համար*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1965, էջ 20-5:

[4] Գառնիկ Սվազլեան, «Պոռթկացէ՛ք, հայ զգացումներ», *Արեւ*, 17 Դեկտեմբեր 1943, էջ 2:

[5] Թոփուզեան, էջ 270-1:

[6] Սվազլեան, էջ 273: Եւ քանի որ «Սեւան» Մշակութային Միութեան հիմնադիրը դարձաւ արժանայիշատակ հայրս՝ Գառնիկ Սվազլեանը, ուստի Պօղոսեան Ազգային Վարժարանի դասերից յետոյ, երեկոյեան ընտանեօք գնում էինք, մասնակցելու այնտեղ կազմակերպուող հետաքրքիր միջոցառումներին: Յիրաւի,

իսկ երկրորդը փակուել է 1947ին՝ հիմնադիր-նախագահ Սվազլեանի հայրենադարձութեամբ: Վերջինս, Եգիպտոսի *Արեւ, Արաքս, Սաւառնակ* եւ Սփիւռքի այլ պարբերականներում տպագրած իր հրապարակախօսական կրակոտ յօդուածներով[7] եւ գծագրած դիպուկ երգիծանկարներով նպատակ էր հետապնդում արթնացնել սփիւռքահայութեան ինքնագիտակցութիւնը, թէ՝ «*…Մենք սփիւռք մը ունենալու համար չէ, որ աշխարհի ամէն կողմը ցրուած ենք, այլ՝ բռնութիւնից ու հալածանքից սփրպուած: Ու երբ այսօր այդ ամէնը վերջ գտած են ու մեր հայրենիքը լայն բացած է իր դռները, ալ ի՞նչ սփիւռք պահելու մասին կը խօսին մեզի, այդպիսով գաւաթ մը պաղ ջուր լեցնելով այս աշխատաւոր ժողովուրդին եռացող հայրենասիրութեան վրայ*»[8]: Նման հայաշունչ յօդուածներով Սվազլեանը գաղափարապէս զարգացնում ու դաստիարակում էր Եգիպտոսի հայ համայնքի մեծ ու փոքր ներկայացուցիչներին, որոնք հաւաքւում էին «Սեւան»ի համեստ յարկի տակ եւ, ըստ ցանկութեան, մասնակցում տարբեր խմբակների (ասմունք, նկարչութիւն, երգեցողութիւն) պարապմունքներին, ինչպէս նաեւ՝ «Հիւսող կանանց»[9]:

շատ բան տպաւորուած է իմ դեռատի յիշողութեան մէջ, եւ այսօր, որպէս ականատես-վկայ, կարող եմ ներկայացնել:

[7] «Անցեալէն դէպի ապագան» (*Արեւ*, 24 Ապրիլ 1933, էջ 2), «Ո՞ր օրուան կը սպասենք» (*Արեւ*, 16 Դեկտեմբեր 1932, էջ 2), «Ձեզի՛, աղեքսանդրիացիներ, ոտքի՛, առնական կեցուածքով» (Աղեքսանդրիա, 24 Սեպտեմբեր 1935ի թռուցիկը), «Պոռթկացե՛ք, հայ զգացումներ», «Պէտք է զարնել նշտրակը» (*Արեւ*, 13 Նոյեմբեր 1943, էջ 2), «Սփիւռքահայութիւնը եւ ներգաղթը» (Ճառ արտասանուած 19 Հոկտեմբեր 1946ին, ներգաղթին նուիրուած ժողովրդային մեծ հաւաքին), «Ներգաղթի իմաստն ու արժէքը» (Ճառ արտասանուած 9 Մայիսի 1946ին՝ Բ. համաշխարհային պատերազմի յաղթական աւարտի առաջին տարեդարձի առթիւ՝ Աղեքսանդրիայի Հայ Ազգային Խորհրդի կազմակերպած հանդէսին) եւ այլ յօդուածներ:

[8] Սվազլեան, էջ 76:

[9] Ես այդ ժամանակ 9 տարեկան էի եւ Պօղոսեան Վարժարանի մեծ զբօսանքի պահին եւս հիւսում էի, իսկ դասերից յետոյ, երեկոյեան ծնողներիս հետ գնում էի Աղեքսանդրիայի Մեշիայի հրապարակով եգիպտագիտութեան հիմնադիր Շամփոլիոնի անունը կրող փողոցում գտնուող այդ հարազատ դարձած հաւաքատեղին, որի շքամուտքին, ձեռագիր պատի թերթի վրայ գրուած էր. «Զարգացի՛ր, զարգացու՛ր, բարձրացի՛ր, բարձրացու՛ր» պատգամը, իսկ դահլիճում մեզ դիմաւորում էին Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի պատկառազդու մեծադիր լուսանկարները: Ես յիշում եմ խանդավառութեան այն ալիքը, որ ապրեց մեր հայ համայնքը: «Սեւան» ընթերցասրահում կազմակերպւում էին նաեւ հետաքրքիր դասախօսութիւններ հայ մշակոյթի, գրերի գիւտի, միջնադարեան պատմիչների եւ մանրանկարիչների մասին, ինչպէս նաեւ Հայաստանի առօրեայի, երկրորդ համաշխարհային պատերազմում հայ զօրավարների եւ զինուորների սխրանքների մասին: Միութեան անդամ-անդամուհիներից կազմուած երգչախմբի

Այնպէս որ, երբ 1946ին զանգուածային ներգաղթն սկսուեց, եգիպտահայերը եւ յատկապէս Աղեքսանդրիայի հայերս արդէն գաղափարապէս պատրաստ էինք նոր հասարակարգում ապրելու եւ աշխատելու համար: Մենք գիտակցում էինք, որ գնում ենք ոչ թէ «վայելելու», այլ՝ սովորելու, օգտակար դառնալու մեր հայրենիքին[10]:

(խմբավար՝ իրաւաբան-երաժիշտ իրաւաբան Սալըրեան) պարապմունքներին, բացի կոմիտասեան երգերից, սովորում էինք նաեւ Հայաստանին, Երեւանին նուիրուած նոր երգեր, օրինակ՝

«Կարօտցեր եմ քեզի շքեղ Երեւան,
Շատ ծովերէն բարձր ոսկէ լիճ Սեւան,
Ձկներ ունիս խորքումդ՝ կողակ ու իշխան,
Ով չի սիրում քեզի՝ հայ չէ իսկական:
Կրկներգ
Հէ՛յ, ջա՛ն, Երեւան, դուն միշտ անսասան,
Հէ՛յ, ջա՛ն, հէ՛յ, ջա՛ն, անուշ Երեւան…»:

Միութեան թատերական խմբակում անդամ-անդամուհիների ուժերով եւ վաստակաշատ դերասաններ տէր եւ տիկին Օննիկ եւ Պաթրիս Վոլթէրների սիրայօժար մասնակցութեամբ, բեմադրութեան էին պատրաստում Սվազլեանի *Ներգաղթը*, գաղութահայ-ճգնաժամային կեանքից թատերգութիւնը՝ հեղինակի իսկ բեմայարդարումով եւ բեմադրութեամբ: Այդ թատերախաղի գլխաւոր հերոսի՝ Տիգրանի, Եղեռնից մազապուրծ ընտանիքն ապաստան էր գտել Ֆրանսիայում, սակայն գործազրկութեան եւ ծուլումի դառնութիւնները ճաշակելով, նա սփիւռքահայութեան միակ փրկութիւնը համարում է ներգաղթը մայր Հայաստան: Այդ թատերգութիւնը բազմիցս բեմադրուել է Աղեքսանդրիայիում: *Ներգաղթը* բեմադրուեց նաեւ Գահիրէում, ապա՝ Կիպրոսում եւ այլ վայրերում: Ներկայացման տոմսերի հասոյթը, ինչպէս նաեւ հիւսուած գուլպաների հարիւրեակների կապոցները Սվազլեանը տանում էր Գահիրէ եւ յանձնում Սովետական Միութեան դեսպան Սուլթանովին, որպէսզի բրդեայ գուլպաները հասցուեն ճակատում կռուող կարմիրբանակայիններին, իսկ գումարները՝ յատկացուեն Հայաստանի տնտեսութեան զարգացմանը եւ նոր բնակարանների շինութեանը: Իմ յիշողութեան մէջ վառ է մնացել ՀՕԿի ակումբում կանանց երգչախմբի զուարթ եւ ոգեւորուած կատարումից մի հատուած.

- Տեքստիլ ֆաբրիկում մինչեւ իրիկուն,
Բանում ենք մէկտեղ, բանում միասին…» (Սվազլեանի ընտանեկան արխիւ):

[10] 1947 Սեպտեմբերի 3ին առաջին կարաւանը (կարաւանապետ՝ Յակոբ Արամեան) 1680 եգիպտահայ էր բերում Հայաստան, նրանցից շատերը բեռնատար մեքենաներով եւ այլ նուէրներով էին գալիս, իսկ Տոլապճեան ընտանիքը մահուդի նուրբ գործուածքի մեքենաներ էր բերում՝ հայրենիքին նուիրելու: Յաջորդ՝ 1948 Օգոստոսի 22ին, Հայաստան ուղեւորուող երկրորդ կարաւանը (կարաւանապետ՝ Խաչիկ Յովհաննէսեան) 2018 եգիպտահայերի հետ Հայաստանին նուէր էր բերում մանածագործական գործարանի դազգահներ, որոնք տեղադրուել եւ գործել են Երեւանի Սեբաստիա թաղամասում (Թոփուզեան, էջ 271):

Սոյն ուսումնասիրութեան համար հիմք են ծառայել նաեւ *Յուշամատեան. եգիպտահայ վարժարաններու աշակերտներու համաշխարհային հաւաք* ժողովածուի մէջ տեղ գտած ԵՊՀ դոկտոր, պրոֆեսոր Նորայր Պէյլերեանի (ծն. 1929, Գահիրէ) եւ Վանիկ Աճէմեանի (ծն. 1927, Գահիրէ) կազմած հայրենադարձ եգիպտահայերի կենսագրական ցանկը[11], ինչպէս նաեւ Պէյլերեանի յօդուածը[12], եւ իվերջոյ, տողերիս գրողի անձնական յուշերն ու տպաւորութիւնները:

Սոյն աշխատասիրութեան մէջ փորձել ենք եգիպտահայ հայրենադարձներին դիտարկել նախ ըստ աւագ եւ կրտսեր սերունդների՝ առաջնորդուելով նրանց տարիքային առանձնայատկութիւններով եւ թէ որտե՛ղ են իրենց մասնագիտական կրթութիւնն ստացել, ապա՝ նաեւ ըստ բնագաւառների բաժանել՝ ընդգծելով նրանց ներդրումը մայր Հայաստանին:

Բացի հայրենիքում կրթութիւն ստացած կրտսեր սերնդից, յատուկ ներառել ենք նաեւ *աւագ սերնդի* այն ներկայացուցիչներին, որոնք մասնագիտական բարձր կրթութիւն էին ստացել արտասահմանեան համալսարաններում եւ վերադառնալով Եգիպտոս՝ հայ համայնքում յայտնի էին դարձել իրենց յարգանքի արժանի վաստակով: Թէեւ նրանք առաջացած տարիքի էին՝ հայրենադարձուելով, Հայաստանում եւս նրանք իրենց գործունէութեամբ աչքի են ընկել եւ նշանակալից աւանդ ունեցել:

Կրտսեր սերնդի ներկայացուցիչները, որոնք իրենց նախնական եւ միջնակարգ կրթութիւնն ստացել էին Եգիպտոսի հայկական վարժարաններում, ներգաղթելով՝ իրենց համալսարանական մասնագիտական կրթութիւնը շարունակել են հայրենի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում եւ մեծապէս նպաստել մայր հայրենիքին:

1947-48՝ եգիպտահայերի հայրենադարձութեան տարիներին խորհրդային հայրենիքում համատարած գրագիտութեան եւ անվճար մասնագիտական կրթութեան պայմաններում, երբ ուսանողներին նոյնիսկ թոշակ էր յատկացւում, գիտութեան ծարաւ հայրենադարձ երիտասարդները յախուռն ընդունուել են հայաստանեան բուհեր՝ բոլորեքեան նուիրուելով համալսարանական ուսումնառութեանը: Ընտանիք չկար, որ միքանի ուսանող չունենար: Նոյնը պէտք է ասել 1960-70ականներին Եգիպտոսից հայրենադարձների մասին[13]:

---

[11] Նորայր Պէյլերեան, Վանիկ Աճէմեան, «Եգիպտահայոց կենսագրականների ցանկ», *Յուշամատեան. եգիպտահայ վարժարաններու աշակերտներու համաշխարհային հաւաք*, Երեւան, 2003, էջ 111-137:

[12] Պէյլերեան, «Եգիպտահայ դպրոցների սաների ներդրումը մայր հայրենիքի մշակոյթի, արուեստի, կրթութեան եւ գիտութեան ոլորտներում», *Յուշամատեան*, էջ 18-32:

[13] Պէտք է ասել, որ եթէ 1946ին սկսուած զանգուածային հայրենադարձութիւնը համաշխարհային Բ. պատերազմից անմիջապէս յետոյ էր կազմակերպուել, երբ

երկիրը տակաւին անպատրաստ էր եւ պատմաքաղաքական ու տնտեսական ծանր պայմանները, անբարենպաստ էին, իսկ յետագայում՝ 1960-70ականներին Եգիպտոսից ժամանած նոր կարաւանների հայրենադարձներին (1947-48 եւ 1960-70ականներին Եգիպտոսից հայրենադարձների թիւը կազմել է շուրջ 4500 հոգի)[13] Խորհրդային Հայաստանի կառավարութիւնն արդէն հիմնովին վերանայել եւ նախապէս կազմակերպել էր նրանց ընդունման եւ տեղաւորման բարուօք պայմանները: 1964ին Եգիպտոսից հայրենադարձ մտաւորական, դեղագործ Տիգրան Ծուլիկեանը (ծն. 1931, Գահիրէ) այդ մասին վկայել է.

1962-1965 թթ. Հայաստանի խորհրդային իշխանութեան կողմից կազմակերպուեցին հայրենադարձութեան չորս կարաւաններ, որոնց արդիւնքում Եգիպտոսից հայրենիք վերադարձան ամէնատարբեր մասնագիտութիւնների եւ արհեստների տէր շուրջ 700 եգիպտահայեր, ապա՝ 1970ականներին Եգիպտոսից հայրենիք ժամանեցին նաեւ որոշ անհատներ եւ ընտանիքներ, որոնք բնակութիւն հաստատեցին հիմնականում Լենինականում, Կիրովականում, Էջմիածնում, Ալավերդիում եւ այլ քաղաքներում: Խորհրդային Հայաստանի իշխանութիւնը նրանց էր տրամադրել հետեւեալ արտօնութիւններն ու խրախուսական միջոցները.

1. Կենտրոնական ջեռուցմամբ օժտուած բնակարաններ հայրենադարձներին էին տրամադրւում անվճար հիմունքներով. 1-2 անձից բաղկացած ընտանիքներին՝ երկու սենեականոց (*կոմունալ* [հանրային – Վ.Ս.] յարմարութիւններով), իսկ 5 եւ աւելի անձերից բաղկացած ընտանիքներին՝ երեք սենեականոց (*կոմունալ* յարմարութիւններով) բնակարաններ, որոնք բոլորը կահաւորուած էին կահոյքով, խոհանոցային սարքերով ու պիտոյքներով, նաեւ սկզբնական շրջանում բաժանւում էին ամէնօրեայ տաք կերակուրներ եւ սնունդ:

Յետագայում եգիպտահայ հայրենադարձները հնարաւորութիւն ստացան Երեւան քաղաքում մասնակցելու համագործակցական բնակարանաշինութեանը եւ տեղափոխուելու Երեւան՝ բնակարանների արժէքի 40%ը վճարելով կանխիկ, իսկ մնացեալ 60%ը՝ աստիճանաբար, 15 տարիների ընթացքում:

Հայրենադարձ միքանի արուեստագէտներ եւ այլ մասնագէտներ յետագայ տարիներին յանձնեցին իրենց նախկին բնակարանները եւ պետութիւնից ստացան նոր բնակարաններ Երեւան քաղաքում:

2. Եգիպտոսից հայրենադարձները տեղաւորուեցին աշխատանքի (առաւել կամ նուազ չափով համապատասխան իրենց մասնագիտութեանը):

3. Հայրենադարձ պատանիներին ու երիտասարդներին հնարաւորութիւն տրուեց շարունակելու իրենց ուսումը կամ հեռակայ կարգով բարձրագոյն ուսում ստանալու՝ ըստ իրենց նախասիրութիւնների:

4. Զինապարտ երիտասարդներին տրուեց 2 տարուայ տարկէտում:

5. Պետական ճանաչման արժանացան Եգիպտոսում ստացուած միջնակարգ, թերի բարձրագոյն կրթութեան վկայականներն ու դիպլոմները (պատշաճ կերպով վաւերացուած):

6. Պետական ճանաչում ստացան Եգիպտոսում ստացուած աշխատանքային *ստաժի* (տարիների) վկայականները (պատշաճ կերպով վաւերացուած) եւ դրանց հիման վրայ թոշակի տարիքի հասած հայրենադարձները ստացան

Հետեւաբար, նիւթի ընդգրկուն ծաւալը նկատի ունենալով, ստիպուած ենք սահմանափակուել եւ անդրադառնալ միայն եգիպտահայ այն հայրենադարձներին, որոնք հայրենիքում մասնագիտական կրթութիւն ստանալով, աշխատել եւ արժանացել են գիտական բարձր աստիճանների, կոչումների, մրցանակների եւ կամ՝ զգալի աւանդ են ունեցել մայր հայրենիքի առաջընթացին:

Նախ՝ հարկ է նշել, որ զանգուածային հայրենադարձութեան այդ տարիներին, ինչպէս Սփիւռքի տարբեր գաղթօճախներից, նոյնպէս եւ Եգիպտոսից ներգաղթած տարբեր մասնագիտութիւնների տէր արհեստավարժ վարպետներ՝ վարսաւիրներ, դերձակ-դերձակուհիներ, կօշկակարներ, ատաղձագործներ, ժամագործներ, գեղարուեստական մետաղագործներ, քարգործներ եւն., իրենց արհեստը արուեստի մակարդակի բարձրացնելով, նոր հմայք են հաղորդել հայրենի երկրին ու նրա բնակչութեան արտաքին տեսքին: Այդ տարիներին հայ վարպետների արտադրանքը դարձել էր փնտռուած ամբողջ Խորհրդային Միութեան տարածքում:

Ոսկերիչներ

Հնաւանդ հայկական ոսկերչութիւնը նոր թափ էր ստացել Երեւանի նորաստեղծ ոսկերչական գործարանով, որտեղ մեծ մասամբ հայրենադարձներ էին աշխատում: Աւելի ետք, հայկական ոսկերչութեան ներշնչման աղբիւր էր հանդիսանալու մայր աթոռ Ս. Էջմիածնի գանձարանում պահուող հայկական թռչնատառերով զարդանախշուած հայկական ոսկետառ, ադամանդակուռ այբուբէնը: Այն նախագծել եւ պատրաստել են եգիպտահայ ոսկերիչներ **Ժիրայր Չուլայեանը** եւ **Հայկ Տէրղեւոնդեանը** (ծն. 1924, Գահիրէ): Իդէպ, վերջինս շարադրել էր նաեւ «Հայկական ոսկերչական արուեստի պատմութիւնը» աշխատութիւնը, որը հեղինակի արտագաղթելու պատճառով մնացել է անտիպ:

Լուսանկարիչներ

Լուսանկարչութիւնը եւս արհեստից վերածուեց գեղարուեստի մի ճիւղի: Յիշարժան են Վանի հերոսամարտի ղեկավարներից Արմենակ Եկարեանի եգիպտահայ որդին՝ **Գուրգէն Եկարեանը**, նաեւ **Շանթ Առաքելեանը**, եւ, յատկապէս, **Անդրանիկ Քոչարը** (ծն. 1919, Աղեքսանդրիա), որի դիմանկարային լուսանկարների անհատական ցուցահանդէսն առաջինն էր Հայաստանի պատմութեան մէջ: Նրա սեւ-սպիտակ լուսանկարչութեամբ ստեղծած՝ *Վահրամ Փափազեանի, Ուիլիըմ Սարոյեանի, Մարտիրոս Սարեանի, Գուրգէն Մահարու, Միհրան Երկաթի, Գոհար Գասպար-*

համապատասխան թոշակ (Ծուլիկեանի սոյն ձեռագիր վկայութիւնը պահւում է մեր անձնական արխիւում):

եանի եւ ուրիշ մեծերի տպաւորիչ դիմանկարներն աչքի էին ընկնում ծաւալների նուրբ անցումներով, զուսպ ճաշակով եւ հոգեբանական ներքին շերտերի բացայայտմամբ: Նա 1962ին հիմնադրել է Երեւանի առաջին լուսանկարչական ակումբը, անհատական ցուցահանդէսներ է ունեցել Հայաստանի եւ Ռուսաստանի տարբեր քաղաքներում նաեւ արտերկրում եւ արժանացել պարգեւների ու մրցանակների, ինչպէս՝ "World Press Photo (Holand)" եւն.: Նրա որդին՝ **Վահան Քոչարը** (ծն. 1949, Երեւան), աւարտելով Երեւանի Պետական Մանկավարժական Ինստիտուտի գեղագիտութեան բաժինը, իմի է բերել իր հօր տարիների ընթացքում (սկսած 1858ից, Կ. Պոլիս) հաւաքած հայ լուսանկարիչների կենսագրականներն ու այլ փաստագրական նիւթերը, նաեւ իր կողմից շարունակելով ու համալրելով, Երեւանում հրատարակել է *Հայ լուսանկարիչներ* (2007) ստուարածաւալ, արժէքաւոր հատորը: Բացի այդ, երախտագէտ որդին 2017ին իր առանձնատան կից հիմնադրել է լուսանկարիչ Անդրանիկ Քոչարի թանգարանը, որն իր բնոյթով առաջինն է Հայաստանում:

Մարզիկներ, Մարզիչներ

Եգիպտահայ երիտասարդները տակաւին Եգիպտոսում արդէն կոփուած եւ մարզուած էին:

Արմենակ Ալաճաճեանը (ծն. 1930, Աղեքսանդրիա) մեծ ներդրում է ունեցել՝ դառնալով բասկէտբոլի ԽՍՀՄ հաւաքականի հիմնական կազմի անդամ, Եւրոպայի ախոյեան, ՀԽՍՀ եւ ԽՍՀՄ սպորտի վաստակաւոր վարպետ: Այդ տարիներին նա մեծ հեղինակութիւն էր վայելում:

Զգալի աւանդ են ունեցել նաեւ բասկէտբոլիստներ **Աբրահամ Համամճեանը** (ծն. 1930), **Ժիրայր** (ծն. 1929, Աղեքսանդրիա) եւ **Վարուժան** (ծն. 1931, Աղեքսանդրիա) **Մինասեան եղբայրները**, որոնք Ֆիզիկական Կուլտուրայի Հայկական Պետական Ինստիտուտի (ՖԿՀՊԻ) շրջանաւարտներ էին:

Սեղանի թենիսի բնագաւառում աչքի է ընկել Եգիպտոսից հայրենադարձ **Պետրոս Ամլոյեանը** (ծն. 1928, Գահիրէ): Նա ՖԿՀՊԻի ուսանող էր եւ կատարում էր մարզչական աշխատանք՝ արժանանալով վաստակաւոր մարզչի կոչման:

Նոյնը պէտք է ասել Գահիրէից ներգաղթած **Սիւզան (Առաքելեան) Զաքարեանի** (ծն. 1930, Գահիրէ) մասին: Նա դարձել է Հայաստանի առաջին եւ ԽՍՀՄ բազմակի ախոյեան, ՀԽՍՀ եւ ԽՍՀՄ սպորտի վարպետ, ՀԽՍՀ վաստակաւոր մարզիչ:

Թեթեւ վազքի բնագաւառում յաջողութիւնների հասած **Բաբկէն Վարդանեանը** դարձել է ՀԽՍՀ սպորտկոմիտէի նախագահի տեղակալ, իսկ նիզակի նետման մարզաձեւում յայտնի է դարձել **Վարուժան Մինասեանը** (ծն. 1931, Աղեքսանդրիա):

Շուրջ երկու տասնեակ եգիպտահայ տղաներ ու աղջիկներ՝ աւարտելով ՖԿՀՊԻՆ, դարձել են ոչ միայն յայտնի մարզիկներ, այլեւ՝ յայտնի մարզիչներ: Յիշարժան է Հայաստանի հաւաքականի վոլէյբոլի մարզիչ, սպորտի վարպետութեան թեկնածու, ՀԽՍՀ վաստակաւոր մարզիչ **Ասատուր Տատուրեանը** (ծն. 1931, Գահիրէ): Նա եղել է նաեւ Երեւանի մարզական դպրոցի փոխտնօրէն:

Գրողներ

Պայծառ Երկաթ – (ծն. 1887, Կեսարիա): Գրող, թատերագիր, բանաստեղծուհի, պարուհի, երգչուհի, ջութակահար եւ դաշնակահար, Միհրան, Մարի եւ Արփինէ Երկաթների մայրը: Բազմաշնորհ այս տիկնոջը առաջին անգամ հանդիպել եմ 1946ին Աղեքսանդրիայի «Տիգրան Երկաթ» ակումբում, երբ հայրիկիս հետ ներկայ էինք իր հեղինակած *Այծեմնիկ* թատերախաղի ներկայացմանը, որտեղ երգչուհին ստանձնել էր միքանի դերեր եւ դերերգեր: 1948ին ընտանիքով ներգաղթել է Հայաստան: Ես նրան կրկին հանդիպեցի 1999ին Երեւանում, երբ նա արդէն 102 տարեկան էր եւ ամէնայն մանրամասնութեամբ վերյիշեց համիդեան ջարդերն ու հաղորդեց Հայոց Ցեղասպանութեան ականատեսի իր վկայութիւնները Կ. Պոլսից Էսքիշեհիր տարուած հայ մտաւորականներ Գրիգոր Զօհրապի, Դանիէլ Վարուժանի եւ Սիամանթոյի, հայոց ողբերգական դէպքերի մասին: Նա նաեւ ինձ է յանձնել իր ստեղծագործած ծաւալուն, բայց անտիպ մնացած վիպերգը՝ թուրքերէն եւ հայերէն *«1915 սեպտեմբերին զուլումը»* (1915 թուի ողբերգութիւնը)[14]:

Գառնիկ Սվազլեան – (Զմիւռնիա, 1904-Երեւան, 1948): Եգիպտոսից առաջին հայրենադարձն է (1947), որ ընդամէնը հինգ ամիս ապրելով իր երազած հայրենիքում, դարձել է Հայաստանի Գրողների Միութեան (ՀԳՄ) անդամ: Աղեքսանդրիայում եղել է ՀՕԿի հիմնադիրներից եւ գործել է մինչեւ լուծարուելը (1937): Հեղինակել է *Ներգաղթ* թատերգութիւնը (1936), որը բեմադրուել է Սփիւռքի տարբեր գաղթօճախներում: Սփիւռքահայ տարբեր պարբերականներում հանդէս է եկել հրապարակախօսական, քաղաքական բնոյթի յօդուածներով եւ դիպուկ երգիծանկարներով: Երեւանի ձայնասփիւռով ելոյթներ է ունեցել եւ *Խորհրդային Հայաստան* պաշտօնաթերթում հանդէս եկել մի շարք ծաւալուն, քաղաքական բնոյթի յօդուածներով: Երեւանում յետմահու լոյս է տեսել նրա *Հայրենիքիս համար* (1965) երկերի ժողովածուն:

---

[14] Վկայութիւններ 181 եւ 555՝ Վ. Սվազլեան, *Հայոց Ցեղասպանութիւն. ականատես վերապրողների վկայութիւններ* (հայերէն եւ անգլերէն՝ ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2011, թուրքերէն՝ İstanbul: “Belge” Uluslararasi Yayincilik, 2013):

Գրականագէտներ

Գառնիկ Ստեփանեան – (Դերջան, 1909-1989): Եղեռնի թոհուբոհին կորցրել էր ծնողներին, յունական տարբեր որբանոցներում գոյատեւելով, հասել Եգիպտոս: Գահիրէում *Արեւ* թերթի խմբագրատանը (Երուանդ Օտեանի, ապա՝ Վահան Թէքէեանի խմբագրապետութեան օրօք) աշխատել է որպէս գրաշար: Նամակով փնտռել-գտել է իր հօրը, որը բնօրրանից ռուսական բանակի օգնութեամբ փրկուել եւ ապրում էր Խորհրդային Հայաստանում: Հօր անձնական հրաւէրով 1930ին ներգաղթել է Երեւան, աւարտել ԵՊՀ բանասիրութեան բաժինը, աշխատել Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի (ՀԳԱ) Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտում (ՄԱԳԻ), դարձել յայտնի գրականագէտ, արուեստաբանութեան դոկտոր, արուեստի վաստակաւոր գործիչ, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի (ԳԱԹ) տնօրէն: Հեղինակ է հայ բեմի վարպետներին նուիրուած 20ից աւելի գրքերի: Հայերէն է թարգմանել *Ագապի* հայատառ թուրքերէն վէպը, հեղինակել է *Մղձաւանջային օրեր* յայտնի յուշագրութիւնը, *Կենսագրական բառարան*ը, նրա՝ որպէս Հայոց Ցեղասպանութեան ականատեսի, հաղորդած վկայութիւնը տեղ է գտել տողերիս գրողի ստուար հատորում[15]:

Հայկ Գասպարեան – (Սուտան, 1912-1970): Իր տիկնոջ՝ երգչուհի Գոհար Գասպարեանի, հետ 1947ին Գահիրէից ներգաղթել է Երեւան եւ աշխատել ՀԳԱ ՄԱԳԻի մշակութային կապերի եւ առնչութիւնների բաժնում: Հեղինակել է *Վիկտոր Հիւգօն հայ բեմում* գիտական աշխատութիւնը, որի համար արժանացել է բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճանի:

Յակոբ Արամեան – (Անտիոք, 1908): Եղել է *Արեւ* օրաթերթի խմբագիր: 1947ին հայրենադարձութեան Ա. կարաւանի կարաւանապետ, ՀԳՄ անդամ, հեղինակ է *Նեղոսի հովտում* (1954) եւ *Փարիզի նեգրուհին* (1956) պատմուածքների հատորներին:

Վարուժան Նալպանտեան – (Գահիրէ, 1929): Ներգաղթել է 1947ին, աւարտել է Երեւանի Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի (ՀՊՄԻ) հոգեբանութեան բաժինը: ՀԳՄ անդամ: Գրել է ակնարկներ, հեքիաթներ եւ կատակերգութիւններ:

Պերճ Զէյթունցեան – (Աղեքսանդրիա, 1938-2017): Սովորել է ԵՊՀում, Մոսկուայի Գրականութեան Ինստիտուտում, ապա՝ աւարտել նաեւ տեղի բարձրագոյն բեմագրական երկամեայ դասընթացը: Արձակագիր, վիպասան, թատերագիր: Հեռուստատեսային ֆիլմերի «Երեւան» ստուդիայի գեղարուեստական միաւորման գլխաւոր խմբագիր: ՀԳՄ անդամ, վարչութեան քարտուղար, *Գրական թերթ*ի խմբագրութեան անդամ: Նրա գործե-

[15] Վկայութիւն 95՝ Սվազլեան, *Հայոց Ցեղասպանութիւն*, էջ 229-231:

րը թարգմանուել են ռուսերէն եւ այլ լեզուներով: Նրա թատերախաղերից են՝ *Ամէնափխուր մարդը, Աստղածների կանչը, Ոտքի, դատարանն է գալիս, Խոր Վիրապ* եւն., որոնք բեմադրւում են Հայաստանում եւ արտերկրում: Հեղինակն է Արշակ Երկրորդ պատմավէպին: Արժանացել է բազմաթիւ պարգեւների եւ կոչումների՝ ՀԽՍՀ պետական եւ Գրողների Միութեան «Ոսկէ գրիչ» պարգեւների, ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործչի կոչման եւ ՀՀ նախագահի մրցանակի:

Օպերային երգիչներ

Միհրան Երկաթ - (Կ. Պոլիս, 1921-1986): Աւարտել է Աղեքսանդրիայի Ճիւզեփփէ Վերտիի անուան լիսէն, մեներգել տեղի Ալհամբրա եւ Գահիրէի թագաւորական օպերային թատրոններում: 1947ին ներգաղթել է եւ գլխաւոր դերերգերով հանդէս եկել Երեւանի Ալ. Սպենդիարեանի անուան Օպերայի եւ Բալէտի Թատրոնում (ԵԱՍՕԲԹ), նաեւ Մոսկուայի Պոլշոյ Թատրոնում: Լայնածաւալ բարիտոնն ու դրամատիկական բազմակողմանի ձիրքը հնարաւորութիւն են ընձեռել կատարելու տարբեր բնոյթի դերերգեր՝ Արշակ Բ. (Տ. Չուխաջեանի *«Արշակ Բ»*), Թաթուլ (Սպենդիարեանի *«Ալմաստ»*), Ռիկոլեթթօ (Վերտիի *«Ռիկոլեթթօ»*), Մոսկուայի Պոլշոյում՝ 1961-63, Գրիազնոյ (Ն. Ռիմսկի-Կորսակովի *«Թագաւորի հարսնացուն»*), Կամօ (Գրիգորի Հախինեանի *«Լեգենդի մարդը»*) օպերաներում: Արժանացել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման (1977):

Գոհար Գասպարեան (Խաչատրեան) – (Գահիրէ, 1924-2007): Իր ձայնը մշակել է Գահիրէում իտալացի մայեստրօներ՝ Ջ. Ֆելդմանի եւ Վ. Կարրոյի ղեկավարութեամբ: 1940ից ելոյթներ է ունեցել Գահիրէում: Ներգաղթել է 1947ին: Որպէս մեներգչուհի աշխատանքի է անցել Երեւանի ԱՍԱՕԲում: 1964ից դասաւանդել է Կոմիտասի անուան Երեւանի Պետական Կոնսերվատորիայում (ԿԵՊԿ), նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում: Քնարական կոլորատուրային սոփրանօն բացառիկ լայն հնարաւորութիւններ է ընձեռել կատարելու բարդ ստեղծագործութիւններ՝ գաղափարագեղարուեստական խոր եւ համոզիչ իմաստաւորմամբ:

Համաշխարհային համբաւի արժանացած երգչուհին հիասքանչ կատարել է Անուշ, Շուշան (Ա. Տիգրանեանի *«Անուշ», «Դաւիթ բէկ»*), Օլիմպիա, Կարինէ (Տ. Չուխաջեանի *«Արշակ Բ.», «Լեպլեպիճի Հոր-հոր աղա»*), Գոհար (Յ. Ստեփանեանի *«Հերոսուհի»*), Ռոզինա (Ճ. Ռոսսինիի *«Սեւիլեան սափրիչ»*), Մարգարիտ (Շ. Կունոյի *«Ֆաուստ»*), Լաքմէ (Լ. Տելիպի *«Լաքմէ»*), Լիւչիա (Գ. Տոնիցեթթիի *«Լիւչիա փի Լամերմուր»*), Նորմա (Վ. Պելլինիի *«Նորմա»*), Մարֆա (Ն. Ռիմսքի-Քորսաքովի *«Թագաւորի հարսնացուն»*) դերերը: Հարուստ է նաեւ նրա համերգային երգացանկը (Պախ, Հենտէլ, Մոցարթ, Շթրաուս, Կրիկ, Կլիէր, Չայքովսքի, Ռախմանինով եւ այլ երգահաններ, ինչպէս նաեւ՝ հայ հոգեւոր երաժշտութիւն, Կոմիտաս եւն.): Համերգերով հանդէս է եկել Խորհրդային Միութեան քա-

ղաքներում եւ աշխարհի տարբեր երկրներում՝ ամէնուր հիացնելով բոլորին: Առաջին հայրենադարձն է, որ արժանացել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստի (1956) եւ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի (1984) կոչումների եւ այլ բազմաթիւ պետական պարգեւների:

Արմինէ (Զաքարեան) Թութունճեան - (Գահիրէ, 1928): Ներգաղթել է 1948ին: Համեստ ու տաղանդաւոր մեներգչուհին Երեւանի ԱՍԱՕԲում կերտել է մի շարք անմոռանալի կերպարներ: Յատկապէս տպաւորիչ էր նրա Անուշը համանուն օպերայից: Հանդէս է եկել Միհրան Երկաթի եւ Գոհար Գասպարեանի հետ: Արժանացել է Հայաստանի Ժողովրդական Արտիստի կոչման եւ Պատուոյ Նշան մեդալի:

Աննա Փափազեան-Նշանեան - (Գահիրէ, 1932): 1964ից Երեւանի ԱՍԱՕԲի մեներգչուհի էր:

Պարողներ

Աննա Մարիքեան - (Աղեքսանդրիա, 1944): Յայտնի արուեստագէտ Պայծառ Երկաթի թոռնուհին է, Մարի Երկաթի դուստրը: Ներգաղթել է 1947ին: Աւարտել է Երեւանի Պարարուեստի Ուսումնարանը: Տաղանդաւոր մենակատարուհին հանդէս է եկել Երեւանի ԱՍԱՕԲում՝ որպէս բալէտի գլխաւոր դերակատար *«Ժիզէլ», «Սպարտակ», «Գայիանէ», «Տոն Քիշոտ», «Կարապի լիճ»* բալէտներում: Ելոյթներով հանդէս է եկել տարբեր երկրներում: Յայտնի մանկավարժ, պարարուեստի գլխաւոր ուսուցչուհի-մեթոդիստ: Բարձր է գնահատուել հանդիսատեսների եւ պետութեան կողմից: Արժանացել է պետական բարձր պարգեւների:

Սօնա Վարդանեան - (Աղեքսանդրիա, 1947): Ներգաղթել է 1948ին: 3 տարեկանից նկատելի է եղել նրա հակումը պարի նկատմամբ: Ընդունուել է Երեւանի Պետական Պարարուեստի Ուսումնարան: Ութ տարուայ կրթաշրջանն աւարտել է եօթ տարում: Երեւանի ԱՍԱՕԲում եղել է մենակատար: Ստանձնել է պատասխանատու դերեր՝ «*Թամար», «Ժիզէլ», «Կարապի լիճ», «Տոն Քիշոտ», «Գայիանէ», «Սպարտակ»* բալէտներում: Վիլէն Գալստեանի հետ մի շարք շրջայցեր է ունեցել տարբեր երկրներում:

Դերասաններ

Խաչիկ Սանտալճեան - (Աղեքսանդրիա, 1900): Յայտնի դերասանը, 1948ին Եգիպտոսից ներգաղթելով, աշխատել է Երեւանի Յ. Պարոնեանի անուան Երաժշտական Կոմեդիայի Թատրոնում, կատարել է արեւմտահայ թատերագիրների ստեղծած տպաւորիչ դերեր՝ վայելելով հանդիսատեսի մեծ համակրանքը: Նկարահանուել է մի շարք ֆիլմերում:

Ժիրայր Սրապեան - Իր ինքնատիպ արտաքինով եւ հուժկու ձայնով երգել է Հայաստանի Պետական Երգչախմբում եւ նկարահանուել *«Տժվժիկ»* ու *«Լեպլեպիճի Հոր-հոր աղան»* կինոֆիլմերում:

Ուզունեան ամուսիններ - Աղեքսանդրիայից ներգաղթել են 1947ին: Աշխատել են Երեւանի պետական կրկեսում՝ հանդիսատեսներին հիացնելով իրենց ինքնատիպ ելոյթներով:

Ռեժիսոր

Հրաչ Ֆրունճեան - (Աղեքսանդրիա, 1934): Միակ եգիպտահայն է, որ աւարտել է Մոսկուայի Ս. Գերասիմովի անուան Կինօմատոգրաֆիայի Համառուսաստանեան Պետական Ինստիտուտի կինօռեժիսորական բարձրագոյն դասընթացները: Իր մասնագիտութեամբ աշխատել է Հայաստանի հեռուստատեսութիւնում եւ Երեւանի նորաստեղծ Տիկնիկային Թատրոնում:

Գէորգեան Ճեմարանի Դասախօսներ

Վահրամ Արծրունի - (Երզնկա, 1875): Նախնական կրթութիւնն ստացել է Ակնի Արամեան, ապա՝ Կ. Պոլսոյ Կեդրոնական եւ Կայսերական գեղարուեստի վարժարաններում: Աղեքսանդրիայում նշանակուել է Պօղոսեան Ազգային Վարժարանի տնօրէն: Աղեքսանդրիայում հիմնել է Թարգմանչաց Վարժարանը եւ վարել տնօրէնի պաշտօնը: 1947ին ներգաղթել է Հայաստան եւ աշխատել է Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում որպէս գրաբարի եւ մատենագիտութեան դասախօս:

Բարսեղ Թաշճեան - (Գահիրէ, 1932): Եղել է մայր աթոռին առընթեր վերստուգիչ յանձնաժողովի անդամ եւ Գէորգեան Ճեմարանի ընդհանուր պատմութեան եւ աշխարհագրութեան դասախօս:

Հոգեւորականներ

Պերճ Պետիկեան - (Գահիրէ, 1928): Նոյնպէս Գէորգեան Ճեմարանի շրջանաւարտ է եղել, Գեղարդի վանահայրը՝ Հայր Կիւրեղ վարդապետ անունով: Կարճ կեանք է ունեցել:

Արամ Պոյաճեան - (Գահիրէ, 1930): Քահանայ է ձեռնադրուել Լենինականում: Վազգէն Ա կաթողիկոսի հրամանով գործուղուել է իր ծննդավայր՝ ծառայելու Գահիրէի թեմում որպէս հոգեւոր հովիւ, որտեղից ծանր հիւանդութեամբ վերադարձել է Երեւան եւ կնքել իր մահկանացուն:

Արսէն արք. Պէրպէրեան - (Աղեքսանդրիա, 1937): Աւարտել է Գէորգեան Ճեմարանը, ուսումը շարունակել է Մոսկուայի Աստուածաբանական Ակադեմիայում: Նշանակուել է Վազգէն Ա. կաթողիկոսի անձնական քարտուղար: Եղել է Արարատեան թեմի առաջնորդական փոխանորդ, գործուղուել է Ժնեւ՝ Էքիւմենիք Ինստիտուտում ուսումը շարունակելու: Կատարել է Զուիցերիայի եւ Շուէտի հայօճախների հոգեւոր հովուի պարտականութիւնը: Գործուղուել է Լոնտոն, Արքայական Քոլէջում պաշտպանել է *«Անգլիական եւ հայ եկեղեցիների յարաբերութիւնները 1840-1905 թթ.»* թեզը: Միաժամանակ հետեւել է Լոնտոնի Արքայական Ակադեմիայի երա-

ժշտական դասընթացին: Վերադառնալով Հայաստան՝ վարել է Գուգարաց թեմի առաջնորդի պաշտօնը:

Հոգեբան

Յովսէփ Թութունճեան - (Աղեքսանդրիա, 1918): Գահիրէի դպրոցներում դասաւանդել է հոգեբանութիւն: Առաջին հայրենադարձն է, որ Մոսկուայում 1956ին օտար լեզուով պաշտպանել է թեկնածուական, իսկ 1967ին՝ դոկտորական ատենախօսութիւն: 1972ին նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում: Եղել է Հոգեբանների Ֆրանսիական Միութեան, Սան Փաուլօ քաղաքի Հոգեսոմատիկայի Ինստիտուտի գիտական խորհրդի պատուաւոր անդամ: Յայտնի է իր նոր, ինքնատիպ գիտական ուղղութիւններով: Ստեղծել է հոգեբանութեան ամբիոններ տարբեր բուհերում: 1976ին ԵՊՀում հիմնել է հոգեբանութեան ամբիոն, որի երկարամեայ վարիչն է եղել, իսկ 1979ին ստեղծել է ինժենէրական հոգեբանութեան աշխատանոց: Հեղինակ է տարբեր լեզուներով գրուած աւելի քան 100 գիտական յօդուածների եւ 4 մենագրութիւնների՝ *Հանրի Վալլոնի հոգեբանական կոնցեպցիան* (1966), *Երեխայի հոգեբանութեան հարցեր* (1980), *Սովետահայ հոգեբանութիւն. ընտիր էջեր* (1988) եւ *Հոգեբանական էֆիւդներ* (1991): Մասնակցել է միջազգային գիտաժողովների: Հայրենիքում բարձր գնահատուած պրոֆեսոր է, պարգեւատրուել է Աշխատանքի Արիութեան Մեդալով, Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Շքանշանով եւն.: Երեւանի «Ուրարտու» Համալսարանում գործում է Յ. Թութունճեանի անուան գիտական գրադարան:

Հոգեբուժներ

Գարեգին Ամատեան - (Երզնկա, 1888): Աւարտել է Կ. Պոլսի Կեդրոնական Վարժարանը, ապա՝ Վենետիկի Մուրատ Ռաֆայէլեան Վարժարանը: Մասնագիտական ուսումն ստացել է Լոզանի Համալսարանի բժշկական ֆակուլտէտում: Գահիրէում եղել է յայտնի բժիշկ: 1948ին ներգաղթել է Երեւան եւ աշխատել Հոգեբուժական Կլինիկայում: Առաջին հայրենադարձ բժիշկն է, որ պաշտպանել է ատենախօսութիւն եւ արժանացել բժշկական գիտութիւնների թեկնածուի աստիճանի: Հեղինակ է բազմաթիւ յօդուածների, որոնք վերաբերում են ոչ միայն բժշկագիտութեանը, այլեւ՝ Հայոց Ցեղասպանութեան պատմութեանը: Փարիզում լոյս է տեսել նրա բանաստեղծութիւնների ժողովածուն:

Մասիս Ամատեան - (Գահիրէ, 1932): Երեւանի Մ. Հերացու անուան Պետական Բժշկական Իստիտուտի (ԵՊԲԻ) շրջանաւարտ: Որդին շարունակել է հօր՝ Գարեգին Ամատեանի մասնագիտութիւնը եւ Մոսկուայում պաշտպանել դոկտորական ատենախօսութիւն՝ կենսաքիմիայի, դեղագիտութեան եւ հոգեբուժութեան գծով: Աշխատել է Երեւանի Ալ. Մնջոյեանի անուան Նուրբ Օրգանական Քիմիայի Ինստիտուտում: Հոգեբուժութեան

եւ ռադիոլոգիական կենսաքիմիայի գծով բազմաթիւ գիտական յօդուածների հեղինակ է:

Բժիշկներ

Պօղոս Շամլեան - (Գահիրէ, 1900): Գահիրէի ֆրանսիական հիւանդանոցում եղել է գլխաւոր բժիշկ: Ներգաղթել է 1946ին լիբանանահայերի հետ: Երեւանում յայտնի է եղել որպէս արհեստավարժ վիրաբուժ:

Գէորգ Արսլանեան - (Գահիրէ, 1925): Գերազանցութեամբ աւարտել է ԵՊԲԻՆ, աշխատել վիրաբուժ եւ գլխաւոր վիրաբուժ Մեղրիում, ապա՝ փոխադրուել Մոսկուա, աշխատել ՏԱՍՍ լրատուական գործակալութեան արաբերէնի բաժնում: Հրատարակել է *Ռուսերէն-լատիներէն-արաբերէն եռալեզու բժշկագիտական բառարան*ը, որի աշխատանքներին մասնակցել է նաեւ պրոֆեսոր Ն. Ասլանեանը:

Զաւէն Տոլապճեան - (Աղեքսանդրիա, 1928): Մեծ ճանաչման եւ յարգանքի արժանացած եգիպտահայ հայրենադարձ սրտաբան, դոկտոր-պրոֆեսոր, բազմաթիւ գիտական յօդուածների եւ մենագրութիւնների, նաեւ գեղարուեստական գրքերի հեղինակ: Եղել է ակադ. Լ. Յովհաննիսեանի անուան Սրտաբանական Ինստիտուտի բաժնի վարիչ: ԱՄՆում հեղինակաւոր բժշկագիտական պարբերականի խմբագրական կազմի անդամ, Սրտաբանութեան Միջազգային Ընկերակցութեան անդամ: Երեք անգամ ընտրուել է ՀԽՍՀ գերագոյն խորհրդի պատգամաւոր եւ նախագահութեան անդամ (1972):

Նուպար Ասլանեան - (Գահիրէ, 1931): Գերազանցութեամբ աւարտել է ԵՊԲԻՆ, աշխատել Ապարանի Քուչակ գիւղի հիւանդանոցում, ապա՝ Երեւանում, պաշտպանել եւ արժանացել է բժշկական գիտութիւնների դոկտորի աստիճանի: Եղել է Առողջապահութեան Ազգային Ինստիտուտի ախտորոշման ամբիոնի վարիչ, ԵՊԲԻի պրոֆեսոր՝ իր մտայղացած կլինիկական կենսաքիմիայի ամբիոնում: Հայաստանում քրոնօկենսաբանութեան գիտական ուղղութեան հիմնադիրն է: Երեւանի Սրտաբանական Ինստիտուտում եղել է բաժնի վարիչ, ԵՊԲԻում՝ ամբիոնի վարիչ, նաեւ դասաւանդել է ԵՊԲԻում եւ տարբեր համալսարաններում: Աւելի քան 500 գիտական յօդուածների եւ միքանի մենագրութիւնների հեղինակ է: Մասնակցել է միջազգային գիտաժողովների: Մասնագիտական պատրաստութիւն է հաղորդել բազմաթիւ բժիշկների եւ դոկտորների:

Ալիս Լեւոնեան - (Գահիրէ, 1932): ԵՊԲԻի շրջանաւարտ, եղել է վիրաբուժ Երեւանի թիւ 3 կլինիկական հիւանդանոցում:

Նոյեմ Յովհաննիսեան - (Գահիրէ, 1932): Աւարտել է ԵՊԲԻՆ: Որպէս մանկաբուժ աշխատել է Երեւանի Նոր Արէշի մանկական հիւանդանոցում:

Ոսկան Պահլաւեան - (Աղեքսանդրիա, 1938): Բժշկական գիտութիւնների դոկտոր-պրոֆեսոր է, յայտնի սրտաբան, Երեւանի Ս. Գրիգոր Լու-

սաւորիչ բժշկական կենտրոնի սրտաբանութեան բաժանմունքի վարիչն է: Շուրջ 30 գիտական յօդուածների հեղինակ է:

Եդուարդ Սվաճեան - (Գահիրէ, 1941): Դոկտոր-պրոֆեսոր, որպէս ա-նեսթեզիոլոգ աշխատել է Մոսկուայում:

Անահիտ Վարդանեան - (Աղեքսանդրիա, 1944): Աւարտել է ԵՊԲԻՆ: Աշխատել է գինեկոլոգ Երեւանի 2րդ ծննդատանը:

Ազատ Պօղիկեան - (Գահիրէ, 1951): Բժշկագիտութեան դոկտոր-պրո-ֆեսոր է սրտաբանութեան գծով:

Արաբագէտներ

Յակոբ Նալպանտեան - (Կ. Պոլիս, 1890): Եգիպտոսում եղել է Գա-լուստեան Ազգային Վարժարանի, նաեւ Աղեքսանդրիայում Պօղոսեան Ազգային Վարժարանի տնօրէնը: 1947ին հայրենադարձուել եւ աշխա-տանքի է ընդունուել ՀԳԱ պատմութեան ինստիտուտում: Առաջին հայրե-նադարձն է, որ արաբագիտութեան գծով պաշտպանել եւ արժանացել է պատմական գիտութիւնների թեկնածուի աստիճանի՝ նիւթ ունենալով *Հա-յաստանը արաբական արշաւանքների ժամանակաշրջանում* աշխատու-թիւնը (1956): Լոյս է ընծայել նաեւ *Արաբ ոստիկանները Հայաստանում* ու-սումնասիրութիւնը (1958), իսկ յետմահու հրատարակուել է նրա *Արաբա-կան աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին* (1965) աշ-խատութիւնը:

Վաղինակ Բիւրատ - (Կ. Պոլիս, 1913): Գրող Սմբատ Բիւրատի որդին է, արաբերէնի առաջին դասախօսն է եղել ԵՊՀում, նաեւ զբաղուել է թարգմանութեամբ:

Հրաչ Գաբուճեան - (Գահիրէ, 1926): Աւարտել է ԵՊՀն, որտեղ աշա-կերտել է ակադ. Հրաչեայ Աճառեանին, ուսումը շարունակել է Մոսկուայի Լոմոնոսովի անուան Պետական Համալսարանում: Եղել է արաբերէնի դասախօս, ապա՝ ամբիոնի վարիչ եւ արեւելագիտութեան ֆակուլտէտի դեկան: Մասնակցել է միջազգային գիտաժողովների, պարգեւատրուել Ժողովուրդների Բարեկամութեան Շքանշանով: Ապրել է Մոսկուայում:

Արամ Տէրղեւոնդեան - (Գահիրէ, 1928): Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր: Աւարտել է ԵՊՀ արեւելագիտութեան բաժինը: Աշ-խատել է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտում: 1981-88՝ ՀՀ ԳԱԱ արե-ւելագիտութեան ինստիտուտի բաժնի վարիչ: Ուսումնասիրութիւնները վե-րաբերում են հայ-արաբական միջնադարեան քաղաքական եւ մշակութա-յին առնչութիւններին *(Արաբական էմիրութիւնները Բագրատունեաց Հա-յաստանում* (1965), *Հայաստանը եւ արաբական խալիֆայութիւնը* (1977, ռուս.): Թարգմանել է «Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մա-սին» մատենաշարի *Իպն Ալ-Ասիր* հատորը (1981): Աշխարհաբարի է վերա-ծել, ներածութեամբ եւ ծանօթագրութիւններով հրատարակել Ագաթանգե-ղոսի *Հայոց պատմութիւն*ը (1983), Ղեւոնդի *Պատմութիւն*ը (1982): Եղել է

Սիրիայի Գիտութիւնների Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի պատուաւոր անդամ, Հռոմի Տիբերինա Ակադեմիայի թղթակից անդամ (1996): Լիբանանից հայրենադարձ, հնագէտ, պատմական գիտութիւնների թեկնածու Սեդա Տեւէճեանի ամուսինն է եւ Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի ներկայիս տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր Վահան Տէրղեւոնդեանի հայրը:

Յարութիւն Ժամկոչեան - (Սիուֆ, Աղեքսանդրիա, 1932): Աւարտել է ԵՊՀն, ապա ուսումը շարունակել Լենինկրատի ՊՀում: Նոյն համալսարանում դասախօսել է արեւելագիտութեան ֆակուլտէտում: Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր է, արաբերէնի դասախօս:

Դասախօսներ, Ուսուցիչներ, Դպրոցի Տնօրէն

Զարուհի Սվազլեան - (Աղեքսանդրիա, 1929): Ներգաղթել է 1947ին: Աւարտել է Վ. Բրիւսովի անուան Օտար Լեզուների Պետական Ինստիտուտի (ԵՕԼՊԻ) գերմաներէնի բաժինը: Նոյն ինստիտուտում դասաւանդել է գերմաներէն: Արժանացել է դոցենտի կոչման: Լոյս է ընծայել դասագրքեր Հայաստանի միջնակարգ դպրոցների բարձր դասարանների համար (համահեղինակներ՝ Արտաշէս Տիրացեան, Մանուշ Յարութիւնեան եւ Դորա Սաքայեան): Հրատարակել է *Das Karoussel* գերմաներէն ընթերցանութեան գիրքը:

Արամ Բարլեզիզեան – (Գահիրէ, 1937): ԵՊՀի շրջանաւարտ է, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ԵՕԼՊԻում ֆրանսերէնի դասախօս եւ ամբիոնի վարիչ: Հեղինակ է 45 գիտական յօդուածների եւ 3 մենագրութիւնների, որոնք վերաբերում են հայ-ֆրանսիական լեզուական առնչութիւններին:

Սօնա Յովհաննիսեան - (Գահիրէ, 1938): ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրութեան ֆակուլտէտի շրջանաւարտ, ԵՊՀում եւ ԵԺՏԻում ֆրանսերէն է դասաւանդել: Հեղինակել է մի շարք դասագրքեր, նաեւ՝ *Ֆրանսերէն-հայերէն-ռուսերէն եռալեզու տնտեսագիտական բառարան*:

Պերճ Թիւրապեան - (Գահիրէ, 1947): Ներգաղթել է 1964ին, աւարտել ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրութեան ֆրանսերէնի բաժինը: Դասաւանդել է ֆրանսերէն: Հայերէն է թարգմանել Շարլ Ազնաւուրի երգերը, որոնք եւ կատարում է հայերէն եւ ֆրանսերէն առինքնող հմայքով:

Լեւոն Գալեմքերեան - (Այնթապ, 1907): Աւարտել է Աթէնքի Աստուածաբանական Ճեմարանը, ապա՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը: Կալկաթայում հիմնել է Հայոց Մարդասիրական Ճեմարանը, իսկ Գահիրէում՝ Գեղարուեստասիրաց Միութիւնը: Գահիրէի դպրոցներում, ապա՝ նաեւ Լենինականի (այժմ Գիւմրի) դպրոցներում դասաւանդել է անգլերէն: Գրել է *Մանկան դաստիարակութիւնը տան մէջ* (1934, Գահիրէ) եւ «Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի պատմութիւնը» (անտիպ):

Հայկ Ոսկերչեան - (Աղեքսանդրիա, 1919): Տէր Հայկազուն քահանայի որդին է: Աւարտել է Հայկազեան Կրթարանը, ապա՝ ստացել անգլիական բարձրագոյն կրթութիւն: 1947ին միայնակ ներգաղթել է Հայաստան, աշխատել անգլերէնի դասախօս ԵՊՀում եւ ԿԵՊԿում: Հեղինակել է Հայաստանում առաջին *Հայերէն-անգլերէն զրուցարան*ը (1965): Երկար տարիներ Հայաստանի հեռուստատեսութեամբ վարել է անգլերէնի նորաստեղծ դասընթացները, որոնք ընդհատուել են 1968ին, երբ նա արտագաղթել է Ֆրանսիա:

Ալիս Արծրունի (Պորտէր) - (Աղեքսանդրիա, 1920): Աւարտել է տեղի Բանաթ ԷլԱշրաֆ եգիպտաանգլիական քոլէջը: Աշխատել է Եգիպտոսում իր հօր հիմնած Թարգմանչաց Վարժարանում՝ որպէս անգլերէնի ուսուցիչ: Ընտանիքի ներգաղթելուց յետոյ Երեւանում աշխատել է Թելմանի անուան դպրոցում եւ անգլերէնի յատուկ դասեր տուել բարձրաստիճան պաշտօնեաների եւ նրանց զաւակներին:

Արամ Ինէճեան - (Գահիրէ, 1927): Ներգաղթել է 1963ին: Աւարտել է ԵՕԼՊԻՆ: Եղել է Երեւանի թիւ 139 անգլիական թեքումով դպրոցի տնօրէն: Նոյն դպրոցում անգլերէն են դասաւանդել նրա **Գեղամ** եղբայրը եւ կինը՝ **Աստղիկ Ինէճեանը**, իսկ **Սարգիս** եղբայրը՝ թիւ 114 անգլիական թեքումով դպրոցում:

Ալիս Պօղիկեան - (Գահիրէ, 1926): Ներգաղթել է 1963ին: Անգլերէնի իր քաջատեղեակութեամբ ընդունուել է Երեւանի Ե. Չարենցի անուան անգլիական թեքումով միջնակարգ դպրոցը, որտեղ իր դստեր՝ **Աստղիկ Պօղիկեան-Կովկասեանի** հետ, ուսուցման նոր եւ հետաքրքիր մեթոդներ կիրառելով, նշանակալից կերպով բարձրացրել են անգլերէնի ուսուցման մակարդակը՝ հայրենիքին տալով բանիմաց եւ պատրաստուած շրջանաւարտներ:

Աստղիկ Կովկասեան (Պօղիկեան) - (Գահիրէ, 1945): Ներգաղթել է 1963ին: Աւարտել է ԵՕԼՊԻի անգլերէնի բաժինը: Աշխատել է Երեւանի Ե. Չարենցի անուան անգլիական թեքումով միջնակարգ դպրոցում, դասաւանդել անգլերէն:

Նուպար Յովհաննէսեան - (Գահիրէ, 1930): Աւարտել է ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրութեան ֆակուլտէտի անգլերէն բաժինը: Անգլերէնի դասախօս է, աշխատել ԵՕԼՊԻում: Հեղինակել է երեք դասագիրք՝ *ABC Book, My English Textbook* եւ *English*:

Անի Ծուլիկեան (Թաշճեան) - (Գահիրէ, 1947): Երեւանում աւարտել է ԵՕԼՊԻՆ: Նոյն ինստիտուտում դասաւանդել է անգլերէն:

Աթքէն Արմէնեան - (Գահիրէ, 1944): Աւարտել է Հելիոպոլիսի անգլիական դպրոցը, ապա՝ Լոնտոնի Համալսարանի նաւթային ճարտարագիտութեան բաժինը: Աշխատել է Քանատայի Էտմոնթոն քաղաքում որպէս նաւթային ճարտարագէտ, ապա՝ աւարտել է Ալպերթայի Համալսարանը եւ պաշտպանել *«Օտար լեզուներու ուսուցումը Հայաստանի մէջ»* թեզը:

Թորոնթոյում եղել է ֆրանսիական դպրոցի տնօրէն: 1992ին տեղափոխուել է Հայաստան: Հայաստանի Ամերիկեան Համալսարանում եղել է ընդլայնուած դասընթացների բաժնի դեկան եւ աշխատել ուսանողական հարցերով գրասենեակի տնօրէն, սակայն կարճ ժամանակ անց կեանքից հեռացել է:

Յակոբ Ծուլիկեան - (Գահիրէ, 1942): Ներգաղթել է 1963ին, աւարտել ԵՕԼՊԻՆ: Նոյն ինստիտուտում դասաւանդել է անգլերէն, ապա նաեւ՝ Հայաստանի Ամերիկեան Համալսարանում եղել է աւագ դասախօս: *Ազգ* օրաթերթի խմբագրական կազմի անդամ է, օտար լեզուների թարգմանիչ:

Արմենակ Նշանեան (Ժանօ) - (Գահիրէ, 1930): Աւարտել է Երեւանի Գեղարուեստաթատերական Ինստիտուտի (ԵԳԹԻ) դերասանական բաժինը: Անգլերէն է դասաւանդել ԵՊԿում: Ամուսինն էր օպերային երգչուհի Աննա Փափազեան-Նշանեանի: Մահացել է Երեւանում:

Քաղաքագէտներ

Սարգիս Էքմէքճեան - (Գահիրէ, 1928): Աւարտել է Երեւանի ՀՊՄԻՆ, աւարտել է Լենինկրատի Համալսարանի թեկնածուականը: Աւելի քան 30 տարի աշխատել է ՏԱՍՍի (Մոսկուա) արաբական բաժնում եւ մեծ հեղինակութիւն է վայելել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան արաբական բաժնում:

Յարութիւն Տատուրեան - (Զակազիկ, 1928): Աւարտել է ԵՊՀն, միքանի տարի աշխատել է Իրաքում ԽՍՀՄ դեսպանատանը՝ որպէս թարգմանիչ, ապա արաբերէն է դասաւանդել ԵՊՀում, եղել է ՀԽՍՀ ռադիոկոմիտէում արաբերէն հաղորդումների խմբագիր եւ հաղորդավար:

Տնտեսագէտներ

Վահէ Գաբուճեան - (Գահիրէ, 1930): Գերազանցութեամբ աւարտել է ԵՊՀ տնտեսագիտութեան ֆակուլտէտը: Անուանի տնտեսագէտ պրոֆեսոր Զ. Բաշինջաղեանի գիտական ղեկավարութեամբ պաշտպանել է ատենախօսութիւն, արժանացել գիտական աստիճանի եւ դոցենտի կոչման: Դասախօսել է ԵՊՀում, նշանակուել է ԵՊՀի ռեկտորի ուսումնական գծով տեղակալ, ապա՝ ՀԽՍՀ բարձրագոյն եւ միջնակարգ կրթութեան նախարարի առաջին տեղակալ: Առաջին հայրենադարձն է նման պաշտօնում: 1990-92՝ եղել է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան տնօրէն:

Յակոբ Տէրունեան - (Աղեքսանդրիա, 1931): Յաճախել է տեղի Լիսէ Ֆրանսէ քոլէջը: Ներգաղթել է 1947ին: Երեւանում գերազանցութեամբ աւարտել է ԵՊՀ տնտեսագիտութեան բաժինը, միաժամանակ ուսանել է ԵՊԿում եւ փայլուն աւարտել՝ ստանալով օպերային երգչի որակաւորում: Նրան, որպէս բացառիկ տնտեսագէտի, վստահուել են Հայաստանի Կենտրոնական Բանկի վարչութեան պետի, Բնակարանային Ընկերային

Բանկի նախագահի, նաեւ՝ Հայաստանի Բանկերի Ընկերակցութեան խորհրդի անդամի պատասխանատու պաշտօնները:

Կենսաբաններ

Պօղոս Սվաճեան - (Կ. Պոլիս, 1900): Նախնական կրթութիւնն ստացել է Կ. Պոլսում. 1930ին աւարտել Պերլինի Բժշկական Համալսարանը: Գահիրէի Ամերիկեան Համալսարանում (AUC) դասաւանդել է կենսաբանութիւն եւ կենդանաբանութիւն: 1948ից ՀԳԱ կենդանաբանութեան ինստիտուտում եղել է աւագ գիտաշխատող: Առաջին հայրենադարձ կենսաբանական գիտութիւնների թեկնածուն է, որն ուսումնասիրել է մանր եղջերաւորների Բիլարջիա հիւանդութեան յարուցիչը եւ պաշտպանել դոկտորական թեզը Մոսկուայում՝ անգլերէնով: Կիրովականի (այժմ Վանաձոր) Մանկավարժական Ինստիտուտում դասաւանդել է կենսաբանութիւն:

Գեղամ Բարսեղեան - (Աղեքսանդրիա, 1926): Երեւանի Բժշկական Ինստիտուտի շրջանաւարտ, դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի Անասնաբուժական-Անասնաբուծական Ինստիտուտում դասախօս եւ բնագիտութեան ամբիոնի վարիչ: Հայաստանում առաջինն է, որ կենսաքիմիայի գծով անդրադարձել է կոլամինի կենսաքիմիական դերին: Եղել է ԵՄՀում ամբիոնի վարիչ:

Քիմիագէտներ

Նորայր Պէյլէրեան - (Գահիրէ, 1929): ԵՊՀի շրջանաւարտ (1953), ԵՊՀ քիմիայի ֆակուլտէտի բազմամեայ դոկտոր-պրոֆեսոր, ֆիզիկական եւ կենսոլորտային քիմիայի ամբիոնի վարիչ (1976-2000), միաժամանակ՝ պոլիմերացման շարժընթացների կինետիկայի հիմնախնդրի աշխատանոցի գիտական ղեկավար, ապա՝ ամբիոնի պատուաւոր վարիչ: Ուսումնասիրել է լազերային, գամմա եւ ռենտգէնեան ճառագայթների ազդեցութեամբ անօրգանական օքսիդների մակերեսի ձեւափոխումը: Քիմիական գիտութիւնների դոկտոր (1975), պրոֆեսոր (1977): Ունի աշխարհի տարբեր երկրներում հրատարակուած աւելի քան 700 գիտական յօդուածներ եւ 30 հեղինակային արտօնագիր, հեղինակ է մի շարք բուհական դասագրքերի: Միջազգային Կենսոլորտի Ակադեմիայի (1996), Բնական Գիտութիւնների Ռուսաստանեան Ակադեմիայի Հայաստանի մասնաճիւղի (1998), ՀՀ Ճարտարագիտական Ակադեմիայի (2010) ակադեմիկոս, Եւրոպայի Բնական Գիտութիւնների Ակադեմիայի անդամ (2011), չորս անգամ արժանացել է Ամերիկեան Կենսագրական Ինստիտուտի «Տարուայ մարդ» կոչմանը (1998, 2008, 2010 եւ 2011): Պատրաստել է բազմաթիւ բարձրորակ մասնագէտներ՝ գիտութիւնների 51 թեկնածուներ եւ 7 դոկտոր-պրոֆեսորներ, ընդ որում նրանցից 4ը՝ ամբիոնի վարիչներ: Արժանացել է ՀԽՍՀ բարձրագոյն դպրոցի վաստակաւոր գործչի պատուաւոր

կոչման եւ մի շարք մեդալների: Եղել է Հայաստան-Եգիպտոս մշակութային կապերի ընկերութեան նախագահ:

Տիգրան Ծուլիկեան - (Գահիրէ, 1931): Աղեքսանդրիայում աւարտել է Դեղագործական Ինստիտուտը: Հայրենիք է ներգաղթել 1964ին: Ուսումնասիրել է Հայաստանի տարբեր շրջանների ինքնատիպ դեղաբոյսերը եւ հրատարակել չորս գիտական յօդուած: 1975-92՝ եղել է Երեւանի Ալ. Մնջոյեանի անուան Նուրբ Օրգանական Քիմիայի Ինստիտուտի գիտատեխնիկական տեղեկատուութեան բաժնի վարիչ, կազմել է դեղագործական քիմիայի, դեղաբանութեան, կենսաքիմիայի մասին *Համաշխարհային նորագոյն փուեալների տեղեկատուութեան կատալոգը:* Այդ տարիներին համացանցի բացակայութեան պայմաններում այն սպասարկել է Հայաստանի եւ Խորհրդային Միութեան 46 հիմնարկների գիտական աշխատակիցներին, որի համար Մոսկուայից նրան շնորհուել է Պատուոգիր: 1977ին Մոսկուայում կազմակերպուած «Քիմիա-77» միջազգային ցուցահանդէսում նա օտար լեզուներով ներկայացրել է հայկական դեղամիջոցների նմուշները: 1993-2010 նրան վստահուել է արարատեան հայրապետական թեմի ծնողազուրկ (երկրաշարժից եւ արցախեան ազատամարտից) երեխաների հովանաւորման բարեգործական գրասենեակի տնօրէնի պաշտօնը: 18 տարիների ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու արտասահմանեան թեմերի հաւատացեալների, նաեւ ազգութեամբ գերմանացի, բելգիացի, անգլիացի եւ այլ բարերար կազմակերպութիւնների ու անհատ բարերարների հետ օտար լեզուներով նամակագրական կապ պահպանելով՝ շուրջ 6 մլն. ԱՄՆ դոլարի օգնութիւն է բաշխել 10 հազար հայ որբերի: Բարձր գնահատելով նրա բազմամեայ գործունէութիւնը՝ Գարեգին Բ. ամէնայն հայոց կաթողիկոսը նրան շնորհել է «Օրհնութեան գիր» կոնդակ: Առաջնորդարանում աշխատելու ընթացքում անգլերէն է թարգմանել տողերիս հեղինակի ցեղասպանագիտական եւ այլ բնոյթի ծաւալուն գրքերը: Հայաստան-Եգիպտոս մշակութային կապերի ընկերութեան նախագահն է:

Բնագէտներ, Ուսողագէտներ

Վանիկ Աճէմեան - (Գահիրէ, 1927): Երեւանի Կ. Մարքսի անուան Պոլիտեխնիկական Ինստիտուտի (ԵՊԻ) շրջանաւարտ, աշխատել է Երեւանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազօտական Ինստիտուտում որպէս բաժնի վարիչ: ԽՍՀՄ առաջին բարձր մակարդակի լեզուով եւ մանրածրագրաւորումով աշխատող «ՆԱԻՐԻ» համակարգչի հեղինակներից է: «ԵԷս» տեսակի հզօր համակարգիչների գլխաւոր նախագծողներից, 1977ին Մոսկուայում հրատարակուած «Էլեկտրոնային հաշուիչ մեքենայ ԵԷս-1030» գրքի համահեղինակներից է: Պարգեւատրուել է բրոնզէ եւ արծաթէ մեդալներով: Եղել է Հայաստան-Եգիպտոս մշակութային կապերի ընկերութեան նախագահ:

Օնիկ Փիրումեան - (Գահիրէ, 1931): ԵՊՀի շրջանաւարտ, թեկնածուական պաշտպանել է Լենինկրատում: Հայաստանում առաջիններից է, որ մասնագիտացել է ուսողագիտական ծրագրաւորման ասպարէզում:

Յովսէփ Ասմարեան - (Գահիրէ, 1934): ԵՊԻ Լենինականի մասնաճիւղի շրջանաւարտ: 1967-93՝ եղել է ամբողջ ԽՍՀՄում մեծ հեղինակութիւն վայելող Երեւանի «Էլեկտրոն» գործարանի ճարտարագէտ, ապա՝ գլխաւոր շինարարի տեղակալ:

Կարօ Իսպիրեան - (Աղեքսանդրիա, 1935): ԵՊՀ շրջանաւարտ, ֆիզմաթ գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր: Աշխատել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտում՝ Ա. Ալիխանեանի գիտական ղեկավարութեամբ: Աշխատանքները վերաբերում են անցումային ճառագայթման ընթացքում ֆոտոնների առաջացման քուանտային էլեկտրադինամիկայի տեսական եւ փորձարարական հարցերին: Ճանաչուած եւ գնահատուած մասնագէտ է: Մասնակցել է տարբեր երկրներում միջազգային գիտաժողովների:

Վարդգէս Գաբուճեան - (Գահիրէ, 1936): Աւարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտէտը, ուսումը շարունակել է Մոսկուայի Լոմոնոսովի անուան ՊՀում, արժանացել է դոկտոր-պրոֆեսորի կոչման: Աշխատանքներ է տպագրել կիսահաղորդիչների ֆիզիկայի եւ մանրաէլեկտրոնիկայի ասպարէզում: Ունի 4 արտօնագիր: Պարգեւատրուել է «ՍՍՀՄ գիւտարար» կրծքանշանով, «Աշխատանքի վետերան» եւ «Մոսկուայի 850ամեակի յիշատակին նուիրուած» մեդալներով:

Պերճ Թոքաթլեան - (Գահիրէ, 1938): Աւարտել է Գահիրէի Զուիցերիական Տեխնոլոգիական Ինստիտուտը՝ ստանալով էլեկտրագէտ, ճարտարագէտի եւ ռադիօ-էլեկտրոնիկայի մասնագէտի որակաւորում: 1963ին ծնողների հետ ներգաղթել է, աշխատել Լենինականի (Գիւմրի) «Ստրոյմաշինա», յետագայում՝ Երեւանի «Հայհաստոց» գործարանում որպէս գլխաւոր մասնագէտ: Ստեղծել է մի շարք «էլեկտրոնային ուղեղով» օժտուած գերճշգրիտ մետաղահատ հաստոցներ, որոնք Խորհրդային Միութեան տարբեր քաղաքներում, ապա նաեւ Ռուսաստանի Դաշնութիւնում եւ արտասահմանում մեծ պահանջարկ են ունեցել:

Ճարտարագէտներ

Աւելի քան 30 եգիպտահայ հայրենադարձներ փայլուն աւարտել են ԵՊԻՆ եւ աշխատել Երեւանի տարբեր գործարաններում՝ որպէս բանիմաց եւ նուիրեալ ճարտարագէտեր, որոնցից շատերը զբաղեցրել են պատասխանատու բարձր պաշտօններ:

Նուպար Ճռնազեան - (Գահիրէ, 1931): Ներգաղթել է 1948ին: Աւարտել է ԵՊԻՆ: Որպէս ճարտարագէտ վարել է պատասխանատու պաշտօններ, ի թիւս որոնց՝ Երեւանի էլեկտրամեքենաշինական գործարանի գլխաւոր տեխնոլոգ:

Նուպար Պայրամեան - (Գահիրէ, 1945): Աւարտել է ԵՊԻ Լենինականի մասնաճիւղի մեխանիկայի ֆակուլտէտը: Աշխատել է Երեւանի ժամացոյցի գործարանում՝ որպէս աւտոմատացման եւ մեքենայացման բաժնի պետի տեղակալ, ապա՝ «Ալմաստ» գործարանում արտադրամասի պետի տեղակալ:

Գրիգոր Չաքմաքճեան - (Գահիրէ, 1935): Աւարտել է ԵՊԻ ճարտարապետութեան ֆակուլտէտը, նաեւ ԵՊԿի խմբավարութեան բաժինը: Աշխատել է որպէս ճարտարապետ:

Երկրաբաններ

Երուանդ Չերքէզեան - (Ատանա, 1919): Սովորել է Աղեքսանդրիայի Ազգային Պօղոսեան Վարժարանում, Գահիրէի Ազգային Գալուստեան վարժարանում եւ Կիպրոսի Մելգոնեան Կրթարական Հաստատութիւնում: 1948ին ներգաղթել է: 50 տարի աշխարհագրութիւն է դասաւանդել Երեւանի դպրոցներում, հրատարակել է *Աշխարհագրութեան դասագիրք*, արժանացել Վաստակաւոր Ուսուցչի կոչման:

Յակոբ Քրքէեան - (Զակազիկ, 1927): ԵՊՄԻ շրջանաւարտ, աշխատել է *Հայկական Սովետական Հանրագիտարանի* խմբագրութիւնում, ԵՊՀում՝ աշխարհագրութեան դասախօս, դոկտոր-պրոֆեսոր: Հեղինակ է աշխարհագրական մի շարք բառարանների, տեղեկատուների եւ դասագրքերի:

Աբրահամ Կոնճեան - (Աղեքսանդրիա, 1931): Սովորել է տեղի Լիսէ Ֆրանսէ քոլէջում, ապա աւարտել Եգիպտական Բարձրագոյն Գիւղատնտեսական Ինստիտուտը: Ներգաղթել է 1962ին: Աշխատել է Լենինականի քաղաքային շինարարական վարչութիւնում՝ որպէս պետի տեղակալ եւ դասախօսել Լենինականի դաշտավարական տեխնիկումում: 1969-72՝ աշխատել է ՀՀ ԳԱԱ գէոֆիզիկայի եւ ինժենէրային սէյսմոլոգիայի ինստիտուտում, եղել է ամբիոնի վարիչ, Լենինականի Պոլիտեխնիկական Ինստիտուտի շինարարութեան ֆակուլտէտի դեկան (1976-82), ջերմատեխնիկայի եւ հիդրալիկայի ամբիոնի վարիչ: Եղել է անգլերէնի թարգմանիչ ՀՀ գիւղատնտեսութեան նախարարութիւնում: Գիտական մի շարք յօդուածների հեղինակ է:

Սարգիս Սարգիսեան - (Գահիրէ, 1934): ԵՊՀի շրջանաւարտ, աշխատել է ՀՀ ԳԱԱ երկրաբանութեան ինստիտուտում, զգալի աւանդ ունի Հայաստանի հարաւային մարզերում տարածուած պղնձի եւ մոլիբդէնի հանքավայրերի ուսումնասիրման եւ մշակման ոլորտում: Ունի գիտական աշխատանքներ, անկախ իր մասնագիտութիւնից հրատարակել է 6000 բառ ընդգրկող *Բառարան ռուսերէնում ֆրանսերէնից փոխառեալ բառերի՝ իրենց հայերէն համարժէքներով* (1997):

Արամ Օհանեան - (Գահիրէ, 1945): ԵՊՀ շրջանաւարտ, երկրաբան: Հրապուրուած է եղել լեռնագնացութեամբ: Փամիրի լեռներում յայտնաբե-

րել է նոր լեռնանցք եւ այն կոչել Սասուն: Ձնամրրիկի ժամանակ իր հինգ ընկերների կեանքը փրկելիս, գլխից վիրաւորուելով, մահացել է:

Խմբավարներ

Հայկ Ֆրունճեան - (Աղեքսանդրիա, 1924): Ուսումը շարունակել է Երուսաղէմի Ժառանգաւորաց Ճեմարանում: Ներգաղթել է 1947ին, աւարտել է ԿԵՊԿի խմբավարական բաժինը: Աշխատել է Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում, դասաւանդել երաժշտութիւն եւ ղեկավարել երգչախումբը: Յետագայում աշխատել է Հայաստանի ռադիոկոմիտէում:

Գրիգոր Սանտալճեան - (Աղեքսանդրիա, 1933): ԿԵՊԿի շրջանաւարտ է: Մինչեւ ծանր հիւանդանալը միքանի տարի եղել է պետական օպերայի երգչախմբի ղեկավար:

Կարօ Չալիկեան - (Գահիրէ, 1946): Յաջողութեամբ աւարտել է ԵՊԻՆ, սակայն մեծ սէրը դէպի հայ երաժշտութիւնը նրան մղել է ուսումը շարունակելու նաեւ ԿԵՊԿում: Եղել է ՀԳՄ երգչախմբի հմուտ ղեկավարը: Իր խմբով հանդէս է եկել հայաշունչ համերգերով: Առաւել ճանաչուած է որպէս հայկական խազերն ուսումնասիրող մասնագէտ: Այդ ուղղութեամբ ունի հրատարակուած արժէքաւոր աշխատութիւն:

Երաժիշտներ

Թագուհի Արամեան - (Գահիրէ, 1912): Աւարտել է Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանը, ապա՝ Բոլոնիայի երաժշտանոցը: 1947-83՝ աշխատել է Երեւանի Չայքովսքու անուան Երաժշտական Դպրոցում, եղել է դաշնամուրի բազմամեայ յարգուած ուսուցչուհի: Արժանացել է ՀԽՍՀ վաստակաւոր ուսուցչուհի կոչման: Գահիրէի *Արեւ* թերթի խմբագիր Յակոբ Արամեանի տիկինն է:

Յակոբ Սանտալճեան - (Աղեքսանդրիա, 1930): Աւարտել է Երեւանի ԿԵՊԿը եւ այնտեղ դասաւանդել ջութակ: Երաժշտագիտութեան թեկնածու, դոցենտ է: Պատրաստել է մասնագէտներ:

Արմէնուհի Սվազլեան - (Աղեքսանդրիա, 1943): Ընտանիքով ներգաղթել են 1947ին: Աւարտել է ԿԵՊԿի դաշնամուրի եւ երաժշտութեան տեսութեան բաժինները, դասախօսութիւններով հանդէս է եկել ԿԵՊԿում եւ ԵՊՀում, նաեւ ռադիոյով եւ առանձին յօդուածներով՝ նիւթ ունենալով Կոմիտասի, Գրիգոր Նարեկացու եւ Սայեաթ Նովայի արուեստը: Աշխատել է Երեւանի Ա. Տիգրանեանի անուան երաժշտական դպրոցում որպէս դաշնամուրի ուսուցիչ, նուագակցել է իր եղբայրներին, եռեակով կատարել են հայաշունչ երգեր:

Ժիրայր Սվազլեան - (Աղեքսանդրիա, 1945): Ընտանիքով ներգաղթել են 1947ին: Աւարտել է ԿԵՊԿի ջութակի բաժինը: Աշխատել է ՍՕԲԱԱԹի, իսկ յետոյ՝ Սան Ֆրանսիսքոյի օպերայի եւ բալէտի թատրոնի նուագախմբերում՝ ջութակահար:

Զօհրապ Սվազլեան - (Աղեքսանդրիա, 1945): Ընտանիքով ներգաղթել են 1947ին: Աւարտել է Չայքովսքու անուան երաժշտական դպրոցը, ապա՝ ԿԵՊԿի թաւջութակի բաժինը: Աշխատել է Հայաստանի ռադիօկոմիտէի նուագախմբում՝ որպէս թաւջութակահար, իր քրոջ՝ Արմէնուհու հետ մասնակցել է Թբիլիսիի անդրկովկասեան երաժիշտների մրցոյթին (1965), ինչպէս նաեւ ուսանողական տարիներին Երեւանում ընտանեկան եռեակով քրոջ՝ Արմէնուհու եւ եղբօր՝ Ժիրայրի հետ նուագել հայաշունչ մեղեդիներ:

Հրաչ Սվաճեան - (Գահիրէ, 1943): Ներգաղթել է 1947ին: Աւարտել է ԿԵՊԿի ջութակի բաժինը: 1956ին Գ. Գասպարեանի, Մ. Երկաթի եւ Ա. Թութունջեանի հետ մասնակցել է Մոսկուայում Հայաստանի գրականութեան եւ արուեստի տասնօրեակի հանդիսութեանը: 1965ին Լենինկրատում Բ. Գուդնիկովի ղեկավարութեամբ շարունակել է ուսումնառութիւնը, ապա՝ Մոսկուայում Դաւիթ Օյստրախի ղեկավարութեամբ կատարելագործել է իր արուեստը: Քանատայում հիմնել է ջութակի իր դպրոցը:

Սիրվարդ Սվաճեան - (Գահիրէ, 1945): Աւարտել է ԿԵՊԿի դաշնամուրի բաժինը: Իր եղբօր՝ Հրաչի հետ հանդէս է եկել Երեւանում համերգերով:

Ջազային Նուագողներ

Ջազային նուագողներ՝ սաքսոֆոնահարներ **Սարգիս Յովակիմեանը**, **Հայկ Նալպանտեանը**, փողահար **Գէորգ Օթաճեանը**, թաւջութակահար **Ներսէս Աբրահամեանը** աւարտել են ԿԵՊԿը եւ ելոյթներ ունեցել տարբեր դահլիճներում:

Քանդակագործ

Արտօ Չաքմաքճեան - (Գահիրէ, 1933-Քանատա, 2019): Ներգաղթել է 1948ին: Աւարտել է ԵԳԹԻի քանդակագործութեան բաժինը, աշխատել ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտում որպէս գիտաշխատող, նաեւ՝ դասախօսել ԵԳԹԻում: Յայտնի է նրա *Հերոշիմա* քանդակը, որն արժանացել է միջազգային մրցանակի: Արուեստագէտի *Կոմիտաս* քանդակը տեղադրուած է Տիթրոյթ քաղաքում, իսկ *Վերածնունդ* խորհրդանշական քանդակը՝ Մոնրէալում: 2003ին հրատարակուել է նրա աշխատանքների ալբոմը:

Գեղանկարիչներ

Յակոբ Յակոբեան - (Աղեքսանդրիա, 1923-Երեւան, 2013): Սովորել է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում, Գահիրէի Գեղարուեստի Բարձրագոյն եւ Փարիզի Կրան Շոմիէ ակադեմիաներում: Մասնակցել է երիտասարդական եւ ուսանողական համաշխարհային Դ. փառատօնին (Պուխարեսթ, 1953, 2րդ մրցանակ), արդի եգիպտական արուեստի (1958, Մոսկուա, Սանկտ Պետերբուրգ) ցուցահանդէսներին, Ա-

ղեքսանդրիայի Բիէնալէներին (1959, 1961): Հայրենիք է ներգաղթել 1962ին: Ստեղծագործութեան առաջին շրջանում պատկերել է թշուառ մարդկանց իրենց տխուր կեանքով, օտար ափերում գոյատեւող Մեծ Եղեռնից մնացորդացի հոգեկան ընկճուած վիճակը: Իսկ հայրենիքում պատկերած նրա ստեղծագործութիւններն աւելի արեւային են ու լուսաւոր: Վարպետի աշխատանքներն առաւել ինչեղութիւն են ստացել *Նէյտրոնային ռումբին՝ ոչ* (1977), *Սումգայիթ* (1988) կտաւներում եւ *Ընտանիք* (1989) քանդակում, որը տեղադրուել է Արագածի բարձունքին: Անհատական ցուցահանդէսներ է ունեցել Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆում եւ բազմաթիւ այլ երկրներում: Արժանացել է ՀԽՍՀ (1977) եւ ԽՍՀՄ (1985) պետական, իսկ յետագայում՝ Հայաստան Համահայկական Հիմնադրամի մրցանակների (1994) եւ Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանի (1996): ՌԴ Գեղարուեստի Ակադեմիայի թղթակից անդամ է: Նրա տիկինը՝ **Մարի Յակոբեանը** (Գահիրէ, 1929) եւս գեղանկարիչ է: Մասնակցել է մի շարք ցուցահանդէսների Երեւանում եւ Ս. Էջմիածնում: Նրանց դուստրը՝ **Նորան** (Գահիրէ, 1951) աւարտել է ԵՊԻ ճարտարապետութեան բաժինը եւ աշխատել այդ գծով:

Այտա Պոյաճեան - (Գահիրէ, 1932): Ներգաղթել է 1948ին: ԵԳԹԻի շրջանաւարտ տաղանդաւոր նկարչուհին հեղինակ է բազմաթիւ գեղանկարչական ստեղծագործութիւնների: Ունեցել է անհատական ցուցահանդէսներ ոչ միայն Հայաստանում, այլեւ ԽՍՀՄ տարբեր քաղաքներում եւ արտասահմանում: Նրա աւանդը մեծ է յատկապէս գրքերի նկարազարդման ասպարէզում (շուրջ 30 հայ եւ օտար հեղինակների ստեղծագործութիւններ): Ուշագրաւ են յատկապէս Թումանեանի հեքիաթների կերպարային նկարազարդումները:

Ներսէս Պիծակեան - (Գահիրէ, 1947): Աւարտել է ԵՊՄՀՒՆ, կենսաբանական գիտութիւնների թեկնածու է, Հայաստանի Նկարիչների Միութեան անդամ: Մասնակցել է բազմաթիւ ցուցահանդէսների, որոնք նուիրուած են կիրառական արուեստին (յարդարանքային նկարներ եւ հարթաքանդակներ): Արժանացել է Թարթուի (Էսթոնիա) միջազգային ծաղկայարդարման մրցոյթի վկայականի: 2018ին Երեւանի Թէքէեան Կեդրոնում բացուել է նրա քանդակի, գծանկարի, կիրառական արուեստի 120 ինքնատիպ ստեղծագործութիւնների ցուցահանդէսը:

Ձեռարուեստ

Մարի Երկաթ - (Ատափազար, 1910): Բազմաշնորհ Պայծառ Երկաթի արժանաւոր դուստրն է: 1947ին ներգաղթելուց յետոյ երկար տարիներ աշխատել է Երեւանի պիոնէր պալատում, Երեւանի Հայկական Մանկավարժական Ուսումնարանում եւ այլ ուսումնական հաստատութիւններում՝ ճաշակ ու շնորհք ուսուցանելով բազմաթիւ սերունդների: Դասաւանդել է հայկական աւանդական ասեղնագործութեան տարբեր տեղավայրերի

տարատեսակները եւ կարուձեւի ֆրանսիական մեթոդի գաղտնիքները: Երեւանի Ժողովրդական Ստեղծագործութեան Տանը մշտապէս կազմակերպել է բացառիկ ցուցահանդէսներ՝ ինչպէս իր սաների, նոյնպէս եւ իր հայկական տարազներով տեղավայրային տիկնիկների, արհեստական ծաղիկների եւ այլ ինքնատիպ ստեղծագործութիւնների:

Շաքէ Զուլալեան - (Կ. Պոլիս, 1914): Ներգաղթել է 1948ին, Աղեքսանդրիայից: Ասեղնագործութեան, հելունագործութեան իր վարպետութեամբ ստեղծագործել է՝ շարունակելով արեւմտահայոց երբեմնի աւանդները: Մեծ արուեստագէտ Սերգէյ Փարաջանովը տեսնելով նրա գործերը, հիացել եւ որոշել է անձամբ ձեւաւորել այդ իւրօրինակ աշխատանքների ցուցահանդէսը Երեւանի Ժողովրդական Ստեղծագործութեան Թանգարանում (1987): Յիշարժան էր հսկայ հնաոճ մահճակալի վրայի ձեռագործուած հոյակապ ծածկոցը, ինքնատիպ նախշերով հելունագործուած վարագոյրներն ու այլ նրբահիւս ձեռագործները: Տիկին Շաքէն նաեւ սերունդների համար աւանդ է թողել «Պոլսահայոց ճաշատեսակներն ու քաղցրաւենիքները», ինչպէս նաեւ ժողովրդական բժշկութեան «Դեղ ու ճար» ձեռագիր անտիպ տետրերը, որոնք պահւում են ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արխիւում:

Աղաւնի (Զուլալեան) Սարգսեան - (Աղեքսանդրիա, 1934): 1948ին ընտանիքով ներգաղթել է Երեւան: Մօրից ժառանգել է ասեղնագործելու շնորհքը: Սովորել է Գեղարուեստի Ուսումնարանում: Ասեղնագործել է բնանկարներ եւ ստեղծել Արեւմտեան Հայաստանի տարբեր գաւառներին բնորոշ ինքնատիպ տարազներով տիկնիկներ, որոնք տեղադրուել են ֆիզիկական մեծ քարտէզի վրայ եւ մնայուն ցուցադրուել Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Սարդարապատի Ազգային Թանգարանում:

Գրադարանավարներ

Լեւոն Աճէմեան - (Վան, 1888): Նախնական կրթութիւնն ստացել է Կ. Պոլսոյ Կեդրոնական Վարժարանում: Աշխատել է Տէօրթ Եոլի ՀԲԸՄ Քելէկեան որբանոցում որպէս աւագ ուսուցիչ: 1935-40՝ հրատարակել է հայոց պատմութեան վեց դասագիրք՝ երկու շարքով (համառօտ եւ ընդարձակ), նաեւ իր տիկնոջ՝ **Ռ. Աճէմեանի** հետ *Հայոց լեզու* ընթերցանութեան երկու դասագիրք՝ Եգիպտոսի եւ Միջին Արեւելքի հայկական դպրոցների համար: Հրատարակել է *Փունջ* մանկապատանեկան հանդէսը, Աղեքսանդրիայում վերակազմել է Հայ Ուսանողական Միութիւնը եւ ղեկավարել այն: Նրա միջնորդութեամբ գրի են առնուել եւ տպագրուել հերոսամարտը իր յաղթական աւարտին հասցրած, Վանի հերոսամարտի ղեկավարներից վանեցի *Արմենակ Եկարեանի յուշերը* (1947): Աշխատակցել է *Արեւ* օրաթերթին եւ որոշ ժամանակ եղել է նրա խմբագիրը: 1947ին ներգաղթել է,

ապա՝ աշխատել Երեւանի հանրային գրադարանում որպէս աւագ մասնագէտ:

Յարութիւն Մեքերեան - (Գահիրէ, 1924): Ներգաղթել է 1948ին: Աւարտել ԵՊՀ բանասիրութեան բաժինը: Աշխատել է Հայաստանի ԳԱի գրադարանի վարիչ: Գրել է «Միքայել Կիւրճեանի կեանքը եւ գործը» (անտիպ):

Ալիս Թաթուլեան - (Գահիր, 1926): Ներգաղթել է 1948ին, աւարտել է ԵՊՀ գրադարանագիտութեան բաժինը, երկար տարիներ աշխատել է ՀՀ ԳԱԱ կենտրոնական գրադարանում որպէս օտար լեզուների բաժնի վարիչ:

Արտեմիս Նալպանտեան - (Աղեքսանդրիա, 1927): Արաբագէտ Յակոբ Նալպանտեանի դուստրն է: Կրթութիւնն ստացել է Գահիրէի հայկական վարժարանում, ապա՝ Աղեքսանդրիայի գերմանական դպրոցում: Դասաւանդել է Ազգային Պօղոսեան Վարժարանում: 1947ին ներգաղթել է եւ օտար լեզուների իր իմացութեամբ 1947–2002՝ աշխատել է Երեւանի Աւետիք Իսահակեանի անուան քաղաքային կենտրոնական գրադարանում, վերջին տարիներին՝ որպէս բաժնի վարիչ:

Պատմաբաններ

Առաքել Պատրիկ (Պատրիարքեան) - (Սեբաստիա, 1894-Երեւան, 1984): Սեբաստիայի դպրոցում աշակերտել է Դանիէլ Վարուժանին: Եւդոկիայում հիմնադրել է դպրոց: Հայոց Ցեղասպանութիւնից հրաշքով փրկուել է: 1920ին Միլանում ունկնդրել է Լէոնարտօ տա Վինչիի անուան Գեղարուեստի եւ Փարիզի Կրան Շոմիէ ակադեմիաների դասընթացները: 1925ից՝ Գահիրէի ազգային վարժարաններում, իսկ 1932-36՝ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում դասաւանդել է նկարչութիւն: 1937ին Գահիրէում հիմնադրել է «Հայ Մշակոյթի Բարեկամներու Միութիւն»ը: Եգիպտոսից հայրենադարձ առաջին ազգագրագէտն է, որ երկար տարիներ աշխատել է Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանում: Հեղինակն է *XIX-XX դդ. հայկական տարազ* (1967) բացառիկ արժէքաւոր գունաւոր ալբոմի, որի նկարներն ու գիտական տեղեկատուութիւնները պատկանում են հեղինակին, նաեւ հրատարակել է *Պատմագիրք-յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան»* (հտր. 1-2, 1974 եւ 1983) ստուար եւ արժէքաւոր զոյգ հատորները, *Ուռհայի ասեղնագործութիւնը* (1985), *Դանիէլ Վարուժանն իմ յուշերում* (1965), *Սայեաթ Նովա* թատերախաղը (1942), որը Գահիրէում արժանացել է գրական մրցանակի, *Արծուիկը* (1968, Պէյրութում՝ Թէքէեան Մշակութային Միութեան մրցանակին), *Կոմիտասեան դրաման* (1986), «Հայկական խաչքարերի արուեստը» ուսումնասիրութիւնը (անտիպ):

Նուպար Տէրմիքայէլեան - (Գահիրէ, 1917): Աւարտել է Գահիրէի Պէրպէրեան վարժարանը, ապա՝ Գահիրէի Ամերիկեան Համալսարանի անգ-

լիական բաժինը: Ներգաղթել է 1947ին. 1948-67՝ աշխատել է մայր աթոռ Ս. Էջմիածնում՝ որպէս Վազգէն Ա. ամէնայն հայոց կաթողիկոսի քարտուղար, ապա՝ մայր աթոռի դիւանապետի տեղակալ եւ ձեռագրատան վարիչ: Բազմաթիւ մենագրութիւնների հեղինակ է, ինչպէս՝ *Նշանաւոր հայազգի մարդիկ, Եգիպտահայ գաղութը 16-18րդ դարերում* եւն.: Արժանացել է Գարեգին Ա. կաթողիկոսի կոնդակին եւ Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշանին:

Արմինէ Քէօշկերեան - (Աղեքսանդրիա, 1932): Ներգաղթել է 1947ին: Աւարտել է ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրութեան ֆակուլտէտի անգլերէնի բաժինը: Աշխատել է Երեւանի Մաշտոցի անուան Հին Ձեռագրերի Գիտահետազօտական Ինստիտուտ-Մատենադարանում: Պաշտպանել է թեզը «Գանձարան ժողովածուներ» թեմայով: Ունի հրատարակուած յօդուածներ միջնադարեան հայ գրականութեան մասին:

Աղաւնի Ժամկոչեան - (Սիուֆ, Աղեքսանդրիա, 1935): Ներգաղթել է 1948ին եւ աւարտել ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը: Պատմական գիտութիւնների թեկնածու է: Աշխատել է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում: Տարիներ շարունակ զբաղուել է միջնադարեան հնագիտութեամբ՝ յատկապէս Դուինի պեղումներով: Հրատարակել է *Միջնադարեան Հայաստանի յախճապակին IX-XIV դդ.* (1981) եւ առանձին հաշուետուութիւններ Դուինի պեղումների մասին:

Բանագէտ-Ցեղասպանագէտ

Վերժինէ Սվազլեան - (Աղեքսանդրիա, 1934): Գառնիկ Սվազլեանի դուստրն է: Ներգաղթել է 1947ին: Գերազանցութեամբ աւարտել է Երեւանի ՀՊՄԻՆ: Աշխատել է ՀՀ ԳԱԱ ՄԱԳԻում, նաեւ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտում: Մինչեւ օրս աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում: Ուսումնասիրել, ապա եւ Ակադեմիայի հրատարակչութեամբ լոյս է ընծայել բանագէտ-ազգագրագէտ *Սարգիս Հայկունու կեանքն ու գործը* (1973), կազմել «Հայ ժողովրդական հեքիաթներ»ի գիտական հրատարակութեան *Արցախ-Ուտիք* (1973), *Տարօն-Տուրուբերան* (1984), *Վան-Վասպուրական* (1998) հատորները: Գրառել, ձայնագրել, տեսագրել եւ ուսումնասիրել է Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի հայութեան բնօրրանի զանազան բարբառներով ժողովրդական բանահիւսութեան տարաբնոյթ նշխարները՝ *Մուսա Լեռ* (1984), *Կիլիկիա. արեւմտահայոց բանաւոր աւանդութիւնը* (1994), *Պոլսահայոց բանահիւսութիւնը* (2000), *"Armenia"* (The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife. USA, 2006, Vol. 2 ծաւալուն ակնարկը՝ սկսած հնագոյն շրջանից մինչեւ մեր օրերը), *Ռուսաստանի հայերի բանաւոր աւանդոյթի նշխարներ (Տոնի Ռոսթով եւ Փիաթիկորսք)* եւ *Ամերիկահայոց բանաւոր աւանդոյթը ժամանակի հոլովոյթում* (տպագրութեան փուլում), նաեւ կորստից փրկել է Հայոց Ցեղասպանութիւնից վերապրած ա-

կանատես-վկաների յուշերն ու պատմական երգերը, *Մեծ Եղեռն. արեւմտահայոց բանաւոր վկայութիւններ* (1995), *Մեծ Եղեռնը արեւմտահայոց յուշապատումներում եւ թուրքալեզու երգերում* (1997-1999 թթ.), *Հայոց Ցեղասպանութիւնը եւ ժողովրդի պատմական յիշողութիւնը* (2003-2005), *Հայոց Ցեղասպանութիւն. ականատես վերապրողների վկայութիւններ* (2000, 2011, 2013), *Մուսա Լեռան հերոսամարտը. ականատես վերապրողների վկայութիւններ* (2015): Ցեղասպանագիտական հատորները թարգմանուել են ռուսերէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, նաեւ՝ թուրքերէն: Դոկտոր, պրոֆեսոր է եւ ՀՀ Գիտութեան վաստակաւոր գործիչ: Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործում նշանակալից ներդրման համար նա արժանացել է ՀՀ նախագահի ցեղասպանագիտութեան գծով առաջին մրցանակին եւ Ոսկէ Մեդալին:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Այս յետադարձ ակնարկը, որն ընդգրկում է աւելի քան 140 եգիպտահայերի ներդրումը մայր հայրենիքին, թերի կը լինէր, եթէ չյիշէինք եգիպտահայերի մասնակցութիւնը նաեւ յետխորհրդային շրջանի պատմութեան կերտման գործընթացում, որոնք զոհաբերել են իրենց երիտասարդ կեանքը:

Արցախեան ազատամարտում զոհուել են Եգիպտոսից հայրենադարձներ՝ անգլերէնի թարգմանիչ **Վահէ Տիշչեքէնեանի** օդաչու որդին՝ **Արսէնը**, նաեւ **Զարեհ Ժամկոչեանի** որդին:

Չափազանց մեծ է նաեւ Եգիպտոսից 1947ին հայրենադարձ **Գէորգ Գորգիսեանի** արժանաւոր որդու՝ հայ քաղաքական գործիչ, հրապարակախօս, ղարաբաղեան շարժման առաջնորդներից՝ **Մովսէս Գորգիսեանի** (1961-1990) ներդրումը: Նրա նշանաբանն էր. *«Ազգային պատկանելութիւնը միա՛յն ազգին ծառայելով է որոշւում…»* եւ *«Կեցցէ՛, այն Հայաստանը, որը վաղն է գալու»*: Գորգիսեանը զոհուել է արցախեան ազատամարտում: Նա վաշտի հրամանատար էր: Արժանացել է ազգային հերոսի բարձրագոյն կոչման:

Անշուշտ, անհնար է սահմանափակ էջերի մէջ ամփոփել հազարաւոր մեծ ու փոքր եգիպտահայ հայրենադարձների դրսեւորած եռանդն ու ոգեւորութիւնը, նրանց աշխատասիրութիւնն ու նուիրուածութիւնը՝ կամային բարձր յատկանիշեր, որոնք չէին վրիպում նոյնիսկ տեղի բնակչութեան եւ ղեկավարութեան ուշադրութիւնից, արժանանալով խրախուսանքի ու գնահատանքի, քանի որ նորեկները տեղացիների հետ ձեռք-ձեռքի, ուսուսի տուած հանապազօրեայ ճիգ ու ջանքով զբաղուած էին արարելով…

Տակաւին ականջներումս հնչում են մեր քարտաշ վարպետների մուրճերի համահունչ մեղեդին, որից օրըստօրէ յառնում էին մեր սիրելի քաղաքամայր Երեւանի հրապարակի հոյակերտ շէնքերն իրենց քարացած երա-

ժշտութիւն դարձած հայկական զարդանախշերի ինքնատիպ բարձրաքանդակներով...

Անթիւ ու անհամար ճարտարապետերի ու շինարարների միասնական մտքի ու բազկի պրկումներով են կառուցուել մեր այսօրուայ կամուրջներն ու հսկայ էլեկտրակայանները, մեր երբեմնի զաւթուած բնօրրանի անունները խորհրդանշող նորակառոյց քաղաքներն ու գիւղերը, մեր տուֆակերտ-վարդագոյն Հայաստանը, որի մշտապէս կառուցուող պատին քար մը եւս աւելացնելն ամէն մի հայի սրբազան պարտականութիւնն է...

... Մեր ուսումնասիրութեան ընթացքում անհնար էր 4500 եգիպտահայ հայրենադարձներին մէկ առ մէկ անդրադառնալ, քանի որ նրանց մէջ շատ ու շատ են Հայաստանում մասնագիտական ուսում, կրթութիւն ստացած եւ իրենց գիտելիքները հայրենիքի առաջընթացին ծառայեցրածները, ուստի մենք ներկայացրինք միայն այն բացառիկ անհատներին (աւելի քան 140 հոգի, ընդհանուրի ընդամէնը 3%ը), որոնք իրենց անմնացորդ նուիրուածութեամբ հասարակական կեանքի շուրջ 40 տարբեր բնագաւառներում իրենց գիտելիքներն ու կարողութիւնն իսպաս են դրել հայրենիքին եւ արժանացել գիտական եւ այլ բարձր աստիճանների, պետական ու միջազգային մեդալների ու պարգեւների եւ իրենց բացառիկ յաջողութիւններով մեծապէս նպաստել են մայր Հայաստանի բարգաւաճմանը:

THE CONTRIBUTION OF REPATRIATED EGYPTIAN ARMENIANS TO THE FATHERLAND
(Summary)

Verjine Sevazlian
vsvaz333@yahoo.com

In the 1930s and 1940s the community life of the Egyptian Armenian community, some 45,000 strong, revolved around the Armenian Apostolic Church and the Armenian cultural organizations.

A number of Armenian schools, cultural organizations, and athletic associations were all active in the two Armenian populated cities of Egypt, Cairo and Alexandria.

Between 1947 and 1948 some 3698 Egyptian Armenians were repatriated to Soviet Armenia. Most of them were already ideologically prepared and aware of the objective of their repatriation, namely dedicating their lives to the development of the fatherland.

The study highlights the contribution of these repatriated families and individuals to the cultural, industrial, artistic, photographic, and educational development and growth of Soviet Armenia.

Հայերի Արտագաղթը Եգիպտոսից 1950-70ականներին եւ Հետեւանքները Ներսում ու Դրսում

Տիգրան Ղանալանեան
tghanalanyan@ysu.am

Եգիպտոսի հայկական համայնքը հետեղեռնեան Սփիւռքի թէ՛ հասարակական–քաղաքական, թէ՛ մշակութային կեանքի կարեւորագոյն կենտրոններից էր: Դրութիւնը սկսեց արագ փոխուել 1952ի յեղափոխութեանը յաջորդող տարիներին: Այլ ազգային փոքրամասնութիւնների հետ միասին՝ հայերի շրջանում եւս առաջացաւ վախ ու անորոշութիւն՝ ապագայի հանդէպ: Քաղաքական ու տնտեսական փոփոխութիւնների, ընդհանրապէս տարածաշրջանում ծաւալուող պատերազմների ու վայրիվերումների հետեւանքով համայնքի անդամների մեծ մասը որոշեց լքել Նեղոսի ափերն ու գնալ հեռաւոր երկրներ:

Այս յօդուածը փորձ է անդրադառնալու արտագաղթի պատճառներին, տարբեր դերակատարների դիրքորոշումներին, գործընթացներին: Ուշադրութիւն է դարձուում Խորհրդային Հայաստանի կեցուածքին, հայրենադարձութեան այլընտրանքին: Արտագաղթը լրջագոյն ազդեցութիւն ունեցաւ Եգիպտոսի հայ համայնքի կեանքի վրայ:

Սակայն չենք բաւարարուել այդ մասին խօսելով, այլ նաեւ փորձել ենք ցոյց տալ եգիպտահայերի ներդրումը արդէն նոր երկրներում (Քանատա, Աւստրալիա, ԱՄՆ եւն.):

ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

1945ին Եգիպտոսի հայերի թիւը հաշւում էր շուրջ 30 հազար, որից 18 հազարը՝ Գահիրէում, 12 հազարը՝ Աղեքսանդրիայում[1]: Ըստ Յովհաննէս Թոփուզեանի՝ 1947ին եգիպտահայերի թիւը 35 հազար էր[2]:

---

[1] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆ. 326, ց. 1, գ. 53, թ. 5: 1952ի դրութեամբ նոյն թուաքանակն ու տեղաբաշխումը («Եգիպտոսի հայ գաղութը», *Հարթօնք*, 5 Հոկտեմբեր 1952, էջ 3): Ըստ Եգիպտոսում ԽՍՀՄ առաքելութեան 1949ի տեղեկանքի՝ այստեղ կար 25 հազար հայ, որից 15 հազարը՝ Գահիրէում, 10 հազարը՝ Աղեքսանդրիայում (առաքելական էր 21 հազար, կաթողիկէ՝ 3500, աւետարանական՝ 500 հոգի): 1949ին Եգիպտոսի հայերի 20 տոկոսը դերձակներ էին, 15ը՝ ոսկերիչներ, 15ը՝ մեքենագէտներ, 15ը՝ կօշկակարներ, 25ը՝ առեւտրականներ, 5ը՝ ծառայողներ, 5ը՝ սեւագործ աշխատանք կատարողներ: Կային նաեւ 56 բժիշկներ, 40 ատամնաբուժներ, 25 ճարտարագէտներ, 45 արուեստագէտներ եւն.: Հայերի մեծամասնութիւնը չունէր որեւէ երկրի քաղաքացիութիւն, իսկ 2 հազարը՝ Եգիպտոսի, 170ը՝ Իրանի, 120ը՝ Թուրքիայի, 35ը՝ Սուտանի, 15ը՝ Մեծն

1946 Օգոստոսի 15ից մինչեւ Հոկտեմբերի սկիզբը հայրենադարձուելու համար արձանագրուեց 10 հազար հոգի: 1947ին հայրենիք մեկնեց առաջին նաւը, որը իր հետ տարաւ 1669, իսկ երկրորդը՝ 1948ին, 2023 հոգու: Մեծ հայրենադարձութեան շրջանակներում 1947-48ին 3692 եգիպտահայեր ներգաղթեցին ՀԽՍՀ[3]:

Արդէն 1955ին, մօտաւոր տուեալներով Գահիրէի առաքելական հայերի թիւը 18-20 հազար էր, կաթողիկէներինը՝ 5500, աւետարանականներինը՝ 200, իսկ Աղեքսանդրիայում բնակւում էր աւելի քան 10 հազար առաքելական, 2 հազար կաթողիկէ եւ 300 աւետարնական հայ[4]: Ըստ Կարօ Գէորգեանի՝ Եգիպտոսի հայութեան ընդհանուր թիւը հասնում էր 38-39 հազարի, որի 75%ը եգիպտահպատակ էր[5]: Հետաքրքիր է նաեւ 1950ականների կէսերի դրութեամբ վերջինիս կատարած կանխատեսումը. «*Ամէն պարագայի տակ. թէ՛ համրանքով եւ թէ՛ նիւթապէս բարգաւաճելու ամէն կարելիութիւն ունեցող գաղութ մըն է եգիպտահայութիւնը, ամբողջութեան մէջ առած*»[6]: Փաստօրէն տեղի ունեցաւ հակառակը:

1950-60ականներին երկրում տեղի ունեցան քաղաքական կարեւորագոյն փոփոխութիւններ, որոնք էապէս ազդեցին նաեւ հայ համայնքի կենսագործունէութեան վրայ: Չնայած 1952ի յեղափոխութիւնից յետոյ հայերը, համեմատած այլ փոքրամասնութիւնների հետ - որոնք համարւում էին «արեւմտամէտ» - մեծ ճնշումների չենթարկուեցին, եւ նրանց չպարտադրուեց մեկնել երկրից, սակայն իրավիճակը փոխուեց, երբ Սիրիան դուրս եկաւ Արաբական Միացեալ Հանրապետութիւնից (ԱՄՀ): Կամալ Ապտէլ Նասէրը տնտեսական մեծ փոփոխութիւններ մտցրեց, որոնք մեծապէս խոչընդոտեցին հայերի գործունէութեանը՝ թէ՛ խոշոր տնտեսութիւնների ազգայնացման, թէ՛ արտահանման եւ ներմուծման դժուարութիւնների յա-

---

Բրիտանիայի, 10ը՝ Ֆրանսայի, 5ը՝ Եթովպիայի քաղաքացիներ էին (ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 219, թ. 6-8):

[2] Յովհաննէս Թոփուզեան, *Եգիպտոսի հայկական գաղութի պատմութիւն (1805-1952)*, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երեւան, 1978, էջ 238:

[3] Յովիկ Մելիքսէթեան, *Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1985, էջ 198, 241:

[4] Ըստ Արտաշէս Գարտաշեանի՝ 1943ի դրութեամբ Աղեքսանդրիայի հայ աւետարանականների թիւը մօտ 400 (98 ընտանիք) էր, իսկ արդէն 1948ին ըստ վեր. Տիգրան Խրլոբեանի՝ այդ թիւը նուազել էր, հասնելով 360ի (Արտաշէս Գարտաշեան, *Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, հտր. Ա.*, տպ. Նուպար, Գահիրէ, 1943, էջ 301. նաեւ՝ Տիգրան Խրլոբեան, *Ոսկեմատեան հայ աւետարանականութեան, հտր. Բ.*, ՄԱՀԱԵՄ, Պէյրութ, 1951, էջ 241):

[5] Կարօ Գէորգեան, *Ամէնուն տարեգիրքը 1956*, Գ. տարի, Պէյրութ, 1955, էջ 389-90: Ըստ Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան 1961ի տեղեկանքի՝ այստեղ կար 40 հազար հայ, որից միայն 8 հազարը ունէր Եգիպտոսի քաղաքացիութիւն (ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 1):

[6] Գէորգեան, էջ 390:

ռաջացման պատճառներով: Սկսուեցին նաեւ ճնշումներ ընդհանրապէս Եգիպտոսի քրիստոնեաների նկատմամբ: Հայերը ենթարկւում էին խտրականութեան, հեռացւում էին աշխատանքից՝ փոխարինուելով արաբներով[7]:

Սրա հետեւանքով գերիշխող դարձան արտագաղթի տրամադրութիւնները: Այս տեսանկիւնից հետաքրքրական է 1957 Փետրուարի 11ին Եգիպտոսի թեմի առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանի նամակը Վազգէն Ա. կաթողիկոսին՝ գրուած Ատիս Ապեպա այցի ժամանակ (դրա պատճառը գրաքննութիւնն էր, ուստի նա խնդրում էր պատասխանն ուղարկել ԽՍՀՄ դեսպանութեան միջոցով): Հարկ է շեշտել, որ այն գրւում էր այն պահին, երբ արտագաղթը նոր-նոր էր ծաւալւում եւ հնարաւոր էր այն ուղղել Հայաստան: Մէջբերենք նամակի հիմնական մասը.

> ...1956 Հոկտեմբեր 30ին անգլիական, ֆրանսական եւ իսրայէլեան ուժերու կողմէ Եգիպտոսի վրայ եղած յարձակումը, որ վերջ գտաւ միայն Նոյեմբեր 7ին կերպարանափոխ ըրաւ կեանքը Եգիպտոսի:
>
> Պետական որոշումով Եգիպտոսէն հեռացուեցան բոլոր Անգլիայի, Ֆրանսայի եւ այլ կառավարութեանց հպատակները, Եգիպտոսէն վտարուեցան նաեւ հրեաները եւ գրաւուեցաւ անոնց ինչքերն ու հարստութիւնները: Մեծ է թիւն հեռացողներուն: Ոչ միայն հեռացան Եգիպտոսից անգլիացիներ, ֆրանսացիներ եւ հրեաներ այլ տակաւին մինչ այսօր կը հեռանան իտալացիներ, յոյներ եւ այլ ազգութեանց պատկանող անհատներ մեծ թուով:
>
> Պետականացուեցան պանքաները եւ բոլոր առեւտրական հաստատութիւնները, ընկերութիւնները, ֆապրիքաները, դուրս հանուեցան այս հաստատութիւններէն քրիստոնեայ պաշտօնատարները, պաշտօնեաները եւ աշխատաւորները: Առեւտրական ասպարէզը կորսնցուց իր առաջուայ կենսունակ ու աշխուժ վիճակը, անգործութիւնը օրէօր կը տարածուի եւ հետեւաբար աղքատութիւնը եւ թշուառութիւնը ծաւալ կը գտնէ երկրին մէջ:
>
> Տասնեակ հազարներով խոհարար, սպասաւոր եւ սպասուհի, պարտիզպան եւ դռնապան, որոնք կը ծառայէին մեկնող անգլիացի, ֆրանսացի ու հրեաներու մօտ՝ այժմ թափուած են փողոց անգործ ու անօթի:
>
> Այս կացութենէն զերծ չի կրնար մնալ անշուշտ մեր գաղութը: Թշնամի ուժերու կողմէ Եգիպտոսի վրայ կատարուած յարձակումը եւ անոր հետեւանքը եղող ներկայ ոչ բաղձալի կացութիւնը ցնցած է նաեւ մեր ժողովուրդը: Ամէն ընտանեկան յարկէ ներս Եգիպտոսէն մեկնելու պատմութիւն է որ կը կրկնուի: Հոսանքը սկսած է եւ շատ շատեր կը պատրաստուին հեռանալ Եգիպտոսէն դէպի Հարաւային Ամերիկա, Պրազիլ, Քանատա, Ուրուկուայ, Վենեզուելա եւ այլ վայրեր:
>
> Վկայականներ ստանալու համար Առաջնորդարան դիմողները ընդհանրապէս մեր ժողովրդի երիտասարդութիւնն է, որոնք ոտքի ելած վճռապէս որոշում են

[7] James Ray Kirkland, "Armenian Migration, Settlement and Adjustment in Australia, with Special Reference to the Armenians in Sydney," Ph.D. thesis, Australian National University, 1980, էջ 90, 94:

ձգել Եգիպտոսը եւ երթալ ու հաստատուիլ երկիր մը որուն կրօնքը քրիստոնէութիւնն է եւ ուր կեանքի բացարձակ ապահովութիւն կայ:
Առաջնորդարան դիմողներուն երբ կը յորդորենք, կը խրատենք հրաժարիլ օտար հեռաւոր երկիրներ գաղթելու՝ ամէնուն պատասխանն է.
- Սրբազան հայր, ինչու չէք գրեր մեր Վեհափառին, մեր կառավարութեան որ մտածէ մեր մասին, դիւրութիւններ ընծայեն գէթ եգիպտահայերուս մեկնիլ դէպի հայրենիք եւ ապրիլ խաղաղ եւ հանգիստ մեր հայրենի հողի ու մեր հարազատ կառավարութեան եւ մեր Ս. Էջմիածնի եւ Սրբազնագոյն Հայրապետի բաղձալի հովանիին տակ: Փակ պիտի ըլլան մեզի համար օտար երկիրներու դռները, երբ Հայրենիքի դռները բացուէին մեր առաջ:
Մենք վճռապէս որոշած ենք հեռանալ Եգիպտոսէն եւ հետեւաբար մեր Սրբազան Հովուապետն ու հայրապետը, ինչպէս նաեւ մեր հարազատ կառավարութիւնը պէտք է մտածեն մեր մասին եւ իրենց փրկարար ձեռքը երկարեն մեզի[8]:

Թեմի առաջնորդը կանխատեսում էր սպասուելիք արտագաղթի հետեւանքները եւ խնդրում օգնութիւն, որն ինչպէս ցոյց տուեցին յետագայ իրադարձութիւններն, ըստ էութեան, ՀԽՍՀ կառավարութիւնը չտրամադրեց: Դրա փոխարէն խորհրդահայ շրջանակներն ու նրանց տեսակէտերը Սփիւռքում բազմացնողները բաւարարւում էին ԱՆՉԱի (ANCHA, American National Committee to Aid Homeless Armenians)[9] քննադատութեամբ:

Ուշագրաւ է նաեւ 1958ին Գահիրէում գտնուելիս *Յուսաբեր* թերթին ԱՆՉԱի նախագահ Ճորճ Մարտիկեանի տուած հարցազրոյցը, որտեղ նա արտայայտւում է Մերձաւոր Արեւելքից հայերի արտագաղթի դէմ. «*Իբրեւ ԱՆՉԱյի նախագահ ըսեմ որ բացարձակապէս հակառակ եմ մանաւա՛նդ Մերձաւոր Արեւելքէն հայութեան դէպի Ամերիկա գաղթին:*

Ո՛չ մէկ տարակոյս, որ նման շարժում մը պիտի կազմալուծէ եւ քայքայէ մեր գաղութները, որոնք պէտք է մնան եւ յարատեւեն, իսկ եթէ օր մը պիտի գաղթեն, ապրիկա պիտի ըլլայ միմիայն դէպի Ազատ եւ Անկախ Մայր

---

[8] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 14, թ. 2-3: Նոյն 1957ի Մերձաւոր Արեւելքի երկրներից Քանատա գաղթի դէմ յօդուած ենք կարդում նաեւ *Յուսաբեր* թերթում. «Մերձաւոր Արեւելքի հայե՛ր, մի գաղթէք: Քանատան ձեր երեւակայած դրախտը չէ:
Հայրենիքէն ետք՝ հայութիւնը, ազգապահպանումի տեսակէտէն, միմիայն Մերձաւոր Արեւելքի, մասնաւորաբար արաբական երկիրներու մէջ ապահով է:
Քանատա կամ այլուր ձեր ապագան լուսաւոր չէ, ազգային տեսակէտով:
Գիտակցօրէն մի՛ երթաք եւ մի տանիք ձերինները դէպի ազգային մահ» («Տպաւորութիւններ Գանատայէն», *Յուսաբեր*, 16 Մայիս 1957, էջ 2):

[9] Հիմնուել է ամերիկահայ մեծահարուստ Ճորճ Մարտիկեանի կողմից երկրորդ աշխարհամարտից յետոյ Եւրոպայում յայտնուած խորհրդահայ տեղահանուած անձանց կարիքները հոգալու եւ նրանց ԱՄՆ փոխադրելու համար: Յետագայում զբաղուել է նաեւ Պաղեստինից, Ռումինիայից, Պուլկարիայից, Մերձաւոր Արեւելքի տարբեր երկրներից, նաեւ Խորհրդային Հայաստանից ԱՄՆ եւ որոշ այլ արեւմտեան երկրներ հայերի տեղափոխման հարցերով:

Հայրենիքը»[10]: Նա նաեւ կոչ էր անում լաւ քաղաքացի լինել ու արաբերէն սովորել. «*Ձեր երկրորդ հայրենիք Եգիպտոսը նոր զարթօնք մը կ'ապրի: Այս երկրին ապագան մեծ է, ուրեմն եղէք լաւ քաղաքացիներ, սորվեցէք երկրին լեզուն, որովհետեւ հայը ու'ր որ երթայ, լաւ քաղաքացի կ'ըլլայ*»[11]:

1950ականների վերջում հայերը, ղպտիների, յոյների եւ իտալացիների հետ միասին, ենթարկւում էին խտրականութեան՝ ճնշուելով արաբական ազգայնականութեան հետեւանքներից[12]: 1960ին օտարերկրացիների աշխատանքի վերաբերեալ օրէնքով պետութիւնը նրանց չէր երաշխաւորում աշխատանքով: Եգիպտոսի քաղաքացիութիւն չունեցող հայերին հեռացնում էին աշխատանքից: Իտալիայի եւ Յունաստանի դեսպանները պաշտօնապէս դիմել էին, որ այդ օրէնքը չտարածուի իտալացիների ու յոյների վրայ: Համանման դիմումով էր հանդէս եկել Մամբրէ արք. Սիրունեանը, բայց այն մերժուել էր՝ քանի որ պաշտօնական չէր կարող դիտարկուել: Մինչդեռ յոյները եւ իտալացիները Եգիպտոսում գործող դիւանագիտական ներկայացուցչութիւնների կողմից ստանում էին աջակցութիւն եւ վերջիններս քայլեր էին ձեռնարկում նրանց հայրենադարձութեան կազմակերպման ուղղութեամբ[13]: Ամերիկահայ ազգային-հասարակական գործիչ Անդրանիկ Անդրէասեանը կարծում էր, որ այլ քրիստոնեաների արտագաղթը դրական նշանակութիւն կ'ունենայ խառնամուսնութիւնների նուազման տեսանկիւնից: Սակայն, այդպիսի կանխատեսում նա անում էր գաղթի սկզբնական շրջանում, երբ հայերը այդքան մեծ ծաւալով դեռ չէին հեռանում[14]: Ենթադրութեան հիմքում այն հանգամանքն էր, որ հայերը այլազգիների հետ ամուսնութեան պարագայում որպէս կանոն ընտրում էին հենց այս մեկնող խմբերի ներկայացուցիչներին, ոչ թէ մեծամասնութիւն կազմող մուսուլմաններին: Ուստի յոյների ու իտալացիների մեկնումը կարող էր նպաստել խառնամուսնութիւնների նուազմանը: Սակայն, երբ հայ

---

[10] Կայծ Կոկանեան, «Տեսակցութիւն մը Պ. Ճ. Մարտիկեանի հետ», *Յուսաբեր*, 2 Յունիս 1958, էջ 4:

[11] «Մայիս 28ի փառահեղ տօնակատարութիւնը Գահիրէի մէջ», *Յուսաբեր*, 4 Յունիս 1958, էջ 2:

[12] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 273, թ. 8: Արաբականացման քաղաքականութեան առումով նշելի է, որ հայերից շատերը լաւ չէին տիրապետում արաբերէն լեզուին, որն այժմ շատ էր կարեւորւում: Եգիպտոսում բնակուող հայերը շատ աւելի մեծ տեղ էին յատկացնում ֆրանսերէնին ու անգլերէնին քան արաբերէնին (Ռ. Պ., «Մենք եւ արաբերէն լեզուն», *Ջահակիր*, 14 Մարտ 1949, էջ 3): Համանման վիճակ էր նաեւ Եգիպտոսի յունական համայնքում: Յունական դպրոցներում եւս արաբերէնի ուսուցումը շատ ցածր մակարդակի վրայ էր (Alexander Kazamias, "The 'Purge of the Greeks' from Nasserite Egypt: Myths and Realities," *Journal of the Hellenic Diaspora*, 35(2):2009, Special Issue, էջ 22-3):

[13] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 286, թ. 1-2, գ. 288, թ. 26-7:

[14] Անդրանիկ Անդրէասեան, *Սփիւռքը եւ Հայրենիքը (տպաւորութիւններ եւ դատումներ)*, տպ. Զարթօնք, Պէյրութ, 1962, էջ 35-6:

համայնքը թուապէս միքանի անգամ փոքրացաւ՝ համայնքի ներսում ամուսնութեան թեկնածու գնտելը դարձաւ բաւականին դժուար[15]:

Քանի որ հայերի արտագաղթին զուգահեռ (որոշ դէպքերում սկսած աւելի վաղ շրջանից) տեղի ունեցաւ նաեւ միւս փոքրամասնութիւնների գաղթը՝ համառօտակի դիտարկենք այն:

ՄԻՒՍ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՆ

Եգիպտոսի եւրոպական ամէնամեծ համայնքը յունականն էր: Պաշտօնական տուեալների համաձայն՝ 1947ին Եգիպտոսում կար 57,427, իսկ 1955ին՝ մօտ 55 հազար Յունաստանի քաղաքացիութիւն ունեցող եւ 15-20 հազար այլ երկրների քաղաքացի հանդիսացող յոյն[16]:

Յոյները սկսել էին լքել Եգիպտոսը դեռեւս առաջին յետպատերազմեան տարիներին: Առաջինը արտագաղթեցին ցածր ընկերային կարգավիճակ ունեցողները. դրա հիմնական պատճառը գործազրկութիւնն էր: Նրանց սկսեցին հետեւել նաեւ փոքր գործատէրներ ունեցողները: Սկզբում գաղթը կրում էր անհատական բնոյթ, սակայն աստիճանաբար դարձաւ կազմակերպուած՝ ինչին մասնակից էին թէ՛ յունական համայնքի կառոյցները, թէ՛ միջազգային կազմակերպութիւններ (օրինակ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, Եւրոպական Գաղթի Միջկառավարական Յանձնախումբը, Աղեքսանդրիայում Յունաստանի հիւպատոսութիւնը)[17]:

Յոյների արտագաղթի դէպքում, ի տարբերութիւն հայերի, շօշափելի դեր ունեցաւ 1956ին Սուէզի ճգնաժամը[18]: Չնայած յոյների արտագաղթը բաւականին մեծ ծաւալ ստացաւ 1957ի օրէնքի հետեւանքով, սակայն այն

---

[15] 1967-1978՝ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում տեղի ունեցած ամուսնութիւնների վիճակագրութիւնը ներկայացնում էր հետեւեալ պատկերը.- 188 ամուսնութիւններից 124ի դէպքում ե՛ւ կինը ե՛ւ ամուսինը հայեր էին, 52ի դէպքում կինը եղել էր օտարազգի, իսկ 12ի դէպքում օտարազգին ամուսինն էր: Այսինքն խառնամուսնութիւնները կազմել էին 34 տոկոս (Մեղու, «Օտար ամուսնութիւններ», *Հոկտեմբեր*, Գահիրէ, 1-2(30-31):1979, էջ 5): Այս վիճակագրութիւնից կարելի է կարծել, թէ հիմնականում օտարազգիների հետ ամուսնանում էին տղամարդիկ, սակայն ակնյայտ է, որ կանայք շատ աւելի շատ դէպքերում պէտք է ամուսնանային օտար՝ ոչ հայկական եկեղեցիներում:

[16] John Sakkas, "Greece and the Mass Exodus of the Egyptian Greeks, 1956-66," *Journal of the Hellenic Diaspora*, էջ 114:

[17] Angelos Ntalachanis, "The Emigration of Greeks from Egypt during the Early Post-War Years," *Journal of the Hellenic Diaspora*, էջ 36-41:

[18] Փոր Սայիտում կային 8500 յոյներ, որոնք զգալի նիւթական ու մարդկային կորուստներ ունեցան անգլո-ֆրանսիական ներխուժման հետեւանքով: 1967ին Փոր Սայիտում եւ Իսմայիլիայում մնացած 1500 յոյների բացարձակ մեծամասնութիւնն էլ արտագաղթեց 1967ի իսրայէլեան ներխուժման հետեւանքով (Kazamias, էջ 27-9):

յատկապէս զանգուածային դարձաւ 1961ի կէսերից՝ պետականացման օրէնքի հետեւանքով[19]: Յոյների արտագաղթի համար կարեւոր պատճառ հանդիսացաւ եգիպտացման քաղաքականութիւնը: Տնտեսութեան մէջ օտարերկրացիների արտօնութիւնների վերացումն ու սահմանափակումները մղեցին յոյներին զանգուածայնօրէն լքել երկիրը եւ տեղափոխուել Յունաստան, այլ եւրոպական երկրներ, Աւստրալիա կամ ափրիկեան ուրիշ երկրներ[20]:

Եգիպտոսի յոյների համար արտագաղթի պատճառներից մէկը գաղութատիրական համակարգի անկումն էր: Յունական համայնքի տնտեսական գործունէութիւնը մաս էր կազմում այդ համակարգին, հետեւաբար վերջինիս ճգնաժամը հարուածում էր համայնքի շահերին[21]: Սա վերաբերում է նաեւ այլ փոքրամասնութիւններին՝ այդ թւում հայերին:

Եգիպտոսը լքող յոյների հիմնական նպատակակէտերն էին Աւստրալիան, Քանատան, ՀԱՀը, Պրազիլն, ԱՄՆը եւ Յունաստանը: Արդէն 1970ին Աւստրալիայում կային 16,500 Եգիպտոսի յոյներ[22]:

Եգիպտոսը լքող հայերի առջեւ - ինչպէս յայտնի է - կանգնեց երկընտրանք. հայրենադարձուե՞լ, թէ՞ մեկնել այլ երկրներ: Շատ կարեւոր էր հայրենի իշխանութիւնների կատարած քայլերի արդիւնաւէտութիւնը: Այս առումով հետաքրքրական է յունական փորձը. երբ սկսուեց յոյների արտագաղթը Եգիպտոսից՝ Յունաստանի կառավարութիւնը գրեթէ քայլեր չձեռնարկեց նրանց հայրենադարձութիւնը իրականացնելու համար: Յունաստանից ծայր առած հսկայածաւալ արտագաղթը եւ պետութեան ընդհանուր վիճակը հաշուի առնելով՝ կառավարութիւնը նպատակայարմար չէր համարում Եգիպտոսի յոյների հայրենադարձութիւնը: Դրա փոխարէն յունական կողմը փորձում էր կանխել յոյների արտագաղթը Եգիպտոսից: Մասնաւորապէս նրանք ցանկանում էին, որ յոյներին տրուի Եգիպտոսի քաղաքացիութիւն եւ նրանց իրաւունքները ամբողջութեամբ հաւասարեցուեն արաբներին: Եգիպտոսի յոյների համար ստեղծուած ծանրագոյն կացութեան պայմաններում 1961 Օգոստոսին, Յունաստանի արտգործնախարարը մեկնեց Եգիպտոս, հանդիպում ունեցաւ Նասէրի հետ՝ յոյս ունենալով փրկել կացութիւնը: Սակայն նրա համար արդէն իսկ ակնյայտ էր,

---

[19] Նոյն, էջ 18:

[20] Sakkas, էջ 105-6:

[21] Matoula Tomara-Sideri, "The Demographic Aspect of the Greek Flight from Egypt," *Journal of the Hellenic Diaspora*, էջ 69:

[22] Kazamias, էջ 24. նաեւ՝ Anthony Gorman, "Repatriation, Migration or Readjustment: Egyptian Greek Dilemmas of the 1950s" *Greek Diaspora and Migration since 1700: Society, Politics and Culture* in D. Tziovas (ed.), Farnham, Ashgate Publishing Ltd., 2009, էջ 67:

որ ամբողջ համայնքը ցանկանում է լքել Եգիպտոսը եւ տրամադրուած է յոռետեսօրէն[23]:

Եգիպտոսի հրեաների զանգուածային արտագաղթը սկսուեց 1948ին եւ երկու տարուանից աւելի պակաս ժամանակաընթացքում երկիրը լքեցին 20 հազար հրեաներ: Յետագայ տարիներին եւս հազարաւոր հրեաներ հայրենադարձուեցին: Բացի Իսրայէլից՝ գաղթողները տեղափոխուեցին նաեւ Ֆրանսա, Իտալիա, Ջուիցերիա եւ Լատինական Ամերիկա[24]:

Սուէզի ճգնաժամի նախօրեակին Եգիպտոսում մնացել էր շուրջ 40 հազար հրեայ[25]: 1956 Դեկտեմբերին հարիւրաւոր հրեաներ ձերբակալուեցին: 1956 Նոյեմբերի վերջում 500 եգիպտահպատակ եւ որեւէ երկրի քաղաքացիութիւն չունեցող (այս թուի մէջ չէին մտնում Մեծն Բրիտանիայի եւ Ֆրանսայի քաղաքացի հրեաները) հրեաներ վտարուեցին Եգիպտոսից: Այս ճնշումների եւ տնտեսական հետապնդումների հետեւանքով ծայր առաւ շատ աւելի մեծ արտագաղթի ալիք: Եգիպտոսի հրեաները սկսեցին կամաւոր պարտաւորուել լքել երկրը՝ հրաժարուելով Եգիպտոսի քաղաքացիութիւնից: 1956 Նոյեմբերի 22ից մինչեւ 1957 Յունիսի 30ը 20,200 հրեաներ լքեցին Եգիպտոսը: Արդիւնքում Փոր Սայիտի, Թանթայի եւ Մանսուրայի հրէական համայնքները ամբողջութեամբ վերացան: Համաշխարհային Հրէական Խորհուրդը յայտարարեց, որ 1956 Նոյեմբերից հրեաների դէմ վարուող քաղաքականութիւնը մշակուած էր նացիստական Գերմանիայի օրինակով[26]:

Ըստ ՄԱԿի տուեալների, 1956-60 շրջանում Եգիպտոսը լքեցին 36 հազար հրեաներ: 1956 Նոյեմբերից մինչեւ 1957ի վերջը Եգիպտոսը լքած 23-25 հազար հրեաներից նուազագոյնը 6 հազարը որեւէ պետութեան քաղաքացիութիւն չունէր: 1956 Նոյեմբերից 1957 Հոկտեմբերի 31ը Իսրայէլը ընդունեց 13,500, իսկ 1957ի առաջին ինը ամիսների ընթացքում լատինամերիկեան երկրները՝ 2050 հրեաների: 1958 Յունուարին Ֆրանսայում կային 5 հազար գաղթականներ, Հոլանտայում՝ 1100 եւ աւելի փոքր թուով՝ Գերմանիայում ու Իտալիայում: Եթէ Հրէական Գործակալութիւնը (Սոհնութ) զբաղուած էր հրեաների հայրենադարձութեամբ, ապա Hebrew Immigrant Aid Soceityն հոգ էր տանում դէպի Լատինական Ամերիկա, ԱՄՆ, Քանատա, Աւստրալիա եւ այլ շրջաններ կամ ուղիղ Եգիպտոսից կամ էլ Ֆրանսայի, Իտալիայի, Յունաստանի ու Մեծն Բրիտանիայի վրա-

---

[23] Sakkas, էջ 106-8, 111-2:

[24] Michael M. Laskier, “Egyptian Jewry under the Nasser regime, 1956–70,” *Middle Eastern Studies*, 3(31):1995, էջ 577:

[25] Michael M. Laskier, “From War to War, the Jews of Egypt from 1948 to 1970,” *Studies in Zionism*, 1(7):1986, էջ 131:

[26] Laskier, “Egyptian Jewry”, էջ 579, 581-2, 584:

յով տեղափոխմանը: Քաղաքացիութիւն չունեցողները ստանում էին նաեւ Ֆրանսայի աջակցութիւնը[27]:

1961ի սկզբում Եգիպտոսում մնացել էր 7 հազար հրեայ (2-3 հազարը՝ Աղեքսանդրիայում, 3-4 հազարը՝ Գահիրէում)[28]: 1967ին Եգիպտոսում կար 2500 հրեայ[29]: 1967ի պատերազմի մեկնարկից կարճ ժամանակ անց 425 հրեայ տղամարդիկ ձերբակալուեցին: 1968ին արդէն Եգիպտոսում մնացել էր հազար հրեայ, իսկ 1970ի ամռանը՝ 400: 1970 Սեպտեմբերին Եգիպտոսում կար ընդամէնը 300 հրեայ, այն պայմաններում երբ 1948ին նրանց թիւը 80 հազար էր[30]:

Այսպիսով Եգիպտոսի հրեաների մօտ կէսը հայրենադարձուեց, իսկ միւսների մեծագոյն մասը տեղափոխուեց Եւրոպա, Լատինական Ամերիկա եւ ԱՄՆ[31]: Ըստ ոչ-ամբողջական տուեալների՝ Եգիպտոսից գաղթած հրեաներից 35 հազարը հայրենադարձուեց, 15 հազարը փոխադրուեց Պրազիլ, 10 հազարը՝ Ֆրանսա, 9 հազարը՝ ԱՄՆ, նոյնքանը՝ Արժանթին, 4 հազարը՝ Մեծն Բրիտանիա[32]:

Երկրորդ աշխարհամարտի նախօրեակին Եգիպտոսի իտալացիների թիւը 60 հազար էր: Պատերազմից յետոյ - մինչեւ 1961 - 40 հազար իտալացիներ լքեցին երկիրը: Նրանց մեծամասնութիւնը հայրենադարձուեց, միւսներն էլ ցրուեցին աշխարհով մէկ[33]: Եգիպտոսից Իտալիա տեղափոխուածները ստեղծեցին իրենց կազմակերպութիւնները:

ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵԳԻՊՏՈՍԻՑ

Եգիպտահայերի զանգուածային գաղթի առաջին ուղղութիւնը Պրազիլն էր, որին կարճ ժամանակ անց միացան Քանատան ու Աւստրալիան: 1958-59՝ Պրազիլն սկսեց ընդունել Եգիպտոսից գաղթողներին՝ առաւելաբար քաղաքացիութիւն չունեցողներին: 1959-60՝ Քանատան սկսեց ընդունել լաւ կրթութիւն եւ քաջառողջ վիճակ ունեցող հայերին: Արդիւնքում հայ համայնքի գրեթէ ողջ միջին եւ բարձր խաւը տեղափոխուեց այդ երկիր,

---

[27] Նոյն, էջ 586, 589:

[28] Նոյն, էջ 607.

[29] Laskier, "From War to War", էջ 143:

[30] Laskier, "Egyptian Jewry", էջ 610, 612-3:

[31] Laskier, "From War to War", էջ 147:

[32] Victor Sanua, "The Vanished World of Egyptian Jewry," http://www.sephardicstudies.org/vanished.html (դիտուած է՝ 29.05.2021ին):

[33] Joseph John Viscomi, "History, Presence, and the Departure of the Italians of Egypt, 1933-Present," Ph.D. thesis, in the University of Michigan, Dept. of Anthropology and History, 2016, էջ 2:

մինչդեռ Աւստրալիա՝ առաւելաբար աւելի խոնարհ ընկերային կարգավիճակ ունեցող դասակարգը[34]:

Ազգայնացման քաղաքականութեան ժամանակ եգիպտահայերի զգալի մասը եզրակացրեց, որ հեռանկար չունի այդ երկրում. այդ պատճառով էլ նախընտրեց գաղթել Աւստրալիա, Քանատա եւ այլուր: Յատկապէս վնասներ կրեցին մասնաւոր հատուածում աշխատողները, քանզի սեփականութեան ազգայնացման քաղաքականութիւնն առաջին հերթին ուղղուած էր նրանց դէմ[35]: Եգիպտահայերի արտագաղթի պատճառների մէջ կարեւոր տեղ ունէր նաեւ զինուորական ծառայութիւնից խուսափելու ցանկութիւնը[36]: Մեծ էր ապագայի նկատմամբ անվստահութիւնը. «*Էականը այն չէ, թէ երբեմն խուճապահար հոգեբանութեան մօտեցող այդ մտավիճակը բանաւոր է, արդարացի կամ ոչ, այլ այն, որ ան գոյութիւն ունի եւ ենթակաները կը մղէ ապաւինիլ արտագաղթի, դէպի որեւէ հեռաւոր, անծանօթ երկիր, մինչեւ Քանատա եւ Արժանթին, նոր կեանք կերտելու, նոր օճախ առկայծելու տաժանքներուն մատնուելու յօժարութեամբ*»[37]:

1960ին Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան միջոցով տեղի թեմի առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանը կրկին տեղեկացնում էր, որ անհրաժեշտ է կազմակերպել եգիպտահայութեան հայրենադարձութիւնը եւ - որ հակառակ պարագայում - վերջիններս կը տեղափոխուեն Լատինական Ամերիկայի եւ Ափրիկէի զանազան երկրներ՝ որտեղ էլ կը կորցնեն իրենց ազգային ինքնութիւնը[38]: 1960 Դեկտեմբերի 22ին նա Վազգէն Ա. կաթողիկոսին գրում էր, որ վերջին շրջանում հայերի արտագաղթը շատ մեծ թափ է ստացել: Նա նշում է նաեւ, որ սպիտակամորթ քրիստոնեաներին սկսել է ընդունել Հարաւափրիկեան Միութիւնը, որի Գահիրէում գտնուող հիւպատոսութիւնը զբաղւում էր այդ հարցերով: Բազմաթիւ հայեր էլ մեկ-

---

[34] Kirkland, էջ 91: Սկզբնական շրջանում Քանատական պաշտօնեաները, որոնք Եգիպտոսում զբաղւում էին գաղթի կազմակերպմամբ, ընտրում էին միայն ամուսնացած երիտասարդ հայերին (Isabel Kaprielian-Churchill, "Armenians in Ontario," *Polyphony* (Toronto, Ontario)շ 2(4):1982, էջ 118:

[35] Ayman Zohry, "Armenians in Egypt," paper presented to the "The 25th International Population Conference", The International Union for the Scientific Study of Population (IUSSP), Tours, France, 18-23 July, էջ 7:

[36] [Հարցազրոյցը վարեց Հ. Գանգրունի], «Եգիպտահայ գաղութը Բ. համաշխարհային պատերազմի ընթացքին եւ յետոյ», *Արարատ*, Պէյրութ, 18 Հոկտեմբեր 1971, էջ 3:

[37] Անդրէասեան, էջ 37:

[38] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 286, թ. 2: Չնայած ընդհանուր բնոյթի դիտարկմանը՝ հետաքրքիր է մեկնելիք երկրների նախանշումը: Իրադարձութիւնների զարգացումը ցոյց տուեց, որ իրականում եգիպտահայերի մեծամասնութիւնը մեկնեց ոչ թէ լատինամերիկեան կամ ափրիկեան երկրներ, այլ Քանատա եւ Աւստրալիա: Սա մասամբ ցոյց է տալիս եգիպտահայերի զանգուածային արտագաղթի սկզբնական եւ յետագայ շրջաններում նախընտրելի երկրների փոփոխութիւնը:

նում էին Պրազիլ, Արժանթին, Աւստրալիա, ԱՄՆ եւ այլ երկրներ: Մամբրէ արքեպիսկոպոսը տեղեկացնում է, որ ինքը փորձում էր համոզել հայերին չարտագաղթել, սակայն նրան պատասխանում էին, որ յոյներին ու իտալացիներին տէր են կանգնում իրենց պետութիւնները, իսկ հայերի խնդիրներով ոչ ոք չի ուզում զբաղուել: Նա կրկին խնդրում է կաթողիկոսին միջնորդել հայրենի կառավարութեանը՝ կազմակերպելու հայրենադարձութիւն[39]:

1962ին ՌԱԿ ղեկավարներից Բարունակ Թովմասեանը եւ Հրաչեայ Սեդրակեանը Լիբանանում ԽՍՀՄ դեսպանութեանը տեղեկացնում են, որ Քանատայի[40], Պրազիլի եւ Աւստրալիայի դեսպանութիւնները վարում են հետեւողական քաղաքականութիւն՝ Եգիպտոսի հայերին իրենց երկրներ տեղափոխելու ուղղութեամբ: Նրանք նաեւ շեշտում են, որ չնայած հայրենադարձութիւն կազմակերպելու որոշմանը, այդ ուղղութեամբ գործնական քայլեր չկատարելը յանգեցնում է եգիպտահայերի շրջանում Խորհրդային Հայաստանից հիասթափուելուն եւ Արեւմուտք մեկնելուն[41]:

Հարկ է ընդգծել, որ 1960ականների առաջին կէսում եգիպտահայութեան արտագաղթը տեղի էր ունենում խուճապային մթնոլորտում, որի մասին *Արեւ* թերթի խմբագրականում կարդում ենք.

> Հայ գաղութի զաւակները անբացատրելի խուճապի մը կը մատնեն իրենք զիրենք ու կը փութան հաստատուիլ հեռաւոր երկիրներ, ուր կեանքի անստուգութիւնը, կասկածելի բարոյականը եւ կլանող այլասերումը աւելի տիրող են, քան ակնկալուած բարգաւաճ կեանքը[42]:

Եգիպտական պետութիւնը ցանկանում էր կասեցնել փոքրամասնութիւնների գաղթի հետեւանքով հարստութեան արտահոսքը պետութիւնից, ուստի երկիրը լքողները չէին կարող իրենց հետ տանել իրենց ողջ գոյքը. կային էական սահմանափակումներ[43]: Մեկնող ընտանիքում զինա-

---

[39] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 2-3:

[40] 1962ին Գահիրէում Քանատայի դեսպանութեանը կից հաստատուեց գրասենեակ, որի միջոցով բազմաթիւ եգիպտահայեր գաղթեցին Քանատա՝ հիմնականում Մոնրէալ (*Յուշամատեան Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի*, Մոնթրէալ, 1970, էջ 12):

[41] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 314, թ. 8-9:

[42] Խմբագրական, «Վերջին գաղթը», *Արեւ*, Գահիրէ, 14 Յուլիս 1962, էջ 1:

[43] Միքանի երկրների հետ ԱՄՀն ունէր համապատասխան պայմանագրեր, որոնցով էլ կարգաւորւում էր այդ խնդիրը: Միւս «օտարները» կարող էին իրենց հետ վերցնել 1000 եգիպտական ոսկուն համարժէք առարկաներ եւ 50 ոսկի արժողութեամբ գոհարեղէն՝ պայմանով, որ դրանք իրապէս գործածուած լինեն եւ չպարունակեն թուրքական ու պարսկական գորգեր ու թանկարժէք իրեր: ԱՄՀ քաղաքացիութիւն ունեցող արտագաղթող ընտանիքները կարող էին վերցնել 500 եգիպտական ոսկու համարժէք առարկաներ եւ իւրաքանչիւր անձի համար

պարտների առկայութեան պարագայում, նրանցից միայն մէկը կարող էր խուսափել զինառայութիւնից: Պետութիւնը կարող էր խոչընդոտել նաեւ որեւէ անձի մեկնումը, եթէ նրա ունակութիւններն ու փորձառութիւնը անհրաժեշտ համարուէր պետութեան համար[44]:

Սկզբնական շրջանում եգիպտահայերի համար շատ աւելի հեշտ էր մեկնել Պրազիլ քան Քանատա կամ Աւստրալիա: Դրա համար միայն պահանջւում էր դիմում: Այստեղ դիմողները, ի տարբերութիւն միւս երկու պետութիւնների, պարտաւոր չէին բուժզննում անցնել, մեկնելու թոյլտուութիւն տալիս էր հենց հիւպատոսական ծառայութիւնը: Մամբրէ արք.ը Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան կցորդ Ս. Առաքելեանին 1961 Դեկտեմբերին տեղեկացրել է, որ Պրազիլն ընդունում է յատկապէս կաթողիկէ հայերին՝ վճարելով նոյնիսկ նրանց ճանապարհածախսը: Իսկ առաքելադաւան հայերի ընդունումը շատ աւելի դժուար էր, սակայն կաթողիկէութիւն ընդունելու պարագայում վերջիններս ստանում էին նոյն արտօնութիւնները: *Արեւ*ի խմբագրի օգնական Վ. Անտոնեանը Առաքելեանին տեղեկացնում է, որ Եգիպտոսի հայ կաթողիկէների քարոզչութեան հետեւանքով տեղի որոշ հայեր ընդունում էին կաթողիկէութիւն եւ մեկնում Պրազիլ: Ըստ նրա՝ Պրազիլ ուղեւորուող իւրաքանչիւր նաւով մեկնում էր 15-20 հայ ընտանիք[45]: Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան 1962ի տեղեկանքից իմանում ենք, որ նախկինում շատերն էին ցանկացել այնտեղ մեկնել, սակայն արդէն տեղ հասածները ներկայացրել էին կեանքի բաւականին թանկ լինելը, ինչը ետ էր պահել Եգիպտոսում գտնուողներին: Բացի այդ, եթէ նախկինում Պրազիլն հիւրընկալում էր քաղաքացիութիւն չունեցողներին, ապա այդժամ արդէն դադարել էր տուեալ խմբին ընդունելուց[46]:

Ոչ միայն դէպի Պրազիլ, այլեւ ուրիշ երկրներ հայերի արտագաղթի նախաձեռնողներից էր Կաթողիկէ Եկեղեցին: Յատկապէս ԱՄՆ, նաեւ Քանատա գաղթի կազմակերպմանը մասնակցում էր կարդինալ Աղաճանեանը: Արժանթին ներգաղթել ցանկացող եգիպտահայերին ընտրում էր Գահիրէի Կաթողիկէ Եկեղեցու միջոցով. մեկնողները պէտք է իրենց միջոցներով հասնէին Ճենովա, որտեղից արդէն ճանապարհածախսը հոգում էր Կաթողիկէ Եկեղեցին: Սակայն Արժանթին տեղափոխուել ցանկացող հայ կաթողիկէների թիւը մեծ չէր: Ըստ նոյն տեղեկանքի՝ քչերն էին ցանկանում մեկնել ԱՄՆ (հիմնականում դաշնակցականները): Այս հարցում եգիպտահայերին աջակցում էր ԱՆՉԱՆ[47]: Միայն 1961ին Եգիպտոսից

եւս 200 ոսկի կանխիկ դրամ («Եգիպտոսէն վերջնապէս հեռացողներու ուշադրութեան», *Յուսաբեր*, Գահիրէ, 5 Հոկտեմբեր 1962, էջ 2):

[44] «Եգիպտացիներու արտագաղթը արտօնուած», *Արեւ*, 23 Յունիս 1962, էջ 1:

[45] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 49, թ. 1, 4:

[46] Նոյն, ց. 1, գ. 326, թ. 8:

[47] Նոյն, թ. 11, 9, 8:

ԱՄՆ տեղափոխուեց 150 հայ[48]: Մարտիկեանը հանդիպեց անձամբ Նասէրի հետ, բանակցեց պետական պաշտօնեաների հետ, որի արդիւնքում նրանք խոստացան «ամէն դիւրութիւն ընծայել Ամերիկա գաղթել ուզող հայերուն»[49]:

1962ին *Արեւ*ում եգիպտահայերի արտագաղթի դէմ հանդէս եկաւ հայկական գաղթերի պատմութեան նշանաւոր մասնագէտ, պատմաբան Արշակ Ալպոյաճեանը: Դատապարտելով Եգիպտոսից սկսուած արտագաղթը, ներկայացնելով Քանատա մեկնողներին սպասուող յուսահատութիւնը՝ նա յատկապէս անդրադառնում է դէպի Պրազիլ գաղթին, քանի որ սկզբնական շրջանում այն հիմնական ուղղութիւններից էր.

> Գալով Պրազիլի, ուր հայ գաղթականներ տանելու համար մասնաւոր ջանադրութիւններ կը գործադրէ կաթողիկէ եկեղեցին իր կղերին միջոցաւ, բաւական թիւով գացողներ եղած են եւ երթալու տրամադիրներ ալ կան միամտօրէն խաբուելով, կարգ մը սըմսարներու փրոփականտէն:
>
> Հոս կացութիւնը դառնագոյն է եւ մեր խեղճ հայերը հոն կ'երթան առանց գիտնալու թէ ու՞ր կ'երթան եւ ինչու՞[50]:

Նա նշում է, որ այստեղ շատ դժուար է գործ գտնելը, ծանր են ընկերային պայմանները[51]: Ըստ նրա ունեցած տուեալների՝ 1962 Մայիսի դրութեամբ Քանատա, Հարաւային Ամերիկա (մասնաւորապէս Պրազիլ) եւ Աւստրալիա մեկնելու համար արդէն դիմել էին 5400 եգիպտահայեր[52]:

1962 Նոյեմբերին Մարտիկեանը հերթական անգամ այցելեց Եգիպտոս եւ ի շարս բազմաթիւ հանդիպումների տեսակցութիւն ունեցաւ նաեւ ԱՄՀ ներքին գործերի նախարարի հետ: Չնայած այդ մասին յիշատակում չկայ հանդիպումը լուսաբանող *Յուսաբեր*ի յօդուածում[53], սակայն չափազանց հաւանական է, որ քննարկուել է հայերի արտագաղթը:

---

[48] Կ. Գէորգեան, *Ամէնուն տարեգիրքը 1963, Ժ. տարի*, Պէյրութ, 1962, էջ 586:

[49] Նոյն, էջ 735:

[50] Ա. Ալպոյաճեան, «Գաղթելու փափաք (հինէն ու նորէն)», *Արեւ*, 19 Մարտ 1962, էջ 2:

[51] Նոյն, էջ 2, 4:

[52] Ա. Ալպոյաճեան, «Ներգաղթ դէպի Հայաստան», *Արեւ*, 9 Մայիս 1962, էջ 3:

[53] «Պ. Ճորճ Մարտիկեան ընդունուեցաւ ներքին գործոց նախարարին կողմէ», *Յուսաբեր*, 7 Նոյեմբեր 1962, էջ 3: Նոյն այցի շրջանակներում ի պատիւ Մարտիկեանի՝ կազմակերպուեց շքեղ ընդունելութիւն Յուսաբեր Միութեան կողմից: Չնայած այս անգամ եւս Մարտիկեանը ասում էր, որ տեղացիները սիրում ու գնահատում են հայերին, ուստի պէտք է «համբերել ու տոկալ», սակայն համատարած արտագաղթի մտայնութեան ու ընթացքի պայմաններում, աւելի շատ կարծես դա գաղթելու իրենց հերթին սպասելու յորդոր լինէր («Պ. Ճորճ Մարտիկեանի ի պատիւ շքեղ ընդունելութիւնը», *Յուսաբեր*, 10 Նոյեմբեր 1962, էջ 3): Եգիպտական *Le Progrès Egyptien* թերթն էլ գրում էր, որ Մարտիկեանը զբաղուել է նաեւ «հայ գաղութին վերաբերող խնդիրներով» («Ճ. Մարտիկեանի յայտարարութիւնը Գահիրէէն մեկնելէ առաջ», *Յուսաբեր*, 13 Նոյեմբեր 1962, էջ 3):

Նախորդ այցից ընդամէնը միքանի ամիս անց՝ 1963 Մարտին, Մարտիկեանը կրկին եկաւ Եգիպտոս, որտեղ հանդիպումներ ունեցաւ միքանի նախարարների հետ[54]: Այստեղ նա դիմաւորեց նաեւ ԱՄՆ բանակի պաշտօնաթող զօրավար, ԱՆՉԱի ղեկավարներից Հայկ Շեքէրճեանին: Հաւանաբար սա եգիպտահայութեան արտագաղթի խնդիրներին առնչուող կարեւորագոյն այցն էր ԱՄՀ: Մարտիկեանը, Շեքէրճեանի հետ միասին, հանդիպեց ԱՄՀ ներքին գործերի եւ գանձային նախարարներին, ապա Եգիպտոսում ԱՄՆ դեսպանի հետ: Խիստ ենթադրելի է, որ քննարկման հիմնական առարկան հայերի արտագաղթն էր[55]: Այս անգամ իր պատուին ընդունելութեան ժամանակ Մարտիկեանի Աղեքսանդրիայի ելոյթը լուսաբանելիս *Յուսաբեր*ը բացում է փակագծերը՝ մէջբերելով նրա խօսքը, որը հայերի արտագաղթի մասին է.

> Այս այցելութիւնս... ունի անշուշտ իր նպատակը: Մեր բոլոր ձեռնարկները կը ձգտին ընդլայնելու ազգապահպանման աշխատանքները եւ օգնելու դժուարութեանց մատնուած մեր հայրենակիցներուն: Եթէ մենք կ'ուզենք եւ կ'աշխատինք որոշ թիւով ազգայիններու Ամերիկա մուտքը դիւրացնել, այդ կ'ընենք պարզապէս որպէսզի անոնք հոն հաստատուին եւ հոն ուծանալու ենթակայ մօտ 300,000 հայերուն ազգային նոր ոգի եւ նոր աւիւն ներշնչեն, զանոնք ոգեփոխեն ու մղեն տոկալու, մինչեւ այն օրը, երբ նպաստաւոր պայմաններ կը ստեղծուին եւ մենք ի վիճակի կ'ըլլանք բոլորը մէկ Հայաստան առաջնորդելու:
> Պէտք է Ամերիկա փոխադրուին, իհարկէ, միայն անոնք, որ զանազան բանաւոր պատճառներով մտադրած են արտասահմանեան երկիր մը հաստատուիլ եւ չեն կրնար Հայաստան ներգաղթել՝ հոն տիրող ներկայ պայմաններուն հետեւանքով: Ա.Մ.Հ.ի պետական իշխանութիւնները դէմ չեն այս գաղափարին:
> Այսուհանդերձ, որեւէ քայլ առնելէ առաջ, ամէն մարդ պէտք է լաւ մտածէ. աճապարելու եւ խուճապի մատնուելու պէտք չկայ, տրուած ըլլալով որ մեր աշխատանքները դեռ վերջնական արդիւնք չեն տուած եւ անմիջական կարգադրութիւններ չեն եղած:
> Մեր նպատակն է արտագաղթելու հարկադրուած մեր հայրենակիցները, հնարաւորութեան սահմաններուն մէջ, Մ. Նահանգներ համախմբել եւ հնարաւոր ամէն ինչ ընել, որ չցրուին աշխարհի չորս կողմը, իհարկէ, զուտ ազգապահպանման նպատակներով[56]:

Իդէպ, ակնյայտ է, որ Մարտիկեանի այս պնդումը եւս ամէնեւին չիրականացաւ, քանի որ եգիպտահայերի մեծամասնութիւնը արտագաղթեց Քանատա եւ Աւստրալիա՝ ոչ թէ ԱՄՆ:

Դժուար է պատկերացնել որեւէ էական այլ խնդիր, որը կը վերաբերէր եգիպտահայ գաղութին տուեալ պահին, քան՝ արտագաղթը:

[54] «Պրն. Ճորճ Մարտիկեանի այցելութիւնները», *Յուսաբեր*, 27 Մարտ 1963, էջ 2:

[55] «Պրն. Մարտիկեան կը տեսակցի ներքին գործոց եւ գանձային նախարարներուն հետ», *Յուսաբեր*, 29 Մարտ 1963, էջ 3:

[56] Թղթակից, «Պրն. Ճորճ Մարտիկեան Աղեքսանդրիոյ մէջ», *Յուսաբեր*, 30 Մարտ 1963, էջ 2:

1963 Մայիսին նորից Գահիրէ վերադառնալով՝ Մարտիկեանը, Շեքէրճեանի հետ միասին, հանդիպումներ ունեցաւ ԱՄՀում Աւստրալիայի դեսպանի եւ Քանատայի հիւպատոսի հետ[57]: Արդէն 1963 Յունիսի 3ին Գահիրէում բացուեց ԱՆՉԱի գրասենեակը, կազմակերպւում էին զեկուցումներ ԱՆՉԱի մասին[58]:

Չնայած եգիպտահայութեան արտագաղթի հրահրման մեղադրանքներ էին հնչեցւում ՀՅԴի եւ ԱՆՉԱի[59] հասցէին, սակայն իրականում ակնյայտ է, որ դրա համար կային առարկայական պատճառներ: Եթէ մինչեւ 1965 ԱՆՉԱն եգիպտահայերին հիմնականում փոխադրում էր Քանատա եւ Աւստրալիա, ապա գաղթի մասին նոր օրէնքից յետոյ՝ նաեւ ԱՄՆ (այստեղ փոխադրումը իրականացւում էր Պէյրութով՝ ինչպէս ռումինահայերի ու պուլկարահայերի պարագայում)[60]:

1960ականների սկզբում արտագաղթի հարցը եգիպտահայ հասարակական քննարկումների առանցքում էր, որի վերաբերեալ բազմաթիւ յօդուածների կարելի էր հանդիպել տեղի հայկական պարբերականներում: Այսպէս օրինակ գրող, հասարակական գործիչ Վահան Մալէզեանը հանդէս էր գալիս արտագաղթի դէմ՝ գրելով. «*Իմ անկեղծ խօսքս սրտցաւօրէն ուղղելով մասնաւորապէս եգիպտահայ հայրենակիցներուս, չեմ կրնար ըմբռնել թէ ինչու՞ արկածախնդրական փրոփականտին կամովին զոհ կ'ըլլան, մինչեւ սառուցիկ Քանատա եւ նոյնիսկ բարոյական թոյլ Պրազիլ գաղթելու պատրաստուելով*»[61]:

1963 Մայիսի 2ին *Յուսաբեր*ում յօդուածով հանդէս եկաւ Սիմոն Վրացեանը, որը ամբողջութեամբ նուիրուած էր Սփիւռքի տեղաշարժերին եւ մասնաւորապէս՝ հասկանալիօրէն առաջին հերթին վերաբերում էր եգիպտահայութեանը, որտեղից արտագաղթը տուեալ ժամանակ ընթանում էր ամէնաբուռն կերպով: Վրացեանը գրում է, որ Խորհրդային Հայաստանը չի կարող այդ պահին ընդունել բոլորին, իսկ եթէ կարողանար էլ՝ սփիւռքահայերի զգալի մասը չէր ուզի գնալ եւ ապրել խորհրդային վարչակարգի պայմաններում: Միաժամանակ նա դատապարտում է արտագաղթը՝

---

[57] «Պ. Ճորճ Մարտիկեան Գահիրէի մէջ», *Յուսաբեր*, 15 Մայիս 1963, էջ 3:

[58] «Անչայի գրասենեակը բացուած է», *Յուսաբեր*, 4 Յունիս 1963, էջ 3:

[59] «ԱՆՉԱն եւ եգիպտահայոց արտագաղթը», *Զարթօնք*, 28 Սեպտեմբեր 1963, էջ 3: Ըստ Լ. Տէրմկրտչեանի՝ ԱՆՉԱն, որի ղեկավար Մարտիկեանը 1963ին յայտարարել էր, թէ այն պատրաստւում է եգիպտոսից 10 հազար հայերի տեղափոխել ԱՄՆ, ուղղակիօրէն ֆինանսաւորւում էր ԱՄՆ հետախուզութեան կողմից (Л. Тер-Мкртичян, *Армяне в Странах Арабского Востока на Современном Этапе*, [Հայերը Արաբական Արեւելքի երկրներում ժամանակակից փուլում], Մոսկուա, 1965, էջ 33):

[60] Hratch Zadoian, *Our Brothers' Keepers: The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA)*, New York, SIS Publications, 2012, էջ 79:

[61] Վահան Մալէզեան, «Արտագա՞թ, թէ ներգաղթ», *Արեւ*, 2 Յուլիս 1962, էջ 2:

գրելով. «*Քանատա կամ Աւստրալիա, ազգային տեսակէտով, մահ են, ինչպէս եղաւ ժամանակին Կալիցան: Ազգային ապրումներ ունեցող հայը չի կարող քաջալերել արտագաղթը դէպի մահ սպառնացող երկիրները*»[62]:

Արժանայիշատակ է նաեւ *Յուսաբեր*ի խմբագրականը՝ նուիրուած արտագաղթին եւ ներգաղթին, որտեղ կարդում ենք.

> Մենք չենք քաջալերեր արտագաղթը: Գիտենք, որ ցրւումը եթէ աղէտ մը չէ այսօր, վաղը կրնայ վտանգ մը ըլլալ մեր ազգայնութեան համար: Գիտենք նաեւ, թէ արտագաղթը ցրւում է, ներգաղթը՝ հաւաքում: Եւ սակայն կը վախնանք պատասխանատուութենէ: Ո՛չ «գացէք» կ'ըսենք մնացողներուն, ո՛չ ալ «մի՛ երթաք» կ'ըսենք գացողներուն: Կը մտածենք, թէ ամէն մարդ ի՛նք է իր ճակատագրին տէրը եւ թէ մեզմէ աւելի լաւ կ'ըմբռնէ իր կացութիւնը, կեանքի պայմանները, ըրածն ու ընելիքը: Մենք պետութիւն չենք եւ չենք կրնար երաշխաւորել գացողներուն, ինչպէս մնացողներուն ապահովութիւնը[63]:

Այս դիրքորոշման համար ՌԱԿը մեղադրում էր ՀՅԴին, իսկ վերջինս էլ պատասխանում էր, որ ՌԱԿ ղեկավարների մէջ կան մարդիկ, որոնք իրենց ընտանիքն ու ազգականներին ԱՆՉԱի միջոցով ուղարկում են տարբեր երկրներ, իսկ իրենք կոչ անում հայրենադարձուելու[64]:

*Արեւ*ում Աւետիս Եափուճեանը 1962ին գրում էր, որ արտագաղթը կազմակերպւում է հայերի հայրենադարձութիւնը կանխելու համար՝ «հայրենիքի ու հայ ժողովրդի թշնամիներու»[65] կողմից: Իդէպ 1962ին արտագաղթը դաւադրութիւն համարող եւ հայրենադարձութիւն քարոզող[66] Եափուճեանը 1967-90 եղել է *Արեւ*ի խմբագիրը, իսկ 1990ին ինքը եւս տեղափոխուել Սիտնի, որտեղ կարեւոր դերակատարում է ունեցել ՌԱԿ եւ ՀԲԸՄ գործունէութեան մէջ:

Նորից ներկայացնելով ՀՅԴ տեսակէտը *Յուսաբեր*ը 1963 Յուլիսի 19ի խմբագրականում գրում է.

> Հիմա, խուճապահար ու հիւանդագին գաղթի այս օրերուն, բազմաթիւ հայրենակիցներ կը դիմեն մեզի ու կը հարցնեն.
> - Շուարեր մնացեր ենք, ու՞ր երթանք, չենք գիտեր:
> Մենք այս հարցումին պատասխանած ենք միշտ.
> - Եթէ անպատճառ տեղ մը պիտի երթաք, Հայաստան գացէք:
> - Բայց Հայաստան միակ երկիրն է, ուր երթալ կայ, վերադառնալ չկայ:

---

[62] Ս. Վրացեան, «Սփիւռքի տեղաշարժը», *Յուսաբեր*, 2 Մայիս 1963, էջ 1:

[63] Խմբագրական, «Արտագաղթ եւ ներգաղթ», *Յուսաբեր*, 6 Յունիս 1963, էջ 1:

[64] «Արտագաղթը, ներգաղթը եւ ՌԱԿը», *Յուսաբեր*, 17 Յունիս 1963, էջ 2: Այդ մեղադրանքներին ի պատասխան *Արեւ*ն էլ հարցնում էր, թէ ինչու՞ բոլոր դաշնակցականները չեն փոխադրւում Ամերիկա (Խմբագրական, «Պատասխան անպատասխանատուներուն», *Արեւ*, 3 Նոյեմբեր 1962, էջ 1):

[65] Ա. Եափուճեան, «Հայրենադարձը եւ արտագաղթի շարժումը», *Արեւ*, 17 Սեպտեմբեր 1962, էջ 2:

[66] Տե՛ս նաեւ՝ Ա. Եափուճեան, «Հայրենադարձ եւ տարագրութիւն», *Արեւ*, 4 Հոկտեմբեր 1962, էջ 2:

- Ուրեմն վերադառնալու՞ համար պիտի երթաք Հայաստան:
- Ո՛չ, բայց...[67]:

Քանատա մեկնելու համար անհրաժեշտ էր հայտ ներկայացնել Եգիպտոսում Քանատայի դեսպանատուն (ապա ցանկալի էր երաշխաւորագիր ստանալ արդէն այնտեղ բնակուող ազգականներից, որ գաղթողին կ'ապահովեն բնակարանով եւ աշխատանքով): Հայտատուն անցնում էր բժշկական քննութիւն[68] եւ որեւէ հիւանդութեան յայտնաբերման պարագայում մերժւում: Ստուգւում էր, թէ դիմողը յանցագործութիւն կատարել է՞, պարտաճանաչօրէն մուծե՞լ է հարկերը թէ՞ ոչ: Ապա տրւում էր գաղթելու թոյլտուութիւն եւ 6 ամսուայ ընթացքում դիմորդը պարտաւոր էր հեռանալ Եգիպտոսից՝ հակառակ պարագայում բոլոր փաստաթղթերը համարւում էին առ ոչինչ ու մեկնել ցանկացողը պէտք է նորից անցնէր ամբողջ գործընթացը: ԱՆՉԱն երաշխաւորագրեր էր տալիս նրանց, ովքեր ազգականներ չունէին Քանատայում, օժանդակում թոյլտուութիւն ստացած այն հայերին, որոնք չունէին ճանապարհածախսի միջոցներ՝ ապագայում դրանք փոխհատուցելու պայմանով: Եգիպտոսի իշխանութիւնները չէին խոչընդոտում ԱՆՉԱի գործունէութիւնը, քանի որ շահագրգռուած էին հայերի (ընդհանրապէս ազգային փոքրամասնութիւնների) արտագաղթով՝ մանաւանդ հաշուի առնելով գործազրկութեան բարձր մակարդակը[69]: Ըստ *Յուսաբերի*՝ միայն 1962ին Եգիպտոսից Քանատա էր տեղափոխուել 1000 հայ[70]:

Մեկնում էին նաեւ համայնքի ղեկավարները: Այսպէս, 1965 Յուլիսի 30ին Գահիրէի ազգային առաջնորդարանում ազգային իշխանութիւնները, Մամբրէ արք. Սիրունեանի նախագահութեամբ, կազմակերպեցին ողջերթի ընդունելութիւն ի պատիւ քաղաքական ժողովի ատենապետ Օննիկ Ծալեանի, որը տեղափոխւում էր Քանատա: Իր խօսքում, Ծալեանը խոստանում էր ծառայել Թորոնթոյի հայ համայնքին, ուր եւ հաստատուելու էր[71]:

Ինչպէս տեղեկացնում է Աւստրալիայում ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժնի վարիչի պաշտօնատար Վ. Պրոնինը՝ աւստրալական իշխանութիւններն ամէն կերպ խրախուսում էին հայերի մուտքը, քանի որ նրանք որակեալ մասնագէտներ էին, տիրապետում էին միքանի լե-

---

[67] Խմբագրական, «Մեր հայրենասիրութիւնը», *Յուսաբեր*, 19 Յուլիս 1963, էջ 1:

[68] Քանատա մեկնողների բժշկական քննութիւնը շատ խիստ էր, առանց դրա որեւէ դէպքում մեկնել ցանկացողին թոյլտուութիւն չէր տրւում: Բացի այդ, այնտեղ հասնելուց յետոյ ներգաղթողը կրկին բուժզննւում էր եւ որեւէ հիւանդութեան յայտնաբերման պարագայում ետ էր ուղարկւում Եգիպտոս (ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 326, թ. 5-6):

[69] Նոյն, ֆ. 875, ց. 3, գ. 12, թ. 9-10:

[70] «Քանատահայ գաղութը», *Յուսաբեր*, 26 Ապրիլ 1963, էջ 2:

[71] Զ.Պ., «Ողջերթի ընդունելութիւն ի պատիւ պր. Օննիկ Ծալեանի», *Ջահակիր*, 5 Օգոստոս 1965, էջ 2:

զուների: Աւստրալիան, եգիպտական իշխանութիւնների թոյլտուութեամբ, Գահիրէում բացել էր յատուկ ներգաղթի գրասենեակ՝ հայերին, ինչպէս նաեւ յոյներին հաւաքագրելու համար[72]:

Մինչեւ 1963 Աւստրալիա եկան փոքր թուով հայեր: 1962ին կառավարութիւնը որոշում կայացրեց՝ մէկ տարում մեծ թուով եգիպտահայերի ընդունելու մասին: Սա չէր վերաբերում ընդհանրապէս Եգիպտոսից արտագաղթել ցանկացողներին՝ այլ միայն հայերին (գաղթողները պէտք է ապացուցէին իրենց հայ լինելը): Այստեղ վճռական դեր ունէր ԱՆՉԱն, որը կարողացաւ ԱՄՆ կառավարութեանը ներգրաւել՝ միջնորդելու Աւստրալիային նման որոշում կայացնելու հարցում: Այս շրջանում եգիպտական կառավարութիւնը որեւէ սահմանափակում չմտցրեց արտագաղթող հայերի թուի խնդրով[73]:

1964 Մարտի 28ից Ապրիլի 10ը Մարտիկեանի գլխաւորութեամբ ԱՆՉԱի պատուիրակութիւնը այցելեց Աւստրալիա, որտեղ ունեցաւ մի շարք հանդիպումներ ինչպէս համայնքի ներկայացուցիչների, այնպէս էլ գաղթականական հարցերով տեղի պաշտօնեաների հետ[74]: Այդժամ ստեղծուեցին նաեւ ԱՆՉԱի յանձնախմբեր Սիտնիում եւ Մելպուրնում՝ գաղթող-

---

[72] Մելիքսէթեան, էջ 258-9: Տեղի աւստրալական հիւպատոսութիւնը դիմել էր *Յուսաբեր* եւ *Արեւ* թերթերին՝ յայտարարութիւն տեղադրելու, որ հիւպատոսութիւնը իրականացնում է այդ երկիր մեկնել ցանկացող եգիպտահայերի ընտրութիւն, սակայն խմբագրութիւնները հրաժարուեցին դա ծանուցել: Աւստրալիա ներգաղթի հարցերով զբաղուող մի պաշտօնատար հանդիպում ունեցաւ նաեւ Մամբրէ արք. Սիրունեանի հետ՝ խնդրելով որ նա կոչ անի եգիպտահայութեանը տեղափոխուել Աւստրալիա, սակայն վերջինս մերժեց՝ ասելով, որ ինքը ցանկանում է, որ հայերը հայրենադարձուեն (ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 326, թ. 6-7): Հետաքրքրական է, որ դաշնակցական պաշտօնաթերթ *Յուսաբեր*ը եւս ինչպէս նրան հակառակ քաղաքական դիրքերում գտնուող *Արեւ*ը հրաժարւում է տեղադրել այդ յայտարարութիւնը: Սակայն օրինակ *Յուսաբեր*ը 1963 Յուլիսին հրատարակում է Աւստրալիայի մասին մանրամասնօրէն պատմող յօդուածաշար (Թարգմ. Յ. Քէշիշեան, «Աւստրալիան ինչպէս որ տեսայ», *Յուսաբեր*, 11 եւ 12 Յուլիս 1963): Յաճախ Եգիպտոսից արտագաղթելու մասին ծանուցումներ, օդանաւային ընկերութիւնների գովազդեր էին յայտնւում եգիպտահայ պարբերականներում (*Ջահակիր*, 22 Ապրիլ 1965, էջ 3 / 17 Յունիս 1965, էջ 6 / 9 Նոյեմբեր 1967, էջ 5 / 12 Յունիս 1969, էջ 5 / 21 Մայիս 1970, էջ 5 / 22 Հոկտեմբեր 1971, էջ 2 / *Արեւ*, 25 Մայիս 1963, էջ 4 / 15, 19 եւ 22 Յունիս 1963 / 30 Յուլիս 1964, էջ 4 / 31 Դեկտեմբեր 1964, էջ 8 / 29 Յունիս 1965, էջ 4 / 5 Հոկտեմբեր 1965, էջ 4 / 17 Ապրիլ 1975, էջ 4 / *Յուսաբեր*, 2 Յունիս 1962, էջ 3 / 31 Յուլիս 1962, էջ 3 /30 Հոկտեմբեր 1962, էջ 3 / 2, 14 եւ 26 Մարտ 1963 / 24 Ապրիլ 1963, էջ 3 / 12 եւ 28 Յունիս 1963 / 4 Յունուար 1964, էջ 4 /19 Սեպտեմբեր 1964, էջ 3 / 16 եւ 18 Յունուար 1965 / 21 Փետրուար 1966, էջ 3 / 17 Յունուար 1967, էջ 2 / 25 Մայիս 1968, էջ 3:

[73] Kirkland, էջ 91-3:

[74] Թղթակից, «"Անչա"յի պատգամաւորութիւնը Աւստրալիոյ մէջ», *Հայրենիք*, Պոստոն, 2 Մայիս 1964, էջ 3:

ներին օգնելու համար: Այդ այցը լուսաբանող յօդուածում կարդում ենք. «*ԱՆՀԱյի պատգամաւորութեան այցը Աւստրալիա՝ պիտի ունենայ իր օգտակար հետեւանքները գաղութիս զօրացման ու բարգաւաճման տեսակէտէն եւ յանձնախումբերու կազմութիւնը պիտի դիւրացնէ նոր գաղթողներու տեղաւորումը*»[75]:

Աւստրալիա մեկնած եգիպտահայերի մօտ 4/5ը նախապէս ցանկացել էր տեղափոխուել այլ պետութիւններ՝ առաւելաբար Քանատա, նաեւ ԱՄՆ ու Պրազիլ: Հիմնական պատճառը թէ ինչու՛ նրանք չէին կարողացել տեղափոխուել այդ երկրներ՝ չափաբաժինների համակարգն էր, որի արդիւնքում ընտանիքի անդամներից մէկը (շատերն ունէին տարբեր երկրների քաղաքացիութիւն) կարող է ստիպուած լինէր տարիներով սպասել իր հերթին: Դրա հետեւանքով ողջ ընտանիքը չէր մեկնում: Յաճախ նաեւ ԱՄՆ չափաբաժնի պատճառով մեկնել չյաջողելու դէպքում գաղթողները նախընտրում էին Աւստրալիան Քանատային՝ հաշուի առնելով կլիմայական պայմանները: Երկրի ընտրութեան խնդրում կարեւոր դեր ունէր ազգականների եւ ընկերների առկայութիւնը. Աւստրալիա եկող հայերի 75 տոկոսը այստեղ ունէր հովանաւորողներ: 1965ից սկսած դէպի այս երկիր հայերի գաղթը պայմանաւորուած էր 1963-64՝ այստեղ «Հայկական էմիգրացիայի նախագծ»ով եկածների հետ ընտանիքների վերամիաւորմամբ: Այսպիսով մեծաթիւ եգիպտահայեր Աւստրալիա տեղափոխուեցին 1963-65ին, յատկապէս՝ 1963ին[76]:

Եգիպտահայերի արտագաղթի մասին Բ. Հաճընլեանը 1963ին պատկերաւոր կերպով գրում է. «*Վազող ջուրերու պէս կը հոսին օտարութեան մէջ ու կ'անյայտանան, ինչպէս հոսուն ջուրերը, ինչպէս առուակները, ինչպէս գետերը՝ որ կը կորսուին ծովերու եւ ովկէանոսներու մէջ, առանց հետք մը ձգելու, առանց անուշ ջուրի հետքի, կը շոգիանան ու կ'օտարանան*»[77]:

Ըստ Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան 1967ի տեղեկանքի՝ 1960-67՝ Եգիպտոսից արտագաղթած 14 հազար հայերից 7 հազարը տեղափոխուել էր Քանատա[78], 3 հազարը՝ Աւստրալիա, իսկ միւսները՝ ԱՄՆ,

---

[75] Թղթակից, «Անչայի պատգամաւորութիւնը Աւստրալիոյ մէջ», *Յուսաբեր*, 30 Ապրիլ 1964, էջ 4:

[76] Kirkland, էջ 93-5:

[77] Բ. Հաճընլեան, «Արտագաղթողները», *Արարատ*, 30 Օգոստոս 1963, էջ 2:

[78] Ըստ պաշտօնական վիճակագրութեան՝ 1955-66՝ Եգիպտոսից Քանատա տեղափոխուեց 2864 հայ: Ընդ որում նրանցից 2725ը՝ 1962-66ին (Garo Chichekian, *The Armenian Community of Québec*, Montreal, 1989, էջ 50): Ըստ Հ. Թաքուշեանի՝ Քանատա էին եկել 4500 հայեր Եգիպտոսից (Harold Takooshian, "Armenian Immigration to the United States from the Middle East," *Journal of Armenian Studies*, 1-2(3):1986-87, էջ 144): Ակնյայտ է, որ Քանատա տեղափոխուեցին պաշտօնական տուեալներից էապէս աւելի մեծ թուով եգիպտահայեր:

Պրազիլ, Լիբանան եւ եւրոպական երկրներ: Նոյն շրջանում հայրենադարձուել էր 700 հայ: Եթէ Քանատա արտագաղթել ցանկացողների թիւն անընդհատ աճում էր, ապա Հայաստան ներգաղթել ցանկացողներինը՝ պակասում: 1962ին հայրենադարձուելու համար գրանցուել էր 2 հազար, իսկ Քանատա մեկնելու՝ 200 հայ, մինչդեռ 1966ին Քանատա մեկնելու համար՝ 1000, իսկ Հայաստան ներգաղթելու՝ 60 հոգի: Ընդ որում վերջին 60ից ոմանք փորձել էին մեկնել Քանատա, սակայն մերժուել էին եւ դրանից յետոյ միայն որոշել հայրենադարձուել: Սա պայմանաւորուած էր նրանով, որ եգիպտահայերի զգալի մասը առեւտրականներ ու գործարարներ էին, որոնք ԽՍՀՄում չէին կարող շարունակել իրենց գործունէութիւնը: Նրանք բացասական վերաբերմունք ունէին ընկերվարութեան նկատմամբ, որի որոշ դրսեւորումներ բախտ էին ունեցել տեսնելու Եգիպտոսում: Հայրենադարձուածները իրենց հարազատներին նկարագրում էին այն վիճակը որում յայտնուել էին, ինչը նուազեցնում էր հայրենադարձուելու ցանկութիւնը[79]:

Դաշնակցականները ներկայացնում էին Խորհրդային Հայաստանի իրական դժուարութիւնները, ինչի հետեւանքով ոմանք ետ էին կանգնում հայրենադարձուելու մտքից[80]: Մամբրէ սրբազանը համայնքում քարոզում էր կա՛մ մնալ, կա՛մ հայրենադարձուել: Որոշ ընտանիքներում բաւականին դժուար վիճակ էր ստեղծուել, քանի որ մի մասը ուզում էր հայրենադարձուել, մի մասը՝ մնալ, իսկ միւսները՝ արտագաղթել Քանատա եւ այլ երկրներ[81]:

Արդիւնքում 1962-67՝ Եգիպտոսից հայրենադարձուեց ընդամէնը 708 հոգի[82]: Այս անգամ ի տարբերութիւն 1946-48ին, եգիպտահայերը ունէին ընտրութիւն կատարելու հնարաւորութիւն: Եթէ առաջին փուլում հայրենադարձում էին վերջնականապէս հայրենիքում հաստատուելու ցանկութեամբ՝ մտածելով, որ Հայաստանում իրենց սպասում են քիչ թէ շատ բարուօք պայմաններ, ապա երկրորդ փուլում հայրենադարձում էին առաջին հերթին այն պատճառով, որ ցանկանում էին արտագաղթել Եգիպտոսից: Այս անգամ արդէն Հայաստան եկողները անհամեմատ աւելի քաջատեղեակ էին թէ ուր են գնում եւ ինչպիսի կեանք է իրենց սպասելու Հայաստանում: Խորհրդային Հայաստանի կազմակերպչական աշխատանքի թերութիւնները, ողջ եգիպտահայութեանը կամ տասնեակ հազարաւոր եգիպտահայերի ընդունելու պատրաստակամութիւն չունենալը յանգեցրին

---

[79] ՀԱԱ, ֆ. 875, ց. 3, գ. 12, թ. 7-8:

[80] Սարգիս Իզմիրլեան, «Լուծե՞լ հայ կուսակցութիւնները», *Սփիւռք*, 21 Մարտ 1964, էջ 4:

[81] Սիլվա Կապուտիկեան, *Քարաւանները դեռ քայլում են*, Հայաստան հրատ., Երեւան, 1964, էջ 458, 464:

[82] Իսկ 1962-82՝ Եգիպտոսից հայրենադարձուածների թիւը 727 էր (Մելիքսէթեան, էջ 279, 299):

1960ականներին ընդամէնը միքանի հարիւր եգիպտահայերի հայրենդարձուելուն: Միաժամանակ յստակօրէն կարելի է ասել, որ եգիպտահայերի զգալի մասը չէր ցանկանում ԽՍՀՄ տեղափոխուել, նոյնիսկ եթէ խորհրդային կառավարութիւնը աւելի վճռական միջոցների դիմէր: Դրա հիմնական պատճառը Խորհրդային Հայաստանում առկայ վիճակի մասին պատկերացում ունենալն էր:

Համեմատելով 1960ականների արտագաղթը հայրենադարձութեան հետ՝ նշելի է նաեւ, որ ԱՆՉԱ կազմակերպութեանը, փաստօրէն, յաճախ յաջողւում էր շատ աւելի արդիւնաւէտ աշխատանք կատարել, ինչի հետեւանքով բազմահազար մարդիկ նախընտրում էին տեղափոխուել երկրներ, որոնց մասին գրեթէ պատկերացում չունէին: Միւս կողմից, ակնյայտ է որ եթէ Եգիպտոսում չստեղծուէին այն լքելու մղող պայմաններ՝ այդքան կարճ ժամանակում չէին արտագաղթի երկտասնեակ հազար հայեր, որը միքանի անգամ գերազանցում է 1946-48ի հայրենադարձուածների թիւը:

1969ի դրութեամբ Եգիպտոսից մեկնել էր շուրջ 20 հազար հայ՝ մեծմասամբ Քանատա եւ Աւստրալիա (երբեմն էլ՝ Քանատայից Աւստրալիա)[83]: 1971ին եւս նշւում է, որ Եգիպտոսից արտագաղթած հայերի թիւը 20 հազար է[84]: 1970ին Հրանդ Գանգրունին նշում է, որ Եգիպտոսի հայ համայնքը կորցրել է իր թուի ¾ը[85]:

1970-81՝ Եգիպտոսում տեղի ունեցան քաղաքական եւ տնտեսական լուրջ փոփոխութիւններ: Յատկապէս տնտեսական բարեփոխումները որոշակիօրէն ազդեցին յօգուտ հայերի շարունակական արտագաղթի նուազմանը: Չնայած նոր իշխանութիւնները փորձում էին տնտեսական հնարաւորութիւններ տալով կանխել այն, սակայն ներքաղաքական վիճակի լարումը նպաստեց 1970ականների վերջում եւ 1980ականների սկզբում արտագաղթի շարունակմանը[86]:

Այդպիսով Եգիպտոսից արտագաղթեց հայերի շուրջ 3/4ը: Եթէ 1950ականների սկզբում այստեղի հայերի թիւը հաշւում էր շուրջ 30-40 հազար, ապա 1970ականների սկզբում մնացել էր շուրջ 12 հազար, իսկ 1970ա-

---

[83] Վանիկ, «Եգիպտոս», *Արարատ*, 12 Օգոստոս 1969, էջ 2:

[84] Հարցազրոյցը վարեց Հ. Գանգրունի, «Եգիպտահայ գաղութը Բ. համաշխարհային պատերազմի ընթացքին եւ յետոյ», *Արարատ*, 18 Հոկտեմբեր 1971, էջ 3:

[85] Հրանդ Գանգրունի, «Եգիպտահայ գաղութը անտէր չէ՛», *Ջահակիր*, 3 Սեպտեմբեր 1970, էջ 2:

[86] Ա. Խաչատրեան, «Եգիպտահայ համայնքը 1970-1981 թուականներին», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 3:2008, էջ 50-5: Մեր օրերում Եգիպտոսից, մասնաւորապէս Աղեքսանդրիայից, արտագաղթի մասին տե՛ս՝ Անժիկ Յակոբեան-Կանիմեան, «Կրկնագա՞ղթ թէ՞ ճակատագիր», *Տեղեկատու*, Գահիրէ, Հոկտեմբեր, 65:2012, էջ 4-5:

կանների վերջում՝ 8 հազար[87] հայ, որոնց մի մասն էլ արտագաղթեց յետագայ տասնամեակների ընթացքում: Ինչպէս նշուեց գաղթի հիմնական ուղղութիւններն էին Քանատան եւ Աւստրալիան: Զգալի թուով եգիպտահայեր էլ արտագաղթեցին ԱՄՆ, Պրազիլ, Լիբանան[88], Ֆրանսիա, Զուիցերիա, Մեծն Բրիտանիա, Արժանթին[89], ինչպէս նաեւ Հարաւափրիկեան Հանրապետութիւն, Յունաստան[90], Աւստրիա[91], Սիէրա Լիոնէ[92] եւ այլ երկրներ: Հայրենադարձուած որոշ եգիպտահայեր էլ յետագայում հաստատուեցին ԽՍՀՄ այլ հանրապետութիւններում՝ մասնաւորապէս Ռուսաստանում[93]:

2008ին հրատարակուած եգիպտահայ վարժարանների աշակերտների համաշխարհային հաւաքի *Յուշամատեան*ում զետեղուած են 3903 եգիպտահայերի տուեալներ[94]: Այն օգնում է պատկերացում կազմել թէ 2008ի դրութեամբ եգիպտահայերը ո՛ր երկրներում են բնակուել: Ամէնամեծաթիւ խումբը, ըստ այդմ, Քանատայում գտնուող եգիպտահայերն են՝ 1400 հոգի, որոնց յաջորդում են ԱՄՆում՝ 1363, Աւստրալիայում՝ 507, Եգիպտոսում՝ 410, Հայաստանում՝ 91, Ֆրանսայում՝ 39, Մեծն Բրիտանիայում՝ 22, Զուիցերիայում՝ 19, Պրազիլում՝ 13, Իտալիայում՝ 10, Արժանթինում՝ 5, Շուէտում՝ 3, Գերմանիայում՝ 3, Հարաւային Ափրիկէում՝ 2, Եթովպիայում՝ 2, Յորդանանում՝ 2, Լիբանանում՝ 2, Հոլանտայում՝ 2, Յունաստանում՝ 1,

---

[87] Աւետիս Եափուճեան, «Մշակութային կեանքը եգիպտահայ գաղութին մէջ», *Սովետական Հայաստան*, 1:1979, էջ 33:

[88] Լիբանանում իրենց գործունէութեամբ աչքի ընկած եգիպտահայերից էին բեմադրիչ Անայիս Յովհաննիսեանը եւ նկարչուհի Լիւսի Թիւթիւնճեանը: Վերջինիս մասին տե՛ս՝ http://www.artgallery.hamazkayin.com/about.html (դիտուած է՝ 29.05.2021):

[89] Արժանթին տեղափոխուած եգիպտահայերի օրինակներ տե՛ս՝ Vahan Hovivian (1899-1981), http://agbuegypt.com/artist/vahan-hov Ապրիլ ian/#read-more (դիտուած է՝ 29.05.2021), նաեւ՝ Աւետիս Եափուճեան, *Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն*, Գահիրէ, 1981, էջ 392:

[90] Կապուտիկեան, էջ 467:

[91] Աւստրիա տեղափոխուած եգիպտահայերից էր Վահէ Պալգճեանը: Նրա գործունէութեան մասին տե՛ս՝ Եափուճեան, էջ 390-1:

[92] Դէտ, «Ֆրիդաունի մէջ», *Յուսաբեր*, 5 Փետրուար 1965, էջ 2:

[93] Այդպիսի օրինակ է Հրաչեայ Գաբուճեանը, որը հայրենադարձուել է 1948ին, 1953ին աւարտել ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտը, ապա տեղափոխուել Մոսկուա, որտեղ էլ շարունակել է իր գործունէութիւնը: Նրա եղբայրը՝ Վարդգէս Գաբուճեանը եւս տեղափոխուել է Մոսկուա եւ գիտահետազօտական գործունէութիւն ծաւալել Ռուսաստանում (Եափուճեան, էջ 575-7):

[94] *Յուշամատեան եգիպտահայ վարժարաններու աշակերտներու համաշխարհային հաւաք: 18-24 Սեպտեմբեր 2008*, Երեւան-Հայաստան, խմբ.՝ Ն. Ասլանեան, Մ. Մանաւեան եւ ուրիշներ, Լուսակն, Երեւան, 2008, էջ 127-65:

Չեխիայում՝ 1, Ռուսաստանում՝ 1 բնակուող եգիպտահայերը, իսկ հինգ հոգու պարագայում երկիր նշուած չէ:

Եգիպտոսից արտագաղթը արտայայտութիւն էր գտնում նաեւ գեղարուեստական աշխատանքներում: Այսպէս, Ալեքսանդր Սարուխանի՝ եգիպտահայերի օտարամոլութիւնը ծաղրող *Մենք հայերէն չե՞նք գիտեր* երգիծական թատերախաղում դերակատարների մեծ մասը, ով ամէն կերպ փորձում էր նմանուել օտարներին, քննարկում է Եգիպտոսը լքելու եւ Քանատայում կամ Աւստրալիայում հաստատուելու տարբերակը[95]: Քանի որ այն նպատակ ունէր նաեւ քարոզել հայրենադարձութիւնը՝ հերոսներից մէկը վերջում կատարում է հետեւեալ եզրակացութիւնը. «*Ափեն մը Քանատա, Աւստրալիա, Պրազիլ ֆալան հաւեսլենմիշ եղանք, բայց ինծի անանկ կու գայ կոր որ վերջ իվերջոյ ամէնուս երթալիք տեղը ՀԱՅԱՍՏԱՆՆ Է…*»[96]:

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

1978ին Անդրէասեանը Եգիպտոսից հայերի արտագաղթի հետեւանքների մասին գրում էր. «*Սփիւռքահայ տեղաշարժը իր ամէնէն ցաւագին հետեւանքներով ազդեր է Եգիպտոսի հայ գաղութին տնտեսական վիճակին, ազգային հիմնարկներուն, եւ բնականօրէն՝ հոգեբանական դրութեան վրայ, նաեւ լքուած ըլլալու վիաւրութեամբ համակելով համայնքներու առաջնորդող դէմքերն ու գործօն խաւերը*»[97]: Եւ իսկապէս, արդէն 1970ականների վերջում, թերեւս ընդհանրապէս 1945-88՝ Սփիւռքի ներքին տեղաշարժերի ենթահողում Եգիպտոսը ամէնից շատ տուժած համայնքն էր՝ եթէ հաշուի առնենք արտագաղթողների տոկոսային յարաբերակցութիւնը ողջ համայնքի բաղդատմամբ: Իհարկէ, կային նաեւ այլ համայնքներ, որտեղից նշուած շրջանում արտագաղթեց համայնքի մեծագոյն մասը, սակայն դրանք Սփիւռքի համար չունէին Եգիպտոսին քիչ թէ շատ մօտիկ նշանակութիւն (թէ՛ որակական, թէ՛ քանակական ցուցանիշերով):

---

[95] Ալ. Սարուխան, *Մենք հայերէն չե՞նք գիտեր (երգիծախաղ սփիւռքահայ բարքերէն երեք արարուածով)*, տպ. Ոսկետառ, Գահիրէ, 1963, էջ 42-5:

[96] Նոյն, էջ 76: Արտագաղթի նիւթը արծարծուում է նաեւ նոյն հեղինակի այլ աշխատանքում, որտեղ դերակատարներից մէկի մի զաւակը գաղթել էր Քանատա, իսկ միւսը պատրաստուում էր տեղափոխուել Աւստրալիա (Ալ. Սարուխան, *Ես քեզ գովեմ, դուն զիս (կատակախաղ 2 արար)*, տպ. Ոսկետառ, Գահիրէ, 1974, էջ 8): Արտագաղթի թեման է արծարծուում նաեւ Քամփինասում (Պրազիլ) հաստատուած Կարօ Պոհճալեանի պատմուածքներում (Կարօ Պոհճալեան, «Հովը թէլ-թէլ կը տանի…», 2019, առցանց հրատ.. նաեւ նոյնի՝ «Աչքերնիս լո՛յս …» *Նոր օր*, Ալթաթինա, 7 Սեպտեմբեր 2021, https://noror.org/2021/09/07/achkernis-loys/):

[97] Անդրանիկ Անդրէասեան, «Սփիւռքահայ տեղաշարժեր», *Զարթօնք*, 21 Դեկտեմբեր 1978, էջ 2:

1960ականների սկզբում արտագաղթը առաջ բերեց իրարանցում ու խուճապային տրամադրութիւններ. «*Պահ մը այնպէս եղաւ, որ կը ջլատուէին բոլոր գործերը, ազգային-հաւաքական բոլոր աշխատանքները: Խուճապ մը սկսած էր տիրել, անգիտակից եւ ոչխարային: Ու կը լքուէին ազգային բոլոր արժէքներն ու կենսական խնդիրները: Նոյնիսկ հայ դպրոցը*»[98]:

Մեծագոյն վնասներ կրեցին համայնքային բոլոր կառոյցները: Դրանց թիւը մեծ էր, իսկ գործունէութեան արդիւնաւէտութիւնը բաւականին թուլացել էր[99]: Օրինակ Գալուստեան վարժարանի աշակերտների թիւը 900 աշակերտից 1971ին իջել էր 160ի[100]: Գաղութի նօսրացման հետեւանքով գոյութիւն ունէր միայն մէկ վարժարանի անհրաժեշտութիւն, ուստի որոշուեց Գալուստեան վարժարանը տեղափոխել նոր, աւելի յարմարաւէտ ու փոքր շէնք եւ միացնել Նուպարեան վարժարանին: Սակայն դրան դէմ էր ՀՅԴն, որը պահանջեց թեմական ժողովի նոր ընտրութիւններ անցկացնել: Իվերջոյ կայացուեց որոշում նոր ընտրութիւններ անցկացնելու՝ դրանցում միասնական ցուցակ կազմելու, սակայն Գալուստեան վարժարանը պահելու մասին[101]:

Արդէն 1962ին արտագաղթի հետեւանքով փակուեց Աղեքսանդրիայի Հայ Կաթողիկէ Անարատ Յղութեան Մայրապետերի օրիորդաց յատուկ վարժարանը, 1964ին՝ նոյն քաղաքի Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Մխիթարեան վարժարանը, իսկ 1965ին՝ Գահիրէի Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Մխիթարեան վարժարանը[102]: Արտագաղթի հետեւանքով կրթական կառոյցների թուլացման մասին եգիպտահայ մամուլը գրում էր դեռեւս արտագաղթի ամէնաեռուն շրջանում: Օրինակ *Յուսաբեր*ը դատապարտում էր Աղեքսանդրիայում հայկական վարժարանի փակումը՝ գրելով, որ ամէն մէկի առանձին մեկնումը բացատրելի է, բայց հաւաքական առումով ունենում է «պարտուողական» հետեւանքներ[103]: Սակայն այսպիսի հրապարակումները, բնականաբար, գործընթացի վրայ որեւէ ազդեցութիւն չէին ունենում:

---

98 Խմբագրական, «Վերակազմակերպում (հայահոծ գաղութներու հակագործունէութիւնը եւ մեր պարտքը)», *Ջահակիր*, 12 Մարտ 1964, էջ 1:

99 Մեր խօսքը, «Ուժերու կեդրոնացում», *Հոկտեմբեր*, 3-5(44-46):1980, էջ 64-6:

100 Շրջուն թղթակից, «Հիանալի գաղութ մը որ կը դիմադրէ», *Արարատ*, 3 Նոյեմբեր 1971, էջ 3: Եթէ 1956-57 կրթաշրջանում Գալուստեան դպրոցի աշակերտների ընդհանուր թիւը 750 էր, ապա 1964-65ին՝ 390 (Գարտաշեան, *հտր. Բ.*, Վենետիկ, 1986, էջ 471):

101 ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 576, թ. 3, 5-6:

102 Ս. Պայրամեան, *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ*, Նուպար տպագրատուն, Գահիրէ, 2017, էջ 48, 50, 52:

103 Բ. Վ. Ն., «Հայ վարժարան մը կը փակուի...», *Յուսաբեր*, 17 Յուլիս 1963, էջ 1:

Զանգուածային արտագաղթի ծաւալման շրջանում դադարեցին գործել ոչ միայն դպրոցները: Այսպէս օրինակ, 1961ին լուծարուեց Կիզէի Հայ Կրթասիրաց Միութիւնը, որը հիմնուել էր 1930ին: 1962ին փակուեց «Սահակ-Մեսրոպ» տպարանը, քանի որ նրա հիմնադիրներից Վահրամ Գալեմքեարեանը արտագաղթել էր Քանատա[104]:

Կառոյցների վերացումը շարունակուեց նաեւ արտագաղթի զանգուածային փուլից յետոյ: Այսպէս, 1980ին դադարեց գործել Աբգարեան ազգային դարմանատունը, որը հիմնուել էր 1957ին, իսկ 1985ին կազմալուծուեց Աղեքսանդրիայի Հայ Կարմիր Խաչը: 1995ին Գահիրէի «Յուսաբեր» ակումբը դադարեցրեց իր գործունէութիւնը՝ վարչականօրէն միաւորուելով Հելիոպոլիսի նոյն ակումբին: Դրա պատճառը Գահիրէի կենտրոնական շրջանում հայերի նուազումն էր արտագաղթի, նաեւ Հելիոպոլիս փոխադրութեան հետեւանքով[105]:

Բնականաբար, խիստ թուլացան նաեւ կուսակցութիւնները: Ըստ Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան տուեալների՝ եթէ 1959ին ՀՅԴն Եգիպտոսում ունէր 400 անդամ, ապա 1960ին՝ 350, 1962ին՝ 320, 1967ին՝ 80, իսկ 1969ին՝ 60-70[106]: Սա հետեւանք էր արտագաղթի: Ընդ որում յատկապէս մեծ թուով դաշնակցականներ մեկնել էին Քանատա: Ըստ Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան տուեալների՝ 1960ականներին Եգիպտոսի իշխանութիւնները խրախուսում էին հնչակեանների եւ ռամկավարների գործունէութիւնը եւ ճնշում դաշնակցականներին[107]: Էապէս նուազեց նաեւ ՌԱ եւ Հնչակեան Կուսակցութիւնների անդամների թուաքանակը: Յատկանշական է, որ գաղութի անկումը յանգեցրեց կուսակցութիւնների միջեւ քաղաքական պայքարի վերացման[108]:

Սկզբունքօրէն փոխուեց Սփիւռքի կարեւորագոյն կառոյցներից ՀԲԸՄի կարգավիճակը: Եթէ նախկինում Եգիպտոսի ՀԲԸՄ վարչութիւնը Մերձաւոր Արեւելքի հիմնական մարմինն էր եւ համակարգում էր նաեւ Լիբանանի, Սիրիայի, Պաղեստինի, Իրաքի եւ Իրանի մասնաճիւղերի աշխատանքը՝ 1950ականների վերջից այն իր այդ դերը զիջեց Լիբանանի վարչութեանը[109]:

Բացի առանձին կառոյցների ղեկավարներից՝ արտագաղթում էին նաեւ համայնքային ղեկավար շրջանակների ներկայացուցիչները: Արդէն 1959ին Աղեքսանդրիայի թեմական ժողովի անդամներից երեքը հեռացել

---

[104] Պայրամեան, էջ 137-8, 231:

[105] Նոյն, էջ 122-3, 159, 130:

[106] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 273, թ. 4, գ. 326, թ. 3, գ. 460, թ. 4:

[107] Նոյն, ֆ. 875, ց. 3, գ. 12, թ. 5-6:

[108] Հ. Գանգրունի, «Գաղութը որ կը դիմադրէ», *Արարատ*, 4 Նոյեմբեր 1980, էջ 2:

[109] Յարութիւն Ռ. Գէորգեան, Վահէ Թաշճեան, *Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հտր. 2 (1941-2006)*, հրատ.՝ ՀԲԸՄ կեդրոնական վարչութիւն, Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006, էջ 370:

էին Եգիպտոսից[110]: Այդ թեմայով 1961ին Աղեքսանդրիայի թեմական ընտրութիւնների շրջանում այսպիսի երգիծական պատում է ներկայացնում *Յուսաբերը*. «*Երկու ազգայիններ կը խորհրդակցին յառաջիկայ ընտրութեանց թեկնածուներուն շուրջ:*

Ա.- Շուարած մնացած եմ, չեմ գիտեր քուէս որու՞ տամ:

Բ.- Որու՛ն կ'ուզես՝ տուր, միայն թէ ընտրածդ այնպիսի մարդիկ ըլլան, որ ընտրուելէ 2-3 ամիս ետք երկրէն փախուստ տալու մասին չմտածեն»[111]:

Արտագաղթից մեծապէս տուժեց նաեւ եգիպտահայ թատերական կեանքը: 1950ականներին եգիպտահայ թատերախմբերի գործունէութեան մասին խօսելուց յետոյ Եափուճեանը գրում է. «*Դժբախտաբար սակայն, 1960ական թուականներու արտագաղթը վերջնականապէս քայքայեց զանոնք: Եւ այնուհետեւ, պատահական կամ մասնաւոր առիթներով, բեմադրիչներ մշակութային զանազան ակումբներէ հաւաքուած երիտասարդ սիրողներով ներկայացումներ կը բեմադրեն տարին անգամ մը կամ առաւելագոյնը երկու անգամ*»[112]: Համանման էր իրավիճակը երբ խօսք էր գնում եգիպտահայ նկարիչների մասին. «*Այս սերունդը սակայն, այսօր գոյութիւն չունի Եգիպտոսի մէջ, ոմանք հեռացան կեանքէն, մինչ ուրիշներ հեռացան երկրէն եւ հաստատուելով օտար այլ երկինքներու տակ, հոն սկսան գործել, որոշապէս դուրս ելլելով հայկական ազգային շրջանակէն եւ համբաւի փիրանալով օտար դժուարահաճ միջավայրերու մէջ*»[113]:

Ըստ Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպանութեան 1969ի տեղեկանքի՝ ԱՄՆ, Աւստրալիայի եւ Քանատայի դեսպանութիւններն առաջին հերթին մուտքի թոյլտուութիւն էին տալիս երիտասարդ, օտար լեզուներ իմացող մասնագէտներին: Դրա հետեւանքով համայնքը քանակականի համեմատ՝ որակական առումով աւելի մեծ կորուստներ ունեցաւ: Առաջացաւ համայնքային գործիչների պակաս: Գաղթի հետեւանքով առաջացաւ նաեւ սեռոյթային անհաւասարութիւն, քանի որ արտագաղթողների մէջ մեծամասնութիւն էին տղամարդիկ (յատկապէս երիտասարդ), այստեղ մնացած հայ աղջիկները յաճախ ստիպուած ամուսնանում էին այլազգիների հետ[114]:

Չնայած արտագաղթի բոլոր բացասական հետեւանքներին, պէտք է նշել, որ Եգիպտոսում մնացած հայերը բաւականին արդիւնաւէտ ցանցա-

---

[110] Թղթակից, «Աղեքսանդրիոյ թեմական ընտրութիւնները», *Յուսաբեր*, 20 Փետրուար 1959, էջ 3:

[111] Ք. Ք., «Երգիծանքը աղեքսանդրահայ գաղութին մէջ», *Յուսաբեր*, 21 Ապրիլ 1961, էջ 2:

[112] Եափուճեան, էջ 366:

[113] Նոյն, էջ 424:

[114] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 460, թ. 2-3:

յին կապ ունէին Եւրոպա, Քանատա, ԱՄՆ եւ Աւստրալիա արտագաղթած եգիպտահայերի հետ[115]:

ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ ՔԱՆԱՏԱՅՈՒՄ

Ինչպէս նշուեց, եգիպտահայերի ամէնախոշոր խումբը տեղափոխուեց Քանատա: Այստեղ եկող ոչ-բոլոր եգիպտահայերն էին կարողանում միանգամից յարմար աշխատանք գտնել: Երգիծագիր Խորէն Տետէեանը, ներկայացնելով Մոնրէալ տեղափոխուող եգիպտահայերի առօրեան, ընդգծելով Եգիպտոսի եւ Քանատայի միջեւ առկայ տարբերութիւնները, խորհուրդ էր տալիս երկար մտածել մինչեւ արտագաղթելու որոշում կայացնելը, հաշուի առնել նոր երկրում իրենց սպասող հանգամանքները[116]: Արդէն 1963ին Մոնրէալից Գահիրէ ուղարկուած նամակում կարդում ենք.

> Եղբայրական ոգին ընդհանուր առումով շեշտուած է հայ զանգուածին եւ մասնաւորաբար եգիպտահայերուն մէջ: Երբ նորեկներ կը հասնին հոն եւ կը մօտենան հայկ[ական] շրջանակներուն, կը հիւրասիրուին մինչեւ որ իրենց համար յարմար բնակարան գտնեն:
>
> Եգիպտահայերը համբաւի տիրացած են արդէն իրենց յայտնաբերած բազմապիսի շնորհներով:
>
> ...Ըսենք, որ եգիպտահայերու մէջ անգործ մարդ չկայ, բոլորն ալ տուն տեղ եղած են, կ'աշխատին, տանելի կեանքի մը համար առօրեայ ծախսերը հոգալէ ետք խնայողութիւններ ալ կ'ընեն՝ իրենց ընտանիքին մնացած անդամներուն, նաեւ բարեկամներու Քանատա մուտքի արտօնութիւն ձեռք բերելու համար: Քիչ չէ թիւը այն ազգայիններուն, որոնք նախապէս գաղթողներու երաշխաւորութեան շնորհիւ կրցած են արդէն մեկնիլ եւ կամ մեկնումի պատրաստութեան մէջ են[117]:

Նշելի է, որ Թորոնթոյի ծխական խորհրդի նախաձեռնութեամբ հայ առաքելական ու աւետարանական յարանուանութիւնների անդամներից կազմուել էր նորեկ (գլխաւորապէս եգիպտահայ) գաղթականների տեղաւորման յանձնախումբ՝ Ժիրայր աբեղայ Թաշճեանի գլխաւորութեամբ: 1962 Սեպտեմբերի 23ին, մօտ 25 նորեկ ընտանիքների ընդունելութեան համար կազմակերպուած միջոցառման ժամանակ գաղութի հոգեւոր հովիւը, ընդգծելով եգիպտահայերի ազգային ոգին, հայութեանը մատուցած

---

[115] Zohry, էջ 7: Արտագաղթած եգիպտահայերի՝ եգիպտոսում մնացած հայրենակիցների հետ կապի օրինակ է «Կամք» մարզական միութեան նախկին անդամների պարագան: Նրանք արդէն 1958ի դրութեամբ ԱՄՆ, Արժանթին կամ Աւստրալիա գաղթած լինելու, ինչպէս նաեւ հայրենադարձուելու դէպքում շարունակում էին իրենց միութեան հետ հաղորդակցուել (Վահան Գաւուգճեան, «"Կամք"ը», *Յուսաբեր*, 27 Սեպտեմբեր 1958, էջ 3):

[116] Խորէն Տետէեան, «Քանատահայ նամականի», *Ջահակիր*, 13 Փետրուար 1964, էջ 3, 6:

[117] Ս. Յ., «Քանատահայ կեանք», *Յուսաբեր*, 24 Սեպտեմբեր 1963, էջ 2:

ծառայութիւնները, յոյս յայտնեց, որ նրանք միասնաբար աշխատանքներ կը ծաւալեն արդէն Քանատայում[118]:

Քանի որ եգիպտահայերը ամէնամեծ թուով գաղթեցին Քանատա, այստեղ նրանք ունեցան շօշափելի ազդեցութիւնը նոր-նոր ձեւաւորուող համայնքի վրայ: Ըստ Քանատայում ԽՍՀՄ դեսպանութեան 1978ի տեղեկանքի՝ այստեղի հայերի 45 տոկոսը եկել էր Եգիպտոսից, ինչպէս նաեւ մեծ թուով հայեր Թուրքիայից, Լիբանանից, Յունաստանից[119]: Ըստ 1981ի մարդահամարի՝ Մոնրէալի հայերի ամէնամեծ խումբը (23,6 տոկոսը) ծնուել էր Եգիպտոսում[120]: Նրանք Քանատայում փորձում էին պահպանել ինքնութիւնը, լեզուն՝ տանը խօսել հայերէն[121]:

Եգիպտահայերը այստեղ կարեւոր դեր կատարեցին համայնքային կառոյցների հիմնման եւ եղածների զարգացման տեսանկիւնից: Մասնաւորապէս 1958ին Մոնրէալում հիմնուած ՀՄԸՄ «Կամք» մասնաճիւղը, որը 1966ին միացուեց ընդհանուր կառոյցին, գլխաւորապէս բաղկացած էր եգիպտահայերից[122]: 1966ին Մոնրէալ այցելած ամերիկահայ արձակագիր Արամ Հայկազը գրում է. «*Արտակարգօրէն աշխուժ է գործօն ու հաւատաւոր է Մոնթրէալի գաղութը, որուն մեծամասնութիւնը Եգիպտոսէն գաղթած հայերէ կը բաղկանայ*»[123]:

Եթէ աւելի ուշ Քանատա գաղթող լիբանահայերը, իրանահայերը, ինչպէս նաեւ իրաքահայերը առաւելաբար հաստատւում էին Թորոնթոյում, ապա եգիպտահայերի բացարձակ մեծամասնութիւնը՝ Մոնրէալում[124]:

Քանատայում տարբեր տեղերից եկածները յաճախ սահմանափակւում էին ելքի նոյն երկրի հայրենակիցների հետ համագործակցելով. «*Եթէ միութիւններու մէջ, գործ մը պիտի ընեն մշակութային՝ եգիպտահայը եգիպտահայուն կը նայի եւ անոր համաձայն կը քուէարկէ...: Յունահայը յունահայուն կը նայի եւ անոր համաձայն կը քուէարկէ: Դուրս ելան իրարու միս կ'ուտեն, կը վիճին, կը վիճին... տարիներով..., կարծես թէ հայ չեն... Դադ-*

---

[118] Շ. Վ., «Ազգային կեանքը Թորոնթոյի մէջ», *Արեւ*, 29 Նոյեմբեր 1962, էջ 3:

[119] ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 37, թ. 4:

[120] Chichekian, էջ 54:

[121] Ս. Կապուտիկեան, *Խճանկար հոգու եւ քարտէզի գոյներից*, Սովետական գրող, Երեւան, 1976, էջ 90:

[122] *Հայ սփիւռք հանրագիտարան*, Հայկական հանրագիտարան, Երեւան, 2003, էջ 338:

[123] Արամ Հայկազ, «Այց՝ Մոնթրէալի մեր գաղութին», *Յուսաբեր*, 3 Դեկտեմբեր 1966, էջ 4:

[124] Գառնիկ Ք. Գ., *Պատմութիւն Ս. Յակոբի համայնքին որ ի Մոնթրէալ, Քանատա 1958-2008 (50-ամեակին առիթով)*, The Armenian Prelacy of Canada, Մոնթրէալ, 2009, էջ 20:

րած են հայ ըլլալէ...»[125]: Հետաքրքիր է Եգիպտոսից Քանատա եկած հայերի համեմատութիւնը յունահայերի հետ: Նրանք ունէին աւելի լաւ կրթութիւն, գիտէին անգլերէն կամ ֆրանսերէն (յաճախ երկուսն էլ), շատերը Եգիպտոսում աւելի բարուոք տնտեսական վիճակում էին, քան Յունաստանի հայերը[126]: 1978ին Քանատայում ԽՍՀՄ դեսպանատան տեղեկանքը եւս վկայում է, որ Եգիպտոսից եւ Լիբանանից եկողներն աւելի բարեկեցիկ կեանքով էին ապրում, քան Յունաստանից եւ Թուրքիայից եկածները[127]:

Եգիպտոսից արտագաղթած քանատահայերը կապեր էին պահպանում նախկին համայնքի հետ: Պարբերաբար քանատահայ զբօսաշրջիկների խմբեր էին այցելում Եգիպտոս[128]: Ակնյայտ էր եգիպտահայութեան հետաքրքրութիւնը քանատահայ համայնքի վերաբերեալ[129]:

Քանատայում մեծ թուով եգիպտահայերի հաստատումը նպաստում էր, որ այստեղ գործունէութիւն ծաւալեն նաեւ Եգիպտոսում մնացած հայերը: Այսպէս օրինակ, 1979ին Մոնրէալում կայացաւ եգիպտահայ նկարիչ Վահէ Վարժապետեանի ցուցահանդէսը[130]: Եգիպտոս էին այցելում նաեւ առանձին գործիչներ, ինչպէս օրինակ Լիւսի Քեսթէքեանը, որը եղել էր «Այծեմնիկ» տիկնանց միութեան ատենապետ[131]:

Քանատա են տեղափոխուել Եգիպտոսում համայնքային կառոյցների շրջանակներում աշխուժ գործունէութիւն ծաւալած Հայկ Ժամկոչեանը[132], Ժիրայր Բետերեանը[133], Բենիամին Մամուրեանը[134]: Արդէն այստեղ՝ Քա-

---

[125] *Սփիւռքահայութեան հոգեբանական հոլովոյթը եւ հայ դպրը*, տպ. Յուսաբեր, Գահիրէ, 1980, էջ 38:

[126] Chichekian, էջ 63:

[127] ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 37, թ. 4:

[128] «Քանատահայ զբօսաշրջիկներ Եգիպտոս կու գան», *Ջահակիր*, 8 Յուլիս 1971, էջ 2:

[129] Այդ առումով զարմանալի չէ, որ 1985ին Հայկական Ընթերցասրահում կայացաւ միքանի տարի առաջ Քանատա արտագաղթած Հայկ Ժամկոչեանի դասախօսութիւնը Քանատայի հայ համայնքի մասին (Զ. Պ., «Դասախօսութիւն «Քանատայի աճող գաղթօճախը», *Ջահակիր*, 14 Փետրուար 1985, էջ 2): Տարբեր երկրներում - յատկապէս Քանատայում - նախկին եգիպտահայերի հասած յաջողութիւն-ների կարելի է հանդիպել եգիպտահայ մամուլում (օրինակ՝ *Ջահակիր*, 17 Յունիս եւ 8 Յուլիս 1971, կամ՝ 31 Յունուար 1985, էջ 2):

[130] Վ. Գազանճեան, «Վահէ Վարժապետեան ցուցադրեց Մոնթրէալի մէջ», *Ջահակիր*, 27 Սեպտեմբեր 1979, էջ 1-2:

[131] «Համեստափայլ տիկին Լիւսի Քեսթէքեան խմբագրատունս այցելեց», *Ջահակիր* 27 Մարտ 1975, էջ 3:

[132] Քանատայում է հաստատուել 1980ին: Եղել է Գահիրէի *Ջահակիր*ի, *Հոկտեմբեր*, *Իմացարան* ամսագրերի խմբագիրը, 1977-80՝ դասաւանդել է Գալուստեան վարժարանում (Եափուճեան, էջ 64-6):

[133] Դեղագործութեան մասնագէտ Բետերեանը Թորոնթօ է տեղափոխուել 1962ին: Գահիրէում ապրելիս եղել է Հայ Գեղարուեստասիրաց Միութեան ուսանողական

նատայում համայնքային աշխուժ գործունէութեամբ աչքի էին ընկնում մի շարք եգիպտահայեր՝ ինչպիսիք են Վրէժ-Արմէն Արթինեանը[135], Արշաւիր Կէօնճեանը[136], Արսէն-Նուպար Մամուրեանը[137], Օննիկ Գալուստեանը[138], Շահէն Շամլեանը[139], Լեւոն Տէրասատուրեանը[140] եւ այլօք:

Բազմաթիւ եգիպտահայեր մեծ յաջողութիւնների են հասել մշակոյթի տարբեր ասպարէզներում: Այդպիսի օրինակներ են շարժանկարիչներ Ատոմ Էգոյեանը[141], Յակոբ Կուտսուզեանը[142]: Կերպարուեստի ոլորտում կարելի է նշել մի շարք եգիպտահայ ներկայացուցիչների՝ ինչպիսիք են Յով-

---

միութեան ատենապետը: Զբաղուել է նաեւ եգիպտագիտութեամբ (Եափուճեան, էջ 574-5):

134 Երգիչ Բ. Մամուրեանը Թորոնթօ է տեղափոխուել 1973ին: Եղել է Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան, Աղեքսանդրիայի ՀԲԸՄ աշխուժ անդամ, Պօղոսեան վարժարանի շրջանաւարտների միութեան ատենապետ (Եափուճեան, էջ 334-5):

135 Ծնուել է Գահիրէում, եղել է Մոնրէալի Ս. Յակոբ հայկական դպրոցի հիմնադիրներից, խմբագրել է *Հորիզոն* թերթը (Tom Vartabedian, "Vrej-Armen Artinian is Canadian Strong," *The Armenian Weekly*, 20 Հոկտեմբեր 2014, https://armenianweekly.com/2014/10/20/vrej-armen-artinian-canadian-strong/ (դիտուած է՝ 29.05.2021):

136 1961ին ուսումը շարունակելու համար տեղափոխուել է ԱՄՆ, 1966ին հաստատուել Մոնրէալում՝ որպէս դասախօս աշխատելով ՄքԳիլ Համալսարանում: 1988-95՝ եղել է ՌԱԿ կենտրոնական վարչութեան ատենապետ, քանատահայոց թեմի պատուաւոր ատենապետ, ՀԲԸՄ կենտրոնական վարչութեան փոխնախագահ (Եափուճեան, էջ 586-7. նաեւ՝ «Դոկտ. Արշաւիր Կէօնճեանին՝ 80ամեակի առթիւ», *Ազգ*, 5 Փետրուար 2016, էջ 2):

137 Աղեքսանդրիայի Պօղոսեան վարժարանի ուսուցիչը Մոնրէալում է հաստատուել 1967ին: Այստեղ մասնակցել է Թեքէեան Մշակութային Միութեան *Ապագայ* շաբաթաթերթի հիմնմանը եւ 1975-79՝ խմբագրել այն (Եափուճեան, էջ 221-2):

138 Մոնրէալ է տեղափոխուել 1976ին: Ուսուցչութեամբ էր զբաղուել Գալուստեան վարժարանում, 1962-71՝ մեկնելով Սուտան, վարել Խարթումի ազգային վարժարանի, ապա 1971-76՝ Աղեքսանդրիայի Պօղոսեան վարժարանի տնօրէնութիւնը: Գալով Քանատա՝ ուսուցչութեամբ է զբաղուել ՀԲԸՄ Արմէն-Քեպէք վարժարանում, վարել Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շաբաթօրեայ դպրոցի տեսչութիւնը (Եափուճեան, էջ 259-60):

139 Կարեւոր դեր է կատարել Մոնրէալի հայ մարզական կեանքում: Վարել է նաեւ տեղի ՀԲԸՄ վարչութեան փոխատենապետի պաշտօնը (Թղթակից, «Յուշ երեկոյ՝ նուիրուած ողբ. Շահէն Շամլեանի յիշատակին», *Ջահակիր*, 27 Մարտ 1980, էջ 2):

140 Կ. Գէորգեան, *Ամէնուն տարեգիրքը 1962, Թ. տարի*, Մշակ, Պէյրութ, 1961, էջ 340:

141 Հանրայայտ շարժանկարիչը ծնուել է 1960ին Գահիրէում, 1962ին իր ընտանիքի հետ միասին տեղափոխուել Վիքթորիա:

142 Ծնուել է Գահիրէում 1949ին, 1961ին ընտանիքով տեղափոխուել Քանատա:

սէփ Եղոյեանը[143], Լիլիան Գառնուկը[144], Յակոբ Խուպեսէրեանը[145], Վահէ Մուղալեանը[146], Աննա Պօղիկեանը[147], Յոլակ Պապիկեանը[148], Յարութիւն Գաւուքեանը (Գաւուք)[149], Արա Աւետիսեանը[150], Արտօ Չաքմաքչեանը[151] եւ այլօք: Գրական ասպարէզում ստեղծագործող եգիպտահայերից Մոնրէալում են հաստատուել Արսէն Երկաթը[152], Խորէն Տետէեանը[153]: Իսկ երաժշտարուեստում աչքի ընկած գործիչներից են Ժիրայր Գանթարճեանը[154],

---

[143] 1952ին Եգիպտոսից մեկնել է ԱՄՆ, այստեղ ստացել է կրթութիւն, 1956ին վերադարձել Գահիրէ: Յետագայում տեղափոխուել է Քանատա: Նրա հետ միասին Քանատա է մեկնել նաեւ իր կինը՝ նկարչուհի Շուշան Եղոյեանը (Եափուճեան, էջ 443-4):

[144] 1979ին Եգիպտոսի մշակոյթի նախարարութեան եւ Քանատայի դեսպանութեան հովանաւորութեամբ Գահիրէում կազմակերպել է իր աշխատանքների ցուցահանդէսը (Եափուճեան, էջ 439):

[145] Քանատա է տեղափոխուել 1961ին (Եափուճեան, էջ 454-6):

[146] Մոնրէալ է տեղափոխուել 1964ին, այստեղ ստացել կրթութիւն, ապա ուսանել Պոստոնում: Նորից վերադառնալով Քանատա՝ ստեղծագործում եւ նկարչութիւն է դասաւանդում Մոնրէալում (Եափուճեան, էջ 466-7):

[147] 1970ին տեղափոխուելով Մոնրէալ՝ ծաւալել է աշխուժ մասնագիտական գործունէութիւն (Եափուճեան, էջ 484-5):

[148] Երգիծանկարիչ Ց. Պապիկեանը Մոնրէալ է տեղափոխուել 1968ին, (Եափուճեան, էջ 499):

[149] Նշանաւոր լուսանկարիչ Յարութիւն Գաւուքեանը (Արթին Գաւուք) ծնուել է Մերսինում 1915ին, ապա հաստատուել Եգիպտոսում: 1958ին Գահիրէից ընտանիքով տեղափոխուել է Թորոնթօ: Երգիչ, երգահան Րաֆֆի Գաւուքեանը ծնուել է 1948ին Գահիրէում, 1958ին ընտանիքի հետ գաղթել է Թորոնթօ: Նրա եղբայրն է լուսանկարիչ Օննիկ Գաւուքեանը, որը ծնուել է 1945ին Գահիրէում: Նրանց քոյրը՝ 1952ին Գահիրէում ծնուած Էն Գաւուքեանը, եղել է Օնթարիօ նահանգի տեղեկատուութեան եւ գաղտնիութեան յանձնակատար (https://avproduction.am/?ln=am&page=person&id=3088 (դիտուած է՝ 29.05.2021). նաեւ՝ Photographer inspired by his new surroundings, *Niagara This Week*, May 12, 2006 [https://www.niagarathisweek.com/whatson-story/3292046-photographer-inspired-by-his-new-surroundings/ (դիտուած է՝ 29.05.2021]):

[150] Լուսանկարիչ Ա. Աւետիսեանը Մոնրէալ է տեղափոխուել 1962ին (Եափուճեան, էջ 413-4):

[151] Նշանաւոր քանդակագործը 1948ին հայրենադարձուել է, իսկ 1975ին արտագաղթել Քանատա: 1978ից քանդակագործութիւն է դասաւանդել Քեպէքի Համալսարանում:

[152] Մոնրէալում է հաստատուել 1966ին (Եափուճեան, էջ 114-5):

[153] Երգիծաբան Խորէն Տետէեանը Մոնրէալում է հաստատուել 1963ին: Նա ունի նաեւ աշխատանքներ Քանատա արտագաղթած եգիպտահայերի մասին: Ծաւալել է դերասանական գործունէութիւն թէ՛ Եգիպտոսում, թէ՛ Քանատայում, (Եափուճեան, էջ 186-7, 402):

[154] Ջութակահար Գանթարճեանը 1957ին մեկնել էր ԱՄՆ՝ ուսանելու նպատակով: 1970ին նա դառնում է Թորոնթոյի սիմֆոնիկ նուագախմբի առաջին ջութակա-

Շանթ Սարգիսեանը[155], Երուանդ Ալեքսանեանը[156], թատերական արուեստում[157]՝ Սելմա Քեքլիկեանը[158], Արփիար Վարդեանը[159], Յովսէփ Մամուրեանը[160], Րաֆֆի Արմէնեանը[161], գիտութեան մէջ՝ Ստեփան Հանէսեանը[162]:

1983ից սկսած Մոնրէալի եգիպտահայերը կազմակերպում էին եգիպտահայ վարժարանների շրջանաւարտների համաշխարհային հաւաքներ, որոնց մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներում հաստատուած այդ դպրոցների նախկին սաները:

Արդէն 1997ին հիմնուեց Մոնրէալի Եգիպտահայերի Ընկերակցութիւնը, որը իր նպատակները հռչակեց. «*Համախմբել Մոնրէալ բնակութիւն հաստատած եգիպտահայերը անկախ իրենց քաղաքական եւ դաւանական տարբերութիւններէն:*

Օժանդակել մայր հայրենիքին ու աջակցիլ անոր վերընթաց զարգացման:

Ծառայել Մոնրէալահայ գաղութին՝ տրամադրելի բոլոր միջոցներով եւ գործակցիլ բոլոր կազմակերպութիւններուն հետ ի շահ գաղութի ընդհանրական շահերուն»[163]:

հարը (Եափուճեան, էջ 354-5. նաեւ՝ «Քանատահայ գաղութը», *Ապագայ*, Թեհրան, Դեկտեմբեր, 43:2010, էջ 5):

[155] Դաշնակահար Սարգիսեանը, Քանատա փոխադրուելով, հիմնել է սեփական նուագախումբ (Եափուճեան, էջ 625-6):

[156] Մոնրէալ է տեղափոխուել 1964ին: Մինչ այդ Համազգայինի «Քնար» երգչախմբեր էր կազմել նախ Աղեքսանդրիայում, ապա՝ Գահիրէում: Նոյնանուն երգչախումբ է կազմում Մոնրէալում (Եափուճեան, էջ 285-6):

[157] Մոնրէալում եգիպտահայերը կարեւոր դեր էին ստանձնում նաեւ ԹՄՄի կողմից կազմակերպուած թատերական միջոցառումներում (Գրիգոր Նիկողոսեան, «Մոնրէալահայ կեանք», *Ջահակիր,* 8 Դեկտեմբեր 1966, էջ 5):

[158] Գահիրէի պետական օպերային երգչուհի Ս. Քեքլիկեանը Մոնրէալ է տեղափոխուել 1962ին: 1976 հիմնել է «**Արմենիան**» թատերախումբը (Եափուճեան, էջ 351-2):

[159] Թէ՛ Գահիրէի, թէ՛ Աղեքսանդրիայի հայ համայնքներում թատերական աշխուժ գործունէութիւն ծաւալած Վարդեանը Մոնրէալում է հաստատուել 1960ականներին: Իր մասնագիտական գործունէութիւնը շարունակում է նաեւ Քանատայում (Եափուճեան, էջ 400. նաեւ՝ Կարօ Պետիկեան, «Դերասան Արփիար Վարդեանի յոբելեանը Մոնթրէալի մէջ», *Լրաքաղ*, Մոնրէալ, Մարտ, 118:1975, էջ 11):

[160] Մինչեւ Մոնրէալ տեղափոխուելը աշխուժօրէն մասնակցել է Աղեքսանդրիայի հայ համայնքի թատերական եւ երաժշտական կեանքին (Եափուճեան, էջ 335-7):

[161] Խմբավար, յօրինող Ր. Արմէնեանը, որը ծնուել է 1942ին Գահիրէում, 1959ին ուսանելու նպատակով մեկնել է Վիեննա, ապա Լոնտոն, իսկ 1969ին՝ տեղափոխուել Քանատա՝ հասնելով հսկայական յաջողութիւնների:

[162] Աղեքսանդրիայի Համալսարանը աւարտելուց յետոյ տեղափոխուել է ԱՄՆ, աւարտել Օհայոյի Համալսարանը, ապա աշխատանքի անցել Մոնրէալի Համալսարանի քիմիագիտութեան բաժնում (Եափուճեան, էջ 587-8):

Այդպիսով Քանատայի հայօճախը Աւստրալիայի հայօճախի հետ միասին դարձաւ Սփիւռքի այն հայօճախներից մէկը, որտեղ խիստ շօշափելի էր եգիպտահայերի ներկայութիւնը: Չնայած յետագայում Լիբանանից, Իրանից եւ այլ երկրներից հայերի ներհոսքին, այս երկու երկրներում՝ տեղի հայկական համայնքների թուաքականի եւ եգիպտահայերի թուի յարաբերակցութեան արդիւնքում շօշափելի տոկոս կազմելուն, եգիպտահայերը դարձան Ի. դարի երկրորդ կէսում ձեւաւորուած քանատահայ ու աւստրալահայ համայնքների հիմնական կորիզներից:

ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ ԱՒՍՏՐԱԼԻԱՅՈՒՄ

Քանատայից յետոյ արտագաղթող եգիպտահայերի ամէնամեծ բազմութեան համար նախընտրելի ուղղութիւն դարձաւ Աւստրալիան: Արդէն 1970ի դրութեամբ Սիտնիի հայերի ամէմամեծաթիւ խումբը՝ 2500ը, Եգիպտոսից եկած հայերն էին: Երկրորդը՝ Իրանից եկածներն էին՝ 2000 հոգի, ապա 400ը՝ Լիբանանից եւն.[164]: 1976ին 889 հոգու շրջանում անցկացուած հարցման արդիւնքում պարզուեց, որ Աւստրալիա եկած հայերի 29 տոկոսը ծնուել է Եգիպտոսում, 10ը՝ Սիրիայում, 9ը՝ Լիբանանում, 9ը՝ Յորդանանում կամ Իսրայէլում, 3ը՝ Իրաքում, 17ը՝ Իրանում, 13ը՝ Թուրքիայում, 3ը՝ Հնդկաստանում[165]:

Այստեղ եկած հայերի մէջ ամէնաբարձր կրթական աստիճանն ունէին Եգիպտոսից, ինչպէս նաեւ Հնդկաստանից ու Ինտոնեզիայից եկած հայերը: Արաբական միւս երկրների շարքում եգիպտահայերը աչքի էին ընկնում նաեւ բարձր ազգային ինքնագիտակցութեամբ[166]: Հետաքրքիր են Աւստրալիայի հայ համայնքի մասին *Զարթօնք*ի խմբագրապետ Յակոբ Աւետիքեանի դիտարկումները՝ կատարուած 1989ի այցելութեան շրջանակներում. «*Հետաքրքրականն այն է, որ գաղութին Եգիպտոսէն ու Երուսաղէմէն եկած փարրերը ընդհանրապէս ՀԲԸՄի եւ ՌԱԿի համակիր փարրեր են կամ անդամներ, մինչ Սուրիա-Լիբանանէն գաղթողներ, որոնք ընդհանրապէս բանուոր կամ արհեստաւոր խաւը կը ներկայացնեն, ՀՅԴին յարող անձեր են ու կը կազմեն գաղութին կէսէն աւելին*»[167]:

---

[163] Մոնրէալի Եգիպտահայերու Ընկերակցութիւն, http://www.armenegypt.com/asso-about.html (դիտուած է՝ 29.05.2021):

[164] Kirkland, էջ 65, 148. նաեւ՝ «Սիդնէահայ երեխաները սովորում են մայրենին», *Հայրենիքի ձայն*, 15 Նոյեմբեր 1972, էջ 7:

[165] Kirkland, էջ 63:

[166] Նոյն, էջ 136-7, 251:

[167] Կարլէն Դալլաքեան, *Ռամկավար ազատական կուսակցութեան պատմութիւն, գիրք 2*, Մուղնի հրատ., Երեւան, 2007, էջ 420-1:

Աւստրալահայ համայնքում իրենց գործունէութեամբ աչքի էին ընկնում մի շարք եգիպտահայեր՝ ինչպիսիք են Յակոբ Ափաքեանը[168], Թաթուլ Գաբադեանը[169], Յակոբ Արսէնեանը[170], Նեսսիմ Եաքուպեանը[171], Վահէ Արթինեանը[172], Սօսէ Աւագեանը[173], Սեդի Գոչունեանը[174], Նուրհան Դեմիրճեանը[175] եւ այլոք:

---

[168] Աշխատել է Եգիպտոսում բրիտանական բանակի մատակարարման ոլորտում, ապա եղել Հելիոպոլիսի Կոկանեան Սրահի քարտուղարը: 1963ին տեղափոխուել է Մելպուրն: Այստեղ թոշակի անցնելուց յետոյ օգնել է որդուն հրատարակել *Ակնոց* ամսագիրը (*Աւստրալահայ ընդհանուր հասցէարան-The Comprehensive Armenian Address Book of Australia*, compiled and arranged by A. Mirzaian, Sydney, 1983, էջ 58-9): 1964ին Մելպուրն տեղափոխուեց նաեւ վերջինիս որդին՝ Նուպար Ափաքեանը, որը մասնակից էր Գահիրէի հայ մշակութային կեանքին, Կոկանեան Սրահի աշխատանքներին: 1970ին Մելպուրնում նա հիմնեց *Ակնոց* ամսագիրը (Եափուճեան, էջ 435-6):

[169] 1939ին ստացել է բժշկագիտութեան դոկտորի աստիճան Լոզանի Համալսարանից, ապա աշխատել Եգիպտոսում՝ բրիտանական զօրքերի կազմում: Պատերազմից յետոյ աշխատել է որպէս բժիշկ՝ ծառայելով նաեւ Աղեքսանդրիայի համայնքին: 1964ին տեղափոխուել է Նիւ Սաութ Ուէյլզ եւ շարունակել մասնագիտական օգնութիւն ցուցաբերել Աւստրալիա տեղափոխուած հայերին (*Աւստրալահայ ընդհանուր հասցէարան*, էջ 57-8):

[170] Աղեքսանդրիայում եղել է գործարար, 1962ին տեղափոխուել Փարիզ, իսկ 1968ին Սիտնի: Աւստրալիայում սկսում է զբաղուել լրագրական գործունէութեամբ՝ թղթակցելով Պուենոս Այրէսի *Նոր Հաճըն* ամսագրին, Աղեքսանդրիայի *Արաքս* թերթին, ինչպէս նաեւ աւստրալահայ պարբերականներին (*Աւստրալահայ ընդհանուր հասցէարան*, էջ 59-60):

[171] Գահիրէից Սիտնի է տեղափոխուել 1963ին: Եգիպտոսում աշխատել է հեռահաղորդակցութեան ոլորտում: Աւստրալիայում աշխատանքի է անցել անդրծովեան հեռահաղորդակցութեան կոմիտէում: Նրա կինը՝ երգչուհի Լուսի Եագուպեանը մասնակցել է աւստրալահայ մշակութային կեանքին (*Աւստրալահայ ընդհանուր հասցէարան*, էջ 64-5):

[172] Գահիրէի Համալսարանի դեղագործութեան ֆակուլտէտը աւարտելուց յետոյ՝ 1975ին տեղափոխուել է Սիտնի: Այստեղ՝ Սիտնիի Համալսարանում ստացել է դեղագործութեան բակալաւրի աստիճան եւ անցել մասնագիտական աշխատանքի՝ իր հնարաւորութիւնների սահմաններում օգտակար լինելով հայ համայնքին: Ե՛ւ Վահէն ե՛ւ իր կինը՝ Նորա Սողոմոնեանը, որը եւս Գահիրէից էր տեղափոխուել Աւստրալիա, աւարտելով Սիտնիի Համալսարանը, անդամակցել են Հայ Համալսարանաւարտների Միութեանը (*Աւստրալահայ ընդհանուր հասցէարան*, էջ 71):

[173] Սիտնի է տեղափոխուել 1963ին: Աւստրալիայում աւարտել է Նիւ Սաութ Ուէյլզի Համալսարանը, աշխատել Աւստրալիայի հարկային համակարգում: Աւարտել է Հայկական Մշակութային Միութեան շաբաթօրեայ դպրոցը, աշխուժօրէն մասնակցել համայնքային կեանքին՝ եղել Հայ Ուսանողական Միութեան քարտուղարը, ՀՕՄ «Նայիրի» խմբի ղեկավարը (*Աւստրալահայ ընդհանուր հասցէարան*, էջ 72-3):

Չնայած զանգուածային արտագաղթի առաջին տարիներին Պրազիլն գաղթողների հիմնական նպատակակէտերից էր, սակայն կարճ ժամանակ անց այս ուղղութեամբ հոսքը դադարեց: Արդէն 1959 Մայիսի դրութեամբ Ռիօ տը Ժանէյրօ էր եկել մօտ 30 եգիպտահայ[176]: Ռիօ տը Ժանէյրոյի առաջին համայնքային միաւորը՝ Հայ Առաքելական Եկեղեցու թաղական խորհուրդը, կազմուեց Գահիրէից այստեղ ժամանած եգիպտահայի կողմից: Նա չէր կարողանում համակերպուել ծուլման չափազանց արագ ընթացքին, ուստի կարողանում է համախմբել տեղի ողջ հայութեանը (մօտ 50 առաքելադաւան ընտանիք): Նրա ջանքերով 1958 Մայիսին հրաւիրուեց ընդհանուր ժողով, որը ընտրեց 7 հոգուց բաղկացած թաղական խորհուրդ, իսկ Յունիսին առաջին ժողովում խորհուրդը ընտրեց վարչութիւն[177]: Մէկ այլ պարագայում տեղեկանում ենք, որ եգիպտահայերը կարեւոր դերակատարում են ստանձնել Սան Փաուլոյի հայ թատերական կեանքում[178]:

Պրազիլում գործունէութիւն ծաւալած եգիպտահայերի թւում կարելի է նշել Նուէր Աճէմեանի[179], Սահակ Պալըգճեանի[180] եւ այլոց անունները:

---

[174] Սիտնիում հաստատուեց եգիպտահայ թատրոնի աչքի ընկնող դերասաններից Ս. Գոչունեանը: 1971ին, երբ եգիպտահայ դերասան-բեմադրիչ Ս. Գոչունեանը տեղափոխուեց Սիտնի նրա պատուին կազմակերպուեց ընդունելութիւն, որին մասնակցում էին աւելի վաղ այստեղ տեղափոխուած իր բեմի նախկին ընկերները (Թղթակից, «Եգիպտահայ դերասան–բեմադրիչ Սեդի Գօչունեանի ի պատիւ ճաշկերոյթ՝ Սիտնիի մէջ», *Ջահակիր*, 11 Նոյեմբեր 1971, էջ 2):

[175] Գալուստեան վարժարանի շրջանաւարտ Ն. Դեմիրճեանը 1967ին տեղափոխուել է Աւստրալիա, աւարտել Նիւ Սաութ Ուէյլզի Համալսարանը՝ քիմիկոսի մասնագիտացմամբ եւ աշխատել իր մասնագիտութեամբ: Սրան զուգահեռ դասաւանդել է հայոց լեզու եւ պատմութիւն հայկական շաբաթօրեայ վարժարանում (*Աւստրալահայ ընդհանուր հասցէարան,* էջ 74-75):

[176] Սահակ Պալըգճեան, «Ռիօ տը Ժանէյրոյի հայ գաղութը», *Հայաստանի կոչնակ*, 30 Մայիս 1959, էջ 516:

[177] «Հայերը Ռիօ տի Եանէյրոյի մէջ», *Յուսաբեր*, 19 Յունիս 1958, էջ 2:

[178] «Հայ կեանք», *Յուսաբեր*, 6 Օգոստոս 1964, էջ 2:

[179] Պրազիլի հայ համայնքի աչքի ընկնող երգիչներից էր, որը ասպարէզ էր մտել դեռ Եգիպտոսում ապրելիս: Պրազիլ է տեղափոխուել 1961ին: Գահիրէի «Քնար» երգչախմբի մենակատար Ն. Աճէմեանը այստեղ սկսում է հանդէս գալ Սան Փաուլոյի «Հայկական մեղեդիներ» երգչախմբի կազմում (Ա. Պուտակեան, «Հայկական երգերու երեկոյ», *Ջահակիր*, 21 Սեպտեմբեր 1978, էջ 1-2. նաեւ՝ Եափուճեան, էջ 320):

[180] Պրազիլ է տեղափոխուել 1958ին: Մինչ արտագաղթելը աշխուժօրէն թղթակցել է եգիպտահայ մամուլին, Եգիպտոսում հրատարակել մի շարք գրքեր, ապա՝ գաղթելուց յետոյ Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի մի շարք հայկական պարբերականների (Եափուճեան, էջ 91-4):

ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Զգալի թուով եգիպտահայեր էլ տեղափոխուեցին ԱՄՆ: Յատկանշական է, որ այստեղ եգիպտահայեր են եկել ոչ միայն ուղղակիօրէն Եգիպտոսից, այլեւ հայրենադարձուածներ, նաեւ մինչեւ այդ Քանատա ու այլ երկրներ արտագաղթածներ: ԱՄՆ տեղափոխուած եգիպտահայերի կեանքը նկարագրել փորձելով՝ Ո. Յովհաննիսեանը Նիւ Եորքից գրում է.

> ... եգիպտահայ մըն ալ, համեմատաբար երիտասարդ, ինժեների մասնագիտութիւն ունի, բայց ընտանիքի անմիջական կարիքն հոգալու համար պարտաւորուած է հասարակ գործի մը հետեւելու: Իր կինն ալ գիշերը կ'աշխատի, որպէսզի կարողանան երկուքը միասին յարկաբաժինի մը վարձքը վճարել, փոքրիկները խնամել եւ ասկէ զատ ալ ԱՆՉԱին պարտքերը տալ[181]:

1985 Մարտի 17ին հիմնուեց Քալիֆորնիայի Գալուստեան, Նուպարեան եւ Պօղոսեան վարժարանների շրջանաւարտների միութիւնը: Սկզբում այն կոչւում էր «Գալուստեան շրջանաւարտների միութիւն», ապա վերածւում է «Եգիպտահայ վարժարանների շրջանաւարտների միութեան»[182]:

Ի տարբերութիւն Քանատայի ու Աւստրալիայի՝ ԱՄՆ եկած եգիպտահայերը չունեցան նոյն կարեւորագոյն նշանակութիւնը համայնքային կառոյցների ձեւաւորման մէջ, նախ՝ քանի որ այստեղի հայկական համայնքը ձեւաւորուել էր աւելի վաղ շրջանում, իսկ յետագայում էլ եգիպտահայերի թիւը էապէս զիջում էր ԱՄՆ փոխադրուած լիբանահայերին, իրանահայերին, եւ ամբողջ ԱՄՆ հայ համայնքում նրանք մեծ թիւ չէին կազմում:

Ուշագրաւ է նրանց համեմատութիւնը Եգիպտոսից ԱՄՆ տեղափոխուած յոյների հետ: Վերջիններիս բնորոշ էր մասնակցութիւնը ԱՄՆի յունական համայնքի կեանքին՝ յատկապէս կրթական եւ մշակութային ասպարէզներում: Նրանք աշխուժ չէին քաղաքական եւ հայրենակցական կառոյցներում՝ ինչպէս Յունաստանից գաղթածները: Դրա փոխարէն Նիւ Եորքում նրանք հիմնեցին Եգիպտոսի յոյների հայրենակցական կազմակերպութիւն[183]: Այս դէպքում եւս տեսնում ենք հայկական սփիւռքին բնորոշ երեւոյթ, երբ Եգիպտոսից, Իրանից, Թուրքիայից եւ այլ երկրներից ԱՄՆ, Քանատա կամ ուրիշ երկիր տեղափոխուած հայերը ստեղծում են ելքի երկրից տեղափոխուածներին միաւորող հայրենակցական կազմակերպութիւններ:

---

[181] Ոսկան Յովհաննէսեան, «Հայերու տեղափոխումը», *Ջահակիր*, 14 Ապրիլ 1966, էջ 1:

[182] *Vartouhy Rose Dadour A commemorative book Յուշամատեան Վարդուհի Տատուր (1925-2000)*, Granada Hills, 2001, էջ 117:

[183] Alexander Kitroeff, "The Greeks of Egypt in the United States," *Journal of the Hellenic Diaspora*, էջ 128:

Ինչպէս եւ եգիպտահայերը իրենց նոր համայնքներում, այնպէս էլ Եգիպտոսի յոյները, ԱՄՆի յոյների հետ համեմատած, աչքի էին ընկնում կրթական բարձր մակարդակով, միքանի լեզուների տիրապետելով: Նրանք ԱՄՆի յոյների շրջանում կազմում էին առանձին ենթաէթնիկ խումբ[184]: Կրկին նկատում ենք նմանութիւն հայկական սփիւռքի հետ բաղդատելիս՝ երբ տարբեր երկրներից եկած հայերը կազմում են առանձին ենթաէթնիկ խմբեր՝ ունենալով որոշակի առանձնայատկութիւններ:

Մի շարք եգիպտահայերի համար Մ. Նահանգները դարձաւ թէ՛ մասնագիտական, թէ՛ նաեւ համայնքային գործունէութիւն ծաւալելու համար բարենպաստ վայր: Այսպէս, ԱՄՆ են տեղափոխուել Եգիպտոսում համայնքային կեանքին աշխուժօրէն մասնակցած մի շարք գործիչներ, որոնցից էին Բիւրատ Վարժապետեանը[185], Մկրտիչ Նալպանտեանը[186], Կայծակ Պոզաճեանը[187], Յակոբ Աւագեանը[188], Արմէն Տատուրը[189], Վահէ Պալատունին[190] եւ այլոք: ԱՄՆ հայկական համայնքային կառոյցներում նշանակալի դերակատարում ստանձնեցին մի շարք եգիպտահայեր, որոնց թւում՝ Նուպար Պէրպէրեանը[191], Վարդուհի Տատուրը[192], Բիւզանդ Կռան-

---

[184] Նոյն, էջ 129:

[185] ԱՄՆ է տեղափոխուել 1963ին: Եղել է Գահիրէի Շուպրա թաղամասի Գալուստեան վարժարանի, Հելիոպոլիսի Նուպարեան վարժարանի տնօրէն (Գարտաշեան, *հտր. Բ.*, էջ 671):

[186] Հայերէն եւ ֆրանսերէն է դասաւանդել Աղեքսանդրիայի Պօղոսեան եւ Մխիթարեան վարժարաններում: Մասնակցել է Հայ Ուսանողական Միութեան, Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան, ՀՄԸՄ, ՀԲԸՄ աշխատանքներին, թղթակցել *Արեւ, Արաքս, Ջահակիր* թերթերին: 1963ին հայրենադարձուել է, եղել Լենինականի Մանկավարժական Համալսարանի ֆրանսերէնի դասախօս: 1980ին արտագաղթել է ԱՄՆ (Եափուճեան, էջ 631-2):

[187] Եգիպտոսից Լոս Անճելըս է տեղափոխուել 1961ին: Եղել է Աղեքսանդրիայի Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան ատենապետը (*Պատմութիւն հայոց Արաբկիրի, հտր. Բ.,* աշխ.՝ Ա. Փոլատեան, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2016, էջ 1152:

[188] Մինչեւ 1965ին ԱՄՆ մեկնելը՝ դասաւանդել է Գահիրէի Պէրպէրեան, Հելիոպոլիսի Նուպարեան, Գահիրէի Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան, իսկ ապա Գալուստեան վարժարաններում (Գարտաշեան, *հտր. Բ.*, էջ 453):

[189] Եգիպտահայ գրական կեանքի աչքի ընկնող գործիչներից Ա. Տատուրը ԱՄՆում է հաստատուել 1980ին (Եափուճեան, էջ 103-5):

[190] Եղել է *Ջահակիր*ի հիմնադիրներից, ՀԲԸՄ «Նուպար» Մարզական Միութեան ղեկավարներից (Եափուճեան, էջ 90-1):

[191] 1948-58՝ վարել է Եգիպտոսի ՌԱԿ պաշտօնաթերթ *Արեւ*ի, իսկ 1958ին ԱՄՆ փոխադրուելուց յետոյ՝ նոյն կուսակցութեան *Նոր օր* (1958-60) եւ *Պայքար* (1961-82) թերթերի խմբագրի պաշտօնը: Եղել է ԱՄՆի եւ Քանատայի ԹՄՄ հիմնադիրներից մէկը («Ոչ եւս է վաստակաւոր հրապարակագիր եւ գաղափարապաշտ ազգային գործիչ դոկտ. Նուպար Պէրպէրեանը», *Ազգ*, 25 Նոյեմբեր 2016, էջ 2):

եանը[193], Գուրգէն Մխիթարեանը[194], Միսաք Հայկենցը[195], Կարապետ Տեմիրճեանը[196], Սարգիս Ծերունեանը[197], Ժաք Յակոբեանը[198]:

Բազմաթիւ եգիպտահայեր էլ ԱՄՆում յաջողութիւնների էին հասնում մասնագիտական ասպարէզում: Գիտութեան ասպարէզում այդպիսի անուններից են Երուանդ Թերզեանը[199], Յակոբ Թրեանցը[200], Արամ Արզու-

---

[192] Քալիֆորնիա է տեղափոխուել 1978ին: Գահիրէում եղել էր Գալուստեան վարժարանի անգլերէնի ուսուցչուհի, դասաւանդել նաեւ այլ դպրոցներում: 1978ին ստանձնում է Քալիֆորնիայի ՀԲԸՄ Ս. Պետրոս ամէնօրեայ վարժարանի տնօրինութիւնը: Եղել է Քալիֆորնիայի Եգիպտահայ Վարժարանների Շրջանաւարտների Միութեան հիմնադիրներից (*Vartouhy Rose Dadour*, էջ 116-7):

[193] 1956ին որպէս կուսակցական գործիչ ԱՄՆ է հրաւիրուել Աղեքսանդրիայի Պօղոսեան վարժարանի տնօրէն Բ. Կոանեանը (Եափուճեան, էջ 128-9): 1958-81՝ վարել է Հայ Կրթական Հիմնարկութեան վարիչ-քարտուղարի պաշտօնը:

[194] 1948ին ԱՄՆում է հաստատուել Գահիրէի *Նոր շարժում* թերթի հրատարակիչ (1923-24), *Յուսաբեր* թերթի խմբագրի օգնական Գ. Մխիթարեանը, որը 1952-62՝ խմբագրել է Պոստոնի *Հայրենիք* օրաթերթը (Եափուճեան, էջ 169-71):

[195] Աղեքսանդրիայի Պօղոսեան վարժարանի հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ, Տիգրան Երկաթ Միութեան ատենապետ Միսաք Հայկենցը 1963ին հաստատուել է ԱՄՆում եւ ստանձնել *Նոր օր* թերթի խմբագրի պաշտօնը: Կարեւոր դեր է ունեցել 1965ին Լոս Անճելըսում եւ Ֆրեզնոյում Հայ Երիտասարդաց Մշակութային Միութեան, իսկ 1969ին՝ Տիթրոյթում ԹՄՄի հիմնման, ինչպէս նաեւ ՀԲԸՄ գործունէութեան մէջ (Եափուճեան, էջ 218-9):

[196] Մասնակցել է *Նոր օր* թերթի աշխատանքներին, եղել Գահիրէի թեմական ժողովի անդամ, *Արեւ* թերթի արտօնատէր, Հայ Ազգային Հիմնադրամի վարիչ քարտուղար: ԱՄՆ փոխադրուելուց յետոյ աշխուժօրէն մասնակցել է Լոս Անճելըսի ՀԲԸՄ աշխատանքներին (Եափուճեան, էջ 243-5):

[197] 1962ին փոխադրուել է Այնճար, իսկ 1964ին՝ ԱՄՆ: Թաֆց Համալսարանում ուսանելիս՝ այնտեղ հիմնել է հայկական միութիւն, կազմակերպել հայերէնի դասընթացներ: ԱՄՆում մասնակցել է ԹՄՄ եւ ՀԲԸՄ մշակութային աշխատանքներին (Եափուճեան, էջ 620-1): Ծերունեանի եղբայրը՝ Վարդգէս Ծերունեանը եւս տեղափոխուել է Պոստոն՝ կրթութիւն ստանալու համար, աշխուժօրէն մասնակցելով ՀԲԸՄ, ԹՄՄ եւ Համազգային Մշակութային Միութեան միջոցառումներին:

[198] Գրող Ժաք Յակոբեանը ԱՄՆում է հաստատուել 1967ին: Նրա պարագան հետաքրքիր է այն առումով, որ դեռեւս 1949ին գաղթել էր Աւստրալիա, սակայն մէկ տարի անց վերադարձել Գահիրէ: Ապա՝ 1956ին տեղափոխուել էր Պէյրութ, որտեղից տասնմէկ տարի անց վերջնականապէս փոխադրուել ԱՄՆ: Գրական աշխատանքից բացի ծաւալել է ուսուցչական գործունէութիւն Հելիոպոլիսում, Լիբանանում, Քալիֆորնիայում («Ժագ Ս. Յակոբեան՝ 100 տարեկան», *Հորիզոն գրական*, Մոնրէալ, 31 Օգոստոս 2017, https://kragan.horizonweekly.ca/?p=272 (դիտուած է՝ 29.05.2021):

[199] ԱՄՆ է փոխադրուել 1960ին, աւարտել Հարվըրտի եւ Ինտիանայի համալսարանները, աշխատանքի անցել Նիւ Եորքի Քորնէլ Համալսարանում (Եափուճեան, էջ 579-0):

մանեանը[201], Զաւէն Կիրակոսեանը[202], Ալիս Պալունին[203], Սօնա Զէյթլեանը[204], Տիրան Աբէլեանը[205], երաժշտականում՝ Զաւէն Խաչատուրեանը[206], Աննա Նշանեանը[207], Արա Կիւզելիմեանը[208], Յակոբ Սանտալճեանը[209],

---

[200] Ուսում ստանալու համար մեկնել է Պէյրութ, որտեղ ուսանել է Ամերիկեան Համալսարանում, 1947ին հայրենադարձուել է, աշխատել ՀՀ ԳԱ արեւելագիտութեան ինստիտուտում: 1960ականներին արտագաղթել է ԱՄՆ (Եափուճեան, էջ 584-5):

[201] 1947ին հայրենադարձուել է, եղել Երեւանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազօտական Ինստիտուտի աշխատանոցի վարիչ: 1966ին տեղափոխուել է ԱՄՆ (Եափուճեան, էջ 573-4):

[202] 1952ին կրթութիւն ստանալու նպատակով մեկնել է ԱՄՆ, որտեղ էլ մնացել է՝ աշխատանքի անցնելով Սթենֆըրտի Համալսարանում (Եափուճեան, էջ 587): 1979-94՝ եղել է ԱՄՆ ՊՆ տիեզերանաւային ընկերութեան պաշտպանական արհեստագիտութիւնների մշակումների տնօրէն, 2005ից՝ ՀՀում իր հիմնադրած գիտաարտադրական խորհրդի նախագահ:

[203] 1948ին ներգաղթել է Հայաստան, եղել ԵՊՀ դասախօս, 1971ին արտագաղթել է ԱՄՆ, որտեղ շարունակել է դասախօսական գործունէութիւնը: Նոյնն է պարագան նաեւ նրա եղբօր՝ Զաւէն Պալունու դէպքում:

[204] Եգիպտահայ Սօնա Զէյթլեանը, որը աշխատում էր Գալուստեան վարժարանում, 1962ին տեղափոխուել է Լիբանան: Գահիրէում նա ամուսնացել էր լիբանահայ նշանաւոր կուսակցական գործիչ, 1958-62՝ *Յուսաբեր* թերթի խմբագիր Սարգիս Զէյթլեանի հետ: Լիբանանում Սօնա Զէյթլեանը աշխատել է Այնճարի եւ Պէյրութի հայկական դպրոցներում: Յետագայում տեղափոխւում է Լոս Անճելըս, որտեղ անդամակցում է Լոս Անճելըսի Քալիֆորնիայի Համալսարանի Մերձարեւելեան Ուսումնասիրութիւնների Կենտրոնի խորհրդակցական մարմնին (Սոնա Զէյթլեան, *Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի եգիպտոսի պատմութեան մէջ*, Մոնթրէալի եգիպտահայերու ընկերակցութիւն, Քանատա, 2004, էջ 192):

[205] Ծնուել է 1945ին, 15 տարեկանում ընտանիքով տեղափոխուել է ԱՄՆ: ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ է, ճարտարագիտական մեխանիկայի պրոֆեսոր եւ Ուորչեսթըրի մետաղամշակման ինստիտուտի տնօրէն:

[206] ԱՄՆում է հաստատուել 1957ին՝ դառնալով Լոնկ Այլընտի երաժշտական ինստիտուտի ղեկավարը: Նրա քոյրը՝ Մելանիա Խաչատուրեանը Նիւ Եորքում է հաստատուել 1962ին եւ դասաւանդել դաշնամուր (Եափուճեան, էջ 311-4):

[207] Օպերային երգչուհի Ա. Նշանեանը 1963ին աւարտել է Երեւանի Պետական Կոնսերվատորիան, 1970ին նրան շնորհուել է ՀԽՍՀ վաստակաւոր արտիստի կոչում, իսկ 1980ին արտագաղթել է ԱՄՆ: Նրա որդին՝ ՀՀ վաստակաւոր արտիստ Ժան-Պիէր Նշանեանը իր հետ միասին Լոս Անճելըս տեղափոխուելուց յետոյ 1983ին այստեղ հիմնել է Վարդան Աճէմեանի անուան թատերախումբը:

[208] Փոխադրուել է ԱՄՆ՝ աշխատելով Լոս Անճելըսի պետական ռադիօկայանում (Եափուճեան, էջ 621-2): Արմէն Կիւզելիմեանը՝ Արայի եղբայրը, ԱՄՆ փոխադրուելուց յետոյ աւարտել է Քալիֆորնիայի Համալսարանի դաշնամուրի բաժինը: Աշխատելով երաժշտական վարժարանում՝ միաժամանակ մասնակցում է հայկական համայնքի մշակութային կեանքին:

Պերճ Թիւրապեանը[210], թատերականում՝ Անժէլ Յակոբեանը[211], Նուպար Ղազարեանը[212], նկարչականում՝ Նորա Ազատեանը[213], Լիւսի Գարամանուկեանը[214], Լեւոն Երամեանը[215], Շուշան Խաչիկեանը[216], Անժէլ Կարինեանը[217], Բիւզանդ Կոճամանեանը[218], Սիմոն Սամսոնեանը[219], Ժիրայր Փալամուտեանը[220], քանդակագործութիւնում՝ Յակոբ Իշխանեանը[221] եւ այլոք:

Եգիպտոսում մնացած հայերը ուշադրութեամբ հետեւում էին արտասահմանում, այդ թւում ԱՄՆում, իրենց հայրենակիցների յաջողութիւն-

---

[209] 1947ին հայրենադարձուել է, աւարտել Կոնսերվատորիան, ապա անցել դասախօսական աշխատանքի նոյն բուհում: 1980ին արտագաղթել է ԱՄՆ (Եափուճեան, էջ 625):

[210] Սովորել է Գահիրէի Մխիթարեան վարժարանում, ապա ֆրանսիական քոլէճում: 1965ին ներգաղթել է Հայաստան: Սովորել է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտում, ապա նոյն համալսարանում դասաւանդել է ֆրանսերէն լեզու եւ գրականութիւն: 1986ին տեղափոխուել է ԱՄՆ, ուսանել գրադարանագիտութիւն, ապա աշխատանքի անցել Նիւ Եորքի հանրային գարադարանում: Յայնտի է Շարլ Ազնաւուրի երգերը հայերէն թարգմանելով եւ կատարելով:

[211] Եղել է Հայ Գեղարուեստասիրաց Միութեան թատերախմբի անդամ, 1960ականների սկզբում տեղափոխուել Պէյրութ, իսկ 1980ին՝ Փասատինա (Եափուճեան, էջ 391-2):

[212] Լինելով լրագրող ու դերասան՝ աշխուժ թատերական գործունէութիւն է ծաւալել Եգիպտոսում, ապա տեղափոխուել ԱՄՆ (Եափուճեան, էջ 628-9):

[213] ԱՄՆ է փոխադրուել 1968ին, մինչ այդ Գալուստեան վարժարանում դասաւանդել էր նկարչութիւն (Եափուճեան, էջ 426-7):

[214] ԱՄՆ փոխադրուելուց յետոյ դրաձել է Նիւ Ճըրզիի նկարիչների միութեան, Ամերիկահայ Նկարիչների Միութեան անդամ (Եափուճեան, էջ 439-40):

[215] ԱՄՆ է փոխադրուել 1970ին (Եափուճեան, էջ 444-5):

[216] Եգիպտոսից արտագաղթել է Քանատա, որտեղից ամուսնանալու հետեւանքով տեղափոխուել է ԱՄՆ (Եափուճեան, էջ 453-4):

[217] Մասնակցել է եգիպտահայ մշակութային կեանքին: 1963ին տեղափոխուել է ԱՄՆ, որտեղ շարունակել է մասնագիտական գործունէութիւնը՝ բնակութիւն հաստատելով Քենզըս Սիթիում (Եափուճեան, էջ 458):

[218] Եգիպտահայ նշանաւոր նկարիչ Բիւզանդ Կոճամանեանը 1969ին հեռացաւ Եգիպտոսից՝ տեղափոխուելով Պէյրութ, իսկ միքանի տարի անց հաստատուեց ԱՄՆում: Եգիպտոսից հեռանալուց յետոյ էլ պարբերաբար գալիս եւ ցուցահանդէսներ էր կազմակերպում այստեղ (Եափուճեան, էջ 458-62):

[219] ԱՄՆ է տեղափոխուել 1968ին՝ արդէն իսկ բաւականին մեծ յաջողութիւնների հասած լինելով Եգիպտոսում (Եափուճեան, էջ 485-8):

[220] Եափուճեան, էջ 492:

[221] 1948ին հայրենադարձուել է, աւարտել Երեւանի Գեղարուեստաթատերական Ինստիտուտի քանդակագործութեան բաժինը: 1978ին արտագաղթել է ԱՄՆ՝ շարունակելով ստեղծագործել (Եափուճեան, էջ 640):

ներին: Նրանց կեանքը լուսաբանող տեղեկութիւնների կարելի է հանդիպել եգիպտահայ մամուլի էջերում[222]:

ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ ՖՐԱՆՍԱՅՈՒՄ

Բազմաթիւ եգիպտահայեր տեղափոխուեցին Ֆրանսա՝ գլխաւորապէս Փարիզ: Մի շարք գործիչներ ովքեր աշխուժ գործունէութիւն են ծաւալել Եգիպտոսի հայ համայնքում՝ յետագայում փոխադրուել են Ֆրանսա: Նրանցից են Մինաս Գմգմեանը[223], Լորիս Աբրահամեանը[224], Իսկուհի Տատրեանը[225], Յասմիկ Պալլարեանը[226], Սարգիս Սահակեանը[227], Արտաշէս Գարտաշեանը[228]:

Մշակութային տարբեր ոլորտներում նշանակալի գործունէութիւն ծաւալած եգիպտահայերից էին Գէորգ Եանպէկեանը[229], Միքայէլ Գարանֆիլ-

---

222 Տե՛ս օրինակ՝ Թղթակից, «Նախկին եգիպտահայ Աբրահամ Սվաճիպաշեան վկայուած», *Ջահակիր*, 2 Յուլիս 1970, էջ 2 եւ «Պր. Օննօ Ալիքսանեանի փայլուն յաջողութիւնը», 10 Սեպտեմբեր 1981, էջ 2:

223 Գրականագէտ Մ. Գմգմեանը 1945-50՝ դասաւանդել է Գալուստեան վարժարանում, ապա մեկնել Փարիզ, Սորպոնի Համալսարանում պաշտպանել դոկտորականը: Վերադառնալով Գահիրէ՝ 1956-57՝ կրկին դասաւանդել է Գալուստեան վարժարանում, իսկ 1957ին վերջնականապէս փոխադրուել Փարիզ եւ զբաղուել դասախօսական աշխատանքով (Եափուճեան, էջ 629-30):

224 Եգիպտահայ երաժշտական կեանքում աշխուժ գործունէութիւն ծաւալած Աբրահամեանը Փարիզում է հաստատուել 1960ականներին (Եափուճեան, էջ 319-20):

225 Փարիզ է տեղափոխուել 1970ին: Մինչ այդ ֆրանսերէն լեզու էր դասաւանդել եգիպտական մի շարք դպրոցներում, 1962-66՝ եղել Գալուստեան վարժարանի տնօրէն, իսկ 1966-70՝ աշխատել Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում (Գարտաշեան, *հտր. Բ.*, էջ 673-4):

226 Դասաւանդել է գծագրութիւն Գալուստեան վարժարանում: 1966ին տեղափոխուել է Պէյրութ, որտեղից էլ՝ Փարիզ (Եափուճեան, էջ 479-80):

227 Եղել է Հայ Գրքի Բարեկամներ Ընկերակցութեան հիմնադիրներից (1941), աշխուժօրէն թղթակցել է եգիպտահայ մամուլին: 1977ին տեղափոխուել է Ֆրանսա (Եափուճեան, էջ 145-6):

228 Եղել է Գահիրէի ազգային առաջնորդարանի դիւանապետ: 1969ին հաստատուել է Փարիզում եւ պաշտօն ստանձնել ՀԲԸՄ Նուպարեան մատենադրանում (Եափուճեան, էջ 157-8):

229 1944ին Գահիրէում հիմնել է լարային քառեակ, 1946ին՝ Հայ Գեղարուեստասիրաց Միութիւնում «Ալագեազ», իսկ 1947ին՝ Հայկական Ընթերցասրահում «Սպենդիարեան» երգչախումբը: 1951ին կրթութիւնը շարունակելու համար մեկնել է Փարիզ ու այդուհետ հաստատուել Ֆրանսայում: Ուսմանը զուգահեռ երգ է ուսուցանել Մխիթարեան եւ Դպրոցասէր վարժարաններում: Փարիզում հիմնել է «Նայիրի» երգչախումբը (Եափուճեան, էջ 286-8):

եանը[230], Վերա Հացունին[231], Ժիրայր Փափազեանը[232], Նորա Արմանին[233], Էտմոն Քիրազը[234] եւ այլօք:

ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ ԶՈՒԻՑԵՐԻԱՅՈՒՄ

Տասնեակ եգիպտահայեր էլ տեղափոխուեցին Զուիցերիա, որտեղ չնայած փոքր թիւ կազմելուն՝ նրանցից ոմանք ունեցան կարեւոր դերակատարում: Այդպիսիք են Շաւարշ Սեւյօնքեանը[235] եւ Յակոբ-Տիրան Թոփալեանը[236]: Զուիցերիայում հաստատուած եգիպտահայերից են նաեւ Համբար

---

[230] Գահիրէում «Եգիպտահայ» եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու «Շնորհալի» երգչախմբերին անդամակցած Գարանֆիլեանը 1967ին փոխադրուել է Փարիզ, որտեղ որպէս մենակատար մասնակցել է Սիփան-Կոմիտաս եւ Ս. Յովհաննէս մայր տաճարի երգչախմբերին (Եափուճեան, էջ 322-3):

[231] Եդուարդ Յակոբեանի Եգիպտահայ երգչախմբի անդամ Վ. Հացունին 1966ին անցել է Փարիզ՝ կրթութիւնը շարունակելու նպատակով, իսկ 1972ին ընդունուել աշխատանքի՝ Փարիզի օպերայում (Եափուճեան, էջ 333-4):

[232] Եգիպտահայ թատերական կեանքում (յատկապէս Հայ Գեղարուեստասիրաց Միութեան կազմում) կարեւոր ներդրում ունցած Փափազեանը 1980ին տեղափոխուել է ԱՄՆ, որտեղ ստանձնել է ՀԲԸՄ Քալիֆորնիայի գեղարուեստական ղեկավարի պաշտօնը: Ապա հաստատուել է Փարիզում, որտեղ 1998ին հիմնել է Տիգրան Չուխաճեան հետազօտական կենտրոնը («Տաղանդաւոր հայի ու տաղանդաւոր «խենթի» ազնիւ ու վեհ նպատակները», 17.09.2015, http://www.haynews.am/hy/1442493272 (դիտուած է՝ 29.05.2021):

[233] Դերասանական գործունէութիւն է ծաւալել Հայ Գեղարուեստասիրաց Միութեան շրջանակներում: 1981ին տեղափոխուել է Լոս Անճելըս, իսկ 1993ին, հաստատուելով Փարիզում, հիմնել է «Բարեւ» կինօընկերութիւնը: Այժմ հիմնական գործունէութիւնը ծաւալում է Նիւ Եորքում: Նորա Արմանիի գործունէութեան մասին տե՛ս՝ http://www.noraarmani.net/resume (դիտուած է՝ 29.05.2021):


[234] Երգիծանկարիչ Քիրազը 1946ին մասնագիտական կատարելագործման համար մեկնել է Փարիզ եւ յաջող մասնագիտական գործունէութիւն ծաւալել այնտեղ (Եափուճեան, էջ 503-4):

[235] Եղել է Հայ Ազգային Հիմնադրամի հիմնադիրներից, Հայ Գեղարուեստասիրաց Միութեան ատենապետ, Գալուստեան վարժարանի շրջանաւարտների միութեան ատենապետ: 1949ին անցել է Փարիզ, որտեղ մասնակցել է *Այսօր* օրաթերթի հիմնմանը: 1967ին տեղափոխուել է Զուիցերիա, 1970ից վարել է Լոզանի ՀԲԸՄ Եւրոպայի Կենտրանական Գրասենեակը (Եափուճեան, էջ 238-40):

[236] Նշանաւոր առեւտրականն ու Աղեքսանդրիայի հայ համայնքի աշխուժ ներկայացուցիչը Ժնեւում է հաստատուել 1952ին: Վերջինիս նախաձեռնութեամբ էր հիմնուել Աղեքսանդրիայի Ազգային Դարմանատունը, իր բարերարութեամբ է կառուցուել Աղեքսանդրիայի ազգային գերեզմանատան Ս. Գէորգ մատուռը: Զուիցերիայում հաստատուելուց յետոյ նա մասնակից է դառնում այստեղի համայնքային կեանքին, ապա տեղափոխւում Իտալիա: Նրա նուիրատուութեամբ 1969ին կառուցւում է Ժնեւի Ս. Յակոբ հայկական եկեղեցին (Զէյթլեան, էջ 145): Նա հիմնել է նաեւ «Յակոբ Թոփալեան» հիմնադրամը, որը համագոր-

Համբարձումեանը[237] եւ Էտուար Խանճեանը[238]: Իհարկէ, Զուիցերիայում մեծամասնութիւն էին կազմում թուրքահայերը, սակայն նրանցից յետոյ, յատկապէս 1960-70ականներին, կարեւոր դերակատարում ունէին նաեւ եգիպտահայերը[239]:

Այսպիսով ինչպէս տեսնում ենք 1950-70ականներին, նաեւ դրանից յետոյ, Եգիպտոսից արտագաղթած հազարաւոր հայեր կարեւոր դեր են ունեցել Քանատայի, Աւստրալիայի, Պրազիլի, ԱՄՆի, Ֆրանսայի, Զուիցերիայի եւ այլ երկրների հայկական համայնքներում: Համարկուելով նոր երկրների կեանքին՝ նրանցից շատերը մեծ յաջողութիւնների են հասել մասնագիտական գործունէութեան ասպարէզներում:


ԱՆՉԱՑԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
ԲԱՑՈՒԱԾ Է
3 ՅՈՒՆԻՍ 1963ԷՆ ՍԿՍԵԱԼ
Կը տեղեկանանք, թէ ԱՆՉԱՅի Գահիրէի գրասենեակը բացուած է ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 3 ՅՈՒՆԻՍ 1963ԻՆ:
Հիւսիսբրուդները կրնան գրասենեակ դիմել ամէն օր, առաւօտեան ժամը 10էն սկսեալ մինչեւ ժամը 1 յ.մ.:
Հասցէն է՝
Rue Champollion No. 14 (Midan Ataba)
Դ. յարկ, Գահիրէի իտալական հիւպատոսարանին կից:
ՔԱՆԱՏԱ ՄԵԿՆՈՂՆԵՐ ...
ՄՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ԶԵՐ ԳՈՑՔԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ
ՈՒՂՂԱԿԻ ԴԻՄԵՑԷՔ
TOURS


Մեկնումի ծանուցումներ. *Յուսաբեր*, 4 Յունիս եւ 12 Դեկտեմբեր 1963


ծակցում է ՀԲԸՄ հետ: Այս հիմնադրամի աջակցութեամբ 1994ից գործում է նաեւ Ժնեւի Թոփալեան հայկական դպրոցը):

237 Նկարիչ Հ. Համբարձումեանը 1956-68՝ գծագրութիւն է դասաւանդել Աղեքսանդրիայի Պօղոսեան վարժարանում, ապա հաստատուել է Զուիցերիայում (Եափուճեան, էջ 462-3):

238 Կենսաբան Է. Խանճեանը Զուիցերիա է տեղափոխուել 1966ին, այստեղ շարունակել կրթութիւնը, ապա ծաւալել գիտական նշանակալի գործունէութիւն (Եափուճեան, էջ 586):

239 Արտագաղթած եգիպտահայերի գործունէութեան մասին մանրամասն տեղեկութիւններ հաւաքելը ունի որոշակի դժուարութիւններ, քանի որ բացի Քանատայից, մասամբ Աւստրալիայից ու ԱՄՆից, մնացած վայրերում նրանք համախումբ գործունէութիւն գրեթէ չեն ծաւալել՝ ներգրաւուելով ընդհանրապէս հայկական համայնքային կեանքում: Անշուշտ, հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ նրանց ընկերային-տնտեսական կացութեան, զբաղմունքի, մասնագիտական ասպարէզների ուսումնասիրութեան շարունակութիւնը, քանզի երբեմն այստեղ տեղեկութիւնների սակաւութեան հետեւանքով ստիպուած ենք եղել սահմանափակուել միայն որոշ օրինակներ մատնանշելով:





Մեկնումի ծանուցումներ. *Յուսաբեր*, 3 Մարտ 1964 եւ 16 Յունուար 1965

THE EMIGRATION OF EGYPTIAN ARMENIANS BETWEEN THE 1950S AND THE 1970S AND ITS IMPLICATIONS WITHIN AND WITHOUT (Summary)

Tigran Ghanalanyan
tghanalanyan@ysu.am

In the 1940s the Egyptian Armenian community was one of the most active centers of the Diaspora. However, a number of developments changed the status of the community. The repatriation of 3692 Armenians in 1947-48 to Soviet Armenia was not the basic reason for the diminished power of the community. Rather, the political developments of 1950-60 in Egypt led to massive emigration of the Armenians. Of these only 727 were repatriated to Armenia, while the majority headed for the West, particularly to Canada and Australia. Over 70% of the Egyptian Armenians left the country.

Based on archival documents, Diaspora newspapers, memoires and research articles, the paper analyses the causes of this emigration, its process and the actors and assesses the very fact of emigration.

The paper discusses as well the role the Egyptian-Armenian migrants played in the Armenian communities of their new host lands.

Եգիպտահայոց 1947-48ի եւ 1962-65ի Հայրենադարձութեան Կազմակերպական Հարցերը Խորհրդային Գաղտնի Փաստաթուղթերու Մէջ[1]

Գէորգ Եազըճեան
gevorgyazichyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Մինչեւ այս ուսումնասիրութեան հիմքը կազմող փաստաթուղթերուն աւելի մանրամասն անդրադառնալը, քանի մը խօսք անոնց տարբեր կողմերուն մասին: Անոնք կը պահպանուին Հայաստանի Ազգային Արխիւին մէջ՝ խորհրդային ժամանակաշրջանի տարբեր կառոյցներու ֆոնտերուն (ենթադիւաններուն) մէջ: Հիմնականին մէջ, օգտուած ենք Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան, ՀԽՍՀ արտաքին գործոց նախարարութեան եւ ՀԽՍՀ նախարարներու խորհուրդին առընթեր Արտասահմանից Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէի ենթադիւաններէն: Օգտուած ենք նաեւ անգլիացի պատմաբան Ֆելիքս Քորլիի՝ մեզի սիրայօժար տրամադրած քանի մը շատ կարեւոր փաստաթուղթերէ, որոնք ան յայտնաբերած է Ռուսաստանի Դաշնութեան Նորագոյն Պատմութեան Ռուսական Պետական Արխիւի՝ Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի քարտուղարութեան ենթադիւանին մէջ: Մեր տեսած հարիւրաւոր փաստաթուղթերէն այս ուսումնասիրութեան մէջ օգտագործած ենք քանի մը տասնեակը միայն: Փաստաթուղթերը լոկ գրութիւններ են, անոնց կցուած կամ անոնցմէ առանձնացուած ուրիշ նիւթեր (նկարներ, եւն.) չկան:

Բնոյթը.- Ըստ իրենց բնոյթի, փաստաթուղթերը կը դասակարգուին գաղտնի եւ ոչ-գաղտնի դասերու մէջ: Կը հանդիպին նաեւ գաղտնիութեան տարբեր աստիճաններ ունեցող փաստաթուղթեր՝ «շատ գաղտնի», «յուժ գաղտնի», «անձնական» եւ այլ նշումներով: Արտախորհրդային երկիրներէ Մոսկուա յղուող գրեթէ բոլոր դիւանագիտական փաստաթուղթերը առնուազն «գաղտնի» նշումը կը կրէին: Նոյնիսկ այդ նշումը չկրող փաստաթուղթերը գաղտնազերծման ենթակայ չէին: Խորհրդային ժամանակաշրջանին՝ գաղտնիութեան որեւէ աստիճանի նշումը կրող ամէն փաստաթուղթի ամբողջական կամ մասնակի հրապարակումը բացարձակապէս արգիլուած էր: Միայն կուսակցութեան բարձրագոյն մարմիններու

[1] Այս նիւթին մօտէն առնչուող ուսումնասիրութիւններ, ինչպէս՝ դոկտ. Տիգրան Ղանալանեանի «Հայերի արտագաղթը Եգիպտոսից 1950-70ականներին եւ հետեւանքները ներսում ու դրսում» եւ դոկտ. Վերժնիէ Սվազլեանի «Եգիպտահայ հայրենադարձների նպաստը մայր Հայաստանին», տե՛ս՝ այս հատորին մէջ այլուր:

թոյլտուութեամբ ոմանց հնարաւորութիւն կը տրուէր ծանօթանալու այդպիսի փաստաթուղթերու բովանդակութեան:

Բովանդակութիւնը.- Փաստաթուղթերը ամէնատարբեր նիւթեր կը պարունակեն: Կը հանդիպին զեկուցագրեր, տեղեկատուութիւններ, զրոյցներու արձանագրութիւններ, վերլուծումներ, վիճակագրութիւններ եւն.: Յաճախ միեւնոյն փաստաթուղթին մէջ տարատեսակ նիւթեր միաժամանակ կը հանդիպին: Բովանդակութեան առումով՝ կարելի է առանձին խումբ նկատել Եգիպտոսէն Խորհրդային Հայաստան 1947-48 եւ 1962-65՝ հայրենադարձութեան ալիքներուն վերաբերող փաստաթուղթերը:

Հեղինակներն ու սփացողները.- Չնչին բացառութիւններով՝ Եգիպտոսէն ղրկուած փաստաթուղթերուն հեղինակները դիւանագէտներ (դեսպան, հիւպատոս, քարտուղար, խորհրդական, կցորդ եւ այլք) կամ այդ պիտակի տակ գործող ԽՍՀՄի Պետական Անվտանգութեան Կոմիտէի (ՊԱԿ, Քա. Կէ. Պէ.) աշխատակիցներ են: Հայրենադարձութեան առնչուած կարգ մը փաստաթուղթեր կը կրեն Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան (ԿԿ) կեդրոնական կոմիտէի (առաջին) քարտուղար Եաքով Զարոպեանի ստորագրութիւնը: Ստացողները Մոսկուայի կեդրոնական մարմիններու՝ ԽՍՀՄի արտաքին գործոց նախարարութեան, ՊԱԿի կամ Խորհրդային Միութեան ԿԿ կեդրոնական կոմիտէի տարբեր բաժիններու վարիչներ կամ անոնց տեղակալներն են:

Մոսկուա հասած փաստաթուղթերէն անոնք, որոնք կը վերաբերէին եգիպտահայ գաղութին կամ անոր վերաբերեալ տեղեկութիւններ եւ/կամ վերլուծումներ կը պարունակէին՝ ԽՍՀՄի արտաքին գործոց նախարարութիւնը պատճէնելով կը ղրկէր Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւն, որ, իր հերթին զանոնք կը վերահասցէագրէր Հայաստանի ԿԿ կեդրոնական կոմիտէ, ՀԽՍՀի կառավարութիւն եւ գերագոյն խորհուրդի նախագահութիւն: Հազուադէպ են այն փաստաթուղթերը, որոնք հայրենադարձութեան համար Եգիպտոս գործուղուած ՀԽՍՀի պատուիրակներ[2] ուղղակի ղրկած են Խորհրդային Հայաստանի կուսակցական եւ պետական համապատասխան մարմիններուն կամ անոնց ղեկավարներուն:

Լեզուն եւ գրելաձեւը.- Փաստաթուղթերը բացառապէս ռուսերէն են՝ իբրեւ հանրապետութիւններու միութիւն ԽՍՀՄի պետական-պաշտօնական միակ լեզուն: Գրեթէ բոլոր թուղթերն ունին Ա-4 չափը (21 x 29,7 սմ.) եւ մեքենագրուած են:

---

[2] 1962ի Յունիսին արդէն Եգիպտոս ժամանած էին այդ պատուիրակները՝ Ա. Խ. Շահինեանն ու Մարտիրոս Սարգսի Մելքումեանը: Վերջինս ԽՍՀՄ ՊԱԿի գնդապետ էր եւ յետագային վարեց Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահի տեղակալի պաշտօնը:

Ժամանակաշրջանը.- Մեր ուսումնասիրութեան մէջ դիտարկած ենք 21 տարուայ ժամանակահատուածի (1944-65) փաստաթուղթեր:

Օգտուած ենք Հայաստանի Ազգային Արխիւին մէջ պահուող փաստաթուղթերէն, նաեւ Ռուսաստանի Դաշնութեան Նորագոյն Պատմութեան Ռուսական Պետական Արխիւին մէջ պահուող Խորհրդային Միութեան ԿԿ կեդրոնական կոմիտէի քարտուղարութեան ենթադիւանի 4րդ ֆոնտի 16րդ ցուցակի 1003րդ միաւորէն, որ կը կրէ «ԽՄԿԿ ԿԿի Քարտուղարութեան 5 Մայիս 1961ի նիստի թիւ 182 որոշման նիւթեր» ընդհանուր խորագիրը եւ «յուժ գաղտնի» նշումը՝ թղթածրարի բոլոր փաստաթուղթերուն համար[3]:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայրենադարձութիւնը հայոց Ի. դարու պատմութեան ամէնէն նշանակալից ու դրական իրադարձութիւններէն է: Մեր համոզմամբ, ան պատշաճ ուշադրութեան, վերլուծութեան, անոր գործընթացը գիտական քննարկման եւ ամբողջական արժեւորման չէ արժանացած մեր պատմագրութեան մէջ, մինչդեռ պէտք է հնարաւոր մանրամասնութեամբ անոր տարբեր փուլերը քննարկուէին, վեր հանուէին հայրենադարձութեան կազմակերպման եւ իրականացման, հայրենադարձներու համարկման հոլովոյթին մէջ տեղ գտած թերիները՝ անոնք հայրենադարձութեան յառաջիկայ փուլերու ընթացքին բացառելու համար:

Հայրենադարձութիւնը կը նկատենք մեր ազգին առջեւ այսօր ծառացած բազմաբնոյթ մարտահրաւէրներու արդիւնաւէտ դիմագրաւման գլխաւոր միջոցներէն մէկը՝ եթէ ոչ գլխաւորը:

Իր աշխարհագրական դիրքով, աշխատանքի լայն հնարաւորութիւններով եւ ԺԹ. դարու սկիզբին Մուհամմէտ Ալիի հոն հաստատած խտիւական կիսանկախ, ժառանգական իշխանութեան շնորհիւ, Եգիպտոսը ԺԹ. դարու կէսերէն դէպի իրեն կը հրապուրէր հայ գործարար անհատները: Գաղութը զգալիօրէն աճեցաւ 1894-96ի ապտուլհամիտեան եւ 1909ի ու 1915-23ի երիտթրքական ու քեմալական ցեղասպանական ալիքներուն հետեւանքով: Ըստ տարբեր աղբիւրներու, 1920ականներու վերջ-30ականնե-

[3] Աղբիւրներուն յղումները նշած ենք հետեւեալ յապաւումներով.- ՀԱԱ՝ Հայաստանի Ազգային Արխիւ, ֆ.՝ ֆոնտ, ց.՝ ցուցակ, գ.՝ գործ, թ.՝ թերթ, թթ.՝ երթեր, ՌԴ ՆՊՌՊԱ – ԽՄԿԿ ԿԿ Ք, ֆ. 4, ց. 16, թիւ 1003: Օգտագործած ենք նաեւ հետեւեալ յապաւումները.- ԱԳՆ՝ արտաքին գործոց նախարարութիւն, ԱՄՀ՝ Արաբական Միացեալ Հանրապետութիւն, ԽՄԿԿ ԿԿ՝ Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէ, ԽՍՀՄ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւն, ՀԽՍՀ՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն, ՆԳՆ՝ ներքին գործոց նախարարութիւն, ՆԽ՝ նախարարներու խորհուրդ:

րու սկիզբին՝ Եգիպտոսի հայութիւնը կը հաշուէր 50-60 հազար անձ: Գաղութը կ'ապրէր լիարժէք կեանքով, խաղաղ ու բարգաւաճ:

Մեր հանդիպած եւ եգիպտահայ գաղութին վերաբերող եւ 1944-65 թուականներն ընդգրկող խորհրդային գաղտնի փաստաթուղթերուն զգալի տոկոսը ուղղակի կամ անուղղակիօրէն կը վերաբերի հայրենադարձութեան: Եգիպտոսէն, Սուրիայէն ու Կիպրոսէն անցեալ դարուն եղած են հայրենադարձութեան հիմնական երկու ալիքներ՝ 1946-48ին եւ 1962-65ին: Արտասահմանէն հայոց զանգուածային հայրենադարձութեան համար ԽՍՀՄի ՆԽՆ երկու անգամ՝ 21 Նոյեմբեր 1945ին եւ 12 Օգոստոս 1961ին կայացուցած է համապատասխան որոշումներ: Գաղութներուն մէջ հայրենադարձութիւնը կազմակերպելուն օժանդակելու համար, Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը երկուական ներկայացուցիչ կը գործուղէր: Անոնցմէ նուազագոյնը մէկը ՊԱԿի աշխատակից պէտք է ըլլար:

Երկրորդ աշխարհամարտի աւարտէն վեցամսեակ մը չանցած՝ ինչեց հայրենադարձութեան կոչը: Սփիւռքի - յատկապէս Միջին Արեւելքի - գաղութներուն մէջ խանդավառութիւնը աներեւակայելի տարողութիւն ստացաւ: Թուրքիայէն հայկական հողերու վերադարձի խորհրդային պահանջները կը նպաստէին այդ խանդավառութեան:

Հայրենադարձութեան վերականգնման լուրը խանդավառութեամբ ընդունուեցաւ նաեւ եգիպտահայ գաղութին մէջ: Թարգմանն ըլլալով այդ զգացումներուն, Եգիպտոսի Ազգային Խորհուրդը ԽՍՀՄի Ժողովրդային Կոմիսարներու Խորհուրդին յղած 13 Դեկտեմբեր 1946 թուակիր ֆրանսերէն հեռագիրով անոր կը յայտնէր, թէ եգիպտահայութիւնը խանդավառութեամբ ընդունած է այդ լուրը եւ իր «ջերմ երախտագիտութիւնը» կը յայտնէ այդ առթիւ[4]:

Խանդավառութիւնն այնքան մեծ էր, որ շատեր սկսան պատրաստութիւններ տեսնել 1946ի՛ն իսկ հայրենիք մեկնելու. սկսան ծախել իրենց կալուածները, լուծարել իրենց գործերը եւն.: Սակայն, հաշուի առնելով զանազան հանգամանքներ, խորհրդային իշխանութիւնները Եգիպտոսէն հայրենադարձութիւնը յետաձգեցին 1947ին՝ նախապատուութիւնը տալով Լիբանանի եւ Սուրիոյ գաղութներէն հայրենադարձութեան:

Ըստ Գահիրէի մէջ ԽՍՀՄի առաքելութեան *սթաժէօր-ռեֆերենտ* (խորհրդական) Գ. Շահնազարեանի 21 Սեպտեմբեր 1946ի տեղեկանքին, առ 15 Սեպտեմբերը հայրենադարձութեան համար արձանագրուած էին.- Գահիրէի մէջ՝ 675 ընտանիք, 2380 հոգի, Աղեքսանդրիոյ մէջ՝ 450 ընտանիք, 1536 հոգի, ընդհանուրը՝ 1125 ընտանիք, 3916 հոգի, այսինքն գա-

[4] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 73, թ. 3:

ղութին շուրջ 10 տոկոսը[5]: Արձանագրութիւնները կը կատարէ թեմակալ առաջնորդի գլխաւորած Ներգաղթի Կոմիտէն, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մը կը գործեն 9-13 հոգինոց 5ական ենթակոմիտէներ, որոնք կ'ամբողջացնեն ներգաղթի կեդրոնական՝ երեւանեան կոմիտէին կազմած հարցարանները:[6]

Այնուհետեւ Շահնազարեան կը գրէ հայրենադարձութեան նկատմամբ ՀՅԴի եւ հայ կաթողիկէ կղերի բացասական դիրքորոշումներուն մասին ու կարգ մը նմուշներ կը ներկայացնէ այդ ուղղութեամբ անոնց գործնական քայլերէն ու քարոզչութենէն: Ան կը յայտնէ, թէ շուրջ երեք հազար հայ կաթողիկէներէն հայրենադարձութեան համար արձանագրուած է ընդամէնը ... երեք հոգի[7]: Անցնելով ՌԱԿի դիրքորոշման, ան կը խօսի ռամկավարներու երկդիմի կեցուածքին մասին: ՌԱԿի մամուլը թէեւ ամէն օր յօգուտ հայրենադարձութեան հրապարակումներ կը կատարէ, սակայն կուսակցութեան անդամներուն հրահանգ տրուած է արձանագրուիլ հայրենադարձութեան համար, բայց երբ մեկնելու պահը գայ, հրաժարիլ զանազան պատրուակներով: Առ 15 Սեպտեմբերը արձանագրուած են 25 ռամկավարներ, որոնց շարքին՝ ՌԱԿի Եգիպտոսի շրջանային վարչութեան անդամներ Ալեքսանդր Սարուխանը, Յակոբ Արամեանն ու Համբարձում Գարայեանը[8]: Փաստաթուղթի յետագայ էջերուն մէջ եւս Շահնազարեան կը ներկայացնէ օրինակներ հայրենադարձութեան նկատմամբ ՌԱԿի երկակի դիրքորոշումէն[9]:

Ըստ Շահնազարեանի 15 Նոյեմբեր 1946ի տեղեկանքին, 1 Նոյեմբեր 1946ի դրութեամբ հայրենադարձութեան համար արձանագրուած էր արդէն 12,500 հոգի, այսինքն գաղութին շուրջ 40 տոկոսը: Ըստ ընկերային վիճակի կամ աշխատանքի բնոյթի՝ դիմորդներուն 80%ը բանուոր է կամ մանր արհեստաւոր, 10%ը՝ մանր առեւտրական, 4%ը՝ մտաւորական, իսկ մնացեալ 6%ը միջին եւ հարուստ խաւերէն էին: Ըստ կուսակցականութեան, շուրջ 100 հնչակեան արձանագրուած է (կամ կուսակցութեան անդամներուն 95%ը), շուրջ 50 ռամկավար արձանագրուած է (այսինքն ՌԱԿի անդամներուն 25-30%ը), նոյնքան ալ դաշնակցական (ՀՅԴի անդամներու 40-45%)ը: Ըստ յարանուանութեան, հայ կաթողիկէ՝ շուրջ 60 ընտանիք, աւետարանական՝ 90 ընտանիք (համայնքին 90%ը), 1 ընտանիք՝ ազատ որմնադիր եւ 5 իսլամ ընտանիք՝ հայուհիներու հետ ամուսնացած արաբներ եւ անոնց երեխաները: Մնացեալները հայ առաքելականներ

---

[5] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 18:

[6] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 17-18:

[7] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 19:

[8] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 20:

[9] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 37-39: Փաստաթուղթի հեղինակման շրջանին, Յակոբ Արամեան *Արեւի* խմբագիրն էր (1945-47):

էին[10]: Այնուհետեւ, տեղեկագրողը կը ներկայացնէ իսլամներէն երեք, իրականութեան մէջ՝ երկու հոգի (դիւանագէտը ելեւմուտքի նախարարութեան մէջ պատասխանատու պաշտօնեայ քրիստոնեայ ղպտի Այյատ Աուատը ընդգրկած է իսլամներու շարքին...): Հայրենադարձութեան դիմող իսլամներէն են համալսարանի դասախօս, անկուսակցական, արաբ ոմն Ֆաուզին եւ ազգութեամբ թուրք Ճաւատ պէյը: Երկուքին կիները հայուհի են: Ֆաուզիի չորս զաւակներէն երեքը ստացած են հայկական կրթութիւն: Իսկ Ճաւատ պէյը եղած է Թուրքիոյ խորհրդարանի անդամ, հարուստ է, ճանչցողները զայն «կը բնութագրեն իբրեւ անգլիասէր ու անգլիացիներու մարդ»[11]: Շահնազարեան կը յայտնէ նաեւ հայրենադարձուող երկու քահանաներու եւ կարգ մը հարուստներու անուններ՝ տեղեկութիւններ տալով անոնց կենսագրութիւններէն[12]:

Եգիպտոսէն հայրենադարձութիւնը լուրջ խոչընդոտներու կը բախէր: Անոնց հիմնականները եգիպտահայ յայտնի փաստաբան, Հայ Ազգային Կոմիտէի նախագահ Ստեփան Շահպազը շարադրած է «1 Սեպտեմբեր Աղեքսանդրիա» նշումները եւ «Տեղեկագիր եգիպտահայոց ներգաղթին կարգ մը խնդիրներուն վերաբերեալ» վերնագիրը կրող փաստաթուղթին մէջ, որուն հայերէնէ ռուսերէն թարգմանութիւնը կը պահպանուի ՀԱԱի մէջ: Ստորեւ այդ խնդիրներէն շարք մը.-

- Արգիլուած էր երկրէն դուրս հանել ոսկի, արծաթ, ադամանդ եւ դրամ.
- Անչափահասի մը ժառանգած կալուածներու վաճառքը բաւական բարդ գործողութիւններ ու մինչեւ 6 ամիս ժամանակ կը պահանջէր.
- Մինչեւ հայրենադարձութեան սկիզբը իրենց կալուածները ծախել չկրցողներ կամ գումարը գանձել չկրցողներ պիտի ըլլային.
- Ներգաղթող պետական եւ ոչ-պետական պաշտօնեաներու թոշակի գանձման հարցեր առկախ կը մնային.
- Ապահովագրումներու ու մահացած ապահովագրեալներու ժառանգորդներու կողմէ գումարի գանձնման դժուարութիւններ եւն.:

Շահպազ կը նշէ. «*Վերոյիշեալ հարցերը սրիպողաբար լուծումի կարօտ են: Բազմաթիւ ընտանիքներ պիտի չկրնան մեկնիլ, հակառակ իրենց բուռն փափաքին՝ եթէ այս հարցերը լրջօրէն չկարգադրուին*»: Այդ «կարգադրութիւնը» Շահպազ կը տեսնէ կառավարութենէ կառավարութիւն կապին մէջ:[13]

Համանման հարցեր արծարծած է Եգիպտոսի մէջ ԽՍՀՄ դեսպանորդ Ալեքսէյ Տմիթրիեւիչ Շչիպորինը ուղղակի ՀԽՍՀ արտաքին գործերու նախարար (1944-47), այնուհետեւ նախարարներու խորհուրդի նախագահ

[10] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 23:
[11] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 24:
[12] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 24:
[13] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թթ. 11-14:

(1947-52) Սահակ Կարապետեանին հասցէագրած 29 Սեպտեմբեր 1946 թուակիր, «գաղտնի» նշակիր նամակին մէջ: Դեսպանորդը կը դժգոհի, թէ նախապէս Կարապետեանին իր ղրկած տեղեկատուական բնոյթի տեղեկանքներուն մէջ իր բարձրացուցած հարցերուն պատասխան չէ ստացած Կարապետեանի՝ իրեն ուղղած 10 Սեպտեմբերի գրութեան մէջ: Շչիպորին կը յայտնէ, թէ իր այս նամակին կը կցէ տեղեկանք մը հայրենադարձութեան ընթացքին մասին, եւ կը խնդրէ զինք տեղեակ պահել հետեւեալներուն խնդրով.-

1. Հայրենադարձներու խնայողութեանց փոխադրումը ինչպէ՞ս պիտի կատարուի: Ոմանք ունին 1000էն մինչեւ 100,000 եգ. ոսկի խնայողութիւն ու անոնց արտահանման մասին կը հարցնեն խորհրդային առաքելութեան, «սակայն մենք չենք կրնար զիրենք բաւարարող պատասխան տալ»: Շչիպորին կը հարցնէ, թէ հայրենադարձութիւն կատարուող միւս երկիրներու պարագային այս հարցը ինչպէ՞ս կը լուծուի:

2. Կան 50-60 հայրենադարձներ, որոնք զանազան արհեստներու իրենց մեքենաները կը փափաքին տանիլ իրենց հետ ու զանոնք խորհրդային կազմակերպութիւններուն տալ: Զիրենք կը հետաքրքրէ, թէ իրենց պիտի հատուցե՞ն այդ մեքենաներուն դիմաց եւ ինչպէ՞ս: «Այս հարցումներուն ալ կը դժուարանանք պահանջուող պատասխանները տալ, քանի որ այս մասին իրադրութիւնը չենք գիտեր»:

3. Շատ հայրենադարձներ ունին սեփական ինքնաշարժներ եւ անոնց զգալի մասը կը փափաքի զանոնք իրենց հետ տանիլ: Շչիպորին կը հարցնէ, թէ այս թոյլատրելի՞ է[14] :

Հայրենադարձներու նկատմամբ պետական սեղմումները բաւական մանրամասն նկարագրուած են Շահնազարեանի 27 Փետրուար 1947 թուակիր, «Տեղեկանք Եգիպտոսէն հայոց գալիք հայրենադարձութեան կապակցութեամբ տրամադրութիւններուն մասին՝ 20 Փետրուար 1947ի դրութեամբ» վերնագիրով ծաւալուն փաստաթուղթին մէջ, որուն վերջին հատուածն[15]ունի «Հայրենադարձութեան նկատմամբ եգիպտական կառավարութեան դիրքորոշումը» վերնագիրը: Տեղեկանքը կազմողը եգիպտական կառավարութիւնը կը մեղադրէ խորհրդայնամէտ տրամադրութեանց աճին խոչընդոտելու եւ հայերէն նիւթական միջոցներ կորզելու նպատակով անոնց վրայ տնտեսական ճնշումը ուժեղացնելու մէջ, եւ իր այս հաստատումներն ապացուցող փաստեր կը բերէ: Թուարկենք զանոնք.-

- ՆԳՆը խորհրդարան ներկայացուցած է եգիպտաբնակ բոլոր հայոց երկրի քաղաքացիութիւն պարտադրելու օրէնքի նախագիծ, այլապէս սպառնալով արտաքսել քաղաքացիութիւն չստացողները[16]:

---

[14] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թթ. 15-16:
[15] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թթ. 6-9:
[16] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 6:

- ՆԳՆը ամէն կերպ կ'աշխատի Գահիրէի ու Աղեքսանդրիոյ նահանգապետերուն միջոցով ձեռք ձգել հայրենադարձութեան արձանագրուած հայոց ցուցակները:
- ՆԳՆի գրաքննութեան բաժինին մէջ աւելցուած է անձ մը, որուն պարտականութիւնն է ամէնօրեայ հսկողութեան տակ պահել հայկական մամուլը եւ թոյլ չտալ իշխանութեանց համար աննպաստ նիւթերու հրապարակումը:
- Հայերը կը բողոքեն, թէ վերջին 3-4 ամիսներուն նամակ չեն ստանար ԽՍՀՄի մէջ ապրող իրենց ազգականներէն: Պարզուած է, որ այդ նամակները վար դրուած են ՆԳՆի գրաքննութեան բաժինին մէջ՝ համայնավար քարոզչութիւն պարունակելու կասկածանքով:
- Թեմակալ առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեան երբ այցելած է Մահմուտ ալՆոքրաշի փաշային՝ զայն շնորհաւորելու վարչապետ նշանակուելուն առթիւ, զրոյցի ընթացքին փաշան հարցուցած է. «Եգիպտոսի գաղութի հայոց մէջ համայնավարները շա՞տ են, Խորհրդային Հայաստան մեկնած հայերէն նամակներ կը հասնի՞ն, անոնք ինչպէ՞ս կ'արտայայտուին իրենց նոր կեցավայրին մասին: Վարչապետը յայտարարած է, թէ փափաքելի է, որ համայնավարութեան հակող բոլոր հայերը մեկնին Եգիպտոսէն»:
- Եգիպտոսի քաղաքական ոստիկանութիւնը քանի մը անգամ հարցաքննած է Հայաստանի Գրողներու Միութեան համագումարին[17] մասնակցած բանաստեղծ Արսէն Երկաթը, պարզելու, թէ ան Եգիպտոս վերադառնալէն ետք պոլշեւիկեան քարոզչութիւն ընելու ի՞նչ հրահանգներ ստացած է, եւ թէ զանոնք ինչպէ՞ս կը կատարէ[18]:
- ՆԳՆ պատասխանատու աշխատող Հուսէյն Սըրրի փաշան հայու մը ըսած է, թէ Թուրքիայէն հողեր պահանջելով, հայերը «ԽՍՀՄի կայսերապաշտական ձգտումներուն անմիջական գործակից դարձած են ըստ էութեան»:
- Ծերակուտական մը ներկայացուցած է օրէնքի նախագիծ մը՝ արգիլելու երկրէն հայոց գումարներ, թանկարժէք մետաղներ եւ իրեր արտահանելը: Օրէնքի նախագիծը դեռ կը քննարկուի, սակայն ծերակուտականներուն մեծ մասը անոր կողմնակից է: Կարգ մը ծերակուտականներ առաջարկած են այդ արժէքներուն փոխարէն ԽՍՀՄին բամպակ տրամադրել:[19]

---

[17] Համագումարը կայացած է 25 Սեպտեմբեր-1 Հոկտեմբեր 1946ին, Երեւանի մէջ:

[18] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թթ. 7-8:

[19] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 8: Շահնազարեան կը նշէ, թէ Բ. աշխարհամարտին պատճառով, Եգիպտոսի մէջ հսկայական քանակութեամբ բամպակ կուտակուած է, որ չի իրացուիր:

- Ելեւմուտքի նախարարութիւնն սկսած է հայոց նկատմամբ «տնտեսական ուժեղ ճնշում» բանեցնել: Հաստատագրուած հարկերը ելեւմտական տարուայ աւարտին պահանջելու փոխարէն, հարկային վարչութիւնը սկսած է վերջին 5-10 տարիներու եկամուտներու տետրակներն ստուգել՝ զանազան շինծու պատրուակներով: Վարչութիւնը արհեստականօրէն կ'աւելցնէ եկամուտներուն չափը ու հայոց «կարողութենէն վեր հարկեր կը սահմանէ»[20]: Շահնազարեան քանի մը ապօրինութեանց օրինակներ կը բերէ, ապա կը ներկայացնէ յուժ յատկանշական ու վտանգաւոր փաստ մը. «*Ըստ հիւպատոսական բաժինի այցելուներուն, ծերակուտական մը այս առնչութեամբ յայտարարած է. "Հայերը մեր քով մերկ եկան եւ հոս մեծ հարստութիւն դիզեցին: Անոնց հարստութիւնը մեզի՛ կը պատկանի, եւ մինչեւ որ իրենց ունեցուածքը մեզի չձգեն՝ մեզմէ չեն կրնար հեռանալ*"»[21]:
- Հայեր կը հեռացուին առեւտրական ու արդիւնաբերական ձեռնարկութիւններէ, իսկ ուրիշներու կը մերժեն աշխատանքի ընդունիլ: Անոնցմէ շատեր հիւպատոսական բաժին կը դիմեն հոն աշխատելու կամ անոր միջնորդութեամբ աշխատանք մը ճարելու համար:[22]

Հայրենադարձութիւնը եւ անոր քարոզչութիւնը լուրջ խոչընդոտներու կը բախէր նոյնինքն գաղութին մէջ: Եգիպտոսէն հայրենադարձութեանն առնչուած խորհրդային գաղտնի փաստաթուղթերուն մէջ յաճախ կը հանդիպին տեղեկութիւններ, վերլուծումներ եւ կանխատեսումներ՝ հայկական այս կամ այն կազմակերպութեան կամ կողմին՝ հայրենադարձութեան նկատմամբ դիրքորոշումներուն մասին: Ներկայացնենք իւրաքանչիւր կողմի դիրքորոշումէն 1-2 օրինակ՝ ըստ խորհրդային ներկայացուցիչներու կազմած փաստաթուղթերուն:

Դեսպանորդ Շչիպորինը ԽՍՀՄի արտաքին գործոց նախարարի տեղակալ հայազգի Վլատիմիր Կէորկիեւիչ Տեքանոզովին ուղղած իր 15 Նոյեմբեր 1946 թուակիր, «գաղտնի» նշակիր նամակին կցած է շատ ընդարձակ հաշուետուութիւն մը[23], զոր կազմած է ԽՍՀՄ առաքելութեան *սթաժէօր-ռեֆերենտ* (խորհրդական), Եգիպտոսի Ներգաղթի Կոմիտէին հետ խորհրդային առաքելութեան կապը հանդիսացող Շահնազարեանը: Շչիպորին իր վերադասին կը յայտնէ, որ հաշուետուութեան մէկ օրինակն ալ կը ղրկուի ՀԽՍՀ արտաքին գործոց նախարար Կարապետեանին:

Փաստաթուղթը կը կրէ «Հայկական ԽՍՀ հայրենադարձուիլ փափաքող եգիպտահայոց արձանագրութեան ընթացքի եւ սպասուող հայրենա-

[20] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 8:
[21] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 9:
[22] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 9:
[23] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թթ. 23-40:

դարձութեան վերաբերեալ այստեղի հայկական գաղութին մէջ տիրող տրամադրութեանց մասին» վերնագիրը:

Հայ կաթողիկէ համայնք.- Այս փաստաթուղթին երրորդ հատուածը կը վերաբերի հայրենադարձութեան նկատմամբ հայ կաթողիկէ կղերի եւ համայնքի առանձին անհատներու դիրքորոշումներուն:

Փաստաթուղթին հեղինակը կը յայտնէ, թէ հայ կաթողիկէներուն թիւը շուրջ 3000 հոգի է, որոնք Գահիրէի ու Աղեքսանդրիոյ մէջ թեմական խորհուրդներ ունին: Շահնազարեան կը ներկայացնէ հայրենադարձութեան նկատմամբ հայ կաթողիկէ կաթողիկոս-պատրիարք Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեանի *Թուղթ հովուական*ին[24] դրոյթները, եւ կը յայտնէ, թէ այդ թուղթը «բուռն հակազդեցութեան» արժանացած է համայնքին մէջ: Ապա նմուշներ կը ներկայացնէ հայրենադարձութեան դէմ Գրիգոր վրդ. Կերկերեանի գործունէութենէն: Վերջինս եկեղեցւոյ բակին մէջ հաւատացեալներուն իբր թէ Խորհրդային Հայաստան չերթալու կոչ ուղղած է, ուր անոնք անաստուածներու պիտի վերածուին: «Հայաստան մի՛ երթաք, եթէ չէք ուզեր Բարձրեալին բարկութիւնը ձեր վրայ հրաւիրել»՝ իբր ըսած ըլլայ Կերկերեան: Ներկաները վրդովուած են այս լսելով, իսկ անոնցմէ մէկը նոյնիսկ քար նետած է վարդապետին ուղղութեամբ: «Տեսնելով ժողովուրդին ընդվզումը, Կերկերեան հազիւ հազ պահուըտեցաւ եկեղեցւոյ մէջ»: Այդուհանդերձ, ան, թեմի առաջնորդ Յակոբ արք. Նեսիմեանի հրահանգով, կաթողիկէ հայոց տուները կ'այցելէ եւ հակախորհրդային քարոզչութիւն կը կատարէ: Շահնազարեան կը գրէ, թէ «հայրենադարձութեան դէմ հակախորհրդային քարոզչութիւն կ'ընեն նաեւ մայրապետերը»: Ան կը ներկայացնէ այդ քարոզչութենէն քանի մը օրինակներ, զորս իբրթէ հայ կաթողիկէ մայրապետները կը քարոզեն.-[25]

- Խորհրդային Հայաստանի մէջ կաթողիկէները կը ստիպեն հայ առաքելական դառնալ, հոգեւորականները կը ստիպեն անոնց արժանապատուութիւնը նսեմացնող գործեր կատարել հաւաքական տնտեսութիւններուն (*կոլխոզ*) եւ գործարաններուն մէջ.
- Մայրապետերը կը ստիպեն կենակցիլ ռուս զինուորներու հետ.
- Հայրենադարձներուն գումարները կը բռնախլեն.
- Մայրերը ամուսիններէն ու զաւակներէն կ'անջատեն...
- «ԽՍՀՄի մէջ ընտանիք չկայ, կինը ինչքան ուզէ՝ կրնայ այդքան ամուսին ունենալ»:

Սակայն կան հայ կաթողիկէներ, որոնք ոչ միայն բացայայտօրէն կը մերժեն, այլեւ կը դատապարտեն նորընտիր կարտինալ Աղաճանեանին կեցուածքը: Շահնազարեան անուանապէս կը յիշատակէ ոմն Պասմաճ-

---

[24] Կարդ. Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան, *Թուղթ հովուական*, [ա.տ.], Պէյրութ, 1946, 12 էջ:

[25] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 26:

եանի բաց նամակը, նաեւ *Արեւ*ի մէջ լոյս տեսած Պերճ Չիլեանի բաց նամակն ու երգիծանկարիչ Սարուխանի գրութիւնը, վաճառական Տետէեանի բաց նամակը *Սաւառնակ* թերթին մէջ, եւ հատուածներ կը մէջբերէ այդ գրութիւններէն: Շահնազարեան կը յայտնէ յուժ կարեւոր տեղեկութիւն մը. «Սարուխանի եւ Չիլեանի նախաձեռնութեամբ, Գահիրէի կաթողիկէներուն մէջ աշխատանք կը տարուի իրենց ազդեցութեան ենթարկելու վարդապետերէն մէկը, որուն գլխաւորութեամբ ցուցադրաբար հրաժարիլ հայ կաթողիկէներու կաթողիկոսին ենթարկուելէ, Խորհրդային Հայաստան հայրենադարձուիլ, ուր սեփական անկախ Հայ Կաթողիկէ Եկեղեցի հիմնել»[26]:

Նոյն ծիրին մէջ, Շահնազարեան կը գրէ, թէ Աղաճանեանի *Թուղթ*էն դժգոհ մնացած են նոյնիսկ արաբախօս հայերը: Անոնցմէ 7 լեզուի տիրապետող (բայց հայերէն չիմացող) Նուրհան Ֆեսճեան ԽՍՀՄի հիւպատոսական բաժինին մէջ իբր ըսած է. «*Ամօթ կը զգամ մեր ամէնապատիւ կարտինալի հակազգային դիրքորոշման համար: Որոշած եմ, ինչ ալ ըլլայ, խզել կապս կաթողիկէութեան հետ եւ հայրենիք երթալ՝ յոյսով նախնիներուս կերպարն սրտանալ ու իբրեւ հայ մեռնիլ: Հայ Կաթողիկէ Եկեղեցին հայ ժողովուրդի շահերուն դաւաճանը դարձած է: Կարտինալ Աղաճանեանը երկրորդ Վասակն է, Վասակէն ալ գէշ է*»[27]: Շարունակելով օրինակներ գրառել, Շահնազարեան կը մէջբերէ կօշիկի երկու խանութի սեփականատէր կաթողիկէ ոմն Մուշեղեանի հետ պատահածը, որ մեզի հաւաստի չի թուիր: Վերջինս դիմած է հիւպատոսական բաժին, որպէսզի իր մոլեռանդ կաթողիկէ կնոջը համոզեն իրեն հետ հայրենադարձուիլ: Այդ կնոջը հայ կաթողիկէ վարդապետը համոզած է, թէ ԽՍՀՄի մէջ կրօն գոյութիւն չունի, բոլոր կանանց պոռնկանոցներու մէջ կ'աշխատցնեն ռուս զինուորներու համար, ԽՍՀՄը մեծ բանտ մըն է: Մուշեղեան ի վերջոյ կ'ամուսնալուծուի ու կ'արձանագրուի հայրենադարձութեան համար[28]:

Հայ աւետարանական համայնք.- Շահնազարեան կը յայտնէ, թէ Գահիրէի մէջ կայ մինչեւ 100 հայ աւետարանական ընտանիք, ու կը գրէ. «*Հայրենադարձութեան նկատմամբ հայ բողոքականներուն դիրքորոշումը ընդհանուր առմամբ բացասական չէ: Բացի քանի մը հարուստներէ, Գահիրէ գրեթէ բոլոր բողոքականները հայրենադարձութեան արձանագրուած են*»: Սակայն, Շահնազարեան կը յայտնէ այլ բնոյթի մտահոգութիւն մը. «*... բողոքական քարոզիչները մտադիր են հայրենադարձութենէն եւրք Խորհրդային Հայաստանի մէջ մեծ աշխատանք տանիլ բողոքականներուն շարքերը ընդլայնելու ու իրենց Եկեղեցին Խորհրդային Հայաստանի մէջ տիրապետող Եկեղեցի դարձնելու համար*»: Իր ենթադրութեան իբրեւ

---

[26] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 29:
[27] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 30:
[28] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 30:

վկայութիւն ան կը մէջբերէ բողոքական «քարոզիչ» Թէոտոր Տաղլեանի խօսքը խորհրդային առաքելութեան հիւպատոսական բաժինին մէջ՝ վերապատուելի Տաղլեանի մասին սխալ եւ զրպարտչական բնոյթի տեղեկութիւններ հաղորդելով[29]:

ՀՅԴ.- Շատ հետաքրքրական տեղեկութիւններ կը պարունակէ նոյն հաշուետուութեան 6րդ հատուածը, որ ունի «Դաշնակ[ցական]ներուն պահուածքը» վերնագիրը: Ըստ Շահնազարեանի, դաշնակցականները սկիզբը չէզոք դիրք բռնած են, նոյնիսկ փափաքած են հայրենադարձութեան կոմիտէներուն անդամակցիլ, ինչ որ անոնց թոյլ չէ տրուած: Զանոնք ընդգրկելու համար միջնորդած է նոյնիսկ թեմակալ առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանը, պատճառաբանելով, թէ զանոնք դուրս ձգելը կրնայ զանոնք մղել քայքայիչ գործունէութեան: Նման կարծիք յայտնած է պատմաբան Արշակ Ալպոյաճեանը, որ ԽՍՀՄի հիւպատոսական բաժինին մէջ ըսած է. «*Դաշնակ[ցական]ները իրենց հայրենիքի իսկական հայրենասէրներ են, անոնք կ'ուզեն ձեզի հետ համագործակցիլ ..., իսկ դուք զանոնք ձեզմէ կը հեռացնէք*»: Ալպոյաճեան խորհուրդ տուած է հայրենադարձուիլ փափաքող դաշնակցականներէն կուսակցութենէն հրաժարիլ չպահանջել[30]:

Հայրենադարձութեան, մասնաւորաբար անոր նկատմամբ ՀՅԴի դիրքորոշումը եղած է առաջնորդարանին մէջ Սիրունեանի եւ Շահնազարեանի 19 Սեպտեմբեր 1946ին կայացած խօսակցութեան առանցքը: Զարմանալի է, որ այդ ու յաջորդ օր դեսպանորդ Շչիպորինի հետ Սիրունեանի հանդիպման մասին Շահնազարեան Մոսկուա զեկուցած է բաւական ուշ՝ գրեթէ երկու ամիս ետք, 15 Նոյեմբեր 1946ին, «գաղտնի» նշակիր զեկուցագիրով[31]: Սիրունեան խորհրդահայ դիւանագէտին կը ներկայացնէ վերջին շրջանին ՀՅԴի պաշտօնաթերթ *Յուսաբեր*ի հակախորհրդային ելոյթներն ու հայրենադարձութեան դէմ քարոզչութիւնը: Վերջինս չէզոքացնելու նպատակով, ան կը հանդիպի դաշնակցական ղեկավարներ Պաղտիկեանի եւ Գաբրիէլ Լազեանի[32] հետ, յստակացնելու թէ ՀՅԴն հայրենադարձութեան կո՞ղմ է, թէ՞ ոչ: Երկուքը միաբերան կ'արտայայտուին ի նպաստ հայրենադարձութեան[33]. աւելին, անոնք կը հաւաստեն. «*Դաշնակցութիւնը անկեղծօրէն կը փափաքի, որ [միւս] հայոց հետ հայրենիք վերադառնան նաեւ Դաշնակցութիւն կուսակցութեան բոլոր շարքային անդամները, որու վերաբերեալ կուսակցական ղեկավար մարմինները համապատասխան ցուցում տուած են վարի օղակներուն ... Պաղտիկեան սկսաւ ապացուցել,*

---

[29] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 30-31:
[30] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 34:
[31] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թթ. 41-44:
[32] ՀՅԴ գործիչ, խմբագիր, պատմաբան Գաբրիէլ Լազեան (1893-1959):
[33] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 41:

թէ դաշնակ[ցական]ներու «Յուսաբեր» թերթին անբարեացակամ դիրքորոշումը պայմանաւորուած է հայրենադարձութեան գործէն Դաշնակցութիւն կուսակցութիւնը մեկուսացնելու նեղացածութեամբ»: Մամբրէ սրբազան Շահնազարեանին կ'առաջարկէ որոշ դաշնակցականներ ընդգրկել հայրենադարձութեան կազմակերպական կառոյցներուն մէջ, քանի որ անոնք «անկեղծօրէն» կողմնակից են հայրենադարձութեան[34]: Մասնաւորաբար ան կ'առաջարկէ Պաղտիկեանն ընդգրկել Ներգաղթի Կոմիտէին մէջ, որով զգալիօրէն պիտի աճի հայրենադարձութիւն փափաքողներուն քանակը: Շահնազարեան Սիրունեանի խորհուրդ կու տայ Պաղտիկեանն ընդգրկելու հարցով խօսիլ դեսպանորդ Շչիպորինի հետ: Յաջորդ օր խորհրդային առաքելութեան նստավայրին մէջ կը կայանայ այդ հանդիպումը: Սիրունեան դեսպանորդին կը պատմէ դաշնակցական երկու գործիչներու հետ իր խօսակցութեանց մանրամասնութիւնները ու կ'առաջարկէ Պաղտիկեանը կամ ուրիշ դաշնակցականներ ընդգրկել Ներգաղթի Կոմիտէի կազմին մէջ: Շչիպորին համաձայն գտնուելով հանդերձ Ներգաղթի Կոմիտէն գործունեայ անձերով համալրելու գաղափարին հետ, կը յայտնէ, որ դաշնակցականները հայրենադարձութեան նկատմամբ իրենց անկեղծութիւնը պէտք է արտայայտեն նուիրատուութիւններ կատարելով հայրենադարձութեան գործին եւ իրենց մամուլով ի նպաստ հայրենադարձութեան քարոզչութիւն տանելով[35]: Խօսակցութեան մնացեալ մասը կը վերաբերի հայրենադարձներու գումարները արտահանելուն կամ փոխանակելուն, որու կապակցութեամբ Շչիպորին կ'ըսէ. «անհրաժեշտութեան պարագային՝ խորհրդային մարմինները միջոցներ ձեռք կ'առնեն հայրենադարձներուն դրամի փոխադրումը ապահովելու ուղղութեամբ»[36]:

Հայրենադարձութեան նկատմամբ հայկական վերոնշեալ կառոյցներուն եւ Մամբրէ արք. Սիրունեանի դիրքորոշումները տեղ գտած են Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց նախարար Կարապետեանի՝ ՀԿԿի ԿԿի առաջին քարտուղար Գրիգորի Յարութիւնեանին (Արութինով) հասցէագրած 18 Դեկտեմբեր 1946 թուակիր 13 էջնոց «գաղտնի» զեկուցագիրին մէջ[37]: Յայտնապէս, Կարապետեան վերաշարադրած է Շահնազարեանէն ստացուած փաստաթուղթերը, տեղ-տեղ ալ նոյնութեամբ արտագրած զայն:

Շահնազարեանը իր պատրաստած՝ 27 Փետրուար 1947 թուակիր վերոյիշեալ փաստաթուղթին մէջ նաեւ գրած է հայրենադարձութեան նկատմամբ Թեմական Խորհուրդի, ՀԲԸՄի եւ Մամբրէ արք. Սիրունեանի դիրքորոշումներուն մասին: Ըստ Շահնազարեանի, Թեմական Խորհուրդը

[34] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 42:
[35] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 43:
[36] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 113, թ. 44:
[37] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 141, թթ. 1-13:

1922էն իվեր կը գտնուի իր ատենապետ Ճանիկ Չագըրի միանձնեայ իշխանութեան տակ: Չագըր կը բնութագրուի իբրեւ «մեծահարուստ, ծայր աստիճան հակախորհրդային տրամադրուած անձնաւորութիւն, անգլիասէր, իր կապերով ծայր աստիճան կասկածելի մարդ»: Ան ազդեցութիւն ունի գաղութին եւ թեմակալ առաջնորդին վրայ: Անոր ազդեցութեան տակ է նաեւ ՀԲԸՄը, որուն ղեկավարներէն Զարմայր Քեշիշեանն ու Թաշճեանն ալ «ծայրայեղ հակախորհրդային տրամադրութիւններով անձնաւորութիւններ են ու Չագըրի ազդեցութեան տակ կը գտնուին»: Թէ՛ Թեմական Խորհուրդը եւ թէ՛ ՀԲԸՄի մասնաճիւղը «հայոց հայրենադարձութեան բացայայտօրէն դէմ դուրս գալու հնարաւորութիւն չունենալով ... սկսան հնարաւոր պարագաներուն նենգադուլի ենթարկել հայրենադարձութեան հետ կապուած առանձին միջոցառումներ»[38]: Շահնազարեան զոյգ կառոյցները կը մեղադրէ հայրենադարձութեան հանգանակութիւնը ձգձգելու եւ զայն փաստօրէն տապալելու մէջ[39]:

Տեղեկանքին մէջ Մամբրէ արք. Սիրունեանը կը բնութագրուի իբրեւ հակասական կերպար: Ան մինչեւ 1947ի Փետրուարը աշխուժ մասնակցութիւն ունեցած է հայրենադարձութեան նախապատրաստութեան մէջ, «սակայն, անյայտ պատճառներով», ան այդ ամսուան սկիզբէն իվեր ուրիշ պահուածք ունի: Ան իր նախագահած Ներգաղթի Կոմիտէին մէկ նիստը ընդհատած է, յայտարարելով, թէ Ներգաղթի Կոմիտէն կը միջամտէ Թեմական Խորհուրդի եւ ՀԲԸՄի գործերուն, ապա լքած է նիստը ու հեռացած: Շահնազարեան կը շարունակէ. «*Հայրենադարձութեան Կոմիտէի նախագահութեան պարտաւորութիւններէն Սիրունեանի հրաժարումը համընկեցաւ դաշնակ[ցական]ներու ղեկավար Լազեանի յօդուածի [հրապարակութեան] հետ, ուր վերջինս հայ հոգեւորականութիւնը սպառնական կը զգուշացնէ դադրեցնել հայրենադարձութեան առթիւ իր խորհրդայնամէտ քարոզչութիւնը*»: Շահնազարեան կ'ենթադրէ, թէ դաշնակցականները ճնշած են Սիրունեանի վրայ՝ հրաժարելու Ներգաղթի Կոմիտէ նախագահութենէն[40]:

---

[38] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 1:

[39] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 2:

[40] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 165, թ. 3: Փաստաթուղթը Երեւանի մէջ ընթերցած պետական կամ կուսակցական պատասխանատու անձը ընդգծած է Շահնազարեանի տեղեկանքին «Հայրենադարձութեան Կոմիտէի նախագահութեան պարտաւորութիւններէն ... քարոզչութիւնը» հատուածը: Աւելի ուշ, ԽՍՀՄի դեսպանութեան Բ. քարտուղար Սերիոկինի եւ կցորդ Առաքելեանի կազմած, 1 Մարտ 1961 թուակիր, գաղտնի» նշակիր, եգիպտահայ գաղութի մասին տեղեկանքին մէջ, Մամբրէ արք. Սիրունեան կը բնութագրուի իբրեւ «արտաքնապէս առոյգ ու կենսունակ», սակայն ստամոքսի հիւանդութենէ տառապող: «Դաշնակցականները կը փորձեն մեծամասնութիւն ունենալ Թեմական Խորհուրդին մէջ եւ զայն փոխարինել Անթիլիասէն բերուող եպիսկոպոսով: Այդուհանդերձ, Սիրունեան

Եգիպտահայութեան յարաբերաբար անդորր կեանքը 1950ականներուն վերջ գտաւ, մասնաւորապէս 23 Յուլիս 1952ի յեղափոխութեամբ թագաւորական վարչակարգի տապալումէն ետք արաբական ազգայնականութեան գաղափարախօսութեամբ իշխանութեան հասած զինուորականներու կտրուկ քայլերուն հետեւանքով:

Բաւարարուիմ հակահայկական հալածանքներու քանի մը օրինակներ ներկայացնելով.-

- 1952ի յուլիսեան յեղափոխութեան նախորդող ամիսներուն, երկրին ընկերային-տնտեսական վիճակը շատ վատթարացած էր: Անգիտակից տարրեր այդ կը վերագրէին տեղւոյն ազգային ու կրօնական փոքրամասնութիւններուն՝ զանոնք մեղադրելով օտարներու գործակալութեան ամբաստանութեամբ: Հայաստանի Ազգային Արխիւին մէջ պահպանուած է Հայկական Ընթերցասրահի Վարչութեան 20 Մարտ 1952 եւ 37 Ապրիլ 1952 թուակիր եւ ՀԽՍՀի նախարարներու խորհուրդի նախագահին ուղղուած երկու նամակ-դիմումներու ռուսերէն թարգմանութիւնը: Երկուքին մէջ ալ կը խնդրուի թոյլ տալ եգիպտահայոց 1-2 խումբի հայրենադարձութիւնը Պուքրէշի կամ Փրակայի վրայով[41], քանի որ, ըստ նամակի հեղինակներուն, քրիստոնեաներու նկատմամբ բռնութիւններ կը գործադրուէին եւ նոյնիսկ ջարդերու վտանգ կար: 20 Մարտի նամակին մէջ կ'ըսուի, թէ 26 Յունուար 1952ին, քանի մը ժամու մէջ, հրեաներու եւ քրիստոնեաներու պատկանող 700է աւելի մեծ ու փոքր խանութներ - որոնց 43 տոկոսը հայոց կը պատկանէր - կողոպտուեցան, պարպուեցան ու քանդուեցան: Նամակագիրները կը յաւելեն, որ երկրին մէջ ամէն պահու ամէն վատ բան սպասելի է, մանաւանդ որ զինուորականութիւնն ալ կը հրահրէ տգէտ զանգուածին կիրքերը քրիստոնեաներուն դէմ: Հայերը, ստիպուած, կը ձգտին Աւստրալիա, Հիւսիսային ու Հարաւային Ամերիկաներ, որեւէ ապահով տեղ գաղթելու՝ հակառակ նոր կեցավայրերուն մէջ իրենց սպասող դժուարութիւններուն[42]:
- ԱՄՀի մէջ ԽՍՀՄի դեսպանութեան կցորդ Ս. Շիրոյեանի 19 Հոկտեմբեր 1959 թուակիր, «գաղտնի» նշակիր «ԱՄՀի Եգիպտոսի շրջանի հայկական գաղութը» վերնագրուած փաստաթուղթի «Եգիպտական իշխանութեանց վերաբերմունքը հայ գաղութին նկատմամբ» բաժինը հալածանքի քանի մը նմուշներու մասին կը խօսի: Շիրոյեան կը գրէ, թէ միւս փոքրամասնութեանց շարքին, հայերը կը կրեն «արաբական մեծապետական

երբեմն զիջումներ կ'ընէ դաշնակցականներուն»: Խորհրդային դիւանագէտները այդ կը բացատրեն Սիրունեանի թոյլ անհատականութեամբ, թերի կրթութեամբ եւ տարբեր գործիչներու ազդեցութեան տակ իյնալու անոր նկարագրի գիծով: Տեղեկագրողները, սակայն, բարձր կը գնահատեն Սիրունեանի նուիրուածութիւնը մայր աթոռ Ս. Էջմիածնին (ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 3):

[41] Զանգուածային հայրենադարձութիւնը դադրած էր 1948ին:

[42] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 233, թ. 2:

ազգայնականութեան քաղաքականութեան» տխուր հետեւանքները՝ արտաքսում երկրի քաղաքական կեանքէն, պետական վարչամեքենայ մուտքի խոչընդոտում, տնտեսական գործունէութեան առջեւ արհեստական դժուարութեանց յարուցում, իսկ «վերջին ժամանակներս»՝ բացայայտ հսկողութեան հաստատում հայկական կառոյցներու, մասնաւորաբար Խորհրդային Հայաստանի հետ կապերու ջատագով միութեանց վրայ, 70 զբօսաշրջիկի արգելում Խորհրդային Հայաստան՝ Ս. Էջմիածին այցելելու ... Երկու անգամ արգիլած են Խորհրդային Հայաստանի մէջ ուսանելու համար եգիպտահայ երիտասարդներու ելքը երկրէն: Գաղտնի ոստիկանութիւնը հայեր կը հաւաքագրէ՝ գաղութը վերահսկելու նպատակով: Հայկական թերթերուն գրաքննութիւնը ուժեղացած է: Ըստ Շիրոյեանի, դաշնակցականները աշխուժացած են եւ իշխանութիւններուն կը մատնեն յառաջդիմականները[43]: Իշխանութիւնները դաշնակցականներուն խոստացած են անոնցմէ ներկայացուցիչ մտցնել խորհրդարան՝ եթէ աշխուժացնեն իրենց հակախորհրդային եւ հակակոմունիստական գործունէութիւնը[44]:

• Ըստ խորհրդային դիւանագէտներուն, Եգիպտոսի իշխանութիւնները ներգաղութային միջկուսակցական հակամարտութիւնները կը շահագործեն գաղութը աւելի տկարացնելու համար: ԽՍՀՄի դեսպանութեան Բ. քարտուղար Ս. Սերիոկինի ու կցորդ Ս. Առաքելեանի միասին կազմած, 1 Մարտ 1961 թուակիր, «գաղտնի» նշակիր՝ գաղութի վերաբերեալ տեղեկանքը կը յայտնէ, թէ 1954ին վաւերացուած՝ կուսակցութիւններու գործունէութիւնը երկրին մէջ արգիլող օրէնքին կիրառումով, հայկական երեք կուսակցութիւնները պետութեան քով արձանագրուած են իբրեւ մշակութային միութիւններ, թէեւ իշխանութիւնները շատ լաւ գիտեն, թէ երեքն ալ կը գործեն, մանաւանդ որ թէ՛ *Յուսաբեր* եւ թէ՛ *Արեւ* օրաթերթերը բացայայտօրէն հանդէս կու գան համապատասխանաբար ՀՅԴի եւ ՌԱԿի անունով: Ըստ տեղեկանքը կազմողներուն՝ իշխանութիւնները հայկական կուսակցութեանց դէմ քայլեր չեն առներ, քանի որ անոնց միջեւ գզուըտոցը հայ հասարակութիւնը հեռու կը պահէ վարչակարգին դէմ պայքարէն: Աւելին, իշխանութիւնները աւելի՛ կը խորացնեն հայկական կուսակցութեանց հակամարտութիւնը՝ «մէկուն խնդրանքները բաւարարելով, իսկ միւսներունը՝ մերժելով»[45]:

Եգիպտահայութեան վիճակը ա՛լ աւելի վատթարացաւ օտարահպատակներու աշխատանքի եւ կեցութեան վերաբերեալ 1960ի աշնան ընդունուած եւ 1961ի առաջին օրէն գործադրուիլ սկսած օրէնքով: Օրէնքը օտարահպատակներուն կ'արգիլէր սեփականութիւն ունենալ եւ տնտեսա-

[43] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 273, թ. 8:
[44] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 273, թ. 9:
[45] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 11:

կան գործունէութիւն ծաւալել երկրին մէջ: Եգիպտահայութեան մեծ մասը երկրի քաղաքացիութիւնը չունենալով՝ անմիջական հարուածի տակ դրուեցաւ: Փաստաթուղթերը շահեկան տեղեկութիւններ կը պարունակեն այս հարցին մասին: Օրինակ, ԽՍՀՄի դեսպանութեան կցորդ Առաքելեանը Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդարանին մէջ թեմակալ առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանի հետ 13 Դեկտեմբեր 1960ի իր զրոյցը ներկայացնող տեղեկագիրին մէջ կը գրէ, թէ Սիրունեան դժգոհած է, որ իշխանութիւնները երկրի քաղաքացիութիւնը չունեցող հայերը գործէ կ'արձակեն եւ անոնց տեղ արաբներ կը նշանակեն: Այդ կը կատարուի յատկապէս Հելիոպոլսոյ[46] պելճիքական հաստատութեանց մէջ: Սրբազանը կը յայտնէ, թէ շատեր կը դիմեն առաջնորդարան՝ իրենց համար նոր գործ ճարելու, հայրենադարձուելու կամ այլ երկիրներ երթալու համար իրենց օգնելու խնդրանքներով: Իր հօտին մատնուած դժնդակ կացութիւնը բարուոքելու յոյսով Մամբրէ սրբազան երբ դիմած է իշխանութիւններուն, ստացած է հետեւեալ պատասխանը. «Հայերը մեր երկրին մէջ քսան տարի ապրեցան, անոր բոլոր բարիքներէն օգտուեցան եւ ոչ ոք զիրենք հալածեց: Հիմա մենք յեղափոխութիւն կատարած ենք, մեր ձեռքը վերցուցած ենք երկրին կառավարումը, ուստի պարտաւոր ենք բաւարարել առաջին հերթին մեր ժողովուրդին պահանջները, իսկ դուք կրնաք ձեր հայրենիքը վերադառնալ»[47]: Նոյն մտահոգութիւնը Մամբրէ արբազան արծարծած է ամէնայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա.ին իր ուղղած 22 Դեկտեմբեր 1960 թուակիր նամակին մէջ, որու ռուսերէն թարգմանութիւնը նոյնինքն Առաքելեան կատարելով՝ դեսպանութեան միջոցով հասցուցած է Մոսկուա, ուրկէ պատճէն մը ղրկուած է Երեւան՝ ՀԽՍՀի ղեկավարութեան ի գիտութիւն: Իր նամակին մէջ, սրբազանը կը յայտնէ, որ ոչ միայն երկրին քաղաքացիութիւնը չունեցող հայերը աշխատանքէ կ'արձակուին ու երկրէն դուրս գալու կը հարկադրուին, այլեւ քաղաքացիութիւն ունեցող հայերը դժուարութիւններու կը հանդիպին «ազգայնական ոգիով տարուող քաղաքականութեան» պատճառով, քանի որ «ամէն հարցի մէջ նախապատուութիւնը իսլամներուն կը տրուի»[48]: Այս պատճառով, «մերոնք (այսինքն՝ Խորհրդային Հայաստանի կողմնակիցները)[49] այս երկրին մէջ որեւէ հեռանկար չեն տեսներ իրենց ապագային համար», ուստի հայոց զգալի մասը կը մտադրէ երկրէն հեռանալ[50]: Սրբազանը կը գրէ, թէ օտար երկիրներ գաղթելով հայոց ձուլման հեռանկարը իրեն խոր ցաւ կը պատճառէ, սա-

[46] Գահիրէի հիւսիսարեւելեան արուարձաններէն, ներկայիս՝ քաղաքին մէկ մասը: Հիմնած են Պօղոս Նուպար փաշան եւ պելճիքացի երկրաչափ եւ գործարար բարոն Էտուար տ'Ամփէնը:

[47] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 286, թթ. 1-2:

[48] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 1:

[49] Փակագիծերուն մէջի բացատրութիւնը Առաքելեանինն է:

[50] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 2:

կայն երբ գաղթել որոշած անձերը կը զգուշացնէ այդպիսի սխալ քայլ առնելէ, իրեն կը պատասխանեն՝ «մնանք, որպէսզի սովէ՞ն մեռնինք»: Անոնք կը դժգոհին, որ իրենց վիճակով նոյնիսկ հայրենի կառավարութիւնը հետաքրքրուած չէ[51]: Սրբազանը կը գրէ. «*Մեզի տարաձայնութիւններ կը հասնին, թէ ամերիկեան կառավարութիւնը յարմար պահին հայեր պիտի ընդունի՝ մեր հայրենի կառավարութիւնը վարկաբեկելու համար*»: Վեհափառ հայրապետը իր «ամբողջ յոյս»ը յայտարարելով, սրբազանը անկէ կը խնդրէ «մեր հայրենիքի կառավարութեան հասցնել մեր տխուր վիճակը», որպէսզի վերջինս գոնէ 2000 եգիպտահայոց հայրենադարձութիւնը կազմակերպէ: Այս խնդրանքը Սիրունեան քանի մը անգամ կը կրկնէ իր նամակին մէջ[52]: Ուշագրաւ է նամակին յետգրութեանը, ուր Մամբրէ սրբազան Վազգէն Ա.էն կը խնդրէ իր նամակին պատասխանը իրեն ղրկել «նոյն խողովակներով»[53], ինչը ենթադրել կու տայ, թէ նամակը առաքուած է ԽՍՀՄի դեսպանութեան դիւանագիտական նամականիով՝ զգուշանալով եգիպտական պետական գրաքննութեան ձեռքն իյնալով անախորժութիւններու թիրախ դառնալէ:

1960ականներու սկիզբը Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները որոշ ջերմացում ապրեցան Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան ղեկին Եաքով Զարոպեանի ստանձնումով: Նախորդ տարիներուն արդէն սկսած էին որոշ քայլեր առնուիլ, ինչպէս՝ սփիւռքահայ երիտասարդներու ուսումնառութիւնը Երեւանի բարձրագոյն կրթական հաստատութիւններուն մէջ, պատուիրակութիւններու փոխադարձ այցեր եւն.:

1961ի սկիզբի՛ն իսկ Խորհրդային Հայաստանի ղեկավարութիւնը կը ձգտէր արտախորհրդային երկիրներէ զանգուածային հայրենադարձութեան վերակենդանացման: 1962ի սկիզբին հայրենիք այցելող լիբանանահայ գրող, խմբագիր եւ հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկեանին այդ հաւաստած է նոյնինքն Զարոպեանը: Յուշագրող, այդ օրերուն ՀԿԿի ԿԿի վարչամեքենային մէջ աշխատող Կարլէն Դալլաքեան կը վկայէ, որ երբ Ծառուկեանի հետ մտած է կեդրոնական կոմիտէի շէնքին Զարոպեանի գրասենեակը, ան «*խօսեց նաեւ Սփիւռքի եւ Հայրենիքի յետագայ մերձեցման մասին, յայտնեց՝ ի գաղտնապահութիւն, աշնանը սպասուող նոր զանգուածային ներգաղթի մասին յատկապէս Կիպրոս-Եգիպտոս-Պարսկաստան տարածքներից: Ծառուկեանը խնդրեց մանրամասներ.– «Որոշումը շուտով կլինի, կ'իմանաք»,– ժպտալով պատասխանեց Զարոպեանը*»[54]:

---

[51] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 1:

[52] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 3:

[53] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 4:

[54] Կարլէն Դալլաքեան, *Յուշապատում (դէմքեր, իրողութիւններ, մտորումներ)*, Երեւան, 1998, էջ 74:

Զարոպեան անշուշտ տեղեակ էր ԽՍՀՄի նախարարներու խորհուրդի՝ հայոց հայրենադարձութիւն թոյլատրելու վերաբերեալ 12 Օգոստոս 1961ի որոշումէն, որ սակայն դեռ չէր հրապարակուած: Այդ որոշումը կանխած է-ին համապատասխան գրագրութիւններ Մոսկուայի վերադաս ատեաննեռուն հետ: Պահպանուած է այս հարցին մասին Զարոպեանի 28 Յունուար 1961, թիւ 80/գ[աղտնի] նշումներով նամակը ԽՄԿԿ կեդրոնական կոմիտէին[55]: Նամակի սկիզբին, հայկոմկուսի ղեկավարը կը գրէ, թէ ըստ ԱՄՀի մէջ ԽՍՀՄի դեսպանութենէն ստացուած տուեալներուն, Եգիպտոսի աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութիւնը 17 Հոկտեմբեր 1960ին հրապարակած է թիւ 263 որոշումը, ըստ որուն, իշխանութիւնները չեն կրնար երաշխաւորել եգիպտական քաղաքացիութիւն չունեցողներու յետագայ աշխատանքն ու կեցութիւնը երկրին մէջ: Յայտնելով, թէ այդ երկրին մէջ կ'ապրի 40-45 հազար հայութիւն, որուն միայն 6-7 հազարն ունի եգիպտական քաղաքացիութիւն, Զարոպեան կը նշէ, թէ այս որոշումը յարուցած է հայոց դժգոհութիւնը եւ խթանած երկրէն հեռանալու հայոց միտումները: Շուրջ 30 հազար հայ, մօտ 10 հազար ընտանիք, հիմնականին մէջ քիչ-ապահովուած եւ «հայրենասիրաբար տրամադրուած» հայեր կ'ուզեն Խորհրդային Հայաստան հաստատուիլ: Սակայն, «գաղութին յետադիմական տարրերը՝ դաշնակ[ցական]ները, ԱՄՆի հրահանգաւորումով, մտադիր են կազմակերպել հայոց զանգուածային ելք դէպի ԱՄՆ[56]՝ հակախորհրդային աղմուկ կազմակերպելու համար»: Ան կը շարունակէ.

> Հաշուի առնելով առկայ կացութիւնը, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան ԿԿը կը խնդրէ թոյլ տալ
>
> Ա.- հայրենասիրաբար տրամադրուած հայերէ շուրջ 2 հազար հոգիի (500-600 ընտանիք) 1961 թուականին հայրենադարձել: Անոնք պիտի տեղեկայուին նոր ստեղծուած արդիւնաբերական շրջաններու մէջ. մնացեալ 28 հազարին հայրենադարձութիւնը իրականացնել յաջորդ 3-4 տարիներուն:
>
> Բ.- ԱՄՀ ղրկել Հայկական ԽՍՀի կառավարութեան 2-3 ներկայացուցիչ՝ ԱՄՀի մէջ ապրող հայոց Հայկական ԽՍՀ հայրենադարձութեան օգնելու, հայրենադարձները ընտրելու եւ հայրենանադարձութիւնը կազմակերպելու համար:
>
> Գ.- Հայրենադարձներուն վրայ տարածել այն արտօնութիւնները, որոնք նախատեսուած են ԽՍՀՄի նախարարներու խորհուրդի 21 Յունիս 1946ի թիւ 1295 որոշումով[57]:

---

[55] ՌԴ ՆՊՌՊԱ – ԽՄԿԿ ԿԿ Ք, ֆ. 4, ց. 16, թիւ 1003 թղթածրար:

[56] Զարոպեան «ելք» բառի փոխարէն սխալմամբ գրած է «ռեփաթրիացիա» (հայրենադարձութիւն) բառը...:

[57] ՌԴ ՆՊՌՊԱ – ԽՄԿԿ ԿԿ Ք, ֆ. 4, ց. 16, թիւ 1003 թղթածրար: Նամակին վերը, ձախին, ԽՄԿԿ ԿԿի քարտուղարներէն Միխայիլ Անտրէեւիչ Սուսլովը 3 Փետրուարին նամակը մակագրած է երկու «ընկեր»ներու, որոնց անունները չկրցանք վերծանել՝ ձեռագրի դժուարընթեռնելիութեան պատճառով:

Գրեթէ նոյն օրերուն հեղինակուած է Եգիպտոսի մէջ ԽՍՀՄի դեսպանութեան խորհրդական Ն. Վինոկրատովի 6 Մարտ 1961 թուակիր, «գաղտնի» նշակիր զեկուցագիրը[58]: Փաստաթուղթին սկիզբը կ'ըսուի, թէ սոյնը լրացումն է 1 Մարտ 1961ի թիւ 151 զեկուցագրին[59]: Ան կը յայտնէ, թէ 1961ի տարեմուտէն կիրառուիլ սկսած օտարահպատակ քաղաքացիներու վերաբերեալ օրէնքին դրոյթները լուրջ խնդիրներ ստեղծած են եգիպտաբնակ հայոց համար, քանի որ 40 հազար եգիպտահայերէն ընդամէնը 8 հազարն ունի երկրի քաղաքացիութիւնը[60]: Ուստի, հազարաւոր հայեր տարբեր երկիրներու դեսպանատուներ կը դիմեն՝ արտագաղթելու, ուրիշներ ալ՝ ԽՍՀՄի դեսպանատուն՝ հայրենադարձուելու խնդրանքով: «Բացառուած չէ, որ ստեղծուած կացութենէն կրնան ամերիկացիք օգտուիլ, որպէսզի հայոց մէկ մասը ԱՄՆ տանելով իրենք զիրենք հայ ժողովուրդի շահերու պաշտպան ցոյց տան եւ այդպիսով հակախորհրդային աղմուկ ստեղծեն»[61]: Վինոկրատով կը յայտնէ, թէ Եգիպտոսի իշխանութիւնները հաշտ աչքով չեն դիտեր եգիպտահայոց Խորհրդային Հայաստան այցերն ու անոնց հայրենադարձութեան ձգտումները: Այդուհանդերձ, ան կ'ենթադրէ, թէ եթէ զանգուածային հայրենադարձութիւն կազմակերպուի, ԱՄՀի կառավարութիւնը հաւանութիւն պիտի տայ, քանի որ շահագրգռուած է արտասահմանցիներու աշխատանքին վերաբերող օրէնքին կիրառումով: «Դեսպանութեան տուեալներով, հայրենադարձութեան պարագային, Հայաստան կը փափաքին երթալ շուրջ 10 հազար հայեր, մեծ մասամբ բանուորներ, տնայնագործներ եւ արհեստաւորներ»: Պիտի չուզէին հայրենադարձուիլ շուրջ 5 հազար հայ կաթողիկէները, շուրջ 1000 հայ աւետարանականները, դաշնակցականներն ու անոնց շուրջ 500 համակիրները, խոշոր քաղքենիները, շուրջ 1500 մանր քաղքենիները, եգիպտական հպատակութիւն ունեցող կամ այլ պետութեանց քաղաքացի հայոցմէ շուրջ 6-7 հազար հոգի, նաեւ՝ «հայրենասիրական զգացումները կորսնցուցած եւ այլ երկիրներու մէջ ազգականական կապեր ունեցողները»[62]: Վինոկրա-

---

[58] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թթ. 26-30: Փաստաթուղթի վերջին էջին վարը, կայ ինքնութիւնը մեզի անյայտ անձի ստորագրութեամբ, 18 Մարտ 1961 թուակիր նշում մը, թէ պատճէններ ղրկուած են ՀԿԿ ԿԿ, ՀԽՍՀ գերագոյն խորհուրդ եւ նախարարներու խորհուրդ:

[59] Յիշուած փաստաթուղթին բովանդակութիւնը ներառուած է ԽՍՀՄ ԱԳՆ Մերձաւոր Արեւելքի Երկիրներու Բաժինի վարիչ Եւկենի Տմիթրիեւիչ Քիսիլիովի տեղեկանքին մէջ, անոր սկիզբը (տե՛ս՝ ստորեւ):

[60] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 26:

[61] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 27: Խորհրդային դիւանագէտին կանխատեսումը ճիշտ էր: Շուտով պիտի հիմնուէր ԱՆՉԱն, որ 1 Յունիս 1963ին Գահիրէի մէջ պիտի բանար իր գրասենեակը եւ տասնեակ հազարաւոր եգիպտահայեր պիտի արտագաղթեցնէր դէպի Ամերիկաներ, Աւստրալիա եւ այլուր:

[62] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թթ. 29-30:

տով իբրեւ լուծում նպատակայարմար կը գտնէ խորհրդային համապատասխան «ատեաններուն առջեւ բարձրացնել հայոց, թէկուզ 4-5 հազար հոգիի, ԽՍՀՄ հայրենադարձութեան կազմակերպումը»: Դիւանագէտին կարծիքով, հարցին դրական լուծումը «ուժեղ հակազդեցութիւն պիտի ունենայ ԱՄՀի Սուրիոյ շրջանի 100 հազարէ աւելի հայոց վրայ, որոնք եւս կ'ենթադրուի, թէ հայրենադարձութեան պիտի դիմեն», քանի որ «բացառուած չէ, որ արտասահմանցիներու աշխատանքին վերաբերեալ օրէնքին գործողութիւնը ժամանակի ընթացքին տարածուի նաեւ ԱՄՀի Սուրիոյ շրջանին վրայ»[63]:

Զարոպեանի դիմումը, նման բովանդակութեամբ դիմումներու համար ըստ ընդունուած կարգին, հաւանաբար վերահասցէագրուած է ԽՍՀՄի ԱԳՆին եւ ՊԱԿին: Առաջինի Մերձաւոր Արեւելքի Երկիրներու Բաժինի վարիչ Եւկենի Տմիթրիեւիչ Քիսիլիովը[64] 22 Մարտ 1961 թուակիր թիւ 288/օ. պէ. վէ.[65] նշումով 4 էջնոց տեղեկանք մը յղած է ԽՄԿԿ ԿԿի Միութենական Հանրապետութիւններու Կուսակցական Մարմիններու Բաժինին՝ տուեալ հարցի մասին: Իր գրութեան սկիզբը Քիսիլիով կը յայտնէ, թէ կը կցէ Եգիպտոսի աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան որոշումի հրապարակումէն ետք ԱՄՀի Եգիպտոսի շրջանի հայոց վիճակի մասին ԽՍՀՄի դեսպանութեան կազմած հակիրճ տեղեկանքն ու դեսպանութեան տեսակէտերը՝ հայոց մէկ մասը ԽՍՀՄ հայրենադարձելու հարցի հաւանական բարձրացման վերաբերեալ: Այնուհետեւ նոյնութեամբ կը մէջբերէ դեսպանութեան տեղեկանքը, որուն հիմքը կազմած են ԽՍՀՄ դեսպանութեան Բ. քարտուղար Ս. Սերիոկինի ու կցորդ Առաքելեանի միասին կազմած, 1 Մարտ 1961 թուակիր, «գաղտնի» նշակիր՝ գաղութի վերաբերեալ տեղեկանքն ու Եգիպտոսի մէջ ԽՍՀՄ դեսպանութեան խորհրդական Վինոկրատովի 6 Մարտ 1961 թուակիր, ու «գաղտնի» նշակիր զեկուցագիրը:

Տեղեկանքը կը սկսի եգիպտական վերոյիշեալ նախարարութեան որոշման հիմնական կէտերու ներկայացումով, որոնք «տեղացի հայոց լուրջ մտահոգութիւնը յարուցած են» միքանի պատճառներով: Առաջինը կը նշուի հետեւեալը.- 40 հազար եգիպտաբնակ հայոց «միայն 8 հազարն ունի երկրի քաղաքացիութիւնը, մնացեալները **քաղաքացիութիւն չունեցողներ են, չնչին մասն ալ ունի լիբանանեան, յունական, իրանական եւ** այլ քաղաքացիութիւններ»[66]:

---

[63] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 30:

[64] Եւկենի Տմիթրիեւիչ Քիսիլիովը 1956 Օգոստոսէն 1959 Օգոստոս ԽՍՀՄ դեսպանն էր մինչեւ 1958 Եգիպտոսի, 1958էն՝ ԱՄՀի մէջ:

[65] Отдель Ближного Востока (Մերձաւոր Արեւելքի բաժին) ռուսերէն բառերու յապաւումն է:

[66] Ընդգծումը ձեռքով կատարուած է ԽՄԿԿ ԿԿին մէջ: Քիսիլիովի ստորագրած փաստաթուղթի մնացեալ մասերը չենք ներկայացներ՝ Սերիոկին-Առաքելեան

ԽՄԿԿ ԿԿի Միութենական Հանրապետութիւններու Կուսակցական Մարմիններու Բաժինի հրահանգիչ Ա. Վատէրը 3 Ապրիլ 1961 թուակիր շատ կարճ տեղեկանք մը հասցէագրած է ԽՄԿԿ ԿԿի քարտուղարութեան, ուր կ'ըսուի. «Նկատի առնելով, որ ԱՄՀի մէջ խորհրդային դեսպանութեան տուեալներով, մինչեւ 10 հազար հայեր կը փափաքին Խորհրդային Միութիւն գալ, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան ԿԿը (ըստ ԿԿի քարտուղար ընկ. Զարոպեանի հաղորդման), փոփոխելով 30 հազար հայոց հայրենադարձութեան մասին ներկայացուցած առաջարկութիւնը, ԽՄԿԿ ԿԿին կը ներկայացնէ ԱՄՀի Եգիպտոսի շրջանէն Հայկական ԽՍՀ մինչեւ 10 հազար հայոց հայրենադարձութեան առաջարկութիւն»[67]:

ԽՄԿԿ ԿԿի քարտուղարութեան դիւանին մէջ պահպանուած է նաեւ ԽՍՀՄ ՊԱԿի նախագահ Ալեքսանտր Նիքոլաեւիչ Շելեփինի եւ, շատ հաւանաբար, նոյն կառոյցի բարձրաստիճան պաշտօնատարներ Վ. Թիթովի ու Վ. Թերեշքինի ստորագրութեամբ եւ 4 Մայիս 1961 թուակիր թիւ 25-C-939, նոյնպէս հակիրճ հետեւեալ գրութիւնը. «ԽՄԿԿ ԿԿի քարտուղարութեան յանձնարարութեամբ, կը ներկայացնենք ԱՄՀի Եգիպտոսի շրջանէն հայոց ԽՍՀՄ հայրենադարձութեան հարցին վերաբերեալ ԽՄԿԿ ԿԿի որոշման նախագիծը՝ հաշուի առնելով քարտուղարութեան նիստին արտայայտուած նկատողութիւնները:

ԽՍՀՄ հայրենադարձուիլ փափաքող հայերն ընտրելու համար Հայկական ԽՍՀ ներկայացուցիչներու ԱՄՀ առաքման հարցը կարելի է քննարկել յետագային»[68]:

Սա կը նշանակէր, թէ 1961ին անհնար պիտի ըլլար հայրենադարձութիւնն իրականացնել՝ նկատի ունենալով խորհրդային դանդաղաշարժ դիւանակալութիւնը եւ հարց մը 10, 20, թերեւս շատ աւելի մեծ թիւով պետական եւ կուսակցական կառոյցներու մէջ նախնական քննարկումներու, որոշումներու նախագիծեր կազմելու, զանոնք քննարկելու, փոփոխելու,

---

զոյգի եւ Վինոկրատովի մեր՝ վերը բերած այդ փաստաթուղթերուն կրկնութիւնն ըլլալու պատճառով: Միայն յայտնենք, թէ ԽՄԿԿ ԿԿին մէջ ձեռքով շեշտուած են եւս երկու հատուածներ՝ «Ըստ դեսպանութեան տուեալներուն, հայրենադարձութեան պարագային, կը փափաքին Հայաստան մեկնիլ շուրջ 10 հազար հայեր, գլխաւորաբար բանուորներ, տնայնագործներ եւ արհեստաւորներ» (լուսանցքին երկու ուղղահայեաց, զուգահեռ գիծերով շեշտուած են) եւ «թէկուզ 4-5 հազար հոգի քանակով» (ընդգծուած է): Քիսիլիովի տեղեկանքը տե՛ս՝ ՌԴ ՆՊՌՊԱ – ԽՄԿԿ ԿԿ Ք, ֆ. 4, ց. 16, թիւ 1003 թղթածրար:

[67] ՌԴ ՆՊՌՊԱ – ԽՄԿԿ ԿԿ Ք, ֆ. 4, ց. 16, թիւ 1003 թղթածրար: Զարոպեանի՝ Եգիպտոսէն 30 հազար հայոց հայրենադարձութեան առաջարկութեամբ փաստաթուղթը չենք տեսած:

[68] ՌԴ ՆՊՌՊԱ – ԽՄԿԿ ԿԿ Ք, ֆ. 4, ց. 16, թիւ 1003 թղթածրար: Յիշատակուող որոշման նախագիծը չենք տեսած:

վերջնական որոշումներ կայացնելու եւ, յատկապէս, զանոնք գործադրելու խորհրդային բազմաստիճան, սիրտ ու հոգի մաշեցնող դիւանակալութիւնը: Այդպէս ալ եղաւ: Եգիպտոսէն հայրենադարձներու առաջին կարաւանը երկրէն մեկնեցաւ 21 Հոկտեմբեր 1962ին, այսինքն՝ ԽՄԿԿ կեդրոնական կոմիտէ Եաքով Զարոպեանի դիմումէն աւելի քան 20 ամիս ետք...

Հայրենադարձութեան հարցը եւ անոր խանգարող գործօնները մշտապէս գտնուած են խորհրդային դիւանագէտներու եւ Եգիպտոսի ԱԳՆ բարձրաստիճան պաշտօնատարներու հանդիպումներու օրակարգին վրայ: Այսպէս, ԽՍՀՄ դեսպանի պաշտօնակատար Վլատիմիր Եաքովլեւիչ Երոֆէեւը ԽՍՀՄ ԱԳՆ ղրկած իր 13 Նոյեմբեր 1961 թուակիր, «գաղտնի» նշակիր զեկուցագիրին մէջ կը ներկայացնէ իրեն այցի եկած, ԱՄՀ արտաքին գործոց նախարարի տեղակալ Հաֆէզ Իսմայիլի հետ իր զրոյցին ամփոփումը[69]: Երոֆէեւ իր խօսակիցէն ուզած է իմանալ ԱՄՀ իշխանութեանց դիրքորոշումը՝ հայոց հայրենադարձութեան վերաբերեալ եւ յոյս յայտնած, որ մարդասիրական մղումներով, անոր առջեւ խոչընդոտներ չեն յարուցուիր[70]: Իսմայիլ յայտնած է, թէ «որքան իրեն յայտնի է՝ հայերը գոհ են ԱՄՀի մէջ» եւ հարցուցած է հայրենադարձութեան դիմորդներու քանակին մասին: Երոֆէեւ պատասխանած է, թէ անոնք ընդամէնը «միքանի հարիւր հոգի են», որոնց մէջ կան թէ՛ ԱՄՀ քաղաքացիներ եւ թէ՛ քաղաքացիութիւն չունեցողներ: Իսմայիլ խոստացած է խորհրդային կառավարութեան դիմումը հաղորդել իր կառավարութեան ու յետագային դեսպանութիւնը տեղեկացնել արդիւնքին մասին[71]:

Եգիպտոսի մէջ ԽՍՀՄ դեսպանութիւնը յաջորդ շաբաթներուն հետեւողականօրէն հետապնդած է այս հարցը: Այդ կը վկայեն դիւանական քանի մը փաստաթուղթեր, որոնց մէջ առանձնապէս կարեւոր է դեսպանութեան խորհրդական Վինոկրատովի 20 Դեկտեմբեր 1961ի օրագրէն վերցուած, «յուժ գաղտնի» նշակիր «ԱՄՀ ԱԳՆի հիւպատոսական բաժանմունքի խորհրդական Շաէպին հետ 4 Դեկտեմբեր 1961ի զրոյցին արձանագրութիւնը» փաստաթուղթը[72]: Վինոկրատով սկիզբը կը յայտնէ, թէ 4 Դեկտեմբերին այցելած է Շաէպին՝ վերջինիս հրաւէրով: Շաէպ յայտնած է, թէ եգիպտական կառավարութիւնը համաձայն է հայոց հայրենադարձութեան[73], եւ բացատրած այդ ուղղութեամբ պահանջուած քայլերը.- հայրե-

---

[69] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թթ. 33-35: Փաստաթուղթին բովանդակութիւնը, տեղ-տեղ նոյնութեամբ, ԽՍՀՄ ԱԳՆ գլխաւոր քարտուղար Պորիս Ֆէոտորովիչ Փոցտերոպը 12 Դեկտեմբեր 1961ի նամակով յայտնած է ՀԽՍՀ արտաքին գործոց նախարար Բալաբէկ Մարտիրոսեանին (ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 36, թթ. 5-6):

[70] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 34:

[71] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 288, թ. 35:

[72] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 303, թթ. 1-2:

[73] 30 Դեկտեմբեր 1961ին, ԽՍՀՄ դեսպանութեան կցորդ Առաքելեանը թեմակալ առաջնորդ Սիրունեանին հետ կը զրուցէ Աղեքսանդրիոյ գաղութի երեւելիներէն

նադարձուիլ փափաքող իւրաքանչիւր հայ պարտաւոր է ԱՄՀ ՆԳՆի Անձնագիրերու Բաժին ներկայացնել հայրենադարձութեան խնդրագիր եւ իր անձնագիրը (երեխաներուն համար պէտք է ներկայացնէ ընտանիքին հայրը, իսկ մայրը կրնայ ներկայացնել միայն այն պարագային եթէ հայրը չկայ): Յանձնուած անձնագիրին փոխարէն ՆԳՆն պիտի տրամադրէ յատուկ անձնագիր՝ 6 ամիս վաւերականութեամբ: Եթէ այդ ժամանակահատուածին անձը չհայրենադարձուի, ապա փաստաթուղթը չեղեալ պիտի նկատուի ու այդ անձը այլեւս պիտի մնայ ԱՄՀի մէջ: Հայրենադարձները իրենց ունեցուածքի, գումարի արտահանման կամ այլ հարցերով կրնան դիմել ՆԳՆ Անձնագրերու Բաժին, որ իւրաքանչիւր պարագայ առանձինն պիտի քննէ ու վճռէ: Իր հերթին, դեսպանութիւնը իւրաքանչիւր հայրենադարձուողի համար պէտք է վերոնշեալ բաժին ներկայացնէ նամակ մը, ուր արտայայտուած ըլլայ տուեալ անձը ընդունելու ԽՍՀՄի պատրաստակամութիւնը, նաեւ խնդրագիր՝ տուեալ անհատին ԱՄՀէն ելքի վիզա տրամադրելու: «Ինչ կը վերաբերի Հայկական ԽՍՀ երկու ներկայացուցիչներուն, ապա անոնք ... կրնան ԱՄՀ ժամանել ԱՄՀի մէջ ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժինի աշխատակիցներու կարգավիճակով»[74]:

Գահիրէի մէջ ԽՍՀՄ արդէն դեսպան նշանակուած Երոֆէեւի՝ ԽՍՀՄ ԱԳՆ ղրկած իր 20 Դեկտեմբեր 1961ի օրագիրին մէջ կայ Իսմայիլի հետ 17 Նոյեմբեր 1961ին իր ունեցած պատահական զրոյցին արձանագրութիւնը: Անկէ կը տեղեկանանք, որ Երոֆէեւ հայոց հայրենադարձութեան հարցով դիմած է Իսմայիլին, եւ վերջինս Գահիրէի օդակայանին մէջ Եուկոսլաւիոյ նախագահ Եոզէֆ Պրոզ Թիթօն դիմաւորելու ընթացքին իրեն յայտնած է, թէ այս հարցը «բարենպաստ լուծուած է եւ թէ պաշտօնական պատասխանը դեսպանութեան պիտի տրուի ԱԳՆի միջոցով՝ մօտ ժամանակին»: Դեսպանի հարցումին՝ թէ ինք կրնա՞յ «արդէն հիմա այս մասին տեղեկացնել Մոսկուան», Իսմայիլ խորհուրդ կու տայ «քանի մը օր համբերել, որովհետեւ մինչեւ վերջնական որոշման ընդունումը կրնան յաւելեալ հարցեր յառաջանալ դեսպանութեան հետ»[75]:

Հրաչ Գալինեանի կազմակերպած ընդունելութեան ժամանակ: Զրոյցին կը միանայ *Ջահակիր* թերթի խմբագիր Հայկ Ժամկոչեանը: Վերջինս Առաքելեանին կը յայտնէ, թէ մօտ ամիս մը առաջ պետական նախարար Ապտէլ Քատէր Հաթէմը իր քով կանչած է բոլոր հայ լրագրողները՝ յայտնելու, թէ Եգիպտոսի իշխանութիւնները թոյլատրած են հայրենադարձութիւնը (տե՛ս՝ Առաքելեանի 18 Յունուար 1962 թուակիր, աննշակիր զեկուցագիրը, ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 49, թ. 2): Ապտէլ Քատէրը Եգիպտոսի նախագահ Կամալ Ապտէլ Նասէրի մօտիկ մարդոցմէ էր, 1958-60ին վարած է զանգուածային լրատուամիջոցները վերահսկող պետական նախարարի, 1960-65ին՝ մշակոյթի եւ ազգային դաստիարակութեան (տեղեկատուութեան) նախարարի պաշտօնները:

[74] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 303, թ. 2:

[75] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 303, թ. 2:

ԽՍՀՄ դեսպանութեան կցորդ Վ. Փիսքունովը ՀԽՍՀ ՆԽ երկու ներկայացուցիչներէն Ա. Խ. Շահինեանի հետ 7 Յուլիս 1962ին կ'այցելէ ԱՄՀ ԱԳՆի հիւպատոսական բաժինի վարիչի տեղակալ Նասրէտտին Մուրսիին, որուն հետ զրոյցը ամփոփած է 11 Յուլիս 1962 թուակիր, աննշում զեկուցագիրին մէջ[76]: Մուրսիին կը հարցնեն Եգիպտոսէն ելքի պայմաններուն մասին: Ան կը պատասխանէ, թէ ինք այդ մասին բան չի գիտեր, նոյնիսկ տեղեակ չէ այդ պայմաններուն վերաբերեալ թերթերու մէջ եղած հրապարակումներէն, եւ թէ գիտէ միայն, որ իւրաքանչիւր պարագայ պէտք է քննուի համապատասխան պետական մարմնին մէջ, օրինակ՝ ունեցուածքի արտահանման հարցը՝ տնտեսութեան նախարարութեան մէջ, ելքի թոյլտուութիւնը՝ ՆԳՆ անձնագրային բաժնին մէջ, բանակէն ազատման հաւաստագիրը՝ ռազմական նախարարութեան մէջ: Ըստ Մուրսիի՝ այս բոլորը կրնան մէկ ամիսէն աւելի տեւել[77]:

Փիսքունովը ունեցուածքի արտահանման հարցով 29 Սեպտեմբեր 1962ին կը հանդիպի ԱԳՆ հիւպատոսական բաժինի խորհրդական Մահմուտ Ալհամզաուիի հետ, ու այդ մասին կը հեղինակէ 6 Հոկտեմբեր 1962ի թուակիր, աննշում զեկուցագիրը[78]: Եգիպտացի պաշտօնեան կը հաւաստէ, թէ ի տարբերութիւն ուրիշ երկիրներ գաղթողներու, եւ խախտելով ի՛ր իսկ որոշումը, Եգիպտոսի կառավարութիւնը թոյլատրած է դէպի ԽՍՀՄ գաղթողներուն արտահանել ոչ թէ 500, այլ մինչեւ 1000 եգ. ոսկի արժողութեամբ ունեցուածք: Այդ մասին Ալհամզաուի Փիսքունովին յայտնած է նաեւ երկու օր առաջ՝ հեռաձայնելով անոր, պայմանով, որ արտահանուելիք ունեցուածքին տեղափոխումը Գահիրէէն Աղեքսադրիոյ նաւահանգիստ, կատարէ պետական ընկերութիւն մը՝ մաքսատան ներկայացուցիչի հսկողութեամբ: Եգիպտացի պաշտօնեան խորհրդային դիւանագէտին ըսած է, որ ինք չի գիտեր, թէ թոյլատրուա՞ծ է արդեօք դրամատուներու միջոցով գումարներ արտահանել երկրէն[79]:

1962ին հայրենադարձութեան դիմած է 2000է աւելի եգիպտահայ, սակայն հայրենադարձած է ընդամէնը 79 ընտանիք՝ 213 հոգի, 1963ին հայրենադարձութեան դիմած է 508 հոգի (ներառեալ նախորդ տարիէն յետաձգուած 310 հոգիի դիմումները), ընտրուած է 292 հոգի, որոնցմէ հայրենադարձած է 90 ընտանիք՝ 243 հոգի: 1964ին դիմած է ընդամէնը 180 հոգի, նաեւ՝ 1962էն եւ 1963էն յետաձգուած 215 հոգի, որոնց հայրենադարձութիւնը մերժուած էր զանազան պատճառներով:[80]

---

[76] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 49, թթ. 6-7:

[77] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 49, թ. 6:

[78] ՀԱԱ, ֆ. 316, ց. 2, գ. 49, թ. 8:

[79] Տե՛ս՝ Փիսքունովի՝ 6 Հոկտեմբեր 1962 թուակիր, աննշակիր երկրորդ զեկուցագիրը (ՀԱԱ, ֆ. 316, ց. 2, գ. 49, թ. 9):

[80] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 363, թ. 13: ՀԽՍՀ ՆԽին առընթեր Արտասահմանից Վերադարձող Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէի պետ Պ. Չարչեանը 23

Հայրենադարձութեան վերաբերող փաստաթուղթերուն մէկ մասը կը վերաբերի զուտ վիճակագրական եւ ժամանակային տուեալներու: Այսպէս.-

1963ին հայրենադարձութեան համար Եգիպտոսէն դիմած է 503 հոգի, որոնցմէ 97ը՝ երեխայ: Անոնցմէ ընդամէնը 287 հոգիին փաստաթուղթերը ձեւակերպուած են, որոնցմէ 59ը՝ երեխայ[81]:

Հայրենադարձներու առաջին կարաւանը՝ 211 հոգի, Աղեքսանդրիոյ նաւահանգիստէն կը մեկնի 21 Հոկտեմբեր 1962ին, «Լիթվա» նաւով: Ցուցակագրուած 10 հոգի չեն ներկայանար նաւահանգիստ[82]: Աւելի արտառոց դէպք կը պատահի 14 Նոյեմբեր 1963ին: Այդ օր, հայրենադարձուելու համար Ագապի Պօղոսի Քրմոյեանը կը բարձրանայ «Արմենիա» նաւը, բայց նաւը երկիրը չլքած, ան միտքը կը փոխէ եւ կ'ուզէ Եգիպտոս մնալ: Ասոր վրայ, վէճ կը ծագի եգիպտական իշխանութեանց եւ հայ պատասխանատուներուն միջեւ[83]: Իվերջոյ կը համաձայնին, որ Ագապիի մեծ մայրը մեկնի՝ միանալու Խորհրդային Հայաստան հաստատուած իր դստեր, իսկ Ագապին մնայ Եգիպտոս՝ ամուսնանալու համար ... եգիպտացի միլիոնատէրի մը հետ, որուն «ծանօթ է երկար ժամանակէ ի վեր»[84]:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐՈՒ ՋՐՈՅՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Դիւանական փաստաթուղթերը ցոյց կու տան, որ խորհրդային դիւանագէտները իրենց հանդիպած կամ իրենց հրաւիրած հայ գործիչներու հետ զրոյցներու ընթացքին անոնցմէ կարեւոր տեղեկութիւններ ստացած

Դեկտեմբեր 1964 թուակիր վիճակագրութեան մէջ, կը ներկայացնէ 1962-64ին հայրենադարձներու թուական տուեալները: 1962ին արտախորհրդային երկիրներէն հայրենադարձած է 217 ընտանիք, 757 հոգի, 1963ին՝ 619 ընտանիք, 2304 հոգի, 1964ին՝ 281 ընտանիք, 1088 հոգի: Այդ թիւերուն մէջ, Եգիպտոսէն եկածներն են.- 1962ին՝ 75 ընտանիք, 213 հոգի, 1963ին՝ 90 ընտանիք, 243 հոգի, 1964ին՝ 59 ընտանիք, 141 հոգի (ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 354, թթ. 15-16): Նոյն թիւերը, նաեւ 1965ին հայրենադարձած եգիպտահայոց թիւը՝ 108 հոգի, բերուած են Եգիպտոսի մէջ ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժինի վարիչ Ցարիովի եւ կցորդ Թալալեանի համատեղ պատրաստած 22 Դեկտեմբեր 1965 թուակիր տեղեկանքին մէջ:

[81] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 339, թ. 6: 1963ի հայրենադարձներու ամբողջական անուանացանկը տե՛ս՝ նոյն, թթ. 8-19:

[82] Տե՛ս Աղեքսանդրիոյ մէջ ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոս Վասիլի Սեմէոնովիչ Ազովցեւի՝ ԽՍՀՄ ԱԳՆ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Բաժինի վարիչ Ալեքսէյ Տմիթրիեւիչ Շչիպորինին ուղղած 31 Հոկտեմբեր 1962 թուակիր, «գաղտնի» նշակիր գրութիւնը. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 319, թթ. 19-24:

[83] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 351, թթ. 19-20:

[84] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 351, թթ. 14-15:

են ոչ միայն տուեալ գաղութի ներքին յարաբերութիւններուն, այլեւ տուեալ երկրի կեանքի զանազան երեսակներուն, մասնաւորաբար քաղաքական վիճակին մասին:

Եգիպտահայ անհատներու հետ խորհրդային դիւանագէտներու զրոյցներուն առանցքը կազմած են հայրենադարձութեան եւ ընդհանրապէս Եգիպտոսէն արտագաղթի դժուարութիւնները: Այդ նիւթին շուրջ են 1962ի 8 Մայիսէն 21 Օգոստոս ժամանակաշրջանին «Իսթըրն Քամփընի»ի աշխատակից Գ. Գմգմեանի, Նշան Անտոնեանի, *Արեւ*ի աշխատակից, յետագային խմբագիր Աւետիս Եափուճեանի, մեթր Պարոյր Մասիկեանի, հայրենադարձութեան առաջին կարաւանի ցուցակ ընդգրկուած Երանիկ Փուչուճեանի, նոյն տարուան Սեպտեմբերին հայրենադարձուողներ Նուպար Գմգմեանի եւ Սարգիս Յակոբեանի հետ զրոյցները ԽՍՀՄ դեսպանատան մէջ[85]:

Ուշագրաւ է մասնաւորաբար Մասիկեանի հետ զրոյցին բովանդակութիւնը: Եգիպտահայ յայտնի փաստաբան, հրապարակագիր ու հասարակական գործիչ Մասիկեան կը դժգոհի, որ իշխանութիւնները խոչընդոտներ կը ստեղծեն հայրենադարձութեան առջեւ, թոյլ չեն տար բժիշկներու, դեղագործներու, երկրաչափներու, արհեստագէտներու եւ մեքենագէտներու ելքը երկրէն: Ստիպուած, հայերը ձեռք կը բերեն ուրիշ մասնագիտութիւններու կեղծուած փաստաթուղթեր իրենց «աշխատանք»ի երեւակայական վայրերէն: Հարկաւոր է հարկային տեսչութենէն բերել «մաքրութեան» հաւաստագիր, իսկ տեսուչները հարկերը կը սահմանեն ըստ իրենց քմահաճոյքին, եւ հարկային ստուգումները առնուազն 30 օր կը տեւեն: Արգիլուած է երկրէն արտահանել 500 եգ. ոսկիէն աւելի արժող գոյք մէկ ընտանիքի հաշուով: Գնահատումը կը կատարէ տնտեսութեան նախարարութենէն կանչուող տեսուչը: Նոյնպէս արգիլուած է առ անձ 50 եգ. ոսկին գերազանցող ոսկեղէնի կամ գոհարեղէնի եւ 500 եգ. ոսկին գերազանցող օտար դրամանիշերու արտահանումը, ընդ որս՝ ընդամէնը 100 ոսկիին հա-մարժէքը կրնայ դրուիլ երթալիք երկրի դրամատան մասնաճիւղին մէջ, իսկ մնացեալը իբր յետագային պիտի փոխանցուի տիրոջը: Մաքսատան մէջ ստուգումները չափազանց խիստ են, յաճախ տուեալ ունեցուածքը, գումարը կամ ոսկեղէն-գոհարեղէնը երկիրը լքող անհատի սեփականութիւնն ապացուցող փաստաթուղթեր ու վկաներ կը պահանջեն: Զրոյցի աւարտին Մասիկեան կ'առաջարկէ, որ խորհրդային կառավարութիւնը ԱՄՀ կառավարութեան հետ համաձայնութիւն կնքէ հայոց հայրենադար-

[85] Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 319, համապատասխանաբար՝ թթ. 1, 2-3, 8-10, 4-7, 11-14, 17-18: Զրոյցները տեղի ունեցած են համապատասխանաբար 8, 9, 26 Մայիս, 6 Յունիս, 14 Յուլիս եւ 21 Օգոստոս 1962ին: Մասիկեանի հետ զրոյցը կը կրէ «յուժ գաղտնի» նշումը, միւսները՝ միայն «գաղտնի» նշումը:

ձութեան համար, ուր որոշակի արտօնութիւններ տրուին հայրենադարձներուն:

Հայրենադարձութեան հարցերը միշտ եղած են Աղեքսանդրիոյ մէջ ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոս Գուզմա Իկնաթիեւիչ Նովիքովի եւ Աղեքսանդրիոյ թեմի առաջնորդական տեղապահ Զաւէն վարդապետ Չինչինեանի խօսակցութեանց գլխաւոր նիւթը, մասնաւորաբար 1965ի Ապրիլ-Մայիսին, երբ հայրենադարձութեան ալիքը զգալիօրէն կը նահանջէր[86]:

1960ականներու կէսին Եգիպտոսէն Խորհրդային Հայաստան հայրենադարձութեան դիւանակալական թղթաբանութեան եւ այլեւայլ դժուարութեանց մասին մանրամասնութիւններ կը հաղորդէ հայրենադարձութեան գծով ՀԽՍՀ նախարարներու խորհուրդի Եգիպտոս գործուղուած ներկայացուցիչ Խ. Մոսինեանը ՀԽՍՀ ՆԽի նախագահ (վարչապետ) Անտոն Քոչինեանին ուղղած 25 Դեկտեմբեր 1964 թուաիր, «գաղտնի» նշակիր զեկուցագիրին մէջ: «ԱՄՀէն ելքի վիզաներու ձեւակերպման մեծ դժուարութիւններ կան, որոնք նուազագոյնը չորս ամիս կը պահանջեն [զիրենք յաղթահարելու համար]», կը գրէ ան: Այսպէս, գործէ արձակուելու համար 40 օր առաջ պէտք է դիմում ներկայացնեն, գործէ արձակուին, ապա ԽՍՀՄ դեսպանութենէն ստանան հայրենադարձութեան թերթիկները, որմէ 1-1.5 ամիս ետք նոր միայն դիմեն ԱՄՀ ԱԳՆին՝ ելքի վիզայի համար: «Յաճախ, աշխատանքէն ազատումը 2-2.5 ամիս կը տեւէ կամ ալ ընդհանրապէս չեն ազատուիր աշխատանքէն»: Իւրաքանչիւր հայրենադարձէ, բացի ԽՍՀՄ դեսպանութեան տրամադրած թուղթերէն, կը պահանջեն եւս 8-9 տեղեկանք-փաստաթուղթեր՝ ծննդեան վկայական, քաղաքացիութեան, ամուսնութեան, զինակոչի, մասնագիտութեան փաստաթուղթերը, աշխատավայրէն՝ տուեալ անհատի գործէ ազատման կարելիութեան մասին հաւաստագիր եւն.: «Թոյլ չեն տար երկրէն դուրս գալ բժիշկներուն, դեղագործներուն, քիմիագէտներուն, երկրաչափներուն, արհեստագէտներուն, մեքենագէտներուն, զինուորական ձեռնարկութեանց մէջ աշխատողներուն եւ այլոց: Եթէ անհատը հարկային պարտքեր չունի՝ համապատասխան տեղեկանքն ստանալը կը տեւէ 20-25 օր, իսկ եթէ ունի՝ գործառնութիւնները կը ձգձգուին կաշառք ստանալու յոյսով կամ կը լուծուին դատարանի միջոցով»[87]:

ԽՍՀՄ դեսպանութեան կցորդ Փիսքունովի 1 Հոկտեմբեր 1962 թուակիր, «գաղտնի» նշակիր ընդարձակ տեղեկագիրը[88] բացառապէս նուիրուած է Եգիպտոսէն հայոց ելքին ու անոր տարբեր կողմերուն: Պատմական կարեւոր նշանակութիւն ունեցող այս փաստաթուղթը բաղկացած է 6 հատուածներէ, որոնք վերնագրուած են.-

---

[86] Տե՛ս, օրինակ, ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 373, թթ. 4-5, 6-8:
[87] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 363, թ. 12:
[88] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 326, թթ. 1-14:

1. ԱՄՀի հայկական գաղութի հակիրճ բնութագիրը:

2. Դէպի Քանատա, Աւստրալիա, Պրազիլ, ԱՄՆ եւ Արժանթին ԱՄՀի հայոց ելքի պայմանները:

3. ԱՄՀի հայկական գաղութի հակազդեցութիւնը Հայկական ԽՍՀ հայոց հայրենադարձութեան արձանագրութեան սկիզբին:

4. Եկեղեցական կազմակերպութեանց դերը ելքի նախապատրաստութեան եւ ապահովման մէջ:

5. Եգիպտական իշխանութեանց վերաբերմունքը ԱՄՀէն հայոց ելքին:

6. Եզրակացութիւններ եւ առաջարկութիւններ:

Մեզ աւելի կը հետաքրքրեն վերջին երկու հատուածներուն մէջ ներկայացուած տեղեկութիւններն ու դատողութիւնները:

5րդ հատուածին սկիզբը, Փիսքունով կը յայտնէ, թէ 1961 տարեսկիզբէն գործադրուիլ սկսած՝ եգիպտական քաղաքացիութիւն չունեցող անձերուն վերաբերող օրէնքը յաւելեալ խթան է դէպի Արեւմուտք կամ ՀԽՍՀ հայոց ելքի համար: «Երկրէն ելքի համար ԱՄՀ իշխանութիւնները շատ բարդ ընթացակարգ մտցուցին», կը տեղեկագրէ խորհրդային դիւանագէտը, աւելցնելով, որ այդ պայմանները բաւարարելու համար առնուազն 3-4 ամիս կը պահանջուի: 1962ին՝ արտագաղթողներու համար թոյլատրուած ունեցուածքի արտահանման չափերը քանի մը անգամ փոփոխուած են, այդուհանդերձ, «*ԱՄՀի մէջ ԽՍՀՄ դեսպանութեան խնդրանքով, բացառութեան կարգով, ԱՄՀ իշխանութիւնները Հայկական ԽՍՀ մեկնող բոլոր հայոց (ԱՄՀ քաղաքացիներ թէ քաղաքացիութիւն չունեցողներ) թոյլ տուին կահոյք եւ այլ ունեցուածք արտահանել հազար եգիպտական ոսկիի սահմաններուն մէջ*»[89]:

6րդ հատուածին սկիզբը Փիսքունով կը յայտնէ, թէ ոչ-քիչ պարագաներու, իշխանութիւնները ելքի ձեւակերպումները դիտաւորեալ ձգձգած են, նոյնը կատարած են կարգ մը հայեր՝ անփութութեան պատճառով[90]: Այնուհետեւ ան կը ներկայացնէ երկու առաջարկներ.-

---

[89] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 326, թթ. 12-13:

[90] Նոյնը պատահած է նաեւ յաջորդ տարուան՝ 1963ի հայրենադարձութեան հետ: *Արեւի* 29 Հոկտեմբեր 1963 թուակիր համարի առաջին էջին մէջ, «Հայրենադարձի նաւուն մեկնումը յետաձգուած» վերնագիրին տակ տպուած է. «*Կը տեղեկանանք թէ Աղեքսանդրիոյ հայրենադարձները արդէն տեսած են իրենց բոլոր պատրաստութիւնները եւ կը սպասեն նաւուն մեկնումին: Սակայն, միւս կողմէ Գահիրէի հայրենադարձները տակաւին աւարտած չըլլալով իրենց անհրաժեշտ կարգադրութիւնները՝ դիմած են լիազօր պատուիրակներուն, խնդրելով որ նաւուն մեկնումը յետաձգուի կարճ ժամանակուան մը համար: Պատուիրակները սիրայօժար ընթացք տալով այս բաղձանքին՝ կարգադրած են որ կարաւանին մեկնումը յետաձգուի շուրջ 15 օրով: Ուրեմն, նաւը Աղեքսանդրիա պիտի հասնի Նոյեմբեր 13ին կամ 14ին*»: Իսկապէս, «Արմենիա» նաւը Աղեքսանդրիոյ նաւահանգիստը խարիսխեց 14 Նոյեմբերին ու յաջորդ օրը հոնկէ մեկնեցաւ:

Ա. Երկրէն երկրորդ կարաւանին պատրաստութեան սկսիլ 1963ի Փետրուարէն ոչ ուշ, որպէսզի Մայիս-Յունիսին այդ աշխատանքն աւարտած ըլլայ:

Բ. 1962ի փորձի հիման վրայ, «յաւելեալ ճշգրտել ելքի ձեւակերպումներու առանձին կողմերը»[91]:

Նոյն Փիսքունովը, ՀԽՍՀ կառավարութեան կողմէ Եգիպտոսէն 1962ի հայրենադարձութիւնը կազմակերպելու համար այդ երկիր գործուղուած ներկայացուցիներ Ռուբէն Գ. Թումանեանն ու Աշոտ Կարապետի Նանագիւլեանը[92] 1962ի աշնան հանդիպումներ կ'ունենան ՆԳՆ անձնագրային բաժինի պետ գնդապետ Իսաուիի (4 Սեպտեմբերին), հարկային տեսչութեան ընդհանուր տնօրէն Մահմուտ Հաֆէզի (7 Սեպտեմբերին), ԱԳՆ հիւպատոսական բաժանմունքի Ա. քարտուղար Մահէր Ապպասի (24 եւ 28 Սեպտեմբերին) եւ ՆԳՆ անձնագրային բաժինի աշխատակից Եուսրիի հետ (9 Հոկտեմբերին) հետ: Անոնց մասին տեղեկանքները Մոսկուա յղուած են «գաղտնի» նշակիր փաստաթուղթերով: Զրոյցները շօշափած են հայրենադարձութեան վերաբերող դիւանակալական ձեւակերպումներու հարցերը եւ անոնց լուծման ուղիները[93]:

Նոյն Փիսքունովը 28 Յունուար 1964 թուակիր, «գաղտնի» նշակիր իր տեղեկանքը ամբողջութեամբ յատկացուցած է 1963ի հայրենադարձութեան: Մանրամասնօրէն ներկայացնելով թուական տուեալներ ըստ տարիքի, ըստ քաղաքացիութեան եւ ըստ մասնագիտութեան, եւ համեմատելէ ետք 1962ի եւ 1963ի հայրենադարձութեան ցուցանիշերը, կարելի մանրամասնութեամբ ներկայացուցած է անհրաժեշտ պետական փաստաթուղթերու ստացման փուլերը: Այնուհետեւ անդրադարձած է Աղեքսանդրիոյ նաւահանգիստի մաքսատան մէջ 1962ի հայրենադարձներու ունեցուածքի գողութեան փաստին: Այդ պատճառով, 1963ի հայրենադարձներու ունեցուածքին փաթեթաւորումը, տեղափոխումն ու մաքսատան հարցերու լուծումը կատարած է մէկ ուրիշ ընկերութիւն: Նոր կահոյքն ու այլ իրեղէն արտահանելը «խստօրէն արգիլուած» ըլլալով, հայրենադարձներն ստիպուած եղած են ընկերութեան եւ մաքսատան աշխատողներուն կաշառք տալ: Կաշառքը հրաշք գործած է. 49 տարողատար (քոնթէյնըր), միջին չափի մեծաքանակ սնտուկներ եւ երկու հազարէ աւելի ճամպրուկներ ստուգուած են երկու օրուան մէջ, երբեմն անոնք առհասարակ չեն ստուգուած եւ նաւ բարձրացուած են[94]: Յաջորդ տարուան՝ 1964ի հայրենադարձներու բեռներուն ստուգումը Աղեքսանդրիոյ մաքսատան մէջ տեւած է ըն-

[91] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 326, թթ. 13-14:

[92] Աշոտ Նանագիւլեանը ԽՍՀՄ ՊԱԿի գնդապետ էր, որոշ ժամանակ եղաւ ՀԽՍՀ ՊԱԿի Առաջին Վարչութեան (արտաքին հետախուզութիւն) պետ:

[93] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 334, համապատասխանաբար՝ թթ. 23-24, 20-21, 25-26 եւ 22, 27:

[94] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 351, թ. 13:

դամէնը 4-5 ժամ. մաքսատան աշխատողները Աղեքսանդրիոյ մէջ ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոսութեան թարգմանիչ Ի. Շերպաքովին ըսած են, թէ «որեւէ խոչընդոտ չստեղծելու շատ խիստ հրահանգներ ստացած են»[95]: Շերպաքով նկատել կու տայ, թէ «հայրենադարձներուն թիւը տարուէ տարի կը նուազի եւ ԱՄՀէն հայրենադարձութեան շարունակումը հազիւ թէ արդարացուած ըլլայ: «*Կը թուի, թէ աւելի նպատակայարմար պիտի ըլլար հայ համայնքին տեղեկացնել, թէ 1965ին հայրենադարձութիւնը վերջին անգամ տեղի պիտի ունենայ, իսկ յետագային, խորհրդային քաղաքացիութիւն ստանալու փափաք ունեցող բոլոր հայոց դիմումնագիրերը պիտի քննուին սովորական կարգով*»՝ կը գրէ ան[96]:

Եգիպտոսի մէջ ԽՍՀՄ դեսպանութեան կցորդ Պարոյր Թալալեանի 4 Ապրիլ 1967 թուակիր տեղեկանքը[97] վիճակագրական ամփոփումը կը կատարէ նախորդ 5-6 տարիներուն Եգիպտոսէն հայոց ելքին: Եթէ 1960ին հայոց թիւը 30 հազարէ աւելի էր, 1967ին այդ թիւը կրկնակի պակսած է՝ կազմելով 14 հազար հոգի, ընդ որում՝ 9 հազարը Գահիրէի, մնացեալին ջախջախիչ մեծամասնութիւնը Աղեքսանդրիոյ մէջ[98]: Երկիրը լքած 14 հազարին կէսը՝ 7 հազար հոգի, մեկնած է Քանատա, 3 հազարը՝ Աւստրալ-

---

[95] Տե՛ս՝ Շերպաքովի 9 Դեկտեմբեր 1964 թուակիր, աննշակիր տեղեկանքը, ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 362, թ. 2: Մաքսատան մէջ հաւանական խոչընդոտները յաղթահարելու նպատակով, գլխաւոր հիւպատոս Նովիքովը 17 Սեպտեմբեր 1964ին կ'այցելէ ԱՄՀ մաքսային վարչութեան պետի տեղակալ Ահմէտ Նասրաթ Ռաղէպին, որմէ կը խնդրէ օժանդակել ձեւակերպութիւններու ընթացքի արագացման: Ռաղէպ կը համաձայնի: Այս մասին իր 30 Սեպտեմբեր 1964 թուակիր, աննշակիր զեկուցագիրին վերջաւորութեան, Նովիքով կը գրէ, թէ Ռաղէպ հրահանգ տուաւ մաքսատան բաժիններու պետերուն՝ ստուգումներն սկսիլ 18 Սեպտեմբերին եւ 21ին աւարտել: Նովիքով կ'աւելցնէ, որ իսկապէս, եղած է «ձեւական ստուգում. ճամպրուկները գրեթէ չբացին, ապրանքները չստուգեցին եւ ոչ մէկ հայրենադարձէ որեւէ բան վար չդրին» (ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 82, թթ. 1-2): Կարեւոր է հոս արձանագրել խորհրդային դիւանագէտին մէկ կարեւոր քայլը, որ մանաւանդ Արաբական Արեւելքի մէջ հոգեբանական մեծ ազդեցութիւն ունի. հանդիպման սկիզբին, Նովիքով ցաւակցութիւն յայտնած է Ռաղէպին՝ անոր 23ամեայ որդիին Ալճերիոյ մայրաքաղաքի նաւահանգիստի պայթումին մահանալուն առթիւ, ինչը շատ յուզած է եգիպտացի բարձրատիճան պաշտօնեան:

Հայրենադարձներու այդ կարաւանով, Խորհրդային Հայաստան ղրկուած են նաեւ Ալպոյաճեանի՝ 2000 գիրքէ բաղկացած գրադարանն ու դիւանը, գեղանկարներ եւ այլ արժէքներ (տե՛ս՝ ՀԽՍՀ նախարարներու խորհուրդի ներկայացուցիչ Խ. Մոսինեանի՝ նախարարներու խորհուրդի նախագահ Անտոն Քոչինեանին հասցէագրած 25 Դեկտեմբեր 1964 թուակիր, «գաղտնի» նշակիր զեկուցագիրին վերջին տողերը, ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 363, թ. 15):

[96] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 362, թ. 2:

[97] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թթ. 1-12:

[98] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թ. 2:

իա, մնացեալը՝ ԱՄՆ, Պրազիլ, Լիբանան ու եւրոպական երկիրներ[99]: Նոյն ժամանակահատուածին, ընդամէնը 700 հոգի հայրենադարձած է, 1962-63ին՝ 500, 1964-65ին՝ 200 հոգի[100]: Թալալեան կը յայտնէ, թէ «1966ին Հայաստան վերահաստատուելու համար արձանագրուեցաւ ընդամէնը 60 հոգի, հիմնականին մէջ յառաջացեալ տարիքի մարդիկ, իսկ հայրենադարձութիւն չիրականացուեցաւ»[101]: Ան կը նշէ, թէ տարուէ տարի աւելցած է Քանատա մեկնածներուն թիւը, իսկ հայրենադարձածներուն թիւը՝ նուազած, հակառակ անոր, որ Քանատա երթալու պայմանները շատ խիստ են: Ան կը մէջբերէ եգիպտահայ «յառաջդիմական» կազմակերպութիւններու ներկայացուցիչներու բացատրութիւնները այս երեւոյթի մասին: Զանոնք կարելի է ներկայացնել չորս կէտերու մէջ.-

1. Եգիպտահայոց մեծ մասը մանր արհեստաւոր ու մանր առեւտրական է: Անոնք թէեւ համակիր են Խորհրդային Հայաստանին, սակայն վերջինիս մէջ մասնաւոր ձեռնարկատիրութիւնն արգիլուած ըլլալով, անոնք կը վարանին հայրենադարձուիլ: Նման արգելք չկայ, օրինակ, Քանատայի մէջ:

2. 1963ի ազգայնացման ալիքը վատացուցած է միջին խաւերուն, գաղութի մեծ մասին կենսապայմանները: Հայերն սկսան դժգոհիլ «արաբական ընկերվարութենէն»[102], եւ այդ դժգոհութիւնը տարածեցին ընդհանրապէս ընկերվարութեան վրայ, խորհելով, թէ «ընկերվարութիւնը ժողովուրդներուն ոչ մէկ լաւ բան կը բերէ»:

3. Եգիպտոսէն հայրենադարձները դժգոհ են Խորհրդային Հայաստանի մէջ ու իրենց նամակներուն մէջ իրենց ազգականներուն խորհուրդ չեն տար հայրենադարձուիլ: «Ա. Մ. Հ.ի մէջ յայտնի դարձան փաստեր, թէ շատ վերաբնակիչներ, յատկապէս Ֆրանսայէն, Հայաստանէն ետ՝ իրենց նախկին բնակութեան վայրերը վերադարձած են»:

4. Խորհրդային Հայաստանի կարգ մը կառոյցներ վատ կ'աշխատին հայրենադարձներուն եւ գաղութին հետ: Շատեր կը կարծեն, թէ «երբ Հայաստան հաստատուին, սովն ու զրկանքը զիրենք կը սպասեն»: Թալալեան կը յայտնէ, թէ ՀԽՍՀի հետ, փաստօրէն, «կապեր չկան»[103]:

---

[99] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թ. 7:

[100] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թ. 7: Ճշգրիտ թիւը 710 հոգի էր (տե՛ս՝ ստորեւ շարադրանքը): Ամէն պարագայի՝ հայրենադարձած է երկրէն այդ թուականներուն գաղթած հայոց ընդամէնը 5 տոկոսը...

[101] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թ. 7:

[102] «Արաբական ընկերվարութեան» յառաջամարտիկն էր ԱՄՀ նախագահ Կամալ Ապտէլ Նասէրը:

[103] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թ. 8: Նկատել տանք, որ այս հաստատումը խորհրդահայ դիւանագէտը կը կատարէ 1964 Յունիսին՝ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի գոյառումէն 33 ամիս ետք...

Ինչպէս նշեցինք, եգիպտահայ անհատներու հետ զրոյցներուն մէջ յատկապէս ուշագրաւ են թեմակալ առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանի հետ կատարուածները: Անոնք զանազան հարցեր կը շօշափեն, որոնց մէջ հիմնականը հայրենադարձութեան առնչուածներն են: Օրինակ, 12 Նոյեմբեր 1962ին թեմի առաջնորդարանին մէջ ԽՍՀՄ դեսպանութեան Բ. քարտուղար Է. Շահնազարեանի հետ զրոյցի ընթացքին Սիրունեան կը խօսի ականաւոր պատմաբան Ալպօյաճեանի գրադարանն ու դիւանը Խորհրդային Հայաստան տեղափոխելու անհրաժեշտութեան ու այս ուղղութեամբ իր առած քայլերուն մասին: Սրբազանը կը հաւաստէ, որ «միայն հոն անոնք կրնան օգտագործուիլ հայ ժողովուրդի շահերուն համար եւ գիտական նպատակներով»: Անդրադառնալով նոյն տարին Եգիպտոսէն վերսկսած հայրենադարձութեան ալիքին, Սիրունեան կը խնդրէ, որ հայրենադարձներու ցուցակները հաստատուին անոնց մեկնումէն քանի մը ամիս առաջ, որպէսզի մարդիկ ժամանակ ունենան լուծարելու իրենց գործերը: Շահնազարեան իր տեղեկագիրին մէջ իր կողմէ խորհուրդ կու տայ փաստաթուղթի հասցէատէրերուն՝ ընթացք տալ այս առաջարկին[104]:

Մամբրէ արք. Սիրունեանի՝ դեսպանութեան կցորդ Փիսքունովի հետ 5 Յունիս 1963ի զրոյցը կը վերաբերի հայրենադարձութեան խոչընդոտող ԱՆՉԱի[105] Եգիպտոսի մէջ գործունէութեան: Սրբազանը կը յայտնէ, թէ ամսի 1ին Գահիրէի մէջ բացուած է ԱՆՉԱի գրասենեակը, կը թուարկէ անոր անձնակազմին անունները, ու կ'աւելցնէ, թէ ամերիկեան բանակի պահեստի զօրավար Հայկ Շեքէրճեանն այդ գրասենեակի կազմակերպական աշխատանքներով Գահիրէ պիտի գտնուի 1-2 ամիս: Փիսքունով իր վերադասին կը տեղեկագրէ, թէ գրասենեակին պաշտօնական նպատակն է հայոց Քանատա, Պրազիլ, Արժանթին ու Աւստրալիա արտագաղթի կազմակերպումը, «սակայն, փաստօրէն, անոր գործունէութիւնը ԱՄՀէն Հայկական ԽՍՀ հայոց հայրենադարձութեան տապալման պիտի ուղղուի»[106]: Խորհրդային դիւանագէտին կանխատեսումը իրականացաւ յաջորդ տարիներուն: Ատոր նպաստեցին գլխաւոր երկու գործօններ՝ այսպէս կոչուած «յառաջդիմական» շրջանակներու երկդիմի մօտեցումը հայրենադարձութեան, ինչպէս նաեւ երկրէն դուրս գալ որոշած հայոց՝ իրենց ունեցուածքն ու խնայողութիւնները պահպանելու արդարացի ձգտումը: Այս երկու գործօնները կը նշէ Թալալեան իր վերոբերեալ՝ 4 Ապրիլ 1967 թուակիր տեղեկանքին մէջ: Ըստ անոր, եթէ նախապէս յառաջդիմական շրջանակները

---

[104] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 319, թթ. 25-26: Փաստաթուղթը կը կրէ «գաղտնի» նշումը:

[105] ԱՆՉԱ – Armenian National Council for Homeless Armenians: Ամերիկահայ ճաշարանատէր Ճորճ Մարտիկեանի՝ ամերիկեան պետական հովանաւորութեամբ հիմնած կազմակերպութիւն, որուն նպատակն էր պալքանեան եւ միջինարեւելեան երկիրներէն հայոց դէպի արեւմտեան երկիրներ ու Աւստրալիա արտագաղթի կազմակերպումը:

[106] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 334, թ. 5:

կը դատապարտէին արեւմտեան երկիրներ ու յատկապէս Քանատա արտագաղթը, ներկայիս անոնք ոչ միայն վերջ տուած են իրենց այդ կեցուածքին, այլեւ կը մտածեն հոն ալ կառոյցներ հիմնելու մասին[107]: Ի տարբերութիւն հայրենադարձուողներու նիւթական միջոցներու փաստական փոշիացման՝ երկրէն զանոնք արտահանելու խիստ սահմանափակումներուն պատճառով, ԱՆՉԱՆն, ըստ Թալալեանի, Քանատա մեկնող եգիպտահայ հարուստներուն նոր կեցավայրին մէջ տեղական դրամանիշով կը վճարէ փոխարժէքը այն գումարներուն, որոնք Գահիրէի իր գրասենեակին յանձնուած կ'ըլլային: ԱՆՉԱ կը վճարէ աղքատ արտագաղթողներուն ճանապարհածախսը՝ Քանատայի մէջ հաստատուելէ ետք աշխատելով այդ գումարը վերադարձնելու պայմանով[108]:

Գահիրէի մէջ ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժինի վարիչ Ի. Ցարիովը 14 Յունուար 1965 թուակիր, աննշակիր իր զեկուցագիրին մէջ Եգիպտոսէն 1962-64ին հայրենադարձածներու մասին ըստ տարիքի եւ ըստ մասնագիտութեան վիճակագրական տուեալներ կը ներկայացնէ միանգամայն երեք պատասխանատուներու՝ ԽՍՀՄ ԱԳՆ հիւպատոսական վարչութեան պետի տեղակալ Ի. Պ. Քոնժուքովին, ՀԽՍՀ արտաքին գործոց նախարար Բալաբէկ Մարտիրոսեանին եւ ՀԽՍՀ ՆԽին առընթեր Արտասահմանից Վերադարձող Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէի նախագահ Գ. Տ. Գէորգեանին[109]:

Խորհրդային դիւանագէտը նկատել կու տայ, թէ տարուէ տարի նուազած է ոչ միայն հայրենադարձներուն թիւը, այլեւ՝ հայրենադարձութեան դիմորդներուն թիւը: Ան կը գրէ, որ մինչ 1962ին շուրջ 2500 հոգի դիմած է, 1963ին այդ թիւը նուազած է 550ի, իսկ 1964ին՝ 300 հոգիէ քիչ մը աւելիի: Ան չի բացառեր, որ 1965ին հայրենադարձուիլ փափաքողներուն թիւը շարունակէ նուազիլ[110]:

Ցարիով կ'առաջարկէ.-

1. Հրաժարիլ Եգիպտոսէն հայրենադարձութիւն յատուկ շոգենաւերով կազմակերպելէ:

2. Իւրաքանչիւր ընտանիքի ու անձի հայրենադարձութեան հարցը լուծել անհատական կարգով՝ ՀԽՍՀ ՆԽին առընթեր Արտասահմանից Վերադարձող Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէին հետ համաձայնաբար:

3. Հայրենադարձները ԽՍՀՄ ղրկել սովորական գծային շոգենաւերով, Աղեքսանդրիա-Օտեսա երթուղիով, որուն վճարը պէտք է կատարուի օտար դրամանիշով, իսկ Օտեսայէն Երեւան օդանաւի կամ գնացքի գումա-

---

[107] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թ. 10:
[108] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 397, թ. 11:
[109] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 89, թթ. 1-3:
[110] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 89, թ. 2:

րը վճարէ Արտասահմանից Վերադարձող Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէն:

4. Միայն որոշ պարագաներու, երբ հայրենադարձը գումար չունի, նոյն կոմիտէն թող վճարէ Աղեքսանդրիա-Օտեսա երթուղիին ծախսերը[111]:

1965ի հայրենադարձութեան կազմակերպման եւ կարաւանի՝ Աղեքսանդրիոյ նաւահանգիստէն մեկնելու մանրամասնութիւնները ներկայացուած են Ցարիովի եւ Թալալեանի համատեղ պատրաստած, 22 Դեկտեմբեր 1965 թուակիր, աննշակիր տեղեկանքին մէջ[112]: Կը պարզուի, որ ելքի ձեւակերպումներն ու թղթաբանութիւնը մնացած են նոյնը, զանազան հարցեր հարթելու համար խորհրդային դիւանագէտները պարբերաբար շփուած են Եգիպտոսի ՆԳՆ եւ ԱԳՆ պաշտօնատարներու հետ: Այդուհանդերձ, ծագած են զանազան դժուարութիւններ, որոնցմէ ամէնամեծը տեղեկանքի հեղինակները կը սեպեն մասնաւոր ձեռնարկութեանց լուծարման հարցը, այսինքն՝ հարկերու եւ տուրքերու վճարումն ու փակման միւս անհրաժեշտ քայլերը: Կը տեղեկանանք, որ երկրէն ելքի համար դեսպանութիւնը փաստաթուղթեր տրամադրած է 125 հոգիի, սակայն կարաւանի մեկնումի օրը անոնցմէ միայն 108 հոգին կրցած էին աւարտել պետական պարտադիր ձեւակերպութիւնները: Մնացեալները «զանազան պատճառներով, հիմնականին մէջ տուրքերը վճարած չըլլալով», ելքի թոյլտուութիւն չէին ստացած[113]: Դիւանագէտները արշաւին ոչ-այնքան արդիւնաւէտութեան համար դժգոհութիւն կը յայտնեն Խորհրդային Հայաստանի համապատասխան կառոյցներու՝ հայրենական պետութեան մասին քարոզչական պատշաճ որակի ու քանակի նիւթեր դեսպանութիւն չղրկելու համար: Անոնք թարգմանը կը հանդիսանան գաղութի պատասխանատուներու՝ կարաւանի մեկնումի ժամանակի առնչութեամբ յայտնած դժգոհութեան: Եգիպտահայերը յարմար դատած են, որ կարաւանը ճամփայ ելլէ Սեպտեմբերէն ոչ ուշ: Սակայն ՀԽՍՀ ՆԽի ներկայացուցիչին ուշ՝ Յուլիսին ժամանումը Եգիպտոս, հայրենադարձներուն դեսպանութեան կողմէ փաստաթուղթերու տրամադրումը Օգոստոսին, հայրենադարձներու հիմնական զանգուածին պատրաստութիւնը յետաձգած են մինչեւ Հոկտեմբեր: Այս ուշացումները կարծէք չէին բաւեր, նաւը ժամանած է ... Նոյեմբերի երկրորդ կէսին, ինչը արդար դժգոհութիւն յառաջացուցած է, քանի որ համեմատաբար մեղմ կլիմայ ունեցող Եգիպտոսէն երբ հասնէին հայրենիքին մէջ իրենց կեցութեան նոր վայրերը՝ եղանակը արդէն բաւական ցրտած պիտի ըլլար: Կը պարզուի նաեւ, որ «Լիթվա» նաւուն ժամանման մասին դեսպանութեան իմաց տուած են անոր Աղեքսանդրիոյ նաւահան-

[111] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 89, թ. 2:
[112] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 96, թթ. 5-8:
[113] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 96, թ. 5:

գիստ հասնելէն ընդամէնը 5 օր առաջ...[114]: Մէկ խօսքով, խորհրդային դիւանակալութիւնը իր որակային դերին մէջ գտնուած է...: Այնուհետեւ, Թալալեան կը ներկայացնէ 1962-65 տարիներու հայրենադարձներու վիճակագրական պատկերը՝ ըստ տարիքային խումբերու եւ ըստ մասնագիտութիւններու: Զանոնք կը ներկայացնենք վարի երկու աղիւսակներով:

1962-65՝ հայրենադարձներն ըստ տարիքի				
Տարի	մինչեւ 18 տ.	18-60 տ.	60 տ.էն վեր	ընդամէնը
1962	50	132	35	217
1963	61	149	34	244
1964	28	89	24	141
1965	27	67	14	108[115]
1962-65	166	437	107	710

1962-65՝ հայրենադարձներն ըստ մասնագիտութեան					
Տարի	Երեխայ/ դպրոցական	Թեքնիք կրթութիւն	այլ մասնագիտ.	Առանց մասնագիտ.	60 տ.է վեր
1962	50	36	72	24	35
1963	61	38	79[116]	32	34[117]
1964	28	18	56	15	24
1965	27	17	46	4	14
1962-65	166	109	253	75	107[118]

Տեղեկանքի շարունակութեան մէջ, Թալալեան կը կրկնէ Գահիրէի մէջ ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժինի վարիչ Ցարիովի 14 Յունուար 1965 թուակիր, աննշակիր զեկուցագիրի վերջաւորութեան կատարած չորս առաջարկները:

---

[114] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 96, թթ. 6-7: 1965ի հայրենադարձներուն ամբողջական ցանկը կը գտնուի նոյն արխիւային գործին մէջ, թթ. 9-12: Թալալեանի կազմած փաստաթուղթը կը կրէ 18 Դեկտեմբեր 1965 թուականը:

[115] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 96, թ. 7:

[116] Այս թիւը Ցարիովի կազմած 14 Յունուար 1965 թուակիր եւ վիճակագրական տուեալներ պարունակող տեղեկանքին մէջ 80 է (ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 89, թ. 2):

[117] Այս թիւը Ցարիովի կազմած 14 Յունուար 1965 թուակիր եւ վիճակագրական տուեալներ պարունակող տեղեկանքին մէջ 33 է (ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 89, թ. 2):

[118] ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 96, թ. 8: Երկու աղիւսակներով մեր ներկայացուցած՝ Ցարիովի յայտնած վիճակագրական տուեալները ԽՍՀՄ դեսպանութեան կցորդ Փիսքունով մէջբերած է իր 10 Փետրուար 1965 թուակիր, «գաղտնի» նշակիր տեղեկանքին մէջ (ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 89, թթ. 4-8, տուեալները՝ թ. 7): Ան ըստ մասնագիտութիւններու տուեալները կը ներկայացնէ նաեւ տոկոսային յարաբերակցութեամբ. այսպէս, 24%ը երեխաներ եւ դպրոցականներ, 15%ը՝ տարեցներ, 15%ը՝ թեքնիք արհեստաւորներ, 30%է աւելի՝ այլ մասնագիտութիւններու տէր՝ լուսանկարիչ, ոսկերիչ, դերձակ եւն.: Ան այնուհետեւ նոյնութեամբ կը կրկնէ Ցարիովի չորս առաջարկութիւնները (նոյն, թ. 8):

Եգիպտոսէն հայրենադարձութիւնը կատարուած է նաւային ճամփով՝ Աղեքսանդրիա-Պաթումի գծով: Ստորեւ աղիւսակով կը ներկայացնենք 1960ականներու հայրենադարձութեան կարգ մը տուեալները.

Տարի	Նաւի մեկնումի օր	Նաւի անուն	Հայրենադարձներու թիւ (հոգի)
1962	21 Հոկտեմբեր	«Լիթվա»	211
1963	15 Նոյեմբեր	«Արմենիա»	243[119]
1964	22 Սեպտեմբեր	«Արմենիա»	141
1965	22 Նոյեմբեր	«Լիթվա»	108

Իմի բերելով, հաստատենք, որ 1962-65 տարիներուն Եգիպտոսէն զանգուածային հայրենադարձութեան կարաւաններով հայրենիքի մէջ հաստատուեցաւ 710 հոգի՝ նախատեսուած 10 հազարի փոխարէն, այսինքն «փլան»ը կատարուեցաւ 7 տոկոսով, ինչը կը վկայէ Եգիպտոսէն հայրենադարձութեան ծրագրի ձախողման, իսկ եթէ նկատի ունենանք Եգիպտոսէն ՀԽՍՀ ղեկավարութեան նախատեսած սկզբնական 30 հազար հոգիի հայրենադարձութիւնը՝ այդ գերկարեւոր նախաձեռնութեան խայտառակ ձախողման մասին: Այդուհանդերձ, 1947-48ի կարաւաններն ալ հաշուած՝ շուրջ 4400 եգիպտահայ եկաւ հայրենիք, ու թէեւ անոնց մէկ մասը յաջորդ տասնամեակներուն արտագաղթեց, սակայն հիմնական զանգուածը մնաց հայրենի հողին վրայ, հոն արմատներ նետեց, արարեց ու սերնդագործեց եւ հայրենի հողին վրայ ապրելու փաստովն իսկ ապահովեց իր սերունդներուն գոյատեւումը իբրեւ հայ: Անոնք իրենց աշխատանքով իրենց ներդրումը բերին ու կը շարունակեն բերել հայրենի պետութեան կայացման, բարգաւաճման ու հզօրացման համազգային կարեւորութեան գործին:

[119] Նաւուն ժամանումէն 2 օր եւ մեկնումէն 3 օր առաջ *Արեւ* կը յայտնէր, թէ կը հայրենադարձուի 244 հոգի («Հայրենադարձի նաւը վերջնականապէս կը մեկնի Ուրբաթ օր», *Արեւ*, 12 Նոյեմբեր 1963, էջ 1):

ORGANIZATIONAL MATTERS OF THE 1947-48 AND 1962-65 REPATRIATION OF EGYPTIAN ARMENIANS IN SOVIET SECRET DOCUMENTS
(Summary)

Kevork Yazedjian
gevorgyazichyan@gmail.com

The author has collected a large number of Soviet secret documents which are currently preserved in the National Archives of Armenia. Based on material collected from the archival portfolios of the Communist Party of Armenia, the Foreign Ministry of Armenia, and the Committee of hosting and settling the repatriated Armenians, which functioned under the auspices of the Council of Ministers of Soviet Armenia, as well as other documents provided, the author reconstructs the main details of the repatriation processes of the Egyptian Armenians between both 1947 and 48 and 1962 and 65.

The paper sheds light on the ins and outs of these repatriations and the diverse stances, bureaucratic hurdles, and conflicts they faced.

Տարբեր Հայօճախներ Նման Դրսեւորումներ. Գահիրէի *Հոկտեմբեր*ը եւ Պէյրութի *Երիտասարդ Հայը*

Թովմաս Զաքարեան
thomas.zakarian@gmail.com





ՄՈՒՏՔ

Քսաներորդ դարու վերջին տասնամեակներէն մինչեւ օրս, եգիպտահայ համայնքի մասին վաւերագրական նիւթեր կամ թեմաներ ընտրելու ժամանակ ընդհանրապէս մամլոյ էջերէն աննշմար անցած է *Հոկտեմբեր* ամսագրի անունին տակ կազմուած երիտասարդական շարժումին փորձը:

Համայնքի աւանդական կուսակցութիւններու շրջանակէն դուրս ստեղծուած եւ իր մտաւորական "յաւակնոտութեամբ" ղեկավարութեան համար անբաղձալի դարձած այս խումբը, համայնքի «հին» եւ «նոր» սերունդներուն միջեւ ստեղծուած անզիջող յարաբերութիւններու արտայայտումն էր: Նժարի մէկ կողմը՝ համայնքի բոլոր կառոյցներն ու վարչութիւնները տնօրինող եւ ղեկավարող աւանդապաշտ հաստատութիւններն էին, յանձինս՝ առաջնորդարանին եւ քաղաքական կուսակցութիւններուն, իսկ միւս կողմը՝ երիտասարդական մարմին մը, որ յաջողած էր ձեռք ձգել հանրութեան հետ հաղորդակցելու միջոց մը՝ թերթը, եւ անով լսելի դարձնել իր խօսքը եւ կենդանի օրինակով ապացուցել առկայ խնդիրներու իր առաջարկած լուծումները: *Հոկտեմբեր*[1] ամսաթերթին եւ զինք խմբագրողներուն ստեղծած հարթակն է խնդրոյ առարկան. հնգամեայ փորձ մը (1975-80), որ էր՝ ազատ, ինքնիշխան եւ ստեղծագործական:

*Հոկտեմբեր*ի երեւոյթը կը նմանի երկրի մը մաս կազմող փոքրամասնութեան, որուն ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն կու տայ նաեւ բա-

[1] «Հոկտեմբեր» անունը առնչուած է 1973ին Իսրայէլի դէմ պատերազմին, ուրկէ Եգիպտոս յաղթական դուրս եկաւ: Առիթէն օգտուելով, այդ անունով թերթ հրատարակելու դիմում կատարուած է Նիր Իսթ Ակումբին կողմէ եւ արտօնուած՝ պետական մարմիններու կողմէ:

ցայայտել մեծամասնութեան՝ այս պարագային եգիպտահայոց, ընկերա-քաղաքական յարաբերութիւններու թերութիւնները, համայնքի աշխուժու-թեան մակարդակն ու տարողութիւնը:

Հոկտեմբերի առաջին չորս թիւերը լոյս տեսած են որեւէ ակումբի չպատ-կանող եգիպտահայ հրապարակագիր Հայկ Ժամկոչեանի խմբագրու-թեամբ, որմէ ետք Նոյեմբեր 1975ին, տպարանատէր, Նիր Իսթ Ակումբի վարչական եւ թերթին արտօնատէր Գառնիկ Յակոբեանի հետ եղած մաս-նաւոր կարգադրութեամբ, Նիր Իսթ Հայկական Ակումբի հրատարակու-թիւնը եղող *Հոկտեմբերի*[2] խմբագրութիւնը կը ստանձնէ Եղեռնի 60ամ-եակի Երիտասարդաց Մարմինէն խումբ մը: Ասոնց հետ կը սկսի թերթին նոր շրջանը՝ զուտ երիտասարդական դիմագիծով: Պետութեան քով խմբագրապետ գրանցուած էր Շաֆիք Մորքոս Հաննան[3]:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏՂԱՔԸ

Յետագային «Հոկտեմբերի երիտասարդներ» կոչուած խումբը իր առա-ջին ընդհանուր հաւաքը գումարեց Եղեռնի 60ամեակի հանդիսութիւնը կազմակերպող երիտասարդներու մասնակցութեամբ, թերթի փոխանցու-մը յայտարարելու եւ առաջին խմբագրականի՝ «Մեր խօսքը»ին նիւթը քննարկելու, միտքեր շօշափելու, ուղղութիւն որոշելու:

Հաւաքը կայացաւ ՀԲԸՄի Գահիրէի գրասենեակին մէջ, իբրեւ չէզոք վայր: 25-30 անձէ բաղկացած մասնակիցները մեծամասնութեամբ համալ-սարանական տարիքի երիտասարդներ էին, նաեւ՝ տարբեր ակումբներու համակիրներ: Նախաձեռնողները Աւետիս Մովսէսեանն ու Վարուժան Գա-զանճեանն էին, գլխաւոր նպատակ ունենալով համախմբել կուսակցական պատկանելիութիւն չունեցող երիտասարդները: Այդ օրերուն ընդհանուր ոգեւորութիւն մը կար ակումբներու հովանիէն դուրս գալու, անկախ որոշում կայացնելու եւ գործելու:

Թերթին առաջին թիւերէն նկատելի էր աշխատակիցներու անսպասելի քանակը, մտքերու զանազանութիւնը եւ ակումբներու մասին ազատ գրելու եւ կարծիք հրապարակելու իրողութիւնը: Ասոնք, ինքնին, յաղթանակ մըն էին ինքնավստահութիւն ներշնչող: Այս աշխուժ վիճակը տեւեց մինչեւ *Թափրոն*ի ներկայացումը՝ 1978ին, երբ մասնակցողներու թիւը քսանի մօտ էր: Երբ շարժումին մնայուն վայր ստեղծելու հնարաւորութիւնը անկարելի-ութիւն դարձաւ, գործունէութեան բնոյթն ալ բնականաբար սահմանափակ-ուեցաւ. բացառապէս գրական աշխատանքի վերածուեցաւ եւ ինքնաբերա-

[2] Ըստ միութիւններ կազմելու պետական օրէնքին՝ ներքին հրատարակութիւններն արտօնուած էին:

[3] Քանի որ թերթ հրատարակելու համար պայման էր որ լրագրողներու սենտիքային պատկանող անձ մը պատասխանատու ըլլար բովանդակութեան, իսկ Նիր Իսթ Ակումբը կամ համայնքը այդ պաշտօնին համապատասխանող հայը չունէր:

բար գործունեայ աջակցողներուն թիւն ալ պակսեցաւ: Յիրաւի, մնացին միայն յամառօրէն թերթ հրատարակել ուզողները, որոնք բոլորին հաւանութեամբ որոշուող-բանաձեւուող-հրատարակուող «Մեր խօսքը»ով՝ թերթի խմբագրականով, ներհամայնքային քաղաքականութեան իրենց կեցուածքը արտայայտեցին՝ մասնակցութիւնը բերին: Համայնքի ներքին հարցերով մտահոգ՝ դպրոցներու միացումին, հայեցի դաստիարակութեան կամ կրթական մակարդակի բարձրացման, թէ նոյնիսկ ակումբներու միջեւ գզուըտուքով մարզական մրցակցութեան առնչութեամբ, շարժումը միշտ ալ անզիջող էր իր սկզբունքներուն խնդրով եւ ջատագով՝ անհատի ազատ խօսքին եւ գործելաոճին:

Խումբը՝ իբրեւ հոկտեմբերականներ, առաւելագոյնը 30 հոգի եղած է, սակայն հոկտեմբերամէտները քառապատիկ էին թէկուզ իրենց ակումբներուն կամ միութիւններուն մէջ մնալով: Ուստի *Հոկտեմբերի* պատկանելիութիւնը գաղափարական էր՝ միասնական, համերաշխ եւ համագործակցական կեցուածք որդեգրել կ'ենթադրէր եւ հետեւաբար անհրաժեշտ չէր ֆիզիքապէս խմբուիլը, քանի որ ո՛չ ցանկութիւնը կար քաղաքական կամ վարչական աթոռի տիրանալու եւ ո՛չ ալ պահանջք կար հաստատութեան մը հովանիին տակ ըլլալով՝ խումբն ու իր գործունէութիւնը նիւթապէս նպաստընկալի վերածելու:

ԹԵՐԹԸ ԵՒ ԻՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Թերթին առաջին թիւին մէջ նշուած «Համերաշխութիւն, համագործակցութիւն եւ միասնականութիւն» նշանաբանը ուղղուած էր եգիպտահայ բոլոր հոսանքներուն. ան կոչ մըն էր որ մասնակցին եւ միասնական գործունէութիւն ծաւալեն, կազմակերպելու համար պառակտուած եւ լճացած համայնքը:

Երիտասարդական էր թերթը, այն իմաստով, որ ան բաց հարթակ էր բոլոր անոնց որոնք ունէին «աւիւն, եռանդ, աշխատանքի սէր եւ արդիական մտայնութիւն»[4]: Խմբագրական կազմը որոշած էր տպել միայն երիտասարդներու (տարիքով երիտասարդները, նաեւ՝ յառաջդիմական հայեացքներով միտքերը նկատի ունէինք) ստորագրած յօդուածները: Որոշումները միասնական սկզբունքով կը կատարուէին առանց արտաքին ազդակներու կամ ազդեցութեանց ենթարկուելու: Խումբը կը գործէր առանց վարչական կոչումներու, եւ համայնքին մէջ ճանչցուած էր «*Հոկտեմբերի* երիտասարդներ» անունով[5]: Թիւով քիչ էին, սակայն աշխատելու պատրաստակամութեամբ եւ անհատական ունակութիւններ դրսեւորելու ինքնավստահութեամբ՝ անոնք կրցան փաստել որ իրենց խմբային աշխատելաձեւը եւ

[4] «*Հոկտեմբեր»ը* , *Հոկտեմբեր*, Նոյեմբեր, 5:1975, էջ 4:

[5] Վարուժան Գազանճեան, «"Հոկտեմբեր"ի հինգ տարիները», *Հոկտեմբեր*, Նոյեմբեր-Դեկտեմբեր, 40-41:1979, էջ 11:

ստեղծած անկաշկանդ պայմանները որակ ապահովելու ամէնամեծ ազդակներն էին:

*Հոկտեմբեր*ի հինգ տարուան գործունէութեան ընթացքին, կուսակցութիւններուն հակադրուիլը, տեսակէտեր քննարկելն ու նաեւ դէմ արտայայտուիլը, ակումբներու ամբոխավարութեան հակազդելը, անոնց խօսքին ու գործին միջեւ եղած տարբերութիւնները բացայայտելը, համայնքին խնդիրներուն մասին կուսակցական մամուլին լռութիւնը մատնանշելը, թերթերուն մէջ հանդէսներու շռայլ գովասանքները քննադատելը, գործնական եւ իրատես մօտեցումով՝ խնդիրներու լուծումներ առաջարկելը հանդիսացան գլխաւոր թեմաները թերթին, իսկ խումբին տուին իր զատորոշող դիմագիծը:

ԽՆԴԻՐՆԵՐ, ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ, ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

Կուսակցութիւններուն համար անընդունելի էր այս խումբին հետ հաւասար գետնի վրայ յարաբերիլը: Պատիւի հարց կար. նորը պէտք էր միշտ հինին ենթակայ ըլլար: Եւ բնականաբար՝ «ուժերու կեդրոնացում եւ միասնականութիւն» կարգախօսը որ հիմքն էր այս շարժման, ամէնաանընդունելի գաղափարախօսութիւնը հանդիսացաւ համայնքի բոլոր հատուածներուն կողմէ, որովհետեւ անիկա կը քանդէր նոյնինքն իրենց գործելաոճը:

Յիշենք, որ *Հոկտեմբեր*ի ազատ խօսելու եւ գրելու իրաւունք ձեռք ձգելու փորձերը հետեւանք էին համայնքէն ներս տիրող շարք մը երեւոյթներու եւ պատճառներու, որոնցմէ յիշենք.-

ա) մտաւորականներու բացակայութիւն,

բ) կուսակցական մամուլին մէջ քննական-քննադատական յօդուած տպելու անկարելիութիւն,

գ) երէցներուն աթոռի կառչածութիւն,

դ) ընդդիմադիրներու հանդէպ արհամարհանք,

ե) նորութեան հանդէպ կասկածանք:

Արդ՝ ըմբոստացումը թերթով եւ բեմի վրայ խօսքով՝ համայնքին մէջ գիտակցութեան շարժ մը յառաջացնելու համար էր, ուր անխուսափելի էր հին ու նոր սերունդներու առճակատումը: «*Մեր պնդումը իրաւատես հիմքեր ունէր եւ մենք պատրաստ էինք փորձարկել զայն՝ ցոյց տալով, որ հայ մշակոյթը միայն խօսքով չի կրնար տարածուիլ, հայապահպանումը պէտք է ընդունիլ որպէս ստեղծագործական աշխատանք, իսկ այդ իրագործելու համար հարկաւոր է աշխատանքը կազմակերպել, խօսքը խմբագրել եւ արդիւնքը ներկայացնել բացարձակ ազատութեամբ*»[6]:

[6] «Հայապահպանումը որպէս ստեղծագործական աշխատանք», *Հոկտեմբեր* Յունուար-Փետրուար, 42-43:1980, էջ 15:

Պէտք է այստեղ շեշտել որ այդ ժամանակամիջոցին եգիպտահայութեան համայնքային ներամփոփ ու գոց կեանքին մէջ[7] առկայ էր երկու գլխաւոր խնդիր՝ Եղեռնի 60ամեակի միասնական նշումն ու թեմական ժողովի համերաշխական ընտրութիւնները: Յուշատօնին կազմակերպումը եւ երիտասարդներու համագործակցութիւնը ի յայտ բերաւ մարմին մը որ ապագային համախմբուեցաւ *Հոկտեմբեր* թերթին շուրջ: Իսկ համերաշխութեամբ ստեղծուած ազգային իշխանութիւնը առաջին անգամ մէկտեղեց – նախապէս համաձայնուած համեմատութեամբ - երեք կուսակցութիւններն[8] ու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

1975ը համագործակցութեան տարի էր. եգիպտահայ համայնքի թեմական ընտրութիւնը կատարուեցաւ քաղաքական հոսանքներու ներկայացուցիչներու միասնական ցանկով, որ աննախադէպ երեւոյթ էր: Սակայն համերաշխաբար եւ համագործակցելու ցանկութեամբ երեք կուսակցութիւններէն կազմուած ազգային իշխանութիւնը պատրաստ չէր - հատուածական իր քարոզչութենէն հրաժարելով - ուժերու կեդրոնացման եւ միասնական աշխատանքի մասին լուրջ քայլեր առնելու: Ո՛չ ցանկութիւնը կար, ո՛չ ալ ակումբներէն ներս այդ ուղղութեամբ նախապատրաստական աշխատանք կատարուած էր: Եղածը ուրեմն համայնքի քաղաքական հատուածներուն միջեւ աթոռաբաշխութիւն մըն էր՝ ըստ ուժերու համեմատութեան[9]:

Թեմական ժողովի 24 աթոռները գրաւելով՝ նորընտիր երեսփոխանները եօթ հոգինոց քաղաքական ժողովին միջոցաւ պարտաւոր էին ազգապատկան կալուածներն ու անշարժ գոյքը կառավարել, մատակարարել, տնօրինել եւ այլ ընթացիկ հարցեր լուծել: Ազգին այս ընդհանուր ունեցուածքին մէջ Գահիրէի գործող երկու վարժարանները՝ Գալուստեանն[10] ու Նուպարեանը[11], իւրայատուկ նշանակութիւն ունէին համայնքին համար: Անոնք հայերէն լեզուն ուսուցանելու եւ հայերէնով դաստիարակելու ազգային կեդրոններ էին: Եւ որովհետեւ *Հոկտեմբերի* հաշուարկով՝ դպրոցը որոշիչ դեր պէտք է խաղար հայապահպանումէն հայակերտումի անցնելու ընթացքին՝

---

[7] Այդ շրջանին՝ իւրաքանչիւր ակումբի անդամ, կուսակցական պատկանելիութեան պատրուակով, կտրուած էր համայնքի միւս ակումբներու գործունէութենէն: Ակումբը իր սահմաններուն մէջ իր անդամներով բաւարարուած կը համարուէր: Անդամները իբրեւ քաղաքացիներ կտրուած էին նոյնիսկ տեղական մշակութային եւ քաղաքական կեանքէն, չկային բաց/ազատ հաղորդակցութեան միջոցներ: Համայնքը կտրուած էր Միջին Արեւելքի շրջակայ հայ համայնքներէն, մանաւանդ՝ այնքան աշխուժ Պէյրութէն: Կղզիացումի այս քաղաքականութիւնը նաեւ ազդած էր «հայապահպանում» ըմբռնումին վրայ:

[8] ՌԱԿ, ՍԴՀԿ, ՀՅԴ:

[9] ՌԱԿ՝ 8 աթոռ, ՍԴՀԿ՝ 4 աթոռ, ՀՅԴ՝ 8 աթոռ, ՀԲԸՄ՝ 4 աթոռ:

[10] Գալուստեան Ազգային Վարժարանը հիմնուած է 1854ին, Գահիրէ:

[11] Նուպարեան Ազգային Վարժարանը հիմնուած է 1924ին, Հելիոպոլիս: Իսկ Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային Վարժարանը հիմնուած է 1890ին:

կրթական մակարդակ ապահովելը եւ ազգային դաստիարակութեան բացառիկ կարեւորութիւն տալը թերթին առաջնային պահանջքներն եղան:

Հայապահպանումի քաղաքականութեան տեսանկիւնէն՝ ազգային դպրոցին թիկունք կանգնիլը կուսակցական երեսփոխաններուն ամէնահրատապ հարցը պէտք էր ըլլար. անոնք շահախնդիր պէտք էր ըլլային ազգային եւ հայագիտական ծրագրերու դասաւանդութեան թափ տալով, որովհետեւ դպրոցը՝ ամէնօրեայ կանոնաւոր իր ժամապահերուն շնորհիւ, միակ վայրն է ուր կարելի է աշակերտները այդ բոլոր արժէքներով օժտել եւ դրական արդիւնքներ ապահովել: Լաւ դաստիարակուած աշակերտը ակումբին եւ համայնքին ծառայելու իր հմտութեամբ, օժտուածութեամբ եւ նախաձեռնութեամբ հայապահպանման քարոզարշաւին լաւագոյն ապացոյցը պիտի ըլլար[12]: Սակայն գործնականօրէն լուծումը կախեալ էր որակաւոր ուսուցիչէն եւ ուսման ծրագրերէն. խնդիրներ՝ որոնք անլոյծ կը մնային տարիներէ իվեր եւ ասպարէզ մը, որ բաց թողուած էր տարիներով: Կացութիւնը փրկելու, բարելաւելու կամ բարեփոխելու համար *Հոկտեմբեր*էն անհատներ[13] նետուեցան ասպարէզ եւ համալրեցին ուսուցչական կազմը ու թերթով բարձրաձայնեցին, որ հայակերտումը որակ կը պահանջէ, ուստի պատմական անցեալն ու փառքը, նաեւ կամաւոր աշխատանքը բաւարար չեն սերունդ կերտելու համար, հարկաւոր է դիմել արդիական միջոցներու եւ մասնագէտ արհեստավարժներու[14]:

Սակայն՝ հայերէն լեզուի օրակարգային նիւթերը ազգային երեսփոխանները չէին անհանգստացներ, կուսակցութիւններուն ուշադրութեան կեդրոնը չէին հանդիսանար: Անոնց համար Գալուստեան Վարժարանի կտակին նիւթական մեծ եկամուտներու բաշխումը աւելի առաջնահերթ էր:

*Հոկտեմբեր*ի էջերէն կը կարդանք ուսումնական մակարդակ բարձրացնելու հարցին մասին. հոն կը շեշտուի թէ ուսումնական մակարդակը ազգային գիտակցութեան եւ դաստիարակութեան խնդիր է[15]: Դաստիարակութեան իբրեւ մեթոտ կ'առաջարկուէր, որ նոր սերունդը իւրացնէ քննական

---

[12] Այն մտայնութիւնը կը տիրէր, թէ քանի որ համայնքը նօսրացած է եւ նիւթական միջոցները սահմանափակ են, անձնական ուժերու վրայ հիմնուիլը ճիշտ է, նոյնիսկ եթէ անորակ է անիկա. ակումբներու միջեւ մրցակցութիւնը տեղական համեստ ուժերու մակարդակով պահելը, տարբեր սրահներու մէջ նոյնանման միջոցառումներու կրկնութիւնը եւ փոփոխութիւններ յառաջացնելու յանդուգն քայլերու չդիմելը՝ ապացոյցներ են այդ լճացած վիճակին: Հայապահպանումը - ըստ ակումբներուն - ելոյթի կամ ծրագրի մը մասնակցողներու քանակին հետ կապուած էր, անկախ որակէն կամ մակարդակէն:

[13] Վազգէն Բրուտեան, Վարուժան Գազանճեան, Արաքսի Տէրունեան, Թովմաս Զաքարեան:

[14] «Հայապահպանումը որպէս ստեղծագործական աշխատանք», *Հոկտեմբեր* Յունուար-Փետրուար, 42-43:1980, էջ 10-16:

[15] Վազգէն Բրուտեան, «Նամակագրութիւն», *Հոկտեմբեր*, Մարտ, 32:1979, էջ 7:

մտածողութիւնը եւ զայն իբրեւ մօտեցում կիրառէ համայնքի զարգացման համար, թէ՛ կուսակցամոլութեան դէմ, թէ՛ ազգային իշխանութեան անտարբերութեան դէմ եւ թէ՛ որոշում առնելու վախկոտութեան դէմ:

Ազգային վարժարաններու նկատմամբ ստեղծուած անտարբերութեան ապացոյց էին տիրող անհոգութիւնը՝ իտես համայնքի աշակերտական բնակչութեան 35 առհարիւրին օտար վարժարան յաճախելուն, ինչպէս նաեւ մամուլի էջերէն հարցը քննարկող յօդուածներու բացակայութեան: Երբ լուռ էին պատասխանատուները *Հոկտեմբեր* քննարկեց եւ բարեփոխման կարգ մը առաջարկներ ներկայացուց՝ մասնաւորաբար 1978էն ետք, երբ Գալուստեան Վարժարանի գլխաւոր շէնքը պետական հրամանով փլուզման ենթարկուեցաւ[16]:

Բնականաբար հայապահպանման առնչուող յարակից հարցեր ալ կային. օրինակ՝ խառնածին ծնողներու եւ աշակերտներու լեզուի խաթարուած գործածութեան երեւոյթը, հայերէն դասաւանդող ուսուցիչներու պակասն ու հայեցի դաստիարակութեան ծրագրերու անբաւարար ժամանակ յատկացնելը... հարցեր՝ որոնք մինչեւ այսօր ալ կը մնան անլոյծ: Իբրեւ լուծում, *Հոկտեմբեր* կ'առաջարկէր, որ գաղութի անդամներէն երիտասարդներ առաջնորդարանի հովանաւորութեամբ՝ Հայաստանի մէջ հայագիտութեամբ մասնագիտանալէ ետք, լաւ աշխատավարձով պաշտօնավարութեան հրաւիրուին դպրոցներէն ներս[17]: Այսօր, քառասուն տարիներ ետք՝ պատասխանատուները դեռ կը փնտռեն զանոնք եւ թոյլ առաջնորդներու ու ոչ-հայախօս ծնողներու ճնշման տակ, դպրոցը կը զիջի ու կը յարմարի ազգային գիտելիքներու նուազագոյնին՝ նոյն այդ ղեկավար կուսակցական ազգային երեսփոխաններու հովանիին ներքոյ:

*Հոկտեմբեր*ը խառն ամուսնութիւններու [18] երեւոյթը ահազանգեց 1977ին[19], ցոյց տալով թէ վերջին տասը տարիներու (1970-80) ընթացքին 34%ի հասած էր ան եւ թէ անվնաս կը համարուէր համայնքին կողմէ: Եւ որովհետեւ առաջքը առնելու համար ոչինչ ծրագրուեցաւ կամ կատարուեցաւ, այսօր այդ թիւը հասած է 65%ի եւ բոլորին կողմէ ընդունուած է իբրեւ բնական իրավիճակ:

*Հոկտեմբեր*ի համար այլասերումի դէմ պայքարելու ձեւերէն մէկը Սփիւռքի գաղութներու միջեւ կապերու ամրապնդումն էր. կեդրոնացնել ուժերը եւ, հայրենիքի հետ մշակութային կապը հիմք ընդունելով, ուղղուիլ ազգային նոր արժէքներու որոնման:

---

[16] Փլուզման պատճառը «Օքթոպըր» կամուրջը կառուցելն էր՝ Մեղու, «Ա՞յս ալ ներածենք», *Հոկտեմբեր*, Դեկտեմբեր, 29:1978, էջ 3:

[17] Վազգէն Բրուտեան, «Հայ ուսուցիչներու օր», *Հոկտեմբեր*, Ապրիլ-Մայիս, 33-34:1979, էջ 21:

[18] *Հոկտեմբեր* իր առաջին թիւէն սկսեալ ունէր նաեւ արաբերէն բաժին մը՝ ոչ-հայախօսներուն համար:

[19] Մեր Խօսքը, «Զգուշանանք այլասերումէն», *Հոկտեմբեր*, Յունուար, 14:1977, էջ 1:

Պէտք է այստեղ շեշտել, որ թերթով եղած աշխատանքն ու խմբագրականով մտածողութիւն բացայայտելը, որոշում առնող աթոռներուն վրայ աւելի յարմար պատասխանատու ղեկավարներ տեսնելու համար էր: Համայնքը լճացումէն դուրս բերելու իբրեւ միջոց՝ վարիչներուն կ'առաջարկուէր ակումբներուն մէջ տարբեր շրջանակներէ երիտասարդներ համախմբել՝ ուսումնասիրական արդիւնաւէտ ծրագրեր իրագործելու համար: *Հոկտեմբեր*ի ազատ եւ անկաշկանդ աշխատելու մօտեցումը բոլորին համար եղած յորդոր մըն էր, որ երբ բեմէն ալ արձագանգեցին՝ ՌԱԿի մամուլին կողմէ հեգնանքի արժանացան[20]:

Սփիւռքահայուն համար «Միջին ճամփայ»[21] բառակապակցութիւնը գաղափարական գետնի վրայ *միասնականութիւն* կը նշանակէր: *Հոկտեմբեր*՝ ակումբային երիտասարդներուն ուղղած կոչով կը թելադրէր անոնց մէկդի դնել Մայիս 28ի եւ Նոյեմբեր 29ի հետ կապուած պնդումները եւ իրար հանդուրժող մօտեցումով լծուիլ համայնքի ներքին կեանքը կազմակերպելու, վերջ տալ ատելութեան ոգիին, նաեւ՝ ակումբներու խաչաձեւումներուն[22]:

ՀՈԿՏԵՄԲԵՐ ԵՒ *ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ*. ԻՐԱՒՈՒՆՔ- ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ-ԿԱՇԿԱՆԴՈՒՄ՝ ՇԱՐԺՈՒՄ-ՀԱՄԱՅՆՔ-ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՌԵԱԿ ԾԻՐԸ

Կրնանք ըսել, թէ համայնքի երիտասարդներուն մօտենալու, նիւթեր քննարկելու եւ նոյնիսկ առաջարկներ ներկայացնելու առումով, *Հոկտեմբեր*ի յօդուածները շատ նման էին լիբանահայ *Երիտասարդ հայ*ի արծարծած կարգ մը թեմաներուն:

Այդ ժամանակաշրջանին, Եգիպտոսի եւ Լիբանանի միջեւ հաղորդակցութեան կապերը նուազագոյն մակարդակի վրայ էին եւ անհաւանական է որ *Երիտասարդ հայ*ի օրինակներ տեսած ըլլային *Հոկտեմբեր*ի տղաքը: Այս փաստ է թէ երկու համայնքներուն մէջ ալ առկայ էին ազգային-ընկերային խնդիրներով մտահոգ եւ քննական մօտեցումով լուծումներ բարձրաձայնող երիտասարդներ: Իսկ բարձրաձայնուող խնդիրներուն պատճառները պէտք էր փնտռել միջին արեւելքի համայնքներու ներքին ընկերային քաղաքական կառուցուածքին մէջ:

Մինչ Պէյրութի մէջ աւելի քաղաքականացած էր երիտասարդ զանգուածը, Գահիրէի մէջ անտաշ եւ նախակրթարանի մակարդակով էին ազգային գիտելիքները: Սփիւռքը՝ Պէյրութի ազատ հարթակին համար, իրական էր

---

[20] «Հոկտեմբերի պատասխանը Արեւին», *Հոկտեմբեր*ի «Յաւելուած», Նոյեմբեր-Դեկտեմբեր, 40-41:1979, էջ 14-20:

[21] Մեր խօսքը, «Մեր ուղղութիւնը», *Հոկտեմբեր*, Նոյեմբեր 5:1975, էջ 1. նաեւ՝ Մեր խօսքը, «Անկիւնադարձը», *Հոկտեմբեր*, Յուլիս, 36:1979, էջ 1:

[22] Մեր խօսքը, «Խաչաձեւումները...», *Հոկտեմբեր*, Փետրուար-Մարտ-Ապրիլ, 15-16-17:1977, էջ 1: Կ'ակնարկուի տարբեր ակումբներու կողմէ նոյն ատեն նոյնանման ձեռնարկներ կատարելուն, հանդիսատեսը մասնատելու նպատակով:

եւ ազգային գիտակցութեան մէջ աւելի քննարկուած ու վերլուծման ենթարկուած նիւթ էր, իսկ Գահիրէի պարագային՝ տեղական համայնքէն դուրս իրականութիւնը իրեն մաս չէր կազմեր, ենթադրական էր: Պէյրութի հարթակը Սփիւռքը կազմակերպելու եւ տնտեսական ուժի վերածելու կը ձգտէր, Գահիրէի հարթակը համայնքային կազմակերպում եւ մշակութային գետնի վրայ ուժերու կեդրոնացում կը հետապնդէր: Այլ խօսքով՝ մէկը ներհամայնքային, միւսը միջհամայնքային, այսինքն համասփիւռքեան մտասեւեռումներ ունէր: Սակայն - ինչպէս վերը ըսինք - երկուքն ալ նոյն եւ նման խնդիրներ կ'արծարծէին: Յիրաւի, յատկանշականը այն է, որ երկու պարագաներուն ալ հարթակները հասարակութեան մէջ գիտակցութիւն արթնցնելու եւ աւանդական պատասխանները հարցադրումի վերածելու եւ քննարկելու յանդգնութիւնը ունէին, բան մը՝ որ դարձաւ մագնիսական այն ուժը, որուն ականջ տուին կուսակցական կաղապարէն դուրս մնացած ընթերցող երիտասարդները:

Սփիւռքի համայնքներուն մէջ, պետական կաշկանդումներն ու քաղաքացիի իրաւունք-պարտաւորութիւն յարաբերութիւնները հիմնական գործօններն են, որոնք կ'որոշեն ու կը պարտադրեն համայնքներէն ներս շարժումներու բնոյթն ու գործունէութեան ասպարէզը:

Օրինակի համար, 1975-80 ժամանակահատուածին, Եգիպտոսի մէջ քաղաքական գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւնը օրէնքով արգիլուած էր[23], ուստի՝ հայ աւանդական քաղաքական կուսակցութիւնները ստիպուած էին մշակութային ակումբներու անուան տակ իրենց գոյութիւնը պահպանել: Այդ իսկ պատճառով ծրագրերը կազմուած էին հայապահպանում տեսլականին ծիրին մէջ: Սակայն նոյնը կարելի չէ ըսել Պէյրութի համայնքին մասին, ուր պետականօրէն արտօնուած էր քաղաքական կուսակցութիւններու գործունէութիւնը, մարտական խմբակներու առկայութիւնն ալ ընդունելի դարձած էր: Հետեւաբար՝ *Հոկտեմբեր* եւ *Երիտասարդ հայ* հարթակներու միջավայրերը բնութագրելու պարագային՝ քաղաքական ազատութիւնը պիտի համարել ամէնացայտուն տարբերութիւնը երկուքին միջեւ:

Լիբանանի քաղաքական կեանքին մէջ կրօնական եւ դաւանանքային ազատութիւններն ու իրաւունքները, կառավարման չափաբաժին (quota) հասկացութիւնը, Պուրճ Համուտի եւ այլ հայաշատ թաղերու ներկայութիւնը բոլորովին տարբեր խնդիրներու առջեւ կը դնէր *Երիտասարդ հայ*ը, քանի որ իր շուրջ բոլորուած եւ բաժանորդագրուած համայնքը շատ աւելի ընկերային եւ քաղաքացիական ակնկալիքներ ունէր թերթէն: Լիբանահայը թերեւս քանակային փոքրամասնութիւն էր, սակայն ո՛չ քաղաքական իմաստով, քանի որ պետական վարչամեքենային մէջ իր օրինական ներկայութիւնն ունէր:

---

[23] 1952ի յեղափոխութենէն ետք միակ իշխող կուսակցութեամբ մը կառավարուած է Եգիպտոս մինչեւ 1980:

Ինչ կը վերաբերի *Հոկտեմբերի*ին, ապա անոր գոյութեան հինգ տարինե-րը կը համընկնէին Եգիպտոսի նախագահ Անուար Սատաթի յետ-պատե-րազմեան շրջանին, երբ ժողովրդավարութեան անցնելու առաջին փորձե-րը կը կատարուէին: Եգիպտոս փակ տնտեսական համակարգէ բաց առեւ-տրական քաղաքականութեան անցնելու քայլեր կ'առնէր, նաեւ՝ Իսրայէլի հետ սահմաններ վերականգնելու բանակցութիւններ կը վարէր: Նախա-գահ Սատաթի Երուսաղէմ անակնկալ այցելութեան որոշումովը, արաբա-կան աշխարհի եւ Եգիպտոսի միջեւ պետական յարաբերութիւնները կը վատթարանային, Եգիպտոս կը մեկուսացուէր արաբական աշխարհէն, երկրին մէջ կը ստեղծուէր տնտեսական անկայուն եւ ընկերային չհաւասա-րակշռուած մթնոլորտ: Նախագահ Կամալ Ապտէլ Նասըրի վաթսունական-ներու ազգայնացումի եւ ընկերվարական օրէնքներու կիրառումէն ետք, ա-ռաջին անգամ է որ նոր-հարուստներու դասակարգ մը Եգիպտոսի իշխա-նութեան գլուխ կ'անցնէր:

Տարբեր չէր վիճակը համայնքէն ներս: Այդ ժամանակահատուածին մէջ, եգիպտահայերէն շատեր տնտեսական «բաց դռներ»ու քաղաքականութե-նէն օգտուելով, նիւթապէս բարելաւեցին իրենց տնտեսական վիճակը եւ հետեւաբար կուսակցութիւնները սկսան ընդգրկել զանոնք ազգային իշ-խանութեան երեսփոխաններու թեկնածուներու ցանկին մէջ: Արդարեւ, այդ շրջանին յառաջացան համայնքին նորափթիթ մեծ նուիրատուները, որոնք ենթադրաբար պէտք է հայկական դպրոցին ճակատագիրը որոշէին եւ հա-յապահպանման ծրագրին թափ տային: Սակայն անոնք - որպէս գործնա-պաշտ միտքեր - Գահիրէի երկու ազգային վարժարանները միացնելու եւ նիւթական առաւելութիւն ստեղծելու ձգտեցան: Աւելի քան երկու տասնամ-եակ, իրենց նիստերու նիւթն ու ուղղութիւնը դարձաւ երկու դպրոցները մի-ացնելու[24] հարցը: Այս մթնոլորտին մէջ էր որ *Հոկտեմբերը* իր բաժանորդ-ները պէտք է փնտռէր:

Գահիրէի համայնքը[25], իր անցեալի պատմական վարկին վրայ հիմնուե-լով, պահպանած էր գրեթէ բոլոր կառոյցներն ու հաստատութիւնները, սա-կայն արտագաղթի տարբեր ալիքներու հետեւանքով կորսնցուցեր էր իր անդամներուն 75%ը, մանաւանդ միջին տարիքի անդամները: Նօսրացած իր վիճակով «ծեր» համայնք մըն էր ան, ժամանակին անյարիր մտաւորա-կան առաջնորդներով: Իր բազմազան կառոյցներու առկայութեամբ՝ հա-

[24] Գալուստեան Ազգային Վարժարանի ծնողաց միութեան յամառ ընդդիմութեամբ վարժարաններու մէկտեղումը միայն 2013ին իրականացաւ:

[25] Ըստ *Հոկտեմբերի* տուեալներուն, գահիրէաբնակ հայերուն թիւը 4-5000 էր, ազ-գային իշխանութիւն ընտրելու իրաւունք ունեցողներուն թիւը՝ 700, ակումբ յաճա-խողներուն թիւը՝ 1500, ակումբ/միութիւն/հաստատութիւններուն թիւը՝ 40, վարչա-կաններուն թիւը՝ 400. խառն ամուսնութիւնները կը կազմէին՝ անդամներու 30%ը, ազգային վարժարան յաճախող աշակերտութեան թիւը 250 էր:

մայնքի անդամներու 10%ը ստիպուած էր ձեւով մը վարչականներ դառնալ եւ մաս կազմել հին համայնքը ներկայացնող ***աւանդապատկեր***ին:

Հայապահպանումը այն առաձգական բառն էր, որ համայնքի մեծ ու փոքր վարչութիւններու ժողովականները իրենց հասկցած ձեւով կարող էին իրենց ուզած ուղղութեամբ տանիլ: Սակայն *Հոկտեմբեր*ը տարբեր մօտեցում եւ ըմբռնում ունէր իրավիճակին հանդէպ: Ան որդեգրած էր հայակերտում հասկացութիւնը, մէկ քայլ առաջ անցնելով ակումբներու ամբոխավարութենէն, հայրենասիրական օճախներ եւ հնոցներ ըլլալու յաւակնութենէն եւ ընդհանուրի շահերուն հանդէպ կրաւորական դիրքորոշում ունենալէն:

Եթէ ատենի Գահիրէի եւ Պէյրութի համայնքներու թիւը նկատի ունենանք, բնակչութեան կեդրոնացումը (Հելիոպոլիս ընդ Պուրճ Համուտ), հայերէն լեզուի գործածութիւնը, մտաւորական մթնոլորտը, թերթերու գրական մակարդակը եւ զանազանութիւնը (կուսակցական, չէզոք, մշակութային, գրական եւն.), կառոյցներու համակարգը, ակումբներու վարիչներուն եւ ղեկավարներուն հեղինակութիւնը, մշակութային գործունէութեան տարողութիւնն ու որակը, քաղաքականութեամբ զբաղելու հնարաւորութիւնը եւ ընկերային ու դասակարգային յարաբերութիւնները, պիտի հետեւցնենք որ Պէյրութը «փոքր Հայաստան» մըն էր մինչեւ իր քաղաքացիական պատերազմին սկիզբը՝ 1975, բաղդատմամբ Գահիրէին: Ուստի բնական է ենթադրել որ իր պետական եւ սահմանադրական իրաւունքներով ու աւելի քաղաքականօրէն աշխուժ հաւաքականութեամբ, լիբանահայ համայնքի ղեկավարները պետակա՛ն օրինակը աչքի առջեւ ունենալով, համայնքին փոքրամասնութիւններուն հանդէպ հանդուրժողականութիւն ցուցաբերէին:

Սակայն *Երիտասարդ հայ*ի համայնքային եւ սփիւռքեան քննարկումները երեւան կը հանէին այլ պատկեր: Արդարեւ, բացասական դիրքորոշումներ կը տիրէին ազատ խօսքի եւ աւանդական լուծումներէն անդին տարբեր ուղիներ որոնող երիտասարդութեան դէմ: Ազգային եւ կուսակցական հաստատութիւնները անհաղորդ էին ակումբէն դուրս գտնուող երիտասարդներու պահանջքներուն: Ասով կը ստեղծուէր մթնոլորտ մը, ուր ակումբի երէցները, երիտասարդներու թափն ու աշխուժութիւնը կաղապարելով, հայապահպանման լոզունգին տակ, իրենց նման մտածողներ կ'արտադրէին: Ուստի, հակառակ ազատ քաղաքական միջավայրին, նոյնն էին համայնքային անհատ-կառոյց յարաբերութիւնները Պէյրութի եւ Գահիրէի մէջ եւ հետեւաբար նոյնն էին ըմբոստացման եւ հակազդելու դրդապատճառները:

*ՀՈԿՏԵՄԲԵՐ*ԱԿԱՆՆԵՐԸ ԸՆԴԴԷՄ ՄԵՔԵՆԱՅԻՆ

*Հոկտեմբեր*ի աշխատակիցները կամաւորներ էին. անոնք չունեցան խմբագրատուն, մնայուն հովանաւորող եւ անդամներ: Տան մէջ կը կատարուէին խմբագրական ժողովները, գրել-սրբագրել-մեքենագրելը անհատական ջանքերով էին, նաեւ՝ տպելը, թերթը բաժնելը, բաժանորդագրելը: *Հոկտեմբեր*ը խմբային աշխատանք մըն էր, փաստելու համար թէ կարելի

է նաեւ անկախ գործելակերպով մասնակցիլ համայնքի զարգացման գործընթացին, առանց ղեկավար երէցներու թոյլտուութիւնը վայելելու:

Բեմային ներկայացումներու փորձերը նախ տուներու մէջ էին, յետոյ բեմի վրայ: Միշտ ալ ուրիշ կազմակերպութեան[26] մը անունի տակ՝ բեմը օգտագործելու պաշտօնական իրաւունք ստանալու համար: Հոկտեմբերականները կազմակերպեցին նաեւ երեկոներ, դասախօսութիւններ նուիրուած՝ Աւետիք Իսահակեանի, Եղիշէ Չարենցի ծննդեան 80ամեակին, թատրոնի պատմութեան, Նարեկացիի *Մատեան ողբերգութեան*ին եւն.:

Համայնքի վիճակը քննադատելով հանդերձ, *Հոկտեմբեր*ի խմբագրական կազմի բոլոր աշխատակիցները գործունեայ անդամներ եղած էին զանազան ակումբներու եւ միութիւններու: Չյաջողելով ներքին բարեփոխումներու ենթարկել այդ հաստատութիւնները, անոնք համախմբուեցան դուրսէն հետապնդելու համար *հայակերտումը*՝ հասարակ յայտարար ունենալով ազատ աշխատելու եւ ստեղծագործելու իրենց մեկնակէտը: Շարժումը իր սկզբնական տարերքին մէջ կուսակցական շրջանակներու կարծրատիպ գաղափարներուն հակազդող դրօշակիրը եղաւ, եւ համերաշխութիւն-համագործակցութիւն-միասնութիւն սկզբունքներուն գործնական կիրառողը[27]:

*Հոկտեմբեր*ը անհատական ունակութիւններու վրայ հիմնուած համախմբում մըն էր. գրող, դերասան, ասմունքող, բեմադրող, ուսուցիչ, դասախօս, ուստի՝ իր միտքերը բարձրաձայնելու միջոցն ալ սահմանափակուած էր անդամներու ասպարէզին յատուկ հնարաւորութիւններով: Ան ընդդիմութեան դերը ստանձնած էր, զէնք ունենալով բեմն ու գրաւոր խօսքը:

Ամսաթերթը պարբերաթերթի վերածուեցաւ, յետոյ դադրեցաւ լոյս տեսնելէ՝ նիւթականի եւ աշխատակիցներու անբաւարարութեան պատճառով:

Խմբագրութեան համար հարց էր երիտասարդներու ընթերցանութեան պակասը, թերթը պարտադրուած էր զիջումներ կատարել: Ի՞նչ գրել, ազգայի՞ն նիւթեր, որոնք ժամանակավրէպ կը դառնային խնդրի **Չ**լուծման հետ, թէ՞՝ գրական վերլուծումներ եւ արուեստ, որոնք հազիւ թէ ընթերցողներ կրնային ունենալ: Ի՞նչ լեզուով գրել մասնագիտական յօդուածները,

---

[26] Նիր Իսթ Հայկական Ակումբ, Հայ Մշակոյթի Բարեկամներու Միութիւն, Ազգային Իշխանութիւն:

[27] Տարբեր ակումբներու զանազան թատերական ներկայացումներու մաս կազմած են *Հոկտեմբեր*ի երիտասարդները: Փետրուար 1976ին՝ «Կասկածը կնոջ մտքին մէջ», (բեմադրութիւն՝ Վարուժան Ֆրընճեան), Օգոստոս 1977ին՝ «Չէնքերն ու մարդը» (բեմադրութիւն՝ Ժիրայր Բաբազեան), Մարտ 1978ին՝ «Չարենցի 80ամեակ - մարդն ու գործը» (Վարուժան Գազանճեան-Ֆրընճեան), Յուլիս 1978ին՝ «Քաջ Նազար» (բեմադրութիւն՝ Ֆրընճեան), Օգոստոս 1978ին՝ «Ստախօսը» (բեմադրութիւն՝ Բաբազեան), Սեպտեմբեր 1978ին՝ «Չայրոյթով նայեցէք ետեւ» (բեմադրութիւն՝ Բաբազեան), Հոկտեմբեր 1978ին՝ «Թատրոն»ի պատմութիւն (բեմադրութիւն՝ Ֆրընճեան), Նոյեմբեր 1978ին՝ «Նարեկացի» (բեմադրութիւն՝ Ֆրընճեան):

որպէսզի հասկնալի դառնային ընթերցողներուն: Հայեցի դաստիարակութեան մասին քննարկելը հիասթափեցուցիչ էր իտես այդ ուղղութեամբ առնուած համայնքի անլուրջ քայլերուն: Արդարեւ, բաժանորդները ազգային գոյավիճակին եւ մտահոգութիւններուն ծանօթացնելու համար, նաեւ իրենց լուծումներու մասին մտածել տալու համար, բանաւոր եւ գրաւոր հայերէնի իմացութիւնը ամէնամեծ խոչընդոտն էր:

Պարբերաբար լոյս տեսած *Հոկտեմբեր*ը պէտք էր հանրային կարծիք ստեղծէր ընդդէմ՝ տասնամեակներով հրապարակի վրայ եղած մեքենային:

Այս մեքենային մաս կը կազմէին.-

ա) կուսակցութեանց անշարժ գոյքերը՝ մշակութային եւ մարզական ակումբները, տպարանը.

բ) անշարժ միտքերը՝ կուսակցավարժ խմբագիրը, կուսակցական պատկանելիութեամբ անդամները, շարքերը համալրած տհաս պատանիները.

գ) անշարժ կուսակցական կապերը՝ Սփիւռքի իրենց կեդրոններուն եւ մասնաճիւղերուն հետ, նաեւ Խորհրդային Հայաստանի հետ մենաշնորհ դարձած կապը ոչ-Դաշնակցական հատուածին.

դ) երեսփոխանական անշարժ աթոռները՝ ազգային առաջնորդարանին՝ համայնքը ղեկավարելու, դպրոցի աշխատակազմը ընտրելու, ազգային կալուածներն ու եկամուտները մատակարարելու:

Նօսրացած համայնքին մէջ՝ դիրք գրաւելու նախապատուութիւնը վստահութիւն վայելող կուսակցականին էր միշտ, իսկ կրթական, մշակութային հարցեր լուծելու եւ տնօրինելու պատրաստակամ մասնագէտներու կարծիքը երկրորդական էր: Արդիւնք՝ կրթական, մշակութային հարցեր լուծելու եւ տնօրինելու անբաւարար պատրաստութեամբ վարչականներու հոյլ մը[28]:

ՆԵՐՔԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Ի՞նչ կոչել երիտասարդական ազատ հարթակները, որոնք իրենց դրսեւորման շնորհիւ թէ՛ մթնոլորտ կը յառաջացնեն եւ թէ՛ ազդեցութիւն կը ձգեն աւանդապաշտ միջավայրին եւ կառոյցներու հին աշխատաձեւին վրայ: Ըմբոստացու՞մ, ցնցու՞մ, շա՞րժ, *աքթիւիսթ*ներու բողո՞ք: *Հոկտեմբեր* իր հինգ տարուան կենսագործունէութեան ընթացքին[29] առաջնահերթութիւնը տալու գիտակցութեան արթնացումին՝ վերլուծութիւններ, առաջարկներ եւ լուծումներ հրամցնելով: Հոկտեմբերականները եղան համայնքը յառաջ քաշող ներուժը:

---

[28] Այսօր՝ այդ զարտուղի վիճակին վրայ կ'աւելնայ նաեւ վարչականներու հայերէն լեզուի իմացութեան պակասը:

[29] Վարուժան Գազանճեան, «Հոկտեմբերի հինգ տարիները», *Հոկտեմբեր*, Նոյեմբեր-Դեկտեմբեր, 40-41:1979, էջ 10-28:

*Հոկտեմբեր*ին միանալու կամ շարքերը անցնելու համար աշխատանք տանիլը անիմաստ էր, քանի որ արդէն գոյացած խումբին համար կարեւորը՝ թերթով արծարծուած միտքերը ակումբներէն ներս արձագանգելն էր եւ վարչական որոշումներու մաս կազմելը: Ճնշում բանեցնելու համար համայնքի անդամները ցոյցի հանելը օգտակար չէր կրնար ըլլալ: Միայն՝ ղեկավարներու համար համոզիչ փաստարկումներ հրամցնելն էր միջոցը, եւ ատիկա օրինակով հաստատելու համար՝ հոկտեմբերականները ընդգրկուեցան թերթէն անկախ բազմաթիւ աշխատանքներու մէջ: Օրինակի համար՝ ազգային վարժարաններէն ներս ստանձնեցին ուսուցչական պաշտօն, մանկական գրականութեան պակասը լրացնելու համար նկարազարդեցին եւ հրատարակեցին հեքիաթաշարք մը[30], բեմական մշակոյթը աշխուժացնելու նպատակով բեմականացուցին թատրոնի պատմութիւնը[31] իր ժամանակաշրջաններով եւ տարբեր ոճային դպրոցներով, կազմակերպեցին ասմունքի երեկոներ[32] եւ դասախօսութիւններ: Խմբագրական կազմին ամէնայանդուգն քայլը կարելի է նկատել անձնական միջոցներով 1979ին Փարիզ լրատուական գործուղման մեկնիլը[33]՝ առաջին Հայկական Համագումարին եւ ԻՔՈՄի միջազգային Բ. սեմինարին մասնակցելու համար[34]:

---

[30] Հեքիաթաշարքի ութը հեքիաթներն ալ վերամշակած-գրած է Վարուժան Գազանճեանը.- *Չախչախ թագաւորը* եւ *Փեփելն ու Կեկելը* (նկարազարդում՝ Մարի Արթինեան), *Կախարդական հողը* եւ *Գոգ մագոգ* (նկարազարդում՝ Թովմաս Զաքարեան), *Սուտ հեքիաթ* եւ *Իջայ իջայ իջայ* (նկարազարդում՝ Շանթ Աւետիսեան), *Հրաշալի Լուրասը* եւ *Սէրը* (նկարազարդում Ճոն Բաբազեան): Հեքիաթաշարքի ութը թիւերը հրատարակուեցան Մայիս 1980ին, իւրաքանչիւրը 300 օրինակ եւ անվճար բաժնուեցան Գալուստեան եւ Նուպարեան Ազգային վարժարաններու աշակերտութեան, տասը ազգայիններու մեկենասութեամբ:

[31] «Թատրոն» միջազգային եւ հայ թատրոնի մեծագոյն դէմքերն ու անոնց գործերը, պատրաստութիւն՝ Վարուժան Գազանճեանի, բեմադրութիւն՝ Վարուժան Ֆրընճեանի, 1 Հոկտեմբեր 1978: Ընդամէնը քսան մասնակիցներով ներկայացուած են թատերգական տեսարաններ յունական թատրոնէն (Սոփոկլէսի *Օփիփոս արքան*), հռոմէականէն (Սենեքայի *Արքայ*), միջնադարեան շրջանէն (անյայտ հեղինակի *Յիսուսի ծնունդը*), իտալական վերածնունդէն (*Քոմեդիա տէլ արթէ*ն), էլիզապէթեան շրջանէն (Շէյքսփիրի *Լիր արքա*ն), ըմբոստացումի թատրոնէն (Իփսէնի *Պուպրիկի փոունը*), ժամանակակից թատրոնէն (Սարոյեանի *Քարանձաւի բնակիչները*), անհեթեթի թատրոնէն (Իոնեսքոյի *Ղեկավարը*) եւ հայկականէն (Սունդուկեանի *Պէպօ*ն):

[32] 1՝ Աւետիք Իսահակեանի նուիրուած երեկոյ (1977), 2՝ Եղիշէ Չարենց – 80, մարդը, հայը, բանաստեղծը (Մարտ 1978), 3՝ Նարեկացիի *Մատեան ողբերգութեան*ը, (Նոյեմբեր 1978):

[33] Խմբագրական կազմէն գործուղման մեկնեցան Վ. Գազանճեան, Վ. Բրուտեան եւ Թ. Զաքարեան:

[34] Ա. Հայկական Համագումարին եւ ԻՔՈՄի Բ. սեմինարին մանրամասները տե՛ս՝ *Հոկտեմբեր*ի հետեւեալ համարներուն մէջ.- Օգոստոս-Հոկտեմբեր, 37-39:1979, էջ 14-25, Նոյեմբեր-Դեկտեմբեր, 40-41:1979, էջ 43-55 եւ Յունուար-Փետրուար, 42-

Իտես զանազան այս գործունէութիւններուն ընդգրկուելնուն, եւ հակառակ կուսակցական մամուլին կողմէ «այլասերածներ» անուանուելնուն[35], *Հոկտեմբեր*ի երիտասարդները իսկական օրինակ էին ողջ համայնքին առջեւ՝ ինքնագլուխ գործող, համերաշխութիւն յորդորող եւ հայակերտման գործնապէս սատարող շարժումի մը:

ՅԵՏԳՐՈՒԹԵԱՆ

Այսօր հնարաւո՞ր է արդեօք փորձը կրկնել:

Ո՛չ:

Ինչու՞:

Որովհետեւ խօսքը «բաժանորդ»ին հասցնելու համար նոր հաղորդակցութեանց հնարաւորութիւններն ու դիւրութիւնը բաց դռներ եղած են, որ անհատական նախաձեռնութեամբ շարժումներ ստեղծուին, միտքեր արտայայտուին, կոչեր բարձրաձայնուին: Այսօրուան հաղորդակցական կարելիութիւնները չափազանց արագ, տարածուն եւ անկաշկանդ են:

1970-80ականներուն՝ ուսուցիչի, վարիչի եւ դաստիարակի դերը այնքան անհրաժեշտ էր գիտելիք փոխանցելու գործընթացին մէջ, որ անհատին ֆիզիքական ներկայութիւնը պայման էր: Մինչ այսօր, կարելի է որեւէ նիւթ ու գիտելիք գտնել եւ յարաբերիլ արդի տեղեկատուական արհեստագիտութեամբ: Ասոր հետեւանքով ալ սահմանափակուած է աւանդական առաջնորդին դերը: Դիմատետրով[36] հաղորդակցիլը, ամէն տեսակի գրական մակարդակով լուր կամ կարծիք տարածելը հնարաւորութիւն մըն է որ քաջութիւն չի պահանջեր, քանի որ քօղարկուած կրնայ ըլլալ ան, իսկ հեղինակը՝ անյայտ: Արդարեւ, ներկայիս, կարծիք տարածողի մը շուրջ բոլորուիլը կրնայ սկիզբ առնել առցանց գրառումէ մը կամ լսատեսողական միջոցներով պատրաստուած կարճ հաղորդումէ մը: Այլեւս՝ հանրութեան ուշադրութիւնն ու միտքը գրաւելը աւելի հեշտ է եւ հնարաւոր: Այս ազդու եւ արագ հասանելիութեան շնորհիւ տպագրուած թերթը հետզհետէ կորսնցուց զանգուածներ տեղեկացնելու եւ շարժելու իր առաւելութիւնը: Եթէ *Հոկտեմբեր*ի երիտասարդական ազատ հարթակը խումբէ խմբագրութեան ուղղուեցաւ, այսօրուան ենթադրական ոլորտով հրապուրուած ըմբոստները դիմատետրէն պիտի ուղղակի անցնին ղեկավար դիրքերու՝ առանց ընկերութեան մէջ անհատապէս զգալի ներկայութիւն մը վայելելու:

43:1980, էջ 28-29, 44-48, 49-53: ԻՔՈՄը (I/COM, Istituo per le culture non dominanti, Institute/Communication for the Preservation of the Legacy of Threatened Cultures) 1977ին Հերման Վահրամեանի հիմնած կազմակերպութիւնն է Միլանի մէջ:

[35] Նոյնն էր պարագան Պէյրութի ամսագիրը խմբագրող հարթակին («Ո՞վ ենք մենք», *Երիտասարդ հայ*, 2:1970, էջ 2-3):

[36] Նաեւ համացանցի վրայ հասարակութեան հետ հաղորդակցութեան այլ կապերով:

Արդ՝ համացանցը, զանգուածներու հասնելու իր չստուգուած տեղեկութիւններու բնոյթով, հնարաւորութիւն ունի նաեւ Հայաստան, Հայրենիք, հող հասկացութիւնները ֆիզիքական իրենց յատկանիշերէն պարպելու, ուխտավայրի վերածելու զանոնք. ուր հողին հետ յարաբերութիւնը զբօսաշրջիկի կարգավիճակ է եւ մնայուն կեցութիւնը անհրաժեշտութիւն մը չէ: Նոյն անստոյգ տուեալներով եւ տրամաբանութեամբ, ազգութիւնդ՝ ցեղային պատմութիւն է, մշակոյթդ՝ տարածաշրջանի *ֆոլքլոր*: Համաշխարհային խաղաղութեան հասնելու երազը հետապնդողները, պիտի պաշտպան դառնան հայու "հոգին" գերադասող հատուածին: Հողը, լեզուն, պետականութիւնը պիտի զիջին յօգուտ յառաջադէմ, բարեկեցիկ եւ քաղաքակիրթ կեանքին: Հետեւաբար պաստառին առջեւ մագնիսացած հայուն կեանքը փոփոխութեան ենթարկել ուզողը, իր նախայարձակ եւ համոզիչ ծրագրով ու գործնական առաջարկներով, առաջնորդողի այդ դերով, ի վիճակի է կեդրոնացնել համայն հայութիւնը մէկ նպատակի եւ տարածքի վրայ եւ կամ ապակեդրոնացնել զայն ինքնիշխան սփիւռքեր ստեղծելով եւ բաւարարուելով համացանցի վրայ հայութիւն մը համախմբուած տեսնելով:

Կեդրոնացո՞մ թէ՞ ապակեդրոնացում: Ենթադրական իրականութեա՞ն, թէ՞ ազգային պետականութեան մէջ փնտռել 21րդ դարու հայը:

Ահա հին պայքարին նոր տարբերակը:

Արդեօք ժամանակակից երիտասարդներէն ո՞վ աւիւն ունի զարթնումի ղեկը ձեռք առնելու:



Դրուագներ՝ *Հոկտեմբերի* բեմական ներկայացումներէն






Հոկտեմբերի մանկական հեքիաթաշարքը





Եգիպտահայ *Հոկտեմբերի* զանազան համարները



INDEPENDENT YOUTH MAGAZINE FORUMS: *OCTOBER* OF CAIRO (1975-80) AND *YERIDASART HAY* OF BEIRUT (1969-1975)
(Summary)

Thomas Zakarian
thomas.zakarian@gmail.com

Both *October* and *Yeridasart Hay*, which came to life in Cairo and Beirut respectively, were youth movements against traditionalism.

They differed from club life by their independence, teamwork, and free expression. Their starting point was freedom of speech and undeterred activism.

Both movements acquired their *raison d'être* through the intolerance they showed towards the intellectual stalemate prevailing in the community by rebelling against partisan extremism and criticising the political, cultural, educational and social life of the community and the indifference of its leadership. These movements enabled a silent majority to have its podium, and community activity was generated, rendering possible independence from political circles.

October heralded the principles of unity and consensual collaboration from its first issue. These objectives, awareness and a community work ethic, had become the prevailing spirit within five years of the proclamation, when *October* ceased to exist.

الأدباء الأرمن المصريّون الّذين أبدعوا في اللّغة العربيّة (لمحة موجزة)

مهران ميناسيان
mihran.min@gmail.com

للأدباء الأرمن المصريّين الّذين أبدعوا في اللّغة العربيّة مكانة خاصّة في تاريخ الجالية الأرمنيّة في مصر وفي تاريخ العلاقات الأدبيّة العربيّة-الأرمنيّة، إذ تركوا بصمات واضحة على الثّقافة العربيّة وخدموا الأدب العربيّ خدمات جليلة. نجد فيهم اللّاهوتي وصاحب المؤلّفات الدّينيّة، الشّاعر والمترجم، المؤرّخ والباحث، رئيس التّحرير والصّحفيّ، وبمختصر الحديث نجدهم أبدعوا في جميع ميادين الأدب على اختلاف فنونه.

لو أخذنا بعين الاعتبار جميع الأدباء الأرمن الّذين أبدعوا في اللّغة العربيّة، وإذا ذكرنا أيضًا الأدباء الّذين لم يخلِّفوا آثارًا مهمّة، لوجدنا أنّ عدد هؤلاء الّذين عاشوا في الفترة الممتدّة من القرن العاشر الميلاديّ إلى يومنا هذا يزيد على خمسمائة أديب.

من الطّبيعيّ أنّ أعمال هؤلاء ليست كلّها بالقيمة الأدبيّة نفسها أو ليسوا كلّهم في المستوى نفسه من الإبداع، وبعضهم لا يرتقي إلى مستوى المراسل أو الصّحفيّ العاديّ، ولكن في المقابل هناك آخرون لعبوا دورًا كبيرًا في زمانهم، واستطاعوا تسجيل أسمائهم في تاريخ الأدب العربيّ، وألزموا الباحثين التّكلّم عنهم وعن أعمالهم حتّى بعد عقود وقرون من رحيلهم.

أضف إلى ذلك أنّ العديد من الدّراسات الّتي تناولت حياة هؤلاء وأعمالهم لم تتطرَّق إلى أصولهم القوميّة، إضافة إلى أنّ هناك شكًّا بين الباحثين حول الجذور القوميّة للبعض الآخر منهم، الأمر الّذي يجعل دراسة أعمالهم صعبة نوعًا ما، خاصّة وأنّ قسمًا كبيرًا من أعمال الأدباء القدامى ما زال مخطوطة وغير مفهرسة فهرسة علميّة، الأمر الّذي يحول دون قدرتنا على دراستها بشكل جيّد، إضافة إلى قلّة المخطوطات الّتي وصلتنا منهم أحيانًا، وصعوبة الوصول إلى بعضها وضياع قسم لا يستهان به، إلى جانب تناثر الكثير من أعمال الأدباء الجدد في مجموعات الصّحف والمجلّات القديمة دون جمعها في كتب تليق بمكانتهم الأدبيّة.

إنّ عدد الأدباء الأرمن الّذين أبدعوا بالعربيّة قليل جدًّا مقارنة بإخوانهم الأدباء من بقيّة الطّوائف المسيحيّة الشّرقيّة كالأقباط، والسّريان، والموارنة، والرّوم، وغيرهم، وذلك لأنّ لغة الكتابة والمخاطبة عند غالبيّة الأرمن القاطنين في البلدان العربيّة كانت وما زالت هي اللّغة الأرمنيّة الّتي أبدعوا بها وما زالوا يُبدعون، إضافةً إلى أنّ عدد الأرمن القاطنين في البلدان العربيّة قليل جدًّا مقارنة بتلك الطّوائف، إذ إنّ الأرمن هم ليسوا السّكّان الأصليّين للبلدان العربيّة، بل التجأوا إليها غالبًا نتيجة الإبادة الّتي تعرَّضوا لها في الدّولة العثمانيّة، أو هربًا من بطش الغزاة - وما أكثرهم - أو استوطنوها طلبًا للرّزق والتّجارة، إذ إنّ وطنهم الأصليّ هو أرمينية التّاريخيّة


بشطريْها الشّرقيّ والغربيّ، وبعد استيطانهم هذه البلاد، ومع مرور السّنين، فقدَ قسم منهم لغته الأمّ وجعل العربيّة لغة المخاطبة والكتابة فأبدع بها.

في العصور الغابرة، الكثيرون من الّذين جعلوا العربيّة لغتهم حافظوا على صلتهم بالكنيسة الأرمنيّة الأرثوذكسيّة أو الكاثوليكيّة ولم يبتعدوا عنها، حتّى إنّ اللّغة العربيّة أضحت اللّغة شبه الرّسميّة للكنيسة الأرمنيّة الكاثوليكيّة في فترة طويلة من الزّمن.

موضوع بحثنا الآن هم الأدباء الأرمن المصريّون الّذين أبدعوا بالعربيّة، ومن البديهيّ أنّه من الصّعب التّكلّم، ولو باختصار، عن سيرة العشرات منهم، وأن نقدِّم التّحليل الأدبيّ الشّامل لأعمالهم في صفحات قليلة، لذا سنكتفي بسرد سريع وسنقف عند بعضهم فقط دون سواهم، ونحن واثقون بأنّ هناك كمًّا كبيرًا من الأعمال الّتي تستحقّ الدّراسة والتّحليل هي أيضًا، لكن ضيق المكان يجبرنا على الاختصار.

لنبدأ من الشّاعر والوزير الفاطمي **الأفضل أبو القاسم شاهنشاه بن بدر الدّين الجمالي** (1066-1121). هو من كبار رجال السّياسة في الدّولة الفاطميّة، حكم مصر حكما مطلقًا مدّة ربع قرن بعد أن خلف والده الّذي كان قد حكم مصر بدوره مدّة عشرين عامًا. كان الأفضل معاصرًا للحملات الصّليبيّة، فحاربهم بإرساله عدّة حملات ضدّهم إلى بيت المقدس وانتزع منهم عدّة مدن في بلاد الشّامّ وقام بإصلاحات عديدة في مصر. إلى جانب كلّ هذا كان شاعرًا وله شعر حسن ومدحه العديد من شعراء عصره.

أبو الغارات طلائع بن رُزِّيْك بن الصّالح الأرمني، الملقّب بالملك الصّالح (1102-1161)، كان واليًا على قوص وأسوان في صعيد مصر، ولما قُتل الخليفة الظّافر، كتب إليه خدّام قصره كي يحضر إلى القاهرة، فذهب إليها واستلم الوزارة، وكان كريمًا أعدل، ولكثرة محاربته الفرنج لُقِّب بـ"أبو الغارات" إذ أرسل عدّة حملات إلى فلسطين لمحاربتهم. وكان شاعرًا وأديبًا له شعر حسن وأكثر في مدح أهل البيت ورثو قادتهم، وكان يرسل قصائده من مصر إلى الشّام يفتخر بها بقيامه بنصرة الإسلام، وله قصائد عديدة يصف فيها حروب جيوشه ضدّ الفرنجة ويحثُّ الشّوام وخاصّة نور الدّين زنكي إلى مواصلة محاربتهم. إلى جانب قصائده العديدة، أَلّف كتابًا سمَّاه **"الاعتماد في الرّدّ على أهل البدع"** ويُروى أيضًا **"الاعتماد في الرّدّ على أهل العناد"**، وكذلك قصيدة بعنوان "الجوهرة في الرّدّ على القدريّة". لقد قام كلّ من الباحثين أحمد بدوي ومحمَّد هادي الأميني بجمع قصائده



ونشرها في كتابيْن مستقلّيْن في القاهرة والنّجف.[1] قال عنه ابن خلّكان:
...كان فاضلاً، سمحًا في العطاء، سهلًا في اللّقاء، محبًّا لأهل الفضائل، جيّد الشّعر...[2].

ومن شعره في الافتخار نقرأ:
أبى الله إلّا أن يدوم لنا الدّهر * ويخدمنا في ملكنا العزّ والنّصر
علمنا بأنّ المال تفنى ألوفه * ويبقى لنا من بعده الأجر والذّكر
خلطنا النّدى بالباس حتّى كأنّنا * سحاب لديه البرق والرّعد والقطر
قرانا إذا رحنا إلى الحرب مرّة * قرانا ومن أضيافنا الذّئب والنّسر
كما أنّنا في السّلم نبذل جودنا * ويرتع في أنعامنا العبد والحرّ


تاريخ الشيخ أبي صالح الأرمني فيه بذكر أخبار من نواحي مصر

الشّيخ أبو الصّلح الأرمني مؤرّخ مشهور، ترك كتابًا مهمًّا وصف فيه كنائس مصر وأديرتها ووضع المسيحيّين في زمانه، أي في نهاية القرن الثّاني عشر وبداية الثّالث عشر، وكتابه مصدر لا يُستغنى عنه لكلّ من يكتب في هذه المواضيع، وهو معروف لدى الباحثين على نطاق واسع. جاء عنوان الكتاب في نسخته المخطوطة الوحيدة هكذا: *تاريخ الشّيخ أبي صلح الأرمني فيه يذكر أخبار من نواحي مصر*، نشره المستشرق إفيتس (B. T. A. Evetts) مع ترجمته الإنكليزيّة وبحواش من وضع المستشرق ألفرد بتلر(Alfred J. Butler) وطبع في أكسفورد في العام 1895.[3]

يعتقد بعض الباحثين بأنّ المؤلّف الحقيقيّ لهذا الكتاب هو أبو المكارم بن جرجس مسعود، لكنّه نُسب خطأً إلى الشّيخ أبو صالح الأرمني الّذي لم يكن سوى مالك المخطوط أو ناسخه، حتّى أنّ الأنبا صموئيل السّرياني، أسقف شبين القناطر وتوابعها، أعاد طبع الكتاب في العام 1984 بعنوان *تاريخ الكنائس والأديرة في القرن الثّاني عشر الميلاديّ لأبي المكارم الّذي نُسب خطأً إلى أبي صالح الأرمني*،[4] لكن البراهين المقدّمة منه أو من غيره من الباحثين في هذا الموضوع غير مقنعة وغير كافية بأن نجزم في الأمر بهذا الشّكل.


---

[1] *ديوان طلائع بن رُزّيك*، نشره أحمد بدوي، القاهرة، 1958، 116 صفحة؛ *ديوان طلائع بن رُزّيك الملك الصّالح*، نشره محمد هادي الأميني، النّجف، مطبعة النّعمان، ١٩٦٤، 191 صفحة.

[2] ابن خلّكان، *وفيات الأعيان وأنباء أبناء الزّمان*، حقّقه د. إحسان عبّاس، المجلد الثّاني، بيروت، دار صادر، 1969، صفحة 526.

[3] عنوان الكتاب هو: *Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries*، أوكسفورد، 1895، 25 و142 و382 صفحة.

[4] القاهرة، 154 صفحة.



الرّاهب القديس بطرس السَّدمنتي الأرمني صاحب المؤلّفات اللّاهوتيّة والعقائديّة العديدة هو أيضًا معروف على نطاق واسع بين الباحثين الشّرقيّين والغربيّين على حدّ سواء، وهو من أدباء النّصف الثّاني من القرن الثّالث عشر ومن أوائل المؤلِّفين من أصل أرمنيّ الّذين أبدعوا بالعربيّة. ذكره ابن العسّال في جملة الّذين روى عنهم وسمَّاه "القسّ الأجلّ العالم الرّاهب بطرس الأرمني"، وسمِّي بالسّدمنتي لأنَّه كان من رهبان دير مار جرجس في السّدمنت الجبل (الفيوم) في مصر. لقد خدم السّدمنتي الكنيسة القبطيّة بكتاباته العديدة حتّى إنّ الأخيرة رفعته إلى مقام قدّيسيها، وله مؤلّفات كثيرة من كتب ومقالات وسير قدّيسين، وحظيت العديد منها بالنّشر وبعضها تُرجم إلى الفرنسيّة أيضًا، وثمّة كمّ كبير من نتاجه لم ينشر بعد. نذكر من أعماله كتاب *القول الصّحيح في آلام السّيّد المسيح* وهو كتاب ضخم،[5] و*مقالة في الاعتقاد* (ويُروى *مقالة في العقيدة*)[6] و*أرجوزة في الاعتقاد* و*كتاب الإشراق* و*حلّ الشّكوك* وكتاب *مقالة في تهذيب النّفس في العمليّات*[7] و*مطلع النّجاة في المناجاة*[8] الّذي يشمل مجموعة من الصّلوات وسير بعض القدّيسين وكتاب *المقدّمة في التّفسير*[9] وغير ذلك. للاستزادة عنه انظر كتاب العلّامة الأب غراف ومقالة الأب سمير خليل اليسوعي.[10]

وبعد انقطاع دام عدّة قرون، عاد الأدباء الأرمن إلى ساحة الأدب في مصر من جديد في النّصف الأوّل من القرن التّاسع عشر.

---

[5] طبعه يوحنا المقارى وشنوده عبد المسيح، القاهرة، 1926.

[6] طبعت في القاهرة في العام 1895 بعنوان *مقالة في اعتقاد الكنيسة القبطية الأرثوذكسيّة*، وهي في 18 صفحة.

[7] طبعت تباعًا في مجلة *صهيون*، القاهرة، المجلّد 32، 1932، بعنوان "مقالة في العمليّات"، وهو في 34 صفحة.

[8] القاهرة، 1890، 124 صفحة.

[9] بطرس السّدمنتي، *المقدّمة في التّفسير*، حقّقها وقدّم لها وترجمها إلى الفرنسيّة الدّكتور بُطرس فن دن أكّر، بيروت، دار المشرق، 1972، ص. 56 و 154.

[10] George Graf, *Geschichte der Christlicher Arabischen Literatur*, 2 band, 1947, pp. 351-56.

ومقالة الأب سمير خليل اليسوعي في مجلّة *صديق الكاهن*، القاهرة، السنة 19، العددان 1-2، كانون الثّاني-نيسان 1979، ص. 44-58.



أرتين جراكيان (1800-1859) ترجم كتاب *الأمير* لماكيافلّي عن الفرنسيّة إلى العربيّة بطلب من محمَّد علي باشا الكبير، وطبع الكتاب في حينه في مطبعة البولاق في القاهرة.

أريسداكيس ألتون دورِّي (1804-1868) له دور بارز في إصدار جريدة *الوقائع المصريّة* الّتي كانت الجريدة الرّسميّة لمصر، وكانت تصدر في القاهرة، وكذلك رئِس تحرير جريدة مصر الّتي طبعت في



القاهرة، وهو من مواليد القسطنطينيّة، وقد درس في إزمير وباريس ثمّ استقرّ في القاهرة وعمل سكرتيرًا عند محمَّد علي باشا ومستشارًا عند بوغوص بك يوسفيان وزير خارجيّة مصر، وكانت كنية عائلته هي "ألتون"، أي الذّهب بالتّركيّة، ويقال إنّه في يوم من الأيّام حرَّر رسالة مهمّة كانت ستُرسل إلى لويس فيليب ملك فرنسا بأسلوب جميل جدًّا، وعلى أثرها قَبّل محمَّد علي باشا عزيز مصر جبينه وقال له: "أنت لست ذهبًا بل أنت درَّة"، ومنذ ذلك الحين تغيَّرت كنية العائلة وأصبحت ألتون درِّي أي "درّة الذّهب".

وكذلك ترجم **المحامي خجادور بك مكائيل (ميكائيليان**، 1818-1876)، الّذي كان قد تبوَّأ عدّة مناصب عليا في مصر، ترجم كتاب *القانون المدني* وطبعه كذلك في البولاق في العام 1873.

رزق الله بن نعمة الله بن يوسف حسُّون الحلبي (1823-1880)، شاعر ومحرِّر وصحفيّ وناسخ للمخطوطات ورجل سياسة معروف. ولد في حلب، وعاش حياته مغامرًا شريدًا متنقِّلًا بين حلب والقسطنطينيّة والقاهرة وباريس ولندن. له العديد من دواوين الشّعر والكتب الأخرى المطبوعة والمخطوطة إلى جانب الجرائد العديدة الّتي أصدرها، ويكفيه فخرًا أن يكون أوّل من أصدر صحيفة بمفرده باللّغة العربيَّة، وكذلك

أوّل من ترجم عن الرّوسيّة، وأوّل من كتب للأطفال باللّغة العربيّة، وهو عاش فترة في القاهرة وأبدع فيها.[11]

يوحنا ورتبات (1827-1908) الطّبيب والأديب العالم واللّاهوتيّ والمترجم واللّغويّ المعروف على نطاق واسع، مدرّس التّشريح والفسيولوجيا في المدرسة السّوريّة الكلّيّة في بيروت، من كتبه العديدة نذكر: *التّوضيح في أصول التّشريح*،[12] *وأصول الفيسيولوجيا*[13] *وكفاية العوام في حفظ الصّحّة وتدبير الأسقام*،[14] وله كذلك عدّة كتب لاهوتيّة ومعاجم وترجمات عن الإنكليزيّة، كمختارات شكسبير وغيره. وبالرّغم من أنّ يوحنا ورتبات عاش معظم سنوات عمره في بيروت، إلّا إنّه شارك في الحياة الثقافيّة المصريّة ولو من بعيد، فقد كان من أنشط من كتب في مجلّة *المقتطف* الّتي كانت تصدر في القاهرة. لقد أحصينا له عشرات المقالات العلميّة والتّاريخيّة هناك وبعض التّرجمات عن الإنكليزيّة، وبعد زيارة قام بها إلى القطر المصريّ في العام 1888 كتب وصفًا لرحلته بعنوان "هياكل ثيبة ومدافنها" ونشرها كذلك في *المقتطف*.[15]

أديب إسحاق (1856-1885) أديب غنيّ عن التّعريف، إذ ملأت أخباره الكتب وهو من كبار أدباء عصره ومن روّاد النّهضة العربيّة في القرن التّاسع عشر. هو شاعر وصحافيّ ومترجم، ولد في دمشق لكنّه عاش متنقّلًا بين باريس وبيروت والقاهرة والاسكندريّة، حيث أصدر فيها مع سليم نقّاش جريدة *التّجارة* في العام 1878 وجريدة مصر مع أخيه عوني في العام 1881، وأصدر كذلك *مصر القاهرة* في باريس. يقول مؤرّخ الصّحافة العربيّة الفيكونت فيليب دي طرّازي عنها إنّها ظهرت أوّلًا بشكل مجلّة في العام 1879 ثم حوّلها إسحاق إلى جريدة، وكان "يكتبها بخطّ يده ثمّ يطبعها على الحجر ويرسلها إلى المشتركين ضمن غلاف مختوم في البريد حذرًا من وقوعها بيد حكّام الأتراك الّذين كانوا يصادرونها لأنّها كانت تطعن في أعمالهم وتفضح مظالمهم".[16]

كتب إسحاق مئات المقالات الاجتماعيّة والسّياسيّة والأخلاقيّة والعديد من القصائد، وقام بترجمات عن الفرنسيّة ونشر عشرات الكتب الموضوعة والمترجمة، وله بعض الكتب الّتي لم يذكر عليها اسمه، وعُرف بمقالاته الجريئة حيث دعا إلى الحرّيّة والمساواة الاجتماعيّة، وهو القائل:

قَتْلُ أمرئٍ في غابة جريمة لا تغتفر وقتل شعب آمن مسألة فيها نظر

---

[11] للاستزادة عنه انظر دراستنا "الأدباء الأرمن الحلبيّون الّذين أبدعوا باللّغة العربيّة"، حولية *كيغارت*، حلب، 2002، ص. 361-363.

[12] بيروت، 1871، 742 صفحة.

[13] بيروت، 1877، 563 صفحة.


[14] بيروت، 1881، 281 صفحة.

[15] السنة 12، الجزء 9، 1 حزيران 1888، صفحة 543-551.

[16] فيليب دي طرّازي، *تاريخ الصّحافة العربيّة*، بيروت، الجزء الرّابع، بدون تاريخ، صفحة 398.

مات إسحاق شابًّا بمرض السّلّ دون أن يبلغ الثّلاثين من عمره في قرية الحدث في لبنان، ورثاه كبار أدباء عصره كإبراهيم اليازجي، وإبراهيم الحوراني، وجرجي زيدان، وجمال الدّين الأفغاني، والمستشرق الرّوسي كراتشكوفسكي وغيرهم الكثير.[17] لقد قام أخوه عوني بجمع آثاره المخطوطة والمطبوعة وطبعها في كتاب ضخم بعنوان *الدّرر*.[18]

عوني إسحاق (1860-1935) هو أخ الكاتب أديب إسحاق، ساعد أخاه في إصدار جريدة مصر في الاسكندريّة وترجم كتابًا عن قانون المحاكم الجزائيّة العثمانيّة مع شرحه، وكان يكتب في جريدة *ثمرات الفنون* البيروتيّة.
قام **ألكسان صرَّافيان** بطبع جريدة *الزّمان* في القاهرة لمدّة خمسة أعوام ابتداءً من العام 1882، وكانت جريدة وطنيّة تحثّ الشّعب على الإصلاح، واشتهرت بمقالاتها المفيدة الّتي كانت تتكلّم على الأغلب عن شؤون مصر وهمومها وتجارتها وزراعتها، لكنّ الحكومة أوقفتها لمخالفتها أوامرها، فانتقل صاحبها إلى نيقوسيا-قبرص حيث أصدر فيها في العام 1889 جريدة *ديك الشّرق* الّتي لم تعمّر طويلًا.[19]


تاريخ الخلفاء
ترجم من اللغة الفرنسوية
بقلم المؤلف نخله بك صالح شغوات
رئيس قلم ادارة عموم المدن والمباني
في نظارة الاشغال العمومية سابقًا
طبع على نفقة
امين هندية
الطبعة الأولى
(ثمن النسخة ثمانية غروش صاغ)
مطبعة هندية بالموسكي بمصر
سنة ١٩١٣ م سنة ١٣٣١ هـ


1956ին, Գահիրէի ռատիօկայանի Իզա'աթ Ալ-Քահիրա կայանի «Կարրապ հազզաք» (Փորձէ բախտդ) ծանօթ հաղորդաշարին հիւրը կ'ըլլայ 13ամեայ Ֆայրուզ, ուր բացայայտօրէն կը ներկայացուի իր ազգութիւնը իբրեւ հայ: Նոյնիսկ կ'երգէ հայերէն երգ մը՝ *Անուշ եարի* առաջին տունը: Տեղական հիմնահոսանքային միջավայրին մէջ ազգութեան հանրային նման ուղղակի եւ աներկբայ հռչակումներ՝ յետագայ դերասանները պիտի դժուարանային արտասանել փոքրամասնային եւ մեծամասնային ազգային բարդ յարաբերութիւններու բնաբանին տակ. ուրիշ հարց, թէ անոնց ազգային պատկանելութիւնը բացայայտ եղած է բոլորին[5]:

Նելլի

Նելլի, բուն անունով՝ Նելլի Յարութիւն Գալֆայեան (ծն. 1947, Գահիրէ)[6], կրտսեր քոյրն է Ֆայրուզի: Վեց տարեկանին Ֆայրուզի հետ կը մասնակցի *Ալհերման* (Զրկանքը) (1953) ֆիլմին, իր հօր հիմնած Fayrouz Films ընկերութեան արտադրութեամբ: Ֆիլմին սկիզբը ան հանդէս կու գայ երգ-պար-խաղարկութիւն եռակի դերակատարութեամբ:

Եօթը այլ ֆիլմերէ ետք, 1966ին կը ստանձնէ իր առաջին բացարձակ հերոսուհիի դերը *Ալմուրահեքա ալսաղիրա* (Փոքրիկ դեռահաս աղջիկը) ֆիլմին մէջ, Մահմուտ Զուլ-Ֆաքքարի բեմադրութեամբ:

Մինչեւ իր վերջին պատկերահանումը *Քասաքիս ուարաք* (Թուղթէ պատառիկներ) *սերիալ*ին մէջ 2005ին, մասնակցած է աւելի քան 120 ֆիլմերու, *սերիալ*ներու եւ թատրերգութիւններու:

Համաձայն 1996ին քննադատներուն կողմէ կատարուած քուէարկութեան, 1968ին արտադրուած *Ալրակոլ ալլազի ֆաքատա զելլահու* (Մարդը՝ որ կորսնցուցած է իր շուքը) ֆիլմը՝ ուր կարեւոր դերակատարութիւն ունի Նելլի, դասուած է մինչեւ 1996ը արտադրուած եգիպտական 100 լաւագոյն ֆիլմերուն շարքին:

Նելլի անկրկնելի դրոշմ կը թողու Ռամատան ամսու *ֆաուազիր*ներուն (հանելուկ) մէջ, որոնք կը ցուցադրուէին ամբողջ ամսուան ընթացքին: 1975-2001ին խաղ-երգ-պարով հանդէս եկած է 13 *ֆաուազիր*ներու մէջ՝

---

[5] Արծուի Բախչինեան, *Հայերը համաշխարհային կինոյում*, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի հրատ., Երեւան, 2004, էջ 550-2. նաեւ՝ Հ. Ա., *Եգիպտական սինեմայի հրաշք-մանուկը՝ Ֆայրուզ, Ջահակիր, Յաւելուած*, 2021:

[6] Դարձեալ Նելլիի համար տարածուած է ծննդեան 3 Յունուար 1949 թուականը: Ըստ Գահիրէի առաջնորդարանի ծննդեան տոմարներուն, բուն թուականն է՝ 4 Յուլիս 1947: *Ալհերման* (1953) ֆիլմին դիտարկութիւնը եւս կրնայ յայտնել, որ այնտեղ պարող ու խաղացող աղջնակը չի կրնար 4 ու կէս տարեկան ըլլալ:

իւրաքանչիւրը 30-31 օր տեւողութեամբ, իբրեւ բացարձակ հերոսուհի: Կարելի է ըսել՝ անոնք կը դառնան դերասանուհիին սահմանանիշը:

Ժայթքող անհատականութիւն մը չէ Նելլի, ֆեմինիզմ մը՝ որ երբեմն կրնայ տանիլ գերկանացիութեան. ան շարժունակ դերասանուհի մըն է՝ թէ՛ մարմնային եւ թէ՛ բովանդակային առումով, գիտէ ստեղծել տպաւորիչ տրամադրութիւններ, յարափոխուիլ մէկ ֆիլմէն միւսը՝ այլեւ միեւնոյն ֆիլմին մէջ, յատկանիշեր՝ որոնք զինք կարող դարձուցին անշէջ մնալ աւելի քան կէս դար տեւած բեմական ճանապարհին[7]:

Մերվաթ

Մերվաթ, բուն անունով՝ Սիրվարդ Յարութիւն Գալֆայեան (1942, Գահիրէ--2009, Գահիրէ), միջնեկ քոյրն է Ֆայրուզի եւ Նելլիի:

Կը մասնակցի ընդամէնը երեք ֆիլմերու: Առաջինը կը խաղայ 11 տարեկանին՝ վերոյիշեալ *Ալհերման* (Զրկանքը) (1953) ֆիլմին մէջ, Ֆայրուզի եւ Նելլիի հետ, իր հօրը արտադրութեամբ: Իր անունը չկայ անուանաթերթին վրայ: Ֆայրուզի դասընկերուհիի փոքր դերը անկարեւոր նկատուած է յիշատակուելու, թէեւ իր զուգապարը Ֆայրուզի հետ կը յայտնաբերէ տպաւորիչ ճկունութիւն եւ դերասանական կարողութիւն:

Երկրորդը՝ *'Ասաֆիր ալկաննա* (Դրախտի թռչունները) (1954), դարձեալ երկու քոյրերուն հետ եւ հօրը արտադրութեամբ, բայց շատ աւելի ընդարձակ մասնակցութեամբ:

Երրորդը՝ *Պենթ 17* (17 տարեկան աղջիկը) (1958), Վիքթոր Անթուանի արտադրութեամբ, կ'ըլլայ իր վերջին ֆիլմը՝ ուր կը մասնակցի խաղարկային կարճ դերով:

Ապա կ'ամուսնանայ, կ'ընդունի իսլամութիւնը եւ բոլորովին կը հեռանայ արուեստի տեսադաշտէն[8]:

Լեպլեպա

Լեպլեպա, բուն անունով՝ Նունիա-Նինոշքա Մանուկ Քիւփէլեան (ծն. 1942, Գահիրէ)[9], հօրաքրոջ աղջիկն է Ֆայրուզ-Նելլի-Մերվաթի:

1951ին՝ ինն տարեկանին, իր առաջին ֆիլմը՝ *Հապեպթի Սուսու* (Սուսու սիրուհիս), կը ցուցադրուի Ֆայրուզի առաջին ֆիլմէն ընդամէնը մէկ տարի ետք, բայց, ի տարբերութիւն զարմուհիին, Լեպլեպայի ստանձնած երե-

---

[7] Բախչինեան, էջ 552-3. նաեւ՝ 'Ամր Տաուարա, «Նելլի. մալեքաթ ալ-էսթը'րատ» (Նելլի՝ շօուի թագուհին), *Մասրահունա շաբաթաթերթ*, Գահիրէ, 5 Օգոստոս 2019, էջ 29-31:

[8] Բախչինեան, էջ 552. նաեւ՝ Հ. Ա., «Եգիպտական սինեմայի եւ թատրոնի նուազ ծանօթ հայ դերասանուհիներ», *Ջահակիր*, 27 Դեկտեմբեր 2018 եւ՝ 10 Յունուար 2019:

[9] Այս թուականը եւս ստուգուած է Գահիրէի ազգային առաջնորդարանի ծննդեան տոմարներէն:

խայի դերը - հրաշալիօրէն խաղարկուած - կեդրոնական տիպարը չէր ներկայացներ: Դարձեալ, ի տարբերութիւն Ֆայրուզին՝ որ երբեք չյաջողեցաւ դուրս գալ հրաշք-երեխայի պատկերէն եւ անկարող եղաւ շարունակել դերասանական ուղին, Լեպլեպա, երեխայական վեց յաջող ֆիլմերէ ետք, կրցաւ զարգացնել դերասանական ներաշխարհը, մինչեւ այսօր ստանձնելով աւելի քան 80 ֆիլմերու, 4 *սերիալ*ներու եւ քանի մը թատերգութիւններու գլխաւոր դերերը:

Լեպլեպայի անհատականութիւնը ժայթքուն է, բաւական տարբեր Նելլիէն: Թէեւ այդ ժայթքունութիւնը հազուադէպ կրնայ հասնիլ գռեհկութեան, բայց անոր շնորհիւ բազմաշերտած է իր տիպարները, նոյն համարձակութեամբ կերպաւորելով ազնուականն ու ժողովրդականը, ժողովրդականին բարեկիրթն ու անտաշը:

Կը սիրէ երեւիլ հանրային վայրեր՝ փառատօներ, հրապարակային ընդունելութիւններ, այլեւ իբրեւ հանդիսավար ելոյթ ունենալ կարեւոր փառատօներու, արտաքին պատկերի կազմութիւնը դարձնելով իր հետապնդումներէն մէկը: Իբրեւ յանձնախումբի անդամ մասնակցած է Փարիզի, Վենետիկի, Տուպայի եւ այլ միջազգային փառատօներու: Արժանացած է միջազգային ու տեղական բազմաթիւ մրցանակներու[10]:

1995-96ին եգիպտահայ դպրոցները կը գտնուէին լուրջ վտանգի առջեւ՝ ի դէմս կառավարական նախաձեռնութեան մը: Օգնութիւնը կու գայ Լեպլեպայէն: Ան ընդունելով օգտագործել նախարարներու հետ ունեցած իր բարձր յարաբերութիւնները, կը յաջողի կարճ ժամանակի ընթացքին հարցը լուծել անխոռով կերպով: Այստեղ Լեպլեպայի եւ եգիպտահայ գաղութի յարաբերութիւնը կը յայտնուի ուժային-իշխանական դիրքերէ եւ կ'ամրագրուի «բարձր» դասակարգային նոյնացումը:

Ասիկա դերասանուհիին կենսագրութեան այն շրջանն էր՝ երբ երկու ու կէս տարի ընդմիջումէ ետք, 1995ին կը վերադառնար *Լայլա սախենա* (Կրքոտ գիշեր) ֆիլմով, որ կ'արձանագրէր հսկայական յաջողութիւն: Բեմագիրը առիթ կու տար Լեպլեպային բացայայտելու խաղարկային խորութիւն մը եւ յոյզերու թափանցիկութիւն մը, որ երբեմն կը պակսէր նախորդ ֆիլմերուն մէջ: Ֆիլմը Լեպլեպային դարձուց Եգիպտոսի մշակութային շրջանակներու ամէնօրեայ հետաքրքրութեան կեդրոնը:

Լայլա սախենա ֆիլմին համար Լեպլեպայի զգեստները՝ *իր* իսկ որոշումով, կը ձեւաւորէ եւ կը պատրաստէ հայուհի մը. երեւոյթ մը, որ բնականաբար հեռու պիտի մնար լուսարձակումներէ: Այս անձնական ընտրութիւնը Լեպլեպա-եգիպտահայութիւն յարաբերութիւնը կը դնէ իշխանականութենէն հեռու հարթութեան վրայ, միաժամանակ ցոյց տալով ազգային

[10] Բախչինեան, էջ 553-4. նաեւ՝ 'Ամր Տաուարա, «Լեպլեպա. ալշաքէյա» (Լեպլեպա՝ չարաճճին), *Մասրահունա*, 20 Մայիս 2019, էջ 29-31:

տեսանկիւնէ ինքնութիւններուն շերտաւոր այլազանութիւնը եւ զանոնք սահմանելու անկարելիութիւնը:

Միմի Կամալ

1952ին՝ 12 տարեկանին, Միմի Կամալ (ծն. 1941, Գահիրէ) կը խաղայ *Աքուա մըն ալհոպպ* (Աւելի ուժեղ քան սէրը) ֆիլմը, որմէ ետք կը մասնակցի 500ի մօտեցող ֆիլմերու, հեռատեսիլի եւ ձայնասփիւռի *սերիալ*ներու եւ թատրերգութիւններու, վերջինը՝ 2019ին, *Տաղթ 'ալի* (Բարձր ճնշում) ֆիլմը:

Եգիպտահայութեան մէջ տարածուած է այն համոզումը՝ որ հայրը հայ է, եւ իր բուն անունն է՝ Մարի Նազար Կիւլեան: Այս կարծիքին վրայ է որ հայերուն յատկացուած եգիպտական պատմագրութեան մէջ կը հաստատագրուի Կամալի հայութիւնը, ինչպէս՝ Այման Զոհրի[11], Ինաս Մազհար[12], Հանի Մուսթաֆա[13] եւ ուրիշներ, առանց որեւէ անհրաժեշտութիւն զգալու իրենց կողմէ բացայայտող վաւերագրութիւն մը ներդնելու:

Եւ ահաւասիկ, 2014 Նոյեմբեր 11ին, *Սահէպ ալսա'ատա* հեռատեսիլի յայտնի հաղորդաշարի յոյներուն նուիրուած թիւին մէջ, Էս'ատ Եունէս կը հրաւիրէ Միմի Կամալը՝ իբրեւ յոյն փոքրամասնութեան ներկայացուցիչ: Հաղորդումին ընթացքին դերասանուհին կը ներկայացնէ իր ընտանիքը, մօրենական մեծմայրը Թրիանտաֆիլիա՝ Յունաստանի կղզիներէն, մօրենական մեծհայրը Նիքոլա՝ Կիպրոսէն, անոնց դուստրը եւ ի՛ր մայրը՝ Սթելլա Ֆոթինի Նիքոլա Տիամանտիս: Նոյնիսկ կ'աւելցնէ՝ թէ իր բնաւորութիւնը ժառանգած է մօրմէն եւ մեծմօրմէն, որոնցմէ սորված է յունարէն լեզուն: Ոչ մէկ բառ հօր մասին: Յստակ է, որ ընտանեկան պատճառ մը ունի այդպէս վարուելու: Հօր դիտաւորեալ անտեսումը ինքնին կրնայ խօսիլ հայ ըլլալու վարկածին ի նպաստ:

Բայց հա՞յ է արդեօք անձ մը՝ որ իր ինքնութիւնը կը նոյնացնէ ոչ-հայու հետ: Ի՞նչ է ազգայինը. էթնիքականութի՞ւն, մշակո՞յթ, պետականութի՞ւն, քաղաքացիութի՞ւն: Էթնիքական առումով, Միմի Կամալ պէտք է ըլլայ հայ եւ յոյն միաժամանակ: Պետական առումով՝ եգիպտացի: Ամէնաճկունն է մշակութայինը՝ ուր դրուած է ընտրութիւն: Կամալ մշակութապէս չ'ուզեր ըլլալ հայ: Կրնայ կատարուիլ հակառակը. էթնիքապէս ոչ-հայը ինքզինք նոյնացնէ հայութեան հետ եւ դառնայ հայ: Միայն մշակութայինը կրնայ տալ այս կարելիութիւնը: Թէեւ կարելի չէ մշակութային-ազգայինը անջա-

[11] Ayman Zohry, "Armenians in Egypt," *Tours, France*, 18-23 July 2005, International Union for the Scientific Study of Population: XXV IUSSP International Population Conference:

[12] Inas Mazhar, "A Century on: The Armenian General Benevolent Union Celebrates its Centenary this Week," *Al-Ahram Weekly*, 13-19 April 2006, թիւ 790:

[13] Hani Mustafa, "Armenians on the Silver Screen," *Al-Ahram Weekly*, 23-29 April 2015, թիւ 1243:

տել միւսներէն: Եթէ կարելի ըլլար ազգայինի տարաբաժանումները դիտել լիովին անջատ հասկացութիւններով՝ ընդունելով մէկը եւ հերքելով միւսը, ստորագրեալս ինչու՞ պիտի ուզէր Միմի Կամալը անպայման ընդգրկել ներկայ յօդուածի խորագիրին տակ:

Քութ Ալ-Քուլուպ

Քութ Ալ-Քուլուպ, բուն անունով՝ Մատլէն Մաքսուտեան (ծն. 1934, Պէյրութ), լիբանանցի երգչուհի եւ դերասանուհի մըն է:

Խաղացած է երկու լիբանանեան-իրաքեան ֆիլմերու մէջ՝ *Ղարիպա 'ալալշաթէ'* (Օտար՝ ծովեզերքին վրայ) եւ *Եա լայլ* (Ով գիշեր), երկուքն ալ Կարի Կարապետեանի բեմադրութեամբ:

Արաբական ֆիլմաշխարհի մէջ իր հռչակը, սակայն, մարմնաւորուեցաւ չորս եգիպտական ֆիլմերու մէջ՝ *Պայն քալպայն* (Երկու սիրտերու միջեւ) (1953), *Ապուլ փահապ* (1954), *Տահքաթ ալքափար* (Ճակատագիրի հեգնանքները) (1955) եւ *Եա սալամ 'ալհոպպ* (Հրաշալի է սէրը) (1963), որոնցմէ երրորդին մէջ ստանձնած է գլխաւոր հերոսուհիի դերը:

Անծանօթ անուն մը հայկական շրջանակներու մէջ, ան ատակութեամբ արտայայտած է բարձր դասակարգի ներկայացուցիչի տիպարը (*Պայն քալպայն*), զոհուած անձի մը մելամաղձոտութիւնը (*Ապուլ փահապ*), ընտանեկան դաւաճանութիւնը (*Տահքաթ ալքափար*) եւ երգ-պարի խումբի անդամի մը դիւրաշարժ սահունութիւնը (*Եա սալամ 'ալհոպպ*)[14]:

Իման

Իման, բուն անունով՝ Լիզ Սարգիսեան (ծն. 1945, Պէյրութ), բնիկ լիբանանցի է եւ խաղացած է աւելի քան 100 ֆիլմերու, *սերիալ*ներու եւ թատրերգութիւններու կարեւոր դերերը, վերջինը՝ 2015ին:

1967-75ին կը մասնակցի լիբանանեան, սուրիական եւ եգիպտական (մէկ) ֆիլմերու՝ միշտ Լիզ Սարգիսեան անունով:

1977ին կը խաղայ *Ալհոպպ քապլ ալխոպզ ահիանան* (Երբեմն սէրը կու գայ հացէն առաջ) (1977) եգիպտական ֆիլմին մէջ, որուն անուանաթերթին վրայ գրուած է՝ «Նոր դէմքը՝ Իման»: Այս անունով շարունակած է իր ուղին եգիպտական դերասանական բնագաւառին մէջ, յատուկ ուշադրութիւն գրաւելով օտար (ոչ-արաբական) կամ ազնուական տիպարներու մարմնաւորումներով, շնորհիւ իր արտաքինին եւ շէկ մազերուն[15]:

---

[14] Բախչինեան, էջ 554. նաեւ՝ Հ. Ա., «Եգիպտական սինեմայի եւ թատրոնի նուաճ ծանօթ հայ դերասանուհիներ», *Ջահակիր*, 10 եւ 24 Յունուար 2019:

[15] Մահմուտ Քասէմ, *Կամիլաթ ալսինեմա ալմասրէյա* (Եգիպտական սինեմայի գեղեցկուհիները), Ուլքալաթ Ալսահաֆա Ալ'արապէյա, Գահիրէ, 2019:

Անժէլ Արամ

Անժէլ Արամի (1946, Գահիրէ--2011, Գահիրէ) խաղացած ֆիլմերուն, *սերիալ*ներուն եւ թատրերգութիւններուն քանակը նոյնպէս կ'անցնի 100ը: Ան հռչակ վաստկած է երկրորդական դերերու մէջ, գրեթէ անփոփոխօրէն մարմնաւորելով գէր ու թեթեւասիրտ կնոջ կատակերգային տիպարը:

Լիւսի Նշան

Լիւսի Նշան անունը կը գտնուի *Սօուար մամնու'ա. ալքեսսա ալուլա «մամնու'»* (Արգիլուած պատկերներ. առաջին պատմութիւն՝ «արգիլուած է») (1972) ֆիլմի անուանաթերթի երկրորդական անուններուն շարքին: Կարելի չեղաւ մատնանշել անոր դերակատարութիւնը ֆիլմին մէջ, ոչ ալ գտնել անոր կենսագրական տուեալները:

Սամիրա Թաուֆիք

Երգչուհի եւ դերասանուհի Սամիրա Թաուֆիք ծնած է Օմմ Հարաթայն, Սուրիա, 1935ին: Այժմ կը բնակի Համզիյէ, Լիբանան:

Ժոզէֆ Մասաատ կը տեղեկացնէ իր հայ ծագումը՝ առանց մանրամասնելու ընտանեկան հանգամանքները[16]: Կը մեկնաբանէ նաեւ, որ իբրեւ մեներգչուհի, 1970ականներուն հռչակ վաստկած է «Պետուին» երգերու պիտակով.

> Իր ցուցադրական եւ պճնազարդ զգեստները՝ որոնք ենթադրաբար ազդուած էին պետուինական ոճէն, թէեւ երբեք չէին նմաներ պետուինական որեւէ ցեղի զգեստի, յաւելում մը եղան իր ընտրած «պետուինական» եղանակին[17]:

Խաղացած է աւելի քան քսան ֆիլմերու եւ *սերիալ*ներու մէջ՝ ուր միաժամանակ հանդէս եկած է իբրեւ դերասանուհի եւ երգչուհի:

1974ին մասնակցած է եգիպտալիբանանեան արտադրութեամբ մէկ ֆիլմի՝ *'Անթար ֆարէս ալսահարա'* ('Անթար՝ անապատի ասպետը): Բացի 'Ապլայի գլխաւոր դերակատարութենէն, Սամիրա Թաուֆիք կը մեկնաբանէ քանի մը երգեր՝ արտայայտելով ուրախ տօնախմբային տրամադրութենէ մինչեւ մենակեաց յոյզեր, յաջողելով բացայայտել երգչուհիի իր բազմերանգ կարողութիւնները: Միշտ հանդէս կու գայ պետուինական զգեստով՝ երկրորդելու համար այդ թուականներուն իր ստացած հռչակը իբրեւ «պետուինական» երգչուհի: Պետուինականութիւնը կը դառնայ արուեստագիտուհիին այն ինքնութիւնը՝ ուր կարելի է խօսիլ, բանակցիլ եւ գտնել իմաստներ[18]:

---

[16] Joseph Andoni Massad, *Colonial Effects: The Making of National Identity in Jordan*, New York, Columbia University Press, 2001, էջ 72:

[17] Նոյն:

[18] Հ. Ա., «Եգիպտական սինեմայի եւ թատրոնի նուազ ծանօթ հայ դերասանուհիներ», *Ջահակիր*, 7 Փետրուար 2019:

Վանիա Էքսէրճեան

Հայկական գաղութային ձեռնարկներուն աշխուժ մասնակցութիւն ունենալէ ետք իբրեւ ասմունքող, դերասան եւ կազմակերպիչ, 1990ին Գահիրէի նորաբաց Ալուարշա թատերախումբ-աշխատարանի հետ իր առաջին ելոյթը կ'ունենայ Վանիա Էքսէրճեան (1960, Գահիրէ--2004, Գահիրէ)՝ *Տայէր մա եափուր* թատերգութեան մէջ:

Վանիա քանի մը ընդմիջումներով Ալուարշայի հետ կը մնայ մինչեւ իր ողբերգական սպանութիւնը՝ խաղալով չորս կարեւոր թատերգութիւններ: Միշտ պահպանած է իր ամբողջական անունը՝ Վանիա Էքսէրճեան, որ, բնականաբար, կը մտնէր Ալուարշայի ինքնագաղափարախօսութեան մէջ իբրեւ արտայայտուելու ազատ տարածք: Այսօր, յիշատակը յարգելու համար Ալուարշայի գլխաւոր սրահը կը կոչուի իր անունով: Ալուարշայի մասին բացատրութիւնը կ'երկարի, միայն ըսեմ, որ անիկա մաս կը կազմէր այն տարածութիւններուն՝ որոնք Եգիպտոսի մէջ յառաջացան 1980ականներու վերջաւորութեան, մեծ մասամբ օտար հասարակական կազմակերպութիւններու ֆինանսաւորումով եւ, անշուշտ, մշակոյթի նախարարութեան ամբողջական կնքադրոշմին տակ, փորձելու համար ստեղծել *պետական* «այլընտրանք» մը. այլընտրանք մը՝ որ այլապէս յաջողելով շրջանցել վերահսկողութիւնը պիտի առաջնորդէր դէպի 2011ի յեղափոխութիւնը:

Վանիայի երկրորդ ելոյթը Ալուարշայի հետ կը հանդիսանայ *Ղազիր ալլայլ* (Գիշերային ալիքներ) թատերգութիւնը, 1993ին: Հիմնուած *Հասան եւ Նա'իմա* ժողովրդական *մաուուալ*ին (հեքիաթ/գեղօն) վրայ, այնտեղ հեքիաթասացութիւնը, *թահթիպ*ը (փայտերու պար), ստուերային պուպրիկները, սուֆիական բանաստեղծութիւնը, եկեղեցական տաղերը եւն., հանդէս կու գան միատեղ, քանի որ բոլորն ալ մաս կը կազմեն եգիպտական ինքնութեան:

Վանիայի թելադրութեամբ, *Հասան եւ Նա'իմա*յի *մաուուալ*ին հետ, այլեւ խումբի հեքիաթասացութեան հատուածներուն մէջ քանիցս կը ներկայացուին Հայոց Ցեղասպանութեան պատմութիւններ՝ նախ հայերէն լեզուով, ապա արաբերէն թարգմանութեամբ, մինչեւ որ խումբին մնացած մասը կը կարողանայ զայն հասկնալ բնագիր լեզուով՝ առանց թարգմանական օգնութեան: *Հասան եւ Նա'իմա* եւ Հայոց Ցեղասպանութիւնը ինքնութեան առումով կը կազմեն բազմաձայնութիւն մը - գործածած ըլլալու համար Էտուարտ Սայիտի բառապաշարը - ուր երկուքն ալ միաժամանակ լսելի են ու տեսանելի, ներթափանցող, այլ ոչ բացասող ու բացառող:

Ասիկա կարելի դարձաւ նաեւ այն պատճառով՝ որ Ալուարշա կազմաքանդած է արդիապաշտական ստեղծագործութիւն եւ յետարդիապաշտական բնագիր հասկացութիւնները, ստեղծելով յարաճուն ու յարափոփոխ ենթակայականութիւններ, որոնք բեմադրութեան իւրաքանչիւր երեկոյին կրնան ստանալ տարբեր իմաստներ: Մինչ *Հասան եւ Նա'իմա*ն ու Հայոց

Ցեղասպանութիւնը ընդունեցին բազմաձայնուիլ, կարելի՞ է երեւակայել որ օր մը կատարուի հակառակը եւ, օրինակ, Լեւոն Շանթի *Հին աստուածներու* բեմադրութեան մը մէջ մտնէ Պաղեստինի ժողովուրդին տառապանքը, առանց բնագրային հաստատագրութեան...:

1993ին երկրորդական դերերով Վանիա կը մասնակցի երկու հիմնահոսանքային խաղարկային ֆիլմերու՝ *Էէհ եա պանաֆսէկ* (Ինչո՞ւ, մանուշակ) եւ *Մերսեդէս*, որոնց անուանաթերթին վրայ Վանիա Էքսէրճեան անունը կը գրուի ամբողջութեամբ:

Վանիայի պարագային երկու ինքնութիւններ՝ եգիպտական եւ հայկական, կը յայտնուին իրենց ներքին արժէքային իմաստներով, իրենց սեփական ինքնութեան նշաններով[19]:

Անուշքա

Վանիային ժամանակակից, բայց բոլորովին տարբեր՝ հիմնահոսանքային մղումով, եգիպտական ֆիլմաշխարհ կը մտնէր նախապէս իբրեւ երգչուհի հռչակուած Անուշքա (ծն. 1960, Գահիրէ)՝ բուն անունով Վարդանուշ Չատրճեան: Ան եգիպտական դերասանական առաջին փորձը ըրած է 2001ին՝ *Ալթաուուս* (Սիրամարգը) կատակերգական *սերիալ*ին մէջ, մինչեւ այսօր մասնակցելով աւելի քան 20 ֆիլմերու, *սերիալ*ներու եւ թատրերգութիւններու:

Ինքնութեան հարցը իր մօտ անցած է տարբեր փուլերէ, սկսելով հայկականութեան քօղարկումէն - բայց ոչ հերքումէ - իբրեւ երգչուհի Թուրքիոյ մէջ կարեւոր փառատօնի մը առաջին մրցանակ ստանալէ, մինչեւ իր հայկականութեան հրապարակային բացայայտ յայտարարութիւնը եւ նոյնիսկ ցեղասպանական հարցին բարձրաձայնումը:

Անձնական առումով, Անուշքա կը պահէ իր նախկին սերտ կապերը հայ ընկեր-ընկերուհիներուն հետ եւ կրնայ մասնակցիլ հայկական մտերմական ու ակումբային հաւաքոյթներու:

Յաջողելով անցնիլ քօղարկումէ դէպի բացայայտում՝ ինքզինք բնական զգալով մանաւանդ հայկական մտերմութեան մէջ, ներինքնութեան ինքնայաղթահարումի ճամփայ մը անցած կ'ըլլայ այլականութենէ եւ անջատումէ դէպի համերաշխութիւն: Այս ներդաշնակ անցումին մեծապէս նպաստած է Անուշքայի ինքնութեան նախնական կազմաւորումը հայկական միջավայրի մէջ եւ իր մեներգչային հասունացումը Հայկ Սարգիսեանի[20] *Կռունկ* երգչախումբին շնորհիւ, հանգամանքներ՝ որոնցմէ զուրկ

---

[19] Հ. Ա., *Վանիա Էքսէրճեան. բազմերանգ աշխարհ մը համակ կենսունակութեամբ*, *Ջահակիր, Յաւելուած ԺԱ.*, 2017:

[20] Խմբավար Հայկ Սարգիսեան ծնած է Գահիրէ, 1955ին: 1983ին գերազանց վկայականով կ'աւարտէ Երեւանի Կոմիտասի անուան Կոնսերվատորիայի խմբավարական բաժինը: 1983ին Գահիրէի մէջ կը հիմնէ ՀԲԸՄի Կռունկ երգչախումբը,

եղած են «աստղային» դրութեան հասած նախորդ դերասան-դերասանուհիները:

Նորա Արմանի

Նախկին եգիպտահայ, յետագային ֆրանսահայ-ամերիկահայ Նորա Արմանի (ծն. 1955, Գահիրէ), բուն անունով՝ Նորա Էքսէրճեան, ապա՝ Նորա Բաբազեան, մասնակցած է եգիպտական մէկ թատրոնի եւ մէկ *սերիալի*: Զարմուհին է (հօրեղբօր դուստրը) Վանիա Էքսէրճեանի:

1998ին գլխաւոր դեր կը ստանձնէ Մոհամմատ Սոպհիի *Մալէք Սիամ* (Սիամ թագաւոր) թատերգութեան մէջ, *The King and I* արեւելապաշտ (orientalist) յայտնի երաժշտական թատրոնի արաբերէն յարմարեցում մը: Բեմադրութիւնը կ'ունենայ փորձառական ներկայացում: Արմանի կը դերակատարէ գրական արաբերէն եւ մասամբ անգլերէն լեզուներով: Հեռատեսիլի նախաբեմադրական ծանուցողական զրոյցի մը մէջ, Մոհամմատ Սոպհի դերասանուհին կը ներկայացնէ իբրեւ ազգութեամբ ֆրանսացի:

2002ին եգիպտական հեռատեսիլէն կը ցուցադրուի *ԱլԱսպեքա'* (Բարեկամները) *սերիալը*, որուն անուանաթերթին վրայ գրուած է՝ «ֆրանսացի դերասանուհի Նորա Արմանի»: Ոչ-գլխաւոր դերը կը խաղայ ֆրանսերէն եւ բարբառային եգիպտական արաբերէն զոյգ լեզուներով, դերին համապատասխանող լրջագոյն եւ խստագոյն դիմարտայայտութեամբ[21]:

Ալին Ուրֆալեան

Լիբանանահայ երգչուհի, անդամ չորս կին երգչուհիներէ բաղկացած լիբանանեան 4 Cats խումբին: Իբրեւ խումբ՝ 4 Catsը երգով ու դերասանութեամբ կեդրոնական դեր կը խաղայ եգիպտական *Ասպր ուա 4 քեթաթ* (Առիւծ եւ 4 կատուներ) ոստիկանական-կատակերգական ֆիլմին մէջ (2007):

Միրալ Միշէլ

Բուն անունով՝ Միրալ Մահինեան (ծն. 1993), խաղացած է երկու ֆիլմեր՝ *Ալքերտ պըհթալլէմ* (Կը խօսի կապիկը) (2017) եւ *Քեսսաթ հոպպ* (Սիրոյ պատմութիւն) (2019), ինչպէս նաեւ երկու սերիալներ՝ *Քալապշ* (2017) եւ *Էլլիհոպպ ֆորսա ախիրա* (Սիրոյ վերջին հնարաւորութիւնը) (2018):

զոր կը վարէ մինչեւ 1992: 1987-91 Աղեքսանդրիոյ մէջ կը հիմնէ ու կը վարէ Գուսան երգչախումբը: 1992ին ընտանիքին հետ կը գաղթէ Ֆրանսա: 2004էն մինչեւ այսօր տնօրէնն է Ռենսիի Դպրոցասէր Վարժարանին: 2010ին կը նշանակուի Փարիզի Սիփան-Կոմիտաս երգչախումբի գլխաւոր խմբավար:

[21] Հ. Ա., «Եգիպտական սինեմայի եւ թատրոնի նուազ ծանօթ հայ դերասանուհիներ», *Ջահակիր*, 21 Փետրուար 2019:

Նախապէս ասպարէզ իջած իբրեւ *մոդէլ*, ան կատարելապէս ընդելուզուած է եգիպտական երիտասարդական առօրեային, ինչպէս կը յստակուի իր արաբերէն առոգանութենէն, որ կը ներկայացնէ 1990ականներէն սկսեալ երիտասարդներուն մօտ թափ առած արագալեզու խօսակցութիւն մը, յատուկ բառապաշարով եւ լեզուական արտայայտութիւններով, որոնց կրնայ տիրապետել միայն բուն եգիպտական միջավայրին շաղախուած եւ այդ միջավայրը իր սեփականը դարձուցած երիտասարդութիւն մը:

2. ՊԱՐՈՒՀԻՆԵՐ

ա. Արեւելեան պարուհիներ

Եգիպտական սինեման ունի արեւելեան պարուհիներու հռչակաւոր շարք մը՝ Սամիա Կամալ, Նա'իմա 'Աքէֆ, Թահէյա Քարիոքա, Նակուա Ֆու'ատ, Տինա եւ շատ ուրիշներ, որոնք ֆիլմերու մէջ կրնան հանդէս գալ նաեւ պարուհիի տիպարին հետ կապուած դերասանական մասնաբաժիններով: Երեք հայուհիներ՝ Հոտա Շամս ալՏին, Հերմին եւ Ծովինար մաս կը կազմեն այս շարքին:

Հանրային առումով փափկանկատ եւ դիւրաւ շահագործուող բնագաւառ մըն է կանացի արեւելեան պարը, որ անմիջապէս կը նոյնանայ սեռականութեան արգիլուած խօսոյթին հետ:

Արեւմտեան հիմնահոսանքը պորտապար (belly-dance) կ'անուանէ զայն, բառ մը որ բացասական իմաստով մտած է նաեւ հայկական գրականութիւն, օրինակ՝ Գեղամ Սարեանի պատմուածքներէն մէկը[22]:

Պորտապար եզրոյթը արեւելապաշտական (orientalist) հնարք մըն է՝ ստեղծուած Շիքակոյի 1893ի միջազգային ցուցահանդէսին համար[23]: Շատ ուրիշներու նման, կը նախընտրեմ գործածել արեւելեան պար եզրոյթը, քանի որ, ինչպէս Անթոնի Շայ դիտել կու տայ, «ապասեռականացուած, ոչ-զգայական եւ չէզոք» է[24]: Բացի այդ, ան կ'արտայայտէ տեղական ըմբռնումն ու մօտեցումը, քանի որ Եգիպտոսի մէջ կը կոչուի՝ *Ռաքսա շարքէյա* (Արեւելեան պար), թէեւ բուն պարուհիին եգիպտական բարբառային անուանումը՝ *Ռաքքասա* (պարուհի), հասարակական ընկալումին մէջ կը կրէ բացասական երանգ:

Եգիպտոսի մէջ, ինչպէս Քարին վան Նիուվքերք կարողապէս կը մեկնաբանէ, արժանապատուութենէն աւելի, ամօթի ('էյպ) ժողովրդային հասկացութիւնն է որ առաջ կը նետուի արեւելեան պարուհիի առնչութեամբ՝

---

[22] «Ու գալարւում է մեղկ մի պորտապար», *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, հատոր առաջին*, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրատ., Երեւան, 1980, էջ 215:

[23] Anthony Shay, *Ethno Identity Dance for Sex, Fun and Profit: Staging Popular Dances around the World*, London, Palgrave Macmillan, 2016, էջ 41-42:

[24] Նոյն, էջ 41:

ամէն բան կաղապարելու եւ արգիլելու իր յատկութեամբ[25]: Հայերուն եւ եգիպտահայերուն պարագային արժանապատուութիւնն է որ կը պատճառաբանուի՝ ազգային արժանապատուութիւն նշանաբանին ընդմէջէն եւ «ազգային»ի շեշտադրութեամբ, քանի որ սեռականութիւնը պարուհիին ընդմէջէն անտեղադրելի է հայկականութեան կաղապարին մէջ եւ անհամատեղելի՝ ինքնութեան գաղափարախօսութեան հետ:

Ոչ միայն եգիպտահայութեան, այլեւ ընդհանրապէս հայերուն համար «զգայուն հարց» է սեռականութիւնը, զոր կը յստակեցնեն Սոցիոսկոպ հասարակական կազմակերպութեան հասարակագէտները իրենց գիրքի «Ներածութիւն»ին մէջ, միաժամանակ փորձելով բանալ թապուները եւ քակել կարծրատիպերը[26]:

Յամէնայնդէպս, այս ողջ պատումին մաս կը կազմեն երեք հայ պարուհիները:

Հոտա Շամս ալՏին, բուն անունով՝ Ալիս Միսաքեան (1925, Գահիրէ--2002, Գահիրէ), անցած է 20 տարուայ (1945-65) սինեմայի բեղուն շրջան մը, մասնակցելով եգիպտական 35 եւ լիբանանեան մէկ ֆիլմերու:

Հերմին, բուն անունով՝ Հերմինէ Յովհաննէս Սանոսեան (1935, Աղեքսանդրիա--2005, Աղեքսանդրիա), շուրջ մէկ տասնամեակ (1951-59) մասնակցած է 26 եգիպտական ֆիլմերու:

Երկուքը գործած են եգիպտական սինեմայի այսպէս կոչուած Ոսկի Շրջանին: Անոնց արեւելեան պարերուն երաժշտութիւնը՝ ինչպէս այդ ժամանակի սովորութիւնն էր, կը ներկայացնէ այսօր աւանդական (*ալթորաս*) համարուող ուղղութիւնը, ընդգրկելով, ի թիւս այլոց, Շատիայի, Քարէմ Մահմուտի, 'Ապտէլ 'Ազիզ Մահմուտի, Մոհամմատ Ամինի, Մոհամմատ Ֆաուզիի, Մոհամմատ Ալքահլաուիի դասական դարձած մեներգերը:

Երկուքն ալ նուազ չափով մասնակցած են նաեւ ոչ-արեւելեան պարերով:

Հակառակ անոնց վայելած հռչակին, եգիպտահայութիւնը նախընտրած է լռութիւն պահպանել անոնց առնչութեամբ:

Եգիպտոսի մէջ աստղային դրութիւն վայելող ժամանակակից արեւելեան պարուհին է Սոֆինար: Սոֆինար անունը Ծովինարի արաբերէն ինչիւնափոխուած տարբերակն է (արաբերէն այբուբէնը չունի «ծ» եւ «վ» տառերը): Բուն անունն է՝ Ծովինար Գրիգորեան (ծն. 1983, Արմաւիր, Հայաստան):

---

[25] Karin van Nieuwkerk, *"A Trade Like Any Other" Female Singers and Dancers in Egypt*, Cairo, The American University in Cairo Press, էջ 119-21:

[26] Ժաննա Անդրէասեան, Աննա Ժամակոչեան եւ Արփի Մանուսեան, *Սեռականութիւնը հայկական [համա]տեքստերում*, Սոցիոսկոպ, Երեւան, 2019, էջ 2:

Ծովինար 1988ի Հայաստանի երկրաշարժէն ետք ընտանիքով փոխադրուած եւ հաստատուած է Մոսկուա, ուր ստացած է ռուսական քաղաքացիութիւն:

Քանի մը տարի Շարմ Ալ-Շէյխ ապրելէ ետք, 2011ի եգիպտական յեղափոխական ամիսներուն Ծովինար կը տեղափոխուի Գահիրէ իբրեւ արեւելեան պարուհի, շուտով դառնալով ամէնէն հռչակաւորներէն մէկը, ինչպէս նաեւ ամէնէն սուղը:

2013-19՝ կը մասնակցի տասը եգիպտական ֆիլմերու եւ մէկ *սերիալի*ն:

Ֆիլմերուն մէջ պարած է գլխաւորապէս նոր (արդիապէս յօրինուած կամ մշակուած) ժողովրդական երգերու երաժշտութեամբ, յատկապէս Մահմուտ Ալլիսիի կատարումով: Սկզբնական շրջանին սահմանափակուելով իբրեւ պարուհի (հինգ ֆիլմեր), յետագային միաժամանակ հանդէս եկած է իբրեւ դերասանուհի եւ պարուհի (հինգ ֆիլմեր):

Խաղարկութեան համար ստանձնած է օտարուհիի կատակերգային եւ կիսակատակերգային տիպարներ՝ օտարաշեշտ եգիպտական բարբառով:

Ապուլ պանաթ (Աղջիկներուն հայրը) (2016) *սերիալի*ն մէջ կը ներկայանայ իբրեւ իր անձը՝ հռչակաւոր հայ պարուհի Ծովինար, հանգամանք մը, որ քանիցս կը շեշտուի բովանդակութեան մէջ:

Հեռատեսիլի բոլոր հարցազրոյցներուն մէջ անշեղօրէն կը շեշտէ իր ազգութիւնը իբրեւ հայ, բան մը՝ որ անսովոր է Եգիպտոսի մէջ աստղային հարթակի հասած հայ դերասաններուն: Ասոր հաւանաբար օգնած ըլլայ այն հանգամանքը՝ որ ի սկզբանէ եգիպտական լրատուութիւնը զինք ներկայացուցած է իբրեւ օտարուհի, թէեւ այս ծիրին մէջ կրնար ընտրել ռուսականը:

Ազգային ինքնութեան առումով աւելցնեմ, որ Ծովինար այն միակ աստղային դերասանուհին է, զոր հայերը բազմիցս տեսած են մօր հետ՝ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մէջ հաղորդութիւն առնելու պահուն:

Ուրեմն, Ծովինարի տիպարը ենթադրուած է ամբողջապէս յարմարիլ հայկական պատկերա-ներկայացուցչական յատկանիշերուն՝ իբրեւ բացայայտ հայ օտարին առջեւ եւ իբրեւ քրիստոնեայ հաւատացեալ: Բայց եւ այնպէս, արեւելեան պարուհիի կամ յորջորջուած պորտապարուհիի սեռականացումին պատումնաբանութիւնը դարձած է բարոյական արժանապատուութեան խնդիր:

2014 Մայիս 23ին, *CBCtwo* հեռատեսիլի կայանի Սահեպաթ Ալսա'ատա շաբաթական հաղորդաշարի (հաղորդավարուհի՝ Էս'ատ Եունէս) կէս ժամ տեւած հարցազրոյցն ու պարը տարակուսանքով ընդունուեցան եգիպտահայերուն կողմէ: Մէկուկէս ժամ տեւող հաղորդումը նուիրուած էր հայերուն եւ եգիպտահայ գաղութին եւ Ծովինար կը ներկայանար իրբեւ ներկայացուցիչ հայերուն:

Ծովինար հայ է, ոչ ոք չի հերքեր այս փաստը, բայց անոր հայկականութիւնը լուսանցքային է: Չի կրնար մաս կազմել հայ հիմնահոսանքին: Ան հայ է, բայց մեկուսացուած է իբրեւ հայ: Մեկուսացեալ հայ է: Մեկուսացեալ հայեր են նաեւ Հոտա Շամս ալ-Տին եւ Հերմին[27]:

բ. Դասական պարուհի

Երկար տարիներ Եգիպտոսի պալէի խումբին առաջին պարուհին (prima ballerina) եղած է Սոնիա Սարգիս, բուն անունով՝ Սոնիա Սարգիս Չամքերթէնեան (ծն. 1954, Գահիրէ):

Կարճ դասական պարով եւ դերասանութեամբ մասնակցած է *Ալթելլա* (Բեռնակառքը) ֆիլմին (1985): Կատարած պարը խորհրդանշական իմաստ ունի: Բեմապար չէ, այլ առանձին մենապար բնակարանին մէջ Եոհան Շթրաուսի երաժշտութեամբ, որ կը բաւարարէ դաժան մարդասպան Կամիլ Ռաթէպի զգացական յագեցուածութիւնը:

Սոնիա Սարգիս սիրելի հրաւիրեալը եղած է եգիպտահայ միութիւններու կազմակերպած փառատօներուն եւ ծաղկատօներուն[28]:

3. ԴԵՐԱՍԱՆՆԵՐ

Վազգէն Ամիրեան

Աղեքսանդրահայ բռնցքամարտիկ Վազգէն Ամիրեան փոքր դերով մասնակցած է *Ալփահայա* (Զոհերը) (1932) ֆիլմին[29]: Ֆիլմը չէ պահպանուած:

Եաքուպ Թադէոս

Եաքուպ Թադէոս, բուն անունով՝ Յակոբ Թադէոս Ասատուրեան (1910, Աղեքսանդրիա-1970, Մոնթրէալ):

Գլխաւորաբար եղած է արեւելեան ջութակահար, երաժշտահան՝ գործիքային եւ երգչային գործերու, ինչպէս նաեւ Մոհամմատ 'Ապտէլ Ուահապի երաժշտախումբի մենակատար եւ գլխաւոր ջութակահար:

Սինեմայի աշխարհ մուտք գործած է իբրեւ 'Ապտէլ Ուահապի երգերու ջութակահար. *Եոմ սա'իդ* (Երջանիկ օր) (1940) ֆիլմին մէջ կը հնչէ իր ջութակը, *Ռուսասա ֆիլ քալպի* (Գնդակ մը սիրտին մէջ) (1944) մէջ կը պատկերահանուի ջութակի մենանուագով, *Ղազլ ալպանաթի* (Աղջիկներու սիրախաղ) (1949) մէջ կ'երեւի 'Ապտէլ Ուահապի մեծ նուագախումբին կեդ-

---

[27] Հ. Ա., *Եգիպտական սինեմայի հայ պարուհիներ. Ա. Արեւելեան պարուհի՝ Հոտա Շամս ալ-Տին*, Ջահակիր, Յաւելուած, 2021. նաեւ՝ Հ. Ա., *Եգիպտական սինեմայի հայ պարուհիներ. Բ. Արեւելեան պարուհիներ՝ Հերմին եւ Ծովինար*, *Ջահակիր, Յաւելուած*, 2021:

[28] Հ. Ա., *Եգիպտական սինեմայի հայ պարուհիներ. Գ. Դասական պարուհի՝ Սոնիա Սարգիս*, *Ջահակիր Յաւելուած*, 2021:

[29] Ա., «Եգիպտ. նոր ֆիլմ մը», *Արաքս*, Աղեքսանդրիա, 3 Դեկտեմբեր 1932, էջ 3:

րոնը՝ իբրեւ գլխաւոր ջութակահար, թէեւ բոլոր պարագաներուն իր անունը չէ յիշատակուած անուանաթերթերուն վրայ:

Իբրեւ դերասան, արդէն 'Ապտէլ Ուահապէն անկախ, 1946ին կը խաղայ առաջին ֆիլմը՝ *Ալմուսիքար* (Երաժիշտը), որ սակայն ոչ մէկ յաջողութիւն կ'արձանագրէ եւ ֆիլմը չի պահպանուիր: Ասիկա միակ ֆիլմն է ուր ան հանդէս եկած է գլխաւոր դերով: Նաեւ միակ ֆիլմն է ուր ծածկած է անունին հայկականութիւնը՝ օգտագործելով Մուխթար Եոսրի ծածկանունը: Փորձած է ստեղծել նոր ինքնութիւն մը իբրեւ դերասան:

Այդուհետեւ, մինչեւ 1967, երկրորդական դերերով մասնակցած է 10 եգիպտական ֆիլմերու, առանց կարեւոր հետք մը ձգելու սինեմայի բնագաւառին մէջ:

Եաքուպ Թադէոսի բուն արժէքը կը մնայ իբրեւ արեւելեան ջութակահար եւ երաժշտահան: Այստեղ է՝ ուր ան արտայայտուած է իր գիտելիքային ամբողջ տարողութեամբ[30]:

Իպրահիմ Խան

Իպրահիմ Խան, բուն անունով՝ Իպրահիմ Իշխանց (Իշխանեա՞նց) (1936, Ուատ Մատանի, Սուտան--2007, Գահիրէ): Հա՞յ թէ սուտանցի:

Կրտսեր եղբայրը, Սուտանի կարեւոր ճարտարապետերէն Ժաք Իշխանցն է որ հարցազրոյցի մը ընթացքին յայտարարած է հօր հայ ազգութիւնը. «Ծնած եմ Ուատ Մատանի քաղաքը: Մայրս սուտանուհի էր՝ որ «արենակցական» կապ ունէր Շէյխ 'Ապտէլ Պաքիի (Ազրաք Թիպա) հետ, իսկ հայրս ազգութեամբ հայ էր»[31]:

Դարձեալ Ժաք Իշխանցն է, որ իր կայքէջին մէջ կը խօսի հայ-սուտանական արմատներուն մասին, հայկականը ներկայացնելով իրբեւ իր ինքնութեան շերտերէն մէկը[32]:

Իսկ 2013ին, Սուտանի *Ալէնթըպահա* լրագիրին մէջ, Սարա Շարաֆ Ալ-Տին իսլամական ինքնութեան տեսանկիւնէն կը գրէ Իպրահիմ Խանի ծնողքի մասին՝ հօր ամուսնութիւնը դիտելով իբրեւ Շէյխ 'Ապտէլ Պաքիի պարգեւը անոր իսլամացումին համար[33]:

---

[30] Հ. Ա., «Եագուպ Թադէոս՝ երաժիշտ եւ դերասան», *Ջահակիր*, 27 Յունիս, 11 եւ 25 Յուլիս, 8 եւ 22 Օգոստոս 2019:

[31] «Սամե'նա 'ան քորա թաթաթաուար... ուա լամ նասմա' 'ան մոտոն թաթարակա'. հազա մա եահտոս լըլԽարթում» (Լսեցինք զարգացող գիւղերու մասին... եւ չլսեցինք յետադիմող քաղաքներու մասին. այս է պատահածը Խարթումի մէջ), *Ալուաթան*, լրագիր, Խարթում, 8 Մայիս 2006, էջ 7:

[32] Jack Ishkanes, http://jackishkanes.com/about-avenue .

[33] Սարա Շարաֆ Ալ-Տին, «'Ա'էլաթ Իշխանց ալ-արմանէյ... Իպրահիմ Խան... ալէպն ալաքպար» (Հայ Իշխանց ընտանիքը. Իպրահիմ Խան՝ աւագ որդին), *Ալենթըպահա*, Խարթում: Յօդուածը տեղադրուած է *Մաուքէ' ալնիլայն* կայքէջին մէջ, 6 Սեպտեմբեր 2013, http://www.alnilin.com/692261.htm :

Հայկական ինքնութեան համար իսլամ հայը խնդիրներ կը յառաջացնէ, թէեւ, Արեւմտահայաստանի իսլամ-իսլամացած-իսլամացուած հայերուն փաստը այս առումով վերջերս դրական վերանայումներ պարտադրեց: Իսկ կամովին իսլամացածը ա՛լ աւելի խնդիրներ կը յառաջացնէ, թէեւ կը հպարտանանք ԺԳ. դարու Շակարաթ Ալտորրի իսլամական հայութեամբ: Այս բոլորը, անշուշտ, պէտք ունին արմատական վերագնահատումի:

Իսկ ի՞նչ է դերասանին ինքնադիրքորոշումը: Ան յաճախ շեշտած է իր հարաւային պատկանելութիւնը, քանզի կենդանի փորձառութիւնը, յիշողութիւնը եւ զգացողութիւնը կապուած են Սուտանի հետ: Գահիրէ փոխադրուելէ ետք՝ ուր ապրած է մինչեւ իր մահը, երբեք չէ դիմած եգիպտական քաղաքացիութիւն ստանալու, միշտ մնալով սուտանցի:

Արդէն կարելի է մատնանշել ինքնութիւններու բախումը: Ինքնութիւններու մրցակցութիւն: Ազգային-կրօնական ինքնութիւններու մրցավազք՝ որ չունի մէկ լուծում կամ մէկ ելք, եւ կրնայ մոռացութեան տալ սպառողական արժէքը (use-value), տուեալ պարագային՝ Իպրահիմ Խանի արուեստը:

1950ականներուն սկիզբը Իպրահիմ Խան գլխաւոր դերով մասնակցած է սուտանական առաջին խաղարկային կարճ ֆիլմին՝ *Թոր Ալկարր ֆիլ'էյափա* (Թոր Ալկարր բուժարանին մէջ): Կատակերգական ֆիլմ մըն է, որուն ներքին պատկերահանումը տեղի ունեցած է Իպրահիմի եղբօր՝ Էսհաք (Իսահակ) Իշխանցի բուժարանը (clinic)[34]:

Իպրահիմ Խան 1956ին առաջին անգամ ելոյթ կ'ունենայ եգիպտական ֆիլմի մէջ՝ *Ալքալպ լահու ահքամ* (Սիրտն ունի իր դրոյթները), որմէ ետք աստիճանաբար կը դառնայ եգիպտական սինեմայի եւ հեռատեսիլի ամենակարեւոր դերասաններէն մէկը:

Մասնակցած է շուրջ 40 եգիպտական ֆիլմերու, 80 *սերիալ*ներու եւ 4 թատերգութիւններու, մասնակցած է նաեւ բազմաթիւ լիբանանեան, սուրիական, իրանական եւ մէկ ամերիկեան (*Dawn of the Mummy*) ֆիլմերու:

Պինդ դերասան մըն է՝ ցայտուն դիմագիծով: Ան երբեք չստանձնեց առաջնորդ տղամարդու (ալֆաթա ալաուալ) դեր (ինչպէս՝ Ռոշտի Ապազա, Հուսէյն Ֆահմի), ոչ ալ ընդունեց ըլլալ եգիպտական սինեմայի կարծրատիպային անփոփոխ տիպար մը (ինչպէս՝ Թաուֆիք Ալտեքն), ինքզինքին

[34] Զէյն Ալ-'Ապետին Հեճազ, «Ֆաթհի Պուրքէյա» (*արաբերէն*), *Sudanese Online*, http://sudaneseonline.com/cgi-bin/sdb/2bb.cgi?seq=msg&board=490&msg=1479675296&rn=0 :

համար բանալով լայն տարածութիւն՝ շրջագայելու տիպարային այլազանութեան եւ նորացումի ընդմէջէն[35]:

Պերճ Ֆազլեան

Յայտնի լիբանանահայ դերասան եւ բեմադրիչ Պերճ Ֆազլեան (1926, Իսթանպուլ--2016, Պէյրութ), գլխաւոր դերով ելոյթ ունեցած է եգիպտական մէկ ֆիլմի մէջ՝ *Ալշայթան* (Սատանան), 1969ին:

Անուանաթերթին վրայ գրուած է՝ «մասնակցութեամբ լիբանանցի աստղ Պերճ Ֆազլեանի»:

Ֆիլմը Ճէյմս Պոնտի եգիպտական տարբերակ մըն է, արեւելեան երգերով ու պարերով հարստացած: Ֆազլեան հանդէս կու գայ հակահերոսի դերով՝ բուռն եւ շեշտուած դիմային ու մարմնական խաղարկութեամբ, կատակերգային սուր դարձուածքներով:

Ֆազլեան խաղացած է նաեւ լիբանանեան ֆիլմերու մէջ՝ *'Անթար եաղզու ալսահարա'* ('Անթար կը զաւթէ անապատը) (1960), խաղընկեր ունենալով եգիպտահայ Սեդի Գօչունեան, *Պայրութ սեֆր 11* (Պէյրութ զերօ 11) (1966), *Պենթ ալհարէս* (Պահակին աղջիկը) (1967), *Սաֆար պարլէք 1914* (1967), *Քուլլունա ֆեդա'իյուն* (Բոլորս հայդուկներ ենք) (1969), *Շաթէ' ալհոպպ* (Սիրոյ ծովափը)[36]:

Սեդի Գօչունեան

Իբրեւ դերասան եւ թատերական կազմակերպիչ, եգիպտահայ թատերական մշակոյթի կարեւոր դէմքերէն է Սեդի Գօչունեան (1927, Գահիրէ--2006, Սիտնի):

Փորձած է մտնել եգիպտական սինեմա եւ 1954ին փոքր դերեր ստանձնած երեք ֆիլմերու մէջ՝ *Ալսեթթաթ մա եա'րաֆուշ եկդեպու* (Կիները ստել չեն գիտեր), *Տալլունի եա նաս* (Ճար մը գտէք ինծի ով մարդիկ) եւ *Պենթ ալպալատ* (Երկրին աղջիկը):

Շատ աւելի կարեւոր դերով մասնակցած է լիբանանեան արտադրութեան մէջ՝ *'Անթար եաղզու ալսահարա'* ('Անթար կը նուաճէ անապատը) (1960), խաղընկեր ունենալով Պերճ Ֆազլեանը:

Դեր ստանձնած է Եգիպտոսի մէջ պատկերահանուած ամերիկեան *The Ten Commandments* (1956) ֆիլմին մէջ:

1971ին կը մեկնի Սիտնի ուր կը շարունակէ թատերական գործունէութիւնը[37]:

---

[35] Հ. Ա., «Եգիպտական սինեմայի հայ տղամարդ դերասանները», *Ջահակիր*, 26 Յուլիս եւ 9 Օգոստոս 2018:

[36] Հ. Ա., «Եգիպտական սինեմայի հայ տղամարդ դերասանները», *Ջահակիր*, 23 Օգոստոս 2018, նոր շրջան:

[37] Յ. Գ. Յ., «Սեդի Գօչունեան (իր քսանամեայ թատերական գործունէութեան առթիւ», *Ջահակիր*, 4 Յունիս 1970, էջ 4-5. նաեւ՝ Եափուճեան, էջ 381-2. նաեւ՝ Հ. Ա.,

Յակոբ

Բուն անունով՝ Յակոբ Աւետիսեան (ծն. 1965, Գահիրէ): Լեպլեպայի քեռորդին է:

Վեց տարեկանին կը մասնակցի եգիպտական *Ուալափ ուա պենթ ուալշայթան* (Տղայ մը, աղջիկ մը եւ սատանան) (1971) ֆիլմին, ուր ելոյթ կ'ունենայ կարճ տեսարանի մը մէջ, իբրեւ Գերմանիա հաստատուած եգիպտացի յաջող ընտանիքի զաւակ[38]:

Վարդ Վահրամ

Բուն անունով՝ Վարդերես Յարութիւնեան (1955, Աղեքսանդրիա--2014, Աղեքսանդրիա):

Խաղացած է եգիպտական մէկ ֆիլմ՝ *Էսքենտերէյա... լէհ* (Աղեքսանդրիա՝ ինչու՞) (1979), բեմադրութեամբ Եուսէֆ Շահինի:

Ըլլալով ձախ կողմնորոշումով բեմադրիչ մը, Շահինի համար առաջնայինը մարդիկ են, իրենց միջեւ եղած հորիզոնական յարաբերութիւններով: Եգիպտահայ մամուլին համար աննախադէպ քայլով մը, հոկտեմբերեան երիտասարդական շարժումի[39] անդամներէն Վարուժան Ֆըրընճեան կը փութայ տեսակցելու Վարդ Վահրամի եւ Եուսէֆ Շահինի հետ՝ ֆիլմին հանրային ցուցադրութենէն 4-5 ամիս առաջ:

Յօդուածին սկիզբը Ֆըրընճեան կը շեշտէ Շահինի հիմնական գաղափարը ֆիլմին մէջ. «*Իր յուշերուն մէջ կարեւոր տեղ մը կը գրաւեն նախայեղափոխական Եգիպտոսի ... տարբեր ազգութիւններու, տարբեր կրօնական դաւանանքներու պատկանող հաւաքականութիւններու միջեւ եղած սերտ կապերն ու փոխյարաբերութիւնները, որմէ միայն անուշ երազ մը կը մնայ, կ'ըսէ Ե. Շահին որուն հետ հարզազրոյց մը կազմակերպեցինք նախօրօք տեղեկացած ըլլալով որ ֆիլմին մէջ հայու կերպար մըն ալ ներկայացուած է*»[40]:

Որմէ ետք, բնականաբար, յօդուածը պիտի կեդրոնանար հայկական կողմին վրայ: Շահին կը բացատրէ. «*Հայ բարեկամներ շատ ունեցած եմ: Բոլորը ճամփորդեցին, գացին: Անոնցմէ շատերը կը յիշեմ մեծ համակրանքով եւ յուզումով: Ինչպէս ֆիլմիս մէջ նկարագրուած է, իմ դասընկերներէս էր Քիւչիւքեանը, որուն հետ ունեցած իմ անկեղծ բարեկամութիւնս նպաստեց որ ես ճանչնամ ձեր ժողովուրդը եւ ձեր մտահոգութիւնները:*

«Եգիպտական սինեմայի հայ տղամարդ դերասանները», *Ջահակիր*, 6 Սեպտեմբեր 2018:

[38] Հ. Ա., «Եգիպտական սինեմայի հայ տղամարդ դերասանները», *Ջահակիր*, 23 Օգոստոս 2018, նոր շրջան:

[39] Շարժումին եւ անոնց հրատարակած թերթին մասին տե՛ս՝ Թովմասեանի յօդուածը այս հատորին մէջ:

[40] Վ. Ֆ., «Ե. Շահին եւ հայերը. Վարդերես Յարութիւնեան *Էսքենտերէյա... լէ՞* ֆիլմին մէջ», *Հոկտեմբեր*, Գահիրէ, Ապրիլ-Մայիս 1979, Ե. տարի, թիւ 33-34, էջ 31:

Քիչիքեանի ներքին զգացումները եւ արտայայտուելու կերպը յիշողութեանս միջոցաւ վերակենդանացնելով, կազմաւորեցի հայու կերպարը, զոր մարմնաւորուեցաւ աղեքսանդրահայ երիտասարդի մը կողմէ»[41]:

Հայու մը ընդգրկումը, ուրեմն, պիտի մտնէր մարդկային յարաբերութիւններու եւ փոխներթափանցումներու ծիրին մէջ:

Ապա յօդուածը կը կազմալուծէ Շահինի աշխարհաքաղաքացիութիւնը, ամրաշեշտելով հայկական ուղղահայեաց ինքնութեան տարրը, երբ Վարդ Վահրամ կ'ըսէ. «*[Ի]նծ ուրախացնողը այն էր որ ես պիտի մարմնաւորէի հայ մարդու կերպար ու հայերէն պիտի խօսէի, թէկուզ քանի մը վայրկեան տեւող շոթերու ընթացքին*»[42]:

Այս զրոյցները կատարուած են ֆիլմին հանրային ցուցադրութենէն առաջ: Տեսականօրէն ամէն բան կատարեալ է հայկական ինքնութեան առումով: Ֆիլմը, սակայն, կը պարզէ քիչ մը տարբեր պատկեր: Այնտեղ, անուանաթերթին վրայ Վարդ Վահրամի անունը կը յայտնուի երիտասարդներու ցանկին մէջ՝ առանց հայկական դերի յիշատակութեան, իսկ ֆիլմի տեւողութեան բարեկամները զայն կը կանչեն ընդամէնը Քէօչ ընդհանրական անունով: Կը պակսի ակնարկուած հայերէն խօսակցութիւնը: Բեմադրիչին յայտարարած հայկականութիւնը գործադրուած չէ: Պատում մը՝ որ աւելի կարեւոր է քան իրականութիւնը[43]:

Արմէն Մազլումեան** եւ **Հրաչ Կաճոյեան

Արմէն Մազլումեան եւ Հրաչ Կաճոյեան 1990ին հանդէս եկած են եգիպտական մէկ ֆիլմի մէջ՝ *Քապորիա* (Խեցգետին), Ահմատ Զաքիի եւ Ռաղտայի գլխաւոր դերակատարութեամբ եւ Խայրի Պըշարայի բեմադրութեամբ:

Անոնք փոքր դերերով ելոյթ կ'ունենան բռնցքամարտիկ Հոտհոտը շրջապատող-քաջալերող խումբին մէջ՝ ինքնուրոյն հետաքրքրական դրսեւորումներով:

Անուանաթերթին վրայ արձանագրուած են իրենց ամբողջական հայկական անունները:

Կաճոյեան փոքր դերերով մասնակցած է նաեւ եգիպտական թատրոններու[44]:

---

[41] Նոյն, էջ 32:

[42] Նոյն, էջ 32:

[43] Հ. Ա., «Եգիպտական սինեմայի հայ տղամարդ դերասանները», *Ջահակիր*, 23 Օգոստոս 2018, նոր շրջան:

[44] Նոյն:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ամփոփելով՝ եգիպտական սինեմայի եւ թատրոնի հայ դերասաններուն ողնասիւնը եղած է իգական սեռը: Տղամարդոց առումով, Իպրահիմ Խան միակ դերասանն է՝ որ ամբողջ կեանքը նուիրած է դերասանութեան, բայց, ի տարբերութիւն կիներուն, անոր հայ արմատները բացայայտ չեն եղած, այլեւ անձամբ ինք իր փորձառութիւնը սիրած է կապել սուտանական մշակոյթին: Տարբեր է հայ դերասանուհիներուն պարագան, որոնց հայկականութիւնը հրապարակաւ յայտնի է՝ ամէնատարբեր աստիճանի սեղմումներով եւ արձակումներով:

Եգիպտահայ գաղութային վիճակը արական գերիշխանութեան դրսեւորումն է, գերիշխանութիւն մը՝ որ առիթ պիտի տար, օրինակ, *Արտեմիսի*[45] արդար բռնկումին՝ չկրկնուած փորձառութիւն մը եգիպտահայ մշակոյթի պատմութեան մէջ: Եւ ահաւասիկ, ֆեմինիստական տարրը, երկիրի մը մշակութային արդիւնաբերութեան ամէնացայտուն բնագաւառին՝ սինեմայի մէջ, կը խաղայ ամէնաբացայայտ դերը եգիպտական եւ հայկական տարածութիւններուն միջեւ: Ֆեմինիստական ներենթակայական (intersubjective) տրամասացութիւնն (discourse) է որ կը բացայայտուի, իր կարողութեամբ, կամ գոնէ ձգտումով, հաղորդակցելու այլերուն հետ: Իսկ հաղորդակցութիւնը տեղի կ'ունենայ ամէնատարբեր շերտերով, առանց ունենալու նախասահմանուած չափորոշիչներ:

Կարեւոր է նաեւ շեշտել, որ եգիպտական ֆիլմի եւ թատրոնի հայ դերասան-դերասանուհիներուն գործունէութիւնները եւ արտադրութիւնները չեն մտած եգիպտահայ ու հայկական փորձառութեան մէջ: Անոնք չեն հանդիսանար հայկական առօրեայ խօսակցութեան, ակումբային զրոյցներու, մամուլի հաղորդումներու եւ լուրերու առարկաները, այլեւ յատուկ ջանք չի գործադրուիր ներկայ գտնուելու անոնց ֆիլմերու ցուցադրութիւններուն կամ թատերական բեմադրութիւններուն: Հակառակ ասոր, այս ոչ-փորձառութիւնը, երբեմն նաեւ՝ մերժուած փորձառութիւնը, կը դառնայ հանրագիտարանային գիտելիքի եւ նպաստային ուժային բանեցումներու հաճոյքը, կիրքը, եւ ազգային ինքնութեան առումով՝ հպարտանքը:

[45] *Արտեմիսի* մասին մանրամասն տե՛ս՝ Ազատուհի Սիիմոնեանի յօդուածը այս հատորին մէջ:

THE ARMENIAN ACTORS OF THE EGYPTIAN CINEMA: CHARACTERS, IMAGES, AND PERCEPTIONS (Summary)

Haig Avakian
haigavakian@yahoo.com

Egyptian-Armenian actors have been a part of professional Egyptian cinema and theater from the beginning (1920s). Interestingly, all these actors have been females. However, Egyptian cinema is a male dominated sphere, both in characters and the issues raised. Likewise, the Egyptian-Armenian establishment, in membership, board members and editors, is a male dominated sphere. The author notes that feminism in the arts has been flexible enough to find its way to and penetrate both Egyptian and Armenian identities, combine them and establish a mutually inclusive space of coexistence.

The paper focuses on the attitude of the Egyptians and Egyptian Armenians towards these actresses, as well as the attitude of the actresses towards these two groups. Obviously, these three groups constitute a multilayered sets of identities. The paper notes the contradiction in the fact that the experience of these Armenian actresses is not incorporated into Egyptian Armenian culture, but at the same time it is considered an Egyptian Armenian contribution to Egyptian culture!

The Pasha and the Survivor: Roots of Armenian Genocide Research

Hilmar Kaiser
hilmar.kaiser@freenet.de

The Armenian community in Egypt was closely connected with the social and economic developments in the country during the decades before World War I.[1] They were involved in introducing modern techniques and forms of production.[2] At the same time Armenian community life form part of international Armenian networks, including intellectual and political. For a long time Armenian publications were able to disseminate critical views that could not be voiced in the Ottoman Empire due to censorship and more informal forms of repression. Once the ruling Committee of Union and Progress Party (CUP) had established itself as the *de facto* single party in the empire, allowing only nominal representation to other political groups, Egypt became one of the bases for anti-CUP activism. It was from Egypt that the Social Democratic Hnchakian Party (SHDP) dispatched a commando of militants in its ill-fated attempt to assassinate the CUP-leader and Minister of Interior, Talaat Bey, in the summer of 1914.[3]

After the Ottoman entry into World War I, British-controlled Egypt became a frontline region facing repeated Ottoman attempts to block the Suez Canal and create insurgencies. By spring 1915, the Ottoman authorities had designated the Egypt-based Armenian General Benevolent Union (AGBU) as a terrorist organization and begun killing its members throughout the empire.[4] The collapse of the AGBU's humanitarian work within Ottoman territories did not mark an end of humanitarian efforts by the community. Following the defense at Musa Dagh, the French evacuated Armenian survivors to Port Said

---

[1] I am indebted to Anna Ohanessian-Charpin, Antranig Dakessian and Mihran Minassian for their kind support.

[2] Bedros Torossian, "In Search of Haven and Seeking Fortune: The Economic Role of Ottoman Armenian Migrants in the British-Occupied Egypt (1882-1914)" parts I and II in *Haigazian Armenological Review*, 40:2020, pp. 739-72; ibid., 42/1:2022, pp. 169-90.

[3] Ali Riza Öge, *Meşrutiyetten Cumhuriyete Bir Polis Şefinin Gerçek Anilari* (From the Second Constitutional Era to the Republic. A Police Chief's True Memoirs), Ticaret Gazetesi, [Istanbul], 1982, pp. 213-19.

[4] James Bryce and Arnold Toynbee, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce. Uncensored Edition,* ed. Ara Sarafian, Gomidas Institute, Princeton, N.J., 2000, p. 539.

where an Armenian refugee camp sprang up. British authorities and local communities assisted the arrivals with international support from, for instance, the Red Cross.[5] Aside from relief work, the Armenian community maintained its publications. The newspapers *Arev* and *Husaper* became important outlets for information from Armenian sources on the evolving genocide.[6] The camp at Port Said became the site where survivors published some of the very first accounts of their experiences.[7] Thomas Muguerditchan, a former employee at the British Vice-Consulate in Diarbekir, interviewed American missionaries about their experiences once they had made their way to Egypt and published the information in the U.S.[8]

Following successive Ottoman defeats on the Sinai front, the British advance on Palestine opened an escape route to Armenian deportees in the region, including areas east of the Jordan River. The survivors brought chilling testimonies of their experiences and massacres. Some of them published their accounts in Egypt providing detailed insights into Armenian relief work within the Ottoman Fourth Army region.[9]

After the Ottoman defeat, Egypt emerged as an Armenian center for documenting the genocide. In 1919 Mugerditchian submitted a substantial analytical work in English language to the U.S. diplomatic service.[10] The Armenian version appeared the same year. Zaven Der Yeghiayan, the Armenian Patriarch of Constantinople, lauded the work.[11] Two Catholic priests, Père

---

[5] See Vahram Shemmassian contribution in this volume, "The Population, Setup, and Administration of the Armenian Refugee Camp of Port Said, Egypt, 1915-1919".

[6] Auswärtiges Amt, Berlin, Politisches Archiv, Türkei 183/45, A 30202, Berlin, Nov. 8, 1916, "Bericht eines Augenzeugen über die Lage der deportierten Armenier am Anfang 1916 (aus der armenischen Zeitung Arew vom 21. u. 25 August 1916);" Vahan Tekeyan, *Arevi Khempagragannere (1915-1945)* [The editorials of Vahan Tekeyan in *Arev* (1915-1945)] compiled and edited by A. Dakessian & B. Torossian, HUPress, Beirut, 2022.

[7] Armin Kredian, "The Armenian Community in Egypt: World War I and Genocide, 1914-1919," *Haigazian Armenological Review*, 35:2015, pp. 201-48.

[8] Bryce, Toynbee, p. 538.

[9] Գրիգոր Գուտուլեան, *Կարմիր նոթեր տարագիր կեանքէս* (Krikor Kudulian, Red notes from my life as deportee), Armenian refugees camp, Port Said, 1919.

[10] United States, National Archives, Record Group (hereafter: RG) 59/867.4016/417; Թովմաս Գ. Մկրտիչեան, *Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները (ականատեսի պատմութիւն)* [Thomas K. Mugerditchian, The Diarbekir Massacres and Kurdish Atrocities (eyewitness account)], Krikor Djihanian Press, Cairo, 1919.

[11] Zaven Der Yeghiayan, *My Patriarchal Memoirs*, Mayreni Publishing, Barrington, RI, 2002, p. 190.

Arsène and Pierre Merdjimekian, published chilling accounts in Cairo which became some of the first eye-witness accounts to be published in French.[12]

In the decades to come, Catholic clerics kept this tradition of genocide research alive as did Armenian Apostolic clergy.[13] During the late interwar period, the emergence of Beirut as the intellectual center of the Western Armenian diaspora alongside France and U.S., Paris with its AGBU Nubarian Library under Aram Andonian took center stage as an important location for research on the Armenian genocide, particularly on the role of perpetrators. Other important work was done by authors close or associated with the Armenian Revolutionary Federation (ARF) or the SHDP.[14]

The Armenian exodus from Egypt in the 1950s further diminished the importance of Egypt as an Armenian intellectual center or so it seemed. In the 1920s, Krikor Guerguerian, a young Armenian survivor from Gurun in Sivas province, had been living in Egypt and Lebanon. He had lost almost his entire family during the deportation and slaughter of his home community. While he grew up he made a most unusual acquaintance with an exile from what had become the Republic of Turkey, known as Nemrud Mustapha Pasha [Yamulki].

Born in 1866 into a well-known Kurdish family in Suleimaniah, Nemrud Pasha had studied at the Ottoman War College in Constantinople. After the CUP's rise to power his relations with the party worsened as he was the uncle of a leading Kurdish nationalist and CUP-opponent, Mehmed Sherif Pasha. Following the Ottoman defeat in 1918, the new government appointed him to courts-martial duty. He sentenced CUP-members for their crimes during the Armenian Genocide and others for their participation in the insurrection headed by Mustapha Kemal Pasha. As the latter became increasingly powerful, Yamulki's position in Constantinople became untenable. Following an arrest and release, he left for Syria in 1921. Later he played an important role in Iraqi Kurdish politics. During the 1920s, he visited his nephew Sherif Pasha in Cairo

---

[12] Père Arsène, *Massacre et Déportation des Arméniens de Sivas. Récit d'une Dame Arménienne de Sivas*, Zareh Berberian, Cairo, 1919; Pierre Merdjimékian, *Les Arméniens d'Angora Déportés et Massacrés. Pourqoui??? Et Comment???* Hindié, Cairo, 1920.

[13] See also Cirillo Giovanni Zohrabiàn, A *Servizio dei Fratelli: Memorie di Vita Missionaria,* Convento Cappuccini, Palermo, 1965; Jean Naslian, *Les Mémoires de Mgr. Jean Naslian, Evêque de Trébizonde, sur les Evènements Politico-religieux en Proche-Orient de 1914 à 1928 Vol. 1*, Imprimerie Méchithariste, Wien, 1951-1955.

[14] Հայկազն Գ. Ղազարեան, *Յեղասպան թուրքը* (Haygazn K. Ghazarian, the Genocidal Turk), imp. Hamazkaine, Beirut, 1968; Գուժկան Սեբաստիոյ (Կ. Գաբիկեան), *Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* [Kujgan Sepasdio (Garabed Kapigian), The Yeghern story of Armenia Minor and its major capital, Sepasdia], Hairenik printing press, Boston, 1924.

who owned property in Egypt and was related by marriage to the Khedival family.[15] Guerguerian often saw the old officer in Cairo. Discussing the Armenian genocide, the former military explained to the young Armenian the importance of Ottoman courts-martial documents that had been published in the official Ottoman state gazette, the *Takvimi Vekayi* (TV). Yamulki urged Guerguerian to research the material and make it known. In a way, the old man tried to ensure that the legacy of the courts-martial would be taken up by a new generation and the knowledge produced during the trials would not be forgotten. Guerguerian accepted the assignment and set out on a life-time's quest.[16]

Իր հօտին եւ ընդհանրապէս ժողովուրդին կողքին կանգնած կաթողիկոս-պատրիարքը, իր 1994ի հովուական թուղթով լուսարձակի տակ կ'առնէր ընտանիքը: Արդարեւ, ընտանիքի միջազգային տարուան առթիւ, հոգեւոր տիրոջ *Թուղթ հովուական՝ ընտանիքի միջազգային տարուայ առթիւ*ը սրտաբուխ կոչ կ'ուղղէր՝ «*Մեր համայնքին թանկագին ընտանիքներուն, որպէսզի ա՛լ աւելի գիտակցին իրենց ծանր պատասխանատուութեան, անթերի կերպով կատարեն ամուսնական վիճակին յարակից պարտականութիւնները, ըլլան խղճամիտ դաստիարակները իրենց զաւակներուն եւ իրենց ամուսնական բոյնին մէջ ծաղկեցնեն հաւատարմութեան եւ սիրոյ առաքինութիւնները, որոնք դարերու ընթացքին յատկանիշերը եղած են մեր հայ ընտանիքներուն*»[8]:

2004ին լոյս տեսաւ Գասպարեան հոգեւոր տիրոջ նուիրուած արաբերէն հատորը՝ *الاتي من ارض مصر* (Եգիպտոսի հողէն եկող) խորագիրով[9], որ կը պարունակէ իր հովուական թուղթերէն, քարոզներէն, ճառերէն ու կոնդակներէն հատընտիր մը, ինչպէս նաեւ՝ վկայութիւններ ու գնահատանքներ կղերական ու քաղաքական անձնաւորութիւններէ, որոնք վեր կ'առնեն իր բացառիկ մարդկային արժանիքները:

Յատկանշական է լիբանանցի հայասէր մտաւորական, արաբական աշխարհի մեծագոյն բանաստեղծներէն Սայիտ Աքըլի վկայութիւնը՝ « امامه كانك

[7] *Թուղթ շրջաբերական. «Վերադարձ Հայաստան»*, Պէյրութ, 1992, էջ 19:

[8] *Թուղթ հովուական*, Պէյրութ, 1994, էջ 19:

[9] البطريرك كسباريان, *الاتي من ارض مصر*, *مكنشورات دار المراد*, *بيروت*, էջ 383:

امام عظمة ارمينيا» (Իր դիմաց, ինքզինքդ Հայաստանի մեծութեան դիմաց կը զգայիր):

Աւելի ետք զինք պիտի կոչէին «վաստակաւոր կաթողիկոս-պատրիարք»[10]:

Հայաստան այցելութիւն

1988ի Դեկտեմբերի վերջը, Հայաստանը հարուածող ահեղ երկրաշարժէն շատ կարճ ժամանակ ետք, ընկերակցութեամբ արհիապատիւ Վարդան եպիսկոպոս Աշգարեանի եւ Սարգիս Նաճարեանի, ան Հայաստան կ'այցելէր՝ օգնութեան փութալու երկրաշարժին պատճառով դժբախտացած հայորդիներուն՝ «*որպէս Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ համայնքապետ, պարտականութիւն զգալով երթալ երկրաշարժի աղէտին առիթով, ու բերել համայնքին մասնակցութիւնն ու աղօթքը: Մանաւանդ՝ Վեհափառ Վազգէն Ա.ին ընծայել մեր եղբայրական նեցուկը, որպէսզի ամէնայն հայոց վեհափառը առանձին չզգայ այս սարսափելի աղէտին ահաւորութեան առջեւ*»[11]:

Պարզ, զգացական այցելութիւն մը չէր որ տեղի կ'ունենար, ոչ ալ լոկ ցաւակցական բնոյթ ունէր ան: Այցելութիւնը նպատակ ունէր բերել - հայրենիքի շինութեան համազգային ու միջազգային ճիգերուն հետ - հայ կաթողիկէ համայնքին մասնակցութիւնը: Այս առթիւ էր որ հոգեւոր տէրը յանձնառու եղաւ կանգնել դպրոց մը Լենինականի (ներկայիս Կիւմրի) մէջ: Սակայն անյայտ պատճառներով չիրականացաւ անոր իրագործումը: Այդուհանդերձ, Կիւմրիի թիւ 8 եւ թիւ 24 դպրոցներու արդիական կահաւորումն ու սարքաւորումը իրագործուեցաւ հայ կաթողիկէ Ֆրանսայի եւ Հիւսիսային Ամերիկայի ու Քանատայի առաջնորդարաններու եւ միջազգային բարեսիրական ընկերութիւններու ու բարերարներու առատաձեռն նուիրատուութիւններուն շնորհիւ[12]:

Ս. Էջմիածինի մէջ հոգեւոր տէրը, 31 Դեկտեմբեր 1988ին, մեծ յուզումով կ'արտայայտուէր ընդգծելով. «*Սիրալիր եւ ջերմ եղբայրական աննախընթաց ընդունելութեամբ մեզ իր յարկին տակ հիւրընկալեց ՆՍՕՏՏ Վազգէն Ա. վեհափառ կաթողիկոսը*»: Իսկ իր այցելութեան աւարտին, խօսքը ուղղելով անոր, կ'ըսէր. «*Վեհափառ տէր, թոյլ տուէք որ ձեզի նուիրեմ, իմ եւ աշխարհասփիւռ մեր համայնքին զաւակներուն անունով, այս ոսկեայ խաչը, թէեւ ձեր խաչը արդէն ծանրաբեռ է: Այս լանջախաչը կրած է երջանկայիշատակ Կարդինալ Աղաճանեան, որուն համար՝ «ամէն մէկ հայ՝ բեկոր մըն է Հայաստանի*»[13]: Իդէպ, Վազգէն Ա. վեհափառը անձնանօթ մը չէր կարդինալին, անոր հետ ունէր անձնական շփում եւ 12 Մայիս 1970ին Հռոմի

[10] *Աւետիք* Յաւելուած 4, Պէյրութ, 2011:

[11] *Աւետիք* Յաւելուած 4, Պէյրութ, 2011:

[12] Թուղթ շրջաբերական. «Վերադարձ Հայաստան», Պէյրութ, 1992, էջ 14:

[13] *Աւետիք* Յաւելուած 4, Պէյրութ, 2011:

մէջ զուգահեռաբար Պօղոս Զ. սրբազան քահանայապետին հանդիպումին, հանդիպեր էր նաեւ իր ազգակից կարդինալ Աղաճանեանին:

Եկեղեցասէր Հոգեւոր Տէրը

Յովհաննէս-Պետրոս ԺԸ. հգեւոր տիրոջ անխոնջ ջանքերով վերաբացուեցաւ Հայաստանի ու Վրաստանի հայ կաթողիկէ առաքելական փոխանորդութիւնը եւ անոր հետ միասին ստեղծուեցաւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէ թեմը: Այս ծիրին մէջ, ան օծեց ութ նորակերտ տաճարներ ու եկեղեցիներ, զանազան գաղթօճախներու մէջ: Հետեւեալ շարքով.-

- 4-24 Մայիս 1983.- օծում Նարեկի Աստուածամօր եկեղեցւոյ, Մոնրէալ, Քանատա.
- Դեկտեմբեր 1984.- օծում Ս. Խաչ եկեղեցւոյ, Զալքա, Լիբանան.
- 11-17 Մայիս 1991.- օծում Ս. Սիրտ Յիսուսի եկեղեցւոյ, Լիթըլ Ֆոլս, Միացեալ Նահանգներ.
- 22-28 Ապրիլ 1993.- օծում Ս. Խաչ եկեղեցւոյ, Հալէպ, Սուրիա.
- 16-21 Նոյեմբեր 1993.- օծում Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, Թորոնթօ, Քանատա.
- 11-13 Դեկտեմբեր 1993.- օծում Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, Տէր-Զոր, Սուրիա.
- 8-15 Սեպտեմբեր 1997.- օծում Ս. Խաչ եկեղեցւոյ, Պոստոն, Միացեալ Նահանգներ.
- 18 Հոկտեմբեր 1998.- օծում Նարեկի Տիրամայր աթոռանիստ տաճարին, Պաղտատ, Իրաք:

Հրաժարում

3 Սեպտեմբեր 1999ին, Զմմառու վանքին մէջ, հազիւ բոլորած իր կեանքի եօթ տասնամեակը, Յովհաննէս Պետրոս Գասպարեան կաթողիկոս-պատրիարքը անակնկալօրէն կու տար իր հրաժարականը իր կաթողիկոս-պատրիարքի պատասխանատուութիւններէն՝ ահաւոր ցնցում ու զարմանք պատճառելով բոլորին, նաեւ ստանալով զօրակցական ու յարգանքի բազմաթիւ վկայութիւններ: Այնուհետեւ, ան անաղմուկ առանձնացաւ սկիզբը Հռոմ, Լեւոնեան քահանայապետական դպրեվանքը, ապա Զմմառու մայրավանքը:

Վախճանում

16 Յունուար 2011ին, 84 տարեկանին իր մահկանացուն կնքեց հայ կաթողիկէ համայնքին 'հայրիկը' ու իր հիւծած ու միւռօնաբոյր մարմինը ամփոփուեցաւ Զմմառու միաբան կաթողիկոս-պատրիարքներու դամբարանին մէջ, Զմմառու վանքին մայր եկեղեցւոյ խորանին առջեւ:

ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԹԱՐՄՈՒՆԻ (ԱՆԴԱՄ՝ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԹԵՄԻՆ) 1999-2015

Հովուութիւն կը նշանակէ ամէնօրեայ նուիրում, ամէնօրեայ ներկայութիւն, ամբողջ ժամանակը տրամադրել հօտին, բաժնեկցելով անոր ցաւը,

դժուարութիւնները, յաղթահարելով խոչընդոտները, եւ այդպիսով դառնալով իսկական քաջ եւ բարի հովիւ: Յամառ աշխատող, յաճախ մինչեւ լուսաբաց, ծրագրուած գործ մը պէտք էր լիուլի կատարուէր եւ բարձր որակով: Նպատակը տկարութիւն չէր ճանչնար: Այսպիսի՛ն էր Գասպարեան կաթողիկոս-պատրիարքը յաջորդող Ներսէս Պետրոս Թարմունի կաթողիկոս-պատրիարքը, տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց քաջ ու բարի հայ հովիւը, որ 16 տարիներ սիրոյ եւ նուիրումի զգացումներով տոգորուած, առաջնորդեց իր հօտը: Հոգեւոր կեանքի մարդ՝ ան բարձր ու վեհ ոգեւորութեամբ լի հոգեւորականն էր, ձեռքին ունենալով ցուպը, խաչն ու Աւետարանը:

Կենսագրութիւն

Պութրոս Թազա ծնած է 17 Յունուար 1940ին, Գահիրէ, հինգերորդը՝ ութ զաւակներով օրհնուած հաւատացեալ մարտինցի «Թազա» ընտանիքին մէջ: Իր նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Գահիրէի Ֆրէրներու քոլէճներուն մէջ:

Կանուխէն քահանայական կոչումը զգալով, ան ղրկուած է Հռոմ, Լեւոնեան քահանայապետական հայ դպրեվանքը, եւ յաճախած Գրիգորեան Համալսարանը, փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն ուսանելու: Քահանայ ձեռնադրուած է Գահիրէ, 15 Օգոստոս 1965ին եւ ստանձնած Գահիրէի հայ կաթողիկէ աթոռանիստ եկեղեցւոյ ժողովրդապետութեան պատասխանատուութիւնը:

1968-90՝ եղած է Հելիոպոլսոյ (Գահիրէ), Ս. Թերեզա եկեղեցւոյ ժողովրդապետ, յատկապէս քաջալերելով զանազան հոգեւոր շարժումներու գործունէութիւնը: 1990ին կը յաջորդէ զղարթահայ գերապայծառ տէր Ռաֆայէլ եպիսկոպոս Պայեանի իբր առաջնորդ Աղեքսանդրիոյ հայ կաթողիկէ թեմին ու 18 Փետրուար 1990ին կը ստանայ եպիսկոպոսական օծում, իսկ 7 Հոկտեմբեր 1999ին հայ կաթողիկէ եպիսկոպոսաց սիւնհոդոսին կողմէ կ'ընտրուի կաթողիկոս-պատրիարք տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց եւ կ'որդեգրէ Ներսէս Պետրոս ԺԹ. անունը, իսկ իր ընտանեկան «Թազա» մականունը հայացնելով կը վերածէ «Թարմունի»ի ու կը վերակոչուի Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունի, կաթողիկոս-պատրիարք տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց՝ նշանակալից ապացոյց ու վկայութիւն իր ապագայ ազգային ներդրումներուն:

Գահակալութեան պատգամ

Թարմունի կաթողիկոս-պատրիարք իր գահակալութեան պատգամով կը խոստանար. «*Հայ առաքելական քոյր եկեղեցւոյ հետ պիտի ներշնչուին[ք] հզօր եւ եղբայրական միութենական ոգիէ մը, թէ՛ Էջմիածինի Աթոռին հետ, թէ՛ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին հետ – համոզուած - որ մեր ժողովուրդին գերագոյն բարիքը կը պահանջէ իր առաջնորդները ձեռք ձեռքի*

աշխատին ազգին բարիքին համար»[14]: Արդար է ըսել, թէ ան իր խոստումը անսասանօրէն յարգեց:

Հովուական թուղթեր

Զատկուան, Ծննդեան տօներու եւ այլ առիթներու իմաստալից ու բծախնդրութեամբ պատրաստուած պատգամներէն անջատ, Թարմունի կաթողիկոս-պատրիարքը հրապարակեց բազմաթիւ, դիպուկ խորագրերով հայրապետական հովուական թուղթեր ու կոնդակներ նուիրուած՝ զանազան առիթներու ու նիւթերու, խօսեցաւ նաեւ քարոզներ ու ճառեր:

Ան Զատկուան եւ Ծննդեան տօներու պատգամներէն բացի, տուաւ հետեւեալ Հայրապետական պատգամները.-

- 3 Դեկտեմբեր 1999.- Փրկչագործութեան յոբելենական Ս. տարուան (1999-2000) առիթով.
- 31 Դեկտեմբեր 2000.- Հայաստանի քրիստոնէացման 1700ամեակին առիթով.
- 1 Յունիս 2001.- Նահատակ Իգնատիոս եպիսկոպոս Մալոյեանի նուիրուած.
- 15 Հոկտեմբեր 2001.- Մեծ յոբելենական տարիներու առիթով.
- 12 Սեպտեմբեր 2002.- Հռոմ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի արձանի բացումին առիթով.
- 1 Հոկտեմբեր 2002.- Հայաստանի քրիստոնէացման 1700ամեակին առիթով.
- 30 Հոկտեմբեր 2004.- Ամէնասուրբ Հաղորդութեան տարիին առիթով.
- 24 Ապրիլ 2005.- Հայոց Ցեղասպանութեան 90րդ տարելիցին առիթով.
- 22 Փետրուար 2006.- Ս. Վարդանանց տօնին առիթով.
- 14 Մարտ 2007.- Երիտասարդներուն՝ քառասնորդացի առիթով.
- 15 Հոկտեմբեր 2007.- Աստուծոյ գթութեան մասին, առաջին համաշխարհային առաքելական համաժողովին առիթով.
- 3 Փետրուար 2008.- Քառասնորդացի առիթով.
- 6 Յունուար 2010.- Քահանայական տարուան առիթով.
- 3 Մարտ 2011.- Քրիստոնէական դաստիարակութեան եւ հայ կաթողիկէ վարժարանի առաքելութեան մասին.
- 6 Յունիս 2013.- Նոր աւետարանումը այսօր.
- 21 Մարտ 2015.- Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին առիթով:

Հայ դպրոցին առաքելութիւնը

Երջանկայիշատակ Ներսէս Պետրոս ԺԹ. հոգեւոր տէրը, տեսլականով ու վճռականութեամբ տոգորուած, միշտ խանդավառութեամբ թիկունք կանգնած է մասնաւորապէս Լիբանանի հայ կաթողիկէ համայնքի վարժարաններու ծաղկումին ու վերելքին: Քաջալերած է հայերէնի ուսուցիչներու մանկավարժական եւ մասնագիտական վերապատրաստման եւ առնչակից

[14] *Աւետիք* Յաւելուած 5, Պէյրութ, 2016:

ծրագիրեր, իր օրհնութեամբ Պէյրութի մէջ, 2012ին, հիմնադրուած է Ս. Գրիգոր Նարեկացի կեդրոնը՝ դպրոցական հայագիտութեան զարգացման համար[15]: Պուրճ Համուտի մէջ գործող Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանի 75ամեակին առթիւ արտայայտուելով, հոգեւոր տէրը կը հաւաստէր. «*Հայ դպրոցը գրաւականն է հայապահպանութեան, որուն գլխաւոր յենարանը՝ հայ ընտանիքն է, հայ ծնողքը,- ու կը շեշտէր,- հայ դպրոցին ուսերուն կը ծանրանայ այսօր, օրինապահ, հաւատարիմ ու յարգանքի արժանի քաղաքացիներ պատրաստելու պարտականութիւնը, որպէսզի ամէն երիտասարդ հայ դառնայ յեւտագային իր ժողովուրդի քաղաքակրթութեան ու մարդկային արժանիքներու դրօշակակիրը, եւ հայութեան պահանջատիրական ձայնը լսելի դարձնէ միջազգային մարմիններէն ու շրջանակներէն ներս*»[16]:

Ան քաջալերած է նաեւ լրատուական միջոցները, յատկապէս վերահրատարակութիւնը ապահովելով պատրիարքութեան *Մասիս* ամսաթերթին, ինչպէս նաեւ ընթացք տալով նոր ծրագիրերու: Իր օժանդակութեանբ, լոյսին եկաւ լիբանահայ իրականութեան մէջ իր տեսակով խիստ իւրայատուկ *Հայ Մանկավարժ* ամսագիրը[17]: Նոյն այդ շրջանին ան սատարեց «Լուսամուտ» եւ «Լոյս Զուարթ» պատկերասփիւռի յայտագիրերու ծնունդին, գործակցութեամբ լիբանանեան «Թելէ Լիւմիէր» քրսիտոնէական կայանին:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Առանց նկատի ունենալու իր առողջական դիւրաբեկ վիճակը, հայրապետական ցուպը ձեռքին, հոգեւոր տէրը այցելեց իր հօտը աշխարհի չորս ծագերուն:

Հայաստան եւ հայութիւն

Յարատեւօրէն, ան մօտէն կը հետեւէր Հայաստանի եւ Արցախի մէջ տիրող իրադարձութեանց: Նախանձախնդիր՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ հայ կաթողիկէ համայնքին ուրոյն տեղին, դիրքին ու արժանի յարգանքին եւ ներկայացուցչութեան: Այս ծիրին մէջ, ան դիմեց Հայաստանի ու Արցախի ազդեցիկ ու հեղինակաւոր կողմերու միջամտութեան ու բարեխօսութեան:

Արցախ

Յուլիս 2006ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահին հրաւէրով, հոգեւոր տէրը այցելեց Արցախ: Պատմական այս այցելութիւնը, դժբախտաբար, առողջական ծանր խանգարումի պատճառով, ընդհատեցաւ եւ անաւարտ մնաց: Այս իրադարձութիւնը աննախընթաց էր ու

---

[15] «Նարեկացի կեդրոնը ներկայացուց հայոց լեզուի ուսուցման ծրագիրներ», *Աւետիք*, Մայիս-Օգոստոս, 5-8:2012, էջ 158-60:

[16] *Աւետիք*, Մայիս-Դեկտեմբեր, 5-12:2013, էջ 38-40:

[17] *Աւետիք* Յաւելուած 5, 2013, էջ 38:

պատմական. հայ կաթողիկէ կաթողիկոս-պատրիարք մը երբեւէ չէր այցելած Ղարաբաղի տարածք, իսկ այս պարագային՝ Արցախի Հանրապետութիւն: Բազմանպատակ այս այցելութեան օրակարգերէն էր նաեւ ծանօթանալ Արցախի Հանրապետութեան, եւ մանաւանդ մասնակցիլ Շուշիի մշակութային «Ռոպերթ Պօղոսեան եւ Որդիք» հետազօտական կեդրոնի եւ վերականգնող թանգարանի օծման եւ բացման:

Գլխաւոր գործեր

Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունի կաթողիկոս-պատրիարք իր գահակալութեան տարիներուն բազմաթիւ յատկանշական իրագործումներ կատարեց, որոնց թուումը կը կարօտի երկար ժամանակի: Անոնցմէ յիշենք միքանին միայն.-

- Պէյրութի մէջ օծեց Զմմառու պատրիարքական միաբանութեան անդամ, թեմական եւ ամուսնացեալ 13 քահանաներ, որոնք ղրկուեցան ծառայելու զանազան թեմերու մէջ:
- Հոգեւոր տիրոջ խնդրանքին վրայ, 19 Յունուար 2005ին, ներկայութեամբ ու օրհնութեամբ սրբազան քահանայապետ Յովհաննէս-Պօղոս Բ.ի, Վատիկանի Ս. Պետրոս պազիլիքային - ուխտաւորներէ եւ զբօսաշրջիկներէ ամէնաշատը այցելուած գաւիթին - շրջակայ պարիսպին խորշին մէջ, մեծ հանդիսութեամբ կատարուեցաւ զետեղումը՝ դարերէ իվեր սպասուած Ս. Գրիգոր Լուսաւորիչի արձանին[18]: Իսկ Փետրուար 2008ին, իր նախաձեռնութեամբ, Բենեդիկտոս ԺՋ. սրբազան քահանայապետը փառաշուք բացումը կատարեց եւ օրհնեց Ս. Գրիգոր Լուսաւորիչի արձանին դիմացի գաւիթը, զայն կոչելով «Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հրապարակ»:
- Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին առթիւ, Վատիկանի Ս. Պետրոս պազիլիքային մէջ, 12 Ապրիլի 2015ին, Ֆրանչիսկոս քահանայապետը ընդառաջելով Ներսէս-Պետրոս ԺԹ. կաթողիկոս-պատրիարքի խնդրանքին, համապատարագեց ի ներկայութեան զոյգ վեհափառներու՝ Գարեգին Բ. ամէնայն հայոց եւ Արամ Ա. մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսներու, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութենէն եւ աշխարհի տարբեր կողմերէն ժամանած բազմահազար հայ ուխտաւորներու, որոնք համախմբուած էին Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի շուրջ: Ս. Պետրոս պազիլիքայի կամարներուն տակ հնչեցին հայածէս սուրբ պատարագի աղօթքները ու հայկական հիասքանչ շարականները: Յընթացս պատարագի Ֆրանչիսկոս քահանայապետը Ս. Գրիգոր Նարեկացին հռչակեց տիեզերական եկեղեցւոյ 36րդ վարդապետ, որով իրականացաւ 2005էն իվեր յամառօրէն հետապնդուող նպատակը: Սրբազան քահանայապետը իր արտասա-

[18] Քանդակին հեղինակն է նախկին լիբանահայ քանդակագործ, գեղանկարիչ Խաչիկ Գազանճեան (Գազան):

նած խօսքին մէջ յատկապէս յիշատակեց Հայոց Ցեղասպանութիւնը եւ անոր մէկուկէս միլիոն զոհերը՝ իբրեւ նահատակներ, եւ մեղսակցութիւն նկատեց լռութիւնը այս պատմական ողբերգութեան:

- Հայկական պահանջատիրութեան ձայնը աշխարհին լսելի դարձնելու նպատակով, սրբազան պապը Ս. Պետրոսի տաճարին աւագ խորանը տրամադրեց ներկայ Հայ Առաքելական Եկեղեցւոյ երկու վեհափառներուն, որոնք հոգեշունչ, հայրենասէր ու պահանջատէր պատգամներով հանդէս եկան:

Եկեղեցական այս արարողութիւնը սփռուեցաւ աշխարհի բազմաթիւ հեռուստակայաններէ, հասնելով 1,2 միլիար հեռուստատեսի եւ մեծապէս գնահատուեցաւ հայրենի պետական պաշտօնատարներու կողմէ:

Նաեւ Ներսէս Պետրոս ԺԹ.ի խնդրանքին վրայ՝ Վատիկանի պետութիւնն ալ մասնակցեցաւ հարիւրամեակի այս յիշատակութեան, հրատարակելով 2 դրոշմաթուղթեր: Սակայն դրոշմաթուղթերը գործածութեան դրուեցան 21 Սեպտեմբեր 2015ին, Թարմունի կաթողիկոս-պատրիարքի վախճանումէն ետք:

Մոսկուայի եւ համայն Ռուսաստանի հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը

Փետրուար 2002ին, Թարմունի կաթողիկոս-պատրիարք, հիմնեց առաջին ժողովրդապետութիւնը Մոսկուայի մէջ, նոր առաքելութիւն մը սկսելու համար Ռուսաստանի մէջ:

Վեցամսեայ շրջապտոյտը 2015ին

Հայ կաթողիկէ հոգեւոր տէրը Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարին, 2015ը ապրեցաւ յամառ ու եռանդուն կայտառութեամբ: Ան կ'ուզէր ամէն տեղ հասնիլ ու պանծացնել նահատակաց յիշատակը: Այս խնդրով, ան ոչ մէկ ճիգ ու առիթ խնայեց, արհամարհելով իր առողջական լուրջ ու թերեւս վտանգաւոր վիճակը: Ճիշտ է, ան ֆիզիքապէս կը տառապէր, սակայն նպատակին վեհութիւնը զինք կը մխիթարէր ու կը սփոփէր: Քաջաբար տոկալով ու պայքարելով ան յարատեւեց ու հետեւողականօրէն ջանաց ի գործ դնել իր ծրագիրները:

Ստորեւ՝ 2015 առաջին վեցամսեակի իր ճամփորդութիւնները.-

1) Չորեքշաբթի 21 Յունուար 2015ին ան ժամանեց Իրան՝ Թեհրանի հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ աթոռանիստ եկեղեցւոյ օծման 60ամեակի եւ Չիլոյեան հանգստեան տան 50ամեակի միջոցառումներուն մասնակցելու:

2) ՀՀ նախագահին եւ երկու վեհափառներու կողքին, 29 Յունուար 2015ին Երեւանի մէջ ան մասնակցեցաւ Կոմիտասի Պանթէոնի բացման արարողութեան:

3) Նոյն օրը յետմիջօրէին, մասնակցեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի 5րդ նիստին:

4) Նոյն երեկոյեան նախագահ Սերժ Սարգսեան՝ յանձնաժողովի անդամներուն եւ ընդլայնուած նիստի մասնակիցներուն հետ այցելեց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ծաղկեպսակ զետեղեց Մեծ Եղեռնի զոհերու յուշարձանին: Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին դիմաց այնուհետեւ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի համահայկական հոչակագրի հրապարակման արարողութիւնը: Փաստաթուղթը ընթերցեց նախագահ Սերժ Սարգսեան եւ Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի որոշման համաձայն, Հոչակագրին մայր օրինակը յանձնեց Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտին: Ապա, հանրապետութեան նախագահը նշեց, որ Հոչակագրին մէկ օրինակը կ'ուղարկուի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան գլխաւոր քարտուղարին եւ մէկ օրինակը պիտի յանձնուի Հայաստանի Հանրապետութեան ազգային արխիւին:

5) Գլխաւորեց հայ կաթողիկէ եպիսկոպոսաց յատուկ սիւնհոդոսը՝ 24-28 Փետրուար 2015ին, Հռոմի քահանայապետական Լեւոնեան դպրեվանքին վարժարանին մէջ:

6) 12 Ապրիլ 2015ին, Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին առթիւ համապատարագեց Վատիկանի Ս. Պետրոս պազիլիքային մէջ:

7) 23 Ապրիլ 2015ին ներկայ եղաւ Ս. Էջմիածնի մէջ Հայոց Ցեղասպանութեան նահատակներու սրբադասման արարողութեան:

8) Շաբաթ 25 Ապրիլ 2015, յետմիջօրէին, Պուտափեշտի Ս. Ստեփանոս մայր տաճարին մէջ հայածէս հանդիսաւոր պատարագ մատուցեց աւելի քան 2000 հաւատացեալներու ներկայութեամբ:

9) Երկուշաբթի 27 Ապրիլ 2015ին այցելեց Ռուսիոյ Վենիով քաղաքի հայ կաթողիկէ համայնքին:

10) 29 Ապրիլ 2015ին հանդիպում ունեցաւ Մոսկուայի եւ համայն Ռուսիոյ պատրիարք Կիրիլի հետ:

11) Հինգշաբթի 21 Մայիս 2015ին հովուական այցելութեամբ ժամանեց Պուտափեշտ, Հունգարիա:

Այս ծանրաբեռնուած օրակարգին պէտք է աւելցնել այն բոլոր ձեռնարկները որոնք տեղի ունեցան Լիբանանի մէջ եւ որոնք հոգեւոր տիրոջ հովանիին տակ կազմակերպուած էին, եւ որոնց անպայմանօրէն կը մասնակցէր եւ յաւուր պատշաճի իր խօսքը կ'արտասանէր, առանց յոգնութիւն կամ ֆիզիքական անհանգստութիւն ցուցաբերելու:

Վախճանումը

Ներսէս-Պետրոս ԺԹ. կաթողիկոս-պատրիարքը վախճանեցաւ 25 Յունիս 2015ին, Պէյրութի մէջ, սրտի կաթուածէ, սպառած՝ իր ֆիզիքական ուժերէն, 75 տարեկան հասակին, ետին թողլով նուիրեալ հովիւի եւ սրբակենցաղ հայրապետի համբաւը: Հայ Կաթողիկէ Եկեղեցին կորսնցուց գթասիրտ համայնքապետը, եռանդուն եւ հեղինակաւոր հոգեւոր գործիչը եւ հայ կաթողիկէ վարժարաններուն հայրապետը:

Իր գահակալութեան 16 տարիներուն ամէնամօտիկ գործակիցներէն մին ըլլալով, անձնական վկայութեամբ կրնամ հաւաստել որ ան եղաւ Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին հայ կաթողիկէ կաթողիկոս-պատրիարքը:

Յետմահու պարգեւատրում

Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի մասնակիցները իրենց 2015 Սեպտեմբեր 16ի նիստի օրակարգի հարցերու քննարկման անցնելէ առաջ մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին յանձնաժողովի անդամ, Սփիւռքի մէջ հայապահպանութեան գործին բացառիկ ներդրում բերած տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց կաթողիկոս-պատրիարք, երջանկայիշատակ Ներսէս-Պետրոս ԺԹ.ի յիշատակը: Հայաստանի Հանրապետութեան նահագահը տեղեկացուցած էր յանձնաժողովի անդամներուն որ ի նշանաւորումն պատրիարք Ներսէս-Պետրոս ԺԹ.ի երկնային ճանապարհի, հաշուի առնելով անոր հսկայածաւալ ազգանուէր գործունէութիւնը՝ հրամանագիր ստորագրած է անոր յետմահու Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշանով պարգեւատրելու մասին: Շքանշանը յանձնուած էր յանձնաժողովի նոր անդամ, տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց նորընտիր կաթողիկոս-պատրիարք Գրիգոր-Պետրոս Ի.ին[19]:

Մեր բոլորին համար երջանկայիշատակ **Յովհաննէս Պետրոս ԺԸ. Գասպարեան** եւ **Ներսէս Պետրոս ԺԹ. Թարմունի կաթողիկոս-պատրիարքները** պիտի մնան համեստութեան, բարութեան ու ծառայութեան տիպար օրինակներ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

[19] «Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը կը յարգէ երջանկայիշատակ Ներսէս Պետրոս ԺԹի. յիշատակը», *Աւետիք*, 7-12:2015, էջ 135-38:

TWO EGYPTIAN ARMENIAN CATHOLICOS-PATRIARCHS AS HEAD OF THE CATHOLIC ARMENIAN COMMUNITY WORLDWIDE, HIS BEATITUDE KASBARIAN AND HIS BEATITUDE TARMOUNI (Summary)

Raphael Oumoudian
raphael.oumoudian@gmail.com

Since the reestablishment of the Catholic Armenian Patriarchate in 1742, two Egyptian Armenian priests have headed the Catholic Armenian community worldwide, namely His Beatitude Bedros XVIII Kasbarian and His Beatitude Nerses Bedros XIX Tarmouni.

The paper focuses on their service to the Catholic Armenian Church. They did all they could to establish brotherly relations with the churches of other Armenian denominations, and established a strong relationship between the Lebanese Armenian community and the other Christian communities of Lebanon. On several occasions this relationship was expressed through extensive collaboration in spiritual, cultural, religious, church, social and philanthropic matters. They were instrumental in developing a space for intra-Christian and interreligious dialogue, which reflected positively on all the communities of Lebanon and the Catholic Armenian community worldwide.

Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն եւ Եգիպտահայութիւնը (1964-1990)

Վլադիմիր Պօղոսեան
vlad.poghosyan@mfa.am

ՄՈՒՏՔ

Եգիպտոսում հայերի ներկայութեան մասին վկայութիւնների հանդիպում ենք դեռեւս հնագոյն ժամանակներից. հայ եւ օտար մատենագիրները յիշատակում են Ք.ա. առաջին հազարամեակում հայ-եգիպտական առնչութիւնների մասին[1]:

Եգիպտոսի հայ համայնքը, ի տարբերութիւն արաբական միւս երկրների, ձեւաւորուել է դեռեւս միջնադարում[2]: Ըստ տուեալ ժամանակշրջանի պատմիչների[3]՝ Արցախի, Սիւնիքի, Տարօնի հայկական զօրամիաւորումներ հասել են Եգիպտոս՝ վերջինիս աջակցելու օտար նուաճողների դէմ պայքարում: Աւելի քան պատկերաւոր այս փաստն արտայայտւում է հայկական *Սասունցի Դաւիթ* դիւցազնավէպում, որտեղ Մըսրի երկրում հասակ առած Դաւիթը մարմնաւորում է հայ զինուորների հաւաքական կերպարը:

---

[1] Եգիպոսում կամ, ինչպէս հայերն են հնում անուանել, Մսըրում հայրերը բնակուել են նոյնիսկ փարաւոնեան շրջանում: Դեռեւս Ք.ա. Ա. դարում Եգիպտոսի կառավարիչ եւ պատմիչ հռոմէացի Սալլիւստոսը իր աշխատութեան մէջ յիշատակում է հայերի մասին: Իսկ Զ. դարում բիւզանդական պատմիչ Պրոկոպոիոս Կեսարացին յայտնում է, որ Եգիպտոսում հայկական զօրամասեր են տեղակայուած եղել: Այս շրջանում միքանի հայեր զբաղեցրել են նաեւ Եգիպտոսի կառավարչի պաշտօնը. յիշատակւում են Ներսէս Բասենցու, Արտաւան Արշակունու, Հերակլի անունները:

Մեզ հասած վաւերագրերից պարզ է դառնում, որ Եգիպտոսում միայն հայ զինուորականներ չեն ապրել, այլ արդէն գոյութիւն է ունեցել հայ համայնք, քանի որ յիշատակւում է նաեւ հայ վանականների եւ առեւտրականների մասին:

[2] Եգիպտոսի հայ համայնքը ծաղկում է ապրել Ֆաթիմեան Դարաշրջանում (969-1171): Հայ պատմիչ Մատթէոս Ուռհայեցին վկայում է, որ դեռեւս Ժ. դարում Եգիպտոս են գաղթել շուրջ 30 հազար հայեր (Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1973, էջ 139): Այս շրջանում հայերն ազդեցիկ դեր են ունեցել պետութեան կառավարման մէջ: Յիշատակւում են Բադր ալ Ջամալին, Բեհրամ ալ Արմանին (Վահրամ Պահլաւունի՝ Ս. Ներսէս Շնորհալու հօրեղբայրը), ալԱֆդալը, ալՋույուշին, Եանիսը, Թալայ բին Ռուզզիքը, Իբն Ռուզէք Սալիհը եւ այլք: Վերջիններիս գործունէութիւնն ու ներդրումն Եգիպտոսի պատմութեան մէջ այնքան մեծ է եղել, որ Եգիպտոսի պատմութեան ականաւոր մասնագէտներից ֆրանսիացի արեւելագէտ Գաստոն Վիթը այս ժամանակաշրջանն անուանել է «հայկական շրջան»:

[3] Ուռհայեցի, էջ 152-53:

Ի տարբերութիւն միւս երկրների, Եգիպտոսն իր տեսակով առանձնանում է հայկական ներկայութեան բացառիկ պատմագրութեամբ: Իրականում, փոքր գաղթօջախ լինելով հանդերձ, եգիպտահայ համայնքը մշտապէս արժանացել է յատուկ ուշադրութեան եւ հետաքրքրութեան:

Դեռեւս ԺԹ. դարի առաջին կէսին, Եգիպտոսի ալբանական գահատոհմի հիմնադիր, եգիպտական նոր պետականութեան կերտողներից՝ Մուհամմէդ Ալի փաշայի վարչական եւ տնտեսական բարեփոխումներն իրենց դրական ազդեցութիւնն ունեցան նաեւ եգիպտահայ համայնքի վրայ: Նա թելադրում էր իր շրջապատին. «***Հայազգի պաշտօնեաներ ընտրէք, որովհետեւ նրանք իրենց պաշտօնը աւելի յստակ, աւելի խղճով ու եռանդով են կատարում եւ պետութիւնը հսկայ քայլերով առաջ տանում***»[4] (ընդգծումը մերն է –Վ.Պ.):

Չնայած վերը նշուած վկայութիւններին, այնուամէնայնիւ պէտք է փաստել, որ ինչպէս միւս բոլոր արաբական երկրներում, այնպէս էլ Եգիպտոսում դասական հայ համայնքը՝ իր հոգեւոր, կրթական, մշակութային կառոյցներով հանդերձ բիւրեղացած կազմաւորում է ստացել Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ (1925ին Եգիպտոսում հայ համայնքի թիւը կազմել է շուրջ 40,000)[5]: Հայ տարագիրները դարձան հիւրընկալ արաբ ժողովրդի քաղաքակրթութեան անբաժան մասնիկներից մէկը՝ հսկայական ներդրում ունենալով վերջինիս զարգացման ու առաջընթացի գործում: Հայ եւ արաբ եղբայրական ժողովուրդների պատմական սերտ առնչութիւններն իրենց արտացոլումն են ստացել քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային եւ մի շարք այլ բնագաւառներում[6]:

Եգիպտոսի հայ համայնքը այդ ժամանակամիջոցում Սփիւռքի առաջադէմ, կազմակերպուած եւ ազդեցիկ համայնքներից մէկն էր, բնաւ պատահական չէր, որ համահայկական երկու խոշորագոյն կառոյցները, որոնք մինչ օրս շարունակում են իրենց ազգանպաստ եւ հայրենանուէր գործունէութիւնը, հիմնադրուեցին հայահոծ Եգիպտոսում.

Այսօր, 15 Ապրիլ, Ս. Զատկի առաջին օրը ստորագրեալքս համախմբեալ ՚ի Գահիրէ, Նորին Վսեմ. Պօղոս Փաշայի ապարանքտ, կազմեցինք ընկերութիւն մը «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ, ըստ տրամադ-

[4] Ա. Ալպոյաճեան, *Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը)*, տպ. Նոր-Աստղ, Գահիրէ, 1960, էջ 61-62:

[5] *Հայերն աշխարհում*, *Հանրագիտարան համառօտ բառարան*, կազմ. Ա. Պետրոսեան, Ա. Իսոյեան, Կ. Խուդավերդեան, Հայագիտակ հրատ., Երեւան, 1995, էջ 40:

[6] *Հայ Սփիւռք հանրագիտարան*, Հայկական Հանրագիտարան հրատ., Երեւան, 2003, էջ 153-55:

րութեան եւ պայմանաց վերոգրեալ կանոնագրին, որ կը կրէ այսօրուան թուականն եւ մեր ստորագրութիւնը[7]:

1928 Մայիսի 28ին Գահիրէում հիմնուեց Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը՝ «Հայ կրթական եւ հրատարակչական համազգային ընկերութիւն» անունով[8]: Ընկերութեան հիմնադիր ինն անդամները (Համօ Օհանջանեան, Ստեփան Եսայեան, Գասպար Իփէկեան, Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան, Մինաս Խաչատուրեան, Սեդրակ Պալըգճեան, Յակոբ Պալըգճեան եւ Սարգիս Մալխասեան) կանոնադրութեան առաջին իսկ կէտով ամրագրեցին կառոյցի հիմնական առաքելութիւնը.

Հայ Կրթական եւ Հրատարակչական Համազգային Ընկերութեան նպատակն է հայ ժողովրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզուով եւ հայ հոգիով[9]:

1960-70ականներին, Արաբական Միացեալ Հանրապետութեան (1958ին Եգիպտոսը եւ Սիրիան ստեղծեցին ԱՄՀն Գամալ Աբդ ալՆասէրի գլխաւորութեամբ) ներքին տնտեսական քաղաքականութեան հետեւանքով խախտուեց աւանդական կացութիւնը եւ սկսուեց եգիպտահայութեան զանգուածային արտագաղթը[10] դէպի ԱՄՆ, Պրազիլ, Աւստրալիա, Քանատա եւ այլ երկրներ: Արտագաղթից յետոյ, 1976ին ներկայացուած տուեալների համաձայն, գաղթօջախում հաշւուում էր շուրջ 18 հազար հայ, որից 13,000ը Գահիրէում, իսկ 700ը Աղեքսանդրիայում: Յաջորդող 40 տարիների ընթացքում արաբա-իսրայէլեան մշտնջենական հակամարտութիւնը, «Արաբական գարունը» եւ երկրում իրար յաջորդող միքանի տնտեսական ճգնաժամերը աստիճանաբար նպաստեցին եգիպտահայ հայօճախի նօսրացմանը:

Ներկայումս Եգիպտոսում բնակւում են շուրջ 5000 հայեր[11]:

Այնուամէնայնիւ, գաղթօջախը շարունակում է իր մշակութային, գիտական, կրթական աշխուժ գործունէութիւնը եւ ջանք չի խնայում ազգապահպան գործունէութիւն ծաւալելիս: Եգիպտահայ համայնքը Եգիպտոսի իշխանութիւնների կողմից վայելում է ազգային ներքին գործերը վարելու լիակատար ազատութիւն:

---

[7] *Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, արծաթեայ յոբելեան, 1906-1931*, Փարիզ, 1935, էջ 14:

[8] *Հայ Սփիւռք հանրագիտարան*, էջ 160:

[9] https://hamaskaine.org/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6-full/?lang=hy

[10] *Հայ Սփիւռք հանրագիտարան*, էջ 154:

[11] Հրանուշ Յակոբեան, *Հայկական Սփիւռքը յարափոփոխ աշխարհում*, Հեղինակային հրատ., Երեւան, 2017, էջ 150:

Պէտք է նշել, որ եգիպտահայութիւնը մշտապէս յատուկ ուշադրութեամբ հետեւել է հայրենիքում կատարուող իրադարձութիւններին: Միւս կողմից, Սովետական Հայաստանի իշխանութիւնների, մտաւորական եւ արուեստագէտ խաւի, ինչպէս նաեւ սովետահայ հասարակութեան ուշադրութիւնը, անկախ քաղաքական դրդապատճառներից, խոչընդոտող այլ հանգամանքներից, մշտապէս սեւեռուած է եղել արտերկրի հայկական գաղթօջախներում ապրող իրենց հայրենակիցներին:

Այս ասպարէզում իրադարձային էր 1944 Սեպտեմբերի 12ին տեղի ունեցած Խորհրդային Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի բիւրոյի նիստը, որտեղ քննարկւում է սփիւռքահայութեան հետ մշակութային կապերի ընդլայնման անհրաժեշտութիւնը, որոշւում է Արտասահմանի Հետ Մշակութային Կապերի Համամիութենական Ընկերութեան Հայաստանի հարցերով լիազօր համակարգը վերակազմաւորել որպէս «Արտասահմանեան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերութիւն» (ՄԿՀԸ-ԱՕՀՀ): Մեծաւ մասամբ, ՄԿՀԸն իր շուրջ քսանամեայ գործունէութեամբ կարողացաւ հաւատարիմ մնալ իր առաքելութեանը՝ նպաստել Հայրենիք-Սփիւռք կապերի զարգացմանը: Վերջինս պէտք է ամուր հիմքեր ստեղծէր իրեն յաջորդող Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի (ՍՀՄԿԿ) անգնահատելի եւ լայնածաւալ գործունէութեան համար:

ՍՀՄԿԿն ստեղծուել է ՀԽՍՀ մինիստրների սովետի 1964 Մայիսի 26ի թիւ 226 որոշմամբ՝ «Արտասահմանեան Հայրենակիցների Հետ Մշակութային Կապերի Հայկական Կոմիտէ» (Армянскиı̆ комитет по культурным связям с соотечественниками за рубежом)[12] անունով: Մէկ ամիս անց, Յունիսի 25ին տեղի ունեցած ՍՀՄԿԿ հիմնադիր համագումարում (յիշատակենք, որ նիստին ներկայ է եղել նաեւ ամէնայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա. Պալճեանը) Մարտիրոս Սարեանի առաջարկութեամբ կառոյցը ստանում է «Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէ» անունը[13]:

Այս կառոյցի հիմնադրմամբ հայրենիքի եւ աշխարհասփիւռ հայութեան, այդ թւում նաեւ եգիպտահայութեան միջեւ միանգամայն այլ որակի գործակցութիւն ծաւալուեց, որը տեւեց մինչեւ ՍՀՄԿԿի լուծարումը՝ 1992 Յուլիսին:

Կառոյցի հիմնադիր համագումարում հաստատուած կանոնադրութեան համաձայն ՍՀՄԿԿի հիմնական նպատակներն ու խնդիրներն էին.-

1. Հաստատել եւ զարգացնել կապերը սփիւռքահայ գաղթօջախների հետ,

---

[12] Տե՛ս՝ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 2, թուղթ 1-2:

[13] Նոյն, ցուցակ 2, գործ 43, թուղթ 1:

2. Գաղթօջախների հայութեանը ծանօթացնել հայրենիքի կեանքին, ձեռքբերումներին, գիտութեանն ու մշակոյթին,

3. Գաղթօջախների հայութեան մէջ սերմանել հայրենասիրութիւն,

4. ՀԽՍՀի աշխատաւորներին ծանօթացնել գաղթօջախների, առաջադիմական կազմակերպութիւնների, ձուլման դէմ պայքարին եւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զարգացմանն ուղղուած աշխատանքներին:

Այս ամէնը իրականացնելու համար կարեւորւում էր.-

1. Առաջադիմական, դեմոկրատական ու հայրենասիրական կազմակերպութիւնների, բարեգործական ու մշակութային միութիւնների հետ կապերի հաստատումը,
2. Գաղթօջախներում հայրենիքի թերթերի տարածումը,
3. Աջակցութիւնը գաղթօջախներին,
4. Գաղթօջախների հրաւէրով արտասահման մեկնումը, տարբեր խմբերի ուղարկումը,
5. Գաղթօջախներից պատուիրակութիւնների հրաւիրումը հայրենիք,
6. Աջակցութիւնը սփիւռքահայ տուրիստներին,
7. Սփիւռքահայ նկարիչների ցուցահանդէսների կազմակերպումը, գրական երեկոների կազմակերպումը,
8. Սփիւռքահայ գրողների ստեղծագործութիւնների հրատարակումը[14]:

Արդարեւ, ժամանակը ցոյց տուեց, որ ՍՀՄԿԿն գրեթէ լիովին իրականացրեց իր առջեւ դրուած առաջադրանքները:

Արժանայիշատակ է ՍՀՄԿԿ ղեկավարներ Վարդգէս Համազասպեանի (1964-85), Կառլէն Դալլաքեանի (1985-91), Հրաչիկ Սիմոնեանի (1991-92) եւ աշխատակազմի արդիւնաւէտ, նուիրեալ աշխատանքը: Ելնելով փաստաթղթերի ուսումնասիրութիւնից՝ կարելի է եզրակացնել, որ վերջիններս յստակ պատկերացում են ունեցել եգիպտահայ համայնքի կառուցուածքի եւ կառավարման սկզբունքների մասին, որը ինքնին իրենից ներկայացնում էր բարդ ու խրթին համակարգ:

Ինչպէս Սփիւռքի ցանկացած գաղթօջախ, Եգիպտոսի հայ համայնքը նոյնպէս ունեցել է իր ուրոյն բնոյթը: Շնորհիւ նրանց շրջահայեացութեան եւ ճիշտ քաղաքականութեան՝ հնարաւոր է եղել ստեղծել ամուր կապ Սովետական Հայաստանի եւ եգիպտահայութեան միջեւ՝ ի մասնաւորի երկու երկրներում գործող արուեստագէտների, մշակութային գործիչների, գիտութեան եւ կրթութեան մշակների:

Անշուշտ, այս հմտութիւններին տիրապետելու համար հարկաւոր էր նախապէս մանրակրկիտ իւրացնել համայնքի ընդհանուր պատկերը, պատմութիւնը եւ կառուցուածքը: Եգիպտահայ համայնքի մասին ՍՀՄԿԿ կազմած տեղեկանքներում, ինչպէս նաեւ գործունէութեան հաշուետուութիւններում նշւում են մանրամասն տուեալներ՝ գաղթօջախի կառավար-

[14] Նոյն, ցուցակ 16, գործ 1, թուղթ 1-3:

ման եւ կառոյցների վերաբերեալ: Առանձնայատուկ շեշտադրմամբ ներկայացուում է Հայ Առաքելական Եկեղեցու, Հայ Աւետարանական եւ Հայ Կաթողիկէ Եկեղեցիների (վերջին երկու համայնքները համեմատաբար քիչ դաւանորդներ ունէին, սակայն նոյնպէս ծաւալել են հայապահպան աշխուժ գործունէութիւն), ՀԲԸՄի եւ հայ աւանդական երեք քաղաքական կուսակցութիւնների՝ ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ գործունէութեան բնագաւառները համայնքի ներսում (տեղեկանքում նոյնիսկ մանրամասն նշուել է կուսակցական ուժերի ազդեցութեան տեղաբաշխումը բոլոր բնագաւառներում):

Որպէսզի համակողմանի եւ ստոյգ պատկերացում կազմենք ՍՀՄԿԿ գործունէութեան մասին, ի մասնաւորի, եգիպտահայ համայնքի հետ տարուող աշխատանքների մասին, հարկ համարեցինք ոսպնեակի տակ վերցնել վերջինիս բոլոր բնագաւառները:

Ա. 1965-84ի ընթացքում Եգիպտոսի ազգային վարժարանները ներկայացնող 17-18 ուսուցիչներ մասնակցել են ՍՀՄԿԿ կողմից կազմակերպուած սփիւռքահայ ուսուցիչների[15] մէկ ամիս տեւողութեամբ վերապատրաստման ծրագրին[16]:

Կարեւոր ենք համարում այն փաստը, որ յատկացուած մէկ, նոյնիսկ երկու տեղը միշտ էլ չի բաւարարել եգիպտահայերին. վարժարանների տնօրէնների մշտական փափագն է եղել է՛լ աւելի շատ ուսուցիչներ ուղարկել Մայր Հայաստան[17]:

Յաւելենք, որ բացի սոյն ծրագրին մասնակցութիւնից, Հայ Առաքելական Եկեղեցու Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Զաւէն արքեպիսկոպոս Չինչինեանը, եգիպտահայ վարժարանների տնօրէնները դիմել են ՍՀՄԿԿին՝ Հայաստանում իրենց ուսուցիչներին հիւրընկալելու խնդրանքով, որպէսզի վերջիններիս հնարաւորութիւն տրուի ծանօթանալ մանկավարժական նորագոյն տեսութիւններին եւ դրանց արդիւնաւէտ կիրառմանը, իրենց սեփական աչքերով տեսնելու Հայաստանը[18]:

Իհարկէ այս ասպարէզում նաեւ որոշակի թերութիւններ են եղել, դատելով Նուաբեան ազգային վարժարանի տնօրէն Ա. Մովսէսեանի Համազասպեանին ուղղած նամակից՝ նկատում ենք, որ վարժարանը բաւականին երկար ժամանակ մայրենի լեզուի ուսուցչի կարիք է ունեցել, որի գործուղման հարցը առկախուել է: Ցաւօք, արխիւային փաստաթղթերում չկարողացանք գտնել սոյն նամակագրութեան շարունակութիւնը՝ պարզելու համար թէ ի՛նչ հանգուցալուծում է ստացել վարժարանի տնօրէնի խնդրանքը:

---

[15] Նոյն, ցուցակ 9, գործ 112, թուղթ 18:

[16] Նոյն, գործ 109, թուղթ 31:

[17] Նոյն, ցուցակ 8, գործ 159, թուղթ 47:

[18] Նոյն, գործ 125, թուղթ 13:

Բ. Եգիպտահայ համայնքը բաւականին մեծ ուշադրութիւն է դարձրել հայ մատաղ սերնդին որակեալ կրթութեամբ ապահովելու խնդրին: Դրա վառ ապացոյցն է Եգիպտոսում կրթական գործունէութիւն ծաւալած մօտ 40ի հասնող հայկական վարժարանների, կրթարանների եւ մանկապարտէզների քանակը[19]: Համայնքի նօսրացմանը զուգահեռ աստիճանաբար փակւում են նաեւ վերոյիշեալ կրթական հաստատութիւնները: ՍՀՄԿԿ գործունէութեան ընթացքում Եգիպտոսում գործել են Գահիրէի Գալուստեան, Նուպարեան եւ Աղեքսանդրիայի Պօղոսեան վարժարանները, (վերջիններին կից գործել են նաեւ մանկապարտէզներ): Չնայած, որ համայնքում աշակերտների թիւը բարձր է եղել եւ վերջիններիս ընտանիքների, ուսուցիչների, տնօրէնների ցանկութիւնը մեծ է եղել զաւակներին ուղարկել Հայաստան, այնուամէնայնիւ, պայմանաւորուած՝ քաղաքական, տնտեսական, ինչպէս նաեւ պատշաճ կազմակերպման մի շարք խնդիրներով եւ դժուարութիւններով, ի տարբերութիւն միւս՝ Լիբանանի, Սիրիայի, Իրաքի հայ համայնքների, ՀԽՍՀ բուհերում շատ քիչ եգիպտահայ ուսանողներ են ընդունուել, վերջիններիս քանակը չի հասել նոյնիսկ 10ի:

Փոխարէնը վարժարանի, առաջնորդարանի եւ միութիւնների նախաձեռնութեամբ եւ ՍՀՄԿԿ աջակցութեամբ պարբերաբար կազմակերպուել են երիտասարդների այցերը մայր հայրենիք: Այստեղ նաեւ պէտք է նկատել, որ նախաձեռնողների կողմից նախապէս կազմակերպուել են հայրենաճանաչողական, Սովետական Հայաստանի նուաճումների մասին դասընթացներ, դրանց հետեւել են աւարատական քննութիւններ եւ արդիւնքում ընտրուել են լաւագոյն երիտասարդները, որոնք իրենց առաջադիմութեան համար արժանացել են Մայր Հայաստանը տեսնելու բաղձալի պատուին:

Այս առիթով Գալուստեան Ազգային Վարժարանի տնօրէն Նշան-Արշաւիր Վարդեանը գրում է. «*Յուսով ենք որ այս այցելութիւնը նախընթաց մը կը ստեղծէ եւ կ'ամրապնդէ Հայրենիք եւ Գահիրէ երիտասարդական փոխյարաբերութիւնները նպաստելով մասնաւորապէս մեր երիտասարդներուն ի խնդիր անոնց հայրենասիրութեան, մշակութային եւ արուեստի մտահորիզոնի լայն պատրաստութեան*»[20]:

Հայ Գեղարուեստասիրաց Միութեան վարչութեան ատենապետ Ժիրայր Թովմասեանը գրում է. «*Սպասելով Ձեր դրական պատասխանին, որպէսզի նախաձեռնութիւնը յաջողութեամբ պսակուի, որովհետեւ, մեր երիտասարդութիւնն է մեր ապագան եւ մեր գոյատեւման յոյսը, յաջողութիւն կը մաղթենք Ձեր հայրենանուէր մեծ գործին*»[21]:

---

[19] Ս.Ն.Պայրամեան, *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ*, Նուպար տպ., Գահիրէ, 2017, էջ 2-4:

[20] Նոյն, ցուցակ 9, գործ 112, թուղթ 9-10:

[21] Նոյն, թուղթ 57-58:

Եգիպտահայ աշակերտներին (տարիքը չպէտք է գերազնացէր 14ը) Հայաստանի պիոներական ճամբարներում (հիմնականում Հանքաւանում եւ Կիրովականում) մէկամսեայ հանգիստ անցկացնելու համար ՍՀՄԿԿ կողմից տարեկան յատկացուել 3-5 տեղ[22]:

«Ռոդինա» համամիութենական ընկերութեան հաստատմամբ ՍՀՄԿԿն իր միջազգային կապերի ծրագրով պարբերաբար կազմակերպել է աշակերտների, ուսանողների խմբերի ճանաչողական այցեր դէպի Հայաստան: Այցերի կազմակերպման ընթացքում եղել են դէպքեր, երբ ՍՀՄԿԿն ընդառաջել է եգիպտահայ համայնքի ղեկավարների խնդրանքներին եւ նախատեսուած 5 աշակերտների փոխարէն ընդունել 20 աշակերտ[23]:

Չնայած ուսուցիչներին, աշակերտներին, ուսանողներին պարտադրւում էր սովետական գաղափարախօսութիւնը, պրոպագանդան եւ մեզ քաջածանօթ այլեւայլ երեւոյթներ, այնուամէնայնիւ, նմանատիպ այցելութիւնները անչափ արդիւնաւէտ կարելի է գնահատել, քանի որ իւրաքանչիւր սփիւռքահայ Հայաստանում կրթութիւն ստանալով վերադառնում էր հարուստ փորձառութեամբ եւ գիտելիքներով՝ նոր լիցքեր ու ազդակներ հաղորդելով հայ համայնքին: Անկասկած այս այցելութիւնները դրական ազդեցութիւն են ունեցել վերջիններիս հոգեկերտուածքի վրայ, այդուհետ նրանք ամուր թէլերով կապուել են մայր հայրենիքին: Հայ Գեղարուեստասիրաց Միութեան վարչութեան ատենապետ Ա. Տեփոյեանը գրում է. «*Արդարեւ մեր ուսանողները ոչ միայն խանդավառուած ու հիացած են հայրենիքի իրականութեամբ այլ նաեւ լիցքաւորուած՝ հայրենասիրական կենսաւորոգ զգացումներով եւ ապրումներով: Հայրենիքը, անոր տեսարժան վայրերը, ստեղծագործ կեանքը եւ փայլուն իրագործումները դարձած են մեր երիտասարդութեան խօսակցութեան առօրեայ նիւթը եւ հոգեկան սնունդ ու կենսունակութիւն պարգեւող աղբիւրը: Ահա որքան կենսական նշանակութիւն ունի ձեր կոմիտէի գործունէութիւնը սերունդներու հայապահպանումի ուղղութեամբ*»[24]:

Հայ Առաքելական Եկեղեցու Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Զաւէն արք. Չինչինեանը գրում է. «*Գիտենք, թէ շատ կարեւոր փոփոխութիւն կ'ունենան մեր աշակերտները երբ մայր հայրենիք այցելութեան կ'երթան եւ կը վերադառնան, աւելի կը սիրեն մայր լեզուն, հայոց գրականութիւնը եւ մայր հայրենիքը*»[25]:

Գ. ՍՀՄԿԿն մշտապէս կապի մէջ է եղել եգիպտահայ մշակութային կազմակերպութիւնների հետ, որոնց միջոցով կազմակերպուել են փորձի

---

[22] Նոյն, ցուցակ 9, գործ 112, թուղթ 18. նաեւ՝ ցուցակ 6, գործ 574, թուղթ 72:

[23] Նոյն, ցուցակ 14, գործ 23 թուղթ 1:

[24] Նոյն, ցուցակ 6, գործ 574, թուղթ 43-44:

[25] Նոյն, ցուցակ 9, գործ 112 թուղթ 39:

փոխանակման ծրագրեր, փոխադարձ այցեր: Արխիւային փաստաթղթերում հանդիպում ենք գրեթէ բոլոր խոշոր մշակութային միութիւնների մասին ներկայացուած ամփոփ տեղեկատուութեանը, որտեղ նոյնպէս մանրամասն նշւում են միութիւնների յանձնախմբերի, ընդհանուր անդամների թիւը, կուսակցական պատկանելութիւնը եւ այլ տուեալներ:

Կարելի է հաստատել, որ ՍՀՄԿԿն մշտական կապ է ապահովել համայնքի բոլոր կառոյցների հետ, բացառութիւն չեն եղել երիտասարդական, մարզական կառոյցները, միութիւնները, նաեւ այլ հաստատութիւնները (Հայ Օգնութեան Կապոյտ Խաչ, Դարմանատուն, Ծերանոց եւն.): ՍՀՄԿԿ աշխատակիցները ամէնայն աչալրջութեամբ հետեւել են հայօճախում տեղի ունեցող իրադարձութիւններին, կառոյցի անդամների հետ մշտապէս պահպանել են յետադարձ կապ: Կառոյցներից[26], նրանց ներկայացուցիչներից եւ անհատներից[27] երկար ժամանակ լուրեր եւ նամակներ չստանալու դէպքում իրենք են գրել վերջիններին:

ՍՀՄԿԿ ջանքերով ինչպէս կառոյցների, այնպէս էլ անհատ ստեղծագործողների ու արուեստագէտների հետ ապահովուել է մշտական կայուն փոխադարձ կապ, որի շնորհիւ եգիպտահայ մի շարք ականաւոր ու աշխարհահռչակ արուեստագէտներ ներգաղթել են Սովետական Հայաստան եւ շարունակել ստեղծագործել մայր հայրենիքում (Գոհար Գասպարեան, Արմէն Թութունջեան, Միհրան Երկաթ եւն.):

Մշտապէս կազմակերպուել են սովետահայ արուեստագէտների, մտաւորականների, մշակոյթի գործիչների, լրագրողների այցերը Եգիպտոս, վերջիններս համերգներ են տուել, ելոյթներ, հանդիպումներ ունեցել Գահիրէում եւ Աղեքսանդրիայում: Պէտք է նշել, որ այցերի կազմակերպման համար նախաձեռնութիւն է ցուցաբերել ե՛ւ ՍՀՄԿԿն, ե՛ւ եգիպտահայ համայնքը: Իհարկէ, ՍՀՄԿԿն միջոցառումների կազմակերպման հարցերում իր նկատառումներն է ունեցել, որոնց մասին յայտնել է նաեւ հայօճախին[28]: Շատ յաճախ եգիպտահայ կառոյցներին, անձանց նուիրուած յոբելեանական միջոցառումների կազմակերպման համար Հայաստանից հրաւիրուել են արուեստագէտներ, մտաւորականներ, երաժիշտներ, երգիչներ եւն. (հրաւիրողները նոյնիսկ նշել են անունները, որոնց ցանկանում են հիւրընկալել): 1976 Դեկտեմբերի 23ի իր նամակում Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութեան վարչութեան ատենապետ Գ. Փիլիկեանը խնդրանքով դիմում է Համազասպեանին «*...Վարչութիւնը այսու կու գայ Ձեր Ազնուութեան հաղորդել թէ յառաջիկայ տարի 1977ին մեծ հանդիսութիւններով պիտի նշուի Միութեան հիմնադրութեան փառահեղ եօթանասուն եւ հինգ ամեակը:...Այս բարեպատեհ առիթով, կու գանք խնդրել*

[26] Նոյն, ցուցակ 9, գործ 109 թուղթ 51:

[27] Նոյն, թուղթ 53:

[28] Նոյն, ցուցակ 6, գործ 574, թուղթ 41:

Ձեզմէ որ Կոմիտէին հովանաւորութեամբ խումբ մը հայրենի հանրածանօթ արուեստագէտներ ուղարկուին Եգիպտոս, Աղեքսանդրիա թէ Գահիրէ, հրապարակային ելոյթներ ունենալու Միութեանս 75 ամեակին ի պատիւ: Կը խնդրենք նկատի ունենալ հետեւեալ անունները, որոնցմէ միքանին նախկին եգիպտահայեր ըլլալով մեծ ժողովրդականութիւն կը վայելեն մեր գաղութին մէջ. Գոհար Գասպարեան, Միհրան Երկաթ, Աննա Նշանեան, Բելլա Խուտինեան, Գարուշ Խաժակեան...»[29]:

ՍՀՄԿԿ կողմից եգիպտահայերը մշտապէս հրաւիրուել են մասնակցելու Սովետական Հայաստանի յոբելեանական կարեւոր միջոցառումներին, համահայկական եւ մասնագիտական (լրատուամիջոցների, խմբագրերի, գրողների, լրագրողների եւն.) համաժողովներին: Եգիպտահայ արուեստագէտների նկարիչների, քանդակագործների համար Սովետական Հայաստանում կազմակերպուել են անհատական ցուցահանդէսներ, վերջիններիս կողմից ուղարկուած ստեղծագործութիւնները ներկայացուել են նաեւ Հայաստանում կայացած այլ ցուցահանդէսների ընթացքում:

Վերոյիշեալ պարբերական այցերից եւ հաւաքներից զատ, յատկանշական է եգիպտահայութեան աշխուժ մասնակցութիւնը սովետահայ իրականութեան մէջ առաջին անգամ 1985 Օգոտոսին Երեւանում ՍՀՄԿԿ կողմից կազմակերպուած Սփիւռքի հայրենասիրական կազմակերպութիւնների գեղարուեստական գործունէութեան փառատօնին:

Թուարկուած խմբերից բացի նշենք, որ ՍՀՄԿԿ օժանդակութեամբ Հայաստան են այցելել նաեւ արդիւնաբերական, գործարար, տպագրական եւ այլ բնագաւառների եգիպտահայեր՝ Հայաստանում փորձի փոխանակման, գործարար կապեր հաստատելու համար:

ՍՀՄԿԿին ուղարկուած եգիպտահայերի նամակների ու փաստաթղթերի բովանդակութիւնից միանգամայն ակնյայտ է դառնում, որ վերջիններիս համար Հայաստան մեկնելը հանդիսանում էր մեծագոյն պարգեւ եւ իւրաքանչիւր ոք այն պէտք է վաստակէր երկարամեայ հայրենասէր ու նուիրեալ աշխատանքով:

Դ. Եգիպտահայ համայնքը մշտապէս եղել է Հայ Եկեղեցու եւ քաղաքական իշխանութեան ուշադրութեան կենտրոնում: 1965 Յունուարի 13-15ը Եգիպտոս է այցելել ամէնայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա. Պալճեանը: Ուսումնասիրելով նոյն թուականի *Էջմիածին* ամսագրի 9 էջ ծաւալով այցի[30] նկարագրութիւնը՝ կարելի է պնդել, որ վեհափառ հայրապետի այցը սպասուած էր եւ մեծ ոգեւորութիւն ու աննախադէպ խանդավառութիւն էր առաջացրել համայնքում: 1970ին մէկշաբաթեայ այցով Եգիպտոս է

---

[29] Նոյն, ցուցակ 6, գործ 574, թուղթ 49-50:

[30] «Վեհափառ հայրապետը Եգիպտոսում», *Էջմիածին պաշտօնական ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի*, Մայիս-Յունիս-Յուլիս, ԻԲ:1965, էջ 30-38:

մեկնել ՍՀՄԿԿ նախագահ Համազասպեանը, վերջինս աշխատանքային հանդիպումներ է ունեցել եգիպտահայ համայնքային կառոյցների ղեկավարների, ներկայացուցիչների հետ: ՀԽՍՀ Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինեանը 1972ին այցելել է Եգիպտոս եւ Գահիրէում հանդիպել եգիպտահայ համայնքի հետ:

Ե. Շնորհիւ ՍՀՄԿԿի՝ եգիպտահայ համայնքը տարիներ շարունակ հայրենիքից ստացել է գիտական, կրթական, մշակութային, մասնագիտական եւ ուսուցողական գրականութիւն, վարժարանների եւ մշակութային միութիւնների համար նախատեսուած աշխատանոցային եւ այլ սարքաւորումներ, Սովետական Հայաստանում հրատարակուող բազմաթիւ օրաթերթեր եւ ամսագրեր, որոնց շնորհիւ եգիպտահայութիւնը միշտ հնարաւորութիւն է ունեցել հետեւելու հայրենիքում կատարուած նուաճումներին, Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններին եւ տարէցտարի կատարուող փոփոխութիւններին:

Այս բնագաւառում ՍՀՄԿԿի աշխատանքի լաւագոյն վկայութիւնը եգիպտահայ կառոյցների ղեկավարների եւ ներկայացուցիչների բազում նամակներն են, որոնցում խորին երախտագիտութիւն է յայտնւում ՍՀՄԿԿին՝ առաքուած գրքերի, հայրենանուէր ու հայապահպան աշխատանքի համար[31]:

Հայ Առաքելական Եկեղեցու Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Զաւէն արք. Չինչինեանը Համազասպեանին ուղղած իր նամակում գրում է. «*Ամէն անգամ որ մայր հայենիքէն նոր գիրք եւ գրականութիւն սպրանք, խոր ուրախութեամբ կը լեցուինք:...Այս կապակցութեամբ եւ յամէնայնի հաճեցէք ընդունիլ մեր սրտագին եւ ամէնախոր շնորհակալութիւնները*»[32]:

Այստեղ պէտք է նշենք, որ գրքերի առաքման գործընթացում տարբեր հանգամանքների բերումով արձանագրուել են նաեւ որոշակի թերութիւններ՝ փոստային առաքման ուշացում, պահանջուած գրականութեան թերի առաքում եւն.: Նամակագրութիւնների մէջ հանդիպում ենք նաեւ վարժարանների տնօրէնների պարբերաբար կրկնուող խնդրանքներին՝ վերջիններս մշտապէս գրում են, որ մայրենի լեզուի գրեթէ բոլոր տարիների դասագրքերի մեծ պահանջարկ կայ: Դատելով անընդհատ կրկնուող նոյնաբովանդակ նամակներից՝ կարելի է եզրակացնել, որ ՍՀՄԿԿն ոչ-միշտ է կարողացել ապահովել եգիպտահայ համայնքի պահանջները եւ կարիքները[33]:

Պէտք է արձանագրել, որ եգիպտահայ մտաւորականները, գրականագէտները, գիտնականները, թերթի խմբագիրները Սովետական Հայաս-

---

[31] Նոյն, ցուցակ 9, գործ 122, թուղթ 3-4, թուղթ 6-8, թուղթ 40, թուղթ 54-55, թուղթ 64:

[32] Նոյն, թուղթ 19:

[33] Նոյն, ցուցակ 8, գործ 125, թուղթ 11. նաեւ՝ գործ 159, թուղթ 46:

տան են ուղարկել իրենց աշխատութիւնները, ուսումնասիրութիւնները՝ փորձի փոխանակման կամ պարզապէս Սովետական Հայաստանում իրենց հոգեւոր ներդրումն ունենալու համար: Իր հերթին ՍՀՄԿԿ ղեկավարութիւնը մեծապէս գնահատել է վերջիններիս հայրենանուէր ու ազգապահպան գործունէութիւնը եւ պատեհ առիթով խրախուսել նրանց պատուոգրերով[34] եւ շնորհակալագրերով:

Քննական վերլուծութեան ենթարկելով ՍՀՄԿԿ-եգիպտահայ համայնք գործակցութիւնը՝ ընդհանուր առմամբ կատարուած ողջ աշխատանքը կարող ենք գնահատել դրական. այն հնարաւորութիւն ընձեռեց ամրապնդելու եւ զարգացնելու հայրենիք-եգիպտահայ համայնք կապերը: Այդ գնահատականը արտայայտւում է ՍՀՄԿԿին ուղղուած եգիպտահայ համայնքի կառոյցների ղեկավարների, ներկայացուցիչների, անհատների վերը թուարկուած անկեղծ շնորհակալական խօսքերով եւ նամակներով:

Արդարեւ, կարելի է փաստել, որ ՍՀՄԿԿն Եգիպտոսի հայ համայնքը մշտապէս պահել է իր ուշադրութեան կենտրոնում, ինչպէս դա արել է Լիբանանի, Սիրիայի հայ համայնքների պարագայում:

Միակողմանի վերլուծութիւնից խուսափելու համար անհրաժեշտ ենք համարում խօսել նաեւ ՍՀՄԿԿ գործունէութեան թերի աշխատանքի մասին: Այս առումով, ուշագրաւ է, որ 1962-66՝ ՀՍՍՀ մինիստրների խորհրդի կողմից ներկայացուցիչներ են ուղարկուել Եգիպտոս՝ նոր զանգուածային ներգաղթի կազմակերպման համար, սակայն պէտք է նշել, որ, ի տարբերութիւն նախկին երկու յաջողուած փորձերի (1921-36 եւ 1946-48), վերջինս հասկանալի դրդապատճառներով անյաջողութեան մատնուեց: ՍՀՄԿԿ զեկոյցում նշւում են ներգաղթի նոր ծրագրի ձախողման պատճառները՝ միջազգային անկայուն ու լարուած իրավիճակը, արտասահմանեան երկների բացասական կեցուածքը եւ հակասովետական դիրքորոշումները, որոնց արդիւնքում գործնականօրէն անհնար է դառնում զանգուածային ներգաղթ կազմակերպել արտասահմանեան երկրներից: Սա արդարացի գնահատական է եւ դժուար է մեղադրել ՍՀՄԿԿին՝ յատկապէս ներգաղթի ձախողման մէջ:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաեւ, որ Սովետական Հայաստանում այս ժամանակահատուածում, չնայած սակաւ, այնուամէնայնիւ նկատւում էր ներգաղթի հակառակ գործընթացը, որը ցաւօք արտայայտուեց ոչ միայն եգիպտահայերի, այլեւ միւս պետութիւններից ներգաղթած սփիւռքահայերի մօտ:

Ամփոփելով նշենք, որ սոյն աշխատանքի նպատակն էր ուսումնասիրութեան ենթարկել մինչ օրս դեռեւս լիովին չհետազօտուած ՍՀՄԿԿ եւ Եգիպտոսի հայ համայնքի գործակցութիւնը:

---

[34] Նոյն, գործ 147, թուղթ 16-17:

Այս, ինչպէս նաեւ վերը թուարկուած բոլոր բնագաւառներում ՍՀՄԿԿ-եգիպտահայ համայնք գործակցութիւնը միշտ կրել է փոխադարձ, երկկողմ բնոյթ, որի շնորհիւ կարճ ժամանակահատուածում, քիչ մարդկային միջոցներով հնարաւոր եղաւ իրականացնել արդիւնաւէտ, փոխշահաւէտ եւ բեղմնաւոր աշխատանք:

Միով բանիւ, կարելի է եզրակացնել, որ ՍՀՄԿԿն ծաւալել է բաւականին դրական եւ արդիւնաւէտ գործունէութիւն՝ չհաշուած որոշ թերութիւնները:

Ներկայումս, յետահայեաց ուսումնասիրութեամբ կարելի է պնդել, որ սոյն ժամանակահատուածը Հայաստանի եւ Սփիւռքի համար եղել է ոսկէ ժամանակաշրջան՝ Սովետական Միութեան կազմում, չնայած բոլոր դէմ փաստարկներին, թերութիւններին եւ խնդիրներին, այնուամէնայնիւ հայ ժողովուրդը ապրել եւ արարել է՝ առանց նոյնիսկ ծանօթ լինելու «պատերազմ», «քաղաքական ու տնտեսական ճգնաժամ» հասկացութիւններին: Ոսկէ ժամանակաշրջանը հնարաւորութիւն է տուել ոչ միայն հայ մշակոյթի, արուեստի, գիտութեան ու կրթութեան աննախադէպ ու վերընթաց զարգացմանը, այլ նաեւ այդ զարգացմամբ մեծ հետաքրքրութիւն է առաջացրել իր սփիւռքահայ եղբայրների եւ քոյրերի մօտ, որոնք, անտեսելով Սովետական Միութեան բոլոր բացասական երեւոյթները, ամուր եւ անքակտելի հոգեւոր կապ են կերտել հայրենքի հետ:

Իմ խորին համոզմամբ՝ Սփիւռքի կենսունակութեան գրաւականը հայրենիքի հետ մշտական կայուն կապի եւ փոխադարձ գործակցութեան առկայութիւնն է: Գործակցութիւն՝ բոլոր հնարաւոր բնագաւառներում՝ մշակութային, կրթական, գիտական, մարզական, բարեսիրական եւն.:

ՍՀՄԿԿ գործունէութեան ընթացքում ձեռք բերուած հարուստ փորձը, ստեղծուած ամուր կապերը յետագայում մեծապէս նպաստեցին ՀՀ Սփիւռքի նախարարութեան հիմնադրմանը եւ գործունէութեանը: Հայաստանի Հանրապետութեան նոր գերատեսչութիւնը, որդեգրելով ՍՀՄԿԿի քաղաքականութիւնը, է՛լ աւելի ամրապնդեց Հայրենիք-Սփիւռք գործակցութիւնը, վերազարթօնք ապրեց այն՝ ամբողջովին ծառայելով հայապահպանութեան ռազմավարական գործին:


THE COMMITTEE OF CULTURAL RELATIONS WITH DIASPORA ARMENIANS AND THE EGYPTIAN ARMENIANS (1964-1990)
(Summary)

Vladimir Poghossian
vlad.poghosyan@mfa.am

The Armenian community of Egypt was formed in the Middle Ages. During the late 19th century, notwithstanding the small number of Armenians, the community attracted a significant number of scholars who researched its history from the medieval period.

The paper focuses on the relations of the Committee on Cultural Relations with the Diaspora Armenians and the Egyptian-Armenian community.

It assesses the cultural, educational, athletic, philanthropic and scientific relations, which developed between the community and the Committee between the years 1964 and 1992, based on archival materials and documents, reports, memoires, Armenian individuals, foreign sources, etc.



Արեւմտահայերէնի Դասաւանդումը եւ Անոր Դիմագրաւած Խոչընդոտները

Մարուշ Երամեան
maroushnahhas@gmail.com

Լեզուի պահպանումը չի
սրեղծեր լեզուն, զայն կը պարպէ:

Այս գրութիւնը կը միտի վեր առնել արեւմտահայերէնին դիմագրաւած դժուարութիւնները, ի մասնաւորի սփիւռքահայ վարժարաններէն ներս, թէեւ անոնք վաղուց սկսած էին, իսկ այսօր գրեթէ արմատացած են այդ հաստատութիւններուն մէջ:

Այստեղ կրնան ոչ-հաճելի գաղափարներ, կարծիքներ կամ համոզումներ ներկայացուիլ, որոնք կը բխին սփիւռքահայ դպրոցին առօրեայէն, յաճախ այդ առօրեան ներկայացնելով շատ դժխեմ գոյներով: Չենք կրնար թղթակցութիւններով կամ տեսերիզներով առաջնորդուիլ, դիտել մանուկներու կարգ մը թոթովանքները եւ հանգստանալ, որ «ամէն բան լաւ է»: Այնքան ատեն որ արեւմտահայերէնը առօրեային եւ խաղին լեզուն չէ նոր սերունդին համար՝ կը մնայ վտանգուած: Այս իրողութենէն ելլելով, կը կարծեմ որ մեր հարցերը պէ՛տք է քաջաբար ներկայացնենք եւ փորձենք անոնց լուծումներ գտնենք:

Մշակոյթը կարելի չէ անոր պատմութիւնը գիտնալով **պահել**: **Պահել** կը նշանակէ նաեւ անցեալի սխալներէն օգտուելով աւելի բարեկարգ ապագայ մը ծրագրել:

Որպէս օրինակ, այստեղ բերուած է Գահիրէի (Եգիպտոս) միակ հայկական ամէնօրեայ վարժարանը՝ Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանը, ուր կը պաշտօնավարեմ. այլ խօսքով՝ այստեղ ներկայացուածը ամէն օր ապրուած իրավիճակ մըն է, որ, համոզուած եմ, կրնայ շատ հանգիտութիւններ ունենալ Սփիւռքի այլ ամէնօրեայ վարժարաններու հետ:

Ըլլալով ոչ-եգիպտահայ, ունիմ այն առաւելութիւնը, որ դուրսէն, հեռուէն կը դիտեմ երեւոյթները եւ կրնամ ընդհանուր պատկերը աւելի դուրսէն (եւ միաժամանակ՝ պաշտօնի բերմամբ) ներսէն տեսնել:

Ինչ որ կը ներկայացնեմ, կու գայ որպէս փորձառութիւն, ապա՝ սրտցաւութիւն եւ իվերջոյ՝ ճիգ, անպայմանօրէ՛ն ելք գտնելու այն կացութեան, որ

այսօր միայն Գահիրէի վիճակը չէ, այլեւ Սփիւռքի բոլոր դպրոցներուն, այս կամ այն չափով, դժբախտաբար:

ԱԿՆԱՐԿ՝ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Անցնելէ առաջ այսօրուան եգիպտահայ դպրոցի վիճակին, կ'ուզեմ հակիրճ ներկայացնել եգիպտահայ դպրոցին պատմութիւնը, իր սկիզբէն, պարզապէս յստակօրէն նկարագրած ըլլալու համար այսօրը, երէկուան դէմ յանդիման:

Եգիպտոսի առաջին դպրոցը՝ Եղիազարեան դպրատունը իր դռները բացած է Գահիրէի մէջ, 1828ին[1]:

Այդ թուականէն մինչեւ 2012՝ երբ Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանը միացաւ Հելիոպոլսոյ Նուպարեան Ազգային Վարժարանին, եգիպտական 5 քաղաքներու մէջ հայերը ունեցած են 41 վարժարաններ[2]՝ համայնքայինէն մինչեւ անհատականը եւ վեց ամիս տեւած դպրոցներէն մինչեւ քանի մը տասնամեակներ շարունակուած դպրոցներ, որոնք մէկ առ մէկ փակուած են, տարբեր պատճառներով:

Այսօր Եգիպտոսի մէջ կը գործեն Գահիրէի Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանն ու Աղեքսանդրիոյ Պօղոսեան Վարժարանը:

Անշուշտ դպրոցներուն փակումին գլխաւոր պատճառը այն եղած է, որ տուեալ քաղաքներուն մէջ ապրող հայերուն թիւը պակսած է, մինչեւ որ հայեր մնացած չեն այնտեղ:

Այլ պատճառ մըն է հայ ծնողներէն որոշ թիւի մը նախընտրութիւնը իր զաւակները օտար վարժարաններ ղրկելը, զանոնք զերծ պահելու համար արաբերէն լեզուն սորվելու «յոգնութենէն», որովհետեւ Գալուստեան-Նուպարեան Վարժարանէն ներս կը կիրարկուի Եգիպտոսի կրթական պետական ծրագիրը, ուր արաբերէն լեզուն սորվիլն ու գիտնալը էական են: Փակագիծերու մէջ ըսեմ, որ այս կեցուածքը զարմանք կը պատճառէ, որովհետեւ ինչպէ՞ս կարելի է զաւակը զրկել կարեւոր, գեղեցիկ եւ դժուար լեզու մը սորվելու առիթէն, երբ այդ լեզուն մանկութենէն սորվիլը մեծ առաւելութիւն է, նաեւ ու մանաւանդ որ այդ ծնողքը կը շարունակէ ապրիլ արաբական երկրի մը մէջ:

Գահիրէի Գալուստեան-Նուպարեան Վարժարանը, Սփիւռքի գրեթէ բոլոր դպրոցներուն նման - հաւանաբար տարբեր համեմատութեամբ – մանկապարտէզէն իսկ, ունի ոչ-հայախօս հայ աշակերտներ, որոնք կը կազմեն, միջին հաշուով, դասարանի մը աշակերտներուն մէկ երրորդը. ոչ-հայախօս աշակերտներու ներկայութիւնը դասաւանդութեան բնականոն ընթացքը կը

---

[1] Այս եւ յաջորդ ծանօթագրութեան տուեալները քաղած ենք տոքթոր Սուրէն Պայրամեանի *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ* գիրքէն (էջ 3-4):

[2] Այդ քաղաքներն են.- Գահիրէ-Հելիոպոլիս, Աղեքսանդրիա, Փոր Սայիտ, Զակազիկ եւ Ասիութ:

խանգարէ, դասին գնացքը կը դանդաղեցնէ, մակարդակը կը խոնարհեցնէ: Որովհետեւ երբ սովորական գիտելիքէ մը ուսուցիչը ուզէ անցնիլ աւելի բարդ հարցի, կամ ուզէ խորանալ քերականական օրէնքի մը մէջ, ոչ-հայախօս աշակերտը, որ չունի հայերէնի պէտք եղած իմացութիւնը, կը սկսի իր հարցումներով - ակամայ - խանգարել դասաւանդութեան ընթացքն ու կշռոյթը, մինչ անդին հայախօս աշակերտը կը սկսի ձանձրանալ:

Անշուշտ սպասելի է, որ հայկական վարժարաններ յաճախող աշակերտները բոլորն ալ հայախօս ըլլան, բայց միշտ չէ որ այդպէս է: Թէ ինչու՛ այդպէս չէ՝ ամբողջովին այլ խնդիր է եւ այլ քննարկումի նիւթ. միայն կարելի է նշել, որ այդ երեւոյթին ետին օտար ամուսնութիւններն են, իսկ անոնց տուն տուող պատճառները շատ են ու բազմազան: Սակայն պէտք է նշել նաեւ, որ Արեւմուտքի գաղութներուն մէջ, իսկ վերջին տասնամեակին, օտար դպրոցներու բացուելուն հետ, Արեւելքի գաղութներուն մէջ եւս կարելի է հանդիպիլ երկու կողմով հայ ծնողներու, որոնց տան լեզուն հայերէնը չէ դժբախտաբար:

Երբ դպրոցին մէջ ոչ-հայախօս աշակերտներ կ'ունենանք, երկու կէտեր պէ՛տք է նկատի առնենք.-

Ա. Հայախօս եւ ոչ-հայախօս աշակերտներով լեցուն դասարանի մը դասատուն կը ստիպուի դասաւանդումի երկու **տարբեր** մեթոտներ_միաժամանակ օգտագործել՝ հայախօս եւ ոչ-հայախօս աշակերտներուն համար, ճիգ թափելով որ դասարանի մը բոլոր աշակերտները նոյն կամ գրեթէ նոյն կշռոյթով յառաջանան՝ նոյն մակարդակին հասնելու համար: Ասիկա երբեմն ոչ միայն շատ դժուար աշխատանք մըն է, որ կրնայ ուսուցիչէն մեծ հմտութիւն եւ ճիգ պահանջել, այլեւ կրնայ նոյնիսկ անկարելի ըլլալ:

Բ. Երբ վերոյիշեալ պատճառով դասատուութեան բնականոն ընթացքը կը խախտի եւ կը դանդաղի, միջակ եւ միջակէն վեր կարողութիւններու եւ լեզուական գիտելիքի տէր աշակերտը կը սկսի ձանձրանալ, հետեւաբար կը սկսի անհանդարտութեամբ եւ չարաճճիութեամբ դասարանը խանգարել: Արդիւնքը այն կ'ըլլայ, որ դասապահուն ծրագիրը յաճախ կարելի չ'ըլլար ամբողջացնել:

Նախակրթարանի մինչեւ 6րդ դասարանի աշակերտները, այսինքն մինչեւ 12 տարեկան աշակերտները, գրեթէ բոլորն ալ, անկախ իրենց հայախօս ըլլալ-չըլլալէն, բաւական լաւ քայլ կը պահեն հայախօսութեան եւ լեզուին մնացեալ բաղադրիչներուն հետ՝ բառապաշար, քերականութիւն, շարահիւսութիւն եւն., պարզապէս որովհետեւ նախակրթարանին մէջ մայրերը կը շարունակեն հսկել իրենց զաւակներուն դասերը:

Հարցերը կը սկսին բարդանալ լեզուի ուսուցումի բարդացումին հետ՝ միջնակարգի առաջին իսկ կարգէն. մէկ կողմէ՝ պետական պարտադիր ծրագիրը, որ կը ստիպէ հայերէնը յետսակողմ մղել, միւս կողմէ՝ լեզուն սորվելու դժուարութիւնը: Ասոր վրայ կ'աւելնայ տունէն դուրս (երբեմն նաեւ

ներս) օտարախօսութիւնը եւ արդէն նախակրթարանին մէջ սորվուած քիչ մը հայերէնն ալ մոռացութեան կը տրուի:

Միջնակարգ անցնող աշակերտը - ա՛լ ձերբազատած մօր հսկողութենէն - ունի հոգեբանօրէն «մեծցած» ըլլալու, հետեւաբար «ազատ» ըլլալու համոզումը: Եւ այդ ազատութիւնը կ'օգտագործէ հայերէն **չսորվելու** համար:

Իսկ երկրորդականի աշակերտներուն համար կայ պատրաստ արդարացումը, թէ «Պէ՛տք է պետական քննութիւններուն արդիւնքը բարձր ըլլայ, որպէսզի համալսարան մուտքը կարելի դառնայ»: Հետեւաբար աշակերտը կը սորվի ոչ թէ սորվելու, այլ նիշեր եւ գումար ապահովելու համար, իսկ հայերէն լեզուն եւ գրականութիւնը ո՛չ մէկ դեր ունին այդ նիշերու գումարին հաւաքման մէջ:

Երբ ուսուցիչը, երկրորդականի կարգերուն մէջ կը փորձէ բացատրել գիտականօրէն հիմնաւորուած պատճառները, թէ ինչու՛ պէտք է նախ մայրենին լաւ գիտնալ, անոր վրայ հիմնելու համար յետոյ գալիք լեզուները, աշակերտը միշտ ալ իր դիտանկիւնով «տրամաբանական» պատասխաններ ունի:

Չսորվելու այս տրամադրութիւնը արդեօ՞ք միայն յատուկ է եգիպտահայ գաղութին: Չենք կարծեր: Մեզի կը թուի, թէ գաղութային հարցերը - փոքր տարբերութիւններով - գրեթէ նոյնն են ամէն տեղ:

Ո՛չ «մայրենին լաւ սորվիլ, անոր վրայ հիմնելու համար մնացեալ լեզուները» տեսութիւնը, ո՛չ «արեւմտահայերէնը պաշտպանելու անհրաժեշտութիւնը», ո՛չ՝ «որքան լեզու գիտես, այնքան մարդ ես» խօսքը, ո՛չ ալ նման այլ խորհուրդներ կրցած են համոզել հայկական դպրոց յաճախող աշակերտները, որ հայերէն լեզուն սորվին գոնէ այնքան, որքան՝ անգլերէնը:

«Դպրոցէն ելլելէ ետք ա՛լ առիթ պիտի չունենանք հայերէն խօսելու, ալ ուր մնաց՝ գրելու, ուրեմն ինչու՞ սորվինք»՝ կ'ըսեն անոնք այնպիսի համոզումով, որ յուսալքում կրնայ պատճառել դասատուին:

Անշուշտ իւրաքանչիւր դասարանի մէջ կարելի է հանդիպիլ շատ լաւ հայերէն գիտցող պատանիներու, որոնք բնածին յատկութեամբ մը կը զգան լեզուին գեղեցկութիւնը, կը կիրարկեն իրենց բառապաշարը, նորերը սորվելու եռանդ կը ցուցաբերեն ու երբեմն նաեւ ստեղծագործական ոգիով լեցուած՝ պատմուածքներ կը գրեն:

ՓՈՔՐԻԿ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԱԿՈՒՄԲ

Ասոր լաւագոյն օրինակը Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի «Փոքրիկ Գրողներ» ակումբն է (հայերէնի աւագ ուսուցչուհի Մ. Երամեանի նախաձեռնութեամբ եւ հսկողութեամբ), ուր տասնեակ մը պարմանուհիներ շաբաթական դրութեամբ կը հաւաքուին պատմուածքներ գրելու, իրենց գրածը ընթերցելու, անոր մասին կարծիքներ փոխանակելու եւ գրելու նոր *թեքնիք*ներ իմանալու համար: Տարի մը ետք կարելի եղաւ անոնց

գրութիւնները հաւաքել գրքոյկի մը մէջ եւ լոյս ընծայել *Կանաչ խնձորներ* խորագրով:

Դժբախտաբար, սակայն, այնքա՛ն զօրացած է հայերէնին առնչութեամբ «անկարող» ըլլալու համոզումը, որ փոխանակ ուրախանալու այս փոքրիկ-ներուն նուաճումով, կարեւոր պատասխանատու մը ինծի հարց կու տար՝ «Բայց վստա՞հ էք, որ իրենք են այս պատմուածքները գրողները»: Ասիկա ցոյց կու տայ ոչ միայն հայ ուսուցիչին հանդէպ եղած անվստահութիւնը եւ հաւատքի պակասը, որ խորքին մէջ դաշոյնի խորագոյն հարուածն է հայ ուսուցիչին, այլ նաեւ վստահութեան պակասը՝ աշակերտին, նոր սերունդին հանդէպ, զլանալով տալ վստահութեան այն դեղաչափը, որ քաջալերէ ի-րենց իւրաքանչիւր քայլը, առանց գոռոզանալու: Այլ խօսքով՝ սերմանել ինք-նավստահութիւն, առանց ինքնահաւանութեան:

Ասիկա ծնողքին պարտաւորութիւնն է տունէն ներս, զաւկին հանդէպ, ո-րովհետեւ որքան ալ ուսուցիչը ըսէ, աշակերտը պէտք ունի նաեւ ծնողքին քաջալերանքին, որպէսզի կարենայ նախ ժամանակ տրամադրել հայերէն սորվելուն, ապա՝ սետեղծագործելուն:

Փոքրիկ գրողներու խումբը բացառութիւն է, իսկ հիմա՛, մեր ժամանա-կակից պատմութեան ա՛յս հանգրուանին, մեզի պէտք էր, որ այս աշա-կերտները մեծամասնութիւն ըլլային:

Ուրեմն, երկու խնդիր ունինք մեր առջեւ, իրարու հետ սերտօրէն առն-չուած երկու խնդիրներ.-

Ա. խառն ամուսնութիւնները եւ

Բ. անոնցմէ ծնած զաւակները, որոնց համար հայերէնը մայրենի չէ, այլ երկրորդ, երբեմն ալ երրորդ լեզու: Մեզի կը թուի թէ եթէ առաջինը լուծում ունենայ, կը դիւրանայ երկրորդին լուծումը:

Սակայն այս խնդիրը, որ շատ էական է մեր ընկերութիւններուն ամէնէն փոքր օղակին՝ հայ ընտանիքին համար, բայց այնքան տարածուած է մեր մէջ, որ կը դժուարանանք լուծումներ առաջարկելու, մանաւանդ որ այստեղ մեր նպատակը այդ չէ:

Աւելի մեծ հարցը այն է սակայն, որ այն աշակերտները, որոնց երկու ծնողներն ալ հայ են, ասոնք ե՛ւս սկսած են իրենց առօրեան այլ լեզուներով ապրիլ (ըստ իրենց ապրած միջավայրին). ու եթէ իրենց ծնողներուն հետ հայերէն կը խօսին, ապա իրարու հետ՝ այլ լեզուով կը հաղորդակցին նոյ-նիսկ դպրոցին մէջ: Ասիկա ծանր ազդեցութիւն կը ձգէ լեզուամտածողու-թեան վրայ. փոքրիկ աշակերտը կը սկսի օտար լեզուով մտածել, ապա մտածածը հայերէնի թարգմանել եւ խօսիլ: Արդիւ՞նքը. բոլորս ալ գիտենք՝ օտար բառապաշարով եւ հայերէնի խոնարհումով ու հոլովումով խառնի-ճաղանջ լեզու մը …

Բայց եթէ ընդունինք այս կացութիւնը, կը նշանակէ, թէ որպէս արդիւնք պիտի ընդունինք նաեւ արեւմտահայերէնին ոչ-մայրենի ըլլալու կարգավի-ճակը:

Իսկ եթէ ընդունինք արեւմտահայերէնին ոչ-մայրենի ըլլալու կարգավիճակը, նախ պէտք է պատրաստ ըլլանք դիմագրաւելու կորուստը այն բոլորին, որոնք լեզուին միջոցով կ'անցնին սերունդէ սերունդ, ինչպէս աւանդութիւնները, լեզուամտածողութիւնը եւն.:

Յաճախ ըսուած է թէ յարմար դասագիրքեր չունինք: Վերջին քսան տարիներուն, գրեթէ բոլոր մեծ գաղութներուն մէջ դասագիրքեր սկսան պատրաստուիլ, իսկ աւելի փոքր գաղութները կ'օգտուին այդ դասագիրքերէն, երբեմն որոշ պատշաճեցումներ ընելով: Այս պատշաճեցումները որքան աշակերտներու հայերէնագիտութեան մակարդակին կը կապուին, նոյնքան ալ կը կապուին երկրին կրթական օրէնքներուն. օրինակ Գահիրէի մէջ հայերէն լեզուի դասապահերուն տեւողութիւնը 40 կամ 45 վայրկեան է, ըստ կարգի (նախակրթարան, միջնակարգ-երկրորդական), մինչ այլ գաղութի մը մէջ, ըսենք՝ 50 վայրկեան:

Անշուշտ արդիական դասագիրքերու կողքին դասաւանդումի նոր միջոցները, ինչպէս ձայներիզներու եւ տեսերիզներու օգտագործումը, պարտականութիւնները աշակերտներէն նոր ծրագրերով պահանջելը՝ ինչպէս power point եւն., կրնան դեր ունենալ արեւմտահայերէնը սիրելի դարձնելու մէջ. սակայն այդ միջոցներուն թիւը այնքան փոքր է, որ անբաւարար կը մնայ: Կա՛ն արեւելահայերէնով պատրաստուած նման միջոցներ, բայց անոնք անհասկնալի են աշակերտներուն համար եւ շփոթի կը մատնեն զիրենք, հայերէնի երկու ուղղագրութիւններուն պատճառով:

Այս առնչութեամբ կը կարծենք թէ կարգ մը միութիւններու եւ կազմակերպութիւններու (Կիւլպէնկեան Հիմնարկ, ՀԲԸՄ եւն.) ներկայացուցած արեւմտահայերէնով իրագործուած **բոլոր** ծրագրերուն պէտք է առիթ տրուի, որպէսզի կարելիին չափ եւ կարելի արագութեամբ մեծնայ թիւը նման ոչ-դասագրքային միջոցներուն: Օրինակ ինչու՞ մերժել արեւմտահայերէնով պատմուած հեքիաթներու խտասալիկներուն որդեգրումը եւ պատճառ դառնալ, որ անոնք **ամբողջ** Սփիւռքի գաղութներուն մէջ չտարածուին. չէ՞ որ փոքրիկները շատ աւելի լաւ եւ շատ աւելի դիւրութեամբ հայերէն կը սորվին հեքիաթներ մտիկ ընելով, քան՝ դասերով:

ԳԻՏՐԱԿՆԵՐ

Այս մտահոգութեամբ Գալուստեան-Նուպարեան Վարժարանի երկու հանգրուաններուն՝ նախակրթարանի եւ երկրորդականի, համար պատրաստուած են արտադասագրքային *գիտրակ*ներ, այսինքն՝ խառնուրդ մը գիրքի եւ տետրակի, ուր աշակերտը «կը զբաղի», իր նախասիրութիւնները կ'արձանագրէ, աւելի մեծերը կը մտածեն եւ կ'արձանագրեն իրենց մտածումները, եւ այս բոլորը՝ ոչ թէ դասի, այլ՝ խաղի մթնոլորտի մը մէջ[3]:

[3] Մ. Երամեան, *Գիտրակս* (նախակրթարանի Դ. Ե. եւ Զ. կարգերու համար, 2016, 36 էջ), *Ես եւ ընկերներս* (միջնակարգ-երկրորդականի համար, 2017-2018, 48 էջ):

Փորձ կայ հայկական դպրոցները միջազգային դպրոցներու «մակարդակ»ին հասցնելու, առանց մտածելու որ հայ դպրոցը շատ ուրոյն հիմնարկութիւն է, որ ունի իր առաջնահերթութիւնը, նոյնիսկ այն պարագաներուն, երբ պետական հսկողութիւնը բաւական զօրաւոր է. նման փորձառութիւն Միջին Արեւելքի գրեթէ բոլոր հայկական վարժարանները ունեցած են եւ այդ փորձառութեան շնորհիւ, կրցած են գտնել հայ ոգին պահելու ձեւը:

Սակայն ասիկա շատ դժուար, երկար, հետեւողական եւ համակարգուած աշխատանք - եւ մանաւանդ - նուիրում պահանջող գործ է. կը թուի թէ եգիպտահայ գաղութին պատասխանատուները չունին համբերանքը կամ տեսլականը, որովհետեւ - եւ ասիկա սրտցաւօրէն կ'ըսեմ - հայկական ա՛յս դպրոցին մեծագոյն խնդիրը, արեւմտահայերէնի պաշտպանութենէն ա՛լ աւելի մեծ՝ոգիի կորուստն է:

ՔԱՆԻ ՄԸ ՆՇՈՒՄՆԵՐ ՍՓԻՒՌՔԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ա. Սփիւռքի մէջ հայ դպրոցն ու արեւմտահայերէնը չեն կրնար **առողջ** ապրիլ, հաւանաբար բնաւ չեն կրնար ապրիլ (ասիկա կրնայ շատ յոռետես խօսք թուիլ, բայց այս հանգրուանին պարտաւոր ենք իրատեսօրէն դիտել կացութիւնը) **եթէ** անոնց ետին կեցող եռանկիւնը՝

դասատու-ծնող + պատասխանատուներ + աշակերտ,

սերտօրէն չգործակցի: Այս եռանկիւնին մէջ ամէնէն տկար կողմը աշակերտն է, իսկ ամէնէն անտարբեր կողմը՝ ծնողքը: Կրնան այս համեմատութիւնները ճիշտ չընկալ հաւասարումի տեսակէն՝ տկար-անտարբեր, սակայն որովհետեւ այստեղ կողմերը իրարու դէմ չէ որ կը բանին, այլ՝ իրարու հետ, հետեւաբար իւրաքանչիւր կողմ ի՛ր յատկանիշը կը բերէ եռանկիւնին.- ծնողքը՝ սրտցաւութիւն եւ հետաքրքրութիւն, աշակերտը՝ սորվելու եռանդի զօրութիւն, իսկ պատասխանատուները՝ գիտակցութիւն: Այս եռանկիւնն է որ յաճախ չենք գտներ դժբախտաբար հո՛ն, ուր պէտք էր մի՛շտ ներկայ ըլլար:

Կը նշանակէ թէ հայ դպրոցը չունի ա՛յն կռուանը, որ պիտի ապահովէր հայ դպրոցին առողջ վիճակը: Որովհետեւ ինչպէ՞ս կարելի է ժողովասենեակներուն մէջ նստած, առանց դպրոցական առօրեային անմիջականօրէն առնչուելու, առանց հարցերը մօտէն ոչ թէ գիտնալու, այլ՝ ապրած ըլլալու, կարծիք կազմել եւ որոշումներ առնել: Կամ ինչպէ՞ս կարելի է անընդհատ զաւակին ըսել՝ «Տղա՛ս, նա՛խ միւս դասերդ սորվիր, հայերէնը՝ յետոյ» եւ սպասել որ տղան ինքնաբերաբար լաւ հայերէն գիտնայ:

Պատահական չէ անշուշտ, որ պատասխանատուներուն համար «գիտակից» բառը օգտագործեցինք, որովհետեւ առանց գիտակցելու հայերէն լեզուին եւ անոր միջոցով աշակերտին փոխանցուելիք ոգիին կարեւորու-

---

Երկուքն ալ հրատարակուած են Գալուստեան-Նուպարեան վարժարանին կողմէ, Գահիրէ, տպարան Նուպար, 150ական օրինակ:

թեան՝ պատասխանատուները, որոնց ձեռքերուն մէջ են դպրոցներուն կառավարման բոլոր լծակները, պիտի չկարենան ճիշտ որոշումներ առնել. ճիշտ՝ հայ դպրոցին համար:

Բայց անշու՛շտ կարելի է ամէն առիթի բարձրաձայն յայտարարել՝ «եթէ հայ աշակերտը առանց հայերէն սորվելու դուրս պիտի գայ վարժարանէն, ուրեմն ինչու՞ է հայկական վարժարանը, գոցենք երթայ»:

Հայ դպրոցը, Սփիւռքի կազմաւորման առաջին օրերէն իսկ եղած է մեր էութիւնը պահող եկեղեցի-դպրոց-ակումբ եռեակին կարեւոր մէկ թեւը, որուն աւելի ուշ եկաւ միանալ մամուլը: Հետեւաբար կարելի չէ թերագնահատել դպրոցին դերը, որքան ալ դժուար ըլլան պայմանները, որքան ալ փոխուած ըլլան ժամանակները: Կարելի չէ - թէեւ վերջին տասնամեակին մեծ հապճեպով եւ դիւրութեամբ կիրարկուած է - թեթեւօրէն ըսել՝ «Դպրոցը ա՛լ դեր չունի, գոցենք երթայ ...»:

Թերեւս մտածենք նաեւ, որ նիւթական ապահովութիւնն ալ դեր ունի. եգիպտահայ դպրոցին օրինակը սակայն կը ջրէ այս տեսութիւնը, որովհետեւ այսօր եւ տասնամեակէ մը իվեր, եգիպտահայ դպրոցը ապահով է նիւթապէս:

Չեմ կրնար այլ գաղութներու մասին խօսիլ այս առումով, բայց կը կարծեմ թէ նշուած եռանկիւնին համաձայն էք:

Բ. Այսօր ճիգ կայ դպրոցը զուարճանքի վայրի վերածելու: Թերեւս այս ճիգը բարձր արդիւնք կրնայ տալ Ճափոնի նման երկրի մը մէջ, ուր տան դաստիարակութիւնը (որուն գլխաւոր բաղադրիչը յարգանքն է ո՛չ միայն իր նմանին եւ իրմէ մեծին հանդէպ, այլ նաեւ բնութեան եւ կենդանական աշխարհին հանդէպ) իրապէ՛ս արդիւնք կու տայ: Սակայն Միջին Արեւելքի երկիրներուն մէջ, ուր ամէն բան դպրոցին կը վստահուի եւ ուսուցիչին ուսերուն կը բեռցուի, կարելի չէ դպրոցը զուարճանքի վայրի մը վերածել, յետոյ ստիպուած ըլլալ հանդուրժել աշակերտին սանձարձակութիւնը եւ անշուշտ՝ կրել անոր ձախողութեան ամբողջ պատասխանատուութիւնը:

Ասոնք պարզ, բնական բաներ կը թուին, որոնք սակայն ամէնօրեայ կրկնութեան պարագային կը դառնան անտանելի, դպրոցին ամբողջ դրութիւնը կը գահավիժի եւ անոր հետ ալ կը մոռցուին հայերէնն ու հայերէնին կապուած ամէն բան:

Գ. Երբ մեր ամբողջ կարողութիւնը - երբեմն ալ աւելին - կը դնենք արեւմտահայերէնի դասաւանդումին վրայ, չափազանցութեամբ մը որ յաճախ ճիշտ հակառակ արդիւնքը կու տայ, մոռացութեան կը տրուի ոգին, մոռացութեան կ'ենթարկուին այն բոլորը, որոնք լեզուին միջոցով կը փոխանցուին աշակերտութեան: Հետեւաբար աշակերտութեան կը մնայ մեքենականօրէն սորվիլը լեզուին: Ասոր արդիւնքով է, որ դպրոցին մէջ հայերէնի գերազանց աշակերտները նոյնիսկ, առանց խղճահարութեան կրնան

խառն ամուսնութիւններ կնքել, երբեմն նաեւ հպարտօրէն յայտարարելով, թէ իրենց կողակիցը հայերէն կը խօսի կամ եռանդով հայերէն կը սորվի:

Սակայն լեզուին սահմանին ալ կը մնան հայերէն սորվող այս կողակիցները, եւ, դժբախտաբար նաեւ իրենցմէ եկած սերունդները, որոնք շատ քիչ բան գիտեն ոգիին մասին:

Կը թուի թէ իրապէ՛ս նոր հանգրուան մը թեւակոխած են արեւմտահայերէնն եւ սփիւռքահայերուն կեանքը: Պէ՞տք է արդեօք իվերջոյ ընդունինք, թէ մինչեւ այսօր մեր որդեգրած արեւմտահայերէնի դասաւանդումին ձեւերն ու միջոցները այսօր աւելի շեշտակիօրէն ապարդիւն են, եթէ մինչեւ երէկ՝ միայն արեւմտեան Սփիւռքին մէջ, այսօր նաեւ արեւելեան գաղութներուն մէջ, որովհետեւ բոլոր պատասխանատուներն ալ նոյն գանգատը ունին՝ «հայկական վարժարանէ շրջանաւարտ աշակերտը բաւարար հայերէն չի գիտեր»: Կարելի է սակայն մտածել, որ հայերէն բաւարար չափով գիտցող աշակերտներուն **նոյն** տոկոսն է թերեւս այսօր, ինչ որ էր քանի մը տասնամեակ առաջ: Երբ կը մտաբերեմ ի՛մ ուսանողութեան տարիներս, կը մտաբերեմ թէ առաջին երկրորդականի երկու բաժանումներէն – մօտաւորապէս յիսուն աշակերտէն - քանի՞ն հայերէնը լաւ կը սորվէր եւ կը նայիմ թէ իմ դասընկերներէս այսօր քանի՞ն կը շարունակէ լաւ կամ գոնէ բաւարար հայերէն գիտնալ, կը տեսնեմ թէ տոկոսային առումով այնքան ալ մեծ տարբերութիւն չկայ: Բայց հայերէն գիտնալուն չափն է, եթէ կարելի է այսպէս ըսել, տարբերութիւնը: Անցեալին յիսուն աշակերտէն եթէ քանի մը ուսուցիչներ եւ տնօրէններ կ'ունենայինք, այսօր հայերէնի մէջ շատ լաւ աշակերտներուն տոկոսը ոչ միայն շատ փոքր է, այլ նաեւ անոնցմէ հազիւ մէկքանին ինքզինք կը նուիրէ արեւմտահայերէնի ուսուցումին: Այս ալ ուրիշ հարց մը. յիրաւի, վտանգալից տարողութեան սկսած է հասնիլ բոլոր գաղութներուն մէջ՝ հայերէնաւանդ ուսուցիչներու պակասը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Բարձր դասարաններուն, այսինքն միջնակարգի վերջին եւ երկրորդականի երեք դասարաններուն մէջ տղաք մեծ հետաքրքրութեամբ կը մասնակցին հայութեան հարցերուն նուիրուած զրոյցներուն, թէեւ չունին ա՛յն բառապաշարը, որ պիտի օգնէր իրենց նման զրոյցներու պարագային:

«*… Արեւմտահայ դպրոցը, կորսնցուցած ըլլալով իր երբեմնի տարողութիւնը, այլեւս երաշխիք մը չէ արեւմտահայերէնին*», կը գրէ Արմենակ Եղիայեան արեւմտահայերէնին նուիրուած իր բազմաթիւ նամակներէն մէկուն մէջ (26 Մարտ 2018):

Պէտք է սակայն շեշտը դնել նաեւ ու մանաւանդ գիտակցութեան վրայ՝ սփիւռքահայ մարդու գիտակցութիւնը **հայ** ըլլալուն եւ անոր առնչուող բոլոր հարցերուն. երբ մանկութենէն այս գիտակցութիւնը չի պատրաստուիր մանուկներուն մօտ - նախ ծնողքին, ապա դպրոցին միջոցով - շատ դիւրին կը դառնայ լեզուին հանդէպ անտարբերութիւնը, որուն անպայման կը յաջորդէ

անտարբերութիւնը «հայութեան» հանդէպ, որմէ միչեւ օտար ամուսնութիւն մէկ քայլ է միայն: Իսկ օտար ամուսնութիւնները մեր ազգային դիմագիծն ու ազգային ոգին խաթարող ամէնէն արագ միջոցն են:

Եթէ ասկէ 30-40 տարի առաջ նիւթականն էր, այն իմաստով որ հայ դպրոցը չունէր պէտք եղած նիւթականը իր ուսուցիչները գնահատելու կամ շատ լաւ ուսուցիչներ հրաւիրելու, այսօր ամբողջովին այլ է հարցը. այսօր հայ աշակերտին անտարբերութիւնն է հանդէպ բոլոր այն նիւթերուն, որոնք կը կապուին հայութեան եւ հայ ոգիին:

Ասոր պատճառը սակայն հայերէնաւանդ դասատուներուն, կամ աւանդումի կերպերուն մէջ փնտռելը ճիշտ չէ: Այսօր Գահիրէի Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանը, ինչպէս եւ Սփիւռքի գրեթէ բոլոր դպրոցները ունին իրենց արդիական միջոցները եւ կը ստիպեն որ հայերէնի դասատուներն ալ հետեւին նոր միջոցներու, օգտուելու արդիական, թուային միջոցներու ընձեռած դիւրութիւններէն:

Անոնք որոնք այս ասպարէզին մէջ են, նոյնիսկ անոնք որոնք նոր մտած են այս ասպարէզը - զոր ասպարէզ կոչելը ճիշտ չէ, որովհետեւ մասնագիտութեան չափով եւ թերեւս աւելի՛ նուիրումի կարիք կայ հոն - բոլոր դասատուները պիտի վկայեն, թէ ա՛յդ միջոցներն ալ անօգուտ են գրաւելու աշակերտը եւ ստիպելու, որ իւրացնէ հայերէնին եւ հայութեան առնչուած նիւթերը:

Այս անտարբերութիւնը իր պատճառները ունի: Մանաւանդ ունի **մէկ** մեծ, մէկ գլխաւոր պատճառ՝ ՄՂՕՆՆԵՐՈՒ[4] ՉԳՈՅԽԹԻՒՆԸ:

Այդ պատանիները ամէնայն անկեղծութեամբ, քիչ մըն ալ վիրաւորող հեգնանքով բացատրութիւններ կու տան դասատուին.-

- Ինչու՞ սորվինք, ի՞նչ պիտի ընենք հայերէնը, անով ի՞նչ գործ պիտի աշխատինք …

Իրապէ՛ս: Ի՞նչ աշխատանք պիտի գտնեն հայերէնով, դասատու՞ պիտի դառնան եւ իրե՞նք ալ պիտի ենթարկուին այն բոլորին, զոր կը բերեն կամ բերած են հայերէնի դասատուներուն գլխուն:

- Հայաստանէն կը ձգեն դուրս կ'ելլեն, Հայաստանէն, ուր պաշտօնական-պետական լեզուն հայերէնն է …

Կրնա՞նք մղօններ հայթայթել մեր աշակերտներուն, որոնք շատ լաւ գիտեն, թէ շատ լաւ անգլերէնը զիրենք կրնայ յառաջ տանիլ գործի ասպարէզին մէջ:

Ճիշտ է որ մենք՝ հայերս, ուրիշ աւելի մեծ եւ զօրաւոր երկիրներու ժողովուրդներուն նման ազգային ծանր հարցերէ զուրկ չենք, որպէսզի կարենանք մեր արուեստը տրամադրել զուտ մարդկային հարցերու՝ կիներու ազատութենէն, մինչեւ կիներու հանդէպ եղած բռնութիւնները, մինչեւ սեռա-

[4] Մղօն = մղիչ ազդակ, մղիչ ուժ:

յին ազատ յարաբերութիւններ եւն.: Մեր արուեստը, մանաւանդ Սփիւռքի մէջ, կը շարունակէ «ազգային» արուեստ մնալ:

Թերեւս ասիկա կ'ազդէ մեր նոր սերունդներուն ենթագիտակցական խորունկ շերտերու վրայ, խրտչեցնելով զիրենք ամէն «հայկական»է, միաժամանակ գրաւելով զիրենք եղած «շուկայական արուեստ»ին դիւրին ընկալումով:

Երգերուն մէջ հնչող հայերէնը օրինակ, նոյնիսկ Հայաստանէն եկած նոր երգերուն պարագային ... կամ հայկական ֆիլմերը, կամ՝ անոնց չգոյութիւնը եւ հեռատեսիլի ֆիլմաշարերուն՝ «սերիալ»ներուն մակարդակը...: Այս բոլորը տուեալներ են, որոնք կ'արգելակեն հայ աշակերտին հաւատքը հայերէնին եւ հայութեան առնչուող ամէն բանի հանդէպ:

Այս բոլորէն ետք կը շարունակենք ստիպել հայ աշակերտը, որ հայերէն սորվի:

- Բայց ինչու՞ հայերէն պիտի սորվիմ,- կը կրկնէ պատանեկան յամառութեամբ:

Բոլորս ալ խուճապի մատնուած ենք, որովհետեւ ա՛յս ընթացքով արեւմտահայերէնի ապագան - որ ա՛յս օրն իսկ է - փայլուն չէ:

Հետեւաբար, պէ՛տք է մտածել այլ միջոցներու մասին, որոնց մէջ լեզուն ըլլայ թաքնուած նպատակը, իսկ բացայայտ միջոցը ըլլայ այլ բան: Այդ «այլ բան»ի որոնումին է որ պէ՛տք է լծուինք, եթէ արդէն իսկ ուշ չենք:

TEACHING WESTERN ARMENIAN IN EGYPTIAN-ARMENIAN SCHOOLS AND ITS CHALLENGES
(Summary)

Maroush Yeramian
maroushnahhas@gmail.com

The paper focuses on current concerns regarding teaching Armenian in the Armenian schools of Egypt from the standpoint of textbooks, pedagogy and similar issues.

Existing textbooks of other Armenian Diaspora communities do not 100% fit the Egyptian Armenian school. However, the process of readjusting these textbooks is progressing successfully. The necessity of the process of adaptation arises for different technical and subjective reasons, including the length of a class period, the percentage of students who do not know Armenian and the level and condition of spoken Armenian within the community.

Another important set of issues is the problem of recruiting teachers as there is a great need for teachers who can teach Armenian. One needs to take into consideration that teaching is a vocation and a mission and needs a specific character. Other pedagogical issues are the unresolved issue of homework and the drills which necessitate drill books apart from textbooks.

Beyond all these difficulties another question remains unanswered: what to do in order to transform Western Armenian into a living language, a language of games and not simply a classroom or home language.

Եգիպտոսի Հայ Համայնքի Լրատուամիջոցներն Արդի Փուլում

Վահրամ Հովեան
vhovyan@yandex.ru





Եգիտոսի հայ համայքի լրատուամիջոցների շարքում ներկայում առաջնային դեր ունի տպագիր մամուլը: Այն հիմնականում ունի կուսակցական պատկանելութիւն: Այստեղ Սփիւռքի աւանդական երեք կուսակցութիւններն էլ ունեն իրենց տպագիր օրգանները: ՀՅԴի մամուլի օրգանն է՝ *Յուսաբեր* օրաթերթը, ՌԱԿինը՝ *Արեւ* շաբաթաթերթը, իսկ ՍԴՀԿինը՝ *Ջահակիր* երկշաբաթաթերթը:

Քանի որ Եգիպտոսում հայկական կուսակցութիւնները չունեն օրինական գործելու հնարաւորութիւն, նրանք այստեղ իրենց ներկայութիւնն ապահովում են կից կառոյցների, առաջին հերթին՝ մամուլի միջոցով: Դրա շնորհիւ է, որ հայկական կուսակցական մամուլի օրգանները հանդիսանում են եգիպտահայ ամէնաաւանդական լրատուամիջոցները եւ, չնայած տասնամեակների ընթացքում եգիպտահայ համայնքի կրած հսկայական կորուստներին (մարդկային եւ կազմակերպական կառոյցների առումներով), շարունակում են իրենց երթը: *Յուսաբերը* (հիմն. 1913) եւ *Արեւը* (հիմն. 1915) ունեն աւելի քան հարիւրամեայ, իսկ *Ջահակիրը* (հիմն. 1948)՝ մօտ եօթանասունամեայ պատմութիւն:

Ոչ-կուսակցական տպագիր մամուլի օրգաններն են ՀԲԸՄի Եգիպտոսի մասնաճիւղի *Տեղեկատու* եւ *Արեգ* (արաբերէն) եռամսեայ հանդէսները:

Ոչ-տպագիր մամուլի օրգաններն են հայկական ռատիօժամը, որը ամէնօրեայ պարբերականութեամբ մէկ ժամ հեռարձակւում է Եգիպտոսի պետական ձայնասփիւռի կայանով, եւ ՀԲԸՄի Եգիպտոսի մասնաճիւղի կայքէջը (www.agbuegypt.com): Առաջինը նոյնպէս եգիպտահայ համայնքի աւանդական լրատուամիջոցներից է: Այն իր գործունէութիւնը սկսել է դեռեւս 1940ականների կէսից՝ օրական քառորդ ժամ տեւողութեամբ:

1950ականների սկզբից հեռարձակումներն իրականացուել են շաբաթական 30 րոպէ տեւողութեամբ: 1977ից հեռարձակումներն իրականացուել են շաբաթական երեք օր, կրկին 30 րոպէ տեւողութեամբ: Իսկ 1982ից ցայսօր այն հեռարձակւում է ամէն օր, մէկ ժամ տեւողութեամբ: Սկզբում ռատիօհաղորդումը եղել է մշակութային՝ երաժշտական բնոյթի: Յետագայում նրա տեւողութեան եւ հեռարձակման յաճախականութեան մեծացումը այն դարձրել է բազմաբնոյթ[1]: Երկրորդ ոչ-տպագիր լրատուամիջոցը ձեւաւորուել է 2006ին՝ ՀԲԸՄի 100ամեակի տօնակատարութիւնների շրջանակներում, եւ ընդլայնուելուց ու բարելաւուելուց յետոյ գործարկուել 2007 Յունիսին[2]:

Մէկ այլ ոչ-տպագիր լրատուամիջոց կարելի է համարել 2016ին հիմնուած «Հայաստանը եւ հայերը արաբական մամուլի մէջ. 1876-1923» կայքէջը (https://www.arminmedia.com/), որը, ինչպէս յուշում է իր անուանումը, ունի նեղ մասնագիտական ուղղութիւն: Այն կարելի է դասել գիտական կայքէջերի շարքը:

Թեմատիկ բազմազանութեան առումով առաջնութիւնը պատկանում է տպագիր մամուլին:

Բովանդակային առումով Եգիպտոսի հայկական լրատուամիջոցների հրապարակումները կարելի է բաժանել հետեւեալ խմբերի.- տեղի համայնքի, Սփիւռքի, Հայաստանի, Եգիպտոսի, աշխարհում տեղի ունեցող առաւել նշանաւոր (մանաւանդ հայկական առնչուածութեամբ) իրադարձութիւնների եւն.ի մասին տեղեկատուական եւ վերլուծական նիւթեր: Օրինակ՝ *Յուսաբեր*ի 2018 Սեպտեմբերի 22ի համարում յօդուած է հրապարակուած Քիւրտիստանի խորհրդարանական ընտրութիւններում հայ թեկնածուների մասնակցութեան մասին[3]:

Եգիպտահայ մամուլում յաճախակի են հանդիպում արտատպումներ հայաստանեան լրատուամիջոցներից: Օգտագործւում են ՀՀ Սփիւռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի (www.hayernaysor.am), «Արմէնպրէս» լրատուական գործակալութեան (armenpress.am), tert.am, news.am կայքէջերի եւ այլ լրատուամիջոցների հրապարակումները: Օրինակ՝ *Ջահակիր*ի 2017 Յունիսի 8ի համարում հայաստանեան «Հետք» կայքէջից (www.hetq.am) արտատպուել է Սեդա Հերգնեանի վերլուծական յօդուածը ՀՀ պետական պարտքի մասին[4]: Բաւական լայն տարածում ունեն նաեւ արտատպումները միջազգային լրա-

---

[1] Սուրէն Ն. Պայրամեան, *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ*, տպ. Նուպար, Գահիրէ, 2017, էջ 112:

[2] Նոյն, էջ 87:

[3] «Քիւրտիստանի խորհրդարանական ընտրութիւններուն վեց հայ կը մասնակցի», *Յուսաբեր*, 22 Սեպտեմբեր 2018:

[4] Ս. Հերգնեան, «Պետական պարտքը հատեց վեց միլիարդ դոլարի շէմն ու դեռ կ'աճի», *Ջահակիր*, 8 Յունիս 2017:

տուական գործակալութիւններից (Associated Press, Sputnik, BBC, *Newsweek, Times* եւն.), երբ հրապարակուող նիւթը վերաբերում է միաջազգային որեւէ կարեւոր իրադարձութեան: Օրինակ, *Արեւ*ի 2018 Յունուարի 9ի համարը վկայակոչելով *Times*ին, յօդուած է հրապարակել Ռուսաստանի կողմից Թարթուսի ռազմածովային կայանն ընդլայնելու մասին[5]:

Հայաստանեան եւ միաջազգային կայքերից վերցուած նիւթերը յաճախ զուտ արտատպումներ չեն: Դրանք իրականում հանդէս են գալիս որպէս տեղեկատուութեան աղբիւր: Սակայն, քանի որ բովանդակութիւնը հիմնականում կրկնւում է տեղեկատուութեան աղբիւրի եւ եգիպտահայ լրատուամիջոցներում հրապարակուած նիւթի միջեւ[6], ապա կարելի է ասել, որ դրանք նոյն նիւթն են:

Վերջին տասնամեակներում, մի շարք գործօնների բերմամբ, խիստ նուազել է Եգիպտոսի հայ համայնքի թուաքանակը: Երբեմնի ծաղկուն համայնքից այն ներկայում վերածուել է փոքրաթիւ եւ խորհրդանշական համայնքի[7]: Համայնքի քանակական նուազումը նշանակում է նաեւ նրա ներուժի թուլացում, ինչն իր բացասական ազդեցութիւնն է թողնում նաեւ համայնքային հաստատութիւնների վրայ: Օրինակ՝ Գահիրէի հայ աւետարանական համայնքի սպառման հետեւանքով դադարել է գործել տեղի հայ աւետարանական եկեղեցին, եւ հայ աւետարանական համայնքը Եգիպտոսում ներկայում սահմանափակւում է միայն Աղեքսանդրիայի շրջանակներում[8]: Լրատուամիջոցներն էլ այս հարցում բացառութիւն չեն:

Անդրադառնանք եգիպտահայ լրատուամիջոցների վրայ Եգիպտոսի հայ համայնքի քանակական նուազման եւ թուլացման բացասական ազդեցութեան դրսեւորումներին.-

- *Բազմաթիւ լրատուամիջոցների գործունէութեան դադարեցում*: Եգիպտոսի հայ համայնքում պատմութեան ընթացքում հրատարակուել են շուրջ 160 պարբերականներ[9]: Ներկայում եգիպտահայ լրատուամիջոցների թիւը ութն է: Վերջին շրջանում գործունէութիւնը դադարեցրած լրատուամիջոցների վերաբերեալ կարելի է ասել, որ եգիպտահայ համայնքում բոլորովին վերջերս գործել է «Արմաւենի» կայքէջը (www.armaveni.com)[10], որը ներկայում գոյութիւն չունի: Առկայ է միայն «Արմաւենի» էջը Դիմա-

[5] «Մոսկուա կ'ընդլայնէ Թարթուսի իր խարիսխը», *Արեւ*, 9 Յունուար 2018:

[6] Ինչը բնական է, քանի որ թէ՛ հրապարակուած նիւթը եւ թէ՛ դրա աղբիւրը վերաբերում են միեւնոյն խնդրին կամ երեւոյթին:

[7] Վահրամ Հովեան, «Եգիպտոսի հայ համայնքը», *21-րդ ԴԱՐ*, 3:2015, էջ 87-90:

[8] Վահրամ Հովեան, «Եգիպտոսի հայ աւետարանական համայնքը», *Գլոբուս. ազգային անվտանգութիւն*, 3:2011, էջ 44-45:

[9] *Հայ Սփիւռք հանրագիտարան*, գլխ. խմբ.՝ Յ. Այվազեան, «Տիգրան Մեծ հրատ.», Երեւան, 2003, էջ 162:

[10] *Հայկական Սփիւռք տարեգիրք (2015)*, ՀՀ Սփիւռքի նախարարութիւն, «Աստղիկ գրատուն», Երեւան, 2016, էջ 279:

տետր («Facebook») ընկերային ցանցում, որտեղ տեղադրուած են կայքի նիւթերի յղումները: Սակայն, քանի որ կայքը չի գործում, ապա այդ յղումներն էլ որեւէ տեղ չեն տանում օգտատէրերին:

- *Հրապարակման յաճախականութեան նուազում:* Վերջին տարիներին այս երեւոյթի դրսեւորումներն են՝ նախկինում օրաթերթ *Արեւ*ի վերածումը շաբաթաթերթի (2016ից), ՀԲԸՄի *Արեգ* արաբալեզու ամսագիրի վերածումը եռամսեայի (2017ից)[11]:
- *Անբաւարար ներկայացուածութիւն համացանցում:* Վերոյիշեալ թերթերից ոչ մէկը ունի իր կայքէջը: Միայն *Արեւ*ը եւ *Յուսաբեր*ը էջեր ունեն Դիմատետրում: *Արեւ*ի Դիմատետրի էջում[12] լուսանկարուած են շաբաթաթերթի բոլոր էջերը եւ տեղադրուած որպէս լուսանկարներ: Նման ներկայացուածութիւնը դժուարացնում, եթէ չասենք՝ անհնարին է դարձնում պարբերականի ընթերցումը էլեկտրոնային տարբերակով: Աւելի շահեկան է *Յուսաբեր*ի ներկայացուածութիւնը Դիմատետրում[13], որտեղ տեղադրւում են թերթի էլեկտրոնային տարբերակները՝ pdf ձեւաչափով: Կարծում ենք *Արեւ*ի համար նոյնպէս շահեկան կը լինի ընդօրինակել Դիմատետրում ներկայացուածութեան *Յուսաբեր*ի փորձը եւ էջերի լուսանկարների փոխարէն տեղադրել շաբաթաթերթի էլեկտրոնային տարբերակը՝ pdf ձեւաչափով: Ինչ վերաբերում է *Ջահակիր*ին, մեզ չյաջողուեց գտնել վերջինիս էջը Դիմատետրում:

Աւելի բարուօք է իրավիճակը ՀԲԸՄ Եգիպտոսի մասնաճիւղի *Տեղեկատու* եւ արաբալեզու *Արեգ* եռամսեայ հանդէսներին: Կառոյցի կայքէջում (www.agbuegypt.com) տեղադրուած են յիշեալ հրատարակութիւնների էլեկտրոնային տարբերակները (pdf ձեւաչափով)[14]:

Ներկայում, եթէ փորձենք տալ Եգիպտոսի հայկական լրատուամիջոցների ընդհանուր բնութագիրը՝ գործունէութեան նշանակալիութեան տեսակէտից, ապա կարող ենք ասել, որ դրանք հիմնականում հանդիսանում են տեղական-համայնքային լրատուամիջոցներ: Հայկականութեան տեսանկիւնից չենք կարող ասել, որ դրանց գործունէութիւնն ունի տարածաշրջանային կամ համազգային նշանակութիւն: Իսկ վերազգային չափորոշիչով դիտարկելիս կրկին չենք կարող ասել, որ դրանց գործունէութիւնն ունի համապետական (եգիպտական) կամ միջազգային նշանակութիւն:

Եգիպտոսի հայկական լրատուամիջոցների տեղական-համայնքային բնութագրի դրսեւորումներն են.-

---

[11] Պայրամեան, էջ 269:

[12] https://www.facebook.com/profile.php?id=100014240286526 :

[13] https://www.facebook.com/Housaper-Daily-477643769062432/?hc_ref=ARR9fhFWfeu5WRRTolS2aywlHrIf5exGMkj9OoPP6_Gt9TbumaxFuJ3LL8PnPZI8NU4 :

[14] Տե՛ս՝ http://agbuegypt.com/magazines/ :





1. *Հայալեզուութիւն:* Ներկայում գործող վերոյիշեալ ութ լրատուամիջոցներից հինգը՝ երեք կուսակցական թերթերը, *Տեղեկատուն* եւ հայկական ռատիօժամը, միայն հայալեզու են, ինչը նշանակում է, որ դրանք նախատեսուած են միայն հայկական լսարանի համար[15]: ՀԲԸՄի Եգիպտոսի մասնաճիւղի կայքը անգլիալեզու է, սակայն այնտեղ ներկայացուած է հիմնականում այդ կառոյցի գործունէութիւնը: Որոշակի սփոփիչ հանգամանք է կառոյցի արաբալեզու *Արեգ* եռամսեայ հանդէսը, որի պարագայում էլ առկայ է հրատարակման ցածր յաճախականութեան խնդիր: Իսկ «Հայաստանը եւ հայերը արաբական մամուլի մէջ. 1876-1923» կայքէջը, որն արաբալեզու է եւ անգլիալեզու, ինչպէս նշուեց վերը, ունի նեղ մասնագիտական ուղղութիւն:

2. *Սեփական թղթակիցների բացակայութիւն:* Եգիպտոսի հայկական լրատուամիջոցները չունեն իրենց թղթակիցները ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ այլ երկրներում: Այդ է պատճառը, որ դրանցում հրապարակուող նիւթերը, որոնք վերաբերում են Հայաստանին եւ միջազգային իրադարձութիւններին, վերցուած են հայկական եւ միջազգային լրատուամիջոցներից:

Հարկ է նշել, որ ժամանակակից հեռահաղորդակցային միջոցները զգալիօրէն մեղմում են սոյն խնդիրը: Եթէ հնարաւոր է առցանց ուղիղ եթերով հետեւել Հայաստանի կառավարութեան, ազգային ժողովի, այլ պետական հաստատութիւնների նիստերին, մամուլի ասուլիսներին եւ անգամ դրսում ծաւալուող իրադարձութիւններին (հանրահաւաքներ, երթեր եւն.), ապա զգալի չափով կարելի է եւ սեփական թղթակից չունենալ:

3. *Սահմանափակ տպաքանակ:* Թուարկուած բոլոր հրատարակութիւնների տպաքանակն էլ սահմանափակ է, ինչը նշանակում է, որ դրանք նախատեսուած չեն լայն լսարանի համար: Թէ որքան է իւրաքանչիւր պարբերականի տպաքանակը՝ դժուար է ասել, քանի որ վերջիններս խուսափում են իրենց տպաքանակի վերաբերեալ նշում կատարելուց: Դա,

[15] Եգիպտոսում գործում է Գահիրէի Համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութիւնների Կենտրոնը, ինչը նշանակում է, որ այդ երկրում հայերէնին կարող են տիրապետել եւ հայկական լրատուամիջոցների հնարաւոր լսարան հանդիսանալ նաեւ ազգութեամբ արաբները: Սակայն նրանց թուաքանակը խիստ սահմանափակ է՝ ասելու համար, որ եգիպտահայ հայալեզու լրատուամիջոցների հրապարակումները նախատեսուած են նաեւ արաբ եւ այլազգի ընթերցողների համար:

ըստ Սփիւռքի մասնագէտների, բացատրւում է «դէմքը փրկելու» նկատառումներով[16]:

Մասնագիտական նեղ հանդէսների եւ մամուլի պարագայում տպաքանակի սահմանափակութիւնը բնական է, քանի որ դրանց լսարանն էլ է իւրայատուկ (նեղ): Մինչդեռ զանգուածային լրատուամիջոցների պարագայում խիստ սահմանափակ տպաքանակը բնական չէ, քանի որ դրանց լսարանը ենթադրւում է, որ պէտք է լինի հնարաւորինս լայն: Հետեւաբար, եգիպտահայ պարբերականների տպաքանակի սահմանափակութիւնը խօսում է այն մասին, որ դրանց լսարանը, եթէ ոչ-ամբողջութեամբ, ապա գլխաւորապէս եգիպտահայութիւնն է:

4. *Թոյլ ներկայացուածութիւնը համացանցում:* Այս մասին խօսուեց վերը: Այստեղ միայն աւելացնենք, որ համացանցում թոյլ ներկայացուածութիւնը իր հերթին չի նպաստում եգիպտահայ լրատուամիջոցների լսարանի սահմանափակութեան յաղթահարմանը եւ ազդեցութեան մեծացմանը: Առհասարակ, թուային արհեստագիտութիւնների դերը ժամանակակից լրատուամիջոցների աշխատանքում, ինչպէս նշում են ոլորտի մասնագէտները, դժուար է գերագնահատել: Գերմանաբնակ պոլսահայ լրագրող Կարպիս Քեշիշօղլուն, ով երկար տարիներ ղեկավար պաշտօն է զբաղեցրել *Հիւրիէթ* թերթի Գերմանիայի խմբագրութիւնում, վերջերս թուրքերէնով հրատարակած իր «Թուային դարում՝ լրագրութիւն» մենագրութեան մէջ նշում է. «*Բոլոր այն լրագրողներն ու խմբագիրները, որոնք տիժիթալ թեքնիքագիտութեան հետ «թանկօ չեն պարեր», խաղէ դուրս կը մնան: Տիժիթալ դարուն աւանդական լրագրողութիւնը թերի կը մնայ*»[17]:

Լինելով գլխաւորապէս համայնքային կառոյցներ՝ եգիպտահայ լրատուամիջոցները հիմնականում կատարում են համայնքում հայապահպանութեան, համախմբման, ներհամայնքային կապերի ապահովման, հայկական լրատուութեան իրազեկման գործառոյթներ: Սակայն դրանք հիմնականում զուրկ են քաղաքական դերակատարութիւնից Եգիպտոսում: Սա մի կողմից հայ համայնքի՝ որպէս քաղաքական գործօնի դերի բացակայութեան արդիւնքն է, սակայն միւս կողմից՝ ինքն էլ իր հերթին է նպաստում, որպէսզի համայնքը չունենայ այդպիսի դեր:

Սակայն հայ համայնքի քաղաքական գործօնի վերածումը Եգիպտոսում կարեւոր նշանակութիւն ունի՝ հաշուի առնելով հետեւեալ իրողութիւնները.-

---

[16] Մասնաւորապէս, բանաւոր նման կարծիք է յայտնել պատմաբան Գէորգ Եազըճեանը 2018 Մայիսի 29-30ը Պէյրութում տեղի ունեցած «Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիայի հայերը» խորագրով միջազգային գիտաժողովում իր զեկուցման ժամանակ:

[17] «Տողան Հըզլան Կարպիս Քէշիշօղլուի նորատիպ գրքի մասին», *Նոր Մարմարա*, 26 Մայիս 2018:

1. *Եգիպտոսի կշիռը ինչպէս արաբական, այնպէս էլ իսլամական աշխարհում՝ ընդհանրապէս, նրա անդամակցութիւնը Իսլամական Կոնֆերանս կազմակերպութեանը:* Չնայած պատմութեան ընթացքում պարբերաբար Եգիպտոսի ներքին կեանքը խռովութեան ենթարկող եւ անկայունութիւն առաջացնող գործընթացներին[18], այնուամէնայնիւ այդ երկիրը իր տնտեսական, քաղաքական, մարդկային ներուժով եղել եւ մնում է առանցքային պետութիւն, ինչպէս արաբական աշխարհում՝ մասնաւորապէս, այնպէս էլ իսլամական աշխարհում՝ ընդհանրապէս: Այս հանգամանքը կարեւորութիւն է ներկայացնում յատկապէս արցախեան հակամարտութեան շուրջ միջազգային կարծիքի եւ դիրքորոշումների ձեւաւորման տեսանկիւնից: Յայտնի է, որ Ադրբեջանի ներկայիս աշխարհիկ վարչակարգը, թէեւ մի կողմից խուսափում է կրօնականացումից եւ իսլամական ծայրայեղականութեան տարածումից այդ երկրում, իրականացնում է կրօնական հալածանքների եւ հետապնդումների քաղաքականութիւն երկրի ներսում, սակայն, միեւնոյն ժամանակ, չի խորշում օգտագործել կրօնական գործօնը (նոյն իսլամական ծայրայեղականութիւնը) արցախեան հակամարտութիւնում Հայաստանի Հանրապետութեան դէմ: Ադրբեջանի կողմից արցախեան հակամարտութիւնը նենգափոխելով քաղաքականի փոխարէն ներկայացւում է որպէս կրօնական (քրիստոնեայ-մուսուլման) հակամարտութիւն: Այդկերպ փորձ է արւում շահագործելով իսլամական համերաշխութեան գործօնը իսլամական աշխարհը դուրս բերել Հայաստանի Հանրապետութեան եւ հայերի դէմ՝ ստանալ իսլամութեան աջակցութիւնն արցախեան հարցում:

Նման քաղաքականութեան հիմնական հարթակը հանդիսանում է Իսլամական Կոնֆերանս կազմակերպութիւնը, որտեղ, ելնելով նոյն իսլամական համերաշխութեան սկզբունքից, շատ յաճախ ընդունւում են շեշտակիօրէն հակահայկական փաստաթղթեր ու յայտարարութիւններ[19]: Ճիշտ է, դրանք իրաւական ուժ չունեն եւ գործնականում որեւէ ազդեցութիւն չեն թողնում ո՛չ արցախեան հակամարտութեան կարգաւորման ընթացքի եւ

[18] Դրանցից վերջին ամէնանշանաւորը 2011ին տեղի ունեցած «արաբական գարունն» էր եւ դրան յաջորդած իրադարձութիւնները՝ մինչեւ 2013, Եգիպտոսում նախագահական ընտրութիւնները եւ նոր նախագահ Ապտէլ Ֆաթթահ ԱլՍիսիի ընտրութիւնը: Եգիպտոսի ներքին կեանքը խռովող երեւոյթներ են նաեւ վերջին շրջանում յաճախակիացած ահաբեկչական գործողութիւնները, յատկապէս՝ քրիստոնեաների (ղպտիների) դէմ:

[19] Արաքս Փաշայեան, *Իսլամական Կոնֆերանս Կազմակերպութիւնը. նպատակները, գործունէութիւնը, դիրքորոշումը ղարաբաղեան հակամարտութեան նկատմամբ*, «Զանգակ-97», Երեւան, 2003, էջ 185-219. նաեւ նոյնի՝ «Միջազգային իսլամական գործօնի նշանակութիւնը հայ-ադրբեջանական հակամարտութիւնում», *Գլոբուս. էներգետիկ եւ տարածաշրջանային անվտանգութիւն*, 4:2009, էջ 21-4:

ո՛չ էլ ՀՀի ու իսլամական երկրների յարաբերութիւնների վրայ, այնուամէնայնիւ, միջազգային տեղեկատուական բացասական խորք են ստեղծում արցախեան հակամարտութեան շուրջ, յատկապէս՝ իսլամական աշխարհում:

2. *Եգիպտոսի տնտեսական հնարաւորութիւնները:* Եգիպտոսը տնտեսական առումով հանդիսանում է աշխարհի, թէեւ ոչ ամէնազարգացած, բայց առնուազն՝ առաջատար երկրներից մէկը, որն ունի լուրջ տնտեսական ներուժ: Այն ՀՆԱով (տնտեսական զարգացուածութեան աստիճան) 32րդ տեղն է աշխարհում[20]: Հետեւաբար, հայ-եգիպտական տնտեսական յարաբերութիւնները կարեւոր նշանակութիւն ունեն ՀՀի համար: Եւ նպատակայարմար է օգտուել այդ յարաբերութիւններից ենթադրուող օգուտներից: Իսկ հայ-եգիպտական տնտեսական կապերի աշխուժացման առումով կարեւոր դերակատարութիւն ունի հայ համայնքը, այդ թւում նաեւ՝ հայկական լրատուամիջոցները, որոնք իրենց հրապարակումներով կարող են նպաստել այդ կապերի զարգացմանը:

3. *Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը Եգիպտոս-Թուրքիա յարաբերութիւնների հոլովոյթում:* Յատկապէս վերջին շրջանում՝ «արաբական գարունից» յետոյ ընկած ժամանակահատուածում, պարբերաբար սրւում են Եգիպտոսի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնները, որի արդիւնքում առաջ է մղւում Եգիպտոսի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը: Ճիշտ է, այստեղ նոյնպէս գլխաւոր գործունէութիւն է ծաւալում Հայ Դատի Յանձնախումբը, որին էլ վերապահուած է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ այլ համազգային խնդիրներով զբաղուելու առաքելութիւնը: Այդուամէնայնիւ, կարծում ենք, վերջինիս գործունէութիւնն աւելի արդիւնաւէտ կը դառնայ՝ համապատասխան տեղեկատուական ուղեկցման պարագայում:

Հասկանալի է, որ հայ համայնքի՝ քաղաքական գործօնի վերածման համար միջոցները սահմանափակ են, ինչը, ինչպէս արդէն նշուեց, պայմանաւորուած է վերջին տասնամեակներում համայնքի թուաքանակի կտրուկ նուազմամբ: Սակայն, միջոցներից բացի, կարեւոր է նաեւ աշխատանքի ճիշտ կազմակերպումը: Հայ համայնքի քաղաքական մեկուսացուածութեան յաղթահարման տեսանկիւնից, կարծում ենք, նպատակայարմար կը լինի տեղեկատուական ասպարէզում հետեւեալ քայլերի իրականացումը.-

1. *Մէկ արաբալեզու կամ երկլեզու (արաբերէն եւ հայերէն) լրատուամիջոցի հիմնում:* Վերջինս կարող է լինել տպագիր (թերթ) կամ էլեկտրոնային (կայքէջ): Այս խնդիրը կարեւոր է Եգիպտոսում հայկական լրատուադաշտը համաեգիպտականի վերածելու տեսանկիւնից, այն առումով, որ

[20] http://gtmarket.ru/ratings/rating-countries-gdp/rating-countries-gdp-info :

արաբալեզուութիւնը կամ երկլեզուութիւնը թոյլ կը տայ ընդլայնել այդ լրատուամիջոցի լսարանը՝ հայ համայնքից բացի նրա մէջ ընդգրկելով նաեւ եգիպտական հանրութեանը: Այս խնդրի լուծման մէկ այլ տարբերակ կարող է լինել ներկայում հրապարակուող թերթերում արաբալեզու հրապարակումների համար 1-2 էջի յատկացումը: Սակայն, քանի որ վերջիններս հիմնականում հայալեզու են, ապա դրանցում 1-2 էջ արաբալեզու հրապարակումները, կարծում ենք, էական արդիւնք չեն տայ: Այլ կերպ ասած՝ դա կարող է լինել նուազ արդիւնաւէտ միջոց, եւ հայկական լրատուամիջոցները հիմնականում կը շարունակեն պահպանել իրենց համայնքային բնութագիրը:

2. *Այդ լրատուամիջոցի հրապարակումների բովանդակութեան համապատասխանեցում վերը յիշատակուած խնդիրներին:* Սա նշանակում է, որ ստեղծուելիք լրատուամիջոցի բովանդակութեան մէջ պէտք է գերակշռեն հետեւեալ երեք թեմաները.- ա) հայ-եգիպտական տնտեսական, քաղաքական, գիտամշակութային յարաբերութիւններ, հայ համայնքի դերն այդ յարաբերութիւններում, բ) արցախեան ազգային ինքնորոշման հիմնահարց, գ) Հայոց Ցեղասպանութեան հիմնահարց:

Համազգային կառոյցներից ներկայում Եգիպտոսում գործում են երեք աւանդական կուսակցութիւնները (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ)՝ ի դէմս իրենց մամուլի օրգանների եւ այլ յարակից հաստատութիւնների, Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները, ՀԲԸՄը: Արաբալեզու կամ երկլեզու համաեգիպտական լրատուամիջոցի ստեղծումը թերեւս վեր է առանձին վերցրած յիշեալ կազմակերպութիւնների հնարաւորութիւններից: Սակայն նրանց միասնական ջանքերով այն թերեւս իրագործելի խնդիր է:

Խնդրի իրագործելիութիւնը ցոյց են տալիս նաեւ նախադէպերը: 1998-2009՝ հրատարակուել է *Արեւ*ի արաբերէն ամսօրեայ յաւելուածը, որի բովանդակութեան մէջ մեծ տեղ ունէին հայ-եգիպտական առնչութիւնները եւ Հայոց Ցեղասպանութեան խնդիրը[21]: Հանգամանքների բերումով 2009ին յաւելուածը դադարել է: Համարւում է, որ 2010ից ՀԲԸՄի *Արեգ* արաբալեզու պարբերականը՝ սկզբում ամսօրեայ, այնուհետեւ՝ եռամսեայ, «կը շարունակէ «Արեւ»ի յաւելուածին առաքելութիւնը»[22]: Այնուամէնայնիւ, կարծում ենք, որ վերջինս բաւարար չէ լիարժէքօրէն իրականացնելու Եգիպտոսում հայկական արաբալեզու լրատուամիջոցի գործառոյթները՝ հետեւեալ պատճառներով: Նախ՝ հրատարակման թոյլ՝ եռամսեայ յաճախականութիւնը թոյլ չի տալիս անհրաժեշտ քանակի տեղեկատուական եւ վերլուծական նիւթեր մատուցել ընթերցողին: Բացի այդ, լինելով ՀԲԸՄի

[21] Պերճ Թերզեան, *'Արեւ'ի արաբերէն ամսօրեայ յաւելուածը*, African press, Գահիրէ, 2014, էջ 46-48:

[22] Նոյն, էջ 18:

Եգիպտոսի մասնաճիւղի հրատարակութիւն՝ *Արեգը* ենթադրաբար[23] զգալի տեղ է յատկացնում կառոյցի գործունէութեան լուսաբանմանը, ինչը բովանդակային տեսանկիւնից այնքան էլ չի ներդաշնակւում վերը թուարկուած խնդիրների հետ եւ չի նպաստում դրանց լուծմանը:

Մէկ այլ նախադէպ աւելի շուտ վերաբերում է հարցի նիւթական (դրամական) կողմին: ՀԲԸՄի միջոցներով 2007ին Գահիրէի Համալսարանում բացուել է Հայագիտական Ուսումնասիրութիւնների Կենտրոն[24]: Եթէ մէկ կառոյցի միջոցներով հնարաւոր է ստեղծել գիտական հաստատութիւն Գահիրէի Համալսարանի շրջանակներում, ապա եօթ կառոյցների համատեղ ուժերով մէկ լրատուամիջոցի ստեղծումը նոյնպէս, կարծում ենք, իրատեսական խնդիր է:

Բացի այդ, ծրագրի յաջող իրականացումը կարող է իր հերթին բարերար ազդեցութիւն ունենալ անհրաժեշտ միջոցների հայթայթման խնդրի տեսանկիւնից: Լսարանի ընդլայնմամբ, եթէ լրատուամիջոցն ունենայ պահանջարկ, կարող է մեծանալ դրա սպառումը եւ դրամական լուրջ միջոցներ բերել վերջինիս: Այնպէս որ, սկզբնական շրջանում համայնքային կառոյցների միջոցներով ստեղծուած լրատուամիջոցը յետագայում կարող է դրամական առումով դառնալ ինքնաբաւ:

Ինչ վերաբերում է թղթակիցների խնդրին, ապա այն, ինչպէս նշուել է վերը, զգալիօրէն մեղմւում է հեռահաղորդակցութեան արդի միջոցների կիրառմամբ: Բացի այդ, սոյն խնդիրը կարելի է լուծել նաեւ ՀՀի եւ Սփիւռքի միջոցներով: Քանի որ ստեղծուելիք լրատուամիջոցի հրապարակումները հիմնականում նուիրուած են լինելու Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը, արցախեան ինքնորոշման խնդրին եւ հայ-եգիպտական բազմաբնոյթ յարաբերութիւններին, ապա որպէս հրապարակուող նիւթ կարող են լայնօրէն օգտագործուել այդ թեմաներով հայաստանեան, Սփիւռքի եւ միջազգային մամուլի, ինչպէս նաեւ վերլուծական-հետազօտական կենտրոնների հրապարակումները: Այլ կերպ ասած՝ սկզբնական շրջանում համաեգիպտական հայկական լրատուամիջոցի «թղթակիցների» դերում կարող են հանդէս գալ հայաստանեան, ինչպէս նաեւ Սփիւռքի վերլուծական կենտրոնները, փորձագէտները եւ լրագրողները:

Ամփոփելով նշենք, որ համաեգիպտական արաբալեզու կամ երկլեզու հայկական լրատուամիջոցի հիմնումը, բացի Եգիպտոսի հայ համայնքի՝ քաղաքական գործօնի վերածմանը նպաստելուց, կը լինի նաեւ լաւ օրինակ ա) սփիւռքեան կառոյցների միջեւ համագործակցութեան, բ) սփիւռք-

[23] Ենթադրաբար, քանի որ տողերիս հեղինակը, չտիրապետելով արաբերէնին, չի կարողացել ընթերցել *Արեգի* համարները:

[24] Պերճ Թերզեան, *Գահիրէի համալսարանի Հայագիտական ուսումնասիրութիւններու կեդրոնը*, African Press, Գահիրէ, 2017, էջ 11-4:

եան համայնքների միջեւ համագործակցութեան եւ գ) Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան:

CONTEMPORARY EGYPTIAN-ARMENIAN MEDIA (Summary)

Vahram Hovyan
vhovyan@yandex.ru

Notwithstanding the dwindling numbers of the Egyptian-Armenian community, print remains the most popular medium. The three surviving newspapers, *Hoosaper* (founded in 1913), *Arev* (founded in 1915) and *Chahagir* (founded in 1948), are owned by the traditional Armenian parties, who maintain their presence through proxy structures related to culture and sports.

The paper analyses the Armenian mass media, which include the above-mentioned newspapers, Armenian Radio, and the AGBU website as well as the Arabic periodical *Arek*. The author notes that these media outlets are not being properly used and run and makes a number of recommendations for their better performance and output.

The Matter of Identity within the Egyptian-Armenian Community

Aspé Djizmedjian
aspe.dj@gmail.com

ABSTRACT

The concept of cultural identity in line with social and ethnic identity is a basic and central constituent of identity. It is a critical factor in generating and eventually identifying the community, differentiating it from others and, consequently, enabling it to have a unique existence, empowering it to express itself and represent its features to the outside world. However, diasporization and globalization - the effective and influential world cultural trends, and the modes and lifestyles they market in our modern world - have made the preservation and practice of cultural identity a challenging endeavor. Indeed, it has become more and more difficult for minority groups to maintain their cultural identity and express themselves accordingly.

The Armenian diaspora is known to have the highest ratio between those living in the diaspora host lands and those living in the homeland, as three out of four Armenians live outside the Republic of Armenia. Despite the diverse challenges they face, Armenian communities around the world make noteworthy efforts to preserve their cultural identity, develop, grow and strengthen their connectedness to and relationship with their homeland as well as disseminate and raise awareness about Armenian affairs and Armenian culture in their host lands.

This paper will briefly examine the matter of identity and try to focus on aspects of the mindset and perceptions of the Egyptian Armenians concerning Armenian identity. A short historical narrative of the Egyptian-Armenian community, its evolution and the discussion of its current conditions may enable the reader to better comprehend how the circumstances of living in the diaspora and evolving in a foreign country impact Armenians' identity and their attachment to Armenia. Moreover, the paper will present the results of some visual research, which gives the reader an understanding of how and why Armenians of Egypt connect themselves to the homeland and practice and maintain their Armenian identity. Furthermore, the paper will examine the routes through which the community expresses its Armenian identity and speculate whether there could be other ways and nuances or more individualistic modes for identity expression. The paper will also shed light on the community's sociocultural context and situate these discussions in the context of integration. Questions about the importance of Armenian identity preservation, recognition of the Armenian Genocide and the service they

render to Armenian consciousness and Armenian cohesiveness will be raised too.

IDENTITY

The Concept of Identity

In today's fast-track world, where communalism is losing further grounds to globalization, one may ask whether the matter of identity (and in this particular case, Armenian identity) is important. Or is it an issue worth discussing? Is it in crisis or being threatened? Should it be a concern for the Armenians? Probably one of the main reasons for the rise of such questions is **diasporization.**

Դոկտ. Հիլմար Քայզէր Դոկտորականը պաշտպանած է Ֆլորանսի (Իտալիա) European UNiversity Instituteին մէջ, 2001ին: Մասնագիտացած է Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի ընկերատնտեսական պատմութեան մէջ, իմասնաւորի՝ Հայկական Ցեղասպանութեան: Բազմաթիւ մանրամասնեալ, խորացուած ուսումնասիրութիւններ ունի Հայոց Ցեղասպանութեան որոշակի երեսակներուն մասին, ինչպէս՝ *At the Crossroads of Der Zor. Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915–1917* (2002), *The Extermination of Armenians in the Diarbekir Region* (2014) եւ յօդուած-ուսումնասիրութիւն մը՝ *The Oxford Handbook of Genocide Studies* գիրքին մէջ (2010)՝ "Genocide at the Twilight of the Ottoman Empire" վերնագրով: Մասնակցած է ՀՍՈԿի գիտաժողովներուն:

Դոկտ. Էսլամ Ֆաուզի Անաս Քութուպ Ծնած է 1984ին, Աղեքսանդրիա: Դոկտորականը պաշտպանած է 2016ին ընկերաբանութեան մէջ: Ընկերաբանութիւն կը դասաւանդէ Տամանհուրի Համալսարանին մէջ: Մասնակցած է բազմաթիւ աշխատաժողովներու՝ կրթութեան որակի բարձրացման, դասանիւթերու պատրաստման, ռազմավարական ծրագրաւորման նիւթերով: Անդամ է համալսարանին կրթութեան որակի ապահովման յանձնախումբին, իսկ 2016-20՝ համալսարանի ռազմավարական

ծրագրաւորման յանձնախումբին: Ան հանրային դէմք մըն է, հանրային ծառայութեան մեծ աւանդով: Հեղինակ եւ համահեղինակ է ընկերաբանութեան եւ անոր իրաւաբանական երեսակին վերաբերող գիրքերու:

Արմին Քրէտեան Ծնած է Գահիրէ 1960ին: 1983ին աւարտած է Գահիրէի Ամերիկեան Համալսարանի անգլերէնի եւ բաղդատական գրականութեան բաժինը: 1983-85՝ իբրեւ ազատ ունկնդիր հետեւած է ԵՊՀ հայ գրականութեան դասընթացքներուն: 1997ին, մագիստրականով վկայուած է Գահիրէի Ամերիկեան Համալսարանի Միջին Արեւելքի պատմութեան բաժինէն, թեզի նիւթ ունենալով «Եգիպտոսի Հայ Համայնքը Ա. Աշխարհամարտի Շրջանին», որուն մէկ բաժինը՝ «Եգիպտոսի Հայ Համայնքը, Ա. Աշխարհամարտը եւ Հայոց Ցեղասպանութիւնը (1914-1919)» վերնագրով, լոյս տեսաւ *Հայկազեան հայագիտական հանդէս*ի 35րդ (2015) հատորին մէջ: Ներկայիս ան կ'ուսումնասիրէ Խրտեան ընտանիքի արխիւները, որոնք կը վերաբերին նախաեղեռնեան Կիւրինի մէջ կեդրոնացած մանուսագործութեան: Այս նիւթերը - Գահիրէ բերուած իր մեծհօր կողմէ (այժմ ՀՀ Ազգային Արխիւ փոխադրուած) – հումք դարձան Քրէտեանի "A Gurun Shawl on a Cairo Wall" ուսումնասիրութեան, որ լոյս տեսաւ փրոֆ. Րիչըրտ Յովհաննիսեանի խմբագրած *Armenian Sebastia/Sivas and Lesser Armenia* (2004) գիրքին մէջ:

Հիմնական Տեղեկութիւններ Եգիպտոսի Մասին

Ափրիկէի հիւսիս-արեւելեան եւ Ասիոյ հարաւ-արեւմտեան ծայրամասերը Սինայի թերակղզիով իրար կամրջող, Միջերկրականի հարաւի եւ արեւելքի արաբական երկիրները իրար կապող, միջերկրականեան, հիւսիսափրիկեան եւ միջինարեւելեան ինքնութիւն ունեցող երկիրն է Եգիպտոս:

Նեղոսով ու բուրգերով նշանաւորուած Եգիպտոսի գրաւոր պատմութիւնը կը սկսի Ք.ա. Զ. հազարամեակէն: Քրիստոնէական կեդրոն հանդիսանալէ ետք, 639ին Օմար խալիֆայի բանակը կը գրաւէ Եգիպտոսը հռոմէացիներէն: Թ. դարու երկրորդ կէսին, թրքական ծագումով մեմլուք իշխանաւորներ (Թուլունի, ապա եւ Իխշիտի Հարստութիւնները) միաոժամանակ կը կառավարեն երկիրը մինչեւ 969, երբ ֆաթիմեան զօրքը պարտութեան կը մատնէ Իխշիտիները եւ կը հաստատէ իր իշխանութիւնը, որ կը գոյատեւէ մինչեւ ԺԲ. դար: Ֆաթիմեաններու շրջանին, Եգիպտոսի մէջ կը փայլին շարք մը հայ իշխանաւորներ, որոնք կը կառավարեն երկիրը: Սալահէտտինի յաղթանակը՝ 1171ին, վերջ կու տայ Ֆաթիմեան Հարստութեան, կը հաստատէ Էյյուպեան Հարստութիւնը, որ կը տապալի թուրք-չերքէզական մեմլուքներու ձեռամբ, 1250ին: Վերջիններս կը մնան իշխանութեան վրայ մինչեւ օսմանցիներու գրաւումը՝ 1517ին: Մեմլուքեան շրջանի յիշարժան դրուագ է ԺԴ. դարակէսի Սեւ Մահը, որ հնձեց երկրին բնակչութեան շուրջ 40%ը: Օսմանցիք, երկիրը կը կառավարեն մեմլուք իշխանաւորներով, մինչեւ Նափոլէոն Պոնափարթի արշաւանքը, 1798ին: Եգիպտոսի օսմանեան շրջանի 1687-1731 փուլը կը յատկանշուի յաջորդական վեց սովերով որոնք կը խլեն բնակչութեան մէկ-վեցերորդին կեանքը:

Նափոլէոնի արշաւանքով նոր հանգրուան կը բացուի ամբողջ Միջին Արեւելքի մէջ. եւրոպական միջամտութիւնները կը խախտեն ուժային հաւասարակշռութիւնները: Օսմանեան Կայսրութեան կողմէ Եգիպտոսի կառավարիչ ղրկուած ալպանացի Մուհամմատ Ալի կը ձգտի կիսանկախ վարել երկիրը, ափ մը հայերու ու ընտրեալ այլ փոքրամասնական գործիչներու հետ կը յաջողի համեմատական բարգաւաճում յառաջացնել ու զարգացնել երկիրը, հաստատել իր գերդաստանին ժառանգականութիւնը: 1867ին, Եգիպտոս կը դառնայ կիսանկախ տարածք՝ խտիւութիւն, Մուհամմատ Ալիի ժառանգներուն իշխանութեամբ: Յաջորդ տարիները կը նշանաւորուին Սուէզի ջրանցքի բացումով, երկրին սնանկացում-օտար միջամտութեանց զօրացումով եւ ազգայնականներու ըմբոստացումով: 1882ին, Մեծն Բրիտանիա վերահսկողութեան տակ կ'առնէ Եգիպտոսը մինչեւ Ա. աշխարհամարտ, որմէ ետք, 1922-53՝ կը հաստատուի թագաւորական վարչակարգ: 1952ի սպայից յեղաշրջումէն կարճ ժամանակ ետք իշխանութեան կու գայ Կամալ Ապտէլ Նասէր, որով Եգիպտոս կը ստանձնէ արաբական աշխարհի առաջնորդութիւնը՝ արաբականութեան լոզունգին տակ: Յաջորդող երկու տասնամեակները կը նշանաւորուին Սուէզի ջրանցքին դէմ յարձակումով,

Սուրիոյ հետ միացեալ հանրապետութեան հռչակումով, արաբ-իսրայէլեան պատերազմներով եւ 1973ի նախագահ Անուար Սատաթի՝ Իսրայէլի հետ կնքած հաշտութեամբ: Սատաթի սպանութեամբ երկիրը տակաւ կը վերադառնայ արաբական աշխարհ ու կը բոլորէ յարաբերական խաղաղութեան եւ վերելքի, հուսկ՝ տեղքայլի շրջան մը:

Խաղաղութեան այս շրջանը կ'անկայունանայ արաբական գարնան հետեւանքով. 2011ին նախագահ Հուսնի Մուպարաք կը հրաժարի, Յունիս 2012ին նախագահ կ'ընտրուի իսլամական Մուհամմատ Մուրսի, Եգիպտոս միաոժամանակ կ'ենթարկուի Թուրքիոյ ազդեցութեան՝ մինչեւ Յուլիս 2013, երբ բանակը ձեռք կ'առնէ երկիրը եւ նոր ընտրութիւններով (26-28 Մայիս 2014) նախագահ կը դառնայ Ապտէլ Ֆաթթահ ԷլՍիսի:

Եգիպտոս շրջանային ուժ մըն է, Նեղոսի երկու ափերուն յառաջացած երկրագործական ու բնակելի տարածքին վրայ (շուրջ 40,000 քառ. քլմ.) բնակող 100 միլիոն բնակչութեան մեծամասնութեամբ, ան ունի աշխարհի 33րդ տնտեսութիւնը, կը գտնուի զարգացող պետութիւններու շարքին եւ 116րդն է մարդկային զարգացման համաշխարհային սանդխակին վրայ: Հիմնադիր-անդամ է ՄԱԿին, Չէզոք Երկիրներու Շարժումին (ՉԵՇ), Արաբական Լիկային, Ափրիկեան Միութեան, Իսլամական Համագործակցութիւն Կազմակերպութեան (ԻՀԿ) եւ Համշխարհային Երիտասարդական Ֆորումին:

1,010,408 քառ. քմ. տարածքով, 27 նահանգներով Եգիպտոս կը հանդիսանայ մեծագոյն բնակչութեամբ արաբական երկիրը: Բնակչութեան շուրջ 85 տոկոսը մահմետական է, որ նաեւ պետական կրօնքն է, մինչ 10-15 տոկոսը ղպտի քրիստոնեաներ են: Երկրին մէջ կ'ապրին նաեւ շուրջ 5 միլիոն գաղթականներ՝ Սուտանէն, ափրիկեան երկիրներէն, Պաղեստինէն, Սուրիայէն ...:

Ներկայիս Եգիպտոս կը ջանայ կարելի յաջողութեամբ եւ իմաստութեամբ նաւարկել իր ժողովրդագրական գերաճին, տնտեսական դժուարութեանց, իսլամ ծայրայեղականութեան, ղպտի փոքրամասնութեան իրաւունքներու, արաբ-իսրայէլեան տագնապին, շրջանային իր դիրքերուն վերադառնալու, արաբական աշխարհին թէ ՉԵՇին ու ԻՀԿին իր առաջնային դիրքերը վերագրաւելու, Չինաստանի, Մ. Նահանգներու, Եւրոպական Միութեան ու Ռուսաստանի միջեւ իր շահերը պաշտպանելու եւ յառաջմղելու խաչուղիներուն վրայ:

Համառօտ Ուրուագիծ Եգիպտոսի Հայօճախին

Հայկական ներկայութիւնը Եգիպտոսի մէջ կ'առնչուի առնուազն նախաքրիստոնէական հիթիթ-խուրրի միտաննիական-փարաւոնական փոխյարաբերութեանց: Այս բնագաւառը կարիքն ունի խորազնին ուսումնասիրութեանց՝ իբրեւ Հին Աշխարհի տէրութիւններու մշակութային-խնամիական-ռազմական-տնտեսական թէ այլ բնոյթի բախումներու եւ գործակցութեանց կապեր:

Աւելի ետք Մեսրոպ Մաշտոցի օրերուն, Մովսէս Խորենացին - դասընկերներու հետ - ուսումնառութեան կ'առաքուի Աղեքսանդրիա: Այս շրջանին նաեւ ի յայտ կու գան հռոմէական զօրագունդերու գլուխ կանգնած հայ զօրականներ, որոնք կը կառավարեն Եգիպտոսը: Կրթա-ուսումնական այս ներկայութեան կը զուգադիպի կրօնական կեցութիւնը հայ անապատականներու՝ եգիպտական զանազան վանքեր: Կրօնական այս ներկայութիւնը պիտի առաւել հաստատութենականացուէր, առնուազն Ժ. դարէն՝ Հայ Եկեղեցիին մինչեւ այսօր երկարող գրեթէ անընդհատ ներկայութեամբ:

...Նոյնիսկ Սասունցի Դաւիթի ներկայութիւնը կ'արձանագրուի Մսըրի մէջ, որ արձագանգն է երկու երկիրներու ժողովուրդներուն միջեւ եղած փոխյարաբերութեան:

Ժ. դարու (եւ այնուհետեւ) Ֆաթիմեան Եգիպտոսի մէջ կը փայլատակին աստղերը հայ վեզիրներու, կառավարիչներու որոնք միառժամանակ կը վարեն երկիրը: Այնուհետեւ, հայկական առնչութիւնները կը զգենուն միջպետական բնոյթ՝ Կիլիկեան Հայաստանի եւ մեմլուքեան Եգիպտոսի շրջանին: Տեղին է յիշել որ կիլիկեան հայոց վերջին արքան գերի տարուեցաւ Եգիպտոս, ապա փրկագնուելով անցաւ Ֆրանսա: ԺԵ.-ԺԸ. դարերուն եգիպտահայ ներկայութիւնը կը նահանջէ՝ հաւանաբար հայութեան թիւին նօսրացումով, սակայն կը գոյատեւէ. ուշագրաւ է որ ԺԸ. դարավերջին Նափոլէոն Պոնափարթի արշաւանքին դիմադրող եգիպտական ծովային ուժերը կը ղեկավարէ Նիկողայոս անուն հայը:

Եգիպտոսի պատմութեան նոր շրջանը կը սկսի Մուհամմատ Ալիով, որուն վերելքին մեծապէս կը նպաստեն պոլսահայ եւ զմիւռնահայ սարաֆներ, որոնց կարգին Պօղոս Պէյ Եուսուֆը: Վերջինիս իմաստութիւնը, հաւատարմութիւնն ու նուիրումը կը դառնան պատճառ որ Մուհամմատ Ալի ատակ եւ կարողունակ հայեր հրաւիրէ, որոնք կը դառնան իր մտաւոր աջ բազուկը: Եգիպտահայ առաջին սերունդի այս ներկայացուցիչներ - այլոց կարգին - կ'առաքուին Եւրոպա՝ ուսման, եւ յետ-վկայման, տասնամեակներ շարունակ, կը դառնան երկրին կրթական, երկրագործական, տնտեսութեան, արտաքին յարաբերութիւններու թէ այլ բնագաւառներու առաջնորդ-պաշտօնատարներ, երկիրը յառաջմղող, Օսմանեան Կայսրութենէն աւելի արագ զարգաց-նող ուժեր:

Յիրաւի, ԺԹ. դարու հայօճախին հսկայ նպաստը Եգիպտոսին՝ անմրցելի է ուրիշ որեւէ հայօճախի ԺԹ. դարու նպաստին: Եգիպտահայ պետական աւագանիին ԺԹ. դարավերջի լաւագոյն դրսեւորումը կը հանդիսանայ վարչապետ, արտաքին գործոց նախարար եւ այլ վճռորոշ պաշտօններ ստանձնած Նուպար փաշա, որուն յարատեւ, հետեւողական ջանքերուն շնորհիւ կը միօրինականան խառն դատարանները եւ կը սահմանափակուին օտար դատական միջամտութիւնները: Եգիպտահայ աւագանին բացարձակ հաւատարմութեամբ ծառայեց Եգիպտոսին, որով շեշտուեցաւ հայոց դրական վարկը արաբական աշխարհին մէջ, դիւրացնելով արաբ ասպնջականութիւնը՝ Հայոց Ցեղասպանութենէն մազապուրծ հայ գաղթականութեան:

ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբին, Պոլիսէն ու Թիֆլիսէն ետք, ամէնէն կարողական գաղութն էր եգիպտահայութիւնը, որուն թիւը ստուարացած էր 1895-96ի համիտեան կոտորածներէն ճողոպրած գաղթականներով: Եգիպտահայութեան այս ուժականութեան դրսեւորումն էին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնումը, զինք նախորդած թէ յաջորդած այլ միութիւնները, ինչպէս՝ Համազգային Կրթական եւ Մշակութային Միութիւնը: Իսկ երբ Հայոց Ցեղասպանութեամբ կը խեղուէր Պոլիսը, մինչ թիֆլիսահայութիւնը ուշքը կը դարձնէր Հայկական Վիլայէթներէն աքսորուած մնացորդացին, նաեւ՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան ձեւաւորման, եգիպտահայ գաղութը՝ իր մէջ ձեւաւորուած հայ մտաւորական սեռուցքի ու առկայ նիւթական-քաղաքական ներուժին համադրումով ջանաց լեցնել յառաջացած պարապը եւ ստանձնել ցեղասպանուող ազգին հոգերը: Ասոր հերթական դրսեւորումներէն եղան Փոր Սայիտի գաղթականեան, որբախնամի ու Կիլիկիա վերադարձած հայութեան գոյատեւման եւ վերականգնումին սատարումը: Հայօճախին առաջնորդող մարմինները կրցան լաւագոյնս զօրաշարժել արտասահմանի հայութեան նիւթաբարոյական հնարաւորութիւնները եւ զանոնք ուղղորդել հայկական գերագոյն կարիքներուն բաւարարման:

Աւելի ետք, 1920-40ականներուն, Սփիւռքի ձեւաւորման առաջին տասնամեակներուն, եգիպտահայ գաղութին դերը վերաճեցաւ հիմնականին մէջ Սուրիա-Իրաք-Պաղեստին-Եգիպտոս-Կիպրոս-Յունաստան ապաստանած տասանորդուած հայութեան կազմակերպման աշխատանքներու, հայ որբանոցային կեանքի համակարգումին, կրթական ցանցի որակաւորման, հայկական նորածիլ կեանքին վերընձիւղուող կենսագործունէութեան առողջ բանաձեւումին, գաղափարախօսական գունաւորումին: Հաւանաբար առանց եգիպտահայ ուղղորդող խթանին եւ բարերար, ուղենիշային միջամտութեանց միջինարեւելեան հայ գաղթօճախները տասնամեակներ շարունակ տուայտէին տեղքայլի ու դանդաղ (եթէ ոչ-ամուլ) ձեւաւորման գործընթացին մէջ:


Եգիպտոսի հայօճախին շինիչ այս գործունէութիւնը տակաւ նահանջ արձանագրեց Եգիպտոսի մէջ նասէրականութեան հետեւանքով պետականացման-ազգայնականացման, հայօճախին նօսրացման, Միջին Արեւելքի մէջ պետականակերտման այլեւայլ գործընթացներու եւ արաբական արեւելքի հայ գաղթավայրերու հայօճախներու կայացմամբ ու անոնց հանդէպ նպաստի ու աջակցութեան բնոյթին փոխակերպումներով:

Շուրջ 40,000 հաշուող Եգիպտոսի հայօճախը 1950ականներէն սկսաւ տկարանալ ու ներամփոփուիլ: Ներեգիպտական բեմին վրայ - ի դիմաց արագ աճող տեղաբնիկ բնակչութեան - ան առաւել համարկուեցաւ երկրի ներքին թէ արտաքին քաղաքական, պատերազմական, տնտեսական գործառնութեանց, օրինակելիօրէն առաջնահերթեց ներհայկական համագործակցութիւնը ու յամառօրէն եւ առոյգ, սերտուած ճիգերով շարունակեց գոյատեւել ու ծրագրել իր վաղուան մասին:

1970-80ականներուն հայօճախը սկսաւ ի ցոյց հանել իր անմիջական երէկի նպաստը Եգիպտոսին, առաւել վերականգնելով իր վարկը իբրեւ օրինակելի եգիպտացի: Միաժամանակ՝ եկեղեցական, միութենական, հաստատութենական թէ այլ միջոցներով ան առաւել ցանցակալեց ինքզինք Միջին Արեւելքի հայօճախներուն: Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակումով հայօճախը լծուեցաւ նաեւ Հայաստան-Եգիպտոս միջպետական յարաբերութիւններուն իր օգտաշատ դերը խաղալու, միաժամանակ - մանաւանդ վերջին տասնամեակին - ճգնեցաւ Եգիպտոսը դարձնել հայ-արաբ բարեկամութեան եւ համագործակցութեան կարեւոր խարիսխ:

Այսօր, Եգիպտոսի հայօճախը - փոքրաթիւ աղեքսնադրիահայութիւնն ու Գահիրէ կեդրոնացած հայութիւնը - երկրի ներքին գաղափարախօսական-քաղաքական-տնտեսական վերիվայրումներուն հանդէպ աչալուրջ կեցուածքով, միահամաուռ ճիգերով, անցեալի եւ ներկայի իր նիւթաբարոյական կարողութիւնները ի սպաս դնելով իր անդամներու բարօրութեան ու վերելքին, ամրացնելով նաեւ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն թէ Սփիւռքի հայօճախներուն հետ իր ցանցի հիւսքերը, իր կարելին կ'ընէ պիրկ մնալու: Հայօճախը՝ եգիպտական իր քաղաքացիի հաւատարմութիւնը լաւագոյնս կը դրսեւորէ շինիչ ու դրական դեր խաղալով արաբ-հայ բարեկամութեան թէ ՀՀ-Եգիպտոս միջպետական յարաբերութեանց խորացման ու զարգացման, արաբ մտաւորական շրջանակներու մէջ Հայկական Հարցի ճանաչման խնդրով:

Այսօր Եգիպտոսի հայօճախը իբրեւ դրապէս համարկուած, օրինակելի եւ կազմակերպ քաղաքացիներու համախմբում, կարեւոր կեդրոնի դեր ու տեղ ունի Միջին Արրեւելքի ալեկոծեալ Սփիւքերու համաստեղութեան մէջ:



«Եգիպտոսի, Սուտանի Եւ Եթովպիոյ Հայերը» Գիտաժողովը Աւարտեց Իր Աշխատանքները

Ի տարբերութիւն նախորդ չորս նոյնատիպ գիտաժողովներուն, Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի (ՀՍՈԿ) կազմակերպած «Եգիպտոսի, Սուտանի Եւ Եթովպիոյ Հայերը» գիտաժողովը կայացաւ երկու հանգրուանով, Գահիրէի մէջ՝ 12-13 Ապրիլին, գործակցութեամբ Եգիպտոսի Հայոց Առաջնորդարանին եւ Պէյրութի՝ 29-30 Մայիս 2018ին:

Հինգշաբթի, 12 Ապրիլ 2018ի երեկոյեան ժամը 7:30ին, Կոկանեան Սրահին մէջ Գահիրէ, պաշտօնական բացումը կատարուեցաւ գիտաժողովին, ներկայութեամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերշն. Տ. Աշոտ սրբազան Մնացականեանի, Հայկազեան Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեանի, Եգիպտոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արմէն Մելքոնեանի, Եգիպտոսի հայօճախի պատկան մարմիններու ներկայացուցիչներու, ՀՍՈԿի տնօրէն դոկտ. Անդրանիկ Տագէսեանի, եգիպտահայ կազմակերպութիւններու, միութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ մշակոյթով ու պատմութեամբ հետաքրքրուող եգիպտահայ խաւին:

Պաշտօնական բացման հանդիսութեան, բարիգալուստի սրտագին խօսք արտասանեց առաջնորդ սրբազան հայրը ողջունելով ներկայութիւնը վեր.-դոկտ. Հայտոսթեանին, դոկտ. Տագէսանին եւ հրաւիրեալ բանախօսներուն: Ան նշեց նաեւ որ նման գիտաժողովները առիթ են ոչ միայն մօտէն ծանօթանալու հայ ժողովուրդի զաւակներուն տուեալ երկրին մէջ եւ ազգային կեանքէն ներս բերած նուիրեալ մեծ ծառայութեան ու ծաւալած գործունէութեան, այլեւ ազգային գիտակցութիւնը կը զօրացնեն՝ շարունակելու համար նախորդ սերունդներուն ազգապահպան գաղափարներուն եւ համոզումներուն իբրեւ արդիւնք այսօր մեզի հասած հայապահպանութեան օճախները բաց եւ գործուն պահելու դժուար, պատասխանատու եւ միեւնոյն ժամանակ պատուաբեր առաքելութիւնը:

Ապա խօսք առաւ վեր.-դոկտ. Հայտոսթեան, որ գնահատանք յայտնեց առաջնորդարանին եւ դեսպանութեան գործակցութեան՝ իրականացնելու համար այս իւրայատուկ գիտաժողովը: Ան ընդգծեց որ Սփիւռքի ուսումնասիրութիւնը պէտք է ըլլայ արդիւնքը հաւաքական ճիգի, ճկուն մե-

թոտներով, միջ- եւ բազմա-ուսմունքային, առարկայական եւ անկաշկանդ, ունենայ քննական մօտեցում եւ չքննէ միայն անցեալը, այլեւ՝ այսօրը եւ անդրադառնայ վաղուան, ու զուգահեռուին հայ ու օտար սփիւռքները: Վեր. Հայտոսթեան նշեց որ Սփիւռքը իր հերթին սփիւռքներ կը ստեղծէ եւ պէտք է այս նոր զարգացումները եւս ուսումնասիրել ու օգտուիլ անոնցմէ: Ան ինքնութիւնը առնչեց յիշողութեան, ի՛նչը յիշել-չյիշելուն, գնահատեց այն մեծ նպաստը որ ունեցած է Եգիպտոսի հայօճախը եւ մաղթեց որ եգիպտահայ նոր սերունդները շարունակեն այդ նուիրական գործը:

Իր խօսքին մէջ, դոկտ. Տագէսեան իմիջի այլոց առանձնացուց գիտաժողովին առնչութեամբ երեք խորհուրդներ. ան դիտել տուաւ Միջին Արեւելքի հայօճախներու փոխհամագործակցութեամբ յառաջացող այն համոզումը, որ շրջանի նօսրացող հայօճախները երբ համագործակցին, նօսրացման հետեւանքով յառաջացող դժուարութիւններ կարելի կը դառնայ զօրակցութեամբ հարթել: Ան շեշտեց նաեւ մէկութեան գաղափարը, այն առումով որ Միջին Արեւելքի հայը իր մտապաստառին վրայ այս ձեւով կը տեսնէ միջինարեւելեան հայութիւնը իբրեւ մէկ ամբողջութիւն եւ ըստ այդմ կը գործէ: Հուսկ, ան կոչ ըրաւ որ այս գիտաժողովը նախանշան ըլլայ եգիպտահայ համալսարանականներու պարբերական խորհրդաժողովներու կայացումին, որով երիտասարդ սերունդը աւելի մեծ համեմատութեամբ ընդգրկուի եգիպտահայ կեանքին:

Այնուհետեւ, սկիզբ առաւ առաջին նիստը, որուն աւարտին զեկուցողներն ու հիւրերը ուղղուեցան մօտակայ ՀՄԸՄ Արարատ Ակումբը, ուր հիւրասիրուեցան եւ ուր ծաւալեցաւ օգտակար ճանաչողական ու տարբեր հայօճախները յուզող խօսակցութիւն: Յաջորդող երկու նիստերը տեղի ունեցան յաջորդ օր, Հայ Կաթողիկէ Սրբուհի Թերեզա Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Գումարուած երեք նիստերուն ընթացքին կարդացուեցան 10 զեկոյցներ՝ Հայաստանի Հանրապետութենէն, Լիբանանէն, Սուրիայէն ու Եգիպտոսէն ժամանած փորձագէտներէ ու մասնագէտներէ: Եգիպտոսի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արմէն Մելքոնեան ներկայացուց «Հայաստանի Հանրապետութիւն-Եգիպտոս Միջպետական Յարաբերութիւնները», բանասէր Միհրան Մինասեան՝ «Եգիպտահայ արաբագիր հեղինակներ», Ազատուհի Սիմոնեան՝ «Եգիպտահայ *Արտեմիս*ը, իբրեւ կնոջական խնդիրներու յառաջապահ մամուլ», տոքթ. Սուրէն Պայրամեան՝ «Եգիպտահայ գրատպագրութիւնը եւ մամուլը սկիզբէն մինչեւ մեր օրերը», Պետրոս Թորոսեան՝ «Պատմական ակնարկ ՀԲԸՄիութեան Եգիպտոսի օրկան՝ *Միութեան* (1912-1927)», դոկտ. Նարինէ Մարգարեան՝ «Հայ Որբախնամ Ընկերութեան գործունէութիւնը 1916-23», Հայկ Աւագեան՝ «Եգիպտոսի սինեմայի եւ թատրոնի հայ դերասանները. ինքնութեան խնդիրներ», դոկտ. Տիգրան Ղանալանեան՝ «Հայերի արտագաղթը Եգիպտոսից 1950-1970ականներին», դոկտ. Վլադիմիր Պօղոսեան՝ «Սփիւռքա-

հայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն եւ եգիպտահայութիւնը» եւ Ռաֆայէլ Ումուտեան՝ «Եգիպտահայ երկու կաթողիկոս-պատրիարքներ՝ Գասպարեան Եւ Թարմունի» նիւթերը:

Զեկոյցներու աւարտին ծաւալեցան աշխուժ հարց-պատասխան եւ քննարկումներ: Նիստերը վարեցին օրդ. Ասփէ Ճիզմէճեան, տիկ. Սօսէ Պայրամեան-Կրպոյեան եւ դոկտ. Տագէսեան: Ազատ, անմիջական, երկար քննարկումներու եւ վերլուծումներու ընդմէջէն լուսարձակի տակ առնուեցան եգիպտահայ անցեալին ու ներկային հայող հարցեր, իրագործումներ:


Երրորդ նիստի աւարտին, դադարէ մը ետք, տեղի ունեցաւ տոքթ. Պայրամեանի *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ* գիրքին գինեձօնը՝ Եգիպտոսի հայոց առաջնորդարանին հովանաւորութեամբ: Հատորը ներկայացուց դոկտ. Տագէսեան:

Գիտաժողովի աւարտին, դոկտ. Մելքոնեան ի պատիւ գիտաժողովի մասնակիցներուն ընթրիքով մը հիւրասիրեց զեկուցաբերները, հիւրերը եւ հայօճախին պատկան մարմիններու ներկայացուցիչներ՝ ՀՀ շքեղ դեսպանատան պարտէզին մէջ: Գիտաժողովին մասնակիցները այցելեցին առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին եւ առաջնորդարանին մէջ հանդիպում ունեցան առաջնորդ սրաբազան հօր հետ: Համալսարանի նախագահ վեր. Հայտոսթեան եւ դոկտ. Տագէսեան նաեւ պաշտօնական այցելութիւն մը տուին ՀՀ դեսպանատուն, ուր հանդիպեցան պրն. դեսպանին հետ:

Գիտաժողովը կարեւոր նորութիւն էր եգիպտահայութեան համար: Գիտաժողովին տեւողութեան, զեկուցաբերներուն կողքին ներկայ ունկնդիրներ, եգիպտահայ փորձագէտներ, հետազօտողներ, մտաւորականներ շաղախուեցան նոր մտածումներու, հաստատեցին նոր ծանօթութիւններ եւ յարաբերութիւններ, որոնք կը ծառայեն սփիւռքագիտութեան: Գիտաժողովը նաեւ իւրօրինակ երախտիք եւ ճանաչում էր Եգիպտոսի հայութեան կատարած հայ-կական եւ մարդկային ճիգերուն:

Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած «Եգիպտոտի, Սուտանի Եւ Եթովպիոյ Հայերը» գիտաժողովի երկրորդ հանգրուանի պաշտօնական բացման հանդիսութեան ներկայ էին Լիբանանի հայոց առաքելական թեմի առաջնորդ գերշն. Շահէ սրբ. Փանոսեան, Հայկազեան Համալսարանի նախագահ վեր.-դոկտ. Հայտոսթեան, ՄԱՀԱԵՄի ներկայացուցիչ վերապատուելի Նշան Պագալեան եւ վեր. Հրայր Չոլաքեան, եգիպտահայ հիւրեր, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեամբ հետաքրքրուող մտաւորականներ:

Կեդրոնի տնօրէն դոկտ. Տագէսեան բացման խօսքին մէջ բարիգալուստ մաղթեց եւ նշեց, թէ «այս գիտաժողովներուն շարքին հինգերորդով հատած կ'ըլլանք ծրագրուած շարքին կէսը,- եւ թէ՝- Գահիրէի մէջ կայա-



ցած երեք նիստերու 10 զեկուցողներուն կու գան աւելնալու 7 նիստերու 26 ուրիշ զեկուցողներ»: Շնորհակալութիւն յայտնելէ ետք բոլոր մասնակիցներուն, ան նշեց որ մասնակիցներու «անձնական, ընտանեկան, հաւաքական-ազգային, թէ գիտական ենթահողէ բխած զեկոյցները չեն սահամանափակուիր լոկ գիտելիքի փոխանցմամբ: Այդ գիտելիքին մէջ կայ գնահատանք՝ իրագործուածին հանդէպ, պայքար՝ գոյատեւումի, ճիչ՝ աջակցութեան, կոչ՝ որոնումի, թելադրանք՝ խորաթափանց եւ այլատեսակ վերլուծումներու, մարտահրաւէր՝ գալիքի:- Ան աւելցուց թէ,- այս հաւաքը ե՛ւ գիտաժողով է, ե՛ւ խորհրդաժողով, նաեւ՝ իւրօրինակ դրսեւորումը հայու տագնապին, որ միշտ կը փոխակերպուի՝ ի դիմաց հայու գիտաքննական միտքին եւ յարափոփոխ միջավայրին: Գիտաքննական այդ միտքը հաւանաբար բնազանցական տագնապը կ'ապրի ինքնութենական գոյութենութեան»: Ան գիտաժողովին մեծագոյն բացական նկատեց «ներսփիւռքեան փոխյարաբերութիւններու տարածքը, որուն ռազմավարական կարիքը տակաւ կը շեշտուի, մանաւանդ երբ նկատի կ'առնենք Միջին Արեւելքի այս հայօճախներուն նօսրացումն ու տկարացումը, որուն դիմաց համաշխարհայնացման հետեւանքով զօրացող անդրսահամանայնութիւնը եւ *սոֆթ փաուըր*ը աներեւակայելի հնարաւորութիւններ կը յառաջացնեն»: Դոկտ. Տագէսեան հրաւիրեց ներկաները «առաւել ուշադրութեամբ խորհրդածելու եւ գործելու՝ շրջանի եւ ընդհանրապէս հայութեան անդրսահմանային, ներհայկական ցանցակալման, փոխշրդեղումի, զօրակցումի եւ փոխաջակցութեան առնչութեամբ»: Հուսկ, ան շնորհակալութիւն յայտնեց Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան որ այս տարի եւս նիւթաբարոյապէս աջակցեցաւ գիտաժողովին իրականացման, աւելցնելով, որ «խորքին մէջ, գրեթէ անկարելի էր երեւակայել - նկատի առնելով դիմագրաւուած նիւթական դժուարութիւնները - այս գիտաժողովին կայացումը՝ առանց Կիւլպենկեան Հիմնարկութեան ամուր եւ վճռական թիկունքին»:

Վեր.-դոկտ. Հայտոսթեան բարիգալուստ մաղթելէ ետք արտասահմանէն ժամանած հիւրերուն եւ լիբանահայ ներկաներուն, ըսաւ. «Անգամ մը եւս, Սփիռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը մեզ կը հաւաքէ իր փեթակին շուրջ ծանօթանալու, վերյիշելու, կամ ուսումնասիրելու նոր տարածաշրջան մը ուր տասնամեակներ շարունակ հայուն զարկերակը իր հիմնադիր ու ստեղծարար ազդեցութիւնը ունեցած է սփիւռքեան կեանքին վրայ տեղական սահմաններէն շատ անդին: Ասոր մէկ նմուշը տեսանք աւելի քան ամիս մը առաջ Գահիրէի մէջ, ուր վայելեցինք գաղութի առաջնորդարանին, միութիւններու եւ անձնաւորութիւններու հիւրընկալութիւնն ու

մտաւորական եւ ազգային ներդրումը: ... Մեր տարիներու գիտաժողովները կազմակերպուած են պատմութեան, քաղաքականութեան, աշխարհագրութեան, ժողովրդագրութեան, տնտեսագիտութեան, սփիւռքագիտութեան, լեզուաբանութեան եւ արուեստներու ուսումնասիրութեան մարզերու եւ անոնց հանդիպման կէտերու սերտողութեան նպատակով: Մեր լսած զեկուցումներու մէջ թերեւս նուազ շեշտ դրուած է հոգեբանութեան, աստուածաբանութեան եւ մարդաբանութեան մարզերուն վրայ: Հոն ուր երկու հայ գիտաժողովի համար կը հաւաքուի, հոն կը ծնի նոր հայկական յուշահանդէս մը, պատմութիւն մը, ազգային նիւթերու քոնկրէս մը, ներուժ մը: Իսկ երբ երկու հայ Հայկազեանի մէջ հանդիպին, անոնց փորձառութիւնը կը համեմուի տեղական ու օտար անձնաւորութիւններու եւ մշակուած մտքերու իւրայատուկ հարստութեամբ մը»:

Վեր. Հայտոսթեան գնահատեց ՀՍՈԿին եւ աշխատակիցներուն ազնիւ ջանքերը, երախտագիտութիւն յայտնեց Կիլպենկեան Հիմնարկի Հայկական Բաժնին, եւ բոլոր ներկաներուն՝ իրենց գործօն մասնակցութեան համար ու բարեմաղթեց, որ «այս գիտաժաղովը ըլլայ օրինաբեր, շինիչ եւ կողմնորոշուած դէպի ամուր ապագայ»:

Ապա խոհուն վերլուծութեամբ մը, Հայ Ազգային Հիմնարկի (ANI) տնօրէն, վաստակաշատ ցեղասպանագէտ դոկտ. Ռուբէն Ատալեան՝ «By the Nile and the sea, the currents and tides of modernity and the role of the Armenian Diaspora of Northeast Africa» վերնագրեալ դասախօսութեամբ բացառիկ խորութեամբ եւ վերլուծումով ներկայացուց Ափրիկէի վերջին երկու դարերու քաղաքատնտեսական եւ ընկերամշակութային համառօտ համապատկերը: Ան խորացաւ Ափրիկեան Եղջիւրի շրջանին վերիվայրումներուն, արդիականացման ներքին եւ արտաքին գործօններու շփումներէն յառաջացած ուժականութեան ու այդ 'թոհուբոհ'ին մէջ շրջանի ժողովուրդներուն, հայ փոքրամասնութեան, պետական դէմքերու հակադարձութիւններուն ու կրած ազդեցութիւններուն: Քարտէսներով, փաստաթղթային լուսանկարներով ներկայացուած այս դասախօսութիւնը յառաջացուց այն ենթահողն ու միջավայրը, ուր լուսաբանուեցան յաջորդող 26 զեկոյցները:

Գումարուեցան եօթ նիստեր, որոնց ընթացքին զեկուցեցին Ֆրանս-յէն, Մ. Նահանգներէն, Հայաստանի Հանրապետութենէն, Եգիպտոսէն, Եթովպիայէն, Շուէտէն, Գերմանիայէն եւ Միացեալ Թագաւորութենէն ժամանած փորձագէտներ ու մասնագէտներ: Զեկոյցները խմբաւորուած էին ըստ բնագաւառներու.- 1) Պատմութիւն մինչեւ Ի. դարասկիզբ 2) Ցեղասպանութիւն, Նպաստամատոյց եւ Պետութիւն 3) Եգիպտահայութիւնը 1940-80ականներուն 4) Երիտասարդութիւն, Ինքնութիւն, Եգիպտահայութիւնը այսօր 5) Կրթութիւն եւ Ժառանգ 6) Սուտանի հայօճախը, 7) Եթովպիոյ հայօճախը:

Գիտաժողովի աւարտին տեղի ունեցաւ քննարկում եւ ընդհանուր արժեւորում, ուր կարեւորուեցան նման գիտաժողովներու անհրաժեշտութիւնը, անոնց յառաջացուցած խթանը՝ նմանատիպ ուսումնասիրութիւններու եւ նման գիտաժողովներու համար անհրաժեշտ նիւթաբարոյական աջակցութիւնը:

Նիստերէն մէկուն աւարտին ներկայացուեցան վերջին երեք տարիներուն Սփիւռքին նուիրուած արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ հայերէն լոյս տեսած խումբ մը գիրքեր, որոնցմէ ոմանց հեղինակները ամփոփ գիծերու մէջ մանրամասնեցին իրենց երկերուն որոշ երեսակները: Այդ գիրքերն էին.- դոկտ. Եազըճեանի կազմած՝ *Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991),* դոկտ. Գոհար Աւագեանի կազմած *Լիբանանահայ համայնքը (1915-1990) ըստ արխիւային փաստաթղթերի,* տոքթ. Սուրէն Պայրամեանի երկասիրած *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ,* Ռուբէն Աւշարեանի կազմած *On the record. Armenian deputies in the Lebanese parliament 1922-1972 եւ 1972-2017,* դոկտ. Սօսի Գասպարեանի համախմբագրած *Diasporas of the modern Middle East (contextualizing community),* դոկտ.ներ Քրիստին Պապիկեան-Քարլա Էտտէ-Վահէ Թաշճեան-Լեւոն Նորտիկեանի համախմբագրութեամբ լոյս տեսած *Les Arméniens du Liban. Cent ans de présence*, դոկտ. Տագէսեանի *Բարսեղ Կանաչեան (1885-1967). կեանքի մը երաժշտացումը*, դոկտ. Սեդա Օհանեանի *Իրաքի համայնքը 20րդ դարում*, տոքթ. Սարգիս Պուրունսուզեանի *Դամասկոսի հայերը*, դոկտ. Մուհամմատ Աթալլա ԱլՄաանիի *Մաանի հայերը (1915-2016),* Գէորգ Մսըրլեանի *Իրպիտի եւ հիւսիսային Յորդանանի հայերը*, դոկտ. Ժամալ Քամալի *Արհեստներն ու արհեստաւորները արդի Եգիպտոսի մէջ* (վերջին չորսը՝ արաբերէն), փրոֆ. Մութաֆեանի *La saga des Arméniens de l'Ararat aux Carpats* նորագոյն երկը: Իսկ անգլիագիր վիպագիր, ծնունդով սուտանցի, նախկին եթովպահայ այժմ անգլիաբնակ Ռուբինա Սվաճեան-Քինկուէլ ներկայացուց Հայոց Ցեղասպանութեան նուիրուած իր եռահատոր վէպին Ա. եւ Բ. հատորները, որոնցմէ առաջինը կը վերաբերի համիտեան ջարդերուն, իսկ երկրորդը Ցեղասպանութեան առաջին տաս ամիսներուն: Ուշագրաւ է որ անգլերէն այս հատորները հասցէագրուած են պատանի ընթերցողներու:

Նիստերէն անջատ, ներկաները առիթ ունեցան դիտելու Հայկազեան Համալսարանի Մուկար Արուեստից Սրահին մէջ ցուցադրուած Ալեքսանդր Սարուխանի շուրջ 50 երգիծանկարներու կրկնօրինակները, որոնք ազնուօրէն տրամադրուած էին տիար Շահէ Խաչատուրեանի եւ ՀԲԸՄ Տեմիրճեան Կեդրոնին կողմէ: Ցուցադրուած էին նաեւ եգիպտահայութեան մասին հրատարակուած հայ եւ օտար երկասիրութիւններ՝ Հայկազեան Համալսարանի Տէրեան Հայագիտական Գրադարանէն: Գիտաժողովին առաջին իրիկունը եթովպահայ եւ եթովպաբնակ Վարդգէս Նալպանտեան

դասախօսութեամբ մը ներկայացուց Եթովպիոյ հայօճախը իր պատմական անցեալէն մինչեւ այսօր: Խիստ շահեկան այս դասախօսութիւնը որոշ զուգահեռներ ունէր 2017 Մայիսի գիտաժողովին Իրաքի հայօճախին ներկայ վիճակին նուիրուած դասախօսութեան հետ:

Նիստերը վարեցին դոկտ.ներ Արտա Էքմէքճի, Նանօր Գարակէօզեան, Արշալոյս Թօփալեան, Արմէն Իւրնէշլեան, Անդրանիկ Տագէսեան եւ Շաղիկ Խիւտավերտեան ու Եղիա Թաշճեան:

Գիտաժողովը յատկանշուեցաւ հայօճախներուն մէջ գործօն դեր ստանձնած գործիչներու, բայց մանաւանդ՝ դաշտային հետազօտութիւններ կատարած մասնագէտներու, երիտասարդ հետազօտողներու թէ՝ արխիւային պրպտումներ կատարած այլեւայլ ուսումնասէրներու մասնակցութեամբ: Ուրախալի էր որ 26 մասնակիցներէն չորսը կը պատկանէին երիտասարդ սերունդին. անոնց տարիքը չէր հասներ 30ին:



Աննախընթաց գիտաժողով մը եղաւ այս մէկը, ուր թերեւս կարելի էր աւելի արծարծել մերօրեայ խնդիրները, միջհայօճախային հաղորդակցութիւնները, կապերը եւ զուգահեռներ գծել տարբեր հայօճախներու կարգ մը երեսակներու եւ երեւոյթներու միջեւ:

Գիտաժողովին մասնակիցները կը տիրապետէին իրենց արծարծած նիւթերուն: Զեկոյցները կը զանազանուէին թէ՛ նիւթի բնոյթով, թէ՛ մեթոտոլոժիով եւ թէ՛ յառաջացման եղանակով, երբեմն նաեւ՝ ենթակայականութեամբ:

Ջերմ, ազատ, անմիջական, նախանձախնդիր, երկար քննարկումներու եւ վերլուծումներու ընդմէջէն լուսարձակի տակ առնուեցան Ափրիկեան Եղջիւրի հայօճախին անցեալին ու ներկային հայող շատ հարցեր, իրագործումներ:

Գիտաժողովի տեւողութեան զեկուցաբերներուն կողքին ներկայ եղան ունկնդիրներ, Սփիւռքի նախարարութեան երկու պաշտօնատարներ, եգիպտահայ, Միջին Արեւելքի հայօճախներու ժամանակակից պատմութեամբ եւ ընդհանրապէս Սփիւռքի ուսումնասիրութեամբ զբաղող փորձագէտներ, հետազօտողներ, մտաւորականներ, շաղախուեցան նոր մտա-

ծումներ, հաստատուեցան նոր ծանօթութիւններ եւ յարաբերութիւններ, որոնք կը ծառայեն սփիւռքագիտութեան:



Գիտաժողովը նաեւ իւրօրինակ երախտիք եւ ճանաչում էր Ափրիկեան Եղջիւրի հայութեան կատարած հայկական եւ մարդկային ճիգերուն:

Կեդրոնի կազմակերպած վերջին հինգ տարիներու գիտաժողովները Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի, Իրաքի եւ Եգիպտոս-Սուտան-Եթովպիոյ հայօճախներուն բեւեռուող լուսարձակներ են, որոնք նոր եւ հրատապ այժմէականութիւն կու տան Միջին Արեւելքի սփիւռքագիտութեան զարգացման, մղելով առնչուող հայութիւնը իր պատմութիւնը, դէպքերն ու զարգացումները շրջանի համապատկերով, Միջին Արեւելքի անդրսահմանային հայեցակարգով դիտելու եւ ընկալելու:

Բարերար տիար Երջօ Սամուէլեանի նուիրատուութեամբ կեանքի կոչուած Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը շնորհակալ է Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժնին, որ նիւթական կարեւոր աջակցութեամբ մը գնահատեց գիտաժողովը:

Գիտաժողովին նիւթերը պիտի հրատարակուին յառաջիկային:

Հայկազեան Համալսարանի
Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

Content of the Book

The book is a compilation of the proceedings of the conference entitled "Armenians of Egypt, Sudan and Ethiopia".[1] The conference was organized by the Haigazian University-based Armenian Diaspora Research Center and was held in Cairo on April 12 & 13, and at Haigazian University on May 29-30, 2018.

The book includes the program of the conference, the opening words, all but two papers on the Egyptian-Armenian community, one additional paper and their English summaries, an appendix, biographies of the contributors, a brief narrative of both the Arab Republic of Egypt and the Armenian community of Egypt, and the conference press release.

The 30 papers included in the volume are the following:

- Dr. Rouben Adalian, "By the Nile and the Sea: The Currents and Tides of Modernity and the Role of the Armenian Diaspora of Northeast Africa"
- Vahe Sarksian, "The Connections of both the Khurri-Mitani state and the Kingdom of Van with Egypt (XV-XIV and VIII-VII Centuries BC)"
- Dr. Claude Mutafian, "La Fresque Arménienne du Monastère Blanc en Haute Égypte (1124)"
- Shoghakat Devrikyan, "Egyptian Scenes in Medieval Illuminated Manuscripts"
- Dr. Vardan Devrikyan, "The Armenian Prelacy of Egypt"
- Ann Grönhammar, "From Success to Failure: Ohan Demirgian - Envoy of the Egyptian Khedive, Appointed Master of the Stables at the Court of the Swedish King 1866-1872"
- Azadouhi Simonian-Kalaidjian, "*Artemis*, A Champion of Women's Rights"
- Armin Kredian, "Different Approaches to Reading Censuses: The 1906-7 Census of Armenians in Cairo and the 1911 Census of Armenians in Alexandria"
- Prof. Vahram L. Shemmassian, "The Population, Setup, and Administration of the Armenian Refugee Camp of Port Said, Egypt 1915-1919"
- Bedros Torosian, "*Miyootyoon,* the Mouthpiece of AGBU: An Analysis of an Egyptian-Armenian Periodical (1912-1927)"
- Gohar Avagyan, "The Egyptian-Armenian Community's Support to the Cilician Armenians between 1909 and 1922"
- Dr. Narine Margaryan, "The Activities of the Armenian Orphan Care Society of Egypt (1916-1927)"

[1] The papers dedicated to the Armenians of Sudan and Ethiopia will be published in a separate volume.

- Dr. Verjine Sevazlian, "The Contribution of Repatriated Egyptian-Armenians to the Fatherland"
- Dr. Tigran Ghanalanyan, "The Emigration of Egyptian-Armenians between the 1950s and the 1970s and its Implications Within and Without"
- Dr. Kevork Yazedjian, "The 1947-48 and 1962-65 Repatriation of Egyptian-Armenians in Soviet Secret Documents"
- Thomas Zakarian, "Independent Youth Magazine Forums: *October* of Cairo (1975-80) and *Yeridasart Hay* of Beirut (1969-1975)"
- Dr. Antranik Dakessian, "Bibliography of *Hogdemper*"
- Mihran Minasian, "Egyptian-Armenian Authors who Wrote in Arabic (Brief Overview)"
- Dr. Souren Bayramian, "Egyptian-Armenian Printing Presses and Newspapers from their Inception Until Today"
- Haig Avakian, "Armenian Actresses in the Egyptian Cinema and Theater: Issues of Identity"
- Dr. Hilmar Kaiser, "The Pasha and the Survivor: Roots of Armenian Genocide Research"
- Prof. Jon Armajani, "Egypt's Constitution and Minority Rights"
- Dr. Eslam Fawzi Anas Qutub, "The Social Integration of Egyptian-Armenians in Egypt: A Sociological Analysis"
- Raphael Oumoudian, "Two Egyptian-Armenian Catholicos-Patriarchs as Head of the Catholic Armenian Community Worldwide, His Beatitude Kasbarian and His Beatitude Tarmouni"
- Dr. Vladimir Poghossian, "The Committee of Cultural Relations with Diaspora Armenians and the Egyptian-Armenians (1964-1990)"
- Dr. Maroush Yeramian, "Teaching Western Armenian in Egyptian-Armenian Schools and its Challenges"
- Vahram Hovyan, "Contemporary Egyptian-Armenian Media"
- Aspé Djizmedjian, "The Matter of Identity Within the Egyptian-Armenian Community"
- Dr. Armen Melkonian, "Armenia-Egypt State Relations"
- Dr. Nairy Hampikian, "What is to Become of the Armenian Architectural Heritage All Over the World? Case Study: The Armenian Architectural Heritage in Egypt – Past, Present and Future"
- Ayk Zakarian, "The Prelacy and Supporting Graduate Education"

The book is the fifth volume of a series which will feature aspects of the Armenian communities in Middle Eastern countries.

الكتاب في سطور...

يغطّي هذا الكتاب مؤتمر "الأرمن في مصر والسودان والحبش" الذي نظّمه "مركز الأبحاث للشتات الأرمني" في "جامعة هايكازيان"، والذي انعقد في القاهرة بين 12 و13 نيسان وفي حرمها بين 29 و30 أيار 2018. وقد شارك فيه 31 اختصاصياً وأكاديمياً حضروا من المانيا، الولايات المتحدة، أرمينيا، سوريا، مصر, المملكة المتحدة, الحبش, ولبنان.

يحتوي الكتاب برنامج المؤتمر والمحاضرات الـ30 الّتي أُلقيت وخلاصاتها، بما فيه السّيرة الذاتية للمحاضرين، صوراً من المؤتمر وأخيراً البيان الصحافي.

في عودة إلى المحاضرات، لقد تتطرّقت تباعاً إلى المواضيع التالية:

"بين النيل والبحر: امواج وتيارات الحداثة ودور الشتات الارمني في شمال-شرق افريقيا" (الدكتور روبين اداليان)؛

"العلاقات بين هضبة ارمينيا ومصر خلال الالفية الثانية والاولى قبل الميلاد" (فاهي سركسيان)؛

"الجدرانية الارمنية في الدير الابيض في المصر العالي" (الدكتور كلود موطافيان)؛

"مطرانيّة الأرمن في مصر" (الدكتور وارطان ديفريكيان)؛

" من النجاح الى الفشل: اوهان دمرجيان, مبعوث خديوي مصر ورئيس الاسطبل في البلاط الملكي السويدي بين عامي 1866 و1872" (آن غرونهمَار)؛

"*أردميس*: مجلّة النضال من اجل حقوق المرأة" (آزادوهي كلايجيان-سيمونيان)؛

"مقاربات مختلفة لقراءات الإحصائيات: احصاء الارمن في القاهرة في 1906-1907, واحصاء الارمن في الاسكندرية في 1911" (ارمين كريديان)؛

"تعداد, تنظيم وادارة مخيم اللاجئين الارمن في بور سعيد مصر بين عامي 1915 و1919" (البروفيسور فاهرام شمَاسيان)؛

"*ميوتيون*: لسان حال الجمعية الخيرية العمومية الارمنية. تحليل لمجلّة مصرية-ارمنية (1912-1927)" (بيدروس طوروسيان)؛

"مساعدات الجالية الارمنية في مصر لارمن كيليكيا بين عامي 1909 و1922" (الدكتور كوهار افاكيان)؛

"اعمال جمعية الارمن المصريين لاعانة الايتام الارمن (1916-1927)" (الدكتور نارينه مركاريان)؛

"عطاءات المصريين-الارمن لوطنهم بعد عودتهم الى ارمينيا" (الدكتور فيرجينه سيفازليان)؛

"هجرة الارمن المصريين من مصر بين خمسينيات وسبعينيات القرن الماضي وتبعاتها في الداخل والخارج" (الدكتور تيغران غانالانيان)؛

"عودة الارمن المصريين الى ارمينيا السوفياتية بين 1947-1948 وبين 1962-1965 في الوثائق السوفياتية السرَية" (الدكتور كيفورك يازيجيان)؛

"منصَات مستقلَة لمجلات شبابية: مجلَة *اوكتوبر* في القاهرة (1975-1980) و*بيريداسارت هاي* في بيروت (1969-1975)" (طوماس زكريان)؛
"الأدباء الأرمن المصريّون الّذين أبدعوا في اللّغة العربيّة (لمحة موجزة)" (مهران ميناسيان)؛
"دور الطباعة الارمنية والمجلات الارمنية-المصرية من البداية الى الآن" (الدكتور سورين بيراميان)؛
"الممثّلون الارمن في السينما والمسرح المصري: اشكاليات الهوية" (هايك افاكيان)؛
"الباشا والناجي من الإبادة الارمنية: جذور الابحاث في الإبادة الارمنية" (الدكتور هيلمر كايزر)؛
"الدستور المصري وحقوق الاقليات" (البروفيسور جون ارماجاني)؛
"الاندماج الاجتماعي لأرمن مصر بين الهويتين القومية والوطنية: تحليل سوسيولوجي" (اسلام فوزي انس قطب)؛
"اثنان من البطاركة الكاثوليك من اصل ارمني مصري على رأس جالية الارمن الكاثوليك في العالم، صاحبا الغبطة البطريرك كاسباريان والبطريرك طرموني" (رفائيل أوموديان)؛
"الارمن المصريون ولجنة العلاقات الثقافية مع الشتات الارمني" (الدكتور فلاديمير بوغوصيان)؛
"تعليم اللغة الغرب-ارمنية في المدارس المصرية-الارمنية وتحدياتها" (الدكتور ماروش يراميان)؛
" الاعلام المعاصر والصحافة المصرية-الارمنية" (فاهرام هوفيان)؛
"مسألة الهوية في الجالية المصرية-الارمنية" (اسبيه جيزماجيان)؛
"العلاقات الارمينية-المصرية" (الدكتور ارمين ملكونيان)؛
"ماذا سيحصل للتراث الهندسي المعماري الارمني في العالم: التراث الهندسي الارمني-المصري – ماضيه وحاضره ومستقبله" (الدكتور نايري هامبيكيان)؛
"مطرانية الارمن المصريين ومساعداتها للطلاب الارمن المصريين في دراساتهم الجامعية" (آيك زكريان).

كما ويضم الكتاب محاضرة إضافية حَمَلَت العنوان التالي: "المناظر المصرية في المخطوطات الارمنية" (شوغاكات ديفريكيان) و"بيبلبوغرافيا *اوكتوبر*" (الدكتور انترانيك داكسيان).

وهنا تجدر الملاحظة إلى أنّ الكتاب هو المجلّد الخامس من سلسلة "الشتات الأرمني" التي تصدر تباعا عن "مركز الأبحاث للشتات الأرمني" والتي تُعنى بتسليط الضوء على واقع الأرمن في دول الشرق الأوسط.

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆ ԳՐԱՑԱՆԿ
LIST OF BOOKS PUBLISHED BY HAIGAZIAN UNIVERSITY PRESS

1) *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present- Day Community*. Edited by Aida Boudjikanian, Beirut 2009, 35$:
2) Alfred de Zayas, J.D., Dr. Phil., *The Genocide Against the Armenians 1915-1923 And the Relevance of the 1948 Genocide Convention*, Beirut February 2010, 10$ (սպառած):
3) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, Beirut 2011, 30$ (սպառած):
4) Dr. Zaven Messerlian, *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009,* Beirut 2014, 25$:
5) Dr. Vahram L. Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939,* Beirut 2015, գին՝ 50 եւ 60$:
6) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, 2nd ed., Beirut 2015, 30$:
7) *Հաճնոյ Հերոսամարտի 90ամեակի Գիտաժողովի Նիւթեր եւ Վաւերագրեր Ու Լուսանկարներ*, կազմեց եւ խմբագրեց Դոկտ. Անդրանիկ Տագէսեան, Պէյրութ 2013, 228 էջ, 10$:
8) *Լիբանանահայ Գիրքը 1894-2012. Մատենագիտական Յանկ,* աշխատասիրեցին Դոկտ. Անդրանիկ Տագէսեան եւ Դոկտ. Արմէն Իւրնէշլեան, Պէյրութ 2013, 20$:
9) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Լ.Գ./Haigazian Armenological Review, Vol. 33*, 2013, 566 էջ, 20$:
10) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Լ.Դ./Haigazian Armenological Review, Vol. 34*, 2014, 656 էջ, 20$:
11) *Հայկազեան Համալսարան. Հայ Տպագրութեան 500-Ամեակի Ձեռնարկներ. 5 Մայիս 2012-22 Մարտ 2013*, Պէյրութ, 2014, 104 էջ:
12) *Հայկական Անդրսահմանային Տարածականութիւնը Եւ Արդի Հաղորդակցական Միջոցները, Գիտաժողովի Նիւթեր, (15-17 Մայիս 2013)*, խմբ. Անդրանիկ Տագէսեան, Հրատ. Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն, Հայկական Սփիւռք Ա., Պէյրութ 2014, 246 էջ, 10$:
13) *Հարիւրամեակ Հայոց Ցեղասպանութեան. Հետեւանքներ եւ Յառաջադրանքներ, Գիտաժողովի Նիւթեր (31 Յունուար-1 Փետրուար*

2015)/Armenian Genocide Centennial: Addressing the Implications. Proceedings of the Conference (January 31-February 1, 2015), կազմ. եւ խմբ.՝ Անդրանիկ Տագէսեան/Compiled and edited by Antranik Dakessian, 240 էջ, 10$:

14) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԵ./Haigazian Armenological Review, Vol. 35*, 2015, 944 էջ, 20$:
15) Անդրանիկ Տագէսեան, *Լիբանանի Հայօճախը. Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)*, 2015, 174 էջ, 10$:
16) Յակոբ Ա. Եագուպեան, *Քննադատական Մտածողութիւնը Լիբանանահայ Վարժարաններու Մէջ*, 2016, 158 էջ:
17) *Իմ Ընտանիքիս Պատմութիւնը*, կազմ.՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւն, խմբ.՝ Ա. Տագէսեան, 2016, 296 էջ (սպառած):
18) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԶ./Haigazian Armenological Review, Vol. 36*, 2016, 700 էջ, 20$:
19) *Բարսեղ Կանաչեան (1885-1967). Կեանքի Մը Երաժշտացումը,* աշխ.՝ Անդրանիկ Տագէսեան, 670 էջ, 2017, 20$:
20) *Լիբանանի Հայերը (Բ.) Գիտաժողովի Նիւթեր (14-16 Մայիս 2014)/Armenians of Lebanon (II) Proceedings of the Conference (14-16 May 2014)*, խմբ. Ա. Տագէսեան, 366 էջ, 2017, 20$:
21) Roupen Avsharian, *On the Record. Armenian Deputies in the Lebanese Parliaments, Volume I, 1922-1972,* 654 pages, 2017, 30$:
22) Roupen Avsharian, *On the Record. Armenian Deputies in the Lebanese Parliaments, Volume II, 1972-2017,* 680 pages, 2017, 30$:
23) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԷ./Haigazian Armenological Review, Vol. 37*, 2017, 720 էջ, 20$:
24) *Սուրիոյ Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (24-27 Մայիս 2015)/Armenians of Syria: Proceedings of the Conference (24-27 May 2015)* (2018), խմբ. Ա. Տագէսեան, 720 էջ, 2018, 30$:
25) Aghop Der-Karabetian, *Armenian Ethnic Identity in Context: Empirical and Psychosocial Perspective,* 270 pages, 2018, 20$:
26) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԸ./Haigazian Armenological Review, Vol. 38*, 2018, 852 էջ, 20$:
27) Hagop Babiguian, *The Adana Massacres: An Eyewitness Account,* translated and annotated by Dr. A. B. Gureghian, foreword (and Overview) by Dr. A. B. Gureghian, 2018, 140 pages, 10$.
28) *Յորդանանի Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (22-24 Մայիս 2016)/Armenians of Jordan: Proceedings of the Conference (22-24 May 2016)* (2019), խմբ. Ա. Տագէսեան, 520 էջ, 2019, 30$:

29) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԹ./Haigazian Armenological Review, Vol. 39*, 2019, 928 էջ, 20$:
30) *The Symbolism of Water in Religion, Proceedings of an interreligious conference on water and Religion*, Religion, Education and Contemporary Concerns, vol. 1, edited by Wilbert van Saane, Beirut, 2019, 166 p., 10.000LL:
31) *Հ.Բ.Ը.Միութեան Հաճընի Որբանոցը, 1919-1920/The AGBU Hadjin Orphanage, 1919-1920,* Introduction, translation and annotation by Antranik Dakessian, 2020, 288 էջ:
32) *The Relevance of Intercultural Studies in the 21st Century, Proceedings of the Symposium*, Religion, Education and Contemporary Concerns, Vol. 2, edited by Arda Ekmekji, Beirut, 2020, 88 p., 10.000LL:
33) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Խ./Haigazian Armenological Review, Vol. 40*, 2020, 928 էջ, 20$:
34) *Ալիս Քիփ Քլարք, Նամակներ Կիլիկիայէն (Օրագրութիւն),* թարգմանութիւն, ներածական եւ ծանօթագրութիւններ՝ Անդրանիկ Տագէսեան, Հրատ. Հաճնոյ Հայրենակցական Միութեան, 2020, 168 էջ:
35) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Յոբելեանական Հատոր (1970-2020)*, 2020, 422 էջ, 30$:
36) *Իրաքի Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (29-31 Մայիս 2017)/Armenians of Iraq: Proceedings of the Conference (29-31 May 2017)*, խմբ. Ա. Տագէսեան, 770 էջ, 2021, 30$:
37) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԱ./Haigazian Armenological Review, Vol. 41*, 2021, 816 էջ, 20$:
38) *Centennial of Greater Lebanon: Constituting the Idea of a "Lebanese Identity" Perspectives from the Lebanese Arts and Letters/* *مئوية لبنان الكبير: تشكيل الهوية اللبنانية انطباعات من التراث اللبناني في الاداب والعلوم* (*Proceedings of the Symposium Organized on the Centennial of Greater Lebanon, February 5, 2021),* edited by Antranik Dakessian, Beirut 2022, 128 pages.
39) Վահան Թէքէեան, *Արեւի* Խմբագրականներ, (1915-1945) (կազմ. եւ խմբ.՝ Պետրոս Թորոսեան, Անդրանիկ Տագէսեան), 2022:
40) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԲ/1., Haigazian Armenological Review, Vol. 42/1,* 2022, 644 էջ, 20$:
41) *Եգիպտոսի Հայերը Գիտաժողովի Նիւթեր (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018),* խմբ. Ա. Տագէսեան, 784 էջ, 2022:
42) هرانت دينك, *امتان قريبتان... جاران بعيدان*
translated into Arabic by Dr. Alexan Keshishian, Beirut 2012, 160 էջ, 10$:
43) د. نورا أريسيان, *100 عام على الإبادة الأرمنية:100 شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية)*, Beirut 2015, 10$:

Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ Հայերը
Armenians of Egypt, Sudan and Ethiopia
Տպաքանակ՝ 250
Գին՝ Լիբանան 50,000L. Ոսկի
Արտասահման 30 Տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.

Haigazian University
Armenian Diaspora Research Center
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb